

ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱԿԱՆԳՆԵՐԻ  
**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ**  
ՀԱՅՈՉ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2004



ՅԳԴ ԾԸՅ « 1913 »

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ  
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

A  
89174

Կազմող Արա Սարաֆյան  
Թարգմանությունը Հասմիկ Հայրապետյանի



ԵՐԵՎԱՆ, «ՆԱՀԱՊԵՏ», 2004

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ՄԻՋԱԶԳ-ԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՏԵՆԱՇԱՐ

թիվ 5

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության  
թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Լ. Ա. Բարսեղյան

*Ա 519 Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական փոփոխագրերը  
Հայոց ցեղասպանության Ֆալին (փաստաթղթերի ժողովածու)  
[Կուզմոդ՝ Այոս Սարափյան. անգլերենից թարգմանեց՝ Հասմիկ  
Հայրապետյանը] - ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թան-  
գարան-ինստիտուտ. Սր.. Նահապետ, 2004, 336 էջ:*

0503020913

Ա ----- 2004  
0076(01)2004

ԳՄԴ 63.3 (2Հ)

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

1993 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների Վատեր-թոուն քաղաքում (Մասսաչուսեթս նահանգ) լույս տեսավ հայագգի պատմաբան Արա Սարաֆյանի կողմից կազմած և խմբագրած «Մի-ացյալ նահանգների պաշտոնական փաստաթղթերը Հայոց ցեղա-սպանության մասին» երեք հատորից բաղկացած ժողովածուի առա-ջին հատորը: Մեկ տարի անց լույս տեսավ ժողովածուի երկրորդ, իսկ 1995 թվականին՝ նաև երրորդ հատորը:

Փաստաթղթերի ժողովածուի առաջին հատորը, որը կրում է «Եփրատի հովիտը» խորագիրը, կազմված է Հալեպի, Բեյրութի, Դամասկոսի և Բաղդադի ամերիկյան հյուպատոսությունների գեկու-ցագրերի հիման վրա:<sup>1</sup>

Առանձնակի կարևորություն են ներկայացնում Հալեպից ԱՄՆ և Կոնստանդնուպոլիս ուղարկված գեկուցագրերը, նկատի ունենալով Հալեպի հյուպատոսության կողմից սպասարկվող մի ընդարձակ տարածքի գոյությունը, որն իր մեջ ընդգրկում էր Ուրֆայի, Այն-թապի, Մարաշի և Ջեթունի հայկական շրջանները: Խիստ նշանա-վոր էր նաև Հալեպը նրանով, որ այն վերածվել էր տեղահանված հայերի քարավանների վերջնական հանգրվանի:

Ինչպես վկայում են ամերիկյան դիվանագետների հաղորդում-ները, տեղահանության պատրվակի տակ պետք է հասկանալ թուր-քական կառավարության կողմից մանրամասնորեն մշակված հա-յերի բնաջնջման ծրագրի իրականացման ուղղությամբ ձեռնարկ-ված կոնկրետ քայլերի արտահայտությունը:

1915թ. մայիսի 26-ից Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Թալեաթը սկսեց իրականացնել հայերի «տեղափոխ-ման» իր իսկ ծրագիրը՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի նահանգներից

հայ բնակչության տեղահանությունը դեպի Ռուֆայի և Մոսուլի գավառները: Նույն օրը սկսվեց Ադանայի, Մարաշի, Մերսինի, Սիսի և հարակից շրջանների հայ բնակչության «տեղափոխությունը» դեպի Սիրիա: Հունիսի սկզբին հայ բնակչության տեղահանվող քարավանները դեպի սիրիական անապատներ շարժվեցին նաև Տրապիզոնից, Սվասից, Բիթլիսից և Դիարբեքիրից:

Ամերիկյան հյուպատոսություններից ուղարկված հաշվետվություններն ու հաղորդագրությունները վկայում են թե ինչպես «վերաբնակեցման վայրերը» մեկնող հայերին ողջ ճանապարհի ընթացքում ուղեկցում էին սպանությունները, առևանգումները և թալանը:

Փաստաթղթերի ժողովածուի երկրորդ հատորը կրում է պայմանական «Սահմանամերձ շրջանները» խորագիրը:<sup>2</sup>

Այս հատորը կազմված է Տրապիզոնի, Մամսունի, Ադրիանապոլսի, Չմյուննիսի, Մերսինի, Թիֆլիսի և Թեհրանի ամերիկյան ներկայացուցչությունների գեկուցագրերից, որտեղ հիմնականում ընդգրկվել են ցեղասպանությանը զոհ դարձաց Փոքր Ասիայի, Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի հայ բնակչության վերաբերյալ խիստ արժեքավոր վկայություններ, ըստ որոնց դեռևս 1915 թվականին տեղահանության ենթարկվածներից շատերն արդեն 1916 թվականին ֆիզիկապես զոյություն չունեին:

Բնութագրելով Հայոց ցեղասպանության մասին ամերիկյան դիվանագետների հաղորդագրումների ակադեմիական արժեքը, ժողովածուի կազմողն այն տեսնում է վկայությունների մասնավոր և հավաքական որակի մեջ: Մասնակի որակն ըստ նրա ներառում է այնպիսի գործոններ, ինչպիսին են տեղի ունեցած իրադարձությունների հետ ականատեսների անմիջական շփումները, ականատեսների պատմածների մանրամասն վերաշարադրանքը, կամ ուղղակիորեն բառացի գրանցումը, կոնկրետ դեպքերի նկարագրությունը և ճշգրիտ գնահատականներ տալը: Նյութերի հավաքական որակը խիստ արժեկոծում է դրանք որպես փաստական փավերագրեր՝ արխիվային սկզբնաղբյուր գնահատելիս:

Փաստաթղթերի ընդհանուր դիտարկումը վկայում է այն մասին, որ ամերիկյան դիվանագետների զգալի մասը որդեգրել էր հետաքննիչի հիանալի դեր, որը դրսևորվում էր հայերի նկատմամբ

անաչառ վերաբերմունքով, հատկապես կոտորածների և գաղթականների իրավական վիճակի ճշմարտացի ու մանրամասն նկարագրությամբ:

Շողովածուի երրորդ հատորը<sup>3</sup> կազմված է Օսմանյան Թուրքիայի կենտրոնական շրջաններում 1915-1917 թվականներին տեղի ունեցած դեպքերի առթիվ ամերիկյան դիվանագետների զեկուցագրերից, որոնց մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում 1915-1916թթ. Խալքեդոնից կենտրոն դիվանագետ Լեսլի Դեվիսի ուղարկված հաղորդագրումները:

Ամերիկյան դիվանագետի բոլոր զեկուցագրերը կազմված էին անձնական դիտարկումների հիման վրա, երբ նա մոտիկից շվումների մեջ էր մտնում տեղահանվողների հետ, այցելում նրանց ճամբարները, ցույց տալիս մարդասիրական օգնություն:<sup>4</sup>

Ցավով պետք է նշել, որ Լեսլի Դեվիսն առանձնապես չէր համակրում հայերին, սակայն այդ հանգամանքը չէր խանգարել նրան ճշմարտացի վկայություններ հաղորդելուն, որն էլ ավելի է մեծացնում նրա զեկուցագրերի նշանակությունը, առավել ևս, երբ նա հակում չուներ չափազանցներու իր հաղորդագրություններում տեղ գտած փաստերը:

Անհրաժեշտ է ըստ արժանվույն գնահատել Արա Սարաֆյանի կատարած աղբյուրագիտական աշխատանքը, որը նա կատարել է բարեխղճորեն և բարձր որակով:

Հայ ընթերցողների լայն շրջանակների համար այս գրքույկը նաև լուրջ հայտնություն է, նկատի ունենալով, որ ամերիկյան ոչ բոլոր դիվանագետների հաղորդագրություններն են թարգմանվել հայերեն լեզվով:

Այս գրքույկն առաջին հերթին մեծապես կօգնի դպրոցականներին և ուսանողներին, որովհետև ինչպես դպրոցական, այնպես էլ բուհական դասագրքերում այդ նյութերը համարյա տեղ չեն գտել:

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի առթիվ հրատարակված այս գրքույկը մեծապես կընդլայնի Հայոց Մեծ եղեռնի մասին մեր ունեցած պատկերացումները:

*Լ. Բարսեղյան*

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and Introduced by Ara Sarafian. Volume I, The Lower Euphrates, Armenian Review, Watertown, Massachusetts, 1993.
2. United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and Introduced by Ara Sarafian. Volume II, The Peripheries, Armenian Review, Watertown, Massachusetts, 1994.
3. United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and Introduced by Ara Sarafian. Volume III, The Central Land, Armenian Review, Watertown, Massachusetts, 1995.
4. Սոյն ժողովածուում Լեսլի Դեյվիսի զննողագրերի քարգմանությունները կատարվել են 1988 թվականին Նյու Յորքում լույս տեսած Leslie A. Davis, The Slaughterhouse Province, An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917, հրատարակությունից, որն անգլերեն և հայերեն քարգմանել է Իրինա Քարմայանը (Տես՝ Дэвис А. Лесли, Провинция бойни: доклад американского дипломата об Армянском геноциде, 1915-1917гг., Ереван, 2000, стр. 203-260):

I

ԵՓՐԱՏԻ ՀՈՎԻՏԸ

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հայեյ, 21 ապրիլի, 1915թ.

Առաջիկան՝ «Իրավճակը Մարաշում, Ջեյթունում և Այնթապում»  
(հյուպատոս Ջ.Բ. Ջեքսոնից, Սիրիա, Հայեյ)

Հաշիկզտուն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ողորկելու Ձեզ Կոստանդնուպոլսում մեր դեսպանությանն ուղղված իմ այսօրվա թիվ 269 զեկուցագիրը «Իրավճակը Մարաշում, Ջեյթունում և Այնթապում» առարկայի մասին՝ ի լրացումն դեպարտամենտին ուղղված իմ սույն ամսվա 12-ի թիվ 251 զեկուցագրի, որի առարկան է «Կոտորածի փորձ Մարաշում»: Ներվաակված է այս զեկուցագրի մի օրինակը՝ Օտարերկրյա միսիաների հանձնախմբի ամերիկյան խորհրդին Beacan street, Boston հասցեով հանձնելու համար:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջ.Բ. Ջեքսոն

Ամերիկյան հյուպատոս

Ներվաակվածը՝ 1) Գեսպանությանն ուղղված թիվ 269 զեկուցագրի օրինակը (փաստ. թիվ 2,3)

2) Նույնի օրինակը Օտարերկրյա միսիաների հանձնախմբի ամերիկյան խորհրդին հանձնելու համար:

300:840.1

Աղբյուր *i. U. S. State Department Record Group 59. 867.00/761.*

*2. "United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume I. The Lower  
Euphrates. p.1.*

Փաստաթուղթ թիվ 2

(Թիվ 1 ներփակվածը Պետական դեպարտամենտին ուղղված թիվ 254 զեկուցագիրը)

Թիվ 269

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա. Հալեպ. 21 ապրիլի. 1915թ*

Առարկան «Դառնալուծման Մարաշում, Չեթունում և Այնթապում»  
(հյուպատոս Ջ Բ Ջեքսոնից, Սիրիա, Հալեպ)

*Թուրքիա. Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի արտակարգ ու լիազոր դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Ի լրացումն «Կոտորածի վորձերը Մարաշում» թեմայով իմ սույն ամսվա 12-ի թիվ 260 զեկուցագրի, պատիվ ունեն հաղորդելու, որ Այնթապի թուրքական կենտրոնական քոլեջի նախագահ պատվելի Ջոն Է. Մերիլը երեկ եկել էր Հալեպ, որպեսզի հայտնի Այնթապում և շրջակայքում տիրող իրավիճակի մասին և դրա վրա հնարավորին չափ հրավիրի դեսպանության ուշադրությունը: Ջրույց է տեղի ունեցել Հալեպի գեներալ նահանգապետ Հ.Է.Ջեյլս քեյի հետ. սակայն ինչպես ասում է պարոն Մերիլը, նա դրությունը բարելավելու ուղղությամբ ոչինչ անել չի կարող: Հետևաբար, պարոն Մերիլն այցելել է գերմանական հյուպատոսին, որը, ծածկագիր ուղարկելու իրավունքն ունի, քանի որ թուրքերը գերմանացիների դաշնակիցն են. մինչդեռ չեզոք երկրները չունեն այդ արտոնությունը, և համոզել է հեռագրել Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանին՝ խնդրելով հաղորդել ամերիկյան դեսպանությանը տիրող իրավիճակի մասին: Մրանով մենք հույս ունենք ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա, որպեսզի դադարեցնի կիրառվող ասիական միջոցառումները. որոնք անշուշտ կքայքայեն նշված վայրերի քրիստոնեական համայնքները, ինչպես նաև անասելի տառապանք կպատճառեն անօգնական ու անմեղ մարդկանց:

Դեսպանության տեղեկատվության համար ուղարկում են պատվելի Մերիլի հայտարարության կրկնօրինակը, մյուս օրինակը ցանկալի է հանձնել պարոն Ու.Ու.Փիթին՝ Կոստանդնուպոլսում միսիաների նեկայացուցչին, իսկ զեկուցման կրկնօրինակներն ու նրանում ներփակվածները ուղարկվում են պետական դեսպարտամենտին՝ խնդրելով մի օրինակը ուղարկել Արտասահմանյան միսիաների հանձնաժողովների ամերիկյան խորհրդին՝ Բոստոն, Մասաչուսեթս:

Պալոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ.Բ. Ջեքսոն

Ամերիկյան հյուպատոս

Ներփակվածը՝ 1) Պատվ. Մերիլի զեկուցագիրը ուղղված

դեսպանությանը (փաստ. թիվ 3)

2) Պատվ. Մերիլի զեկուցագիրը՝ ուղղված պրն. Փիթին

300/840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.00/761.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, pp. 2-3.*

### Փաստաթուղթ թիվ 3

(Ամերիկյան դեսպանությանն ուղղված թիվ 269 զեկուցագրի հետ ներփակվածը)

#### ՀԱՂՈՂՈՒՄ ՄԱՐԱՇԻ ՇՐՋԱՆԻ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հետևյալ հաղորդումը կազմված է հիմնականում բժիշկ Քերոլայն Ֆ.Հեմիլտոնի և բժիշկ Ս.Ֆ.Ռեննի զեկուցագրերից, ովքեր հինգ-շաբթի առավոտյան՝ ապրիլի 15-ին, մեկնել էին Մարաշից և Այնթապ էին ժամանել հաջորդ օրը: Նրանք չէին բերել գրված ոչինչ, որը խուզարկվելու դեպքում գտնվեր և հասկանալի լիներ պաշտոնատար թուրքերին, սակայն նրանց չէին անհանգստացրել:

Որպես ներածություն տրվում է տեղեկատվություն մի վատահեղի մարաշցի հայից, որն աշխատում է կառավարությունում և պետական գործերով զնում էր Մարաշից Հալեպ:

Մարաշի ներկա կառավարիչը մուսուլման է, սակայն, հայտնի է, որ համակրում է քրիստոնյաներին: Նրբ նա հրաման ստացավ

մեկնելու Չեյթուն, տեղի խժողովությունները կարգավորելու համար, ասում են, որ նա հավաքեց Մարաշի հեղինակավոր մուսուլմաններին և նրանց ասաց, որ այդ տարածայնությունները հետևանքն են տեղի ղեկավար կառավարչի հակաքրիստոնեական քաղաքականության՝ ավելացնելով, որ ինքը Չեյթուն չի գնա, քանի որ նրանք իր քաղաքականությանը հավանություն չեն տալիս. և առաջարկեց. որ իրենք գրնան Չեյթուն և կարգավորեն տարածայնությունները, քանի որ իրենք հավանություն են տալիս այն քաղաքականությանը, որի պատճառով ծագել են այդ խժողովությունները: Ի վերջո նա ասաց, որ Չեյթուն կրգնա անձամբ (մուսուլմանների բողոքից հետո), սակայն ավելացրեց, որ այդպես է վարվում այն պայմանով, որ իր բացակայության ժամանակ Մարաշի մուսուլմանները ենթարկվեն Չեյթունից ուղարկված իր ցանկացած հրամանին: Սրան նրանք համաձայնվեցին, և արդյունքը գերազանց էր, չնայած անձամբ նա բացակայում էր Մարաշից, բայց նրա ազդեցությունն անընդհատ զգացվում էր:

Մի երկու շաբաթ առաջ Մարաշ ուղարկված զինվորական հանձնաժողովը, որը հետաքննելու էր իրավիճակը. ասում են իր գործն ավարտել է՝ չհայտնաբերելով որևէ կարևոր մեղադրական վկայություն հայերի դեմ: Այնուամենայնիվ, ասում են, որ Մարաշի հեղինակավոր մուսուլմանները հանձնաժողովին հանձնել են երեսուն մարդու կամ հաստատության ցուցակ, և զինվորներն անմիջապես շրջապատել են նստավայրերն ու տները, խուզարկել այնտեղ բնակվող մարդկանց և նրանց գրքերն ու թղթերը տարել են կառավարություն: Հարցաքննելուց և բանտարկելուց հետո՝ տղամարդկանց ազատեցին և վերադարձրեցին գրքերի ու թղթերի մի մասը: Այս գեկուցման կապակցությամբ բժիշկ Հեմիլտոնի և պարոն Ռեննի հաղորդումը կարևոր է, որ Մարաշի քրիստոնյաները վստահում են հանձնաժողովի անդամներին և համարում են նրանց բարի մտադրություններով մարդիկ, այդ կարծիքին և նաև հյուպատոս Չեքսոնը հանձնաժողովի նախագահի մասին. որին ճանաչում է անձամբ. սակայն քրիստոնյաները կարծում են, որ իր որոշումներում հանձնաժողովն ազատ չէ, քանի ու գործում է Մարաշի մահմեդականների ցումներով:

Հրաման ստացվեց, որ ապրիլի 9-ից 11-ը Մարաշի քաղաքացիները պետք է գրանցեն իրենց մոտ եղած զենքը: Անունով այս հրամանը ամբողջ բնակչության համար էր, սակայն իրականում այն կիրառվում էր միայն քրիստոնյաների նկատմամբ: Մինչև այս ժամանակահատվածի ավարտը սպաները մտնում էին տները, և զենք ունեցող բարի մտադրություններով մարդիկ, ովքեր դեռ չէին գրան-

ցել դրանք, ձերբակալվում էին հակառակ այն բողոքների, որ ժամանակը դեռ չի լրացել: Յանկացած մուսուլման երեխա կամ ամենացածր խավի տղամարդ կարող էր տեղեկություն հաղորդել ամենահարգված քրիստոնյայի դեմ, և կառավարությունն անմիջապես պաշտոնապես հետամուտ կլիներ: Ձինվորները տնից տուն անցնելով, զենք էին փնտրում՝ միաժամանակ զավթելով փող, տանելով իրեր և սպառնալով մարդկանց:

Մարաշի հեղինակավոր մահմեդականներից մեկը, որը եղել էր տեղի քրիստոնյաների անկեղծ բարեկամը, և որին շատ լավ ճանաչում և վստահում էր դոկտոր Շեփրը, վերջերս գերմանական հյուպատոսի Մարաշ կատարած այցելության առիթով փորձեց հյուպատոսին տեղեկացնել, որ Մարաշի հայերին վստահել չի կարելի, որ նրանք թշնամի են և՛ գերմանացիներին, և՛ կառավարությանը, և որ խաղաղություն չի լինի Մարաշում, քանի դեռ մի քանիսին չեն կախել. մի քանիսին բանտարկել, և բազմաթիվ այլ մարդիկ չեն ենթարկվել այլ տեսակի խիստ պատիժների: Մա էսկան է Մարաշի մահմեդականների մեջ տիրող տրամադրությունները ցույց տալու համար:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԺ. ՀԵՄՒՏՈՒՆԻ ԵՎ ՊԱՐՈՆ ՌԵՆՆԻ  
ԿՈՂՄԻՅ ՁԵՅԹՈՒՆԻ ԵՎ ԱՅԼ ԳՅՈՒՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Նախքան Ձեյթունի վանքում որևէ մարտի տեղի ունենալը Մարաշից մի հանձնախումբ, որի կազմում էին բողոքական քահանա Հեր Բլանկը և երկու գլխգորյան. կառավարության թույլտվությամբ գնաց Ձեյթուն, որպեսզի, եթե հնարավոր է, խնդիրը խաղաղ լուծում ստանա: Ի պատասխան Ձեյթունի բնակչությանը ուղղված դիմումին՝ նրանց ասացին, որ ժողովուրդն ինքը փորձել է բոլոր հնարավոր միջոցները, համոզելով ապստամբներին հանձնվել, սակայն ապարդյուն: Մի մարդ, որի որդին ապստամբներից մեկն էր, աղաչել էր որդուն հանձնվել: Տղան պատասխանել էր, որ իր ուրբերի թաթերը դեռևս ցավում էին գանահարության հարվածներից, որին ենթարկվել էր Մարաշի բանտում եղած ժամանակ, և որ հանձնվել կնշանակեր նորից բանտ վերադառնուլ, և նա կտրակահասակապես հրաժարվել էր: Երբ հաշիքը շարունակել էր խնդրել, որդին սպանել էր հորը: Բնակավայրաբար, կոմիտեի ջանքերը օգուտ չտվեցին: Ապստամբներն այժմ մոտ երեսուն հոգի են, և դիրքավորվել են Ձեյթունի ու Մարաշի միջև մի բարձր ժայռի վրա: Նրանք ունեն ջուր, ուտելիք և զինամթերք, իսկ նրանց մոտ կարելի է գնալ միայն մի արահետով, այն էլ մի շարքով:

Այստամբների դիմակայության պատճառաբանությունն այն փաստն է, որ իրենց մոտ ունեն Ձեյթունի և շրջակա գյուղերի երեսուն անարգված քրիստոնյա կանանց ցուցակը, և որ իրենց կանանց նկատմամբ այսպիսի վերաբերմունքը իրենք հանդուրժել չեն կարող:

Հետագայում Ձեյթունի բնակիչներին համոզեցին հանձնել իրենց դասալիքներին. ասելով, որ իրենց ու քաղաքին անհամապատասխան չեն պատճառի: Դասալիքները հանձնվեցին, սակայն նրանց կապկպեցին և ուղարկեցին Այնթապ ու Հալեպ: Բնական էր, որ նրանց հետ ճանապարհին վատ կվերաբերվեին՝ ի նկատի ունենալով ամեն ինչ: Սակայն ասում են, որ առաջին խումբը միայն զեյթունցիներ չէին, մի մասը Այնթապից էր. նրանք, ովքեր Այնթապի ու Մարաշի միջև գտնվող Բազաբուկի հարթավայրի ճանապարհներին աշխատող զինվորներն էին: Սա, իհարկե, նախատեսված չէր այն պատիժներում, ինչ նրանք ստացան: Այս մարդկանց Ձեյթունից հեռանալուց հետո, ապրիլի 9-ին, ուրբաթ օրը, զեյթունցի մի քանի տղամարդիկ իրենց ընտանիքներով կանչվեցին կառավարական տուն և նրանց հայտնեցին, որ պետք է արտաքսվեն: Սա հակառակ էր այն խոստումի, որ նրանց այլևս չեն անհամապատասխան: Նրանց թույլ չստացին տուն վերադառնալ, պատրաստվել մեկնելու, խոսել ընկերների հետ, անմիջապես նրանց ուղարկեցին Մարաշ, ուր նրանք հասան շաբաթ օրը: Առաջին խումբը կազմված էր 35 ընտանիքից: Այնտեղ էր Ձեյթունի որբանոցի տնօրենը կնոջ և երկու ամենավորք երեխաների հետ, մնացած հինգը մնացել էին տանը: Որբանոցը ամերիկացիների հսկողության տակ էր, ուստի պարոն Լիմանն ու Վուլլին փորձեցին տնօրենին տեսնել այն իջևանատանը, որտեղ տեղավորվել էին գաղթականները: Վերջապես, վերադառնալու մասին բանավոր թույլտվություն ձեռք բերելուց հետո, նրանք ի վերջո հեռացան: Ոչ ոքի չէր թույլատրվում խոսել այդ խմբից որևէ մեկի հետ քանի դեռ նրանք Մարաշում էին: Կառավարությունն ուտեյիք չէր տալիս, իսկ այն փաթեթները, որ ընկերներն էին ուղարկում, պատռում էին, փնտրելով գրություններ, իսկ հետո շարտում էին հասցեատիրոջը: Երկուշաբթի օրը նրանց ուղարկեցին դեպի հարավ: Կարծում են, կանանց ու երեխաների համար կային կենդանիներ, սակայն կանանց ու տղամարդկանց անջատեցին իրարից, և մի խումբը ճանապարհվեց մյուսից մեկ ժամ հետո: «Մպան մարաշեցի գաղթականների առաջին խմբին ուղեկցող զինվորներին քացեիքաց ասել էր, որ կանանց ու աղջիկների հետ կարող էին վարվել այնպես, ինչպես կամենային»:

Երկուշաբթի օրը Ձեյթունից եկավ գաղթականների երկրորդ խումբը, որի կազմում էին երեք գրիգորյան քահանաներն ու քաղաքի

հեղինակավոր մարդիկ: Նրանք ավելի լավ էին պատրաստված, քան առաջին խումբը և բերել էին վերը նշված հինգ երեխաներին. սակայն նրանց ծնողներն արդեն հեռացել էին: Չորեքշաբթի օրը սպասում էին երրորդ խմբին. սակայն հորդառատ անձրևի պատճառով նրանց գալը հետաձգվեց: Այս տղամարդկանց հետ կային այնպիսիները, որոնց դեմ քաղաքական հիմքով որևէ սրդարացի կասկածանքի նշույլ անգամ չկար չխոսելով արդեն կանանց ու երեխաների մասին: Այնքապից Հալեպ գալիս իմացա, որ այս մարդկանց ուղարկում են Իրաք: Երկարառև ճամփորդությունից հետո նրանք, ովքեր ողջ կմնան կրնակեցվեն ամենաշոգ երկրներում, մոլի մահմեդականների արաբախոս բնակչության մեջ կլինեն քրիստոնյա գաղթականները, որոնց այդ ժամանակ համարում էին ուխտադրուժ կառավարության հանդեպ, որի նկատմամբ իրենց նվիրվածությունն ու վստահությունը իրենք ապացուցել էին հանձնվելով նրան: Քրիստոնյաները երբեք չէին վստահի ու չէին հանձնվի կառավարությանը, եթե պատկերացրած լինեին, որ հեռևանքն այդպիսին կլիներ:

Ավելին. Գորնուսի Ձեյթունի հյուսիսում գտնվող գյուղերից մեկի. սղամարդկանց Ձեյթունի դեպքերից առաջ կանչեցին կառավարությանը հավատարմության երդում տալու: Նրանք այդպես էլ վարվեցին՝ կարծելով, որ ձեռք առնված ոչ մի միջոցառում այլևս իրենց չի վերաբերվի: Այնուամենայնիվ, նրանց կանչեցին, և այժմ նրանք տեղահանվում են: Գերենի և Մարաշի այլ գյուղերի հեղինակավոր սղամարդկանց հրավիրեցին Մարաշ, և երբ նրանք բոլորը հավաքվեցին, արտաքսվեցին նույն ձևով: Մահմեդական գաղթականներին, ովքեր եկել են Այնքապ, ուղարկում են քրիստոնյա գյուղացիների փոխարեն բնակվելու նրանց տներում: Ձեկուցագիր է եղել այն մասին, որ Ձեյթունը պետք է այրվեր, սակայն սա ես չեմ կարող հաստատել: Մարաշից վստահելի ալքյուրներից մեկը գաղտնի հաղորդում է, որ կառավարության մտադրությունը Մարաշի բոլոր գյուղերից քրիստոնյա բնակչության տեղահանումն ու դեպի հյուսիս մինչև Հասան Բեյի ուղարկելն է:

#### ՍԱՐԱՇԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարաշի բնակիչները սպասում էին, որ այնտեղ կտորածը տեղի կունենար ապրիլի 3-ին, Ջատկից մի օր առաջ, սակայն օրը փոխվեց՝ Հալեպի գերմանական հյուպատոսի ներկայության պատճառով:

Հինգ օր հետո պառլամենտի անդամ Հակոբ աղա Հորլսկյանը կանչվեց ներկայանալու զինվորական հանձնախմբին և մտածեց, որ ավելի լավ է կատարի, քան անհանգստանա: Փոխարենը՝ զինվորսեն-

ըը նրան տարան քաղաքից դուրս գերեզմանատան մոտ և նրանից երեք հարյուր ֆունտ պահանջեցին: Նա կտրականապես մերժեց որևէ գումար տալ, չնայած կյանքին վտանգ էր սպառնում, ասելով, որ ինքը Մուլթանի մոտ ընկերն է, և որ եթե իրեն վնասեն, կպատժվեն: Հենց այդ պահին մոտերքում հայտնվեց մի սպա և զինվորներին ասաց, որ այդ մարդուն թույլ տան գնա, քանի որ բռնել են ոչ այն մարդուն: Մարաշի բնակիչներն այն կարծիքին են. որ Հորպեկյանին կանչելը ազդանշան էր քաղաքի մահմեդականների համար, և եթե նրան սպանեին, կսկսվեր կոտորածը:

Ֆակրի փաշան Դամասկոսում Ձեմալ փաշայի ներկայացուցիչը, ապրիլի 7-ից 10-ը Բիլխում և Այնթապում լավ տպավորություն էր թողել, և Մարաշ կատարած նրա այցից շատ սպասելիքներ ունեին: Սակայն բոլոր զեկուցագրերը հաղորդում են, որ նա Մարաշում ոչինչ չարեց և թողեց անբարենպաստ տպավորություն, որի ազդեցությունը զգացվում է Այնթապում: Այնթապում քրիստոնյաների ներկայությամբ քաղաքի հեղինակավոր մուսուլմաններին նա ասել է, որ կկախի նրանց, եթե քրիստոնյաներին սպանեն այնտեղ: Նա նաև շատ բարեկամական գրույց է ունեցել քրիստոնյա առաջնորդների հետ: Նա այցելեց բոլեջ, և շենքում շրջելով ու գրուցելով, մի ժամից ավելի անցկացրեց այստեղ:

Ապրիլի 13-ին Մարաշի քրիստոնյաները հասկացան, որ 300 (մի քանիսը նշում են 600) մարդկանց անուններ մտել են սև ցուցակի մեջ, և նրանց դեմ ինչ-որ բան է նախատեսվում: Մի մասը գուշակում էր բանտարկություն: Այդ գուշակությունն անողը գիտեր, որ իր անունն էլ կա ցուցակի մեջ, իսկ հաջորդ օրը նա բանտարկվեց: Նա Մարաշի բողոքական եկեղեցիներից մեկի քահանան էր:

Քրիստոնյաների դեմ այս ընդհանուր ծրագրի իրականացումը թվում է, այնուամենայնիվ, այլ տեսք է ստացել: Գյուղերի քրիստոնյա բնակչության վերաբերյալ զեկուցագիր ներկայացրած նույն աղբյուրը հաղորդում է, որ Մարաշի բոլոր քրիստոնյա տղամարդիկ գորակոչվելու են, ընտանիքներն արտաքսվելու են, որպեսզի Մարաշի քրիստոնյաների ուժը ամբողջովին քայքայվի, բացի ավելի ցածր անկիրթ խավից ոչ մեկը չի մնալու: Ի կատարումն այս ծրագրի՝ անցյալ շաբաթվա հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին գորակոչվեցին 32-ից 37 տարեկան քրիստոնյա տղամարդիկ: Ազատման համար վճարում չթույլատրվեց: Սրանից հետո հավաքեցին 37-ից 45 տարեկաններին: Հետո պետք է տեղահանվեին ընտանիքները: Այս առավոտ մի հարցազրույցի ժամանակ Հալեպի վալին շփտեց, որ այս ընդհանուր ծրագրի նախագիծը ճիշտ է. կամ որ Ձեյթունի գաղթականներին տարել են Բաղդադի շրջանում գտնվող Մոսուլ վայրը:

Մարաշի բնակիչներն ասում են, որ կոտորածը այսպիսի վերաբերմունքից գերադասելի կլիներ: Սակայն կառավարության քաղաքականության մեջ պարզորոշ է թվում այն, որ նա ամեն ինչ անելու է, որպեսզի թույլ չտա կատարել նման բացահայտ և չարտոնված բռնություններ: Կավեացնելի, որ Հայեպի վալին բացարձակ դեմ է այս ծրագրին և կարծում է, որ վերջերս Մարաշի շրջանի հսկողությունը խլեցին իրենից, որպեսզի կարողանան իրագործել այն քաղաքականությունը, որին ինքը հավանություն չի տալիս: Այժմ սա մի գործ է, որի նկատմամբ վալին որևէ իրավունք չունի:

Անցյալ գիշեր ես իմացա, որ բնդիանուր վիճակի մասին տեղեկությունը հասել է Հայեպի հեղինակավոր հայերին: Նրանք ուզում էին հեռագրել Սիսի կաթողիկոսին, որպեսզի նա խոսի այժմ Ադանայում գտնվող Ջեմալ փաշայի հետ: Իմանալով, որ հեռագիրը չի ուղարկվի, այնուամենայնիվ նրանք ստիպված էին ուղարկել հատուկ սուրիանդակ, որն Ադանա պիտի հասած լիներ երեկ:

Այսօր գերմանական հյուպատոսի բարյացակամության շնորհիվ ծածկագրված հեռագիր է ուղարկվել Կոստանդնուպոլիս գերմանական դեսպանությանը՝ հայ պատրիարքին և ամերիկյան դեսպանությանը փոխանցելու համար:

Եզրափակելով կցանկանայի ուշադրություն հրավիրել Մարաշի և Ջեյրոմի իրավիճակի հետ կապված հետևյալ կարևոր կետերի վրա:

1. Ենթադրվում է, որ Մարաշից Կոստանդնուպոլիս քրիստոնյաների մասին ուղարկված կեղծ գեկուցագրերը հիմք են հանդիսացել այժմ իրականացվող հրամանի համար: Սա նման էր 1896թ. կոտորածին:

2. Հաստատվում է գինվորական հանձնաժողովի վրա Մարաշի մուսուլմանների ազդեցությունը, որոնք ջանում էին հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել այն տեղեկության վրա, որը ներկայացվում էր որպես մեղադրական:

3. Ջեյրոմի և Ֆուրնուսի բնակիչներին կառավարությունը խաբեց, այնպես, ինչպես պատահեց Կոզուլկի բնակչությանը հետ 1909թ.: Այն ժամանակ հայերը սպանվեցին, հիմա հայերն արտաքսվեցին:

4. Իրական մեղավորները քիչ են: Նրանք պիտի հայտնաբերվեն ու պատժվեն: Սակայն իրենց տներից ու օջախներից փոսրվեցին բազմաթիվ անմեղ տղամարդիկ, չխոսելով արդեն կանանց ու երեխաների մասին, ովքեր ուրիշ մեղք չունեն բացի այն, որ ծնվել ու դատախարակվել են Մարաշում:

5. Կոտորածի գործն ավարտելու համար մի այլ ձև է ընտանիքների արտաքսումը քրիստոնյա բնակչության ազդեցությունն ու ուժը քայքայելու համար:

6. Կանանց անարգումը, ընտանիքների բաժանումը, սեփականության զավթումը, անձնական վիրավորանքը բարկացնում են նրանց, ովքեր տեսնում են, բայց միջամտելու համար ուժ չունեն, և նրանց, ովքեր կարող են և միջամտում են:

7. Մարաշի դաշտավայրի կրթված և ունակ քրիստոնյաների ոչնչացումն ու արտաքսումը ուղղակի հարված էր ամերիկյան միսիոներին շահերին, քանի որ վտանգվեց ավելի քան հիսուն տարվա աշխատանքը և բազմաթիվ հազարների ներդրումը: Թուրքական իշխանությունները բացարձակապես երաշխավորում են Մարաշի ամերիկյան միսիոներների անձնական ապահովությունը, սակայն միսիոներները ստիպված են ականատես լինել ու հետևել, թե ինչպես են իրագործվում հրամանները, որոնք սարսափեցնում են. քանի որ այս շրջանում ստեղծված եկեղեցիներն ու այլ հաստատությունները կարող են հանվել, և կոչնչանա միսիոներների աշխատանքի մեծ մասը: Եթե հավատանք, որ այդ տղամարդիկ, կանայք ու երեխաները մեղավոր են դավաճանության մեջ, մենք կլինենք առաջինը, որ լռությամբ կհամաձայնվենք արդարացի պատժին: Համոզված լինելով, որ պատժին արժանի մարդկանց թիվը խիստ սահմանափակ է, մեծագույն անհանգստությամբ իրադրությանը հետևելուց բացի, մենք ոչինչ անել չենք կարող:

Փաստաթուղթ թիվ 3

Հայեպ. 20 ապրիլի. 1915թ.

Հայեպ

Ամերիկյան հյուպատոս

Պատվ. Ջես Բ. Ջեքսոն

Հարգելի պրն. Ջեքսոն

Նախորդ էջերում Ձեզ եմ ուղարկում գրավոր հաղորդագրություն Մարաշի իրավիճակի մասին: Ինչպես գիտեք, ես Այթապից եկել եմ հատուկ այս ներկայացնելու համար և համոզված եմ, որ Մարաշի ընկերները խորապես կզնահատեն Ձեր ջանքերը դեսպանության ուշադրությունը դրա վրա հրավիրելու գործում:

Հարգանքերով Ձեր

Ստորագրված Ջ. Է. Սերիլ

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59. 867.00:761.

2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower  
Euphrates, pp. 4-10



5 հունիսի, 1915թ.

Մասաչուսեթս, Բոստոն, Բիքոն փողոց 14,  
Օտարերկրյա միսիանների հանձնախմբի  
ամերիկյան խորհուրդ  
Պատվելի Ջեյմս Լ.Բարտոն

Պարոն,

Ձեր տեղեկատվության համար դեպարտամենտը ներփակում է Սիրիայի Հալեպում ամերիկյան հյուպատոսի գեկուցագիրը Մա-րաշի, Ջեյթունի և Այնթապի իրադրության մասին:

Ես եմ, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

Պետական քաղաքացիության փոխարեն,

(կնրված) Ռոբերտ Լենսինգ

Խորհրդատու

Ներփակվածը՝ Հալեպի հյուպատոսից

21 ապրիլի, 1915թ.

ներփակվածի հետ (փաստ. թիվ 2,3)

867.00/761

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.00/761.

2."United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1. The Lower  
Euphrates, p.11.

Թիվ 256

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հալեպ, 12 մայիսի, 1915թ

Առաքյալ՝ Հայերի տեղահանությունը  
(հյուպատոս Ջ Բ Ջեքսոնից, Սիրիա, Հալեպ)

Վաշինգտոն

Պատվարժան

Պետական քաղաքացիության

Պարոն,

Պատիվ ունեմ նույն ամսաթվով Ձեզ ուղարկել, Կոստանդնու-պոլիսի դեսպանությանն ուղղված իմ թիվ 276 գեկուցագրի օրինակը

«Հայերի տեղահանությունը» թեմայով, որը լրացնում է իմ ապրիլի 21-ի թիվ 254 զեկուցագիրը (գործ թիվ 840.1): Սրա մի օրինակը ներկայակված է Բոստոնի, Բիկոն փողոցի օտարերկրյա միսիաների հանձնախմբի ամերիկյան խորհրդի տեղեկատվության համար, եթե դեպարտամենտը հարմար կգտնի ուղարկել այն: Այնուամենայնիվ իրավիճակն այստեղ այնպիսին է, որ խելամիտ չի լինի հրապարակել գրողի անունը:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ.Բ.Ջեքսոն

Ներկայակվածը՝ 1) և 2) ըստ վերը նշվածի (փաստ. թիվ 6)

840.1/360

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/72*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p.13.*

Փաստաթուղթ թիվ 6

(Առաջին ներկայակվածը թիվ 256 զեկուցագիրը՝ ուղղված Պետական  
դեպարտամենտին )

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հալեպ. 12 մայիսի, 1915թ.*

Առաքյան՝ Հայերի տեղահանությունը

(Ջ Բ Ջեքսոնից Հալեպ, Սիրիա)

*Թուրքիա. Կոստանդնուպոլիս*

*Ամերիկայի արտակարգ ու լիազոր դեսպան*

*Պատվարժան*

*Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ զեկուցելու Ձեյթունի ու Մարաշի և շրջակա գյուղերի ու քաղաքների քրիստոնյաների (հայերի) նկատմամբ թուրքական կառավարության վերաբերմունքի մասին՝ ի լրացումն իմ 1915թ. ապրիլի 21-ի թիվ 269 զեկուցագրի:

Կառավարության հրամանով Ձեյթունի ու Մարաշի շրջաններից 4300-ից 4500 ընտանիքներ, մոտավորապես 28000 մարդ տեղա-

փոխվում է ավելի հեռավոր վայրեր՝ պարզորոշ կերպով ոչ քրիստոնյա համայնքներ, որտեղ նրանց չեն ճանաչում: Հազարավորներն արդեն ուղարկվել են հյուսիս-արևմուտք՝ դեպի Կոնիա, Կեսարիա, Կաստամունի նահանգները, մինչդեռ մյուսներին տանում են դեպի հարավ-արևելք մինչև Դեյր-էլ-Ջոր և Բաղդադի մերձակայքը: Սարսափելի է պատկերացնել այն թշվառությունը, որ բաժին է հասել այս մարդկանց: Մանրամասներում խորանալը կնշանակի ժամանակի անօգուտ կորուստ, քանի որ այսպիսի հանգամանքներում հսկայական համայնքը կարող է ենթարկվել ամեն տեսակի տառապանքների: Նրանք չեն կարող վաճառել իրենց ունեցվածքը, քանի որ նրանց տալիս են միայն մի քանի ժամ՝ ճանապարհին պատրաստվելու համար, իսկ նրանց տներում կառավարությունը բնակեցնում է մուսուլման ընտանիքներ, որոնք անմիջապես սիրահանում են այդ ամենին, հենց որ հայերը հեռանում են: Հարուստ ու աղքատ, բողոքական, գրիգորյան, ուղղափառ ու կաթոլիկ, բոլորը ենթակա են այդ հրամանին: Տեղական վանականներն ու քահանաներն իրենց հռետրով՝ առանց բացառության: Ծերերը, միջահասակներն ու երիտասարդները, ուժեղներն ու հիվանդները խմբերով թշվում են աշխարհի չորս կողմերը, որպեսզի արժանանան մի բախտի, որը գուշակել չի կարող ոչ որ: Ջշերին է երբեմն թույլատրվում հեծնել, սակայն միայն եզ կամ ավանակ, հիվանդներին թողնում են ճանապարհի եզրին, հղի կանայք ծննդաբերում են և, համաձայն գեկուցագրերի, մայրերը խեղդամահ անում կամ ջուրն են նետում երեխաներին, քանի որ նրանց խնամքի համար միջոցներ չկան: Հայրերին ուղարկում են մի ուղղությամբ, մայրերին՝ մի այլ, իսկ երիտասարդ աղջիկներին ու փոքր երեխաներին՝ քոլորովին մի այլ ուղղությամբ: Հստակ վատահեղի գեկուցագրերի, ուղեկցող ժանդարմներին ասվում է, որ կանանց ու աղջիկների հետ կարող են վարվել այնպես, ինչպես կկամենան: Գրողն անձամբ տեսել է սղամարդկանց մի քանի խմբեր, որոնք անցնում էին Հայեալի միջով, նրանք ամենավտալի վիճակում էին, և խորիում է, թե ինչպիսին կլինի այն մարդկանց վիճակը, որոնք բնականաբար ավելի պակաս ընդունակ էին դիմադրելու այսպիսի դաժան վերաբերմունքին:

Միայն Մարաշում կա 6 հայկական գրիգորյան ուղղափառ եկեղեցի, 1 հայկական միաբանություն, 1 հայկական կաթոլիկ և 1 լատինական կաթոլիկ եկեղեցի, մոտավորապես 12 հայկական դրպրոց, 1 ամերիկյան, 1 գերմանական դպրոց, 1 աղջիկների ամերիկյան որբանոց, 1 գերմանական որբանոց և գերմանական հիվանդանոց, փաստորեն, նրանք քոլորն էլ կմնան առանց համայնքների ու այցելուների:

Մոտավորապես 300 մարդ՝ պատվարժան ընտանիքների գլխավորներ, ձերբակալվեցին Մարաշում, նրանցից մոտ 50-ը Ջեյթունից են, մոտ 50-ը՝ Օսմանիեից: Ջեյթունից մոտ 350 ընտանիք կամ մոտ 2000 մարդ ուղարկվել է Մարաշ, այնտեղից էլ Այնթապ, և սպասվում է, որ նրանք Հալեպ կհասնեն մոտավորապես մայիսի 15-ին, որպեսզի ուղարկվեն Մեսկենե, մինչդեռ սպասվում է, որ մինչև մայիսի 20-ը կգան ևս 250 կամ ավելի ընտանիքներ՝ Հալեպի կառավարչին ներկայանալու համար: Այս վերջիններն ավելի բախտավոր են, քան նախորդները, սակայն քաղաքի իրազեկ պաշտոնական շրջանակներում գերիշխում է մի այլ կարծիք: Ապրիլի 25-ին յոթանասուն մեկ ընտանիք ուղարկվեց Կոնիա: Կոստանդնուպոլսից եկած մի ճանապարհորդ ասաց, որ իր ճանապարհին տեսել է այդ դժբախտ մարդկանց, մոտ 4500 մարդու, որ ուղևորվում էին դեպի Կոնիա, և նրանց վիճակը նկարագրում է որպես ցնցող: Հայերն իրենք ասում են, որ շատ ավելի կգերադասեին կոտորածը, որն ավելի քիչ կործանարար կլիներ իրենց համար:

Սա ուղարկվում է պետական դեպարտամենտին, երկու օրինակից:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ.Բ.Ջեքսոն

ամերիկյան հյուպատոս

840.1/360

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/72*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Saratian. Volume 1, The Lower Euphrates, pp.14-15.*

Փաստաթուղթ թիվ 7

10 հուլիսի. 1915թ.

*Մասաչուսեթս. Բոստոն. Բիքոն փողոց 14,  
Օտարերկրյա միսիանների հանձնախմբի  
ամերիկյան խորհուրդ  
Պատվելի Ջեյմս Լ.Բարտոն*

Պարոն,

Դեպարտամենտը Ձեր տեղեկատվության համար ուղարկում է Սիրիայի Հալեպի ամերիկյան հյուպատոսի մայիսի 12-ի գեկուցագիրը հայերի տեղահանության վերաբերյալ: Այս գեկուցագիրը Ձեզ է ուղարկվում Հալեպի ամերիկյան հյուպատոսի առաջարկով, որը

սակայն, ուղարկելով Ձեզ այս զեկուցագիրը, ավելացնում է «Այստեղի իրավիճակն այնպիսին է, որ խելամիտ չի լինի հրապարակել գրողի անունը»:

Ես եմ, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(կնքված) Ռոբերտ Լենսինգ

Ներփակվածը՝ Հալեպի հյուպատոսից

12 մայիսի, 1915թ. (փաստ. թիվ 5 և 6)

867.4016/72

3 P/P1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/72*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, p.16.*

### Փաստաթուղթ թիվ 8

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հալեպ, 5 հունիսի, 1915թ.*

Առարկան՝ Բռնություններ

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեն ներփակելու դեսպանությանն ուղղված նույն ամսաթվով իմ զեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է այս շրջանում հայերի նկատմամբ տեղի ունեցած բռնություններին:

Պարոն, պատիվ ունեն լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ.Բ.Ջեքսոն,

ամերիկյան հյուպատոս

840.1

Ներփակվածը՝ ըստ վերը նշվածի (փաստ. թիվ 9)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/72*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, p.17.*

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հալեպ, 5 հունիսի, 1915թ.

*Թուրքիա, Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի արտակարգ ու լիազոր դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Անդրադառնալով մայիսի 12-ի իմ թիվ 276 զեկուցագրին, որը վերաբերվում էր Օսմանյան կառավարության կողմից հայերին իրենց բնօրրաններից հյուսիսային Սիրիայի և Փոքր Ասիայի հարավարևմտյան մասերի տառքեր վայրերը քչելու և նրանց հարևան երկրներում ցրելու գործողություններին, պատիվ ունեմ զեկուցելու հետևյալը:

Շրջակայքի քաղաքներից ու գյուղերից, հիմնականում Մարաշ, Ջեյրոն, Հասանբեյլի, Օսմանիե, Բաղչե, Ադանա, Դորտյոլ, Հանճըն և այլն, հայերը անընդհատ հոսքով լցվում են Հալեպ, սովորաբար, լավ զինված ուղեկցորդների հսկողությամբ՝ միանգամից գալիս են 300-ից 500 մարդ, ծերունիներ, կանայք ու երեխաներ: Բոլոր միջառասակ և երիտասարդ տղամարդկանց տարել են զինվորական ծառայության: Կառավարությունը կենդանիներ չի տրամադրում, և նրանք, ովքեր փոխադրամիջոց չունեն, ստիպված են ճանապարհն անցնել ոտքով: Իրենց տներից նրանց տանում են միայն հազի հագուստով և այն շարժական գույքով, որ կարող են տանել իրենց հետ:

Մի քանի խմբեր են հասել այստեղ, և նրանց խնամում են այս քաղաքի հայ բնակիչները, որ կարեկցում են նրանց: Մի քանի օր նրանք մնացին եկեղեցիներում ու դպրոցներում, ուր նրանք գրավեցին բոլոր սենյակները, բակերը, պատշգամբները, նրանք տեղավորվեցին նաև տանիքին, հետո նրանց ստիպեցին շարունակել իրենց ճանապարհը՝ գալով մի վայր, որտեղ չկա ծածկ, ուտելիք և ապրելու այլ միջոց: Ճանապարհորդները պատմում են, որ հազարավորների են տեսել այնպիսի մի վայրում, ինչպիսին Անահն է Եփրատի ափին, Բաղդադից հինգ կամ վեց օրվա ճանապարհի վրա, որտեղ նրանց գյուղում են անապատով մեկ, որպեսզի նրանք սովամահ լինեն կամ հիվանդություններից մեռնեն կիզիչ արևի տակ, չնայած սովոր են եղել ավելի բարձր վայրերի:

Վստահելի մարդուց տեղեկացել եմ, որ ներկայումս Հալեպում կա ավելի քան 2600 ալապիսի մարդ և գիտեմ, որ դրանից էլ ավելի շատ մարդկանց տարել են այստեղից և ցրել տարբեր ուղղություններով: Համաձայն գեկուցագրերի, արդեն ավելի քան 25000 մարդ արտաքսվել են իրենց բնօրրաններից և այժմ գտնվում են հակամարտ կրոնական հավատք ունեցող օտարականների իշխանության ներքո, որոնք տանջում ու խոշտանգում են նրանց տարբեր ձևերով: Մա ավելի շատ իրականացվում է Հալեպի շրջակայքում:

Վստահելի մարդիկ գեկուցում են, որ ներքին շրջաններում, հատկապես Դիարբեքիում, կատարյալ սարսափ է տիրում: Նույն մարդիկ հաղորդում են, որ այդտեղ բանտարկել են 300 պատվարժան քրիստոնյայի՝ զենք ու կառավարության հանդեպ անհավատարմության ապացույցներ վնտրելիս, միաժամանակ այլ գեկուցագրեր հաղորդում են, որ զոհերի թիվը հասնում է հազարի: Ասվում է, որ 22 մարդու մահու աստիճան ծեծի են ենթարկել՝ փորձելով նրանցից կորզել մի տեղեկություն, որը նրանք չեն ունեցել: Բժիշկների օգնությանն են դիմել մարդիկ, որոնց ոտքերի թաթերը գանահարվել են. նրանց վնասված ոտքերը վիրահատության են ենթարկվել, որպեսզի չսնդամահատվեն: Մարդիկ համոզված են, որ շատերին ծեծել են այնքան, որ մահացել են: Այնտեղ իրադրությունն այսպիսին է ապրիլի 25-ից ի վեր: Դիարբեքիի շրջակայքի գյուղերում ու քաղաքներում պատկերը նույն է:

Մի մարդ հաղորդում է, որ. «Քրիստոնյաներին առանձնացրել են՝ աշխատելու համար բաճակի նոր բարաքների վրա: Այս մարդիկ իրենց աշխատանքի դիմաց օրեկան ստանում են 2 պիաստր (9 սենթ), այն սղամարդիկ, որոնց չաղարկել են այդ տարածքի ճանապարհներին աշխատելու, ապրելու համար բավարար չեն ստանում և ստիպված են փողի և ուտելիքի համար հույսները դնել տնեցիների վրա»:

«Այս մարդկանց չեն թույլատրում գիշերել իրենց տներում քաղաքի բնակիչներից շատերի նման, նրանց պահում են գերիների նման, որպեսզի չվախչեն, նրանց հատկացված տարածքները կեղտոտ են ու զվվելի, քանի որ չունեն զուգարանի տիպի սենյակներ: Տղամարդկանց չեն թույլատրում հեռանալ այդ տարածքից, նույնիսկ ժամանակավոր»:

«Ժանդամներն ու նորակոչիկներն անխղճորեն անհանգստացնում, տանջում և հետապնդում են քաղաքների ու գյուղերի բնակիչներին, նրանցից կորզում են գումարներ»:

«Մուշի հարթավայրի մի քանի գյուղեր՝ Կեյզանը, Մոդզանը և Ղարջզանը (Վանի վիլայեթ) ավիրվել են, կարծես թե. կառավարության հրամանով, որովհետև բնակիչները փորձել են պաշտպանվել»:

Կարելի է հաղորդել հետապնդման հարյուրավոր առանձին դեպքեր, ինչպիսին են փողի կորզումը, ծեծը, բանտարկությունը և այլըն, սակայն դրանք բիչ քան կավելացնեն դաժանությունների ընդհանուր պատկերին, որին ամեն օր ենթարկվում են այս անպաշտպան ու անվնաս մարդիկ, որոնց ոչինչ ավելի պետք չէ, քան թշվառ գոյություն պաշտպանելու հնարավորություն ունենալը:

Տարբեր պատվարժան մարդիկ, նույնիսկ իշխանավորներ դիմել են կառավարությանը, որպեսզի վերջ տրվի այս իրավիճակին, այն պատճառաբանությամբ, որ սա կարող է հանգեցնել մեծ մեղքի և կշտամբանքի, սակայն ապարդյուն: Կասկած չկա, որ սա մանրամասնորեն մշակված ծրագիր է հայ ժողովրդի բնաջնջման ուղղությամբ:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն, ամերիկյան հյուպատոս

24

Աղբյուր՝ *J. U. S. State Department Record Group 59. 867.4016/77.*

*2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower  
Euphrates, pp. 18-20.*

## Փաստաթուղթ թիվ 10

(մեքենագրված հատված)

Անդրադառնալով հունիսի 5-ի իմ թիվ 289 զեկուցագրին. որը վերաբերվում է հայերի տեղահանություններին. պատիվ ունեմ ավելացնելու հետևյալը.

Բժիշկ Դ.Մ.Բ.Թոմը՝ ամերիկյան մի միսիոներ Մարդինից, հյուպատոսությանը հեռագրել է. «Դրությունը չափազանց վտանգավոր է»: Այդ հեռագիրը հաստատվում է նամակով, որից հատվածներ են մեջբերում.

«Բժիշկ Սմիթը (Գիարբեքիից) տեղեկացնում է հազար կամ հազար հինգ հարյուր սղամարդկանց լաստանավով Տիգրիսն ի վար տեղափոխության մասին, ժամանման վայրը, ենթադրվում է. որ Մո-

սույն է: Օրեցօր աճում է քալանի ու սպանությունների չափը, հենց նոր լուր ստացվեց Ռեդվան անունով մի գյուղից, որը գտնվում է գետից դեպի արևելք, որտեղ սպանել են նույնիսկ փոքր երեխաներին: Վերջին մի քանի գիշերվա ընթացքում հարձակման են ենթարկվել մերձակայքի երկու գյուղերը:

Սի այլ աղբյուրից իմացա, որ այս ձևով ցրված հայերի թիվը հասնում է 62000-ի, որոնց 80%-ը կանայք ու երեխաներ են, վերջիններս 15 տարեկանից ցածր: Շատ կանայք ծննդաբերում են ճանապարհին և այնքան հուսահատված են. որ երեխաներին թողնում են մեռնելու: Մարաշի գերմանական միսիայի կանայք փաստորեն խնամում են այս նորածիններին, որ բերել ու տվել են իրենց: Այս ստիպողական գաղթի ամենասև էջերից մեկը կանանց ու աղջիկների անարգումն է: Այս քաղաք եկած 2500 գաղթականներին տասնհինգ օրվա մեջ բաժանվել է 375 օկ հաց»:

(Ջեռագիր հողվածը սա բնորոշում է որպես «հատված Հալեպի ամերիկյան հյուպատոսի զեկուցագրից, թվագրված է 8 հունիսի, 1915թ.»)

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers, Reel 7/405.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower Euphrates, p. 21.*

## Փաստաթուղթ թիվ 11

Թիվ 293

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա. Հալեպ, 16 հունիսի, 1915թ.

Կոստանդնուպոլիս  
Ամերիկայան դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու

Պարոն,

Պատիվ ունեմ ներվազելու Ջեյթուն-Մարաշի իրավիճակի վերաբերյալ պատվ. Ջ.Է. Մերիլի զեկուցագիրը երկու օրինակից, ինչպես նաև զեկուցագիր թուրքական կենտրոնական քոլեջի տարիների

աշխատանքի վերաբերյալ , երկու օրինակից. մի օրինակը պետք է հանձնվի պրն. Փիթին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջ.Բ. Ջեքսոն,  
Հյուսիսատոս

Ներփակվածը՝ ըստ վերը նշվածի (փաստ. թիվ 13, քոլեջի  
գեկուցագիրը չի կցվում)

840.1/360

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers. Reel 7/591.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1. The Lower  
Euphrates, p.22.*

Փաստաթուղթ թիվ 12

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

26 հունիսի, 1915թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ողարկելու դեպարտամենտի տեղեկատվության  
համար ներփակելու մամակ, ստացված Հալեպի ամերիկյան հյու-  
պատոսից 1915թ. հունիսի 14-ի թվագրությամբ, որը կազմել է պատվ.  
Ջ.Է. Մերիլը Ջեյթուն-Սարաշի իրադրության վերաբերյալ:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու

Ներփակված է՝ մեկ օրինակ 14 հունիսի թվագրությամբ  
(փաստ. թիվ 13)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/80.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1. The Lower  
Euphrates, p. 23.*

(պատվ. Ջ.Է. Մերիլի գեկուցագիրը)

Ջեյթուն-Մարաշի իրադրության վերաբերյալ հետևյալ հաղորդումը հիմնված է մայիսի 21-ի տեղեկատվության վրա, երբ հեղինակը Մարաշում էր: Վերջին տեղեկությունները, որ հասնում են մեզ կայսրության այլ շրջաններից, ցույց են տալիս, որ այս շրջանն իր փորձություններում միայնակ չէ, սակայն այս վաստղ դրության լրջությունը չի պակասեցնում:

Ջեյթունի և շրջակա գյուղերի գրեթե ողջ բնակչությունը տեղահանվեց վերը նշված օրը: Բոսնիայի մահմեդական գաղթականներն ուղարկվեցին բնակվելու նրանց փոխարեն:

Ճշմարիտ է, որ Ջեյթունը մեծ անհանգստություններ է պատճառել կառավարությանը: Ասում են, որ եղել է ապստամբության երեսունյոթ փորձ, և այս անգամ առիթ ներկայացավ մեկի համար: Քաղաքի բնակչության մեծ մասը, սակայն, ենթարկվեց կառավարությանը, նրանք փորձեցին համոզել նաև ապստամբներին ենթարկվել, սակայն ապարդյուն: Վերևի գյուղերից միայն երկուսը ապստամբներին օգնեցին կամովին: Սակայն, սպառնալով՝ ապստամբները կարող էին պաշտպանություն ստանալ ցանկացած հայկական գյուղից և Ջեյթունից:

Ապստամբները կատաղի մարտի բռնվեցին և թուրքական բանակին մեծ կորուստներ պատճառեցին: Ինչպես գեկուցվել է կառավարությանը, Ջեյթունի վանքի դեպքի ժամանակ տասնյոթ ապստամբներ՝ մնալով շենքում, սպանեցին 101 և վիրավորեցին 110 զինվորի: Ապստամբներից զոհվեցին երկուսը: Ընկերները գլխատեցին նրանց, որպեսզի չճանաչվեն: Հետագայում ապստամբները դիրքավարվեցին ավելի բարձր, անմատչելի ժայռի վրա, որտեղ նրանց բռնելու համար կառավարությունը ոչինչ անել չէր կարող: Ապստամբների սկզբնական թիվը քսանհինգ էր, սակայն այդ թիվը շատ է աճել կռիվներից ու տեղահանություններից հետո:

Տեղահանությունների հրամանները սկսեցին կատարել թեթևակի նախազգուշացումից հետո կամ նույնիսկ բողոքովին առանց նախազգուշացումի, այնպես որ մարդիկ դուրս եկան այդքան երկար ճամփորդության, չիմանալով դեպի ուր են գնալու և առանց պատրաստված լինելու և շատ անտեղի տառապանքներ կրեցին: Հնարավոր է, հաշվի էր առնված այս գործողությունն անել այնպես, որպեսզի թույլ չտրվեր վախուստ, դիմադրություն կամ միջամտություն:

Մարաշի ոստիկանությունն ընդունում է, որ գաղթականների կողմից գողության դեպքեր եղել են, և հաստատում է, որ սպանության ու դաժանության ոչ մի դեպք չի եղել: Վերջին խմբերի հետ կապված ինչ-որ բան նախօրոք ասվել էր Մարաշի քրիստոնյաներին այն մասին, որ հնարավոր է օգնություն տրվի, և Այնթապի ղեկավարությունը հրաման էր ստացել տրամադրել անհրաժեշտ օգնությունը, սակայն մի քանի խմբերի անցնելուց հետո այդ օրենքը դարձավ անպետք մամակ: Ձեյթունի ամերիկյան որբանոցի երեխաները հանձնվեցին Մարաշի ամերիկյան որբանոցին, իսկ բողոքական համայնքի քարոզիչն ու ուսուցիչն ազատ արձակվեցին, քանի որ Ձեյթունում տեղացիներ չէին մնացել:

Ինչ վերաբերվում է Մարաշ քաղաքին, կառավարիչն ինձ հավաստիացրեց, որ ոչ մեկը չի տեղահանվել և չի էլ տեղահանվելու առանց որևէ յուրջ մեղադրանքի: Մյուս կողմից պետք է ասվի, որ յոթ կամ ութ տեղահանված տղամարդկանց դեմ ոչ մի մեղադրանք չի եղել և այդպիսի տեղեկություն հնարավոր չէ գտնել: Նրանց տեղահանեցին նույնիսկ առանց այն ժամանակ Մարաշում տեղակայված զինվորական հանձնաժողովի համապատասխան որոշման, և ես ունեմ զինվորական հանձնաժողովի նախագահի ստորագրած հայտարարությունը այն տղամարդկանց մասին, որոնց տեղահանությունը կարգադրված է: Այս տղամարդիկ Մարաշի հեղինակավոր քաղաքացիներն էին, և որ գիտեմ, նրանք այժմ Հալեպում են: Նրանց դեմ մեղադրանքը, հավանաբար, քսան տարվա է և կապված է 1895թ. Մարաշ-Ձեյթունի դեպքերի հետ: Մարաշում հուսադյուրդ պահն այն է, որ պառլամենտի անդամ Հակոբ աղա Հերլակյանի վրա հարձակում գործած զինվորներն ու սպաները դատապարտվել են, նախադրյունները՝ բանտարկության ու զինվորական ծառայության ավելացման, իսկ սպաները՝ բանտարկության ու աստիճանի իջեցման: Ինչ վերաբերվում է Մարաշի կառավարչին, պետք է ասել, որ նա լավ հեղինակություն ուներ Ուրֆայում և, հնարավոր է, տեղափոխվի Մարաշ՝ Հալեպի գեներալ-նահանգապետի հետ դրությունը փոկելու համար: Նրա կառավարման առաջին շրջանը բարենպաստ էր քրիստոնյաների համար, և մահմեդականները նրան վիրավորանքի ենթարկեցին: Նա Ձեյթուն գնաց, վստահ լինելով, որ հարցը վերաբերվում է միայն ապստամբների՝ սակայն հետաքննությամբ պարզվեց, որ քիչ թե շատ ընդգրկված է ամբողջ քաղաքը, և անբարենպաստ սպավորություն ստացավ, իսկ վերադառնալով Մարաշ հայտարարեց, որ ինքն այլևս այն մարդը չէ, որ եղել էր Ուրֆայում: Այդ պահից նա այլևս չի աշխատում: Նրա դրությունը շատ ծանր էր:

Նա գուցե քիչ, եթե ընդհանրապես կային, ընկերներ ուներ, որոնց լիովին վստահում էր: Հայերի հետ հարաբերություններում կա երկկողմանի սխալ հասկացվածություն, և նա կարծում է. որ հայերը դեպքերը սխալ են ներկայացնում դեպքանությանը և նրանց ստիպում են մտածել, որ իր ասածները բոլորովին վստահելի չեն:

Չնայած արվում է ամեն ինչ, որպեսզի բացատրվի կամ մեղմացվի կառավարության արածները, դարձյալ առկա է մարդկանց տառապանքների սև պատմությունը: Կառավարությունը չկարողացավ պատժել մեղավորներին՝ ապստամբներին, և վրեժ լուծեց անմեղ տղամարդկանցից, կանանցից և երեխաներից: Ամբողջ Ձեթոնի շրջանում ես չեմ լսել տեղահանության կարգադրություններին չենթարկվելու նույնիսկ եզակի դեպքի մասին: Մի քանի զինվորը բավական է գաղթականների հսկայական խմբին ուղեկցելու համար: Ընդհակառակը, կանայք ու երեխաները ժամեր շարունակ քայլել են ոտաբոքիկ, նորածինները մեռնում էին մայրերի մեջքին՝ զինվորների անուշադրության հետևանքով, ծնողներն իրենց երեխաներին նետում էին Ջիհոն գետը, այս մասին հաղորդում են զինվորները: Բերտիսի բնակիչները սպասում էին գաղթականների խմբերին և կողոպտում նրանց, երբ նրանք մոտենում էին, իսկ ուղեկցող զինվորները չէին միջամտում, հատկապես խլում են այն կենդանիները, որոնք հատկացված են գաղթականների բեռը տանելու համար, ուղեկցող զինվորները թույլատրում էին սայլապաններին գիշերով փախչել՝ բեռը թողնելով լեռներում: Երբեմն նրանք բեռը տանում էին հեռները. իսկ բողոքը ավելի բարձրաստիճան պաշտոնյաներին հետագա վտրձանք էր բերում մարտիկանց զլխին, անասուններն ու մթերքը վաճառվում էր չնչին գներով, կոսմ մարդկանց չէին թույլատրում վաճառել դրանք, կամ էլ գնորդ չէր գտնվում, քանի որ թշնամիները հույս ունեին դրանց տիրանալ առանց փողի՝ հենց որ տերերը հեռանային: Հարուստներն իրենց տներից վտարվեցին գրեթե առանց գողշի, քանի որ նրանց թույլ չտվեցին իրենց փողերը հանել թաքստոցից: Վերջին երեք կամ չորս շաբաթվա ընթացքում Մարաշից Այնթապ ճանապարհի վրա որոշ տեղերում վերաբերմունքը գաղթականների հանդեպ ահավոր էր, իսկ բազմաթիվ կանանց անարգել են ուղեկցող զինվորները: Սր կին ծննդաբերեց Այնթապից դուրս մի դաշտում, և երկու ժամ անց նրան ստիպեցին ձի հեծնել և ճանապարհ ընկնել: Լսեցինք, որ կինն ու երեխան մահացել են: Անցյալ շաբաթ նույն տեղում ծննդաբերեց մի ուրիշ կին: Մեր հիվանդանոցի բուժքույրերից մեկը կարողացավ նրա կողքին լինել և օգնել նրան: Դեպքը շատ ծանր էր, շատ առատ արյունահոսությամբ. բուժքրոջը հաջողվեց

լուր ուղարկել բժիշկ Հեմիլտոնին մեր կին բժշկին, որպեսզի գասակայն մինչև նրա գալը և նախքան ծննդաբերության երրորդ փուլի ավարտը, կնոջն ու երեխային ուղարկեցին; Երկուսն էլ մահացան այդ օրվա ընթացքում: Այս խմբում կային ևս վեց կամ յոթ այլ կանայք, որ ծննդի էին սպասում: Մյուսն նշեմ այն փաստը, որ ոտքով զննացող կանանց զինվորները ծեծում են ծանր փայտերով:

Մի քանի խոսք Մարաշ քաղաքի մասին, որտեղ ապրում են ընդհանուր տեղահանության անընդհատ վախով: Միշտ էլ զգացվել է վատահեղին միջոնորդների պակաս. տեղացի թե օտարերկրյա, և՛ քրիստոնյա բնակչության, և՛ կառավարության անդամների, և՛ հեղինակավոր մահմեդականների մեջ: Քաղաքի ղեկավարությունը մի խմբի ձեռքին է, որին ժողովուրդը չի վստահում: Քրիստոնյաների համար նշանակված են հսկայական գումարներ, մահմեդականների համար գրեթե ոչինչ: Հաճախ տրվում էր կաշառք, ինչպես մեծ, այնպես էլ փոքր չափով: Մարդիկ այնքան վախեցած են, որ ապահովության համար պատրաստ են տալու այն ամենը ինչ ունեն. իսկ ազդեցություն ունեցող մարդիկ ուրախությամբ են դիմում փող ստանալու այս հեշտ ձևին: Ձեռքունից քսանվեց մարդ դատապարտվել էր մահվան. բայց նրանք կաշառքով ազատվեցին. և քրիստոնյաները համարում են, որ այսպիսով նրանք իրենց կյանքը գնում են այդ մարդկանցից: Կիրակի օրը՝ մայիսի 16-ին, Մարաշում կախելու էին չորս կամ հինգ մարդու, բայց նրանք կաշառքով ազատվեցին: Չափազանց ուշացումով (!) մարդիկ հասկացան, որ Մարաշից տեղահանվածները կարող էին գումար վճարելով ազատվել արտաքսումից: Մի մարդ, որը բանտից ազատվեց, ներման համար վճարեց 80 լիրա, ուրիշները նույն ծառայության համար վճարել են ավելի քիչ: Ձեռքունի գաղթականներից մեկին թույլատրեցին մնալ Մարաշում, որտեղ նա, գեներալին վճարելով 30 լիրա, կարող էր հետևել իր գործին, հավաքել իր անասունն ու ունեցվածքը, որ արժեր 500 լիրա: Մյուս կողմից, մի այրի որի համար խնդրեցին Մարաշի բնակիչները, ազատ արձակվեց վճարելով 2 լիրա: Մեծ կաշառքներ տրվում են ավելի բարձրաստիճան պաշտոնյաներին, մանրամասներին ես չեմ անդրադառնա: Մի քանի շաբաթ առաջ Ձեմալ Փաշայի արած հայտարարությունը երկու կամ երեք կարճ օրվա հույս տվեց քրիստոնյաներին, բայց ոչ մի ազդեցություն չունեցավ մահմեդականների կողմից գերադասելի վերաբերմունքի վրա: Կորականապես մերժվեց պրն. Լիմանի և պրն. Վուդլիի պաշտոնական խնդրանքը հարցաքննելու Ձեռքունի ամերիկյան որբանոցի տնօրենին, որն ընդգրկված էր տեղահան-

վածների առաջին խմբում, և որը տասնվեց տարի պատասխանատու էր որբանոցի համար:

Կարող է լինել իրական վտանգ, որ հայ ապստամբները կրհարձակվեն մահմեդական գաղթականների վրա, որոնք բնակեցվել են հայ գյուղացիների փոխարեն ու հատկապես շրջակա վայրերում, որտեղ նրանց զինվորները պաշտպանել չեն կարողանա:

Սինչ այժմ Մարաշից ոչ մի տեղահանություն չի եղել, բացի այն յոթ կամ ութ ընտանիքներից, որոնց մասին ասվել է վերևում:

Այնրապ, 14 հունիսի, 1915թ.

Աղբյուր՝ *1. Morgenthau Papers. Reel 7/591-92.*

*2. "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Tophrates, pp. 24-27.*

### Փաստաթուղթ թիվ 14

Ծածկագիր  
N.E.252

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Թուրքիա, Բաղդադ, 19 հունիսի, 1915թ.*

### Առաքյալն՝ Հայերի կոտորածը

*Թուրքիա, Կաստանդնուպոլիս*

*Ամերիկայի արտակարգ ու լիազոր դեսպան*

*Պատվարժան*

*Հենրի Սյոզենբաում*

Պարոն,

Բաղդադի հայ համայքը խնդրում է մեր կյուպատտությանը դեսպանությանը տեղեկացնել, որ Վան և Դիարբեքի քաղաքների մոտ հայերի մեծ կոտորած է տեղի ունեցել: Ձեկուցում են, որ եղել են շատ դաժանություններ, և տղամարդկանցից շատերը, եթե չասենք մեծ մասը, սպանվել են: Մանրամասները չեն ներկայացվում այստեղ, սակայն զեկուցվում է, որ այս վիշտը համատարած է:

Դիարբեքիի գեներալ նահանգապետը Ռեշիդ Բեյն է, նա էլ Բաղդադում այդ նույն պաշտոնին էր այն ժամանակ, երբ Բաղդադից հեռացավ տեղի քարավանը, և բոլորը համոզված են, որ նա էլ եղել է

մինչև իր Մոսուլ տեղափոխվելը տեղի ունեցած տարածայնությունների պատճառը: Հետո Ռեչիք Լեյիև Մոսուլից տեղափոխեցին Գի-արբեքիլ:

Այստեղի հայ համայնքը խնդրում է դեսպանությանը որևէ բան անել հայերի վիճակը թեթևացնելու ուղղությամբ: Համոզվածություն կա, որ այստեղ կտորրած տեղի չի ունենա: Բաղդադի գեներալ նահանգապետը կտրականապես դեմ է ալոյսիսի գործողություններին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
Չարլզ Ֆ.Ռիսել,  
Ամերիկյան հյուպատոս

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers, Reel 7/41, 593.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower Euphrates. p. 28.*

Փաստաթուղթ թիվ 15

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

13 հունիսի, 1915թ.

Վաշինգտոն

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ դեպարտամենտի տեղեկատվության համար ներփակել Հալեպի ամերիկյան հյուպատոսի 1915թ. հունիսի 28-ի թվակիր զեկուցագիրը երկու օրինակից, որտեղ ընդգրկված է պատվ. Ֆ.Հ. Լեալիի զեկուցագիրը՝ Ուրֆայի հայերի պրոքսյան մասին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Հենրի Մորգենթաու

Ներփակվածը՝ երկու օրինակները 1915թ. հունիսի թվագրությամբ (վաստ. թիվ 16)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016 92.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower Euphrates. p. 29.*

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հայեսյ, 28 հունիսի. 1915թ.

*Թուրքիա. Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի արտակարգ ու լիազոր դեսպան  
Պատվարժան  
Հենրի Սորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ մեջբերելու Ռութիայից պատվ. Ֆ.Հ.Լեսլիից ստացած սույն ամսվա 14-ի հաղորդագրությունը, այսինքն. «Ցանկանում եմ Ձեզ տեղեկացնել այստեղի իրավիճակի մասին: Այն շատ ծանր է և օրեցօր ավելի է վատանում: Ենթադրում եմ, որ Մայնարդները Ձեզ պատմած կլինեն Դիարբեքիում տեղի ունեցած արսավելի դեպքերի մասին: Ընչտ այդպիսի արսավի է տիրել նաև այս քաղաքում: Ամեն օր ոստիկանները զենք են փնտրում հայերի տներում և ոչինչ չգտնելով՝ տանում են ամենալավ ու հարգարժան հայ տղամարդկանց և ձերբակալում, նրանց մի մասին արտաքսում են, մյուսներին՝ խոշտանգում թեժացրած երկաթներով, որպեսզի ստիպեն նրանց հայտնել ենթադրաբար թաքցրած զենքի տեղը: Չորս շաբաթ առաջ նրանք արևաբսեցին տասնհինգ տղամարդու իրենց ընտանիքներով և ողարկեցին նրանց բնակվելու Ռաքքա դատարկ քաղաքում՝ այստեղից երեք օրվա ճանապարհի վրա: Այդ մարդկանց մեջ էր մեր մենեջերի տեղացի օգնականը՝ Սողոմոն Կնաջյանը, որը քսան տարի շարունակ եղել է տեղի ամերիկյան միսիայի վստահելի, հավատարիմ և բարեխիղճ աշխատողներից, և սուլթանի ամենանըվիրված հպատակներից մեկն է: Պարոն Գրեյսին հեռացավ և այս մարդուց բացի ինձ ոչ ոք օգնել չի կարող, այն ժամանակից, ինչ նրան տարել են, ինձ համար անհնարին է դարձել շարունակել միսիայի աշխատանքները: Ես անձամբ գնացի մուտասերիֆի մոտ և երաշխավորեցի Կնաջյանի համար և պատրաստակամություն հայտնեցի նրան կառավարությանը հանձնել, երբ որ պահանջեն, միայն թե նրանք Կնաջյանին թույլ տան վերադառնալ և շարունակել իր աշխատանքը միսիայում. սակայն ինձ քաղաքավարի կերպով մերժեցին: Կարծես իրավիճակը լիովին հսկում է ոստիկանությունը,

խսկ մուտասերիֆը սատարում է նրան: Այժմ քաղաքի լավագույն քաղաքացիներից մի հարյուր հոգի պահվում են բանտում, ոստիկանապետը կանչել է հայոց եպիսկոպոսին և ասել, որ եթե հայերը իրենց զենքն ու հեղափոխականներին չհանձնեն, ինքն. ըստ հրամանի, կարտաքսի Ուրֆայի ողջ հայ բնակչությանը, ճիշտ այնպես. ինչպես իրենք վարվեցին Ջեյթունի ժողովրդի հետ: Մենք լավ գիտենք. թե ինչպես են վարվել նրանց հետ, քանի որ նրանցից հարյուրավորների են քարշ տվել Ուրֆայի միջով, երբ նրանց տանում էին անապատները, դեպի ուր արտաքսում էին նրանց: Այս խեղճ աքսորյալները մեծ մասամբ կանայք, երեխաներ ու ծերունիներ էին, նրանց փայտերով էին խփում. ծեծում և մտրակահարում այնպես, կարծես նրանք լինեին վայրի կենդանիներ. կանանց ու աղջիկներին ամեն օր անարգում են և՛ նրանց ուղեկցողները, և՛ սրիկաներ այն գյուղերից, որոնց միջով անցնում են այս թշվառները, որովհետև ուղեկցողներն իրենք են թույլատրում այդ սրիկաներին գիշերով մտնել աքսորյալների ճամբարները և նույնիսկ իրենք էլ աղջիկներին տալիս են նրանց գիշերվա համար: Իրենց բռնակալների կրքի ու ատելության խեղճ գոհերը կգերադասեին իրենց հայրենի լեռներում գոհվել գենքից. քան թե այսպես տարվեին երկրով մեկ: Ուրֆայով անցել են մոտավորապես երկու հազար գաղթականներ, բոլորն ավելի շատ մեռած, քան թե ողջ. հարյուրավորները մեռել են սովահարությունից, դաժան վերաբերմունքից. գյրեթե բոլորը մեռնում են սովից, ծարավից, նրանցից երեխաներ են գողանում Անազայի արաբները անապատում, որտեղով տանում են նրանց: Մենք գիտենք, թե ինչպես են նրանց հետ վարվում. քանի որ Ուրֆայից արտաքսվածներն էլ նույն վայրում են, իսկ մի երիտասարդ հայ բժիշկ, որը բժշկական քննության էր ենթարկում այնտեղի կառավարության զվարներին, վերադարձել և մեզ պատմել է այդ մասին:

Այժմ նույնպիսի ճակատագիրն է սպասվում նաև Ուրֆայի հայերին: Տեսնելով, թե ինչպես են վարվում Ջեյթունի աքսորյալների հետ՝ Ուրֆայի հայերն ասում են, որ իրենք երբեք տեղահանմանը չեն համաձայնվի, փոխարենը կմեռնեն իրենց տներում. և ո՞վ կարող է մեղադրել նրանց: Մենք շատ ենք վախենում, որ մարդկանց բռնելու, ծեծելու և խոշտանգելու համար ոստիկանների դաժան հետապնդումները մի քանիսին կհասցնեն այնպիսի հուսահատության, որ նրանք կդիմադրեն, և դա անկասկած կհանգեցնի ընդհանուր կոտոր-

րածի: Մինչ այժմ հայոց եպիսկոպոսը և բողոքական քահանաները ամենայն անկեղծությամբ և հաջողությամբ կարողացել են հետ պահել երիտասարդներին, հատկապես, ինքնատիրապետման կոչով, և սա մինչ այժմ բռնկումներ թույլ չի տվել, սակայն քանի որ կառավարությունը ամեն օր տանում ու ձեռքակալում է ժողովրդի լավագույն և ամենախմաստուն առաջնորդներին. մնացել են քչերը, որ կկարողանան զսպել մյուսներին: Կառավարական պաշտոնյաները հատակորեն ասացին հայ եպիսկոպոսին, որ քանի դեռ հայերը չեն հանձնել իրենց զենքը, նրանց կսպանեն, սակայն մարդիկ վախենում են հանձնել իրենց զենքը, քանի որ հիշում են, որ 1895թ. քրիստոնյաներին ստիպեցին հանձնել զենքերը, և հենց որ իրենք հանձնեցին, մուսուլմանները հարձակվեցին և երկու օրում կոտորեցին վեց հազար մարդու: Այժմ եթե կառավարությունը ստիպեր մուսուլմաններին զենքերը հանձնել, քրիստոնյաներն ուրախությամբ կհանձնեին իրենց զենքը, սակայն կառավարությունը մուսուլմաններից զենք չի վերցնում: Ուրֆան հեղափոխական կենտրոն չէ և երբեք չի էլ եղել: Այստեղի բնակիչները միշտ էլ նվիրված են եղել կառավարությանը և երբեք չեն ընդդիմացել. նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց մոլորեցրել են ոչխարի մման: Շատ տարօրինակ է, թե ինչու՞ է տեղական դեկավարությունը համատրոն հետապնդում այն ժողովրդին, որը միշտ էլ հանդես է բերել նվիրվածություն: Այստեղ չկա հեղափոխական կազմակերպություն, հնարավոր է, որ լինի մի երեսուն կամ քառասուն մարդ հեղափոխական մտածողությամբ, սակայն չի եղել ոչ մի քարոզչություն և կազմակերպություն: Կարո՞ղ եք դեսպանությանը հարողել այս խնդրի մասին: Հավանաբար գերմանական և ամերիկյան դեսպանությունները միասին կկարողանան փոխել քրիստոնյաների նկատմամբ կառավարության վերաբերմունքը:

Հուսով եմք, որ վերը նշվածը կհետաքրքրի դեսպանությանը:

Պատիվ ունեմ

(ստորագրված) Ջ.Բ. Ջեքսոն

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/92.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower Euphrates, pp.30-32.*

Փաստաթուղթ թիվ 17

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

21 հուլիսի, 1915թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ուղարկելու Բեյրութի ամերիկյան գլխավոր հյուպատոսից ստացված զեկուցագրի երկու օրինակները, որոնք վերաբերվում են ասիական թուրքիայի Ձեյթունի շրջանում տեղի ունեցող դեպքերին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Հենրի Մորգենթաու

Ներփակվածը՝ երկու օրինակ

20 հունիսի թվագրությամբ (փաստ. թիվ 19)

Աղբյուր՝ *I. U. S. State Department Record Group 59, 867.4016/104.*

*2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower  
Euphrates, p. 33.*

Փաստաթուղթ թիվ 18

Թիվ 1130

ԱՄԵՐԻԿԱՆ ԳՒԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Բեյրութ.6 հուլիսի, 1915թ.

Առարկան՝ Հայերի Հալածանքները

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ դեպարտամենտի համար ներփակելու վերը նշված թեմայի վերաբերյալ զեկուցագրի հաստատված օրինակը.

որը ես ուղարկում եմ դեսպանությանը, այն խնդրանքով, որպեսզի ուղարկվի դեպարտամենտին:

Պատիվ ունեմ լինելու, պարոն.

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Սթենլի Հոլիս

գլխավոր հյուպատոս

Ներփակվածը՝ Ամերիկյան քաղաքացու և ակամատեսի  
զեկուցագիրը հայերի հալածանքների մասին  
(փաստ. թիվ 19)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/97.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarajian. Volume 1. The Lower  
Euphrates. p. 34.*

### Փաստաթուղթ թիվ 19

(Կնքված) հաստատված օրինակ

Համառոտ հաղորդագրություն այս շրջանի արտաքսված հայերի  
մերկա վիճակի մասին  
20 հունիսի, 1915թ.

Տեղահանությունն սկսվեց վեց շաբաթ առաջ Ձեյթունից 180 ըն-  
տանիքների արտաքսումով, և այդ ժամանակվանից տեղահանվել են  
այդ քաղաքի և շրջակա գյուղերի բոլոր բնակիչները, ինչպես նաև  
Հաճընի, Սիսի, Կարսի, Բազարի, Հասան Բեյլիի և Դեղրթ Յոլի քրիս-  
տոնյա բնակչության մեծ մասը:

Ընդգրկվածների քանակը մոտավոր է, մինչ այժմ 26500 մարդ:  
Սրանց մոտ 5000-ը ուղարկվել են Կոնիայի շրջան, 5500-ը Հալեպում  
են, իսկ մնացածը՝ Դեյր-էլ-Ջորում. Ռաքքայում և Սիջազետքի տար-  
բեր վայրերում, նույնիսկ հասել են մինչև Բաղդադի մերձակա  
շրջանները:

Տեղահանումը դեռևս չարունակվում է, և հայտնի չէ, թե որքան  
կարող է ընթանալ, արդեն հրապարակված հրամանի համաձայն այս  
շրջանում թիվը կհասնի 36000-ի, իսկ Այնթապից դեռ ոչ ոքի չեն ար-  
տաքսել, Մարաշից և Ուրֆայից տեղահանվել են շատ քերոր: Ահա  
կառավարության հրամանի 2-րդ հոդվածի տեքստը. «Բանակի ան-

կախ ռազմական կորպուսի և զորամասերի հրամանատարները լրտեսության կամ դավաճանության կասկածի դեպքում ռազմական անհրաժեշտությունից ելնելով՝ իրավունք ունեն միայնակ կամ խմբով արտաքսել գյուղի կամ քաղաքի բնակիչներին և տեղափոխել նրանց այլ վայրեր»:

Գեկավարների կարգադրությունները գուցե եղել են բավականին մարդասիրական. սակայն ժողովրդի տեղահանումը մեծ մասամբ եղել է անտեղի կերպով խիստ, շատ դեպքերում գուգակցված ահավոր դաժանությամբ կանանց ու երեխաների, հիվանդների և ծերերի նկատմամբ: Գյուղերը տեղահանվում էին ամբողջությամբ ժամ առաջ նախագգուշացնելուց հետո, ճանապարհին պատրաստվելու հնարավորություն չէր տրվում, և նույնիսկ, որոշ դեպքերում, չէին կարողանում հավաքվել ընտանիքի անդամներով. եղել են փոքր երեխաներին տեղում թողնելու դեպքեր: Գեքեն լեռնային գյուղում կանայք լվացք էին անում. և նրանց ստիպեցին թաց շորերը թողնել ջրի մեջ և ճանապարհվել ոտաբոբիկ ու կիսահագնված, այնպես ինչպես կային: Որոշ դեպքերում մարդիկ կարողացան տանել իրենց խղճուկ տնային իրերը կամ գյուղատնտեսական գործիքները, սակայն մեծ մասամբ նրանք ոչինչ չտարան, և շժախեցին որևէ իր, նույնիսկ այն դեպքում, երբ այդ անելու ժամանակն ունեին:

Հաճընում ունևոր մարդիկ ուտելիք ու անկողին էին պատրաստել ճանապարհի համար, սակայն ստիպված էին այն թողնել և հետագայում նրանք շատ տառապեցին սովից:

Շատ դեպքերում տղամարդկանց (զինվորական հասակի տղադամարդիկ գրեթե բոլորը բանակում էին) պարաններով ու շոքաներով ամուր կապում էին միմյանց: Կանայք, ովքեր ձեռքերում ունեին փոքր երեխաներ կամ եղիության վերջին օրերին էին, քշվում-տարվում էին մտրակներով, ինչպես նախիրները: Լսել ենք երեք տարբեր դեպքերի մասին, երբ կինը ծննդաբերել է ճանապարհին. և որովհետև նրա դաժան ողեկցողը շտապեցրել է նրան, կինը ճանապարհին մահացել է արյունահոսությունից: Գիտեմ նաև մի դեպքի մասին, երբ հսկիչ-ուղեկցողը այնքան բարի է եղել, որ թույլ է տվել խեղճ կնոջը հանգստանալ մի քանի ժամ, և հետո նրա համար մի սայլ է ձեռք բերել. որպեսզի նա դրանով ճանապարհվի: Մի քանի կանայք այնքան հոգնած ու հուսահատված էին, որ իրենց նորածիններին թողել էին ճանապարհին: Շատ կանայք ու աղջիկներ են անարգվել: Մի տեղում ժանդարմների հրամանատարը մի մեծ

խմբի ուղեկցող իր մարդկանց բացեիքաց ասել և, որ նրանք ազատ էին կանանց ու աղջիկների հետ վարվել այնպես, ինչպես կամենան:

Ինչ վերաբերվում է սննդին, տարբեր վայրերում կար մեծ տարբերություն: Որոշ տեղերում կառավարությունը կերակրում էր մարդկանց, որոշ տեղերում տեղի բնակիչներին էր թույլատրում կերակրել տեղահանվածներին: Որոշ տեղերում էլ ո՛չ ինքն էր կերակրում, և ո՛չ էլ տեղի բնակիչներին էր թույլ տալիս այդ անել: Շատ էր սովը, ծարավը, հիվանդությունը, դեպքեր են եղել սովահարության ու մահվան:

Այս մարդկանց գյուղում էին փոքր խմբերով, երեք կամ չորս ընտանիք բնակեցնում էին ուրիշ ազգի ու կրոնական պատկանելության բնակիչների մեջ, որոնք խոսում էին ուրիշ լեզվով: Ես նրանց մասին խոսում եմ որպես ընտանիքների, սակայն նրանց չորս հինգերորդը կանայք ու երեխաներ են, և եթե նրանց մեջ աղամարդիկ կան, ապա նրանք մեծ մասամբ ծեր են և անկարող:

Եթե հաջորդ մի քանի ամսում միջոց չգտնվի նրանց օգնելու, քանի դեռ նրանք չեն հիմնավորվել նոր միջավայրում, նրանց երկու երրորդը կամ երեք քառորդը կմեռնի սովից ու հիվանդությունից:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/97.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide",*  
*Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower*  
*Euphrates. p.35-36.*

## Փաստաթուղթ թիվ 20

Թիվ 403

ԱՍԵՐԻԿՅԱՆ ԴԵԻՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

18 օգոստոսի, 1915թ.

Հաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Անդրադառնալով Թուրքիայի հայերի հանդեպ թուրքական կառավարության վերաբերմունքի մասին իմ նախորդ հաղորդագրու-

թյուններին. պատիվ ունեն Ձեր տեղեկատվության համար ներփակելու Տրապիզոնի հյուպատոս Հեյզերի ու Հալեպի հյուպատոս Ջեքսոնի զեկուցագրերը երկու օրինակից, հուլիսի 28-ի և օգոստոսի 3-ի թվագրությամբ:

Պարոն, պատիվ ունեն լինելու,  
Ձեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59. 867.4016/126.  
2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower  
Euphrates. p.37.

### Փաստաթուղթ թիվ 21

Թիվ 264

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Միլիա.Հայեպ.3 օգոստոսի. 1915թ.

Առարկան՝ Հայերի տեղահանությունը

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,  
Պատիվ ունեն ուղարկելու նույն ամսաթվով, իմ թիվ 333 զեկուցագիրը դեսպանությանը հայերի տեղահանության մասին:

Պարոն, պատիվ ունեն լինելու,  
Ձեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Ջ.Բ.Ջեքսոն,  
Հյուպատոս

Ներփակվածը՝ ըստ վերը նշվածի (վաս. թիվ 22)

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59. 867.4016 129.  
2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower  
Euphrates. p. 38.

Թիվ 333  
պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հայեպ, 3 օգոստոսի, 1915թ.*

«Հայերի տեղահանությունը»

*Կոտտանյունուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ հետևյալով զեկուցել շրջակայքի ու ներքին շրջանների հայերի նկատմամբ թուրքական կառավարության վերաբերմունքի մասին:

Անցյալ ապրիլին հայերը Վանում քանդեցին որոշ կառավարական շենքեր, որից հետո թուրքական կառավարությունը ամենախիստ միջոցառումներն է իրականացնում ամբողջ կայսրության հայերի հանդեպ: Ուղղակի հարձակումների և կոտորածների մտադրությունը, որ իրականացվում էր մախլիհնում, փոփոխության է ենթարկվել, այսպիսով, տղամարդկանց ու սղաներին մեծ խմբերով հանում են իրենց տներից և անհետացնում ճանապարհներին, որից հետո կանանց ու երեխաներին են ստիպում հետևել նրանց: Ներքին շրջաններից եկող ճանապարհորդները որոշ ժամանակ պատմում էին տղամարդկանց սպանությունների, ճանապարհներին և Եփրատի ջրերում մեծ թվով դիակների առկայության, խմբերին ուղեկցող ժանդարմների կողմից ավելի երիտասարդ կանանց ու փոքրահասակ երեխաներին քրդերին տալու, քրդերի ու ժանդարմների կատարած աներևակայելի թվով անարգումների և նույնիսկ իրենց շատ զոհերին սպանելու մասին: Սկզբում այս պատմություններին շատ չէին հավատում, սակայն այժմ ինչքան շատ գաղթականներ են գալիս Հալեպ, այնքան ավելի քիչ կասկածներ են մնում այդ պատմությունների ճշմարտացիության մասին: Օգոստոսի 2-ին 45օր ճանապարհին լինելուց հետո Դիարբեքիից ոտքով եկավ մի խումբ, մոտավորապես 800 միջահասակ ու ծեր կանայք և 10 տարեկանից փոքր երեխաներ, աներևակայելիորեն խղճուկ վիճակում: Նրանք պատմեցին, որ քրդերը տարել են բոլոր երիտասարդ կանանց ու աղջիկներին, թալանել են նույնիսկ իրենց վերջին գոշներն ու իրերը,

իրենք ենթարկվել են սովի, ծարավի և ամեն տեսակի տառապանքների: Նրանց թշուառ վիճակը ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է նրանց պատմածները:

Ինձ հաղորդել են, որ 4500 մարդու Մուլուրտից ուղարկել են Ռաս-էլ-էյն, 2000-ի՝ Մեզիբեից՝ Դիարբեքիր, հայաթափվել են բոլոր քաղաքները՝ Բիթլիսը, Մարտինը, Մոսուլը, Սևերեկը, Մալաթիան, Բեսնեն և այլն. տղամարդիկ ու տղաները և շատ կանայք սպանվել են. իսկ մնացածը ցրվել են երկրով մեկ: Եթե սա է ճշմարտությունը, իսկ կասկած թիչ կա, ապա վերջիններս նույնպես բնականաբար կմեռնեն հողմածությունից, սովահարությունից և հիվանդություններից:

Եփրատի վրա գտնվող Դ-էյր-էլ-Չոր քաղաքի կառավարիչը, որն այժմ Հալեպում է, ասում է, որ այդ քաղաքում կա 15000 հայ գաղթական: Երեխաներին հաճախ վաճառում են սովից փրկելու համար, քանի որ կառավարությունը գրեթե ուտելիք չի տալիս: Հետևյալ վիճակագրությունը ցույց է տալիս Հալեպ եկած ընտանիքների ու մարդկանց թիվը, այն վայրերը, որտեղից նրանց տեղսահանել են և Հալեպից դուրս եկողների թիվը, ներառյալ 30 հուլիսի.

Որտեղից	Ընտանիք,	մարդիկ,	ուղարկվածներ
Չեուկ-Մերգեմեն (Դորտյալ)	400	2109	754
Օջակլի	115	537	137
Էուզերլի	116	593	173
Հասանբայլի	187	1118	514
Հարնի	84	528	34
Կարաբազար	51	340	-
Հանըն	592	3988	1025
Ռումլու	51	388	296
Շար	150	1112	357
Սիս	231	1317	-
Բազչե	13	68	-
Դենգալա	126	804	-
Դրտաղլի	12	104	-
Չեյթուն	5	8	-
Տարպուզ	22	97	-
Ալպուստան	10	44	-
Ընդամենը	2165	13255	3270

Ավելի քան 2100 մարդ եկել է այս քվերը քրացնելուց ի վեր:

Այժմ հրամայվել է, որ բոլոր հայերը պետք է տեղահանվեն Այն-թապ, Մարդին, Քիլիս, Անտիոք, Ալեքսանդրետտա, Քեսաբ և Հալեպի նահանգի ավելի փոքր քաղաքներից, 60000 մարդ: Ռմական է ենթադրել, որ նրանց սպասում են նույն տառապանքները, ինչին ենթարկվել են նրանցից առաջ գնացողները, իսկ դրանք պատկերացնելը ուղղակի սարսափելի է: Դրա հետևանքով, քանի որ ներքին շրջաններում առևտրի 90% հայերի ձեռքում էր, երկիրը հայտնվեց ավիրման եզրին: Գործարկների մեծ մասը արվում էր ապառիկ և հարյուրավոր գործատուներ, որոնք հայ չէին, հայտնվեցին սնանկացման եզրին: Էվակուացված շրջաններում չի մնա ոչ մի կաշեգործ, ձուլորդ, դարբին, դերձակ. կարպետագործ, բրուտ, ջուլիակ, կոշիկակար, ոսկերիչ, դեղագործ, բժիշկ, իրավաբան կամ որևէ այլ մասնագետ կամ արհեստավոր. բացի մի քանի բացառություններից, և երկիրը փաստորեն կհայտնվի անօգնական վիճակում:

Ամերիկյան կարևոր կրոնական և կրթական հաստատությունները կորցնում են իրենց պրոֆեսորներին, ուսուցիչներին, ուսանողներին, և նույնիսկ հարյուրավոր երեխաներ ունենալով դատարկվում են որբանոցները, սրանով կործանվում է այս ոլորտում 50 տարվա ընթացքում կատարված ամբողջ աշխատանքը: Կառավարական պաշտոնյաները ծաղրանքով հարցնում են ամերիկացիներին, թե ինչ են նրանք անելու այս հարստությունների հետ հայերի հեռանալուց հետո: Սպասվում է, որ հաջորդը տուժելու է Հալեպ քաղաքը:

Իրավիճակն օրեցօր ավելի ճգնաժամային է դառնում, քանի որ հայտնի չէ, թե որտեղ կավարավի այս ամենը: Գերմանացիները մեղադրվում են այն բանում, որ նրանց մասալ խառն է այս ամենին, նույնիսկ եթե նրանք ուղղակիորեն չեն կարգադրել այս համատարած կոտորածը (քանի որ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ հայ ազգի բնաջրնջում) նրանք, սակայն, ներում են այն: Առանձին գերմանացիներ բացեիքաց հավանություն են տալիս այդ ծրագրին և ամեն բանում մեղադրում են հայերին:

Դիստրեբիթի և Մարդինի ամերիկյան միսիաները ողորկել են իրենց գույքը, իսկ բժիշկ Մմիթը և նրա ընտանիքը երկրից վտարվել են Բեյրութի միջով: Մարդինի ամերիկացիները պահանջում են հյուպատոսական պաշտոնյայի ներկայությունը, ասելով, որ իրենց համար իրավիճակը վտանգավոր է: Պրն. Ռ.Կ.Հիլը Այնթապից, կլինը՝ միսս Քեյթ Է.Էյնսլին Մարաշից, պատվ. Մայնարդը Դիստրեբիթից ներքին շրջաններից իրենց իրերն ողորկել են ծովափնյա շրջանները:

Թուրքական ռազմական պաշտոնյաները հիմնել են մամուլի գրասենյակ և երկրի բոլոր ծայրերից տեղեկություններ են հավաքում Թուրքիայի խնդիրների վերաբերյալ, նրանք հեղինակիս զգուշացրեցին գրիչը հանգիստ թողնել: Հետևաբար, քանի որ մենք Ուրֆայում և Հայեստանում մեր պաշտանության տակ ունենք մի քանի հարյուր եվրոպացիներ, առաջարկվեց այդ նախագուշացմանը վերաբերվել համապատասխանաբար:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան  
(ստորագրված) Ջ. Լ. Ջեքսոն,  
Հյուսիստոս

Օրինակն ուղարկված է պետական դեպարտամենտին 240.1:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/129.*  
2. *"United State Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Saralian. Volume 1. The Lower  
Euphrates, pp. 39-41.*

### Փաստաթուղթ թիվ 23

Թիվ 23

17 հուլիսի. 1915թ.

*Թուրքիա, Բարդաղ,  
Ամերիկյան հյուսիստոս  
Էսկավայր. Չարլզ Ֆ.Բրիսել*

Պարոն,

Դեպարտամենտը ստացել է Ձեր ապրիլի 1-ի, թիվ 17 ծածկագիր զեկուցագիրը որը վերաբերվում է քաղղեացի քրիստոնյաների դրությանը:

Քանի որ զեկուցագրերում նշված տեղանուններն անհասկանալի են, Ձեզ ցուցում է տրվում դեպարտամենտին տրամադրել ուղղված օրինակ, որտեղ տեղանունները կարելի լինի ճանաչել:

Ես եմ, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան,  
Պետական քարտուղարի վոխարեն՝  
(կնքված) Ուիլբր Ջ. Բար

867.00/760

Si : Tu

(Բաղդադի թիվ 17 զեկուցագրի ուղղված օրինակի համար տես  
վիսատ. թիվ 25-ը)

Աղբյուր 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/129.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p. 42.*

Փաստաթուղթ թիվ 24

Թիվ 24

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Թուրքիա. Բաղդադ, 5 օգոստոսի, 1915թ.*

Առարկան՝ Զրիստոնյաներ

*Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ հայտնելու դեպարտամենտին, որ ստացել եմ  
1915թ. հունիսի 17-ի թիվ 23 նամակը (գործ թիվ 867.00/760), որը վե-  
րաբերվում է քաղաքացի քրիստոնյաների մասին հյուպատոսության  
1915թ. ապրիլի 1-ի թիվ 17 զեկուցագրին:

Դեպարտամենտի ցուցումների համապատասխան ներփակում  
եմ հյուպատոսության թիվ 17 զեկուցագրի ճշտված օրինակը:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Չարլզ Ֆ.Ֆրիսել,  
Ամերիկյան հյուպատոս

360(840.4)

Ներփակվածը՝ ըստ սովորածի (վիսատ. թիվ 25)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.00/779.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p 43.*

Բաղդադից Ամերիկյան հյուպատոսի 1915թ. օգոստոսի 5-ի թիվ 24  
գեկուցագրի թիվ 1 օրինակը՝ ուղղված պետական դեպարտամենտին  
թիվ 17

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Թուրքիա. Բաղդադ, 1 ապրիլի. 1915թ.*

Առարկան՝ Քրիստոնյաներ

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Անդրադառնալով քաղղեացի քրիստոնյաների դրությանը վերաբերող Ձեր մարտի քսանչորսի հեռագրին՝ պատիվ ունեն գեկուցելու, որ այստեղ գրաքննությունը շատ խիստ է, և խստորեն է գործում ռազմական օրենքը: Այստեղ անհնարին է հայթայթել որոշակի տեղեկություն: Բաղդադի քաղղեացի քրիստոնյաների եպիսկոպոսն ինձ հաղորդեց, որ չգիտե քաղղեացի քրիստոնյաների դեմ Մոսուլում իրականացված վիրավորանքի որևէ առանձին դեպքի մասին և վստահ է, որ եթե այդպիսին եղած վրեր. լրաբերը նրան հաղորդած կլինեք: Այնուամենայնիվ, բոլոր քրիստոնեական աղանդների դրությունն այս հյուպատոսության տարածքում լավ չէ, որովհետև ամեն օր ես լսում եմ առանձին միջադեպերի մասին, որոնք կարող են համարվել կրոնական հետապնդումներ: Վերջերս Բաղդադի բանակում բոլոր հայ զինվորներից խլել են զենքը, քանի որ տեղեկություն էր ստացվել, որ Հայաստանում հայ զինվորները վախել են ռուսների մոտ: Այստեղի հայերը շատ անհանգստացած են: Բոլոր զինվորներին, ումից խլել են զենքը, ստիպում են աշխատել դեպի Մոսուլ գնացող փոքրիկ երկաթուղու շինարարության վրա և նրանց հետ շատ վատ են վարվում: Եղել է գաղտնի համաձայնություն Բաղդադի և Պարսկաստանի միջև Բաղդադի և Մոսուլ քաղղեացի քրիստոնյաների վերաբերյալ, և նրանց մի մասը ձեռքակալվել են և՛ Բաղդադում, և՛ Մոսուլում: Ձեռքակալվածների մի մասը. ասում են, անմեղ են, մյուսները՝ մեղավոր: Այդ միջադեպը այստեղ վատացրել է բոլոր քրիստոնյաների դրությունը: Զիչ բացառություններով բոլոր քրիստոնյաները դեմ են թուրքերին, սակայն նրանք այստեղ գործող ռազմական օրենքի պատճառով գործում են խիստ գաղտնի:

Գումար շատ քիչ կա, քանի որ բավականին երկար ժամանակ է ոչինչ չի աշխատում: Բրիտտոնյաները բավականին հարուստ են, սակայն հարուստ քրիստոնյաներն այստեղ այժմ առատածեռն չեն. որովհետև լուրջ անորոշություն շատ կա: Անօգուտ է կառավարութեանը գումար տալ՝ օգնություն բաժանելու համար: Ավստրիական հյուպատոսը մի հարյուր ֆունտ էր տվել տեղական ղեկավարութեանը՝ ղեկավարության ջրհեղեղից տուժածներին տալու համար, սակայն այս գումարը դեռևս չի բաժանվել:

Վերջերս Բասրայի մոտ տարածայնություններ ծագեցին մահմեդականների սուննի և շիա աղանդավորների միջև և սուննի ադանդի շատ արաբ կամավորներ լքեցին պատերազմի դաշտը: Մարտի քսանչորսին Բաղդադի գեներալ-մահանգապետը կարգադրեց մեր հյուպատոսությանը՝ ֆինանսական օգնություն ցույց չտալ մահմեդական քիրտանա-հնդկական հպատակներին, միաժամանակ թույլատրելով օգնություն ցույց տալ ոչ մահմեդական քիրտանա-հնդկական հպատակներին: Շատ աղբյուրներ հաղորդում են ոչ մահմեդականների նոր ճնշումների մասին, և պետք է նշել, որ տեղական իշխանությունները բողոքովին չեն համակրում ոչ մահմեդականներին, և յուրաքանչյուր ոչ մահմեդական, որը կարողանում է գումար ձեռք բերել, իրեն ետ է գնում բանակից: Այստեղ չկա ազգային ոգի: Անհնարին է կանխատեսել սպագան, սակայն նշաններ կան, որ Թուրքիայի նկատմամբ ուժեղանալու է ճնշումը, և եթե դա տեղի ունենա, կնշանակվի ավելի բարձր հարկ, որին կհետևի ավելի վատ վիճակը: Եթե թուրքական զենքը պարավի, ֆանատիզմը կբերի նրան, որ կհետևեն լուրջ խժոժություններ: Այն վտանգները, որոնց այստեղ սպասում էին Սրբազան պատերազմ հայտարարելուց հետո, չառաջացան, և հուսով ենք, որ չեն առաջանա նաև սպագայում:

Պարոն, պատիվ ունեն լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

Չարլզ Ֆ.Բրիսել,

Ամերիկյան հյուպատոս

360.

(840.4)

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.06 779.

2. "United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, *The Lower Euphrates*, pp. 44-45.

Փաստաթուղթ թիվ 26

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

24 օգոստոսի, 1915թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Անդրադառնալով թուրքիայում հայերի հանդեպ թուրքական կառավարության վերաբերմունքը ներկայացնող նախորդ հաղորդագրությանը, պատիվ ունեմ Ձեր տեղեկատվության համար երկու օրինակից Ձեզ ուղարկել Հալեպի հյուպատոս Ջեքսոնից ստացված զեկուցագիրը՝ թվագրված 1915թ. օգոստոսի 10:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներվիակվածը՝ ըստ ասվածի (փաստ. թիվ 28, 29)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/139.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1. The Lower Euphrates, p.46.*

Փաստաթուղթ թիվ 27

Թիվ 265

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հայեպ, 10 օգոստոսի, 1915թ.

Առարկան՝ Հայերի կրած արհավիրքները Ուրֆայում

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ներկայելու դեսպանատանն ուղղված նույն ամսաթվով իմ թիվ 341 զեկուցագիրը, որը վերաբերվում է Ուրֆայում հայերի կրած արհավիրքներին:

Պարոն, պատիվ ունեն լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն

840.1

(տես փաստ. թիվ 28, 29)

Աղբյուր՝ *1. U. S. State Department Record Group 59. 867.4016/147.  
2. "United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1. The Lower  
Euphrates, p.47.*

Փաստաթուղթ թիվ 28

Թիվ 341  
պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հալեպ, 10 օգոստոսի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեն սրանով ռդարկելու սույն ամսվա 6-ի թվագրությամբ հաղորդագրությունը, որն ուղարկել է Ուրֆայի ամերիկյան միախոնդեր պատվ. Ֆ.Հ. Լեսլին, որին վերջերս նշանակել են այդ շրջանի ամերիկյան հյուպատոսության գործակալ: Պարոն Լեսլիի նամակի բովանդակությունը շատ էական է՝ այնտեղ պատերազմող երկրների 427 քաղաքացիների ներկայության տեսակետից: Նրանցից 140-ը բրիտանացիներ են, 157-ը՝ ֆրանսիացի. 112-ը՝ ռուս, 18-ը՝ չերոնոգորցի, որոնցից էլ 42-ը կանայք են՝, 60-ը՝ երեխաներ:

Նրեկ ես դեսպանությանը հեռագրել էի, որ 4-րդ քանակի հրամանատարը կարգադրել է, որ այս բոլոր կանայք և երեխաները, որ Ուրֆայի ճանապարհին են (Հալեպում Բեյրութից կա 30 հոգի), պետք է ուղեկիցներով ուղարկվեն Ալեքսանդրետտա՝ նավով ճանապարհվելու համար: Ես ավելացրել էի նաև, որ Ուրֆայի դրությունը արդարացնում է պատերազմող երկրների քաղաքացիներին երկրից

ուղարկելու բոլոր ջանքերը: Իմ կարծիքով հայկական հարցը հնարավոր է ունենա կործանարար հետևանք, և ինչպես նամակում նշում է պատվ. Լեսլին, ժամանակ չպետք է կորցնել այստեղից պատերազմող երկրների քաղաքացիներին տեղափոխելու գործում, քանի դեռ այստեղ չի առաջացել մի վիճակ, որում նրանք հնարավոր է, որ բռնվեն:

Ստադրություն կա այս շաբաթ Ուրֆա ուղարկել փոխհյուպատոս Էդելմանին, որպեսզի նա գումար տանի ներկավաճների համար, քանի որ ամձամբ տանելուց բացի ուրիշ միջոց չկա:

Պատիվ ունեմ (և այլն)

(ստորագրված) Ջ.Բ.Ջեքսոն, հյուպատոս

Ներպակված է՝ նամակ պատվ. Ֆ.Հ.Լեսլիից  
(փաստ. թիվ 29)

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59.867.4016 139.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower  
Euphrates, p. 48.*

## Փաստաթուղթ թիվ 29

Պատճեն

*Միջազգայն.Ուրֆա.6 օգոստոսի. 1915թ.*

Հարգելի հյուպատոս Ջեքսոն,

Իրադրությունն այս քաղաքում խիստ վտանգավոր է և օրեցօր ավելի է վատանում: Մուսուլմանների և քրիստոնյաների միջև փոխադարձ թշնամանք կա, և վիճակը գրեթե պայթյունավտանգ է. իսկ մենք ղեկավարություն չունենք: Ստամբուլից տասնչորս «կամավորներ» (մյ ըսանիսը վերջերս Դիարբեքիրից) ահաբեկել են կառավարչին, ժանդարմների հրամանատարին. ռազմական օրենքը ղեկավարող հանձնաժողովին և տեղական կառավարման մյուս բոլոր ղեկավար պաշտոնյաներին, այնպես որ նրանք չեն համարձակվում պաշտպան կանգնել քրիստոնյա բնակչությանը կամ էլ հակառակվել այս մարդասպաններին, որոնք իրենց տքամադրության տակ ունեն ամեն ինչ: Նրանք, գիշերով բռնելով ամենալավ և ամենահեղինակավոր քաղաքացիներին, որոշ ժամանակ պահում են բանտում, հետո ուղարկում մահաբեր Դիարբեքիր:

Վեց շաբաթ շարունակ մենք ականատես ենք լինում ամենա-  
ահավոր դաժանություններին, որին ենթարկվում են հազարավոր  
տեղահանված քրիստոնյաներ, որոնք, գալով հյուսիսային քաղաք-  
ներից, ամեն օր անցնում են մեր քաղաքով: Բոլորը պատմում են  
նույն պատմությունը և կրում են նույնանման սպիներ, խմբերի տղա-  
մարդկանց սպանել են քաղաքից հեռանալու առաջին օրերին, հետո  
մշտապես կողոպտել են կանանց ու աղջիկներին՝ տանելով նրանց  
փողերը, անկողինը, հագուստը, ճանապարհին ծեծել ու անարգել են  
նրանց, մի մասին՝ առևանգել: Ուղեկցող ժանդարմները ստիպել են  
նրանց վճարել աղբյուրներից ջուր խմելու համար, լինելով նրանց  
վատագույն անարգողները՝ թույլատրում էին գլուղերի ամենատոր  
տարբերին անարգել ու առևանգել կանանց ու աղջիկներին: Մեզ ոչ  
միայն պատմում էին այս մասին, այլ նույնը մեր աչքի առաջ կա-  
տարվում էր մեր քաղաքում՝ բացեփաց փողոցում: Թշվառ, թույլ կա-  
նայք ու երեխաները խազարներով մեռնում էին ճանապարհներին ու  
այն իջևանատանը, որտեղ նրանց տեղավորել էին մոտերքում:

Պետք է հինգ հարյուրից ոչ պակաս առևանգվածներ լինեն  
քաղաքի մուտավանների տներում, շատերին նույնիսկ անարգել և  
նորից փողոց են նետել: Նրանք նույնիսկ աղջիկներին անարգում են  
բացեփաց փողոցում՝ օտարերկրացիների աչքի առաջ: Այսպիսին է  
այն քաղաքի դրությունը, ուր ուղարկվում են պատերազմող  
երկրների քաղաքացիների կանայք ու դուստրերը:

Ավելին, դրությունն այստեղ վտանգավոր է: Ուրֆայի քրիստոն-  
յաները, տեսնելով և շատ լավ իմանալով, թե ինչ է տեղի ունենում  
տեղահանվածների հետ, մտադիր չեն համաձայնվել տեղահանու-  
թյանը, և եթե փորձ արվի, նրանք, հնարավոր է, դիմադրեն: Նույնիսկ  
մի քանիսի դիմադրությունը, անշուշտ, կնշանակի կոտորած, այդ  
դեպքում բոլոր քրիստոնյաները, ինչպես նաև օտարերկրացի,  
կհայտնվեն վտանգի մեջ: Ներկալված անձանց ճիշտ կեսը բնակ-  
վում են քաղաքի տեղացիների տներում, որտեղ նրանք կհանձնվեն  
բախտի քմահաճույքին, եթե պատահի վերը նշվածը: Դրությունը  
ճգնաժամային է: Մուսուլմաններին հուշել են տանել ներկալված ան-  
ձանցից մի քանիսի կանանց ու դուստրերին: Պաշտոնապես ճանաչ-  
ված չլինելով՝ ես չեմ կարող սատարել նրանց: Ես անկեղծորեն  
խնդրում եմ Ձեզ անմիջապես այստեղ ուղարկել փոխ-հյուպատոս  
Էդելմանին, որը կպաշտպանի ներկալված անձանց և գերմանացի  
հյուպատոսի հետ կանի ինչ հնարավոր է համոզելու տեղի ռազմա-  
կան հրամանատարին պաշտպանել տեղի քրիստոնյա բնակչու-  
թյանը և թույլ չտալ նրանց տեղահանությունը:

Քանի դեռ փոխ-հյուպատոսը չի եկել, ես չեմ կարող ո'չ կարգավորել այս գործը, ո'չ էլ ավելի երկար մնալ այստեղ:

Այստեղ պետք է գա առնվազն պրն. Էդելմանի պաշտոնն ունեցողը:

Ներկայված անձանց համար մենք կարիք ունենք մեծ գումարի: Խնդրում եմ այն ուղարկել փոխ-հյուպատոսի հետ: Գերմանացի միսիոներները տեղի իրադրության մասին նույն տեղեկատվությունն ուղարկում են իրենց հյուպատոսին:

Հավատարմորեն Ձերը՝

(Ստորագրված)՝ Ֆ.Հ. Լեսլի

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/139.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, pp.49-50.*

Փաստաթուղթ թիվ 30

Թիվ 267

ԱՍԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Միրիա.Հալեպ, 19 օգոստոսի, 1915թ.*

Առարկան՝ Հայերի տեղահանությունն ու կոտորածը

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ ուղարկելու դեսպանությանն ուղղված այսօրվա իմ թիվ 346 զեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է հայերի տեղահանությանն ու կոտորածին: Այս խնդրին ես նախապես անդրադարձել եմ իմ թիվ 264 և 265 համապատասխանաբար սույն ամսվա 3-ի և 10-ի զեկուցագրերում:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ.Բ. Ջեքսոն,

Հյուպատոս

Ներփակվածը՝ դեսպանությանն ուղղված թիվ 346 զեկուցագրի  
օրինակը (փաստ. թիվ 32)

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/155.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p. 51*

Փաստաթուղթ թիվ 31

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

30 օգոստոսի. 1915թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Անդրադառնալով իմ 1915թ օգոստոսի 21-ի, չիամարտակալած  
զեկուցագրին, որը վերաբերվում է Թուրքիայում հայերի հանդեպ  
թուրքական կառավարության վերաբերմունքին, պատիվ ունեմ ու-  
ղարկելու Ձեզ Հալևալի ամերիկյան հյուպատոսի 1915թ. օգոստոսի  
19-ի զեկուցագիրը երկու օրինակից:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու

Ներփակվածը՝ ըստ ասվածի (փաստ. թիվ 32)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/148.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p.52.*

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Միլիա, Հալեպ, 19 օգոստոսի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորզենբաու,*

Պարոն,

Պատիվ ունեմ լրացնելու իմ թիվ 333 և թիվ 341 գեկուցագրերը՝ թվագրված համապատասխանաբար 3 և 10 օգոստոսի, 1915թ. որոնք վերաբերվում էին հայերի տեղահանմանը, այսինքն.

Այնթապ քաղաքը արագորեն հայաթափվում է, մի քանի հազարն արդեն անցել են Հալեպով և գնում են դեպի հարավ: Քարավաններից մի քանիսը ենթարկվել են հարձակումների և կողոպտվել են, մի տղամարդ սպանվել է Այնթապի և Քիլիսի միջև, նրանց ունեցվածքը տարել են գյուղերի մուսուլման ցեղերը, չնայած այն փաստին, որ կառավարության կարգադրությամբ հայերին ուղեկցում են ժանդարմները, բայց նրանք ոչինչ չեն արել՝ իրենց հսկողության տակ գտնվողներին պաշտպանելու համար:

Այնթապի հայ համայնքն ամենահարուստն է ամբողջ կայսրությունում, և այստեղ լավ հնարավորություն ստեղծվում է թալանի համար: Քաղաքացիների տնային իրերը թողնվել են, և հենց առաջին կողոպտիչը կարող է տանել դրանք: Քանի որ քաղաքի վաճառականներից շատերը հայեր են, թալանվում են նաև նրանց խանութները: Սա հսկայական թալանի ծրագիր է, ինչպես նաև ազգի բնաջնջման ուղղությամբ մի վերջին հարված, չնայած որ այստեղ գոյություն ունի կառավարության կողմից նշանակված հայերի շահերը պաշտպանող հանձնաժողով:

Օգոստոսի 1-ից սկսած Բաղդադի գերմանական երկաթուղով Հալեպ են բերվել ինը գնացք՝ յուրաքանչյուրը այս դժբախտ մարդկանցով լի տասնհինգ վագոնով: Յուրաքանչյուր վագոնում կար 35-40 մարդ, և հաշվվում է, որ ի հավելումն ոտքով եկած բազմահազարների, մոտավորապես 5000-ին բերել են Ռաս-էլ-Էյնից, Արաբ-Բունարից և Ակջի Կոյունլիից, որն այն կայարանն է, որտեղից գնացք են նստել Այնթապի բնակիչները: Մինչև այժմ Հալեպ է ժամանել 20000

մարդ: Այս գնացքներն աշխատում էին Գլամասկոս-Համա գծի վրա և գնում են դեպի հարավ իրենց ուղևորներին թողնելով արաբների ու դրուզների մեջ, շնայած մի վտրբ մասին առայժմ թույլ են տվել մնալ Հալեպում:

Նրանք բոլորը սարսափելի պատմություններ են պատմում ճանապարհին տեղի ունեցող դժվարությունների, անարգանքների, կողոպուտի և դաժանությունների մասին: Այնթապից եկածների մեջ քիչ բացատրություններով կային տղամարդիկ, եթե կային, տաս տարեկանից բարձր աղջիկներ և երիտասարդ ամուսնացած կանայք:

Ներքին շրջաններից եկողները հեղինակիս պատմել են, որ Ուրֆայի և Արաբ-Ռունարի միջև տրորված արահետի մոտերքում ընկած են զոհերի դիակներ, իսկ այնտեղից քաանհինգ մղոն հեռավորության վրա՝ ճանապարհին կա 500-ից ավելի դիակ:

Սույն ամսվա 17-ին ստացվեց ներքին գործերի նախարարի հրամանը, ըստ որի բուլղարական հայերին թույլատրվում էր մնալ իրենց տեղում, սակայն հաջորդ օրվա հրամանով բոլոր հայերն անխտիր պետք է տեղահանվեին: Սա Հալեպում սարսափ է առաջացրել, քանի որ այստեղ կան հարյուրավոր պառավաբժան բողոքական ու կաթոլիկ հայեր, և լուրեր են պտտվում, որ հենց որ շրջակա քաղաքները դատարկվեն, հերթը կհասնի Հալեպին:

Կառավարությունը Մարդինից արտաքսեց բազմաթիվ կաթոլիկների, ասորիների, քաղղեսցիների ու բողոքականների, և վախ կա, որ բոլոր քրիստոնյաները, ինչպես նաև հրեաները, կարող են ենթարկվել այս հրամանին: «Թուրքիան մուսուլմաններին» կոչը, որ լսվում էր որոշ ժամանակ առաջ, հիմա նորից է հնչում, և տեղի ունեցող իրադարձությունների տեսակետից սա շատ կարևոր է:

Ափերից լուրեր են հասնում, որ Օրոնտիս գետի բերանի մոտ գտնվող Սվեդիայի շրջակա քաղաքներից՝ Բիտիաս, Հաջի Հապլի, Յուրունուլուկ, Հեղրե Բեյ, Կաբուսա (Մելուկիա) և այլն, 10000 հայեր դիմադրում են: Ասում են, որ հայերը հավաքվել են Մուսա լեռան վրա՝ ավից երկու ժամվա հեռավորությամբ, և սովորաբար մոտերքում գտնվող քրիստոնական կամ ֆրանսիական նավերից օգնության են սպասում: Սա միմչև այսօր հայերի կողմից ցուցաբերված ամենաարդյունավետ դիմադրությունն է, քանի որ ամենուրեք տեղահանությունն սկսելուց առաջ հայերն անվերապահորեն հանձնել են իրենց զենքերը:

Վերը նշված վայրերի հետ հեռագրով հաղորդակցվել հնարավոր չէ, և մենք ստանում ենք միայն խղճուկ լուրեր:

Գործին լավատեղյակ պահպանողական մարդիկ մինչև օգոստոսի 15-ը մարդկային կյանքի կորուստը ներկայացնում են մոտ 500000: Տուժած տարածաշրջանն ընդգրկում է Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքիի, Մամուրեթ-ալ-Ազիզի, Անգորայի, Սվազի նահանգները, որտեղ հայերն այդեն փաստորեն բնաջնջվել են. Հալեպն ու Ադանան թողնվել են լրացնելու, և այն այդ շարժումը արագ թափ է առնում:

Պատիվ ունեմ (և այլն),  
Ջ. Բ. Ջեքսոն,  
Հյուսիստոս

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59,867.4016/148.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarajian, Volume 1. The Lower Euphrates, pp.53-54.*

### Փաստաթուղթ թիվ 33

Թիվ 268

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հալեպ. 25 օգոստոսի. 1915թ.*

Առարկան՝ Բրիտոնյաների տեղահանությունն ու կոտորածը

*Վաշինգտոն*  
*Պատվարժան*  
*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ սրանով Ձեզ ուղարկել Կոստանդնուպոլսի դեսպանությանն ուղղված իմ թիվ 353 զեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է այս շրջանի բրիտոնյաների տեղահանությանն ու կոտորածին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն,  
Հյուսիստոս

Ներկիակվածը՝ 1) Կոստանդնուպոլսի դեսպանությանն ուղղված թիվ 353 զեկուցագրի օրինակը (վաստ. թիվ 34)

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.4016/186.  
2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower  
Euphrates, p. 55.

Փաստաթուղթ թիվ 34

Հալեայի հյուպատոսությունից պետական դեպարտամենտին  
ուղղված թիվ 368 զեկուցագրին կից

Թիվ 353

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հայեպ.25 օգոստոսի, 1915թ.

Թուրքիա, Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու,

Պարոն,

Պատիվ ունեն ուղարկելու հյուպատոսությանը հասցեագրված  
Թուրքիայի Մաքաշում ամերիկյան միսիայից պրն Ջեյմս Կ. Լիմանի  
1915թ. օգոստոսի 14-ի հաղորդագրության օրինակը, որը վերա-  
բերվում է կառավարության կողմից հայերի տեղահանումից հետո  
մերձակայքում տիրող իրավիճակին:

Ուղարկում եմ նաև Սիրիայի Քեսաբ քաղաքի միսիայից պրն  
Ջոն Մ. Հերտերի սույն ամսվա 23-ին հաղորդումը, որտեղ պատ-  
մըվում է այդ նույն պատճառով միսիայի աշխատանքների խափան-  
ման մասին:

Թուրքիայում Այնթապի կենտրոնական քոլեջի նախագահ  
պատվ. Ջոն Մերիլը օգոստոսի 17-ի իր գրության մեջ ասում է հետև-  
յալով

«Ինչպես զեկուցում է վստահելի ականատեսը, Բիրեջիկում  
բոլոր Գ-րիգորյան քրիստոնյաները, ինչպես նաև բողոքական հա-

մայնքի մեկ երրորդ մասը դարձել են մահմեդական և ընդունվում են որպես այդպիսիք: Բողոքականների մնացած մասը մնալու են հաստատական: Այս քայլի պատճառը այն փաստն է, որ Դիարբեքիլում տարածում գտած մեթոդներն սկսեցին կիրառել Ուրֆայում, և քանի որ Բիրեջիկը Ուրֆայի ղեկավարության տակ է, վախ կա, որ նույն մեթոդները կկիրառվեն Բիրեջիկում, այսինքն. «Տղամարդկանց անսպասելիորեն կանչում են, ձերբակալում, և նրանց ձևակաևորեն մի այլ տեղ ուղարկելով, նրանց ճանապարհին սպանում են, որից հետո որպես գաղթականներ՝ ուղարկում են կանանց և երեխաներին»:

Համաձայն հեռագրի ստուգված հյուպատոսությունում փոխհյուպատոս Լեդելմանից, որը գնացել էր Ուրֆա այնտեղ ներկայված անձանց համար փող տանելու, հաստատվում է, որ օգոստոսի 21-ին այնտեղ արդեն կոտորած է սկսել, և որ ինքը կվերադառնա առաջին գնացքով կառավարության կողմից տեղահանված կանանց ու երեխաների հետ: Ես սույն ամսվա 23-ին անմիջապես դեսպանությանը հեռագրեցի այդ մասին: 21-ից հետո ես ստացա մի այլ հեռագիր փոխհյուպատոս Լեդելմանից: Նա ասում է, որ վերադառնում է սույն ամսվա 25-ի (այսօրվա) գնացքով, սակայն տեղի իրավիճակի մասին ոչ մի տեղեկություն չի ուղարկել: Միանգամայն բնական է, որ կառավարությունը թույլ չի տա տեղի իրավիճակը ճշգրտորեն նկարագրող բաց հեռագիր ուղարկել: Երբ պրն Լեդելմանը վերադառնա, նրա ճանփորդության մասին ամփոփ զեկուցագիրը կուղարկվի Ձեզ:

Պարոն, պատիվ ունեն լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն, հյուպատոս

Ներփակվածը՝ 1) պրն Լիմանի հաղորդագրության օրինակը  
(փաստ. թիվ 35)

2) պրն Հերտերի հաղորդագրության օրինակը  
(փաստ. թիվ 34)

840.1

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.4016/186.

2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Saralian, Volume 1, The Lower  
Euphrates, pp.56-57.

Կոստանդնուլուսի դեսպանությանը ուղղված թիվ 353 զեկուցագրին  
կից

Պատճեն

ԱՄԵՐԻԿԱՆ ՄԻՍԻԱ

*Մարաշ, 14 օգոստոսի, 1915թ.*

*Հայեայ,*

*Ամերիկյան հյուպատոս*

*սյ-ն Ջ.Բ.Ջեքսոն*

Հարգելի պրն Ջեքսոն,

Քանի որ պրն. Սպիկերի Հալեպ վերադառնալու շնորհիվ Ձեզ հետ հաղորդակցվելու լավ առիթ է առաջացել, կարծում եմ, լավ կլինի ներկայացնել Ձեզ մեր գործերի հետ կապված խնդիրները: Մենք շատ կգնահատենք Ձեր օգնությունը այդ դժվարին հարցերում:

Որբանոցը. Դուք արդեն տեղյակ եք այն հիմնական փաստերին, որը վերաբերվում է կառավարության կողմից մեր շենքի բռնագրավմանը, քանի որ տեղական մասշտաբով այն գրանցված էր բժիշկ Մակալեմի՝ բրիտանացի հպատակի, անունով, չնայած մայրաքաղաքի իշխանություններն այն համարում էին ամերիկյան սեփականություն: Դեսպանությունն ու պրն. Փիթը որոշ ժամանակ առաջ աշխատում էին այդ ուղղությանը, և սպասվում էր, որ համաձայնության կգային: Սակայն այստեղ առաջ է եկել մի հանգամանք, որը բարդացնում է իրավիճակը: Դուք, անշուշտ, տեղյակ եք այս շրջանից հայերի ընդհանուր, հարկադիր արտագաղթին: Ըստ հրամանի. կարծես, դա կհանգեցնի այն բանին, որ որբերը կցրվեն: Մենք տեղում ոչինչ չենք կարող անել, քանի որ այստեղ չեն համարում, որ որբերի համար պատասխանատու ենք մենք: Այժմ որբանոցը համարվում է օսմանյան, քայց եթե հետագայում հրաման ստացվի որբանոցը մեզ վերադարձնելու մասին, ի՞նչ արժեք կունենա այն, երբ որբերն արդեն ցրված լինեն: Ավելին, երեխաների ցրումը կարծես թե ուղղակիորեն հակառակ է մայիսի 19-ի Ձեր նամակին. որում դուք պնդում եք, որ Հ.Է.Ֆակրի փաշան ասել է Ձեզ, որ երեխաներին պահելու են որբանոցում, սակայն քանի դեռ որբանոցը մեզ չի վերադարձվել, երեխաները լինելու են օսմանների հսկողության տակ: Չնայած այս պնդումներին, կարո՞ղ եք արդյոք միջնորդել Նորին գերագանցությանը, որպեսզի նա խոչընդոտի երեխաներին ցրելու գործին: Այս վիճակի հրամայական լինելը կարելի է

տեսնել նաև այն փաստով, որ Մարաշում ազգականներ ունեցող երեխաներին ուղարկում են նրանց մոտ, իսկ որբանոցի կազմի մեջ մտնող շենքերի կառավարիչներին տեղյակ են պահել, որ շուտով իրենք հեռանալու են Մարաշից:

Մենք ունենք նաև մի ուրիշ լուրջ բարդություն: Եթե հայերի գաղթը շարունակվի, մեր աշխատանքը փաստորեն կդադարի, և միսիայի գոյությունը բացարձակապես անհավանական կլինի: Այդ դեպքում այնքան բարի չէի՞ք գտնվի արդյոք տեղեկացնելու մեզ, թե ինչպես վարվենք մեր շենքերի հետ, որպեսզի մեր սեփականությունը ապահով մնա: Մարաշի ամերիկյան սեփականությունը ամենաքիչը 50000 դոլարի արժեք ունի, դրանք ապահովագրելու համար ի՞նչ է անհրաժեշտ անել: Իհարկե, նախքան որևէ բան անելը մենք կհաղորդակցվենք Ձեզ հետ և կսպասենք Ձեր ցուցումներին:

Դուք, հավանաբար, կտեսնեք բազմաթիվ արտաքսվածների, երբ նրանք անցնեն Հայեպոլ: Այստեղից հեռանալիս նրանց վիճակը ցավալի է: Թե ինչ կլինի հետո, երևակայության հարց է: Նրանք այստեղից հեռանում են իրականում առանց ոչնչի: Նրանք, վաճառելով իրենց իրերը, շատ գումար չեն կարող հավաքել, որովհետև գնորդները վճարում են ծիծաղելիորեն ցածր գներ: Հասկանալի է, որ ճանապարհին ուտելիքի զինը չափազանց բարձր է: Ավելին, մենք հավատացած ենք, որ հազարավոր դեպքերում իրենց ժամանման վայրում նրանք ոչնչի, նույնիսկ մի կոպիտ շինության հույս չունեն: Ի՞նչ է վիճելու նրանց հետ: Կարո՞ղ եք դեսպանությանը խնդրագիր ուղարկել, որպեսզի այս մարդկանց պահանջները ներկայացվի այժմ Կոստանդնուպոլսում գտնվող Ռոքֆելլեր հիմնադրամին՝ նրանց օգնություն ցույց տալու համար:

Ուզում ենք այս գործում ցուցաբերած ցանկացած օգնության համար նախօրոք շնորհակալություն հայտնել Ձեզ: Շնորհակալություն հայտնելով անցյալի Ձեր բարեգործությունների համար՝ մնում են

Անկեղծորեն Ձերը,

(ստորագրված) Ջեյմս Կ.Լ.Լիման

Աղբյուր: *1. U. S. State Department Record Group 59, 867.4016/186.*

*2. "United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower Euphrates, pp. 58-59.*

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

17 սեպտեմբերի, 1915թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ դեպարտամենտի տեղեկատվության համար ուղարկել 1915թ. օգոստոսի 20-ի իմ զեկուցագրի օրինակը, որն այս դեպարտամբյուրնը ատացել է Բաղդադի ամերիկյան հյուպատոսից, և որը վերաբերվում է Բաղդադի և այլ վայրերի վիճակին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու

Ներվիակվածը ըստ սակածի (փաստ. թիվ 38)

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59. 867.4016/191.  
2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1. The Lower  
Euphrates, p. 61.

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Թուրքիա, Բաղդադ, 29 օգոստոսի, 1915թ.

Առարկան Իրավիճակը Բաղդադում և այլ վայրերում

Թուրքիա, Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի արտակարգ և  
լիազոր դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Պատիվ ունեմ անդրադառնալու մեր հյուպատոսության տարբեր զեկուցագրերից այն հատվածներին, որտեղ ակնարկներ են

արվել Բաղդադում և նրա շրջակայքում օսմանյան հպատակների դրոթյան վերաբերյալ: Ի նկատի ունենալով այն փաստը, որ այս մարդկանց վիճակն անընդհատ վատանում է, համձնում են հետևյալ զեկուցագիրը՝ նրանցից դուրս թողնելով շատ կետեր, որոնք կարելի էր ներկայացնել. եթե ճշմարիտ լինեին, սակայն նրանց ճշմարտացիությանը ես կասկածում եմ և ներկայացնում եմ, միայն նրանք, որոնց հավատում եմ ինքս:

Մոսուլում վիճակը վատանում էր, սակայն քաղաքի առաջնորդ ազնվականությունը կարծես բավականին ուժ ուներ կառավարչի մոտ և նրան ստիպեց որևէ լուրջ և անարդարացի քայլերի չդիմել: Այնտեղից զեկուցում են, որ դրա հետևանքով Մոսուլում տեղի չունեցավ այնպիսի խիստ և անարդարացի միջոցառում, ինչպիսին եղել էր Բաղդադում: Սակայն, Թուրքիայի տարբեր մասերից, որտեղ եղել էին կորուստներ և տեղահանություններ, մեծ թվով քրիստոնյաներ ուղարկվեցին Մոսուլ և հանձնվեցին տեղի քրիստոնյա համայնքի խընամքին և կառավարությունը կարգադրեց, որպեսզի այս համայնքը ապահովի այդ մարդկանց (ասվում է, որ նրանց մատակարարումը կարգավորելիս ամենավատ վերաբերմունքի արժանանում են հայերը) ոչ միայն ապաստանը, այլև ուտելիքն ու սնունդը: Մոսուլի բնակիչները, հատկապես քրիստոնյաները, խստորեն հարկվել են պատերազմի ծախսերի համար, իսկ այս լրացուցիչ բեռը մի մեծ դժվարությունն առաջացրեց: Ինձ հայտնել են նաև, որ խիստ միջոցառումներ են ձեռնարկվել նաև տեղի քաղղեացի քրիստոնյաների դեմ, սակայն այդ գործողությունը ուղղվեց միայն երկու կամ երեք հոգևորականների դեմ, իսկ թե ինչ բնույթի են այդ գործողությունները, ես չգիտեմ: Խիստ հակաքրիստոնեական միջոցառումներ են իրականացրել քրդերը Մոսուլի նահանգի արևելյան մասի գյուղերում բնակվող քրիստոնյաների դեմ, Մոսուլի և Վանի նահանգների շատ նեստորականների (քրիստոնյաների) գյուղեր հարձակումների ու թալանի են ենթարկվել քուրդ և թուրք զինվորների կողմից, շատ մարդիկ սպանվել են:

Ռաս-էլ-Էյն քաղաքը՝ Հալեպից Մոսուլ երկաթուղու վերջին կայարանը, ոչ այլ ինչ է, քան աղքատիկ հարմարություններով հողաչեն խրճիթների խումբ: Այնտեղ քիչ ուտելիք կա: Ասում են, որ երբ Բաղդադի այժմյան գեներալ նահանգապետը Սարգիսի կառավարիչն էր (նա քողեց իր այդ պաշտոնը այժմյան պաշտոնին անցնելու համար), սկսել էր այնտեղ և շրջակայքում հետապնդել հայերին և ուղարկել էր նրանց Ռաս-էլ-Էյն: Բաղդադում զեկույց է ստացվել, որ

Ռ-աս-էլ-էյն ուղարկված հայերին կոտորել են այնտեղ կամ ճանապարհին:

Պարզվում է, 'Դեյր-էլ-Չորում կա մոտավորապես 3000-ից 5000 մարդ, որոնք այդտեղ են ուղարկվել Թուրքիայի շատ մասերից, նրանք հիմնականում հայեր են: Այս մարդիկ շատ բարձր պետք է վճարեն այն ուտելիքի համար, որն ի վիճակի են ձեռք բերել, և ինձ տեղեկացրել են, որ թուրքական կառավարությունը նրանց պահելու համար ոչինչ չի վճարում: Այնտեղի դրության մասին ինձ հասած յուրաքանչյուր զեկուցագիր հաստատում է նախորդ զեկուցագրերն այն մասին, որ իրենց տանելի գոյությունը կարող են ապահովել միայն նրանք, ովքեր կարողանում են գումար ստանալ իրենց ազգականներից:

Թուրքական կառավարության միջոցառումներում ամենատխտոր հատկանիշներից մեկը և այն, որը կարծես ընդհանուր է վերը նշված բոլոր երեք վայրերի համար այն է, որ ազգականներին թույլ չեն տալիս ազատ հաղորդակցվել: Լսել են մի ընտանիքի մասին, որի մորը ուղարկել են մի տեղ, դստերը՝ մի այլ, և ո'չ մայրը, և ո'չ էլ դուստրը չգիտեն, թե որտեղ է հայրը: Օր-օրի ետևից Բաղդադի այն բնակիչները, ում ազգականները տեղահանվել են, լուրերի են սպասում նրանցից, սակայն գրեթե ոչ մի լուր չի ստացվում, քանի դեռ նրանք չեն հասել մի տեղ, որը մոտ լինի որևէ ամերիկյան հյուպատոսության: Պետք է ավելացնել, որ քրիտանական կառավարությունը պատերազմի իր գերիներին թույլատրում է իրենց ազգականներին նամակներ (կամ ծայրահեղ դեպքում՝ բացիկներ) ուղարկել: Բազմաթիվ օսմանյան ուսատակներ, գրեթե բոլորն էլ շատ աղքատ մարդիկ, եկել են հյուպատոսություն և խնդրում են ինձ իրենց որդիներին պատասխան ուղարկել, ցույց են տվել իրենց որդիներից ստացած բացիկները և խնդրել են ուղարկել թեկուզ ամենապարզ նամակները: Պարզվում է, որ տեղական փոստատունը նույնիսկ այսպիսի մարդկանց թույլ չի տալիս իրենց ազգականներին մի պարզ նամակ ուղարկել: Նամակներ ուղարկող մարդիկ մահմեդականներ են, ինչպես նաև քրիստոնյաներ:

Պաշտոնավ Քաղդադին (Կերբելայի, Նեջեֆի կամ Քութի մասին չեն զեկուցում, որովհետև այդ քաղաքներից տեղեկություն չեն ստանում) կրկին անդրադառնում են մի քանի օր առաջ հայ տղամարդկանց տեղահանմանը: Ինչպես զեկուցվել է նախկինում, դրանք այն մարդիկ էին, ում դեմ կառավարությունը ոչ մի մեղադրանք չունեի, և նրանց դեմ դատական գործ չի հարուցվել: Ես լիովին համոզված էի, որ նրանք օսմանյան հավատարիմ հպատակներ էին:

Նրանցից երկուսը եղբայրներ էին և այս քաղաքում հարգված վաճառականներ, նրանց գործն արժեր 25000 ֆունտից ավելի: Նրանցից մեկը, մինչև իր ձերբակալման օրը, Բաղդադի քաղաքային խորհրդի անդամ էր և քրտնաջանորեն աշխատում էր ի շահ Բաղդադի: Մյուս եղբայրը, մինչև իր ձերբակալման օրը, անդամ էր տեղական մի թուրքական հանձնաժողովի. որը Բաղդադում իրականացնում էր բրիտանական ֆիրմաների արտադրանքի բաշխումը: Այսպիսով, այս մարդիկ բավականին հարգված էին թուրքական կառավարության կողմից, եթե նրանց վստահել էին այսպիսի պատվարժան և կարևոր պաշտոններ: Ձերբակալելուց հետո մի քանի ժամ շարունակ նրանց ուտել չեն բույստրել. իսկ բանտում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում նրանք տեղավորվել էին ամենաանհարմար և առողջության համար ոչ բարենպաստ խցերում: Ես բազմաթիվ հարցումներ արեցի, սակայն ի վիճակի չեղա հայտնաբերել, որ այս մարդկանցից որևէ մեկը կառավարության դեմ ինչ-որ գործողություն արած լիներ: Ձերբակալելուց հետո այս մարդկանց թույլ չտվեցին դուրս գալ, և նրանք ոչ մի հնարավորություն չունեցան կարգավորելու իրենց անձնական կամ աշխատանքային գործերը, և նրանց ազգականները, ինչպես տեղի է ունենում արտաքսման բոլոր դեպքերում, անհրաժեշտության դեպքում իրենք պետք է ապահովեն իրենց ճամփորդության համար անհրաժեշտ ամեն ինչով:

Կառավարությունը կարծես հրամաններ է արձակում քրիստոնյաներին նեղելու և խստորեն հետապնդելու մասին: (Յուրաքանչյուր ոստիկան իր փոքրիկ շրջանում իրեն համարում է գերադաս և կառավարում է ինչ-որ չափով կամայականորեն): Պատճառը, որի համար Բաղդադի քրիստոնյաներին, որպես ամբողջություն, ստիպում են տառապել, կարծես թե քրիստոնյաների հանդեպ մուսուլմանների լոկ ակնհայտ թշնամանքն է: (Հյուսիսային հայերի ապստամբությունը պատճառ հանդիսացավ հայերին հետապնդելու համար): Մեր օրերում ցանկացած քրիստոնյա իր անձնական թշնամու կողմից ոստիկանությանը ներկայացված բացարձակ կեղծ վկայությամբ և անհիմն մեղադրանքով շատ հեշտությամբ կարող է ձերբակալվել և տեղահանվել: Այս կերպ ձերբակալված քրիստոնյաները չեն դատվում, իսկ տեղահանման պատճառը նրանց երբեք չի ասվում:

Չեկուցվում է, որ բոլոր ոչ մուսուլմանները (իհարկե, բոլոր քրիստոնյաները) հեռացվելու են կառավարությունում իրենց պաշտոններից 1915թ. օգոստոսի 28-ին:

1915թ. օգոստոսի 28-ին արտաքսված քրիստոնյաների օրինակով կարելի է լավ ներկայացնել և՛ տեղահանված սողամարդկանց, և՛ նրանց ետ մնացած ընտանիքների վիճակը: Տղամարդկանց արտաքսեցին շատ արագ: Նրանց հավաքեցին իրենց տներից և Բաղդադից տարան 24 ժամվա ընթացքում՝ բոլլ չտալով այցելել իրենց ընտանիքներին: Messrs. Blockery Cree & Co ընկերության ավագ ծառայողը այստեղ թողել է կնոջը և յոթ երեխաներին, քարտուղարը՝ կնոջն ու չորս երեխաներին և քլոջը երեք երեխաներով, որոնց մի քանի տարի առաջ լքել էր մի անգլիացի: Հավանաբար, ավագ ծառայողի ընտանիքն ունի որոշ գումար, բայց թե ինչպե՞ս են ապրելու մյուսները, մեծ հայոց է: (Ես որոշ գումար եմ ուղարկել այն կնոջը, որին լքել էր անգլիացին): Կառավարությունը չի ապահովում ո՛չ արտաքսված սողամարդկանց, ո՛չ էլ նրանց ետ մնացած ընտանիքներին:

Քրիստոնեական համայնքի համար կարծես թե հեշտ խնդիր է այս մարդկանց ապահովումը, սակայն քրիստոնեական համայնքը այժմ յուրաքանչյուր քայլ ուղղում է իրեն պաշտպանելու համար: Պատերազմից առաջ շատ քրիստոնյաներ, իրենց ապահովության համար, ուղղակի, հույս էին կապում քրիտանական ֆիրմաների հետ: Այս ֆիրմաները շուրջ մեկ տարի արդեն վակված են, և այդ մարդկանց կուտակած գումարը այդ ժամանակահատվածում ծախսվել է՝ իրենց իսկ գոյությունը պահպանելու համար: Գլխեմ, որ շատերն են օգնել ուրիշներին, սակայն ինչքան երկար տևի այս լարվածությունը, այնքան ավելի շուտ այս քրիստոնեական համայնքը կմոտենա գուտ գոյության եզրին: Քրիստոնյաները նույնպես վճարել են կառավարության սահմանած պատերազմական հարկը:

Թվում է, նույն յուրջ միջոցառումները չեն ձեռնարկվում տեղական հրեաների նկատմամբ: Շատ հրեաներ (ինչպես նաև քրիստոնյաներ) ուղարկվել են որպես զինվորներ, և ընդամենը մի քանիսն են ձերբակալվել, բացառությամբ երկուսի, որ արտաքսվել էին Կուտից Բաղդադ: Արտաքսվել էր այն ժամանակ Messes, MacAndrews and Forbes ընկերության Կուտի գործակալը, ուրիշ ոչ մեկը չի արտաքրվել: Հրեաները հավատարմորեն օգնել են ռազմական արտադրությանը, և ինչպես եղավ ջրիեղելից տուժածների դեպքում, հրեական ուսմայնքը կազմակերպել է արդյունավետ օգնության գրասենյակ, և նրանք հոգ են տանում իրենց համայնքի տուժած անդամներին: Ես գլխեմ, որ ավելի հարուստ հրեաների վրա ծանր հարկեր են նշանակվել, իսկ իրենց համայնքի օգնության ֆոնդին նրանց մասնակցությունը բավականին ավելացնում է նրանց ֆինանսական

բեռը: Ընդամենը մի քանի հրեական ֆիրմաներ, որոնք արժեթղթեր ունեին պատերազմի սկզբում, որոշակի գումար են կուտակել, սակայն, ընդհանրապես, մի տարվա ընթացքում հրեա գործատերերը քիչ են վաճառել:

Բաղդադի փողոցներում անընդհատ կարելի է հանդիպել մուրացկանների: Երբ ես նոր էի եկել Բաղդադ, մուրացկաններ գրեթե չէի տեսնում: Այստեղ շատ թշվառ է ամենացածր խավի մարդկանց վիճակը, քանի որ նրանք գրեթե ոչինչ չունեն: Նրանք ապրում են չոր հացով, որը կոչվում է «ֆլեխիջեկ», բայց գեռն, իհարկե նրանց ապահովում է առատ ջրով: Սակայն նրանց վիճակը լավանում է, որովհետև վերջին մի քանի օրերի ընթացքում հասունանում է խուրմայի բերքը: Բաղդադում խուրմայի բերքը լավ է (Բաղդադից դուրս լավ չէ), և քանի որ արգելվել է բերքի արտահանումը, Բաղդադում շատ խուրմա կա վաճառքում և շատ էժան: Սա աղքատների համար մեծ բարեբախտություն է:

Չնայած վերը նշվածներին մեծ մասամբ ենթարկվել են քրիստոնյաները, շատ են տառապում նաև մահմեդական ավելի աղքատ խավերը: Ամենաաղքատ խավերի որոշ մահմեդականներ արտաքսվել են, իսկ շատ մահմեդական տղամարդիկ ուղարկվել են որպես զինվորներ: Չինվորների ընտանիքները, և՛ քրիստոնյա, և՛ մահմեդական, փաստորեն մնացել են առանց միջոցների, և չնայած հյուպատոսությունը վճարում է հարկ, որը սահմանված է նամակներից ու հեռագրերից «որբերի ֆոնդի» համար, երևի թե այս քաղաքում այդպիսի կազմակերպություն չկա: Ինձ տեղեկացրել են, որ անգամ ռազմաճակատում զինվորներին կարգին չեն կերակրում, և նույնիսկ ամառվա շոգին զինվորներն ապրելու համար բավարար վրաններ չունեն:

Բաղդադի շրջափակման պատճառով բնակչության բնական ճնշման ավելացման հետ այժմյան գեներալ նահանգապետ Շեֆեիկ Բեյը ստանձնեց նահանգի ղեկավարությունը, և սկսեց հայերի հետապնդումները և դիմեց այլ խիստ միջոցառումների, դրանով իսկ ավելացնելով կառավարության ճնշումը արդեն իսկ ճնշումների ենթարկված քաղաքի վրա: Նա դրական ոչինչ չի անում, ինչպես օրինակ՝ ջրհեղեղից քաղաքին պատճառած վնասների վերացման, կամ խողովակների վերակառուցման կամ էլ դռնա քաղաքում մնացած ջրի հեռացման ուղղությամբ: Այստեղ կարծես թե ընդհանուր կարծիք կա, որ քանի դեռ նա ղեկավարում է այս քաղաքում և նահանգում, ոչ մի լավ բան տեղի չի ունենա: Ես իսկապես ապշած եմ, որ մինչ այժմ այս քաղաքի ուժեղ և հարգված մահմեդական

ազնվականները ոչ մի քայլի չեն դիմել իրենց ազդեցությունը ցույց տալու համար ոչ միայն Բաղդադում, այլև Կոստանդնուպոլսում: Եթե դեսպանությունը ինչ-որ ձևով կարողանա խոչընդոտել այս բնույթի հետապնդումներին և բարելավել տեղի վիճակը, Բաղդադի բնակչությունը, և՛ քրիստոնյաները, և՛ ավելի մահմեդական լավ դասը, համոզված են, չափազանց երախտապարտ կլինի:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Չարլզ Փ. Բրիսել,  
Ամերիկյան հյուպատոս

800

Նշում. Խնդրում եմ հեռագրել հյուպատոսությանը, զեկուցագիր ստանալու համար:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.00/191.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, pp. 62-66.*

Փաստաթուղթ թիվ 39

Թիվ 478

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Կոստանդնուպոլիս, 21 սեպտեմբերի, 1915թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

:

Պարոն,  
Պատիվ ունեմ սրանով դեպարտամենտի տեղեկատվության համար ուղարկել Բաղդադի ամերիկյան հյուպատոսի 1915թ. սեպտեմբերի 1-ի զեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է այնտեղի հայերի ձերբակալություններին և տեղահանություններին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու

Ներկայացվածը՝ ըստ ասվածի (փաստ. թիվ 40)

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.4016/192.

2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower  
Euphrates. p.67.

## Փաստաթուղթ թիվ 40

Թիվ E 369

կրկնօրինակ՝ դեպարտամենտի համար

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Թուրքիա, Բաղդադ. 1 սեպտեմբերի. 1915թ.*

Առարկան՝ Հայերի ձերբակալություններն ու տեղահանությունները

*Թուրքիա. Կոստանդնուպոլիս*

*Ամերիկայի արտակարգ և*

*լիազոր դեսպան*

*Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեն դեսպանությանը հիշեցնելու մեր հյուպատոսության նախկին զեկուցագրերը, որոնք վերաբերվում են մոտավորապես տասն հայերի ձերբակալմանն ու տեղահանմանը: Այժմ պետք է զեկուցեն, որ այստեղ շարունակվում են հայերի ձերբակալությունները, և վերջերս ձերբակալվածների մեջ են մեր հյուպատոսության քարգմանի փեսան և երկու եղբայրները: Նախկինում ձերբակալվել և արսաքսվել էին նրա մյուս երկու փեսաները: Վերջերս ձերբակալվածները այժմ գտնվում են տեղական բանտի ամենավատ խցերում, և ոչ ոքի չեն թույլատրում տեսնել նրանց, չնայած թույլատրում են ուտել: Չեկուցում են, որ շուտով այս մարդկանց ուղարկելու են Մոսուլ:

Վերջերս ձերբակալվածների մեջ են նաև մեր հյուպատոսության երկրորդ քարգմանի (նա նաև հյուպատոսության ցրիչն է) երկու փեսաները:

Հավանաբար, ավելորդ է ավելացնել, որ այս խիստ միջոցառումները, որ ձեռնարկվում են մեր հյուպատոսության աշխատակիցների ազգականների դեմ, չի ազդել այս գրասենյակում աշխատող օսմանյան հպատակների ազատության ու ազատ գործունեության ավելացման վրա:

Մոտավորապես քառասուն բաղդադցի հայեր այժմ ձերբակալված են:

Պետք է ավելացնեմ, որ այս մարդկանցից ոչ մեկի դեմ մեղադրանք չկա և ոչ ոք չի դատվել:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Չարլզ Փ. Բրիսել

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.00/192.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, p. 68.*

Փաստաթուղթ թիվ 41

Թիվ 467

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ -  
ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

15 սեպտեմբերի, 1915թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պեստական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ դեպարտամենտի տեղեկատվության համար ներվիակել 1915թ. օգոստոսի 26-ի թվագրությամբ զեկուցագրի օրինակը, որը ստացվել է Բաղդադի ամերիկյան հյուպատոսից, և որը վերաբերվում է Բրիտանիայի հպատակներին այցելելու գործող զեներալ նահանգապետի մերժումին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու

Ներվիակվածը՝ ըստ ասվածի (վիստ. թիվ 42)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/194.*  
— 2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, p.69.*

Թիվ 356  
պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Թուրքիա, Բաղդադ, 26 օգոստոսի, 1915թ.*

Առարկան՝ Գործող գեներալ նահանգապետի կողմից Բրիտանիայի  
հպատակին այցելելու մերժումը

*Թուրքիա, Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի արտակարգ  
և լիազոր դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեն դեսպանությանը հիշեցնելու մեր հյուսպատուսո-  
թյան թիվ 363 զեկուցագիրը՝ լրացնելով այն հետևյալ մանրամասնու-  
թյուններով:

Պարոն Թադեուսը նույն Դաուդ Թադեուսն է՝ Messrs S.Lynch &  
Co ընկերության աշխատակիցը, որը տաս տարի շարունակ եղել է  
ընկերության գրադարանավարը, և եթե հնարավոր չլինի նրան  
վերադարձնել մինչև պատերազմի ավարտը, մեծ կորուստ կլինի մեր  
ընկերության համար: Պարոն Թադեուսի հետ արտաքսվել է նաև մեր  
ֆիրմայի հայ աշխատակից պարոն Վարդանը:

Երբ տղամարդիկ հասան այնտեղ, որտեղից պետք է մեկնեին  
(ուղքով անցած լինելով Սերայի փողոցներով) պարզվեց, որ կառքեր  
ունեին միայն հարուստ տղամարդիկ: Ժամդարմներն անմիջապես  
ստիպեցին հարուստներին իրենց կառքում տեղավորել ևս մեկին:

Այս տղամարդկանց հավաքատեղին պարզվում է, որ այժմ Մո-  
սուլն է, սակայն զեկուցվում է, որ վերջնական վայրը լինելու է Ռաս-  
ել-էյնը (Հալեպից Մոսուլ երկաթուղու վերջին կայարանը) կամ  
Դիարբեքիրը:

Արտաքսված տղամարդիկ 60-ից 65 տարեկան են, և ինձ ասել  
են, որ տեղական կառավարությունը նրանց դեմ ոչինչ չի հայտնա-  
բերել:

Իմ թարգմանի հետ քննարկելով գործող գեներալ-նահանգապե-  
տի հետ մեր գրույցը, որի մասին զեկուցել եմ թիվ 363 զեկուցագրում,  
իմացա, ու գործող գեներալ-նահանգապետը պնդում է ոչ միայն, որ

ես իրավունքներ չունեն Բրիտանիայի հպատակի հանդեպ, այլև, որ «եթե որևէ ամերիկացի ձերբակալված լիներ», ես չէի կարողանա այցելել նրան: Այս խնդիրն, այսպիսով, պարզվում է, որ շատ լուրջ է, բայց բանի որ այստեղ ուրիշ ամերիկացիներ չկան, բացի մեր հյուպատոսության առաջին և երկրորդ թարգմաններից, որոնք մեր հյուպատոսության հետ պաշտոնական հարաբերությունների մեջ են, նրա ակնարկը որևէ ամերիկացու դեպքում կարող է արդյունավետ չդառնալ, բայց ծառայում է պարզորոշ ցույց տալու համար գործող գեներալ-նահանգապետի մտադրությունը: Հետո նա ավելացրել է, որ եթե ձերբակալված լիներ որևէ ամերիկացի, ես, որպես հյուպատոս, իրավունք չէի ունենա նրա մասին հարցուփորձ անել: Բանի որ այս մաթրիկանց դեմ դատական գործ չի հարուցվել, միանգամայն պարզ է, որ նահանգապետի գործողությունը բացարձակ կամայականություն է:

Ինձ տեղեկացրել են, որ 1915թ. օգոստոսի 25-ին ձերբակալվել են ավելի շատ հայեր, և գործերն այժմ հասել են այն մակարդակին, որ վիսատորեն բոլոր հայերը կարգավորում են իրենց գործերը գիտակցելով, որ վաղ թե ուշ Բաղդադից արտաքսելու են նաև իրենց: Փաստորեն այս քաղաքի բոլոր քրիստոնյաներն ապրում են ամենօրյա վախով, համենայն դեպս, տեղահանության, և ես հավաստի աղքյուրներից խմանում եմ, որ Բաղդադի գիտակ տեղացիները համարում են, որ վիճակն այստեղ օրեցօր ավելի է վատանում:

Պարոն, պատիվ ունեն լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Չարլզ Փ. Բրիսել

C.F.B.

703

Նշում. Հենց նոր ինձ տեղեկացրեցին, որ Messers Sasson & Co ընկերության ծառայողները 1915թ. օգոստոսի 25-ին ազատ են արձակվել:

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.4016/194.

2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower  
Euphrates. pp.70-71.

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հայեպ. 27 օգոստոսի, 1915թ.*

Առարկան՝ Հայերի կոտորածը Ուրֆայում

*Թուրքիա, Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի արտակարգ  
և լիազոր դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ այստեղ ներվիակելու զեկուցագիր օգոստոսի 19-ին Ուրֆայում հայերի կոտորածի մասին, որը պատրաստված փոխ-հյուպատոս Էդելմանի կողմից, որը Ուրֆայում էր այն ժամանակ այնտեղ ներկաված օտարերկրյա քաղաքացիներին օգնություն տրամադրելու համար:

Այս զեկուցագրի մի օրինակը ուղարկվել է դեսպանությանը:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն, հյուպատոս

Ներվիակվածը՝ ըստ վերը նշվածի (վիստ. թիվ 44)

Աղբյուր 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/203.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower  
Euphrates, p.72.*

ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ ՈՒՐՖԱՅՈՒՄ ՓՈՒՆ-ՀՅՈՒՊԱՏՈՍ ՍԵՄՅՈՒԵԼ ԷՂԵԼՄԱՆԻՑ

*Սիրիա, Հայեպ. 26 օգոստոսի. 1915թ.*

Չնայած Ուրֆյան ընդհանուր տեղահանության չենթարկվեց, ինչպես պատահեց կայսրության հայկական նահանգներից շատերի հետ, այնուամենայնիվ իրավիճակն այստեղ օրեցօր դառնում է ճգնաժամային: Դժբախտ գաղթականների շարքերը, որ անցնում են քաղաքով ամեն օր, հուշում են, թե ինչ է ապագան պատրաստել հայ

ազգի համար՝ կանանց ու երեխաների անջատում, մանր պաշտոնյաների և ֆանատ քուրդ գյուղացիների կողմից կանանց անարգում, հյուժվածությունից մահ ճանապարհին, սղամարդկանց առեղծվածային անհետացում՝ կանանցից բռնի անջատումից հետո: Այս տեսարաններն այսօր սովորական են Թուրքիայի ներքին շրջաններում շրջողների համար:

Վանի հայերի կողմից մահմեդականների սպանություններին հետևեց Ութֆայում զենք գտնելու նպատակով հայերի սնների մանրագննին խուզարկությունը: Պատվարժան հայերի ձերբակալություններն ու բանտարկությունները, նրանց հետագա արտաքսումը անհայտ ուղղությամբ առաջ բերեցին ասի ու սարսափի հայ բնակչության շրջանում, և հանգեցրեցին դիմադրության մասին մտածելու հանդուգն տրամադրության, եթե նման ճակատագիր սպասվեր իրենց քաղաքին:

Օգոստոսի 19-ին, երբ ոստիկանությունը զենք էր փնտրում, մի քանի հայեր կրակ բացեցին նրանց վրա, և սպանվեց երկու ոստիկան: Սա այն կայծն էր, որը բորբոքեց քուրդ բնակչության կատաղությունը, և զինվելով ձեռքի տակ ընկած զենքով, ներառյալ փայտյա ձողերն ու երկաթյա սրածայր իրերը, հարձակվեցին հայկական թաղամասի վրա: Բոլոր նրանք, ովքեր հանդիպեցին նրանց, առանց խղճահարության սրի քաշվեցին, դրան հետևեց հայերի խանութների թալանը:

Երբ խառնաշփոթը սկսեց, ես մեր հյուպատոսական գործակալ պատվ. Լեսլիի հետ նահանգապետի մոտ էի: Ես անմիջապես նահանգապետին խնդրեցի պաշտպանություն տրամադրել ամերիկյան միսիոներական կազմակերպություններին ու այստեղ ներկայված պատերազմող երկրների մեծ թվով քաղաքացիներին և առաջարկեցի հսկողություն սահմանել ամբոխի վրա լրիվ կոտորած թույլ չտալու համար: Սա արվեց, և հետագայում ես առիթ ունեցա զովաբանելու նահանգապետին իր ակտիվ գործողությունների համար, որն անշուշտ փրկեց մնացած հայերին: Պատերազմող երկրների քաղաքացիներից շատերը, որոնք փողոցում էին այն պահին, երբ սկիզբ առան անկարգությունները, ապաստան գտան նահանգապետի տանը, և երկու ոստիկանի ուղեկցությամբ ես կարողացա ապահով կերպով նրանց տանել իրենց տները, որտեղից պատվ. Լեսլիի հետ ես վերադարձա միսիա, այստեղ ապաստան էին գտել շատ մարդիկ, իսկ հարևան բողոքական եկեղեցին լի էր հարյուրավոր կանանցով և

երեխաներով: Փողոցներով անցնելիս՝ ես ականատես եղա վայրենի վարքով ամբոխի բուռն կատաղությանը: Մի հայի կրակեցին ինձնից տաս քայլի վրա, և եթե պահակները չլինեին, մեզնից ոչ մեկը ապահով տեղ չէր հասնի: Սպանվեցին նաև շատ ոչ հայեր, ներառյալ Զինգեր կարի մեքենայի ընկերության կառավարիչը, որը հույն է: Պատերազմող երկրների քաղաքացիներից շատերին հաջողվեց փախչել, չնայած երեք մարդ թեթև վիրավորվեցին:

Սպանվածների ամբողջական թիվը երբեք չի իմացվի, սակայն ամենահամեստ հաշվարկով այդ թիվը երկու հարյուր հիսուն է: 20-ի առավույան մենք տեսանք դեռևս փողոցներում ընկած շատ թե քիչ խոշտանգված մարմիններ: Չնայած հայերի հանդեպ իրենց խորատելությանը, ոստիկանները լավ կատարեցին իրենց պարտականությունները, սակայն նրանց թիվը չբավարարեց ամբոխին կարգի հրավիրելու համար: Ուրֆան, որի 50000 բնակիչներից 20000-ը հայեր են, համապատասխան պաշտպանություն իրականացնելու համար կարիք ունի կայսզորի:

Խառնաշփոթից հետո ոչ մի հայ չի համարձակվում իր տնից դուրս գալ, չնայած կանայք ու երեխաները հանգիստ շրջում են իրենց թաղամասում:

Գրեթե հավաստի է, որ խառնաշփոթին կհետևի Ուրֆայից հայ բնակչության տեղահանումը: Երբ ես նահանգապետի ուշադրությունը հրավիրեցի դեսպանության հեռագրի վրա, որում ասվում էր, որ ընդհանուր տեղահանության օրենքը չի տարածվում կաթոլիկ ու բողոքական հայ համայնքների վրա, նա կոպտորեն ինձ ասաց, որ առանց արտաքին միջամտության էլ կառավարությունը իր պարտականությունները կարող է լավ կատարել:

Մինչև այսօր ամերիկյան հաստատություններին չեն անհանգստացրել, չնայած միսիան կասկածի տակ է (միանգամայն անհիմն) կասկածելի հայերին ապատան տալու համար:

Խառնաշփոթից վեց օր հետո, երբ ես համոզվեցի, որ իրավիճակը խաղաղ կմնա, ես հավաքեցի պատերազմող երկրների քաղաքացիների կամանց ու երեխաներին, որոնց համար կային կառքեր և նրանց ետ տարան Հալեպ: Ի նկատի ունենալով վերը նշվածը, ես անկեղծորեն խնդրում եմ, որ այժմ Ուրֆայում ներկայված պատերազմող երկրների քաղաքացիները անմիջապես հեռացվեն այստե-

դից այնպիսի մի տեղ, որտեղ ազգային զգացմունքներն այսքան սուր չեն, և որտեղ հեռանալու ճանապարհներն ավելի ապահով են:

(ստորագրված) Լդելման,  
վոխ-հյուպատոս

Ներփակվածը՝ ըստ վերը նշվածի (փաստ. թիվ 44)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/203.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower Euphrates, pp. 73-76.*

Փաստաթուղթ թիվ 45

Թիվ 532

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

16 հոկտեմբերի, 1915թ.

Վաշինգտոն

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեն դեպարտամենտի տեղեկատվության համար ուղարկել Բաղդադի ամերիկյան հյուպատոսի զեկուցագրի օրինակը, որը վերաբերում է այդ վայրում որոշ հայերի հանդեպ ձեռնարկված միջոցառումներին:

Պատիվ ունեն լինելու, պարոն,

Ձեր խոնարի ծառան՝

(ստորագրված) Մորզենթաու

Ներփակվածը՝ «Բաղդադի իրավիճակը» վերնագրով 1915թ.

սեպտեմբերի 10-ի թիվ 387 զեկուցագրի օրինակը  
(փաստ. թիվ 46)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/205.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower Euphrates, p. 77.*

Թիվ E.387  
կրկնօրինակ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Թուրքիա, Բարդադ...10 սեպտեմբերի, 1915թ.*

Առարկան՝ Բաղդադի իրավիճակը

*Թուրքիա, Կոստանդնուպոլիս  
Ամերիկայի արտակարգ  
և լիազոր դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ դեսպանությանը հիշեցնելու մեր հյուպատոսության 1915թ. օգոստոսի 29-ի թիվ 372 զեկուցագիրը, որը վերաբերվում է այս քաղաքի հայերի հետապնդումներին և ասելու, որ 1915թ. օգոստոսի 29-ի շաբաթվա ընթացքում ավելի քան 16 հայեր ձերբակալվեցին: Ձերբակալվածների մեջ էին մեր հյուպատոսության թարգմանի երկու եղբայրները և մի փեսան: Մյուս երկուսը մեր հյուպատոսության երկրորդ թարգմանի երկու փեսաներն էին:

Այս մարդկանց ձերբակալության համար ոչ մի պատճառաբանություն չկա՝ բացի քաղաքականից: Նրանց չդատեցին և ոչ մի հնարավորություն չտրվեց ապացուցելու, որ իրենք անմեղ են: Չնայած այստեղ գոյություն ունի զինվորական դատարան, և նրանք ցանկություն հայտնեցին, որպեսզի իրենց հնարավորություն տրվի կանգնել դատարանի առաջ, սակայն այն նրանց չտրվեց: Մա պարզապես բացարձակ դեսպոտիզմի օրենքն է: Տղամարդկանց մի մասը շատ հարուստ է, իսկ նրանք բոլորը՝ բավականին հարգված:

Սեպտեմբերի չորսին տասնվեց տղամարդկանցից ինը ազատ արձակվեցին, սակայն յոթը, ներառյալ հյուպատոսության թարգմանի երկու եղբայրներն ու երկրորդ թարգմանի երկու փեսաները, մնացին: Շատերը գնացին գործող գեներալ-նահանգապետի մոտ բոլոր տասնվեցի համար, ինը տղամարդկանց ազատումից հետո շատ վորձեր արվեցին մնացած յոթին ազատելու համար, սակայն հաջողության չհասան: Կառավարությունը այդ մարդկանց տեղահանության համար քացարձակապես ոչ մի պատճառաբանություն չի տալիս. բացի, հավանաբար նրանից, որ ասվել է մեր հյուպատոսության թարգմանին, որ նրա եղբայրները խոսել էին կառավարության դեմ: Գործող գեներալ-նահանգապետին խնդրագիր ներկայացվեց այն մասին, որ թարգմանի եղբայրները հանդիպեն իրենց մեղադրողին, իսկ մեղադրանքը քննության առնվի, սակայն գեներալ-

նահանգապետը մերժեց: Սա շատ յուրջ գործ է այդ մարդկանց համար. քանի որ նրանք արտաքսվում են և չգիտեն, թե ուր են գնում: Ի նկատի ունենալով հյուսիսի հայերի հանդեպ եղած վերաբերմունքը՝ նրանք այստեղից հեռացան բավական անհանգստացած իրենց վերջնական ապահովության համար:

Ինչ վերաբերվում է մեր երկրորդ թարգմանի երկու փեսաներին, առաջձմ, կարծես, ոչ մի պատճառաբանություն չկա: Ասում են, որ արտաքսվելու են միայն նրանք. ովքեր ծնվել են այն վայրերին մոտ, որտեղ հայերը ապստամբություններ են արել, և մի քանիսը կարծեցին, որ արտաքսված յոթ մարդիկ (նրանք բոլորն էլ Բաղդադից արտաքսվեցին սեպտեմբերի 6-ին, առաջին հավաքատեղին՝ Մոսուլ) ծնվել էին հյուսիսում և Բաղդադ էին գաղթել հյուսիսից, սակայն երկրորդ թարգմանի փեսաներից մեկը ծնվել էր Բաղդադում, մյուսը՝ Մոսուլում: Ամենայն հատկությամբ հասկանում են, որ այս երկու տղամարդկանց դեպքում կառավարությունը գործել է չափազանց դեպուտիկ և անարդարացի: Եթե կառավարությունն ուներ լավ և բավարար պատճառ, ինչու՞ թույլ չտվեցին իմանալ այն: Այստեղ գոյություն ունի գինվորական դատարան, ինչու՞ այդ մարդկանց հնարավորություն չտվեցին պաշպանելու իրենց: Ինչու՞ թույլ չտվեցին տեսնել ապացույցները: Նրանք հարգված մարդիկ են, և ինչպես արդեն ասվել է, ես չեմ լսել, որ որևէ մեկը պնդի, թե յոթից մեկը քաղաքականության մեջ լինի: Չնայած հյուսիսում հնարավոր է, որ եղել են ապստամբություններ՝ այս մարդիկ հավատարիմ են եղել օսմանյան կառավարությանը, և այդ իսկ պատճառով նրանց հետ այդպես վարվելը թվում է ավելի անարդարացի:

Մնացած երեք ողամարդիկ շատ աննշան էին: Մեկը տեղի դերձակն է, գրեթե առանց եկամտախի: Նա թողել է կնոջն ու վեց երեխաներին: Նա չունեի գումար կառք ձեռք բերելու համար, և թարգմանի երկու եղբայրները, որ վարձել էին երկու կառք, նրան թույլ տվեցին տեղավորվել իրենց կառքի բեռնատար մասում:

Մյուս երկու տղամարդկանցից մեկը մեկ տարի առաջ Դիարբեքիից եկել էր Բաղդադ՝ վճարում անելու համար և մնացել էր այստեղ: Մյուսը մանր վաճառական էր, որի ընտանիքը եկել էր Դիարբեքիի մոտերքից մի քանի տարի առաջ:

Մինչև այս մարդկանց հեռանալը, կառավարությունը ձիավոր ժանդարմներ էր ուղարկում տեղահանվածների հետ: Այս անգամ, ի հնամենի մահր բեռների, տեղահանվածները ստիպված էին իրենց ձեռք բերած կառքերով տանել նաև ժանդարմներին: Ինը օրվա բանտարկության ընթացքում այս մարդիկ սովորական հանցագործների նման մեկուսացվել էին տեղի բանտում ամենախիսա պայմաններում:

Հավանաբար, անհնար է պատշաճ կերպով դեսպանությանը ներկայացնել այս քաղաքում գործերի անարդարացի, կուզեի ասել, դաժան կառավարումը՝ ներկա գործող գեներալ-նահանգապետի ժամանումից ու պատասխանատվության ստանձնումից ի վեր: Կարիք չկա ավելացնելու, որ շատ մարդիկ չափազանց վախեցած են, ոչ թե որովհետև մեղավոր են, այլ մյուսների հետ վերաբերմունքից հասկանում են, որ բավական է. որպեսզի որևէ մեկը բողոքի իրենց դեմ, և առանց դատի իրենց կարտաքսեն Բաղդադից, և իրենք կկրեն մույն տառապանքները, որոնք կհասնեն իրենց: Եթե դեսպանությունը կարողանա որևէ բան անել, որպեսզի այս քաղաքի բնակիչների հարցը լուծվի թեկուզ մի փոքր արդարությամբ, նրանք անշուշտ չափազանց երախտապարտ կլինեն:

Այդ կապակցությամբ զեկուցվում է, որ թարգմանի երկու եղբայրների հետ վատ վերաբերմունքի պատճառներից մեկն էլ այն էր. որ նրանք Բաղդադի նախկին գեներալ-նահանգապետի Սուլեյման Նատիֆ Բեյի, ընկերներն էին: Ինձ նաև տեղեկացրել են, որ Սուլեյման Նատիֆ Բեյը Կոստանդնուպոլսում է, և մեր հյուպատոսության թարգմանը ինձ խնդրել է դիմել դեսպանությանը, որպեսզի հայտնեն Սուլեյման Նատիֆ Բեյին իր երկու եղբայրների նկատմամբ վերաբերմունքի մասին, հուսալով, որ նա կկարողանա նրանց վիճակի արմատական բարելավում ապահովել: Եթե դեսպանությունը այս խնդրի վրա հրավիրի Սուլեյման Նատիֆ Բեյի ուշադրությունը, կուզենալի խոսեիք նաև մեր երկրորդ թարգմանի երկու փեսաների մասին:

Մեր երկրորդ թարգմանի (որը նաև մեր հյուպատոսության ցրիչն է.) փեսաների անուններն են.

Մելքոն Շամլյան (ծնված Մոսուլում),

Յուսիֆ Իբրահիմ (ծնված Բաղդադում): Թարգմանի երկու եղբայրների անուններն են.

Գառնիկ Հակոբի Կույումջյան,

Մարտիրոս Հակոբի Կույումջյան:

Զեկուցագրի հետ կապված պետք է դեսպանությանը հիշեցնեն մեր հյուպատոսության թիվ 388, 389 և 390 զեկուցագրերը:

Պարոն, պատիվ ունեն լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Չարլզ Ֆ. Բրիսել.

Ամերիկյան հյուպատոս

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59.867.4016/205.  
2. "United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower  
Euphrates, pp. 78-80.

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

22 Խոկտեմբերի, 1915թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ դեպարտարտամենտի տեղեկատվության համար  
նողարկել Դամասկոսի ամերիկյան հյուպատոսության գործակալի  
զեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է այդ վայրում որոշ  
ամերիկացիների դեմ ձեռնարկված միջոցառումներին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներիակվածը՝ Դամասկոսի հյուպատոսական գործակալի  
1915թ. սեպտեմբերի 20-ի զեկուցագրի  
օրինակը (փաստ. թիվ 48)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59,867.4016/212.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p. 81.*

20 սեպտեմբերի, 1915թ.

Թորքիա. Կոստանդնուպոլիս .

Ամերիկյան դեսպան

Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Պատիվ ունեմ Ձեզ զեկուցելու, որ 1915թ. օգոստոսի 12-ից ի վեր  
մի քանի հարյուրից մինչև երկու հազար մարդուց կազմված հայ  
գաղթականների խմբեր են անցել այս քաղաքով փոփոխական ընդ-  
միջումներով՝ շաբաթը երկու, երեք կամ ավելի խմբեր:

Պետք է ասեմ, որ մինչև ներկա պահը համեստ հաշվարկներով  
8000-ից մինչև 10000 մարդ է անցել Դամասկոսով: Սա, իմ իմա-  
նալով, շարունակվում է օգոստոսի 12-ից:

Նորին գերազանցություն Սյրիայի գեներալ-նահանգապետն իմ խնդրանքով ինձ տեղեկացրեց, որ այս բոլոր մարդիկ հալեր են. որոնք Վանի ու Բիթլիսի նահանգներում ապստամբելու և իրենց կառավարությունը հաստատելու համար արտաքսվում են Դամասկոսի շրջակա շրջաններն ու ցրվելու են երկուական, երեքական և այլն. տարբեր գյուղերում ու քաղաքներում: Երբ ես հայտարարեցի, որ վստահ եմ, եթե կառավարությունը թույլ տա, ի վիճակի կլինեմ գումար ձեռք բերել Ամերիկյան Կարմիր Խաչից, որպեսզի օգնություն ցույց տրվի այս մարդկանց, որոնք անկասկած կարիքի մեջ կլինեն, ի պատահախան՝ Նորին գերազանցությունը տեղեկացրեց, որ կառավարությունը թույլ չի տա. քանի որ ինքն անում է այն ամենը ինչ հնարավոր է՝ տրամադրում է ուտելիք, վրաններ և այլն:

Շրջում են բազմաթիվ պատմությունների դժվարությունների, կարիքի, սովի տառապանքների, պայմաններ չլինելու դեպքում ստիպողական երթի, ուղեկցող հսկիչների դաժանությունների, երիտասարդ կանանց նկատմամբ բռնությունների, տուն ունենալու համար երեխաներին ուրիշներին նվիրելու կամ վաճառելու և այլնի մասին. սակայն դրանց ես չէի հավատում և նույնիսկ այժմ. համոզված եմ, որ պտուղող ամենատեսալի պատմություններից շատերը չափազանցված են: Սակայն կան մի քանիսը, որոնց ես պետք է հավատամ:

Դրանից մեկն այն է, որ մի կին, որը վեց կամ յոթ ամսեկան հղի էր, և բնականաբար, ի վիճակի չէր այսպես քայլել. սակայն ստիպված էր քայլել խմբից ետ չմնալու համար, ճանապարհին ընկավ ու մահացավ: Լսել եմ մի քանի դեպքերի մասին, երբ երիտասարդ աղջիկներին ու տղաներին առնում էին մարդիկ, ովքեր ցանկանում էին որևէ կերպ օգնել նրանց, քանի որ նրանց ծնողները համառորեն խնդրում էին վերցնել իրենց երեխաներին որպես ծառաներ, միայն թե նրանք տուն ունենային: Ինձ նաև ասել են, որ որոշ հսկիչ զինվորներ գաղթականների քայլերն արագացնելու համար մտրակահարում էին նրանց, որոնք, չափազանց հյուժված լինելով վտրձում էին քայլել, կամ կարեկցող քրիստոնյաներից ուտելիք կամ գումար էին վերցնում:

Լսել եմ նաև քարյացակամ մուսուլմանների բարության մասին, որոնք խղճում էին տառապալներին, իսկ պատահաբար լսեցի, թե ինչպես մի հասարակ մուսուլման զինվոր, որը հազիվ է ծայրը ծայրին հասցնում, ասում էր, որ երկու մեջլիդի է տվել քրիստոնյա գաղթականներին:

Մի քանի անգամ զնացել եմ այն վայրը, որտեղով անցնում են գաղթականները, իմ աչքով նրանց տեսնելու համար, սակայն ոչ մի անգամ ինձ չհաջողվեց այնտեղ լինել նրանց անցնելու ժամանակ:

Կահողեմը քաղաքի արվարձաններում մի մեծ հավաքատեղի է, որտեղ նախապես կուտակվում են Դամասկոսով անցնող բոլոր գաղթականները, որպեսզի հետո ցրվեն այն քաղաքներում, որտեղ ի վերջո ապրելու են:

Մի քանի օր առաջ գնացի այդտեղ, որպեսզի գաղափար կազմեմ իրավիճակի մասին: Այն ընդարձակ բաց տարածք է, իրականում խոտազորկ, կան մի քանի ծառաներ: Այն գրեթե ծածկված էր ճանապարհիին հալումաչ եղած ամբողջովին ընկճված ցնցոտիավոր անհատների խմբերով: Կային բնդամենը մի քանի վրաններ կամ տարբեր տեսակի ծածկեր, որոնք հանպատրաստից ստեղծվածի տպավորություն էին թողնում: Մարդկանց խմբի սահմանագծի մոտ ինձ դիմավորեց մի ուտիկան և ուղեկցեց ճամբարի պատասխանատուի մոտ: Ես իրականում ոչինչ չտեսա և իմացա միայն այն, ինչ նա պատմեց ինձ: Նա շատ քաղաքավարի էր: Ըստ նրա, իսկ նա ինձ ասաց, որ ես կարող եմ հավատալ իրեն, այդ օրն այնտեղ կային 2000 պատահական հայեր, իսկ մինչ այդ օրը այդտեղով անցել են մոտավորապես 20000-ը, որոնք փաստորեն տեղահանվել են հայերով բնակեցված բոլոր նահանգներից, բացի Վանից: Նա կարծում էր, որ Վանի գաղթականները դեռևս տեղ չեն հասել, քանի որ այն հեռու է: Նախքան տեղահանման ավարտը 100000 հայեր պետք է ցրվեն Դամասկոսի շրջակա քաղաքներում: Ինձ տեղեկացրեցին, որ հիվանդների համար հիմնվել է հիվանդանոց, որտեղ կա 50 մարդ: Հետո նա ինձ ասաց, որ մահացու դեպքեր չկան, կառավարությունը նրանց, այսինքն, բոլոր գաղթականներին ուտելիք է տրամադրում: Դամբարի տնօրենի վրանից ես հեռացա և միակ քանը, որ տեսա ինձ ուղեկցելու ժամանակ, մի վագոն էր, որը երթևեկում էր ճամբարի և հիվանդանոցի միջև: Պարզվեց, որ հիվանդանոցը լիքն է: Նույն օրը Կահողեմ ճանապարհվեց Իսպանիայի հյուսիստարածք: Համոզված եմ, որ նա այնքան մոտ չի գնացել, որքան ես:

Տեղահանված հայերից մեկը, որն այցելեց մեր գրասենյակ, ասաց, որ Հայեպի մոտերքից է Ջեսաբից: Ըստ նրա պատմածի, նա քայլել էր մոտավորապես տաս օր, և հարցումներից իմացա, որ տառապանքները ճանապարհին չափազանց էին նրանց համար, ովքեր բավականին ուժեղ չէին: Նա ասաց, որ իրենք անցել էին խմբի առջևից գնացողների դիակների մոտով, որոնք չէին դիմացել: Այդ մարդը բողոքում էր, որ իր կինն ու ընտանիքը գալիս էին գնացքով: Պատմելիս նա գրեթե լաց եղավ, գաղափար չունեի, թե ինչ է լինելու իր հետ, քայց քիչ էլ անհանգստանում էր:

1915թ. սեպտեմբերի 11-ին Իսպանիայի հյուպատոսն ու ես պատահաբար անցնում էինք քրիստոնեական թաղամասով. երբ հանդիպեցինք Կահդեմ գնացող գաղթականների երթին: Երկրի ներքին շրջաններում մարդ արդեն սովորում է աղքատիկ հագնված ցրցոտիավոր մարդկանց. որոնց դեմքերը կարծես երբեք ուրախություն չեն արտահայտել. լռությամբ քարշ եկող մի խումբ ավտոմատների դեմքերին կարելի է տեսնել մեծ հոգնածության, հուսահատության, անհույս տառապանքի արտահայտություն, որը նրանք կրում են աներեր: Տղամարդկանց, կանանց, երեխաների մի մասը միայն ուշադրություն դարձրեց մեզ վրա, միայն այն բանից հետո. երբ մենք նրանց առաջարկեցինք պատահաբար մեզ մոտ եղած մանրադրամք: Մեծ մասին, կարծես, հետաքրքրում էր միայն երթը համառորեն շարունակելը, մինչև որ գիշերվա դադարը թույլ կտար իրենց հանգստանալ: Այդ պահին ժամը վեցից քիչ անց էր:

Թափորը հիմնականում կազմված էր ծեր ու երիտասարդ մարդկանցից: Ահա անցավ մի տղա, հագիվ տաս տարեկան, իսկ նրա մեջքին կա ավելի փոքր մի երեխա, մի կին տարիքից կռացած մեջքով, հագիվ քարշ է գալիս ձեռնափայտի օգնությամբ, մի փոքրիկ երեխա լաց է լինում, որովհետև ճանապարհին կորցրել է մորը, նրա ետևից մի ծերունի քարշ է տալիս իր վերջին ունեցվածքը՝ մի ավանակ: Հետո մի կին, ակնհայտորեն հղի, ցավից տնջում է յուրաքանչյուր քայլ անելիս: Նկատելի է, որ երիտասարդ կանայք ու տղամարդիկ չկան: Տարբեր զեկուցագրերից իմացել եմ, որ շատ տեղահանվածներ ժամանել են գնացքով, իսկ այստեղով անցածների ընդհանուր թիվը հասնում է 22000-ի:

Այդ ճանապարհով անցած մի մարդուց իմացա, որ ըստ իր եզրակացության, Իսմիլից հարավ ապրող բոլոր հայերը տեղահանվում են: Նույն լրագրից, որի ասածներին կասկածել պետք չէ, իմացա, որ ճանապարհին նա անցել է հազարավոր հայերի մոտով: Նրանք ամենասարսափելի վիճակում էին: Օսմանիեում հավաքվել էին մոտ 8000 տեղահանվածներ: Նա ասում է, որ այստեղից մի քանի մղոն հեռու ասիական գաղափարություն է, ինչպիսին գալիս է կեդտոտ թռչնաճուղից: Գաղթականների ճամբարի ներքևի մասերում հոտը դառնում է ավելի տհաճ. իսկ զգվելի ճանճերն այնտեղ վխտում են: Այդ մարդը, ճամբարի միջով անցնելիս. տեսել էր բազմաթիվ հիվանդ մարդկանց, մյուսների մարմինները կիսով չափ ճամբարի ցածրադիր մասերում հավաքված ջրի մեջ էին: Որոշ մարդիկ ասել են նրան, որ սպասում են մահվան, որն իրենց կազատի: Հալեպ գնալիս նա անցել է հազարավոր գաղթականների մոտով. իսկ Հալեպի

հարեվանությամբ մի փոքր քաղաքի մոտ տեսել է հավաքված մոտ 100000 հայերի: Նա ասում է, որ մահացությունը նրանց մեջ շատ մեծ է: Նրանք ո'չ ուտելիք ունեն, ո'չ էլ փող այն գնելու համար, քանի որ այն քիչ փողը, որ ունեցել են, ճանապարհին նրանց կողոպտել են լավ զինված ավագակախմբերը: Իմ լրաբերի հետ եկած մարդկանց մի քանի անգամ անհանգստացրել են զինված համազգեստավոր մարդիկ. ո թոնք կարծել են, թե նրանք հայեր են:

Մի բանավոր աղբյուրից, որը սակայն արժանի է վստահության, լսել եմ, որ Մարաշից հյուսիս և հյուսիս-արևելք ամբողջ տարածքը մաքրվել է հայերից, որ Հոմսում կա մոտավորապես 30000-անոց մի հավաքատեղի, գրեթե բոլորովին առանց ծածկի, որ Դ-խարբեքիյում տեղի է ունեցել կոտորած, որ Կեսարիայի գաղթականներին թույլատրել են վաճառել իրենց ունեցվածքը (այս բռնի վաճառքից կարելի էր ձեռք բերել մի փոքր գումար) Դեյր-էլ-Ջոր գնալուց առաջ: Այս աղբյուրից իմացա նաև, որ լուրեր են պատվում, թե Մփրաստ գետն անցնելիս շատ տեղահանվածներ խեղդվել են նավակների շրջվելու և այլ պատճառներով:

Վերջին մի քանի օրերի ընթացքում, այժմ հոկտեմբերի 3-ն է, մի ակնհաստես ինձ ասաց, որ սեպտեմբերի 19-ին կոտորած է տեղի ունեցել Ուրֆայում, ուր հայերին գնդակահարել, սվինահարել, սրախողխող արել ու մաշկագերծ են արել տեղի բնակիչները, իսկ հետո կոտորածը սրբրով ու սուր սուսերներով շարունակել են զինվորները այդ մարդու հեռանալու օրը՝ սեպտեմբերի 22-ին: Պարզվում է, որ հայ տղամարդկանց հավաքել, մեկ առ մեկ նրանց տարել են ծեծելու և երկար սուսերանման դանակներով մորթելու: Առաջին օրերին դանակներից ու շոթաներից վիրավորվել են նաև ֆրանսիացի և ռուս զերիներ, սակայն շուտով մոանք բուժվեցին, և սա այն ամենն է, ինչ պատահել է այդ զերիների հետ: Ուրֆայից եկած մարդն ինձ պատմեց, որ ճանապարհին անցել է շատ կանանց, երեխաների ու ծերունիների մոտով և տեսել է, թե զինվորներն ինչպես էին ծեծում նրանց, ուլքեր կանգնում էին ջուր խմելու: Կարելի էր լսել, թե ինչպես էին զինվորներն ասում, «Սպասեք մինչև կիսանեղք Մփրաստ և կտեսներ, թե ինչ կպատահի ձեզ հետ» կամ այսպիսի բառեր: Այս լուրերն ինձ հաղորդել է մի մարդ, որն, ինչպես ասվեց վերևում, փաստորեն ներկա է եղել կոտորածի ժամանակ, և որը լսել է վերը նշված ակնարկները:

Վերևի զեկուցագիրը վերաբերվում է նաև այլ հյուպատոսական պաշտոնյաների շրջաններին, քանի որ, ինչպես հաղորդել են ինձ, իրենք չեն կարող գրել այդ մասին: Ես չգիտեմ, թե արդյոք կկարո-

դանամ սա անցկացնել, թե՛ ոչ: Յուրաքանչյուր դեպքում արված հայտարարությունները հավաստի են այնքանով, որքանով հավաստի է գրողի դատելու ունակությունը: Նա, իհարկե, կարող է հաստատել միայն այն, ինչը տեսել կամ լսել է ինքը, ինչպես նշված է վերևում:

Դամասկոսում կարծես ամեն ինչ շատ հանգիստ է, երեկ հոկտեմբերի 2-ին, մի փոքրիկ տղա ձու նետեց իմ կառքի մեջ, բայց դա էական չէ: Ես չեմ հավատում, որ բնակչության կողմից լինի որևէ անհանգստություն, որից կարելի լինի վախենալ. քանի դեռ դեկավարությունը չի հրահրել, որը չեմ կարծում, թե կպատահի:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Գրեգ Յանգ,  
հյուպատոսական գործակալ

Աղբյուր՝ *1. U. S. State Department Record Group 59,867.4016/212.*

*2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower  
Euphrates, pp. 82-86.*

## Փաստաթուղթ թիվ 49

Թիվ 546

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

*20 հոկտեմբերի. 1915թ.*

*Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար*

Պարոն,

Անդրադատնալով սույն ամսվա իմ թիվ 1155 հեռագրին, որը վերաբերվում էր Ուրֆայի իրավիճակին և այն վտանգավոր իրավիճակին. որում հայտնվել են պարոն Լեսլին և մի քանի թշնամի երկյունների հպատակներ, որոնք ներկայված են այնտեղ, և որոնք այդ վիճակում հայտնվեցին կառավարության և հայ բնակչության միջև ընդհարման պատճառով, այժմ պատիվ ունեմ Ձեզ ուղարկելու պարոն Լեսլիից պարոն Վ.Վ.Փիթին ուղարկված նամակի կրկնօրինակը, թվագրված օգոստոսի 24-ին, որտեղ նկարագրվում են Ուրֆայի դեպքերի սկիզբը: Պարոն Լեսլիի նամակը կրպագնի պարոն փոխհյուպատոս Լեդելմանի օգոստոսի 26-ի զեկուցագիրը, որն արդեն ուղարկվել է

դեպարտամենտին, նրա կրկնօրինակը նույնպես ներվակված է այստեղ: Տեսեք նաև իմ օգոստոսի 23-ի թվակիր թիվ 963 հեռագիրը:

Այս երկու փաստաթղթերը օգոստոսի 19-ին և դրանից հետո տեղի ունեցածի հաշվետվությունն են և ցույց են տալիս, որ հայ բնակչության վիճակն այդ քաղաքում չափազանց անորոշ է: Նման ընդհարումներ մասամբ տեղի ունեցան մոտավորապես Խոկտեմբերի մեկին, երբ փորձ արվեց զենք հավաքելու: Վերջին իրադարձությունների մասին դեսպանությունը առաջին տեղեկությունն ստացավ Հալեպի հյուպատոսի հեռագրից, թվագրված Խոկտեմբերի 8-ին, որտեղ ասվում էր, որ պրն Լեսլին պահվել է Ուրֆայի հայկական քաղաքում, և որ պրն. Ջեքսոնը Հալեպի հրամանատար Ֆակրի Փաշային խնդրել է ապահովել նրա բարեհաջող դուրս բերումը:

Երբ այդ հարցի մասին մենք խոսում էինք Ռազմական նախարարի հետ, նա ինձ հանձնեց Ուրֆայի տեղական դեկավարության զեկուցագիրը, որն ստացել էր կենտրոնական կառավարությունը, և որի մասին զեկուցել են սույն ամսվա 17-ի հեռագրում: Հոկտեմբերի 11-ի թվագրությամբ Արտաքին գործերի նախարարությունը ներկայացրեց այդ գործի բոլորովին այլ տարբերակ, որտեղ միտում կար ավելի շատ մեղքը բարդել հայերի վրա՝ նրանց ապստամբության համար, ինչպես նաև ակնարկել, որ նրանց շարժումը լռությամբ հրահրել է պրն Լեսլին: Ես գերադասում եմ ընդունել Ռազմական նախարարի տարբերակը, որն ավելի մոտ է ճշմարտությանը: Այստեղ ներփակված է նաև Բարձր Դռան գրության օրինակն ու քարգանությունը:

Այն օրվանից ի վեր, երբ ստացվեց պրն. Ջեքսոնի սույն ամսվա 16-ի հեռագիրը, որտեղ հայտնվում էր, որ պրն. Լեսլին և պատերազմող երկրների յոթ քաղաքացիների դռնա պահում են հայերը, որոնք մասամբ դռնա կարողանում էին դիմադրել իշխանությունների հարձակումներին, ես մի ուրիշ հարցազրույց ունեցա Ռազմական նախարարի հետ, որը սույն ամսվա 18-ին ինձ տեղեկացրեց, որ Լեսլին և պատերազմող երկրների ինը քաղաքացիներ դուրս են եկել ռմբակոծված շենքից և այժմ ապահով են: Նախարարը խոստացավ նաև Ուրֆայում ներկայված պատերազմող երկրների քաղաքացիներին, թվով երեք հարյուր հոգի, տեղափոխել Այնթապ, որտեղ նրանց ապրելու պայմանները կլինեն ավելի լավ, քան Ուրֆայում: Հալեպի հյուպատոսից ես սպասում եմ Լեսլի և մյուսների ապահովության մասին հետագա մանրամասների, ինչպես նաև թե արդյոք որևէ բան արվում է Ուրֆայից քաղաքացիների դուրս բերման ուղղությամբ:

Բարեբախտաբար, օգոստոսի վերջին Ուրֆայից հեռանալիս՝  
պրն. Էդելմանը կարողացավ տանել պատերազմող երկրների քաղա-  
քացիների կանանց ու երեխաներին, որոնք այնտեղ էին ուղարկվել  
Բեյրութից, Դամասկոսից և Միրիայի այլ վայրերից, ինչպես նաև  
բազմաթիվ անգլիացի և ֆրանսիացի տղամարդկանց, որոնց մեկնու-  
մը թույլատրել էր Միրիայում Չորրորդ Բանակի հրամանատար Ջե-  
մալ վաչան: Այս մարդիկ Ալեքսանդրետոսայում սեպտեմբերի 18-ին  
նստեցին « Չեստր» նավը, և դեսպանությունը տեղյակ է, որ նրանք  
ապահով ժամանել են Ալեքսանդրիա: Պարզվում է, սակայն, որ տե-  
ղական իշխանությունները այնքան էլ հակված չէին օգոստոսի 19-ի  
իրադարձությունների ժամանակ պաշտպանելու պրն. Լեսլին և  
տարբեր թշնամի երկրների հպատակներին: Անհրաժեշտ է սպասել

Հալեպի հյուպատոսից հետագա մանրամասների. նախքան  
կարծիք հայտնելը վերջին դեպքերի մասին, որում ներգրավվել են  
նաև պրն. Լեսլին և պատերազմող երկրների մի քանի քաղաքա-  
ցիներ:

Դեպարտամենտը պետք է իմանա, որ պրն. Լեսլին սեպտեմբե-  
րի 23-ին հրաժարվեց հյուպատոսական գործակալի իր պաշտոնից:  
Ինչպես զեկուցել են 1915թ. սեպտեմբերի 21-ի, իմ թիվ 481 զեկուցա-  
գրում, Վերին դուռը նրան այդ պաշտոնում երբեք պաշտոնապես  
չճանաչեց:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու

Ներփակվածը՝ Պրն. Լեսլիի 1915թ. օգոստոսի 24-ի նամակը  
(փաստ. թիվ 50)

Պրն. Էդելմանի 1915թ. օգոստոսի 26-ի նամակը  
(փաստ. թիվ 44)

Գլխաման պատճեն ու թարգմանությունը  
(տես՝ հատոր IV)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59.867.4016/215.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Saralian, Volume 1, The Lower  
Euphrates, pp. 87-88.*

## Պատճեն

## (Պարոն Լեւիլի նամակը)

Օգտվելով այս հնարավորությունից՝ գեկուցում եմ Ձեզ այն մասին, թե ինչ է տեղի ունեցել այս քաղաքում:

Վերջին երկու ամիսների ընթացքում ամեն շաբաթ հարյուրավոր հայեր են ձերբակալվել ու արտաքսվել քաղաքից, և նրանց մեծ մասից այլևս ոչինչ չի լավել: Նրանց մեջ էին մեր տնօրենի նախկին տեղացի օգնականը, և Գերմանական միսիոներական հիվանդանոցի դեղագործը, ինչպես նաև մի հայ վարդապետ, և փաստորեն համայնքի ամենատաղանդավոր ու ամենալավ մարդիկ և բարձր պաշտոն ունեցող տղամարդիկ: Բարեբախտաբար, երկու բողոքական քահանաներն ազատվեցին: Հայերը համաձայնվեցին կառավարությանը հանձնել զենքերը, ինչպես նաև, կասկածելի մարդկանց: Հարյուրավոր զենքեր հանձնվեցին, սակայն կանկածելի մարդիկ փախան և թաքնվեցին: Շաբաթներ շարունակ հայերը ասիստենցիա էին, իսկ անցյալ շաբաթ քաղաքում տեղի ունեցավ մի տհաճ միջտղեպ: Ձենքեր փնտրելիս՝ ոստիկանները մտան մի տուն, որտեղ թաքնված էին երեք հայ դասախիբներ, որոնք կրակ բաց արեցին և սպանեցին երկու ուսուցիկների: Ես անձամբ տեսա սպանված ոստիկանների դիակները: Այդ ժամանակ ոստիկաններն ու ժանդարմները միասին հարձակվեցին այն շրջանի վրա, որտեղ տեղի էր ունեցել այդ միջտղեպը, և մարտի ժամանակ, ըստ գեկուցագրի, սպանվեցին երեք ոստիկան և բազմաթիվ հայեր: Ինչպես նաև թուրքերի ու քրդերի մի ամբոխ հարձակվեց այն բոլոր հայերի վրա, ում կարողացավ գտնել շուկայում, և շատերին էլ նրանք սպանեցին: Կառավարությունից բացի ոչ ոք չգիտե, թե քանի հայ է սպանվել, սակայն ճշգրիտ թիվը կլինի երկու հարյուրից ոչ պակաս: Ես անձամբ տեսա թե ինչպես կրակոցով սպանվեց մի անմեղ, անվնաս տղամարդ, իսկ երբ անցնում էի փողոցով, տեսա չորս դիակ, որոնցից երկուսին ես գիտեի, նրանք անմեղ ձերուհիներ էին:

Բարեբախտաբար, Հալեայի ամերիկյան փոխ-հյուպատոս Էդելմանը քաղաքում էր որպես մեր միսիայի հյուր, և երբ կրակոցներն սկսեցին, ես և նա այցելության էինք գնացել Նորին գերագանցություն մուտաւերիֆին: Վախենալով, որ խուճապի մեջ ընկած գաղթականները կարող են լցվել մեր միսիայի տարածքը, ես որոշեցի ես վերադառնալ միսիա, սակայն չկարողացա և մենք ստիպված մնացինք սերայում, մինչև ավարտվեց կռիվ ամենաթեժ պահը, և մի

պահապան, որին մեզ տրամադրեց ղեկավարությունը. մեզ ուղեկցեց մինչև միսիա, միսիայի տարածք էին մտել միայն մի քանի փախստականներ: Այդ օրվանից, այսինքն, օգոստոսի 19-ից, մեր դասն մոտ մշտապես կանգնած է մի պահապան, իսկ ոստիկանների ու ժանդարմների խմբերը գիշեր-ցերեկ հսկում են փողոցներում: Կարծես թե կառավարությունը այժմ լավ է տիրապետում իրավիճակին, սակայն ոչ մի հայ չի համարձակվում դուրս գալ իր տնից, բոլորը քաքնված են ու սարսափահար, իսկ առևտուրն ու արդյունաբերությունը, որ մեծ մասամբ նրանց ձեռքում է, կազմալուծված է:

Մենք համոզված ենք, որ քաղաքում գլխավորապես փոխիյուպատոս Էդելմանի ներկայության պատճառով է, որ այդ միջադեպը ընդհանուր կոտորածի չվերաճեց: Նրա ներկայության պատճառով էր, որ իշխանությունները ձեռք առան ամբոխին վերահսկելու լրացուցիչ նախագուշակյան միջոցառումներ: Իրադրությունն այժմ, փոքր-ինչ վերահսկելի է, սակայն քանի որ փոխիյուպատոսն այսօր մեկնում է, մենք չենք կարող ասել, թե ինչ կպատահի, երբ այլևս չզգացվի նրա զսպող ազդեցությունը:

Վախ կա, որ Ուրֆայի հայերը կտեղահանվեն. սակայն այդպիսի հրաման դեռ չի ստացվել: Ձեր հեռագիրը բողոքական և կաթոլիկ համայքներին տեղահանությունից ազատելու վերաբերյալ հաստատվում է: Քանի որ Ուրֆայի սանջակը Հալեպից անկախ է, հույս ունենք, որ այդ հրամանը ուղարկվել է նաև մեր մուտասերիֆին: Կարո՞ղ եք հետաքրքրվել այդ մասին մեր փոխարեն, հնարավոր է, որ մենք այլևս բացելիքաց գրելու հնարավորություն չունենանք:

Այստեղ կան երեք հարյուր բրիտանացի, ֆրանսիացի և ռուս ներկայացուցիչներ, և հյուպատոսական գործակալության աշխատանքը պայմանավորված է նրանց ներկայությամբ, որը այս անորոշ ժամանակներում, ի հավելումն միսիայի աշխատանքների, չափազանց ծանր բեռ է մի մարդու ուսերին: Մեր քաղաքով երեք ամիս շարունակ անցնող հազարավոր հայ տեղահանվածների երթը մեծացրեց մեր օգնության աշխատանքների կարիքը, որն այժմ շատ է մեծացել նաև տեղացիների կարիքի պատճառով: Ապագան անորոշ է: Աղոթեք մեզ համար, խնդրում են, և եթե հնարավոր է, օգնություն գտնելու ուղի առաջարկեք:

(Ստորագրված) Ֆ. Հ. Լեալի:

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59.867.4016/215.

2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower  
Euphrates, pp. 89-90.

Փաստաթուղթ թիվ 51

Թիվ 275

ԱՍԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հալեպ, 29 սեպտեմբերի, 1915թ.*

Առարկան՝ Հայերի տեղահանությունը

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ ուղարկելու Ձեզ այսօրվա ամսաթվով իմ թիվ 382 զեկուցագրի պատճեն «Հայերի տեղահանությունը» թեմայով:

Այս հարցի վերաբերյալ այլ անդրադարձեր տեսեք իմ 19 օգոստոսի թիվ 267, 25 օգոստոսի՝ 268 և օգոստոսի վերջի՝ 271 զեկուցագրերում:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարի ծառան՝

(ստորագրված) Զ.Բ.Ջեքսոն,

Ամերիկյան հյուպատոս

Ներփակվածը՝ 1) Դեսպանությանն ուղղված թիվ

382 զեկուցագրի օրինակը (փաստ. թիվ 53)

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59,867.4016/222.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, p.91.*

Փաստաթուղթ թիվ 52

Թիվ 579

ԱՍԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

*1 նոյեմբերի, 1915թ.*

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ սրանով ուղարկելու սեպտեմբերի 29-ի զեկուցագրի չորս օրինակները, հայերի վիճակի մասին, որը Հալեպի

հյուպատոսը ուղարկել է այս դեպքագրի, և որի մի օրինակը նա ուղարկել է դեպարտամենտին:

Պարոն Ջեքսոնը իր զեկուցագրի լրացուցիչ օրինակները պատրաստել է այն սպասումով, որ գուցե դեպարտամենտը հարմար կգտնի հաղորդել դրանք Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի արտաքին գործոց նախարարություններին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներվախկվածը՝ Չորսը ըստ վերը նշվածի (փաստ. թիվ 53)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59.867.4016/219.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1. The Lower Euphrates, p. 92.*

### Փաստաթուղթ թիվ 53

Թիվ 382

#### ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Հայեպ Միրիա, 29 սեպտեմբերի, 1915թ.*

Ատրկան՝ Բաղդադի իրավիճակը

*Թուրքիա, Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան դեսպան*

*Պատվարժան*

*Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ հետևյալով զեկուցելու հայերի տեղահանության մասին, ի հավելումն դեսպանությանն ուղղված օգոստոսի 19-ի իմ թիվ 546 զեկուցագրի:

Թուրքական կառավարության կողմից իրենց տներից հայերի տեղահանությանն ծրագրի իրագործումը շարունակվում է այնպես անընդհատ և կատարելապես, որ անհնարին է հասկանալ այն ուղղակիորեն իրագործողներին, և ինչպես ցույց են տալիս «Շարժումը երկաթուղով» ցուցակները, մինչև օգոստոսի 31-ը ներառյալ ներքին շրջաններից երկաթուղով ժամանածների թիվը 32751 մարդ է: Ի վրացումն սրա, հաշվված է, որ առնվազն ևս 100000 մարդ եկել է ու-

քով: Եվ ինչպիսի վիճակում են այս դժբախտները, հատկապես ոտքով եկողները: Շատերն իրենց տնից դուրս են եկել Չատկից առաջ, գրկված իրենց ունեցվածքից, առանց փողի, բոլորը գրեթե առանց հագուստի, մի մասը մերկ՝ իրենց ուղեկցողների վերաբերմունքի և ճանապարհին թալանի համար նրանց ոչնչացնելու հետևանքով: Չափազանց հազվադեպ կարելի է հանդիպել ամբողջական ընտանիքի, որն անցած լինի որոշակի տարածություն, անխտիր բոլորը կորցրել են իրենց ընտանիքների անդամներին հիվանդությունների, հոգևածության պատճառով, երիտասարդ աղջիկներին ու տղաներին տարել են թշնամի ցեղերը, իսկ գրեթե բոլոր տղամարդկանց անջատել են ընտանիքներից և նրանք արժանացել են այնպիսի ճակատագրի, որի մասին չարժե խոսել, շատերին դաժանորեն վերջ են տվել իրենց հարագատների ու ընկերների աչքի առաջ: Վերաբերմունքը շատ դաժան է նդել, մանրամասն հաշվումները ցույց են տալիս, որ փրկվածները կազմում են սկզբում տեղահանվածների թվի միայն 15 տոկոսը: Այս հիմնավորումով, նույնիսկ մինչև այժմ սեպտեմբերի 21-ի տվյալներով, փրկվածների թիվը 150000-ից քիչ է, ուրեմն մինչև այդ օրը գրիվել է մոտավորապես 1000000 մարդ:

Անընդհատ ստացվում են գեկուցագրեր այն մասին, որ մեծ թվով արժանավոր մարդկանց են հավաքել գրեթե յուրաքանչյուր քաղաքից ու գյուղից, որ նրանց հեռացրել են իրենց բնակավայրերից և անհետացրել են նրանց այնպիսի մեթոդներով, որոնց մասին մենք տեղեկություն չունենք, սակայն այդ մասին քիչ թե շատ կարելի է պատկերացնել, քանի որ անցել են ամիսներ, սակայն նրանց գոյության մասին ոչ մի լուր չկա. Հալեպի փողոցներում լիովին հյուծված կանանց ու երեխաների նկատմամբ ցուցաբերվող ահավոր վերաբերմունքը զինված ուղեկցողների կողմից, որոնք ծեծում ու ոտքով հարվածում են իրենց անօգնական հովանավորյալներին, երբ հիվանդություններն ու հյուծվածությունը թույլ չէին տալիս նրանց շարժվել, վկայությունն է այն քանի, թե ինչ կարող է պատահել նրանց հետ ներքին շրջանների ճանապարհներին՝ քաղաքակրթությունից հեռու:

Հյուծվածության վիճակի սպացույցներից է քաղաք եկողներից ամեն օր հարյուր և ավելի մարդկանց մահը: Ճանապարհորդները հաղորդում են, որ մոտակա ճանապարհներին տեսել են անհաշվելի թվով դիակներ, մարմիններ՝ տարբեր դիրքերում, երբ զոհերն ընկել են վերջին շնչում տիֆից, տենդից և այլ հիվանդություններից, և շներ,

որոնք կռվում էին երեխաների դիակների համար: Շատ են փրկվածների հոգեցունց պատմությունները, սակայն ժամանակն ու տարածությունը դրանց թվարկումն այստեղ թույլ չեն տալիս:

Շարժումը շարունակվում է օրեկան հարյուրավորների ժամանամբ, և խնդիրն այն է, թե ինչ կարելի է անել նրանց օգնելու համար, երբ նրանց արագ կցրեն Համայում, Հոմսում, Դամասկոսում և այլն և Ամմանում՝ ամենահեռավոր հարավային կայարանը մինչև ուր թույլ են տալիս երթևեկել քրիստոնյաներին: Գոյության համար անհրաժեշտ գրեթե ոչինչ չկա այս վայրերի մեծ մասում, և հաղորդում են, որ Ամմանում չկա ո՛չ ուտելիք և ո՛չ էլ խմելու որևէ բան:

Մինչև այժմ Հալեպի բնակիչներին չեն անհանգստացրել, նրանք սպասում են այն պահին, երբ իրենք էլ հետևելու են նրանց, ովքեր ճանապարհ են ընկել իրենցից առաջ:

Որպեսզի ապահովվի այս մարդկանց լոկ գոյությունը, նրանց համար անհրաժեշտ է բավականին մեծ գումար, ասենք 150000\$ ամսեկան: Սա կլինի մի մարդուն մեկ դոլար, որը հազիվ կհերիքի հացին, չխոսելով արդեն հագուստի, ծածկի, բժշկական ծառայության և այլնի մասին: Յուրաքանչյուր կրոնական համայնք ունի նպաստամատույց կոմիտե՝ իր հովանավորներին խնամելու համար, սակայն ձեռքի տեղ եղած միջոցները բոլորովին բավարար չեն: Ներփակված են «Շրկաթուղու շարժը», «Բողոքականներ», «Կաթոլիկներ» ցուցակները, որոնք բոլորն էլ լրացվել են հայտնի աղբյուրներից հավաքված տեղեկություններով և ցույց են տալիս յուրաքանչյուր խմբից տուժածների թիվը, նրանց տեղը և կարիքները:

Այս գեկուցագիրը ուղարկվում է վեց օրինակից, որպեսզի դրանք հնարավոր լինի ուղարկել համապատասխանաբար Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի կառավարություններին, եթե հարմար գտնեք, նրանց շահերն այս շրջանում վստահված են այս հյուպատոսությանը: Մի օրինակը ուղարկվում է Պետական Դեպարտամենտին:

Պատիվ ունեն լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն

Ներփակվածը՝ 1-4-ը ներառյալ, ըստ ասվածի  
840.1

(Կոստանդնուպոլիս, դեսպանությանը ուղղված թիվ 382 գեկուցագրին կից ցուցակ թիվ 1)

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկարուող շարժը երկրի ներքին շրջաններից դեպի Հակալ

Ամսաթիվ	Սեծահասակներ	Երեխաներ
18 մայիս, 1915թ.	69	25
18	102	42
19	9	3
21	58	19
22	162	79
24	250	80
24	30	7
25	14	5
25	57	21
26	53	19
30	72	22
3 հունիս, 1915թ	400	-
3	160	66
5	178	55
7	92	31
10	271	90
12	74	18
15	260	64
17	133	55
20	261	96
24	215	65
29	181	84
30	696	385
3 հուլիս, 1915թ.	210	--
9	500	--
11	224	--
13	480	--
16	110	--
19	200	--
23	410	--
25	420	--
30	540	--
Ընդամենը	6891	1331

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկաթուղու շարժը երկրի ներքին շրջաններից դեպի Հալեպ

Ամսաթիվ	Մեծահասակներ	Երեխաներ	Կալարան
31 հուլիս, 1915թ.	241	47	Աշի-Կոյունլի
3 օգոստոսի	206	250	Կատմա
3	200	71	Աշի-Կոյունլի
4	525	315	Կատմա
4	546	256	Սեր-Արսր- Բունար
5	290	180	Կատմա
6	505	162	Սեր-Արսր-
7	316	134	Բունար
8	138	250	Ջերաբլիսե
8	542	255	Կատմա
9	140	200	Աշի-Կոյունլի
11	505	195	Կատմա
12	1400	600	Կատմա
12	442	55	Կատմա
15	1060	550	Աշի-Կոյունլի
15	708	95	Կատմա
17	117	30	Աշի-Կոյունլի
18	649	140	Ռաս-Էլ-Էյն
19	350	250	Աշի-Կոյունլի
20	670	395	Կատմա
23	1240	900	Կատմա
26	500	300	Կատմա
28	500	300	Կատմա
31	239	--	Կատմա
			Ռաս-Էլ-Էյն

Ընդամենը 12029 5930

գումարած 30 հուլիսի 6891 1331  
18920 7261

գումարած

25%՝ վճարողներ 4755 1815

Ընդհանուր թիվը՝ 23675 9076

Մեծահասակների և երեխաների ընդհանուր թիվը 32751 միայն գնացքով

(Կուտանդնուպոլիս, դեսպանությանը ուղղված թիվ 382 զեկու-  
ցագրին կից ցուցակ թիվ 2)

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
(Գրիգորյան կամ ուղղափառ)

	Քանակ	Այրիներ երեխանե րի հետ	Որբա- նոցնե րի որբեր	Կարիքա- վոր ընտանիք ների ընդհանուր թիվը	Կարի- քավոր այրի ներ և այլք	Ամսե- կան պատմոց վող գումարը
Հալեպ Դեր-Չոր Ռաս-Է-Էն	(a) 17150 (b) 22100 (c) 1150	6500 6000 1150	1100 --- ---	7000 16000 ---	14600 22000 1150	193605 26400 1320
Հալեպի գյուղեր Կատման շրջակայ- քով	(d) 10150  (e) 25400	4000 ---	--- ---	6150 10400	10150 10400	15400 13200
Այի- Կոյունլի Դամաս կոս ու- ղարկված	(f) 7200  (g) 40300	---	---	2500 20000	2500 26150	3080 35200
	123450	23800	1100	62050	86950	113 960

Որպեսզի գաղափար տրվի արևելյան նահանգների իրենց հայ-  
րենի քաղաքներից տեղահանվածների և Հալեպի շրջակայքը հաս-  
նողների թվի մասին, տրվում է հետևյալ ցուցակը.

Տեղադրություն	Տեղահանվածներ	Տեղ հասածներ
Արղանի Մադեն	400	32
Չեմհեզուլֆակ	240	3
Սիանա	130	12
Գիբնե	520	150
Ընդամենը	1290	197 (15,2%)

- (a) Հալեպում
- (b) Շրջակա գյուղերում
- (c) Ծանապարհին
- (d) Հարևան գյուղերում
- (e) Ծանապարհին
- (f) Ծանապարհին (5300-ը ուղարկվել են Բաք)
- (g) Ուղարկվել են Հալեպից

(Կոստանդնուպոլիս, դեսպանությանը ուղղված թիվ 382 զեկու-  
ցագրին կից ցուցակ թիվ 3)

**ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ**  
(Բողոքականներ)

Տուժած տեղանքները	Մարդկանց թիվը նախքան տեղահանությունը
Սվազի նահանգ	5000
Վանի նահանգ	3000
Մամուրեթ Ուլ Ազիզ նահանգ	12000
Դիարբեքիլի նահանգ	12000
Ադանայի նահանգ	6000
Էրզրումի նահանգ	5000
Հալեպի նահանգ	7000
Մալաթիայի գավառ	2000
Կեսարիայի գավառ	7000
Մարաշի գավառ	6500
Ուրֆայի գավառ	1500
<b>Ընդամենը</b>	<b>67000</b>

Տեղահանվածների թիվը՝ 70% կամ 46900:  
Տեղ հասած տեղահանվածները՝ 25% կամ 11750: (Սա համարվում է մաքսիմում թիվը)

Տեղ հասած և փրկված մարդկանց թիվը.

Հալեպ - այրիներ	500
Հալեպ - երեխաներ	1000
Հալեպ - ընտանիքներ	1000
Դեր Զոր	1200
Ռասս-էլ-Էյն և Սերուճ	1000
Մուարա	200
Մամբուճ	500
Աշի Կոյունլի	100
Կատմա	2250
Հարավից տեղահանվածներ	4000
<b>Ընդամենը</b>	<b>11750</b>

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
(Բողոքականներ)

Բողոքականները բացել են որբանոց, որտեղ հավաքվել են.

Այրիներ, որպես խնամողներ	43
Մայր ունեցող որբ տղաներ	48
Առանց ծնողների որբ տղաներ	132
Մայր ունեցող որբ աղջիկներ	46
Առանց ծնողների որբ աղջիկներ	100
<b>Ընդհանուր թիվը</b>	<b>369</b>

Սրանցից 139 բողոքական են և 230-ը՝ գրիգորիյան հայեր, և եկել են հետևյալ վայրերից՝ Էրզրում, Դիարբեքիր, Մազրա, Ադանա, Ամասիա, Սերեկ, Մարաշ, Թոխատ, Գուրուն, Հաճրն, Դորսոյոլ, Ջինիգ, Սվազ, Խարբեթոլ, Բակեր Մադեն, Դիքեն, Ջեյթուն, Հուսեյնիգ, Նրասար, Մենջլիկ, Հերդև, Մասուն, Գովդեն, Շար, Ուզուն Յալու, Մարդեն, Դերգյուղ, Չումուշ Գազակ, Վանգարոզ, Կայեր, Իդիյաման, Վերան, Ֆերնիս, Կարա Հիսար, Բինգյոլ, Արաբկլիլ, Կարագյոլ, Սամնա, Նուրպե, Ուլախ: Կարիքավորների թիվը շատ մեծ է, փաստորեն, նրանք, ովքեր միջոցներ ունեին, երբ տեղահանվեցին, այժմ մորացկանի վիճակում են: Հետևաբար ուտելիքի, ծածկի, հագուստի, բժշկական օգնության և այլն համար գումարի կարիքը շատ

մեծ է և շտապ: Հաշվվում է, որ 50 թուրքական ֆունտը (220 դոլար) ամենաքիչն է, որ պետք է ծախսվի օրեկան:

(Կոստանդնուպոլիս, դեսպանությանը ուղղված թիվ 382 զեկու-  
ցագրին կից ցուցակ թիվ 4)

**ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**  
(Կաթոլիկներ)

Տուժած շրջանները	Ընտանիքների թիվը		Փրկված ընտանիքնե- րի թիվը և տեղը	Ներկա վիճակը
	առաջ	հետո		
Հալեայի նահանգ Այնթապ	75	0	Հալեպում՝ 20 Բաբում՝ 55	քավարար բշվար բոլորն առատց միջոցների
Քեսաբ	80	0	մի մասը Համայում մի մասը Ամմանում Դամասկոսից 224 կմ հարավ	
Բեյլան	65	0	ժամանակավոր Հալեպում	մեծ կարիքի մեջ
Քիլիս	45	0	Հալեպում և ճանապարհին	մեծ կարիքի մեջ
Մարաշ	1200		Հալեպում և ճանապարհին	առաջ միջոցների
Ջեյրուն	60	0	Դիարբեքիր և Բաբ	ծայրահեղ կարի- քավոր
Ալքիստան	40	0	ոչնչացած	ծայրահեղ կարի- քավոր
Ուրֆա	70	0	հայտնի չէ	
Բիրեջիկ	40	0	քռնի դավանավորի- ված կամ ոչնչացած	
Ադանայի նահ. Ադանա	150	0	մատամբ Հալեպում մյուսները ճանապարհ.	մեծ կարիքի մեջ
Սիս	30	0	Հալեպում և ալյուր	մեծ կարիքի մեջ
Դորս Յոլ	130	0	Հալեպում և ալյուր	մեծ կարիքի մեջ
Մերսին	30	0	Հալեպում և ալյուր	մեծ կարիքի մեջ
Հաճըն	100	0	Հալեպում և ալյուր	մեծ կարիքի մեջ
Տարսուն	30	0	Հալեպում և ալյուր	մեծ կարիքի մեջ
Ջիհան	25	0	Հալեպում և ալյուր	մեծ կարիքի մեջ

Տուժած շրջանները	Ընտանիքների թիվը		Փրկված ընտանիքների թիվը և տեղը	Ներկա վիճակը	
	առաջ	հետո			
Անգորայի նահ. Անգորա Կեսարիա	3000	անհայտ	Համա, Քերեք և Հաջլուն Միայն կանայք հասան Հալեպ Ոչնչացված	Շատերը կարիքավոր Կարիքի մեջ	
Չեպնի	45	0			
Եսփիշեհիք Էրզրումի նահ. Էրզրում և շրջակայք	40	0		Քիչ կանայք և երեխ. առանց տղամարդ ռոտրով հասան Հալեպ 4 ամիս անց	Ճակատագիրն անհայտ Կարիքավոր
Սվազի նահանգ	4000	0			
Սվազ	120	0	Բավականին փրկվածներ կողոպտված հասան Հալեպ: Այլ տեղերից քիչ քվով կանայք և երեխաներ եկան. տղամարդ չկա: Եպիսկոպոսի, վանականների միանձնուհիների և բոլոր տղամարդկանց ճակատագիրն անհայտ է: Թոխատի միանձնուհիները բոլորովին մերկ՝ նետվեցին ջրհորը:		
Գուրին	80	0			
Թոկատ	100	0			
Պերկենիկ	300	0			
Խարբերդի նահ. Խարբերդ	190	0		Եպիսկոպոսը, վանականներն ու միանձնուհիները նաև տղամարդիկ անհետացան	
Մալաթիա	180	0		Եպիսկոպոսի, վանականների, միանձնուհիների և տղամարդկանց ճակատագիրը՝ անհայտ:	
Հումսի Սանսուր	120	0		Վանականներն ու բոլոր տղամարդիկ անհետացան: Մի քանի հարյուր այրիներ ու երեխաներ մի քանի օր ռոտրով թայլելուց հետո հասան Հալեպ: Բոլորը մեծ կարիքի մեջ են:	
Բեհեսնի	130	0			
Արաբկիր	70	0			
Դիարբեքիքի նահանգ					
Դիարբեքիք	200	0	Կանանց ու երեխաների միայն մի: մասը հասավ Հալեպ:		
Չինգուշե	70	0	Կարևոր քաղաք, որը ոչնչացվել է:		
Վսրանշեհիք	50	0			
Մարդեն	4000	0			
Թելարմեն	300	0			

Նշումներ՝

Կա 3000 մարդ, ներառյալ այրիները, երիտասարդ աղջիկները, երեխաները, Հալեայի կույսերը, որոնք տեղավորվել են տարբեր վայրերում, և նրանց կերակրում է տեղական եկեղեցական համայնքը:

6000-ից 7000 կաթոլիկներ, որոնք տեղահանվել էին, անցել են Հալեպով, որոնց մի մասը ցրվել է երկրով մեկ կամ հավաքվել է Դեյր-էլ-Չորում, Բաբում, Մամբուջանում կամ ցրված են Բաղդադի երկաթուղու երկարությամբ կամ Դամասկոս և Հեջազ գնացող ուղու վրա. Հալեպից հետո, և որանք, օգնություն են խնդրում:

Մահացությունը Հալեպում օրեկան 5-ից 6 է, իսկ դրսում՝ ավելի շատ:

1000 մարդ կա Ռաս-էլ-Էյնում, 500-ը՝ Կատմայում և 200-ը՝ Աչի Կոյունլիում, և որպեսզի զոնե մասամբ կերակրենք կարիքավորներին այստեղ և շրջակայքում, ամենաքիչը օրեկան անհրաժեշտ է 260 դոլար: Սա կծախսվի ծածկի, դեղերի, մահճակալների, ծածկոցների, ուտելիքի և թաղումների վրա:

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.4016/219.

2. "United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, pp. 94-104.

## Փաստաթուղթ թիվ 54

Թիվ 278

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հալեպ, 16 հոկտեմբերի, 1915թ.

Ատարկան՝ Հայերի տեղահանությունը Խարբերդից

Վաշինգտոն

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեն ներփակելու այստեղ զեկուցագիր Խարբերդից հայերի տեղահանության մասին, որը ստացվել է վստահելի աղբյուրներից:

Պարոն, պատիվ ունեն լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն,

Հյուպատոս

Ներփակվածը՝ ըստ վերը նշվածի, մի օրինակը ուղարկվել է  
Կոստանդնուպոլիս դեսպանությանը

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/225.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p. 105.*

## Փաստաթուղթ թիվ 55

Պատճեն

Հայերի տեղահանությունը Խարբերդից

Հունիսի մեկին 3000 մարդ, մեծ մասամբ կանայք, աղջիկներ և երեխաներ դուրս եկան Խարբերդից՝ 70 ոստիկանի և որոշակի ազդեցություն ունեցող թուրքի՝ Ֆաիկ բեյի ուղեկցությամբ: Հաջորդ օրը նրանք ապահով հասան Ենիքոյ: Այստեղ Ֆաիկ բեյը մարդկանցից վերցրեց 400 լիրա, որպեսզի ապահով պահի մինչև հասնեն Մալաթիա և խոստացավ ուղեկցել պաշտպանելու համար նրանց մինչև Ուրֆա, սակայն նույն օրը ամբողջ գումարով փախավ:

Երրորդ օրը գաղթականների քարավանը հասավ Թուրքիքոյ: Այնտեղ արաբներն ու քրդերը սկսեցին առևանգել կանանց ու աղջիկներին, նախքան նրանց հասնելը Ռասուլախնի՝ երկաթուղային առաջին կայարանը Բաղդադի գծի վրա: Ռասուլակաները, որոնք նշանակված էին նրանց պաշտպանելու համար, լեռների կիսավայրերից ցեղերին հրահրեցին հարձակվել նրանց վրա՝ քալանելու, սպանելու, նրանց կանանց անևրգելու և առևանգելու համար, իրենք նույնպես բազմաթիվ անգամներ բացեփաց անարգեցին կանանց:

Չորրորդ օրը նրանք հասան Կումիրխան, որտեղ ոստիկանները սպանեցին երեք պատվարժան մարդու: Իններորդ օրը նրանք եկան Իզոլի, որտեղ ձիերը խլեցին և ետ ուղարկեցին, չնայած հայերն էին դրանք վարձել ու մինչև Մալաթիա ուղևորության համար վճարել էին: Այսպիսով, մարդիկ ստիպված էին կրկին վարձել եզներով սայլեր, որոնցով գնալու էին Մալաթիա: Այստեղ շատերը մնացին առանց բեռնատար կենդանիների, միայն մի քանիսը կարողաղացան գնել ավանակներ և ջորիներ, որոնք նույնպես գողացան:

Իզոլիում Հաջին՝ մի ոստիկան, առևանգեց տիկին Արաքսի Գյուլջիկյանին ու նրա երկու դուստրերին և փախավ:

Տասներեքերորդ օրը քարավանը Մալաթիայում էր, սակայն մի ժամով, որովհետև հետո նրանք ետ գնացին Չուլուզ գյուղը՝ Մալաթիայից երկու ժամվա հեռավորությամբ: Այստեղ ոստիկանները բոլորովին քրեցիներն զաղթականներին, նրանցից վերցնելով մոտ 200 լիրա՝ որպես վճար մինչև այդ նրանց պաշտպանելու համար: Եվ մարդիկ թողնվեցին Աղջա Դաղի՝ քրդերի զավեյի ցեղապետի, ողորմածությամբ:

Տասնհինգերորդ օրը նրանք նորից ճանապարհ էին կտրում գառիթափ լեռներում, որտեղ քրդերը հավաքեցին 15-90 տարեկան 150 տղամարդկանց, և տանելով նրանց որոշ տարածության վրա, կոտորեցին նրանց, վերադարձան և սկսեցին կողոպտել մարդկանց:

Հաջորդ օրը մի ուրիշ քարավան, որում կար ընդամենը 300 տղամարդ, Սվազից, Ալմից, Թոխաստից, միացան Խարբերդից տեղահանվածներին, այսպիսով բոլորը միասին կազմեցին 18000-ոց մի քարավան: Նրանք տասնյոթերորդ օրը շարժվեցին մի ուրիշ բուրդ բեյի պաշտպանության ներքո: Բեյը կանչեց իր մարդկանց, որոնք հարձակվեցին քարավանի վրա և կողոպտեցին նրանց: Նրանք առեվանգեցին ամենագեղեցիկ հինգ աղջիկներին և Սվազի գբության քույրերից մի քանիսին: Գիշերը տարան ևս մի քանի աղջիկների, սակայն անարգելուց հետո, նրանց վերադարձրեցին: Այսպիսով, ուղևորությունը կրկին շարունակվեց, ճանապարհին մեկ առ մեկ տանում էին գեղեցիկ աղջիկներին, իսկ ետ մնացողներին սպանում էին: Զսանհինգերորդ օրը նրանք հասան Գյուլիկ գյուղը, որի բոլոր բնակիչները ուղեկցեցին քարավանին՝ նեղելով ու կողոպտելով մարդկանց: Երեսուներկուերորդ օրը նրանք Գեղտե գյուղի մոտ էին: Այստեղ նրանք մնացին երկու օր և կրկին շատ աղջիկների ու կանանց առևանգեցին:

Քառասուներորդ օրը քարավանը հասավ Մուրադ գետը Եփրատի վտակը: Այստեղ երևացին ավելի քան 200 տղամարդու դիակներ, որոնք ջրի երես էին դուրս եկել, և գետի ափերին արյան հետքեր արյունոտ ֆեսեր, հագուստ և գուլպաներ:

Այդ գյուղապետը յուրաքանչյուր տղամարդուց մեկ լիրա վերցրեց, որպես կաշառք՝ նրանց գետը չզցելու համար:

Հիսուներկուերորդ օրը գաղթականները հասան մի ուրիշ գյուղ, որտեղ քրդերը նրանցից խլեցին նրանց մոտ ամբողջ եղածը, նույնիսկ նրանց վերնաշապիկներն ու ներքնաշորերը և հինգ օր շարունակ ամբողջ քարավանը այրող արևի տակ քայլում էր բոլորովին մերկ:

Եվս հինգ օր նրանք չունեին ո՛չ հացի կտոր, ո՛չ էլ ջրի կաթիլ: Նրանք ծարավից մեռնում էին: Հարյուրավորները մեռած ընկնում էին ճանապարհին, լեզուներն ամխացած, և երբ վերջում, հինգերորդ օրը նրանք հասան մի աղբյուրի, ամբողջ քարավանը, բնականաբար, հարձակվեց ջրի վրա, սակայն ոստիկանները կանգնեցին նրանց դեմ և թույլ չտվեցին խմել նույնիսկ մի կաթիլ ջուր, որովհետև ուզում էին ջուրը վաճառել մեկից երեք լիրայով, սակայն երբեմն փողը ստանալուց հետո էլ ջուր չէին տալիս: Մի ուրիշ վայրում, որտեղ ջրհորներ կային, մի քանի կանայք նետվեցին դրանց մեջ, քանի որ պարան կամ դույլ չկար ջուր հանելու համար, սակայն նրանք խեղդվեցին ու չնայած դրան, մնացածները ջուր էին խմում այդ ջրհորից մեռածների դիակները դռնա ջրի մեջ: Երբեմն, ոչ խոր ջրհորների մոտ. երբ կանայք մտնում և դուրս էին գալիս, մարդիկ հարձակվում էին նրանց վրա, լիզում ու ծծում էին կեղտոտ քաց հագուստը, որպեսզի հագեցնեին իրենց ծարավը:

Երբ նրանք, մերկ վիճակում մոտեցան մի արաբական գյուղի, արաբները խղճացին և նրանց տվեցին հին փաշաներ, որպեսզի նրանք ծածկվեն: Գաղթականներից նրանք, ուլթեր մնացած փող ունեին, հագուստներ գնեցին: Սակայն կային այնպիսիները, որոնք մերկ վիճակում էլ եկան Հալեպ: Խեղճ կանայք ամոթից չէին կարողանում ուղիղ քայլել, նրանք բոլորը կոսցած էին:

Մերկ վիճակում էլ նրանք կարողացել էին ձև գտնել մի փոքր գումար պահելու համար: Մի քանիսը պահել էին մագերի մեջ, մի մասը՝ բերանում, մյուսները՝ հեշտոցի մեջ: Եվ երբ ավագակները հարձակվում էին նրանց վրա, նրանցից ոմանք այնքան խելացի էին, որ փողը փնտրում էին այդ գաղտնի տեղերում, ինարկե անասնաբար:

Վաթսուներորդ օրը, երբ նրանք հասան Վիրան Շեհիր, 18000 գաղթականներից մնացել էին միայն 300-ը: Վաթսուհյորսերորդ օրը բոլոր տղամարդկանց և հիվանդ կանանց ու երեխաներին հավաքեցին ու այրեցին և սպանեցին նրանց բոլորին: Մնացածին հրամայեցին շարունակել ճանապարհը: Մի օրում նրանք հասան Ռաս-էլ-Էյն, որտեղ առաջին անգամ կառավարությունը նրանց երկու օր տվեց հաց, որը հնարավոր չէր ուտել, սակայն մյուս երեք օրում նրանց նույնիսկ այդ չտվեցին:

Այստեղ մի չեքքեզ համոզեց Սվազի վանականի կնոջն ու այլ կանանց իրենց երեխաների հետ գնալ կայարան, որպեսզի գնացքով նրանց ողարկի Հալեպ: Չնայած ընկերները նրանց համոզում էին չգնալ, այդ կանայք հետեցին այդ տղամարդուն, քանի որ իրենք

այլևս ի վիճակի չէին ոտքով շարունակել ճանապարհը: Տղամարդը նրանց տարավ կայարանի հակառակ ուղղությամբ, ասելով, որ ընկերոջից տոմսերի համար պարտքով փող պետք է վերցնի, սակայն կարճ ժամանակ անց նա վերադարձավ, իսկ կանայք ու երեխաներն այլևս չկային:

Տեղի կառավարիչը յուրաքանչյուրից պահանջեց երեք լիրա իր համար և մեկ լիրա տոմսի համար, որպեսզի նրանց թույլ տա գնալ գնացքով:

Յոթասուներորդ օրը, երբ նրանք վերջապես հասան Հալեպ, Խարբերդից 3000 տեղահանվածներից մնացել էին 35 կին և երեխա, իսկ 18000-ոց քարավանից՝ ընդամենը 150 կին և երեխա:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/225.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, pp. 106-108.*

## Փաստաթուղթ թիվ 56

Թիվ 287

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հալեպ, 11 դեկտեմբերի, 1915թ.*

Առաքյալ՝ Ուղևորություն Խարբերդից Հալեպ

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեն ներկայելու ամերիկյան մի միսիոներրի կազմած գեկուցագիրը Խարբերդից Հալեպ ուղևորության մասին:

Պարոն, պատիվ ունեն լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն,

Հյուպատոս

Ներվաակվածը՝ ըստ նշվածի լրացուցիչ մի օրինակ պետք է ուղարկվի ըստ 5-րդ էջի ցուցումի (Ձեկուցագիրը ընդգրկված

չէ: Պետական դեպարտամենտի նշումը. «Օրինակը 1915թ. փետրվարի 7-ին անձամբ տրվել է Բարտոմին՝ օրիորդ Լեսմանի համար»)

Հավանաբար տեքստում թույլ է տրվել վրիպում, ավելի հավանական է 1916թ. փետրվարի 7-ը:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/256.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, p.109.*

Փաստաթուղթ թիվ 57

Թիվ 1023

ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՈՒՊՈԼԻՍ

29 փետրվարի, 1916թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ուղարկելու Հալեպի ամերիկյան հյուպատոսի 1916թ. փետրվարի 8-ի զեկուցագիրը, որտեղ նա զեկուցում է իր շըրջանի հայ զարքականների թվի և նրանց կարիքների մասին:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Հոֆման Ֆիլիպ

Ներփակվածը՝ ըստ վերը ասվածի

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.48/271.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, p. 111.*

Թիվ 534  
Պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հալեպ, 8 փետրվարի, 1916թ.

Թուրքիա, Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու

Պարոն,

Պատիվ ունեն ուղարկելու վստահելի աղբյուրներից ստացված գեկուցագիր այս շրջակայքում հայ ներգաղթողների թվի մասին, որը ցույց է տալիս, որ այստեղի և Դամասկոսի միջև, ինչպես նաև շրջակայքում, Եփրատ գետից մինչև Դեյր-էլ-Ջոր, այդ թիվը կազմում է 500000 մարդ: Այդ մարդկանց համար բժիշկ Փիթի ուղարկված օգնության կապակցությամբ կարծում եմ հարմար կլինի հայտնել, որ շաբաթական 500 լիրան բոլորովին բավարար չէ նույնիսկ նրանց մի վորքը մասին օգնելու համար, իրականում մի անձր չի կարող ապրել նույնիսկ օրը 2 ոսկի պիստոլից քիչ գումարով. լավ առողջությամբ ողջ մնացած մարդկա նց պահելու համար օրը կպահանջվի 10000 լիրա՝ չխոսելով արդեն հիվանդների մասին:

Բողոքականները լավ կազմակերպություն ունեն՝ ցուցակում նշված վայրերում խնամքի գումարներ բաժանելու և այլ կարգի օգնություններ իրականացնելու համար: Հալեպը օգնություն բաժանող երկու կենտրոններից է, և ընդգրկում է ցուցակում նշված բոլոր վայրերը բացի Դամասկոսից, որը մյուս կենտրոնն է: Պատվ. Վահրամ Թաևմիզյանը կարող է ստանձնել գումարի բաժանումը Դամասկոսում:

Մի օրինակը ներվաակված է պրն. Փիթի համար: Խնդրում եմ, որ նա ձեռք առնի ակտիվ միջոցառումներ այս խնդրի վերաբերյալ և ինձ խորհուրդներ տա այդ մասին:

Պարոն, պատիվ ունեն լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն.  
Հյուպատոս

Հայ ներգաղթողների վիճակագրությունը համաձայն վստահելի տեղեկատվության:

Դամասկոսից մինչև Մաան, ավելի քան	100000
Համմա և շրջակա գյուղերը	12000
Հոմս և շրջակա գյուղերը	20000
Հալեպ և շրջակա գյուղերը	7000
Մաարա և շրջակա գյուղերը	4000
Բաբ և շրջակա գյուղերը	8000
Մամբիջ և շրջակա գյուղերը	5000
Ռաս-էլ-Էյն և շրջակա գյուղերը	20000
Ռաքքա և շրջակա գյուղերը	10000
Դեյր-էլ-Չոր և շրջակա գյուղերը	300000
<b>Ընդամենը</b>	<b>486000</b>

3 փետրվարի, 1916թ.

- Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.48/271.*  
 2. *"United States Official Documents on the Armenian Genocide".*  
*Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower*  
*Euphrates, pp. 112-113.*

Փաստաթուղթ թիվ 59

6 ապրիլի, 1916թ.

*Նյու Յորք 5-րդ ավենյու 79,*  
*Հայերի և ասորիների օգնություն*  
*Ամերիկյան կոմիտեի քարտուղար*  
*Պատվելի Սեմյունել Թ. Դաթոն*

Պարոն,

Այստեղ ներկայացված է Կոստանդնուպոլսի ամերիկյան դեսպանության 1916թ. փետրվարի 29-ի ղեկուցագրի օրինակը, որով փոխանցվում է Հալեպի ամերիկյան հյուպատոսի փետրվարի 8-ի ղեկուցագիրը Հալեպի, Դամասկոսի, Դեյր-էլ-Չորի և շրջակա քաղաքների ու գյուղերի հայ ներգաղթողների թվի ու կարիքների մասին:

Նս նմ, սլարոն,

Ձեր խոնարհ ծառան,

Պետական քարտուղարի փոխարեն՝

Էլվի Ա.Էյդի

Քարտուղարի երկրորդ օգնական

Ներփակված՝ 867.48/271  
3 RBP.

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.48/271.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p.114.*

Փաստաթուղթ թիվ 60

Թիվ 1104

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

20 մարտի, 1916թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Անդրադառնալով իմ մարտի 18-ի թիվ 1672 զեկուցագրին, որը վերաբերվում է Հայկական հարցին, պատիվ ունեմ ուղարկելու Հալեպի հյուպատոսի փետրվարի 8-ի թիվ 533 զեկուցագիրը, որի մասին նշվում է նույն հեռագրում:

Փետրվարի 28-ին դեսպանությունը հեռագրեց Հալեպի հյուպատոսին հետևյալը.

«312, որևէ գործողություն ձեռնարկվել է արդյո՞ք Ձեր փետրվարի 8-ի թիվ 533 զեկուցագրի վերաբերյալ, Ֆիլիպ»:

Սույն ամսվա 7-ին դեսպանությունը ստացավ հետևյալ պատասխանը.

«329 դեսպանության 312-ին, 800-ը արդեն տեղափոխվել են, Ջեքսոն»:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Հոֆման Ֆիլիպ

Ներփակվածը՝ փետրվարի 8-ի թիվ 533 զեկուցագրի օրինակը  
(փաստաթուղթ թիվ 61)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/275.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, p. 116.*

Թիվ 533  
Պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա, Հայեպ, 8 փետրվարի, 1916թ.*

*Կոստանդնուսոպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ զեկույցելու, որ երբ որոշ ժամանակ առաջ հեռավոր վայրերից տեղահանված հայերը եկան Հայեպ, նրանցից շատերին ուղարկեցին շրջակա Բիլիս, Բաք և այլ գյուղերը: Վերջերս այդ նույն ընտանիքներին արտաքսեցին Եփրատի ուղղությամբ հարավ և դեպի անապատ. ինչպես նաև Այնթապից արտաքսեցին 12000 կամ 13000 հայեր. այդ քաղաքում բողմվեց 300 կամ 400 ընտանիք:

Քաղաքում մնացած ընտանիքներին գգուչացրել են, որ եթե իրենք դավանափոխվեն մուսուլմանության, կարող են մնալ քաղաքում: Երեկ 80 կամ 100 ընտանիքների, որոնք քնիկ այնթապցի են. բայց տարիներ շարունակ ապրել են Հայեպում, 15 օր են ավել հեռանալու համար: Սա սարսափ է առաջացրել մնացած հայ բնակչության մեջ, որոնք սրա մեջ տեսնում են տեղահանության հրաման բոլոր հայ համայնքների համար՝ բողոքական, կաթոլիկ և գրիգորյան: Կրողը այժմ համոզված է, որ սա իշխանությունների վերջնական նպատակն է, և շուտով հրաման կլինի հայերի տեղահանության մասին, չնայած Ջեմալ փաշան երկու անգամ ինձ ասել է, որ Հայեպի իռայերի չեն տեղահանվելու: Իրավիճակը վշտալի է, և դեսպանությանը հիշեցնում է, որ այսպիսի գործողություն կարող է իրականացվել:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջ.Բ.Ջեքսոն,  
հյուպատոս

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/275.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower Euphrates, p. 117.*

(Այս նամակը ձեռագիր է)

Ջեքսոն Միչիգան  
#. 806 S.Mechanic St.

13 հոկտեմբերի, 1916թ

Վաշինգտոն

Պետական ղեկավարամենտ

Հարգելի Պարոն,

Ներկայացված դուք կգտնեք հատվածներ արտագրված իմ ամուսնու սեպտեմբերի 3-ի նամակից:

Հաշվի առնելով վուստով ստանալու դժվարությունները, ես ինձ թույլ եմ տալիս ուղարկելու սա ձեզ: Միայն թե հնարավոր լինի որևէ բան անել նախքան Հալեպից հայերի տեղահանությունը:

Որոշ ժամանակ առաջ Ջեմալ փաշան պրն. Ջեքսոնին խոսք էր սովել, որ Հալեպի հայերին չի արտաքսի: Դժբախտաբար,

միշտ չէ, որ կարելի է վատահել ասածին: Մենք մեքենագրելուն սովոր չենք, այսպիսով, հուսով եմ, կներեք իմ սխալները:

Անկեղծորեն Ձերը

Տիկին Ջես Բ. Ջեքսոն

Դեյր-էլ-Չոր ուղարկված հայերը<sup>7</sup> (սկզբում նրանք երեք հարյուր հազար էին) դարձան 12000՝ մեռնելով հիվանդություններից և սովից, բոլորին տարան ու կոտորեցին մի քանի օր առաջ, սակայն կանանց ու աղջիկներին սկզբում նաև անարգեցին գամմահ ցեղի արաբները, հավանաբար, ըստ մուտասաերիֆի (նահանգապետի) հրահանգի. որը մի քանի ժամով քաղաքից գնաց անձամբ ղեկավարելու համար գործը: Ես գրում եմ այդ մասին՝ լսելով ակնատեսից, և կասկած չկա, որ ոչ մի հայ չի մնացել այնտեղ:

Ուաքքայում և Մեսկենեում կան դեռևս մի քանի հարյուրը, սակայն նրանք երկար չեն ձգի: Կարծում եմ, մոտ հիսուն հազարը պետք է, որ թաքնված լինեն Հալեպի ընտանիքներում, որոնցից մոտ ինը հազարը այն եկեղեցիների օգնության ցուցակներում են, որոնց ես գումարներ եմ տալիս: Ես նաև աշխատում եմ ողջ պահել այլ քաղաքներում գտնվողներին, սակայն սա ահավոր առաջադրանք է, քանի որ շատերին մահացու ծեծի են ենթարկել, մի քանիսին կախել

<sup>7</sup> Առաջին նախադասությունը՝ «Ամեն ինչ սահման ունի», ջնջված է.

են կամ զնդակահարել՝ օգնության գումարներ քաժանելու համար: Դուք կհիշեք բոլոր այն լավ ընտանիքներին, որոնցից են Այնթապից Գարուջ Կարամանուկյանները, Քյուրքչիները և այլն: Նրանք բոլորը գնացել են Դեյր-էլ-Չորի ճանապարհով: Կարծեմ, Գարուջ Կարամանուկյանների հորը կսխտել են: Մի քանի օր առաջ Բերնոյին այնտեղ ուղարկեցի Vacuum-ի գործերով և գումար տանելու պատերազմող երկրների քաղաքացիների համար, որոնք շատ են այնտեղ և նա դեռ չի վերադարձել: Ձեռնալ փաշան սպանուցել է նրան հանձնել Ռազմական դատարանին, եթե նա հայերին փող տա, սակայն մենք նրան մի լավ կվազեցնենք իր փողի համար, եթե նա փորձի: Գերմանացիները նույնպես կօգնեն նրան այդ գործում: Համայում, Հոմսում, Մարաշում և այլն, շատերին ստիպել են դառնալ մահմեդական կամ նորից հեռանալ, և նույնիսկ երեխաներին են հանել որբանոցներից և ուղարկել են երկրով մեկ, փոքր երեխաներին և տղաների, և՛ աղջիկների երեքից տաս տարեկան: Սա իսկական սարսափի թագավորություն է՝: Մի օր հավանաբար այդ չհաջողվի: Մարդ չի կարող այն չափազանց մռայլ դարձնել: Հազարավոր հայերի Եփրատ գետի ուղղությամբ տարել են անապատով մինչև Ջերել (լեռ) Աբդուլ Ազիզ, որտեղ չերթեզներն ու քրոները սպանել ու կողոպտել են նրանց: Ճանապարհին թավիված են ոսկորներ և քայքայվող մարմիններ, և ըստ ուղևորների, կառավարությունը մեծ դժվարությամբ է տալիս թույլտվություն երթևեկելու համար: Նրանք բոլոր գերմանացի սպաներին հեռու են տանում ճանապարհներից, որպեսզի նրանք չտեսնեն ու չզեկուցեն որևէ բան, սակայն, երբեմն, չափազանց հետաքրքրասեր մի մարդ դուրս է պլծնում, անցնում այդ տեղերով և պատմում է այն սարսափները, որին ականատես է եղել: Թուրքերն սկսել են ասել գերմանացիներին այնպես, ինչպես օձերին, և հնարավոր է, մի բան տեղի ունենա Թուրքիայում մոտ օրերս: Այժմ, երբ Ռումինիան մտել է պատերազմի մեջ, մարդիկ սպասում են, որ Հունաստանն էլ կմտնի, և շուտով վերջ կարվի պատերազմին: Հետո ի՞նչ կլինի մեզ հետ, միթե՞ թուրքերը կլուծեն մշտական վրեժը և կսպանեն յուրաքանչյուրին, ով մահմեդական չէ, նախքան տերությունները կախողանան կանգնեցնել նրան: Եթե այդպես պատահի, և ինձ էլ բաժին

\* Հաջողալ կտոբը ջնջված է. «և ես կարծում եմ, որ դուք կզնայք Ջեքսոնի մոտ կամ կկանգնեք թղթակցի, որ գա ու տեսնի ձեզ և կպատմեք նրան ամբողջը: Իհարկե, ինձ հեռու պահեք դրանից, քանի որ ես այդեն վատ հարաբերությունների մեջ եմ թուրքերի հետ. մի քանի անգամ նրանց կանգնեցրել եմ. իհարկե»:

հասնի դրանից, որ աշխարհի վրա կթողնեմ մի ազգական. որը հուսով եմ պատվավոր վրեժ կլուծի: Պետք է, որ մեր մեջ մնացած լինի մի փոքր վայրենություն այսպիսի զգացմունքներ ունենալու համար:

Այսօր բարոնների համար պիկնիկ է լինելու: Նրանք բոլորն էլ եկող շաբաթ արտաքսվելու են Ջայե, որտեղ ապրում է Իբր Ուլ-Հուրին: Դուք կհիշեք նրան: Բոլորը վշտալից են, որովհետև կարծում են, թե սա Հալեպի հայերի տեղահանության սկիզբ է նշանակում: Հավանաբար բոլոր հայերի բնաջնջումից հետո մյուս քրիստոնյաների հերթը կգա: Ինձ հրավիրել են պիկնիկի և, իհարկե, կգնամ, չնայած այսպիսի զվարճանքները ինձ շատ են ձանձրացնում: Ես կարողացել եմ դեսպանությանը տեղյակ պահել դեպքերի մասին, չնայած փետրվարից ի վեր թուրքերը թույլ չեն տվել ինձ նամակ ուղարկել:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/298.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower Euphrates, pp. 118-120.*

Փաստաթուղթ թիվ 63

18 հոկտեմբերի, 1916թ.

806 South Mechanic Street,  
Jackson, Michigan  
Տիկին Ջես Ջեքսոն

Տիկին,

Դեպքարտամենտը շնորհակալություն է հայտնում Ձեր հոկտեմբերի 13-ի նամակի համար, որտեղ դուք ներկայեցրել եք հատվածներ Ձեր ամուսնու՝ Միրիայի Հալեպի ամերիկյան հյուպատոսի, նամակից Թուրքիայի հայերի վիճակի վերաբերյալ:

Ես եմ, տիկին,

Ձեր խոնարհ ծառան՝

Պետական քարտուղարի փոխարեն,

(կնքված) Էլվի Ա. Էյդի,

Քարտուղարի երկրորդ քարտուղար

867.4016/298

3 RBP

Փաստաթուղթ թիվ 64

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

15 սեպտեմբերի, 1916թ.

Խիստ գաղտնի  
Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ կցելու Հալեպի հյուպատոս՝ պրն. Ջեքսոնի ինձ ուղղված սույն ամսվա 3-ի անձնական մամակից մի հատված: Այս մամակը սիրով ինձ է հանձնել գերմանացի մի զինվորական ուղևոր:

«Լստահաբար ինձ հաղորդել են, որ Դեյր-էլ-Չորի մուտասերի-ֆը կազմակերպել և իրականացնում է այնտեղ մնացած բոլոր հայերի, մոտավորապես 12000 մարդու, կոտորածը և գնացել է անձամբ ղեկավարելու այդ գործը: Եվ այդ այն բանից հետո, երբ արաբական ցեղերի «չաչամները» մուտասերիֆի հրամանով կամ հրավերքով անարգել են բոլոր գեղեցիկ կանանց ու աղջիկներին: Ինձ հասած տեղեկատվությունը այնպիսի աղբյուրից է, որի արժանահավատության հանդեպ փոքր իսկ կասկած չունեմ: Ես ուղարկել եմ պրն. Օգյուստ Բերնոյին՝ իմ աշխատողներից մեկին, որը գերմանացի հպատակ է, Դեյր-էլ-Չոր օգոստոսի 24-ին, նա տեղ է հասել 30-ին, և հուսով եմ, որ կվերադառնա մի շաբաթից: Նա գնաց կարգավորելու Vacuum Oil ընկերության վաղեմի գործերը, որի գործակալն է նա Հալեպում և նաև հարթելու այն տարածայնությունը, որ ծագել է մուտասերիֆի և պատերազմող երկրների 40 քաղաքացիների միջև: Ճանապարհին նա ջգնություն է բաժանել Մեսկենեի, Ռաքքայի, Մեքհայի և այլ տեղերի հայերին, և նահանգապետը, հեռագրից իմանալով այդ մասին, տեղեկացրել է Հ.Է. Ջեմալ փաշային, որը կատաղեց, կանչեց ինձ ու ասաց, որ կձերբակալի պրն. Բերնոյին Դեյր-էլ-Չոր ժամանելուն պես և նրան կներկայացնի զինվորական դատարանին: Ես փորձեցի մեղմել հարցը, բայց նա չափազանց

կատարած էր, նույնիսկ ինձ վրա, որովհետև ես էի Ջեմալ փաշայից թույլտվություն ձեռք բերել Բերնոյի ուղևորության համար: Բերնոն հեռագրեց ինձ Դեր-էլ-Չորից, որ տեղ է հասել, և որ ամեն ինչ լավ է, այսպիսով գուցե փաշան ետ էր կանգնել իր մտքից: Ամեն դեպքում ես ձեռք եմ առնում բոլոր հնարավոր նախագգուշական միջոցները քաղաքայիններ թույլ չտալու համար: Բազմաթիվ մարդկանց (օսմաններին) ձերբակալել են Դեր-էլ-Չորում օգնություն տալու համար, մի քանիսին մահացու ծեծի են ենթարկել, մի քանիսին կախել են այդ պատճառով, սակայն, ասում են, թե այլ պատճառներով, միսս Ռոնները շատ էր հոգնել և օգնության բաժանումը ինձ է բաժին հասել: Իհարկե. իշխանություններն ինձ ոչինչ չեն ասում, քանի որ կրոնական համայնքներին ես ստիպում եմ բաժանել օգնություն միայն բացառիկ հանգամանքներում: Այս կապակցությամբ ես թույլ եմ տալիս ինձ ասել Ձեզ, որ տեղի իրավիճակն ինձ բոլորովին դուր չի գալիս. և կարծում եմ. որ հնարավոր է, որ եթե թուրքերն Վզան, որ մոտ է վերջը, նրանք վերջ կտան երկրի բոլոր քրիստոնյաներին, և այդ դեպքում իմ զլուխը չի արժենա նույնիսկ մի սենթ, այն դեպքում. երբ իմ պաշտոնական հարաբերությունները նրանց հետ չէին կարող ավելի լավ լինել: Այդ իսկ պատճառով, ավելի լավ կլինի ամբողջ երկրի նահանգների իշխանություններին ուղարկել ամենախիստ ցուցումները պաշտպանելու մեզ. երբ կհասնի ճակատագրական պահը: Կարծում եմ, քանի որ Ռումինիան մտել է պատերազմի մեջ, հույներն էլ նույն կերպ կվարվեն, և որ այդ դեպքում ամերիկյան նավատորմի ներկայությունը Միջերկրականում խիստ անհրաժեշտ կլինի ամերիկացիների, ինչպես նաև տեղացի քրիստոնյաների ապահովության համար: Ժամանակ առ ժամանակ թուրքերի արած ակնարկները ստիպեցին ինձ հանգել այս որոշմանը: Խնդրում եմ, մի մոռացեք սա, քանի որ ես այլևս հնարավորություն չեմ ունենա գրելու Ձեզ այն մասին, ինչ մտածում եմ»:

Չնայած ես հակված եմ կարծելու, որ պրն. Ջեքսոնը՝ երկարատև և մշտապես կապված լինելով հայերի թվացյալ անհույս վիճակի հետ, կարող է, երբեմն, անգլիտակցաբար չափազանց ընդգրծել դրության որոշակի կողմեր, այնուամենայնիվ, ես կարծում եմ. որ նրա եզրակացությունը ճիշտ է, իսկ նրանից ստացված տեղեկությունը չափազանց արժեքավոր: Այս նամակից կարելի է հասկանալ, որ «ձախհայկական գործընթացը» դեռևս չի ավարտվել: Դեպարտամենտին կարող է հետաքրքրել օգնության վճարումների կապակցությամբ արված հիշատակումը. որը ցույց է տալիս. որ այս մարդիկ օգնություն ստանալու ուղղությամբ ունեն դժվարություններ:

Պարոն Ջեքսոնի անձնական կարծիքը, որը վերաբերվում է իրավիճակի ընդհանուր վտանգավոր լինելուն, երկրի լավատեղյակ ամերիկացիների կարծիքը չէ, սակայն կարող է առաջարկվել դեպարտամենտի ուշադրության համար: Ամենատարածված կարծիքը, և որին ես հակված եմ ուշադրություն դարձնել, այն է, որ ներքին շրջաններում թուրքական պաշտոնյաների գերիշխող և անպատասխանատու վերաբերմունքը հավանաբար կպակասի, եթե թուրքական զենքը անհաջողություն կրի: Սա ենթադրություն է, սակայն, հաշվի առնելով այն հակասական և անիշխանական տարրերը, որոնցից կազմված է գործող քաղաքական խումբը, անհավանական չէ, որ այս վտանգավոր իրավիճակը կարող է արագորեն տարածվել մի քանի շրջաններում:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Չեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Հոֆման Ֆիլիպ

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/301.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide",  
Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower  
Euphrates, pp. 123-125.*

Փաստաթուղթ թիվ 65

Թիվ 2085

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

31 հոկտեմբերի, 1916թ.

Գաղտնի

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,  
Անդրադառնալով 1916թ. հոկտեմբերի 17-ի Հայոց խնդիրների վերաբերյալ իմ թիվ 2186 հեռագրին, պատիվ ունեմ ուղարկելու Հալեպի նյուպատոսի զեկուցագիրը, որի վրա է մեծ մասամբ հիմնված այս հեռագիրը՝ կապված դեսպանության ստացած այլ տեղեկությունների հետ:

Պարոն Ջեքսոնին ուղարկված զեկուցագրի հեղինակի անունը պետք է պահվի բացարձակապես գաղտնի, քանի որ նրա կյանքը լուրջ վտանգի կենթարկվի, եթե նրա անունը հրապարակվի: Լավ կլինի մաս թույլ չտալ նրա անձի մասին նույնիսկ թեթև հիշատակում:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Էբրոդ Էլկուս

Ներփակվածը՝ թիվ 754 զեկուցագրի օրինակը, թվագրված  
21 սեպտեմբերի նեփակվածով (փաստ. 66 և 67)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.48/302.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower  
Euphrates, p. 126.*

### Փաստաթուղթ թիվ 66

Թիվ 754  
Պատճեն

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սիրիա. Հալեպ. 21 սեպտեմբերի, 1916թ.*

*Թուրքիա, Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպանություն  
Պատվարժան  
Հռֆման Ֆիլիպ*

Պարոն,

Պատիվ ունեմ ուղարկելու Օգյուստ Բերնոյի Նյու Յորքի Vacuum Oil ընկերության գործակալի, 1916թ. սեպտեմբերի 10-ի հյուպատոսությանն ուղղված զեկուցագիրը, որտեղ նկարագրվում է Թուրքիայի տարբեր մասերից տեղահանված և այժմ Դեյր-Էլ-Չորի և Հալեպի միջև գտնվող հայերի դրությունը, որոնց նա համոզիպել է այնտեղ, և զեկուցագիրը բացատրությունների կարիք չունի:

Պարոն Բերնոյի առաքելությունը այս դժբախտ մարդկանց օգնություն բաժանելն էր, և դրա հաջողության մասին կարելի է դատել, երբ ես ասեմ, որ նա ամենակարիքավորներին կարողացավ տալ մոտավորապես 3000 լիտր: Փողը խմբերին էր տրվել ըստ նրանց քանակի և վիճակի. յուրաքանչյուր դեսպան վերցվել էր

ստացական, որը ցույց է տրվել մեր գրասենյակի կողմից պարոն Փիթին ներկայացված հաշվետվության մեջ:

Պետք է ավելացնել, որ օգնության բաժանումը, որը դեսպա-  
նությունը վատահել էր մեր հյուպատոսությանը, իրականացվել է  
ամենաժանր հանգամանքներում, քանի որ իշխանությունները երբեք  
համաձայն չէին դրան և գանկացած մարդու հանդեպ աշխարհի գոր-  
ծողություններին դիմադրել են ամենաջանադիր կերպով: Մինչև  
այժմ գումարները տրվում էին օրիորդ Ռեատրիս Ռոնեթին, որն իր  
վրա էր վերցրել օգնության բաժանումը, սակայն հետո նրա համ-  
հարզներից մի քանիսը ձեռքբերակալվեցին, և ինչպես ինձ տեղեկացրել  
են. նրանցից մի քանիսը բանտարկվել են և վատ վերջ են ունեցել,  
քանի որ նրանցից ոչ մի լուր չկա, օրիորդ Ռոնեթը որոշեց այնտեղից  
հեռանալ, հաճենայն դեպս. ժամանակավորապես և այժմ գնացել  
է Մարաշ հանգստանալու: Թուրքական կենտրոնական իշխանու-  
թյունը արտահայտեց իր անփոփոխ դիմադրությունը տեղահանված  
հայերին օգնություն տրամադրելու հարցում. և ամեն օր ես սպասում  
եմ յուրջ պառակտման այդ հարցի պատճառով: Մակայն, քանի որ  
մինչև այժմ ես անկասկած կարողացել եմ փրկել հազարավոր այս-  
պիսի գոհերի կյանքը, ես ուրիշ ճանապարհ չեմ տեսնում, քան շա-  
րունակել՝ նույնիսկ հակառակ այն քանի, որ ինձ համար այն լավ  
հետևանքներ չի ունենա: Եթե ինձ հաջողվի, ավելի լավ: Հակառակ  
դեպքում, ես ստիպված կլինեմ դիմանալ հետևանքներին: Քանի դեռ  
դեսպանությունը շարունակում է գումարներ արամադրել, պետք է  
անել հնարավոր ամեն ինչ, հնարավորին չափ ավելի շատ մարդ-  
կանց օգնելու համար. այն Խույսով, որ վաղ թե ուշ իրավիճակը  
կփոխվի դեպի լավը: Երևի թե դեսպանությունը կարողանա տեղա-  
կան իշխանություններին ցուցումներ ուղարկել, որպեսզի մեզ թույլ  
տան աշխատել առանց միջամտության, այնպես, որ մենք կարողա-  
նանք խնայել, փրկել այս տուժած ազգի գոնե մի փոքր հատվածին:

Պարոն Բերնոն այսօր նորից գնաց նույն ճանապարհով մինչև  
Համմամ և Ռաքքա նույն նպատակով, որի մասին զեկուցագիրը  
կուղարկեմ առաջին իսկ հնարավորության դեպքում:

Միքով հրավիրում եմ սրա վրա պարոն Փիթի ուշադրությունը:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

-

(ստորագրված) Ջ.Ռ. Ջեքսոն, հյուպատոս

Ներվիակվածը՝ զեկուցագրի օրինակը ըստ ասվածի  
(փաստ. 67)

Արխիւր՝ 1. U. S. State Department Record Group 59. 867.48/302.

2. "United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Saralian. Volume 1. The Lower  
Euphrates, pp. 127-128.

### Փաստաթուղթ թիվ 67

Հախկ. 10 սեպտեմբերի. 1916թ.

Հախկ

Ամերիկյան հյուպատոս.

Էսքիվայո, Ջես Բ. Ջեքսոն

Հարգելի պարոն հյուպատոս,

Դուք ինձ վստահեցիք զնալ և այցելել հայերի ճամբարները  
Եփրատի ուղղությամբ, Մեսկենն և Դեյր-էլ-Չոր, որպեսզի Ձեզ հաշ-  
վետվություն տամ այդ վայրերում տեղահանված հայերի վիճակի,  
նրանց ներկա դրության և, եթե հնարավոր է, այդ դժբախտ արտաքս-  
վածների քանակի մասին:

Վերջը նշվածը այս զեկուցագրի թեման է, թույլ եմ տալիս ինձ  
այն ուղարկել Ձեզ, պրն. հյուպատոս, միաժամանակ խնդրում եմ  
Ձեզ ի նկատի ունենալ իմ նամակի վերջում արված եզրակացույթ-  
յունները, որոնք միայն կարող են, ցավոք սրտի մի փոքր թեթևացնել  
այն տառապանքները, որոնց ամեն օր ենթարկվում է անհետացման  
եզրին կանգնած այդ ժողովուրդը:

Անհնարին է նկարագրել սարսափի այն տպավորությունը, որը  
ես ստացա Եփրատի ուղղությամբ ցրված հայերի ճամբարներով իմ  
ուղևորության ժամանակ. հատկապես նրանցից, որ տեղակայված  
են Եփրատի աջ ափին՝ Մեսկեննի և Դեյր-էլ-Չորի միջև: Այն հազիվ  
թե հնարավոր լինի անվանել ճամբար, քանի որ նրա մեծ մասը  
դժբախտ մարդիկ են՝ բռնությամբ հեռացված իրենց հայրենի հողից,  
իրենց տներից և իրենց ընտանիքներից. որտեղից հեռանալիս կամ  
ճահապարհին խլել են իրենց ունեցվածքը և քշել են բացօթյա մի  
տեղ, նախիրի մնան, առանց ծածկի. գրեթե առանց հագուստի. կե-  
րակրում են աղքատիկ սնունդով, որը բոլորովին չի բավարարում:

Նրանք անպաշտպան են եղանակի խստությունների դեմ.  
ամռանը՝ անապատի այրող արևի տակ, ձմռանը անձրևի ու ցրտի,  
արդեն զրկանքներից և երկարատև երթից, վատ վերաբերմունքից,  
ամենադժվար փորձություններից և ամենօրյա հոգեվարժից թուլա-

ցած ավելի քիչ թուլացածներին հաջողվել է գետի ափերին իրենց համար վուսեր փորել:

Նրանք, ովքեր կարողացել են, իսկ այդպիսիները քիչ են, հեղեղից փրկել մի քիչ հագուստ, փալա՝ վրանի համար և մի քիչ փող՝ այլուր գնելու համար, եթե գտնեն, համարվում են բախտավոր մարդիկ: Նաև նրանք, ովքեր շրջակայքի գյուղացիներից կարողանում են ձեռք բերել ձմերուկ կամ քոչվորներից մի հիվանդ այծ՝ ոսկու գնով: Ամենուր կարելի է տեսնել հյուժված ու գունատ դեմքեր, բափառող կմախքներ՝ ենթակա ամեն տեսակ հիվանդությունների, և մեծ մասը սովահարության զոհեր են:

Այն մարդիկ, որոնց վստահել են այս դժբախտների տեղափոխությունն անաչատուվ, նրանց կերակրելու մտադրություն չունեն: Պարզվում է նույնիսկ, որ կառավարությունը սկզբունքորեն նրանց թողել է, որ մեռնեն: Կազմակերպված կոտորածը, նույնիսկ ազատության, հավասարության և եղբայրության ժամանակներում, որը սահմանադրությունը չի հայտարարել, ավելի մարդասիրական կլիներ: Համենայն դեպս, այս դժբախտ մարդիկ չէին կրի սովի տառապանքները, ավելի վատ փորձություններում դանդաղ մահվան սարսափները, որոնք մոնղոլներին արժանի տանջանքների մեթոդներ են: Սակայն կոտորածը կլիներ ավելի քիչ սահմանադրական: Քաղաքակրթությունը պահպանված է:

Հայերից մնացածները, որ ցրված են Եփրատի սահմանների երկարությամբ, տարիքավորներ են, կանայք ու երեխաներ: Միջախասակ ու երիտասարդ տղամարդիկ, որոնց դեռ չեն կոտորել, ցրված են կայսրության ճանապարհներին, որտեղ նրանք քար են կոտրում՝ որը նախատեսված բանակի կայրիքների համար, և զբաղված են պետության համար աշխատանքներում:

Երիտասարդ աղջիկները, իսկախ նույնիսկ շատ երիտասարդ, դարձել են մուսուլմանների ավարը: Նրանց առևանգել են գաղթի ճանապարհին, երբեմն անարգել են ու վաճառել, եթե չեն սպանել տխուր քարավանին ուղեկցող ժանդարմները, և աղջիկները տարվել են իրենց դահիճների հարեմների կամ ընտանիքների համար:

Ինչպես Դանթեի «Ի-ժոխքի» դարպասին, այնպես էլ այս անիծված ճամբարների մուտքի մոտ պետք է գրել. «Մտնելիս թողեք բոլոր հույսերը»: Չիավոր ժանդարմները շրջում են ձեռքակալության ու փախստականների հետսպնդումների կարգադրություններով: Ծանապարհները լավ հսկվում են: Եվ ինչպիսի՞ ճանապարհներ: Նրանք տանում են դեպի անապատ, որտեղ մահը այնքան անխուսափելի է, որքան օսմանյան դառապարտյալների խմբի պահակազորի գանա-

հարման դեպքում: Անապատի տարբեր մասերում ես հանդիպել եմ փախստականներից վեց մարդու, որոնց մահամերձ լքել էին ժանդարմները, և որոնց շրջապատել էին սոված շները, որոնք սպասում էին հոգեվարքի վերջին շնչին. որպեսզի ցատկեն և հոշոտեն նրանց:

Փաստորեն, Մեսկենեից մինչև Դեյր-էլ-Չորի ճանապարհին կարելի է տեսնել գերեզմաններ, որոնց մեջ լքված ու դաժան տառապանքներից մեռած այս դժբախտ հայերի մնացորդներն են: Հարյուրավոր են այս գերեզմանաքմբերը, որտեղ անանուն իրենց մշտնջենական քնով քնած են այս կյանքի լքվածները, անորակելի բարբառոտության զոհերը:

Մի կողմից, նրանց թույլ չեն տալիս ճամբարից հեռանալ գոյության միջոցներ գտնելու համար, մյուս կողմից, տեղահանված հայերը չեն կարող փորձել դիմելու մարդուն, հատկապես հային, այնքան բնորոշ ընդունակությանը դժբախտություններին հարմարվելու և իրեն հասած դժվարությունների քանակը նվազացնելու հնարամտությանը:

Կարելի է կառուցել ծածկի մման մի բան, ինչպես օրինակ մի խրճիթ կամ հողաշեն մի բողոտիկ, որպեսզի նրանք գյուղատնտեսությամբ զբաղվեին. եթե գոնե ունենային տուն այնտեղ, որտեղ զտնվում էին: Նրանց զրկում են նույնիսկ այս հույսից: Նրանք սպասում են որևէ պահի, որպեսզի կարողանան փոխել իրենց տառապանքների վայրը, և հետո նորից սկսում են նոր հարկադիր երթ առանց հացի ու ջրի, մտրակների հարվածների տակ. նոր տառապանքներ, վատ վերաբերմունք արժանի Սուդանի ստրկավաճառների և զոհեր՝ այս անհավոր Գողգոթայի ճանապարհին:

Նրանք, ովքեր որոշ գումար ունեն, անընդհատ ճնշվում են իրենց հսկիչների կողմից, նրանց ավելի հեռու ուղարկելու սպառնալիքով, նրանցից աստիճանաբար վերցնում են նրանց վերջին խնայողությունները, և երբ այս խնայողություններն էլ վերջանան. նրանք ի կատար կածեն իրենց սպառնալիքները:

Այն ամենը ինչ տեսել ու լսել եմ, վեր է ամեն մի երևակայությունից: «Հագար ու մի սարսափների» մասին խոսելը շատ քիչ է այս դեպքում, ինձ թվաց, թե անցնում եմ դժոխքի միջով: Այն մի քանի դեպքերը, որ ես կնկարագրեմ այստեղից ու այնտեղից, փոքր գաղափար կտան ողբալի ու սարսափելի իրական պատկերի մասին: Նույն տեսարանները կրկնվում են տարբեր վայրերում, որոնցով անցել եմ. ամենուր Նփրատի երկարությամբ Մեսկենեից մինչև Դեյր-էլ-Չոր նույն համատարած բարբառոտությունն է. որի նպատակը Թուրքիայի հայ բնակչության վերջնական բնաջնջումն է սովահարության

միջոցով, ամենուր այդ դահիճների մույն անմարդկայնությունն է, և գոհերի կրած մույն տառապանքները:

Մեսկենեն իր աշխարհագրական դիրքով Սիրիայի և Միջագետքի միջև, բնական հավաքատեղի է Անատոլիայի նահանգից տեղահանված հայերի համար, որոնց հետո ուղարկում են Եփրատի ուղղությամբ: Նրանք գալիս են հազարներով, սակայն մեծ մասը թողնում են այդտեղ իրենց ոսկորները: Այս հսկայական և մռայլ հարթավայրը թողնում է տխուր և ցավալի տպավորություն: Տեղում ստացած տեղեկությունը թույլ է տալիս ինձ հայտարարել, որ այստեղ թաղված են մոտավորապես 60000 հայեր, որոնք գոհ են դարձել սովի, տարբեր գրկանքների, աղիքային հիվանդությունների և որպես հետևանք՝ տիֆի: Տեսադաշտում երևում են գերեզմանաքմբեր, որտեղ թաղված են 200-ից 300 դիակներ՝ հողով ծածկված իրար հետ տարբեր ընտանիքներից կանայք, երեխաներ ու ծեր մարդիկ:

Ներկայումս մոտավորապես 4500 հայերի պահում են Մեսկենե թաղաքի և Եփրատի միջև: Սրանք կենդանի ուրվականներ են: Հսկիչները նրանց խնայողաբար ու շատ անկանոն տալիս էին մի կտոր հաց: Երբեմն երեք կամ չորս օր այս սովահար մարդիկ ոչինչ չէին ստանում, առանց այն էլ բացի մի կտոր հացը ուտելուց ոչինչ չունենալով:

Սարսափելի դեզինտերիան բազմաթիվ գոհեր է խլում, հատկապես երեխաներ: Վերջիններս սոված գալլերի նման հարձակվում են ձեռքի տակ ընկած ամեն ինչի վրա, ուտում են խոտեր, հող, մույնիսկ իրենց կղանքը:

Ես հիվճվեց բառակուսի մետրանոց մի վրանի տակ տեսա 450 որբերի՝ կեղտի ու ոջիլներին հետ խառնված: Այս խեղճ երեխաները օրեկան ստանում էին 150 գրամ հաց, երբեմն, և սա ավելի շատ դեպքերում, նրանք երկու օր մնում էին առանց ուտելիքի: Մահը նրանց մեջ մեծ ավերածություններ է անում: Այն ժամանակ, երբ ես անցնում էի, այս վրանի տակ գտնվում էին 450 գոհեր: Ութ օր հետո վերադառնալիս աղիքային հիվանդությունը խլել էր տասնյոթի կյանքը:

Աբու Հերերան մի փոքր վայր է Մեսկենեից հյուսիս՝ Եփրատի ափին: Այն իսկական անապատ է: Գետից 200 մետր հեռավորությամբ մի բլրի վրա տեղավորված են 240 հայեր երկու անխիղճ ժանդարմների հսկողության ներքո, որոնք թողել են հայերին, որ սովից մեռնեն ամենադաժան տառապանքներից: Տեսարանները, որոնց ես ականատես եղա, գերազանցում են բոլոր սարսափները: Այն վայրին մոտ, որտեղ կանգնեց կառքը, կանայք, որ չէին տեսել իմ մոտենալը, ձիու կեղտի մեջ փնտրում էին չմարսված զարու հատիկներ,

որպեսզի ուտեին: Ես նրանց մի քիչ հաց տվեցի: Նրանք նետվեցին հացի վրա՝ սովից սատկող շների նման. ազախաբար դրեցին այն իրենց բերանը զկրտալով և էպիլեպտիկ ցնցումներով: Վայրկենապես, մեկը մյուսին իմացեցրավ. 240 մարդիկ. կամ ավելի ճիշտ սոված գալլեր. որոնք յոթ օր ոչինչ չէին կերել. շտապեցին քրից ինձ մոտ. և մեկնելով իրենց կյուծված թևերը արցունքներով ու ճիչերով. հաց էին աղերսում: Նրանք մեծ մասամբ կանայք էին, երեխաներ ու մոտավորապես մի դյուժին ծերունիներ:

Վերադարձին ես հաց բերեցի նրանց համար և երեք քառորդ ժամի ընթացքում կարեկցող. սակայն իշխանություն չունեցող հանդիսատեսն էի մի կտոր հացի համար անկուշտ պայքարի, այնպես. ինչպես կարող էին անել վայրի սովահար գազանները:

Համամամբ մի փոքր գյուղ է, որտեղ պահում են 1600 հայերի: Ամեն օր նույն սովի ու սարսափի տեսարանն է: Տղամարդկանց տանում են որպես բանվորներ, ճանապահաշինարարներ և փորողներ: Որպես աշխատավարձ նրանք ստանում են մի կտոր հաց, որը չի կարող մարավել, և որը բավարար չէ, որպեսզի նրանց ուժ տա հյուժող աշխատանքի համար:

Այստեղ ես հանդիպեցի մի քանի ընտանիքների, որոնք դեռևս մի սրոշ գումար ունեն և կարող են թշվառ կյանք վարել. սակայն մեծամասնությունը պատկած է մերկ գետնին, առանց ծածկի, սնվում են ձմերուկով, նրանցից ամենադժբախտները բավարարվում են մյուսների կողմից դեն նետված կեպը կրծելով: Մահացությունը շատ բարձր է. հստակապես՝ երեխաների:

Ուաքբան. բավականին կարևոր մի քաղաք. գտնվում է Եփրատի ձախ ափին. 5000-ից 6000 հայեր, մեծ մասամբ կանայք ու երեխաներ, ցրված են քաղաքի տարբեր թաղամասերում և 50-ից 60 մարդուց կազմված խմբերով ապրում են սներում, որոնք նահանգապետը տրամադրել է ամենաաղքատների համար: Այնտեղ, որտեղ սա կա. համարվում է առավելություն և, այն, որը նորմալ ժամանակներում կլիներ օսմանյան հպատակների հանդեպ օսմանյան պաշտոնյայի խիստ պարտականությունը, ներկա պայմաններում կիսամարվի մեծահոգություն. և նույնիսկ հերոսություն:

Չնայած Ռաքբայի հայերի հանդեպ վերաբերմունքն ավելի լավ է, քան այլ տեղերում. նրանք սարսափելի թշվառ են: Իշխանություններն ալյուրը շատ անկանոն և անբավարար քանակով են բա-

ժանում նրանց. ամեն օր կարելի է տեսնել կանանց ու երեխաների, հացի փոտերի մոտ ալյուր խնդրելիս, իսկ փողոցներում հարյուրավորները ուղորմություն են խնդրում բնակիչներից: Ամենուր սովի

սարսափելի ուրվականն է: Երբ պատկերացնում ես, որ այս սովահար հասարակ մարդկանց մեջ կան այնպիսիները, որոնք ունեցել են սոցիալական բարձր դիրք, հեշտ է պատկերացնել այն տառապանքները, հատկապես բարոյական, որին ենթարկվում են այս դժբախտ մարդիկ, որոնք երեկ հարուստ էին ու նախանձելի, իսկ այսօր ամենաբշտիկների նման զգվելի հացի կտոր են մտրում:

Եփրատի աջ ափին Ռաքքայի դիմաց, կարելի է տեսնել մոտ հազար սովահար հայերի, որոնք ապրում են վրանների տակ, զինվորների հսկողությամբ: Նրանք սպասում են, որպեսզի իրենց տեղափոխեն ուրիշ տեղ՝ լրացնելու համար այլ ճամբարներում մահվան ստեղծած բացերը: Իսկ նրանցից քանիսը կհասնի տեղ...

Ջիրաֆը Ռաքքայից հյուսիս է, այնտեղ հավաքված են 1800 հայեր, որոնք սովից ավելի են տառապում, քան այլ վայրերում, որովհետև Ջիրաթը ամբողջովին անապատ է: Տղամարդկանց ու երեխաների խմբերը շրջում են գետի ափերին, փնտրելով խոտեր՝ սովը հագեցնելու համար, և այլոք, որոնք հյուծվածությունից մեռած ընկնում են իրենց հսկիչների անկարելից աչքերի առաջ, իսկ նրանց ղեկավարը, բառիս բուն իմաստով, մի բարբարոս մարդ, արգելում է մարդկանց անցնել ճամբարի սահմանը՝ զանահարության սպառնալիքով:

Մերգան մի փոքր գյուղ է, որտեղ ապրում է 250 կամ 300 հայ, այնքան թշվառ ու սովահար, ինչքան այլ տեղերում:

Դեյր-ել-Ջորը նույն անունը կրող անկախ նահանգապետության (մուտասերիֆատի) շտաբն է: Մի քանի ամիս առաջ 30000 հայեր տեղակայված էին քաղաքի արվարձանների ճանբարներում, նահանգապետի՝ Ալի Սուադ Բելի պաշտպանության ներքո: Չնայած ես չեմ ուզում անհատական կարծիք հայտնել, բայց չեմ կարող լռության մատնել այս սրտացավ մայրքու անունը, որի համար գաղթականները պետք է շնորհավորեին մեկմեկու, և որը փորձեց մեղմել նրանց տառապանքները: Նրանցից ոմանք նույնիսկ փոքր առևտուր էին սկսել և ուրախ էին այնտեղ մնալու համար: Հաստատված է, որ եթե պետության շահերը պահանջելին, ենթադրենք, հայերի մասսայական տեղահանությունը Հայկական հարցի (?) նախագուշական լուծման համար, համենայն դեպս, իշխանությունները նաև օտմանյան կայսրության շահերից ելնելով ավելի մարդասիրաբար վարված կլինեին, եթե հայերին տեղափոխեին այն քաղաքները, որտեղ նրանք կարող էին զբաղվել առևտրով կամ իրենց արհեստներով կամ նրանց հող տրամադրեին, որը հայերը կարող էին մշակել, քանի որ աշխատանքի անհրաժեշտությունը շատ է զգացվում

հիմա: Սակայն եթե մտադրություն կար գապել ազգին, որպեսզի միաժամանակ վերանար Հայկական հարցը, նպատակին. անկասկած, չեն հասնի:

Կրկին համեմատական բարեկարգությունը, որ ունեին հայերը Դեյր-էլ-Չորում, հաղորդվեց ավելի բարձր իշխանություններին և մեղավորը՝ Ալի Սուադ Բեյը, տեղափոխվեց Բաղդադ, նրան փոխարինեց Ձեկի Բեյը, հայտնի իր անմարդկային արարքների և բարբա-րոսության համար: Նրանք դիմեցին ինձ սարսափած Դեյր-էլ-Չորի այս նոր մուտասերիֆից (նահանգապետից): Բանառը, տանջանքները, գանահարումը, կախադանը մի ժամանակ այս փոքրիկ քաղաքի ամենօրյա հացն էին: Աղջիկներն անարգվում և հանձնվում էին արաբներին՝ նրանց հաճույքների կամ տնային գործերի համար, երեխաներին նետում էին գետը, ո՛չ թուլությունը, ո՛չ էլ անմեղությունը չէին խնայվում:

Հայտնի Ալի Սուադ Բեյը հավաքել էր հազար որբերի մի մեծ տան մեջ և հոգում էր նրանց սննդի մասին քաղաքի ծախսերից, նրա հաջորդը երեխաներին տնից դուրս նետեց, նրանց մեծամասնությունը մեռավ փողոցներում շների նման, սովից, ամեն տեսակ զրկանքներից և վիրավորանքներից:

Ավելին, Դեյր-էլ-Չորում եղած 30000 հայերը, դաժանորեն քլվեցին Չաբուրի երկարությամբ, որը թափվում է Եփրատը, այսինքրն երկրի ամենաանապատային շրջանը, որտեղ բացարձակ անհրճար է ուտելու որևէ բան գտնել: Դեյր-էլ-Չորում իմ ստացած տեղեկության համաձայն, հայերի մեծ մասն արդեն մահացել է, շուտով մնացածն էլ կհետևի նրանց:

Եզրակացություն. համոզված եմ, որ 15000 հայեր ցրված են Եփրատի երկարությամբ՝ Մեսկենեից Դեյր-էլ-Չոր, Ռաքքայի միջով: Ինչպես արդեն ասել եմ, այս դժբախտ մարդիկ՝ լքված ու վատ վերաբերմունքի արժանացած իշխանությունների կողմից, որոնք ի վիճակի չեն սնունդ հայթայթել, աստիճանաբար մեռնում են սովից: Չմեռող մոտենում է, ցուրտն ու խոնավությունը կարագացնեն նրանց վախճանը սովից: Նրանք միշտ էլ կարող են ուտելու որևէ բան գտնել, չնայած շատ թանկ, եթե վճարելու փող ունենան: Անկասկած, կան շատ խոչընդոտներ փող ուղարկելու համար, որոնցից հիմնականը իշխանությունների չկամությունն է, սակայն, այնուամենայնիվ, անուղղակիորեն, կարելի է նրանց դրամական օգնություն փոխանցել, որը հնարավոր է բաժանել տարբեր ճամբարներին՝ ալյուրի հավասար ու բավարար բաշխման համար:

Եթե գումարները չուղարկվեն, այս դժբախտ մարդիկ դատապարտված են. եթե գումարները նշանակալից լինեն, կարելի է վատահ լինել, որ նրանցից շատերը կվրկվեն մինչև խաղաղություն հաստատավի, որն էլ կորոշի նրանց ճակատագիրը:

Կարծում եմ. պրն. հյուպատոս, ես բավականին ասել եմ այս լքված ու կործանված մարդկանց մասին, որպեսզի անմիջապես միջոցներ ձեռք առնվեն նրանց օգնության համար, և զգալով, որ իմ

բույլ ձայնը կլավի և հետևանքներ կունենա, ես եզրափակում եմ իմ գեկուցագիրը և խնդրում եմ Ձեզ ընկունել իմ ամենամուրթ զգացմունքների հաստատումը:

(ստորագրված) Օ. Բերնո

Ներփակվածը՝ Վերը նշված վայրերում հայերի առանձին ավարտուն ցուցակները, Ռաբբայի և Մեսկենեի մի մասի հայերի ցուցակները բացակայում են, քանի որ ես դրանք չկարողացա ձեռք բերել ինձնից չկախված պատճառներով: (Այս ներփակվածները քվագրված չեն):

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.48/302.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide", Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower Euphrates, pp. 129-135.*

Փաստաթուղթ թիվ 68

21 դեկտեմբերի. 1916թ.

Գաղտնի

*Մասաչուսեթս. Բոստոն,  
Բիքոն փողոց 14  
Հայերի և ասորիների օգնության  
Ամերիկյան կոմիտե  
թժկ. Ջեյմս Լ. Բարտոն*

Պարոն,

Ձեր գաղտնի տեղեկատվության համար ներփակել եմ մի գեկուցագիր, որն ուղղված է Հալեպի ամերիկյան հյուպատոսին՝ պրն. Օգլոսա Բերնոյի կողմից, և որտեղ նկարագրվում է Թուրքիայի տարբեր մասերից տեղահանված և այժմ Հալեպի և Դեյր-էլ-Չուրի միջև գտնվող հայերի վիճակը:

Այս զեկուցագրի օրինակը ուղարկվում է հայերի ու ասորիների օգնության ամերիկյան կոմիտեի աշխատանքների օգնելու համար. և այն չպետք է հրապարակվի:

Ես եմ, պարոն,

Ձեր խոնարհ ծառան,  
Պետական քարտուղարի փոխարեն՝  
(կնքված) Էլվի Ա.Էյդի  
Քարտուղարի երկրորդ օգնական

Ներփակվածը՝ զեկուցագրի օրինակը՝ Կոստանդնուպոլսից 1916թ.  
հոկտեմբերի 31-ի թիվ 2086-ի հետ  
(փաստ. թիվ 66 և 67)

867.4016/302 3 AHP\* JWB.

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.48/302.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1. The Lower  
Euphrates, p. 136.*

Փաստաթուղթ թիվ 69

Թիվ E.452

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Թուրքիա, Բաղդադ, 10 նոյեմբերի, 1915թ.*

Առարկան՝ Բաղդադից քրիստոնյաների և հրեաների արտաքսումը

*Թուրքիա, Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյանի արտակարգ ու լիազոր դեսպան*

*Պատվարժան*

*Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ անդրադառնալ, այս հյուպատոսության. 1915թ.  
նոյեմբերի 10-ի թիվ 111 հեռագրիին, որտեղ գրված է.

«Կոստանդնուպոլիս, ամերիկյան դեսպան, 111, Ձեր ութսունյոթ  
համարը չեղյալ է. Բրիտել»:

Մեր պեսպանության համար հնարավոր չէ հեռագրով մանրա-  
մասներ կամ չափազանց պարզ տեղեկություններ ուղարկել, և ես  
հուսով էի, որ այս հեռագրով դեսպանությանը կարող եմ տեղեկաց-  
նել, որ Բաղդադից ար տաքսվում են բողոքականներն ու կաթոլիկները:

Չնայած որոշ ժամանակով այս նամակը չեմ կարող ուղարկել, ուզում եմ գրանցել անցյալ շաբաթվա իրադարձությունները, այնպես որ, գուցե, ապագայում, կիմացվի Բաղդադի իրական դրություները:

1915թ. նոյեմբերի 2-ին, երեքշաբթի օրվա երեկոյան տեղական ոստիկանությունը ձերբակալեց քաղաքի մի շարք պատվարժան բրիտանոյանների ու հրեաների: Պարզվում է, որ կազմվել է մի մեծ ցուցակ, որտեղ ընդգրկված են քաղաքի ամենահարգված տղամարդկանցից շատերի անունները, և այն հանձնվել է Սուլման Փեքի (որտեղ այժմ գտնվում է թուրքական բանակը), գլխավոր հրամանատարին, և որ նա հաստատել է այն: Չեկուցագիր կա, որ բոլոր նրանց, ում անունը ընդգրկված է ցուցակում, կասկածում են Բրիտանիայի լրտես լինելու մեջ: Ձերբակալվածների մեջ են Բրիտանիայի երկու հպատակներ Ուոլկերը և Լևակը և այս հյուպատոսության թարգմանը (տես առանձին գեկուցագրերը այս մարդկանց մասին), ինչպես նաև օսմանյան հպատակ պարոն Յախշին, որը Messrs Macandrews and Forbes ամերիկյան ընկերության ներկայացուցիչն է այստեղ: Այս չորս մարդու վերաբերյալ ես գիտեմ, որ նրանց նկատմամբ յուրաքանչյուր մեղադրանք լիովին ու բացարձակապես կեղծ է: Ինչ վերաբերվում է ձերբակալվածների մեծ մասին, ես հաստատապես համոզված եմ, որ նրանք բացարձակ անմեղ են:

Այդ մարդկանց հավաքել են Messrs. Shynch & Company բրիտանական ֆիրմայի գրասենյակում, որն այժմ օգտագործվում է որպես կենտրոնական ոստիկանություն և տարել են Սերայիի (կառավարական տան) բանտը: Ասում են, որ ձերբակալվել է յոթանասուն տղամարդ: Կառավարությանը չհաջողվեց ձերբակալել ցուցակից դուրս մի մարդու, քանի որ երբ ոստիկանները եկան, նա այնպես ցնցվեց, որ մեռած ընկավ:

Այս տղամարդիկ հարուստ ու շատ հարգված պարոններ էին, նրանց թույլ չտվեցին տեսնել որևէ մեկին, թույլատրեցին միայն դրսից ուտելիք ստանալ և գնել իրեր, որ կարող էին: Շատերը ձերբակալվելիս իրենց հետ փող չունեին և չկարողացան ոչինչ ձեռք բերել: Հավանաբար, անօգուտ է մանրամասն նկարագրել այն վիրավորանքները, որին ենթարկվեցին այս տղամարդիկ, սակայն դեսպանությունը կարող է վստահ լինել, որ դրանք ամենախիստ ու ամենաստորացուցիչն էին:

Հաջորդ օրը, չորեքշաբթի, 1915թ. նոյեմբերի 3-ին նրանց անցկացրեցին Տիգրիս գետով դեպի երկաթուղային կայարան և ուղարկեցին Սամարա. և ես կարծում եմ, Սամարայից նրանց կուղարկեն Մոսուլ, վերջնական հավաքակալանը կլինի, հավանաբար,

Գերսիմը: Գեապանությունը կկարողանա դատել այս մարդկանց վիճակի մասին, երբ իմանա. որ նրանք գրեթե ուտելիք չունեին, շատերը չունեին փող (չնայած մի քանիսր բավականին ունեին). իսկ շատերը հագել էին իրենց սովորական հագուստը, որը միջին հաստության է տարվա այս եղանակի համար, մինչդեռ Մոսուլում այժմ շատ ավելի ցուրտ է: Կառավարությունը այս տղամարդկանց համար սրամադրել է գնացք, ուրիշ ոչինչ:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ այս տղամարդկանց մեջ փաստորեն ոչ մի մահմեդական չկար:

Ինձ տեղեկացրել են, որ մահմեդականներ չեն եղել, սակայն քանի որ ես չեմ ճանաչում բոլոր տեղահանվածներին, չեմ կարող հաստատել, որ ոչ մի մահմեդական չի տեղահանվել:

Այս տղամարդկանց վիճակը անշուշտ վատ է, սակայն ես ուզում եմ դեպքերի մասին ուշադրությունը հրավիրել քաղաքում մնացած կանանց ու երեխաների վիճակին:

Որոշ տներում այժմ ոչ մի տղամարդ չի մնացել: Շատ տներում չկա ոչ մեկը, որը կերակրի տանը մնացած կանանց ու երեխաներին, և նշանները ցույց են տալիս, որ նրանք, ովքեր այստեղ են, ստիպված կլինեն վաճառել (անկասկած մեծ զոհաբերությամբ) իրենց անձնական ունեցվածքի մեծ մասը, որպեսզի ուտելիք գնեն, և այսպիսով, այս տեղահանությունները կլինեն ոչ միայն տղամարդկանց արտաքսում, այլ նաև նրանց ունեցվածքի բռնագրավում, միևնույն ժամանակ մեծ տառապանքներ կբերի կանանց ու երեխաներին: Պետք է պարզորոշ հիշել, որ ոչ մի դեպքում չապացուցվեց, որ այս տղամարդկանցից մեկն ումեկը մեղավոր է որևէ հանցանքում: Մի՞թե զարմանալի է, որ շատերն այս գործողությունը համարում են կրոնական հետապնդում:

Ինձ հաղորդել են, որ և Ավստրիայի և Գերմանիայի հյուպատոսները օգտագործել են իրենց բարի ծառայությունները այս տղամարդկանց տեղահանությունը թույլ չտալու համար, սակայն առանց որևէ արդյունքի:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,  
Ձեր խոնարհ ծառան  
(առանց ստորագրության)  
Ամերիկյան հյուպատոս

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/350.*  
2. *"United States Official Documents on the Armenian Genocide".*  
*Compiled and introduced by Ara Sarafian, Volume 1, The Lower*  
*Euphrates, pp. 137-139.*

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Սիրիա, Հայեպ, այժմ Վաշինգտոն,  
4 մայրիս, 1918թ.

Առարկան՝ Ձեկուցագիր «Հայկական արհավիրքներ» վերնագրով

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ներիակելու պրն. Քարրի խնդրանքով պատրաստված և ներկայացված «Հայերի արհավիրքները» թեմայով զեկուցագիրը երկու օրինակից: Գլուղը որևէ անձնական պատճառ չունի, որպեսզի սրա բովանդակությունը չհրապարակվի, սակայն ի նկատի ունենալով, որ մնացած դժբախտ հայերն ու այլ քրիստոնյաներ, որոնք այժմ քիչ թե շատ հանգիստ ապրում են թուրքական իշխանության ներքո, անկասկած կենթարկվեն հետագա դաժան վերաբերմունքի, եթե թուրքերի և գերմանացիների ուշադրությունը հրավիրվի սրա վրա. ապա ավելի լավ կլինի, եթե հեղինակավոր աղբյուրների կողմից դրանց հրապարակումը նախևառաջ լուրջ ծանրութեթև արվի:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջ.Բ. Ջեքսոն,

հյուպատոս, նախկինում Սիրիայի Հալեպում:

Ներիակվածը՝ 1) զեկուցագիր երկու օրինակից

(տեսեք հաջորդ էջերը)

Առարկան՝ Հայերի արհավիրքները

Ջ. Բ. Ջեքսոնից (ստորագրված)

հյուպատոս, նախկինում

Սիրիայի Հալեպում. այժմ Վաշինգտոնում

4 մայրիս, 1918թ.

1915թ. փետրվարին էր, որ թուրքական կառավարությունը որոշեց զինաթափել Ջեյթունի հայերին, մի քաղաք, որը Հալեպից հյուսիս հինգ օրվա վրա է, և մի գործողություն, որը իրապես կարելի է

համարել սկիզբ հետագա և ավելի սարսափելի իրադարձությունների համար, որում հայ ազգը եղավ գլխավոր տուժողը: Մեծ դժկամությամբ նրանք ստիպված ենթարկվեցին զինաթափման հրամանին. քանի որ շատ լավ գիտեին, որ թուրքերի կողմից ձեռք առնվող այսպիսի նախազգուշական միջոցառումներին անշուշտ կիետևեն հիմնականում հայերից կազմված բնակչության բարեկեցությանը վնասող գործողություններ: Ձինաթափում եղավ նաև Այնթապում, Ալեքսանդրետտայում, Մարաշում, Ուրֆայում, Բիրեջիկում և այլ ավելի փոքր քաղաքներում ու գյուղերում:

Քանի որ վախ կար, որ կլինի անցյալի կոտորածների նման, երբ թուրքերը հարձակվում էին ուղղակիորեն հայերի տների վրա. և քանի դեռ հուզմունքը հասել էր գագաթնակետին, Մարաշի գերմանացի միսիոներները համոզոցին պլն. Վոլտեր Ռոսլերին Հալեպում Գերմանիայի հյուպատոսին, գնալ Մարաշ, որտեղ նա մնաց մի քանի օր՝ իշխանությունների հետ վարելով ոչ պաշտոնական բանակցություններ: Թե ինչպիսի դիրք ընդունեց հյուպատոս Ռոսլերն այս կապակցությամբ, չիմացվեց, չնայած նա փորձեց օգտագործել իր ազդեցությունը արյունահեղություն թույլ չտալու համար: Այնուամենայնիվ փաստ է, որ անմիջապես դրանից հետո սկսեցին տեղահանության փորձերը, որոնք վերջապես մասամբ հաջողվեցին այդ շրջանում, և ավելի մեծ հաջողություն ունեցան վաաստորեն ամբողջ կայսրությունում: Սա տեղի ունեցավ անմիջապես Գերմանիայի կողմից Հյուսիսային Ֆրանսիան գրավելուց հետո. երբ տեղահանվեցին 60000, գուցե ավելի ֆրանսիացիներ՝ մեծ մասամբ ծերունիներ. կանայք ու երեխաներ: Այն դժվարությունները, որին ենթարկվեցին այս դժբախտ մարդիկ, երբ նրանց վերադարձնում էին Ֆրանսիա Շվեյցարիայի միջով, պատմության խնդիրն է: Ինչպես գրողը, այնպես էլ շատերը կասկածում են, որ գերմանացիների այս փորձը կամ առաջարկվեց թուրքերին ծրագրի հեղինակների կողմից, կամ կրկնօրինակվեց թուրքական կառավարության կողմից, և միջոց համարվեց հայերին մեկընդմիջտ վերջ տալու համար, մի գործողություն. որին գերմանացիները նայեցին մատների արանքով:

Հալեպ վերադառնալուց մի քանի ամիս անց և այն քանից հետո, երբ ամերիկյան ու եվրոպական թերթերը հրապարակեցին հոդվածներ, որոնցում ամերիկյան միսիոներներն ու այլ մարդիկ մեղադրում էին հյուպատոս Ռոսլերին այս ստոր գործողությունում թուրքերին քաջալերելու մեջ, նա եկավ Հալեպի ամերիկյան հյուպատոսություն և խնդրեց ինձ կազմել գրավոր հայտարարություն այն մասին. որ Մարաշում գտնվելիս նա արել է ինչ կարողացել է, որպեսզի թույլ

չտա թուրքական իշխանությունների կողմից հայերի ճնշումը: Երբ ես հրաժարվեցի և հստակորեն նրան ասացի, որ կարծում եմ, որ գերմանացիները եթե ոչ ուղղակիորեն, ապա անուղղակիորեն, պատասխանատու են այս դեպքում իրենց դաշնակիցների՝ թուրքերի գործողությունների համար, նա շատ բարկացավ, և ինձ ցույց տվեց Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության հաղորդումը, որում կարգադրել էին ինձնից հայտարարություն ստանալ, որն իրենից կհաներ վերը նշված բոլոր մեղադրանքները, նրան ասվում էր նաև, որ Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպանությունը համաձայն է, որ ես տամ այսպիսի հայտարարություն: Ես շարունակեցի հրաժարվել, և նա վստահորեն հեռացավ: Ես անմիջապես հեռագրեցի մեր դեսպանությանը, և ինձ տեղեկացրեցին, որ իսկապես գերմանական դեսպանությունը այսպիսի խնդրանքով դիմել էր ամերիկյան դեսպանին, սակայն դեսպան Մորգենթաուն հրաժարվել էր համաձայնվել դրա հետ: Դեսպանությունը ինձ այդ մասին նախօրոք ցուցումներ էր ուղարկել, սակայն դրանք դեռ չէին ստացվել:

1915թ. փետրվարից սկսած Կոստանդնուպոլսի թուրքական բարձր իշխանությունները բազմաթիվ փորձեր արեցին վերը բվարկված քաղաքներից, ինչպես նաև Հալեպից քրիստոնյա բնակչության տեղահանման ուղղությամբ, բայց քանի որ Ջեյալ բեյը՝ Հալեպի գեներալ մահանգապետը տարիներ շարունակ եղել և մնում էր շատ բարեկամական հայերի հետ, և որովհետև տեղում նա ուներ հսկայական ազդեցություն, նա սկզբում անտեսեց ստացած ցուցումները, որը կրկնվեց մի քանի անգամ, իսկ վերջում կտրակնանապես հրաժարվեց լինել այդպիսի դաժան գործողությունների գործիք: Բնակամաքար, սա կարող էր ունենալ միայն մի հետևանք, և այդ եղավ գեներալ մահանգապետի պաշտոնից նրա հեռացումը, իսկ նրա փոխարեն 1915թ. հուլիսին նշանակվեց Բակիր Սամի Բեյը, որը մինչ այդ Սիրիայի Բեյրութի գեներալ մահանգապետն էր:

Նոր մահանգապետը նույնքան պատիվ էր հայերի տեղահանության գործում, որքան նրա նախորդը, և այդ ու այլ պատճառներով նրան երկու ամսից ետ կանչեցին, և նրա փոխարեն նշանակվեց Մուստաֆա Արքուլիպակ Բեյը՝ այն ժամանակ ներքին գործերի նախարար Թալեաթ Փաշայի ազգականն ու պրոտեժե:

Այս ամբողջ ժամանակի ընթացքում հաճախակի ընդմիջումներով Կոստանդնուպոլսից հրամաններ են ստացվել սկզբում նշված բոլոր քաղաքներից, ներառյալ Հալեպը, ոչ միայն ուղղափառ, այլև կաթոլիկ և բողոքական հայերի տեղահանման մասին: Յուրաքանչյուր մի քանի օրը մեկ Հալեպում այսպիսի հրաման էր ստացվում և

տարբեր կառավարական պաշտոնյաների հետ, որոնցից շատերը քրիստոնյաներ էին, երկար ծանոթության միջոցով, հյուպատոսությունը միշտ էլ գաղտնի կերպով անմիջապես տեղյակ էր պահվում, որ եթե որևէ շարժում սկսվի, փոխհատուցվի նույնով: Յուրաքանչյուր դեպքում դեսպանությունը նույնպես անմիջապես տեղյակ էր պահվում, և Կոստանդնուպոլսի կենտրոնական իշխանությունների վրա ճնշում էր գործադրվում, որպեսզի ուղարկվեն հակառակ հրամանները: Այս հակառակ հրամանները գործում էին կարճ ժամանակով մինչև նախորդ հրամանների կրկնությունը նահանգային իշխանությունների համար, և նույն գործողությունը իրականացվում էր հյուպատոսության կողմից դեսպանությանը:

Այս պայմանավորված գործողությունը ակզբում հայ կաթոլիկներին, իսկ հետո հայ բողոքականներին ազատեց հրամանից, այն ազդեց միայն հայ ուղղափառների վրա: Վերջապես, 1915թ. օգոստոսին թուրքերն այլևս չստեցին մեր խնդրանքները, և բացի Հալեպից, բոլոր մյուս քաղաքներից սկսեցին արտաքսել հայ ուղղափառներին, և այս անելու ժամանակ նրանք փորձեցին ներգրավել նաև բողոքականներին և կաթոլիկներին, սակայն քանի որ անընդհատ պայքարի մեջ էինք նրանց հետ, վերջապես նրանք հրաժարվեցին տեղահանություններից այն բանից հետո, երբ նրանք բոլոր քաղաքներն ու գյուղերը մաքրել էին հայերից և տարել էին նրանց մեծ մասին, բացի Այնթապից ու Մարաշից: Հալեպի հայերին չանհանգստացրեցին, բայց վեց կամ յոթ ընտանիքներ արտաքսվեցին:

Հաշվված է, որ Այթապում սկզբում եղել է 24000, Մարաշում՝ 35000, Ռուֆայում՝ 14000, Ալեքսանդրետոտայում՝ 2000, և Բիրեջիկում 1200 հայ: Սրանցից մոտավորապես 12000-ը մնացին Այնթապում, և 14000-ը՝ Մարաշում, մնացածը ուղարկվեցին Միջագետքի անապատները, բացի 5000-ից, որոնք կաշառելով ուղեկցող ժանդարմներին, կարողացան փախչել ու գնալ Հալեպ:

Հալեպ քաղաքում ի սկզբանե կար 22000 հայ, որոնք սարսափի մեջ էին, որ կարող են ընդգրկվել տեղահանությունների մեջ: Ոչ միայն հայերն էին վտանգի մեջ, այլ վախ կար և արդարացի պատճառով, որ եթե Հալեպի հայերը արտաքսվեին, ապա քաղաքի մնացած քրիստոնյաները՝ թվով 20000 մարդ, նույնպես կենթարկվեն նրան ճակատագրի: Որպես հետևանք, Հալեպի քրիստոնյաներից ամենաազդեցիկները անընդհատ աղերսում էին ինձ ջանքեր գործադրել, թույլ չտալու համար Հալեպից որևէ մեկի տեղահանումը: Կարելի է պարզ տեսնել, որ իմ դրությունը շատ դժվարին էր, քանի որ իմ իրավասությունների մեջ պաշտոնապես չէր մտնում նրանց այնպիսի

ծառայություններ մատուցել, ինչպիսին իրենք ուզում էին կամ ինչպես պահանջում էր առիթը, և այդ պետք էր անել այդ ամենայն զգուշությամբ ու հնարամտությամբ, որպեսզի ինձ վրա կամ, հատկապես, իմ գործընկերների վրա, որոնց մեծ մասը օսմանյան հպատակներ էին, չհրավիրեին թուրքական իշխանությունների դժգոհությունը, և քանի որ ես նահանգում ապրել էի տաս տարուց ավելի և կամ մոտիկից էր ծանոթ կամ գոնե զրուցում էր նրանց հետ, հնարավոր էր, որ այդպես լինեի: Անձնական ընկերությունը, որ կար նախկին գեներալ նահանգապետի և իմ միջև, և ամենամոտ և ընկերական հարաբերությունները նրա կնոջ ու դուստրերի և տիկին Ջեքսոնի միջև, այդ գործին շատ էին նպաստել: Մի քանի տարիների ընթացքում, որ Ջեյալ Բեյր Հալեայի նահանգապետն էր ամեն շաբաթ ճաշերի կազմակերպումը, ընդունելությունները, և քարտային միջոցառումները ամրացրել էին մեր ընկերությունը և նրանք դարձել էր գրեթե եղբայրական, և դրա մասին գիտեր ողջ նահանգը, ինչպես նաև Սիրիան:

Այնքան էլ հեշտ չէր, սակայն, խոչընդոտել թուրքերի վերջնական նպատակին, և փաստորեն, գրեթե անհնարին էր դարձել պաշտպանել այս դժբախտ մարդկանցից որևէ մեկին իր տանը, և այն ապացուցվեց հետագայում, երբ իշխանությունները բռնեցին շատ ինքնավստահ վարք և սկսեցին նրանց հավաքել քաղաքներից դուրս և արտաքսել նրանց մի քանի հարյուրից կամ մի քանի հազարից կազմըված խմբերով: Այս կայր՝ ժամանակահատվածում անընդհատ հաղորդագրություններ էին ուղարկվում դեսպանությանը, և երբ քաղաքները լիովին հայաթափվել էին, պարզվում է, որ հրաման է ստացվել դադարեցնելու տեղահանությունը:

Այդ ընթացքում սկսեցին լուրեր ստացվել այն սարսափելի արհավիրքների մասին, որոնք տեղի էին ունենում Սվազից, Երզնկայից, Խարբերդից, Տրապիզոնից, Սամսունից, Էրզրումից, Մուշից, Բիթլիսից, Դիարբեքիից, Թալասից, Կոնիայից, Անգորայից, Բոսսայից, Ադանայից, Սերսինից, Հաճընից և Թուրքիայի ներքին շրջաններում ու հյուսիսում գտնվող ավելի քիչ բնակչություն ու կարևորություն ունեցող քաղաքներից ու գյուղերից բրիտանացիների տեղահանությունների հետ կապված: Ժամանակ առ ժամանակ այդ վայրերից արտաքսված փոքրաքանակ խմբերը հոգեցուցնում ամրամասներ էին պատմում այնտեղ ընտանիքներից հասուն տղամարդկանց անջատման, կամ իրենց ազգականների ու ընկերների աչքի առաջ նրանց սպանությունների մասին, ճանապարհին գաղթականների կողոպուտների, սովահար կանանց ու երեխաների սնստահման տառապանքների ու մահվան դեպքերի, երիտասարդ աղջիկների ու ա-

վելի հրապուրիչ կանանց նկատմամբ ուղեկցող ժանդարմների անհավատալի դաժանությունների, գեղեցիկ աղջիկներին. կանանց ու երեխաներին քրդերի և թուրքերի կողմից տանելու, և ճանապարհին նրանց բոլորի դեմ կատարվող անհամար այլ դաժանությունների մասին.

Կարծես թուրքերի խնդիրը կանանց ու երեխաներին, ինչպես մահ տղամարդկանց, ամենասարսափելի տառապանքներ պատճառելն էր: Ի հավելումն այն բանի, որ ամեն առիթով նրանց թույլ չէին տալիս հագեցնել ծարավն ու սովը, ուղեկցող ժանդարմները դիմում էին ամենատանջալից միջոցներին՝ իրենց զոհերին խոշտանգելու գործում: Մի ցնցող օրինակ կարելի է բերել ներկայացնելու համար այս փաստը:

1915թ. հուլիսի վերջին, երբ ջերմաչափը գրանցում էր 105-ից 115 աստիճան, այն ժամանակ, երբ Խարբերդի ավելի քան 1000 կանանց ու երեխաների խմբին ուղեկցում էին դեպի հարավ, Վերեն Չիհերի մոտ, Դիարբեքիից արևելք, նրանց հանձնեցին վայրի քրդերի մի ավազակախմբի ձեռքը, որոնք ձիերով անցնելով նրանց միջով, ընտրեցին ամենաբարեստ կանանց, աղջիկներին ու երեխաներին: Վախենալով իրենց ճակատագրից այսպիսի դաժան տականքների ձեռքը ընկնելու դեպքում՝ կանայք որքան կարող էին դիմադրեցին. դրանով ավելի կատաղեցնելով քրդերին, որոնք սպանեցին իրենց ընտրած զոհերից շատերին: Նախքան իրենց ընտրածներին ու ենթարկվածներին առևանգելը, նրանք մերկացրեցին մնացած կանանց՝ ստիպելով նրանց շարունակել իրենց ուղևորությունը մերկ վիճակում: Այս անարգանքի սկանառեսներից մեկն ինձ ասել է, որ ավելի քան 300 կանայք, ամբողջովին մերկ, նրանց մազերը ցաք ու ցրիվ վայրի կենդանիների պես, եկան Ռաս-էլ-էյն, որտեղ այդ ժամանակ վերջանում էր Բաղդադի գերմանական երկաթուղու ամենաարևելյան կայարանը, վեց օր ոտքով կիզիչ արևի տակ ճանապարհ կտրելուց հետո: Նրանց մեծ մասը մի քանի օր հետո եկավ Հալեպ. իսկ նրանցից մի քանիսը անձամբ եկան հյուպատոսություն և ինձ ցույց տվեցին իրենց մարմինները, որոնք այրվել և ստացել էին կանաչ ձիթապլուղի գույն, մաշկը պլոկվում էր մեծ շերտերով, իսկ նրանցից շատերը իրենց գլուխներին ու մարմիններին ունեին խորը վերքեր, որոնք արդյունք էին քրդերի հասցրած սարսափելի ծեծ ու ջարդի:

Հալեպում տեսնված ամենաահալոր տեսարաններից էր 1915թ. օգոստոսի սկզբին այստեղ մոտավորապես 5000 ահալոր կերպով հյուծված, կեղտոտ. ցնցոտիավոր և հիվանդ կանանց ու երեխաների

ժամանումը, 3000-ը եկավ մի օր, 2000-ը՝ հաջորդ օրը: Սըրանք վերապրածներն էին Սվազի նահանգի բարեկեցիկ հայ բնակիչներից, որոնք սկզբում մանրակրկիտ հաշվարկումներով 300000 հոգի էին: Իսկ ի՞նչ էր պատահել մնացածի հետ: Նրանցից ամենագրագետներից, որոնք հրաշքով հասել էին Հալեպ, իմացանք, որ վաղ գարնանը տղամարդկանց ու 14 տարեկանից բարձր տղաներին մի քանի շաբաթվա մեջ կանչել էին այդ նահանգի ոստիկանները և միմյանց հետ պարաններով կապկպված 1000-ից 2000 մարդուց բաղկացած խմբերով նրանց արտաքսել էին, և նրանցից այլևս ոչ մի լուր չէր եկել: Նրանց ճակատագրի մասին պատմել են մեկից ավելի ականատեսներ, այնպես, որ կարիք չկա դրանց անդրադառնալ այստեղ:

Այս փրկվածները պատմում էին այն ամենահոգեցունց տառապանքների մասին, որը կրել էին ճանապարհին, դուրս գալով իրենց տներից Ջառկից առաջ, ոտքով կտրել անցել էին հավանաբար հազար մղոնանոց մի ճանապարհ և Հալեպ էին հասել օգոստոսին, մոտավորապես չորս ամիս անց, առանց սննդի, նույնիսկ դաժան ժանդարմները մերժել էին նրանց ջուրը, երբ նրանք մոտենում էին ճանապարհին եղած ջրհորներին կամ աղբյուրներին, հազարավոր ամենագեղեցիկ կանայք ու աղջիկներ առևանգվել էին բուրբական ցեղերի կողմից, որոնք ամեն օր շրջում էին իրենց մեջ և տանում նրանց մահձեղական հայրեմների համար. նախօրոք գաղթականներից կողոպտում էին փողր, զարդերը և նույնիսկ հագուստի մեծ մասը, այնպես որ. նրանք տեղ էին հասնում գրեթե մերկ ու ծայրահեղ կարիքի մեջ: Նրանց մուտքը Հալեպ պատճառ դարձավ այդ տարվա աշնանը բժավոք սիֆի սարսափելի համաճարակի համար, որը սարսափելիորեն արագ տարածվեց տեղական բնակչության բոլոր դասակարգերի մեջ՝ հարուստ ու աղքատ, ու խլեց հազարավորների կյանքը, որոնցից հարյուրավորները քաղաքի լավագույն մարդկանցից էին: Այդ պատիժը տարածվեց ոչ միայն քաղաքում, շուտով այն անցավ ամբողջ երկրով՝ դատարկելով քաղաքներ ու գյուղեր երկրի ներքին շրջաններում, և իհարկե մեծ վնաս պատճառելով բանակին: Մեռնողների թիվը քաղաքում այնքան մեծ էր, որ սանիտարական իշխանությունները չէին կարողանում գլուխ հանել իրավիճակից և ռազմական իշխանությունները տրամադրեցին սայլեր, որոնց մեջ նետում էին 10-ից 12 դիակ՝ յուրաքանչյուր սայլի մեջ, և դեպի մոտակա գերեզմանատուն էին գնում 7 կամ 8 սայլեր իրենց ահավոր սարսափագոյու դիակների բեռով՝ մեծ մասամբ մերկ, գլուխները, ոտքերն ու թևերը դուրս կախված բաց սայլերի կողքերից: Գերեզմանո-

ցում սայլերը կանգնեցնում էին նախօրոք պատրաստված երկար փոսերի մոտ, փոսի մեջ իրար վրա էին նետում դիակներն առանց ծածկելու կամ թաղման արարողության. և հող էին լցնում իրենց գոհերի վրա: Սա ամիսներ շարունակ ամենօրյա տեսարան էր, այդ երբը ամեն օր անցնում էր հյուպատոսության մոտով: Մեր ամենամտա ընկերներից մի քանիսը, և մեր հյուպատոսության աշխատակիցներից երեքը մահացան տիֆից, և ամեն օր շփվելով հարյուրավոր մարդկանց հետ, որոնք փաստորեն տառապում էին այդ հիվանդությամբ՝ պարզապես հրաշք էր, որ գրողը ելբեք չվարակվեց:

Տեղ հասնող գաղթականներին հիմնականում հավաքում էին Կարլոխում, մի փոքրիկ գյուղ քաղաքի հյուսիսում, կամ ճամբարում, որը տեղավորված էր երկաթուղու գծերի մոտ քաղաքի հարավ-արևմուտքյան մասում: Գրողը շաբաթը մեկ կամ երկու անգամ այցելում էր յուրաքանչյուր վայրը և մշտապես գումար կամ հաց էր բաժանում կարիքավորներին: Երկրորդ ճամբարի մարդկանց մի մասին իշխանությունները վրաններ էին տրամադրել, սակայն քանի որ մարդկանց թիվը սովորաբար անցնում էր 2000-ից կամ 3000-ից, իսկ վրանները բավարարում էին միայն 500-ից ոչ ավելի մարդկանց, մեծամասնությունը ստիպված էր մնալ կիզիչ արևի տակ, իսկ հետագայում՝ անձրևի ու ձյան տակ, Կարլոխում փաստորեն ոչ մի ծածկ չկար, այնպես որ իրենց թուլացած վիճակից զոհերի թիվն ամեն օր ավելանում էր, հարյուրավորները մահանում էին հիվանդություններից ու հյուծվածությունից:

Ճամբարներից գրեթե ամեն օր ժանդարմները մի քանի հարյուր մարդու տանում ու քշում էին անապատների ուղղությամբ, Հալեպից դեպի Մեսկենն ճանապարհով Համամ, Ռաքքա, Սեբհա, Աբու-Հարաբի, և վերջապես Գեյր-էլ-Չոր և շրջակա գյուղերը, մոտավորապես Հալեպի ու Բաղդադի միջև, Եփրատ գետի վրա, այնտեղ, որտեղ օգնություն չի կարելի հասցնել: Մեսկենեում մահացել են այնպիսի քանակով, որ իմ աշխատողներից մեկը, որին 1916թ. ուշ աշնանը ուղարկել էինք տառապյալներին օգնություն բաժանելու համար. ասաց, որ տեսել է, 150 երկար գերեզմանաքմբեր, որտեղ մեռածներին թաղել էին փոսերում (զոհերն իրենք էին փորել)՝ 100-ից 300 մարմին մի փոսում: Նա հայտնեց նաև, որ նման վկայություն գոյություն ունի նաև վերը նշված քաղաքներում, իսկ Ռաքքայում՝ մի հնագույն բսողաքում, որտեղ հնեագետները առաջ պնդումներ էին կատարում անալիկ խնցեղեն ու սպակյա իրեր հայտնաբերելու համար. անծածկ շինությունների հին պատերը պարունակում էին հազարավոր մարդկանց ոսկորներ, որոնք սողալով ներս էին մտել. մեկը մյուսի

վրա պառկել, սովահարությունից ու հիվանդությունից մեռնելու համար: Նա ասաց նաև, որ Հալեպի և Դեյր-էլ-Չորի ու Հալեպի և Ուրֆայի ճանապարհներին տեսել է ցաքուցրիվ ընկած կմախքներ, որոնց երբևէ չէին էլ փորձել քաղել:

Խստորեն ասված՝ կոտորածները, որ այս անհանգիստ ժամանակներում տեղի են ունեցել Հալեպի շրջակայքում, իրականացվել են Ուրֆայում, մի քաղաք, որը ի սկզբանե ուներ ութ հազար բնակիչ, գտնվում է Հալեպից հյուսիս-արևելք, կառքով չորս ու կես օրվա ճանապարհի վրա, Դեյր-էլ-Չորում՝ Եփրատ գետով Հալեպից 27 օրվա ճանապարհի վրա և Ռ-աս-էլ-Էյնում: Հետևյալ վիաստերը հայտնել են ինձ ելյուպացի ականատեսները:

1915թ. օգոստոսին թուրքերը որոշեցին, որ Ուրֆայի հայերը, թվով 14000 մարդ, պետք է հեռանան քաղաքից և ուղևորվեն անապատները: Հայերն, իմանալով տարբեր տեղերից տեղահանված իրենց հայրենակիցների ճակատագիրը, հրաժարվեցին հեռանալ և բարիկաղներ կառուցեցին Հայկական թաղամասում, որն առանձին էր քաղաքի մնացած մասից: Նրանք ունեին զենք ու զինամթերքի մեծ պաշար, և քանի որ Ուրֆայի բնակչության մնացած մասը կազմում էին քրդերը, հավանաբար Թուրքիայի ամենադաժան ու արևախումռասան, իշխանությունները հրահրեցին նրանց հարձակվել հայերի վրա: Այդ նրանք արեցին ուզենալով, հարուստ ավարի սպասումով, և հայերին վտարելու առաջին հարձակման ժամանակ կորցնելով մոտավորապես 800 մարդու, իսկ երկրորդ հարձակման ժամանակ ավելի քան 1200՝ նրանք հրաժարվեցին դրանից, իսկ զինվորական իշխանությունները դիմեցին Հալեպին, պահանջելով հրետանի՝ թաղամասը ոմբակոծելու համար: Հրամանատարը կոմս ֆոն Վոլֆսգելն էր, մի գերմանացի, որին ես անձամբ ճանաչում եմ, և որը կցված էր թուրքական բանակին, և որի ցուցումներով էլ հայերը բառացիորեն դուրս շարվեցին իրենց տներից: Ամերիկյան միսիսան գտնվում էր ոմբակոծվող շրջանի մեջ և բավականին վնասներ կրեց: Պատվ. Ֆրենսիս Հ.Լեսլին. մի ամերիկացի, որը միսիսայի պատասխանատու էր, և որին հայերը ձերբակալել ու պահում էին որպես պատանդ, որպեսզի ազդեն թուրքերի վրա՝ չոմբակոծելու համար, այնքան էր ազդվել սարսավելի լարվածությունից, որում ապրել էր ամիսներ շարունակ, և այն սարսավիազուր տեսարաններից, որոնց ականատես էր եղել այդ ընթացքում, որ խելահան եղավ, խելագարվեց և հետագայում ինքնասպան եղավ: Նրա այրին ու երեխան մեզ հետ հեռացան Թուրքիայից անցյալ հուլիսին:

Այն բանից հետո, երբ հայերը հանձնվեցին այն պայմանով, որ իրենց թույլ կտան հեռանալ քաղաքից, թուրքական իշխանությունները հավատարիմ թուրքական ուժին, հրապարակայնորեն կախեցին 42 առաջնորդներին, իսկ ավելի քան 300 տղամարդու՝ սվիններով զինված թուրք զինվորների ուղեկցությամբ, տարան 600 ոտնաչափ բարձրություն ունեցող ժայռի վրա, որի գագաթից նրանց սվիններով հրեցին, նրանք ընկան ցած և մեռան: Մարտավեղի վարմունքից անդուռ ընկած, դեռևս ապրող ողջ մնացողների գուխները ջարդուփշուր արեցին հսկայական քարերով: Նրանց մեջ կային նաև կանայք, որոնք տղամարդու հագուստ էին հագել և օգնում էին իրենց տների պաշտպանության ժամանակ:

Հաջորդ օրը, մոտավորապես երեկոյան 7-ին, կարելի էր տեսնել 3000 մարդուց բաղկացած մի երկար շարք, որը 14000-ից մնացած կանայք ու երեխաներն էին, որ հեռանում էր քաղաքից երկու շարքով՝ ժանդարմների ուղեկցությամբ ուղևորվելով դեպի հարավ: Կարևոր է նշել, որ հետագայում նրանցից ոչ մեկից ոչ մի լուր չըստացվեց. չնայած ես մի վստահելի մահմեդականի հինգ շաբաթվա ուղևորության ուղարկեցի դեպի երկրի ներքին շրջանները, որտեղ նրանք անհետացել էին, ուշադիր փնտրելու փրկվածներից որևէ մեկին. և ես անձամբ եմ հետաքրքրվել այդ մասին: Անկասկած, նրանք ենթարկվել են իրենց համաքաղաքացիների ճակատագրին, երբ քաղաքից եղել են բավականին հեռու, իսկ նրանց ոսկորներն ընկած էին արևի տակ՝ Սիջագետքի հսկայական անապատի ավազներում:

Հայերի խմբերը ամեն օր վերատեղահանվում են Հալեպի մոտ գտնվող մամբարներից, և ինչպես բազմահազարները, որոնց ուղարկել են ներքին շրջաններից, վերջապես 60000 մարդ հավաքվեց Դեյր-էլ-Չորում, որտեղ, մոտավորապես մեկ տարի նրանց խնամում էր Ալի Սուաթ Բեյը՝ տեղի նահանգապետը, իր ձեռքի տակ եղած միջոցների համեմատ հնարավորին չափ լավ: Այդ մարդը բարձրակարգ պարոն էր, որը կյանքի տասնհինգ տարին անցկացրել էր Եգիպտոսում, խոսում էր անգլերեն և ֆրանսերեն և նրան Հալեպում բարձր էին գնահատում այն բոլոր տներում, ուր նա հաճախ այցելում էր մեր քաղաք կատարած իր բազմաթիվ այցելությունների ժամանակ: Նա հայերին ցրել էր ֆերմաներում, կառուցել էր տներ նրանց համար, տրամադրել էր ուտելիք, հագուստ ու բժշկական օգնություն, և ամեն կերպ նրանց հետ վերաբերվել էր մեծ ուշադրությամբ: Միանգամայն ակնհայտ է, որ թուրքական իշխանություն-

ները հրամայել էին նրան այլ կերպ վերաբերվել հայերին, իսկ նա անտեսության էր մատնել այդ ցուցումները, քանի որ 1916թ. հունիսին նրան նշանակեցին Բաղդադի նահանգապետ, իսկ մի ուրիշը՝ Չեկի Բեյը, նշանակվեց Դեյր-էլ-Չորի նահանգապետ: Ամենայն վստահությամբ գիտեմ, որ վերջինս, Կոստանդուպոլսից հեռանալիս հայտարարել է, որ ոչ մի օգուտ չկա ասելու իրեն, որ բարեհոգությամբ վերաբերվի որևէ հայի նկատմամբ. կամ իրեն թույլտվություն տալու նրանց Դեյր-էլ-Չորից տեղահանելու, կամ էլ նրանցից որևէ մեկին ուշադրությամբ վերաբերվելու մասին: Հենց նոր էր նա ստանձնել իր պաշտոնը հաջորդ օգոստոսի սկիզբներին, երբ հայերին տեղեկացրեցին, որ պետք է պատրաստվեն հեռանալու քաղաքից, նաև Այնթապից, Մարաշից, Անգորայից և այլ քաղաքներից, պայմանավորված օրերին: Նրանց ասացին, որ կողեկցվեն դեպի որոշակի գյուղեր, որոնք գտնվում են Խաբուր գետի վրա, որը թափվում է Եփրատը, Դեյր-էլ-Չորից ներքև, և նրանց արտաքսեցին զինված ժանդարմների ուղեկցությամբ: Մյ քանիսը հասան Խաբուր գետի վրա գտնվող փոքր գյուղերը, սակայն մեծ մասին տարան Դեյր-էլ-Չորից մի քանի ժամվա հեռավորության վրա, որտեղ նրանց դիմավորեցին թուրք, չերքեզ ու բուրդ նախկին դատապարտյալները, որոնց ազատել էին բանտերից և այդ նպատակով բերել էին այդտեղ: Տեղի ունեցավ ամենասարսափելի ջարդը, որ կարելի է պատկերացնել, և որի վիաստացի դեպքերը պատմեցին ինձ մի քանի փրկվածներ, որոնք հրաշքով փախել էին, և որոնց ապաստան էին տվել բարեկամ արաբները, և հետո նրանք մեծ դժվարություններով վերադարձել էին Հալեպ: Սպանելուց առաջ ուշադիր զննել են յուրաքանչյուր մարդու, նրանցից խլել են փողը կամ արժեքավոր որևէ իր նահանգապետի հրամանի համաձայն, որն էլ անձամբ ստանձնել էր թալանի պատասխանատվությունը: Սպանությունները կատարողներին թույլատրվել է օգտագործել դիակների վրայի հագուստները ու եղամ իրերը, և հագուստի շատ մասեր հետագայում տեսել են Դեյր-էլ-Չորում այդ ավազակների կամ դրանք գնողների հագին: Բացի մոտ հարյուր մարդուց, որ փախել էին և 250 երեխաներից, որոնք մնացել ու շների նման վազվզում էին Դեյր-էլ-Չորի փողոցներում, բոլոր 60000 հայերը մի շաբաթում բնաջնջվեցին: Նրանցից շատերը պատվավոր գործարարներ էին, որոնց հետ երկար տարիներ գործարքներ ունեին Հալեպի և Ալեքսանդրետտայի կյուպատոսությունները, նրանց մեջ կային բազմաթիվ բժիշկներ, իրավաբաններ,

քուլջների ու դպրոցների ուսուցիչներ, կային նաև բազմաթիվ բողոքական առաջնորդներ, կաթոլիկ քահանաներ և մեկ կամ երկու կաթոլիկ եպիսկոպոս, բացի դրանից հազարավոր առևտրականներ ու արհեստավորներ, այն լավագույնները, որոնցով Թուրքիան կարող էր պարծենալ: Դրանից հետո Դեյր-էլ-Չորից այլևս հետագա կողոպուտների մասին ոչ մի լուր չստացվեց, հավանաբար թուրքերն այդ ժամանակ բավարարվել էին իրենց կոտորածի չափերից:

Հալեպում սովորական երևույթ էր այն լուրերի տարածվելը, որ 1915 և 1916 թվականներին բազմաթիվ հայերի կոտորածներ էին տեղի ունենում Բաղդադի գերմանական երկաթուղու կայարան Ռաս-էլ-Էյնում, որը 200 մղոն արևելք է Հալեպից և մոտավորապես 180 մղոն Եփրատ գետից դեպի արևելք, և դեպի ուր ուղարկվել էին տեղահանված մարդկանց խմբերից շատերը: Այդ շրջանում թուրքերի արյան ծարավի զոհերի թիվը մանրամասն հաշվարկով 300000-ից ավելին է. ցնցող մի թիվ, որը, սակայն իմացողներն ասում են, ու բավականին համեստ է: Եվ սրանք կանայք ու երեխաներ էին, քանի որ քիչ տղամարդիկ ուղարկվեցին այդ ուղղությամբ, և հասան մինչև վերջ:

Հալեպ եկած բնակչությունից օգնություն խնդրող սովածների, հիվանդների ու մահացողների թիվն այնքան արագորեն էր աճում հենց սկզբից, որ տեղի ռեսուրսները շուտով ավարտվեցին, և հյուպատոսությունը դեսպանությանը դիմեց այն խնդրանքով, որպեսզի Միացյալ Նահանգներից կամ այլ վայրերից միջոցներ ձեռք բերվեն՝ տառապյալներին օգնություն ցույց տալու համար: Այս խնդրանքն անմիջապես ընդունվեց որպես հրատապ, և շուտով հյուպատոսությունը Մեքքա դարձավ տեղահանված հայերի համար, որոնք բավականին բախտավոր էին, եթե բավարար ուժ ունեին դրանք այնտեղից տանելու համար:

Շատերը, ովքեր արժեքավոր իրեր, տնային իրեր կամ գումար էին թողել ամերիկացի միսիոներների, այլ օտարերկրացիների և բարեկամ թուրքերի մոտ իրենց նախկին բնակավայրերում, և հատկապես հյուպատոս Դեյվիսի մոտ, ներկայացան մեր հյուպատոսություն և խնդրեցին գումարներ տալ իրենց: Այսպիսի շատ խնդրանքներ բավարարվեցին, և մարդկանց գումարներ տրվեցին: Հազարավոր դիմումներ եղան այնպիսիներից, ովքեր ազգականներ և ընկերների ունեին Ամերիկայում, և նրանք խնդրում էին ինձ նամակ գրել նրանց տեղեկացնելով իրենց տխուր վիճակի մասին, խնդրել, որ հյուպատոսության տրամադրության տակ իրենց համար վող ու-

դարկեն: Այսպիսի խնդրանքներն էլ միշտ բավարարվեցին, և որպես արդյունք, հազարավոր կարիքավորների ժամանակ առ ժամանակ գումարներ էին ստանում, որով նրանք կայողացան պահել ընտանիքի անդամներին: Հաճախ էր պատահում, որ խնդրանքներկայացնող մարդկանց կրկին տեղահանում էին Հալեպից՝ այստեղից որոշ հեռավորության վրա՝ նախքան նրանց համար ուղարկված գումարների տեղ հասնելը, և անհրաժեշտ էր լինում այդ գումարները կրկին ուղարկել նրանց սիրիացի մեր բարեկամ գործարարների կամ բանկի միջոցով: Քանի որ հաճախակի ընդմիջումներով օգնության գումարներ էին ստացվում դեսպանությունից, անհրաժեշտ էր, որպեսզի ես ինքս անձամբ զբաղվեի գումարների բաշխմամբ այն պատճառով, որ թուրքական իշխանությունները խիստ հրահանգներ էին տվել քաղաքի բնակչությանը տառապյալներին օգնություն չտալու մասին: Նրանք նույնիսկ ինձ հրամայեցին երբեք չօգնել հայերին, սակայն ես, իհարկե, փոքր իսկ ուշադրություն չէի դարձնում նրանց վրա, չնայած միշտ էլ սպասում էի, որ վաղ թե ուշ իմ դեմ ձեռք կառնվի որևէ արմատական գործողություն: Քանի որ օրեցօր աճում էին սկզբում տեղ հասած հարյուրավորների խմբերը, շուտով հազարավորներն էին գալիս հյուպատոսություն ամեն օր, այնպես որ շուտով գումարներ տրամադրելը դարձավ շատ հոգնեցուցիչ, և անհրաճեշտ էր առանձնացնել ետճաշյա ժամանակահատվածը՝ այդ գործով զբաղվելու համար:

Այսպես օգնություն էր բաժանվում մինչև 1916թ. աշունը երբ ես իմացա, որ կային բազմահազար մահմեդական գաղթականներ Ուրֆայի մերձակայքում, որոնց Թուրքիայի այլ մասերից վտարել էր ռուսական բանակը, և որոնք մեծ մասամբ սովահար վիճակում էին: Սա ինձ հնարավորություն տվեց մի փոքր քաղաքական խաղ խաղալ թուրքերի գլխին, որն արվեց հետևյալ կերպ. ես այցելեցի գեներալ նահանգապետ մուստաֆա Աբդուլ Ռեյիսին, խոսեցի նրա հետ իրավիճակի մասին և ասացի նրան, որ Ամերիկայում հանգանակվում են սյուլանավոր դոլարներ պատերազմից տուժած քաղաքացիներին օգնելու համար և ավելացրեցի, որ գուցե ինձ համար հնարավոր կլինի ձեռք բերել մի գումար, որը գոնե մասամբ կբավարարի օգնելու Ուրֆայի մոտակայքում տառապյալ մահմեդական գաղթականներին, եթե կարգադրություն արվի թույլ տալ հյուպատոսությանը օգնություն բաժանել: Նա հստակորեն ինձ ասաց, որ համաձայն զինվորական կարգադրության օտարերկրացիներին Թուրքիայում չի

թուլատրվում օգնություն տալ որևէ մեկին, այդ կարելի է անել միայն կառավարական պաշտոնյաների միջնորդությամբ: Ես ասացի նրան, որ ակնհայտ պատճառներով ես չեի կարող ընդունել օգնության տրամադրումը այս պայմանով, և նա սիրով համաձայնվեց, որ ես բոլոր հիմքերն ունեի այսպիսի դիրքորոշման համար, քանի որ ինքը չէր կարող. հավանաբար, ուշադիր հետևել այսպիսի գործին և չկար վստահելի որևէ մեկը, որին կարելի լիներ նշանակել այդ անելու համար: Հետո ես առաջարկեցի հեռագրել դեսպանությանը՝ շարադրելով հանգամանքները և պահանջելով ուղարկել գումարներ այդ նպատակով, միաժամանակ խնդրելով դեսպանությանը փորձել և Կոստանդնուպոլսի իշխանություններից ձեռք բերել կարգադրություն, որպեսզի մասհանգային իշխանությունները թուլատրեն հյուպատոսությանը օգնություն բաժանել: Երկար համոզելուց հետո նա համաձայնվեց ուղարկել նման հեռագիր Թալեսթ փաշային՝ ներքին գործերի նախարարին: Այնպես պատահեց, որ հաջորդ երեկոյան դեսպան Էլկուսը Թալեսթ փաշային հրավիրեց ճաշի, այսպիսով, երբ վերջինս եկավ, պրն. Էլկուսը նրան ցույց տվեց հեռագիրը և ստիպեց նրան կարգադրություն ուղարկել Հալեպ, Ուրֆա և Մարաշ, որպեսզի ինձ թուլատրեն առանց թուրքական իշխանությունների կողմից որևէ խոչընդոտի օգնություն բաժանել աղքատներին՝ քրիստոնյա, հրեա թե՛ մահմեդական:

Սա ինձ ազատություն տվեց, և մի անգամ ևս այդ խնդրի շուրջ գրուցելով գեներալ նահանգապետի հետ՝ կարողացա նշանակել մի հանձնախումբ, կառիքավորներին օգնելու համար Հալեպ քաղաքում, ինչպես նաև հարևան քաղաքներում և գյուղերում տեղավորված հազարավորներին օգնություն ուղարկելու նպատակով: Միաժամանակ ես ուղարկեցի Օգլուստ Բերնոյին՝ Նյու Յորքի Vacuum Oil ընկերության նախկին տեղական տնօրենին, որը մի քանի ամիս էր աշխատում հյուպատոսությունում ֆրանսիացիների շահերի պաշտպանությամբ, ուղարկեցի Ուրֆա պրն. Ջեյքոբ Կանցլերի՝ մի շվեցարացի միսիոների հետ միասին, նա գնեց և կարգադրեց սովահար մահմեդականներին բաժանել ալյուր և հացահատիկ, որը բավարարեց երկուսուկես ամիս, մինչև որ կառավարությունը նրանց հող հատկացրեց Փոքր Ասիայի կենտրոնական մասում և տեղավորեց նրանց իրենց նոր բնակավայրերը:

Մի ուրիշ առիթով ինձ տեղեկացրեցին, որ Հալեպ էին եկել 1200 մահմեդականներ, որոնք նույնպես սովահար էին, և մի քանի օր

նրանց օգնություն տրամադրեց Չեկի փաշայի՝ տեղական զինվորական հրամանատարի միջոցով, այսպիսով, օգնեց իշխանություններին՝ տեղավորելու նրանց նահանգի արվարձաններում:

Մահմեդականներին օգնություն տրամադրելու այս երկու հնարավորությունները համոզեցին թուրքերին, որ ես քրիստոնյաներին կառավարության դեմ չեմ տրամադրում, դա փաստորեն վերացրեց նախկինում իմ կողմից տեղահանված հայերին օգնություն տալու գործում գոյություն ունեցող դիմադրությունը և ինձ թույլ տվեց ազատ և բացահայտ աշխատել՝ ձգտելով փրկել Հալեպում և շրջակա շրջաններում մնացածների կյանքը:

Քանի որ 1915թ. հուլիսից ի վեր հայերը Հալեպ էին ժամանել հագարներով, խնդիր առաջացավ, թե ինչ անել, որպեսզի նրանց, հենուցենեք ոստիկանական պաշտոնյաների տեսադաշտից, որպեսզի նրանց կրկին չարտաքսեն ներքին շրջանները: Այսպիսով, որոշվեց մի քանի պատասխանատու մարդկանց հանձնարարել հարցուփորձ անել քաղաքի տներում և հնարավորին չափ շատ մարդկանց մոտ, տարբերություն չունելով քրիստոնյաների, հրեաների և մահմեդականների միջև, տեղ գտնել ծառայի համար: Այսպիսով, մի քանի ամսվա մեջ տեղ գտնվեց 40000 մարդու՝ գրեթե բոլոր կանանց, աղջիկների ու 14 տարեկանից ցածր տղաների համար, նրանք աշխատում էին մեծ մասամբ որպես ծառաներ կամ խոհարարներ, տղաները հաճախ վարձվում էին հանձնարարություններ կատարելու, շուկա զնալու և այլնի համար, սակայն մեծ մասամբ նրանք մթերքի օգնություն էին ստանում, քանի որ մթերքն այնքան թանկ էր, որ մարդիկ չէին կարող կերակրել նրանց: Չնայած Հալեպը պարծենում էր իր 300000 բնակչությամբ՝ հեշտ գործ չէր այդքան շատ անտուն մարկանց տեղավորելը, նրանց մեծ մասը կիսամերկ, շատերը քիչ թե շատ թուլացած ու անառողջ, և քչերն էին, եթե կային, խոսում արաբերեն՝ երկրի պետական լեզվով: Անշուշտ, բացահայտ ճշմարտություն է, որ արաբները, որոնք կազմում են Հալեպի բնակչության երեք քառորդ մասը, միշտ էլ կորականապես դեմ էին հայերի նկատմամբ բուրբախան կառավարության գործած սարսափելի հանցանքին:

Մի ուրիշ ծրագիր մշակվեց, որով մենք կարողացանք խանգարել մի քանի հայ տղամարդկանց վերատեղահանմանը, և որն իրականացրեցին նրանց միջից ամենակարող ու ամենաճարպիկ երկու տղամարդիկ: Նրանք Գ-ամասկոսի շտաբի ղեկավարի հետ գնացին

Ջեմալ Փաշայի՝ Չորրորդ բանակի գլխավոր հրամանատարի, մոտ, որի իրավասության տակ էր Հալեպը, և առաջարկեցին նրան բանակի համար հագուստ ու անկողին արտադրել, եթե նա աշխատելու համար տրամադրի շենք ու մեքենաներ՝ ասելով, որ կառավարությունը յուրաքանչյուր աշխատողին բացի մի կտոր հացից և մի թաս ապուրից ոչինչ չպետք է տա: Ջեմալ փաշան ընդունեց առաջարկը, և երկու ամսից վեց տարբեր ֆաբրիկաներ արդեն աշխատում էին: Ծրագիրը Ջեմալ փաշայի կարգադրությամբ այստեղ աշխատող յուրաքանչյուրին տալիս էր «վեսիկա», կամ թույլտվություն, որի հեղինակությունը շատ բարձր էր, և այն այսպիսի մարդկանց տալիս էր հերթական համար համապատասխան ֆաբրիկայում, որպես կառավարական աշխատող, և տվյալ կինը կամ տղամարդն ազատվում էր զինվորական ծառայությունից՝ ձեռք բերելով լրիվ ազատության արտոնություն: Այդ նշանները կրող համապատասխան փաստաթուղթ ունեցողը ազատվում էր վերատեղահանումից: Երկու ամիս հետո 6500 կանայք, մեծ մասամբ այրիներ, 3000 աղջիկներ և 650 տղամարդիկ ու մեծ տղաներ աշխատում էին այս ֆաբրիկաներում և օգտվում էին նախատեսված բոլոր արտոնություններից: Նրանցից ոչ մեկը ընդգրկված չէր ծառա տարվածների մեջ, այլ ի հավելումն էր նրանց: Հյուպատոսության, հետազայում կոմիտեների կողմից տրամադրվող օգնությունը լրացնում էր նրանց մնացած կարիքները:

Հետո, գոյություն ուներ նաև երեխաների հարցը: Նրանցից հազարավորները փողոցներում էին, կամ ազգականների ու բարեկամների մոտ կիսասոված վիճակում, իսկ մի մասին մենք կարողացել էինք տեղավորել տներում, և անհրաժեշտ էր, որպեսզի նրանք լավ խնամք ստանան, քանի որ ավելի շատ նրանց վրա էր ընկնում Թուրքիայում հայ ժողովրդի բազմացման պատասխանատվությունը, եթե այդ երբևէ տեղի ունենար: Հյուպատոսության տված օգնությամբ օրիորդ Բեստրիս Թոնները շվեցարիացի մի միսիոներ, որը Մարաշից եկել էր այդ նպատակով, բացեց երկու որբանոց, որտեղ նա հավաքեց ավելի քան 1000 երեխա, մոտավորապես 50 կին և մի քանի տղամարդ բանվոր: Օրիորդ Նորա Ալթունյանը՝ օսմանյան հայատակ, Հալեպի հայտնի բժիշկներից մեկի դուստրը, որի մայրը իռլանդացի միսիոներ էր, կամեցավ բացել մի ուրիշ որբանոց, որտեղ նա կարողացավ հավաքել 600 որբերի և 40 օգնական կանաց, իսկ հետո վերցրեց մի ուրիշ շենք, որտեղ հավաքեց 400-ից ավել երեխա:

Հյուպատոսութունը տրամադրեց այդ հաստատությունների պահպանման համար պահանջվող գումարի մեծ մասը, մնացածը տալիս էին Հալեպի բնակիչ հարուստներից ոմանք և մի քանի շվեցարացի ներդնողներ: Կանոնավոր նպաստներ տրվեցին յուրաքանչյուր որբանոցի, որոնց անօրենները կարողացան ձեռք բերել առաջին անհրաժեշտության իրեր: Երեխաները կրթություն ստացան, և չնայած գումարները երբեմն սահմանափակ էին, հիվանդությունները բուրդովին վերացան, և երեխաները բարենպաստ վիճակում էին: Ձեռնվ փաշան հատուկ թույլավություն տվեց այս որբանոցների բացման ու աշխատանքի համար, և այդ ձեռք բերվեց Ռոնեթի, օրիորդ Աթունյանի և իմ ջանքերով: Գերմանացի հյուպատոսը փորձեց թուրքական կառավարությանը համոզել, որպեսզի դրանք համարվեն գերմանական հաստատություններ, սակայն մենք կարողացանք այդ թույլ չտալ: Գերմանացիները, որոնք թուրքերի հետ հավասար պատասխանատու էին որբերի վիճակի համար, շատ էին ցանկանում ձեռք բերել որբանոցների հսկողությունը, որպեսզի գոնե հեռացնեին այդ ամբողջ գործում իրենց մասին թեկուզ մի փոքր բիծը: Սի մեծ որբանոց բացվեց Քիլիսում, Հալեպից 30 մղոն հյուսիս, որտեղ խնամքի տակ առնվեց ավելի քան 400 երեխա, և դրա ծախսերը արվեցին հյուպատոսության միջոցով ձեռք բերված գումարներով:

1916թ. գարնանը իշխանությունները որոշեցին հեռացնել բոլոր քրիստոնյաներին Հյուսիսային Սիրիայի ծովափնյա քաղաքներից: Դրանք էին Ալեքսանդրետուան, Տարսուսը, Սվեդիան, Անտիոքը և շրջակա գյուղերը, չնայած վերջին քաղաքը ավից 20 մղոն հեռու էր: Թանի որ հայերին արդեն արտաքսել էին, մնացել էին միայն հույն ուղղափառները, և այն բանից հետո, երբ նրանց արտաքսեցին դեպի երկրի ներքին շրջանները, բավականին տարօրինակ կերպով տեղահանումն ավարտվեց և լատին կաթոլիկներին շանհանգստացրեցին: Ավելի քան 3000 հույն ուղղափառներ հայտնվեցին նույն դժբախտ վիճակում, ինչ որ հայերը, և ես անմիջապես գործի անցա, դեսպանությունից խնդրելով թույլավություն, ընդհանուր օգնության գումարներից նրանց օգնելու համար: Սրան անմիջապես համաձայնություն տրվեց, և նրանք գրանցվեցին ցուցակում, ու ամենամայս նպաստները ես ուղղակիորեն տալիս էի հույն եպիսկոպոսին՝ շատ վստահելի մի մարդու, որի հետ անձամբ ծանոթ էի տարիներ շարունակ: Հույներին մեծ մասամբ արտաքսեցին Իդլիք, Մամբուջ և Բար,

իսկ շատերը մնացին Հալեպում դեպի ներքին շրջանները այդտեղով անցնելիս:

Եվ այսպես օգնություն տրվեց մինչև 1917թ. ապրիլին Միացյալ Նահանգների և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների սրումը: Այդ իսկ պատճառով, դրանից հետո ես կարգավորեցի օգնության գործը այնպես, որ գումարը ես ուղարկում էի պրն. Լ-միլ Յոլինգերին՝ Հալեպում հարգարժան մի շվեցարացի պարոնի. որը շատ էր հետաքրքրվում բարեգործական աշխատանքներով. և որը ստանում և վճարում էր հանձնախմբերին գումարներ. որն անհրաժեշտ էր ամսեկան վճարումների համար:

Բացի 50000 մարդուց, որոնք օգնություն են ստանում Հալեպում. կան ավելի շատ մարդիկ շրջակա քաղաքներում ու գյուղերում. որոնք բոլորն էլ օգնություն են ստանում այն հանձնախմբերի միջոցով, որոնք իմ ղեկավարությամբ կազմակերպվել են իմ մեկնումից 1917թ. մայիսից առաջ: Հիմնական վայրերը, որտեղ այն ժամանակ տեղավորվել էին տեղահանված հայերն ու հույները Հալեպ, Այն-թապ, Մոսուլ, Ուրֆա, Բիրեջիկ, Մարդին, Մարաշ, Քիլիս, Մամբուջ, Սերա, Սերուջ, Բաք, Իդլիք, Մեսկենե, Համամ, Ռաքքա, Աբու-Հարաա, Սելիմե. Համա և Գամասկոս քաղաքներն են: Նյու Յորքի Մեդիսոն ավենյու թիվ 1-ում գտնվող Հայերի և ասորիների օգնության հանձնախումբը կապի մեջ է Հալեպի հանձնախմբի հետ պրն. Յոլիգերի միջոցով, և վերջինս զեկուցում է. որ աշխատանքը ընթանում է բավարար կերպով:

Այդ օրերին շատերը վախենալով անհանգիստ վիճակից, գումար կամ արժեքավոր իրեր էին թողել հյուպատոսությունում, բոլորը վերադարձրել են, բացի մի փոքր մասից. որը ես հանձնեցի հոլլանդացի հյուպատոսին՝ իմ ժամանակավոր փոխարինողին. երբ պարզ եղավ, որ ինձ ստիպելու են հեռանալ Հալեպից, և անհնար էր նախատեսել, թե կլիներ արդյոք որևէ մշտական հյուպատոս, որը կներկայացներ այն շահերը, որոնք պաշտպանում էի ես այն ժամանակ. իսկ հյուպատոս չկար Հալեպում, որը չեզոք երկիր է:

Հարյուրավոր հարցումներ են արվել հյուպատոսությանը հայ ընտանիքների մասին. որոնք այն ժամանակ ապրում էին Միացյալ Նահանգներում. և որոնց ընտանիքները արտաքսվել էին Հալեպ կամ մերձակայքը: Փաստորեն փոխհյուպատոս Ջորջ Վ. Յանգն անընդհատ զբաղված էր այդ հարցումներին պատասխանելու համար տեղեկություններ ձեռք բերելու գործով. սակայն դրանցից շա-

տերը և այլ արժեքավոր տեղեկություններ, ինչպես նաև զինվորական ու քաղաքական, կոտորածների մանրամասներն ու ռասսայական անախորժությունների մասին զեկուցագրերի օրինակները ես այրեցի իմ մեկնումից առաջ՝ հետևելով դեսպանության միջոցով դեպարտամենտի արած ցուցումներին: Քանի որ դրանք բոլորը տասներկու տարվա Հալեպի շրջանում իմ գտնվելու ջանքերի արդյունքն էին, մեծ ցավով ու ավստասանքով ես հետևում էի, թե ինչպես էր կրակը ոչնչացնում այն, իմանալով, որ շատ արժեքավոր ու պատմական տեղեկություններ դրա հետ կորչում էին ընդմիջտ: Այլ ընտրություն չկար, սակայն, քանի որ ես տեսել էի Սիրիայի Բեյրութում ֆրանսիացի գլխավոր հյուպատոսի ձախողման արդյունքը, որի հետևանքով նրա արխիվը բռնագրավեցին թուրքերը, ավելի քան վաթսուն սիրիացի վստահելի տղամարդիկ բացահայտվեցին և կախվեցին, մոտ 5000-ից ավելի մարդիկ արտաքսվեցին, նրանց ունեցվածքը բռնագրավեց թուրքական կառավարությունը: Աչքի առաջ ունենալով սա՝ ես մտադրություն չունեի, որպեսզի իմ կողմից արված որևէ բացթողում այսպիսի ավիրածության պատճառով դառնար:

Որպես պայծառ օրինակ այն բանի, որ թուրքն ինքն իրեն բոլորովին չի կարող պահել, այն էր, որ հայերին Ուրֆայում ոչնչացնելուց մի քանի ամիս հետո արեցին քաղաքի մահմեդական բնակիչները: 1916թ. դեկտեմբերն էր, որ Ուրֆայի բնակիչները՝ տեսնելով, որ չունեն դեղագործ, ջաղացական, հացթուխ, կաշեգործ, կոշկակար, ներկարար, մանածագործ, դերձակ և այլ արհեստավորներ կամ առևտրականներ, իշխանություններին ներկայացրեցին խնդրագիր, որպեսզի թույլատրվեր այն ժամանակ Ռաքբայում՝ Ուրֆայից երեք օրվա ճանապարհի վրա գտնվող քաղաքում, տեղավորված հայ առևտրականներին տեղավիժվել Ուրֆա: Խնդրագիրն ուղարկվեց Ջեմալ փաշային, որը 2500 այսպիսի մարդկանց իրենց ընտանիքներով հրամայեց գնալ Ուրֆա, և մինչև 1917թ. մայիսը ավելի քան 6000 տեղահանված հայեր շրջակա գյուղերից ու քաղաքներից հավաքվեցին այնտեղ: Երբ ես Հալեպից հեռացա այդ ամսին, հայերն ապրում էին Ուրֆայում և շարունակում էին իրենց գործունեությունը այդ կատարած մարդկանց հետ համերաշխ, որոնք ընդամենը մեկ տարի առաջ ֆանատիկ կերպով ոչնչացրել էին 14000 քրիստոնյա հայերի, որոնց նրանք անձամբ ճանաչել էին ու գործ էին ունեցել նրանց հետ տարիներ շարունակ:

Էնվեր փաշան՝ ռազմական նախարարը 1916թ. փետրվարին, կարգադրեց որպեսզի հյուպատոսության փոստը, նույնիսկ երբ այն հասցեագրված է դեպարտամենտին և դեսպանությանը, փոստին հանձնվի չկնքված, որպեսզի այն կարդացվի և գրաքննվի թուրքական զինվորական իշխանությունների կողմից: Նրանց կարծիքով այդ ինձ խանգարեց շրջանի իրադարձությունների մասին դեսպանությանը տեղյակ պահելու գործում, սակայն բարեբախտաբար, դրանից մի ամիս առաջ, դեկտեմբերին, ես դեսպանությանն էի ուղարկել, համեմատաբար պարզ և անվնաս առևտրական բառերի և այլ դարձվածքների մի երկար ցուցակ իրենց կողային իմաստներով, որը ես կարողացա հաղորդել բաց հեռագրով, և դրանք բոլորը վերաբերվում էին այն իրադարձություններին, որոնք ես կարող էի կանխատեսել, որ կպատահեն ապագայում: Այս կերպ ես կարողացա դեսպանությանը տեղյակ պահել իշխանությունների մտադրությունները ցանկացած շրջանի, ցանկացած խմբի տեղահանության վերաբերյալ, իշխանությունների կողմից ամերիկյան ունեցվածքի բռնագրավման, իմ աշխատակիցներին խոչընդոտելու, իմ անձնական ապահովության, հյուպատոսության աշխատանքներին ու դեկավարությանը սպառնացող վտանգի ու միջամտությունների, և շատ այլ բաների մասին, որ կարող էր պատահել, և որի մասին անհրաժեշտ էր, որ դեսպանությունը տեղյակ լիներ: Այս ձևով ես կարողացա դեսպանությանը փոստով նամակներ ուղարկել շատ իրադարձությունների մասին, որը մեծ հանելուկ էր թուրքերի համար, և որը նրանք երբեք, իմ կարծիքով, չկարողացան հասկանալ: Հեռագրելով պարզ առևտրական դարձվածքով՝ հյուպատոսությունը կարողանում էր դեսպանության միջոցով ճնշել Կոստանդնուպոլսի իշխանություններին շատ միջադեպերի ժամանակ, որը այլ կերպ հնարավոր չէր լինի անել: Քանի որ թուրքական կառավարությունը 1914թ. հոկտեմբերի 1-ին չեղյալ էր համարել կապիտուլյացիան, այդ տարվա հոկտեմբերի 29-ին պատերազմի մեջ մտնելուց անմիջապես առաջ, իշխանությունները մեծամտացել էին, ջանալով ամեն կերպ էժանացնել հյուպատոսական պաշտոնյաների դիրքը, ցածրացնել նրանց ազդեցությունն ու իշխանությունը, անհրաժեշտ էր հաճախ դիմել դեսպանությանը, հատկապես, կապված հայկական հարցի և պատերազմող երկրների մի քանի հպատակների հետ, որոնց շահերի պաշտպանությունը վստահված էր Ամերիկայի դիվանագիտական և հյուպատոսական պաշտոնյաներին:

Չնայած ես մոտ հարաբերությունների մեջ էի Էնվեր փաշայի՝ ռազմական նախարարի հետ, որը հաճախ էր գալիս Հալեպ, ինչպես նաև Ջեմալ փաշայի նավատորմի նախարարի և Սիրիայի ռազմական հրամանատարի, հետ, որին ես հյուրասիրել էի տալիբեր առիթներով, և որի հետ ես հաճույք էի ունեցել հանդիպել նրա պատվին Հալեպում կազմակերպված բազմաթիվ հասարակական և անհատական միջոցառումների ժամանակ, անհնար էր ստիպել նրանց հանել դեսպանության հետ իմ ազատ մամակագրության սահմանափակումները, չնայած նրանք երբեք չեն խոչընդոտել դեսպանությունից ինձ հասցեագրված կնքված մամակներին: Չէր բույլատրվում հյուպատոսությանը կնքված մամակներ ստանալ դեսպարտամենտից, զրաքննությունը միշտ էլ բացում էր այդպիսի մամակները, չնայած դրանք միշտ էլ պարունակում էին շրջաբերականներ և տպագրված նյութեր: Էնվեր փաշան ինձ ասաց, որ չնայած դեսպանությունը Վերին Դուան հետ կարգավորել էր, որպեսզի ամերիկյան հյուպատոսները չուղարկեն որևէ ռազմական կամ քաղաքական տեղեկատվություն, այնուհանդերձ նա ռիսկի չի դիմի: Քանի որ թուրքերը քիչ թե շատ գերմանացիների ազդեցության տակ էին, տեղի ունեցող դեպքերը հաստատեցին, որ բարձրագույն թուրքական ու գերմանական իշխանությունների միջև կա համաձայնություն այն մասին, որ վաղ թե ուշ Սլիացյալ Նահանգները կմտնեն կոնֆլիկտի մեջ, և մեզ չի բույլատրվի ձեռք բերել որևէ տեղեկություն, որը կարելի լինի ներքին շրջաններից ուղարկել դեսպանությանը:

Կարելի է անդրադառնալ հարյուրավոր առանձին օրինակների, երբ հյուպատոսությունը օգնել է որոշակի առանձին մարդկանց ու ընտանիքների խուսափել վերատեղահանումից, բայց այստեղ չեն ընդգրկվել այն պատճառով, որ ընթերցողները դրանք հնարավոր է, որ համարելին ձանձրալի, չնայած անկասկած հետաքրքիր կլինեին մի քանիսի համար: Ամեն օր պատվարժան մարդիկ, որոնց համառորեն և ֆանատիկ կերպով փնտրում էին իշխանությունները, բաքընվում էին հյուպատոսությունում, և զիջեով հյուպատոսության վստահելի աշխատակիցները նրանց ծալոված տարել են քաղաքի գաղտնի բարեկամների և նույնիսկ բարեկամ քոչվոր արաբների մոտ, որոնք ապրում են քաղաքի հարևանությամբ: Նույնիսկ ամերիկյան քաղաքացիներն էին ընկնում թուրքերի կասկածի տակ, ինչպես ներկայացված է հետևյալ օրինակում:

1915թ. ամռանը, բժիշկ Սմիթը, կինն ու երեխաները՝ Դիարբերքի-  
րի ամերիկյան միսիոներները, ձերբակալված բերվեցին Հալեպ,  
բժիշկը նետվեց մի զգվեյի բանտ, մոտ հիսուս ստոր հանցագործների  
հետ, կնոջն ու երեխաներին թույլատրեցին գնալ հյուրանոց: Տիկին  
Սմիթը առավոտյան տեղյակ պահեց հյուպատոսությանը, և ես ան-  
միջապես գնացի զեներալ նահանգապետի մոտ, որտեղ ինձ ասա-  
ցին, որ միանգամայն պարզ էր, որ Սմիթները ոչ միայն լրտեսներ  
էին, այլև հայկական ծագում ունեին: Ես հաստակամորթն մերժեցի  
այդ մեղադրանքները, և մեծ ջանքերի գնով ինձ հաջողվեց թույլ-  
տվություն ստանալ, որպեսզի բժիշկը միանա իր ընտանիքին՝ հյու-  
րանոցում, երաշխավորելով, որ նա թուրքերին կներկայանա ըստ  
պահանջի: Բժիշկ Սմիթը և նրա ընտանիքը շատ էին տառապել կա-  
տաղած ժանդարմների ձեռքին, երբ սայլով գալիս էին Դիարբերքի-  
րից, բժիշկը հիվանդ էր դիզինտերիայով և հիվանդանոցի կարիք  
ուներ: Իշխանությունները մտադիր էին նրան տանել Բեյրութ, որտեղ  
նա կկանգնեք ռազմական դատարանի առաջ: Ես ի վերջո կարողա-  
ցա նրանց ազատ ուղարկել Բեյրութ, որտեղից էլ նրանք հետո շու-  
տով նավով մեկնեցին Սիսցայալ Նահանգներ:

Մյուս դեպքը, որով հետաքրքրված էր նախկին ամերիկացին,  
այնթապցի պրոֆեսոր Կարապետ Դադլյանի տիկնոջ և փոքրիկի  
վերաբերյալ էր: Տիկին Դադլյանը նախկինում օրիորդ էլիս Բյուերն  
էր, նույն քաղաքի ամերիկյան հիվանդանոցի ամերիկացի մի բուժ-  
քույր, որն ամուսնացել էր պրոֆեսոր Դադլյանի հետ՝ օսմանյան  
հպատակ մի հայի հետ՝ դրանով իսկ կորցնելով իր ամերիկյան  
քաղաքացիությունը: Իրենց Դեյր-էլ-Չոր ուղեկցող ժանդարմներին  
կաշառելով, նրանք կարողացան գալ Հալեպ, որտեղ տիկին  
Դադլյանը օգնության համար դիմեց ինձ: Ես գնացի զեներալ  
նահանգապետի մոտ, բացատրեցի իրավիճակը, սակայն նրան  
ասացի, քանի որ ամուսնությունը տեղի չէր ունեցել հյուպատոսի  
ներկայությամբ, ես չէի կարող ճանաչել տիկին Դադլյանի և երեխա-  
յի օսմանյան քաղաքացիությունը: Քանի որ զեներալ նահանգա-  
պետը գիտեր, որ եթե կինը Գերմանիայի հպատակ էր, ըստ գեր-  
մանական օրենքի այս կերպ կատարված ամուսնությունները չէին  
համարվում կնքված, ես կարողացա համոզել նրան, որ ամերիկյան  
օրենքը նույնպես այս պայմաններն ունի, և նա համաձայնվեց թող-  
նել տիկին Դադլյանին և երեխային մնալ Հալեպում, չնայած ասաց  
մահ որ նրա ամուսնուն, որը օսմանյան հպատակ էր, չէր կարող  
թույլատրել մնալ: Այնուամենայնիվ, տիկին Դադլյանը մի երեկո ան-  
ձամբ գնաց հանդիպելու զեներալ նահանգապետին նրա տանը և

միայն մի այցելությունից հետո, երբ նա իմացավ, որ պրոֆեսորը շատ կրթված մարդ է և ընդունակ ուսուցիչ, նա համաձայնվեց թողնել նրան որպես ուսուցիչ Հալեպի թուրքական միջնակարգ դպրոցում, որտեղ նա դեռևս աշխատում էր, երբ ես Հալեպից հեռացա: Տիկին Դադլյանը նյույորքցի բժիշկ Ջուլիուս Բյուերի քույրն էր, որին Միացյալ Նահանգներ ժամանելուց հետո ես հաղորդեցի իր քյոջ որպիսության մասին:

Միացյալ Նահանգներ հասնելուց հետո ինձ փնտրել են թուրքերի ձեռքից տառապածների ազգականներն ու ընկերները՝ մի քանի անգամ լինելով Նյու-Յորքում, ես խորհրդակցել եմ ավելի քան 4000 մարդու հետ, մեծ մասամբ նախկին հալեպցիների, որոնք շատ էին ցանկանում իմանալ իրենց ընտանիքների որպիսությունը, որոնց մասին նրանք պատերազմի սկզբից ի վեր ոչ մի տեղեկություն չունեին: Ես ընդունել և պատասխանել եմ բազմաթիվ այլ անձանց հարցումներին, որոնց կարողացել եմ հանդիպել անձամբ, և նրանց եմ հաղորդել իրենց ցանկացած տեղեկությունը այնպես, որքան կարողացել եմ հիշել:

Համառոտ եզրափակելով՝ հյուպատոսությունը խուսափեց Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության և Հալեպում Գերմանիայի հյուպատոսության դավաճանական խարդախությունների զոհը դառնալուց:

Դեսպանության հետ համագործակցելով՝ հյուպատոսությունը կարողացավ խանգարել իրենց տներից 48000 հայերի արտաքսմանը Հալեպից, Այնթապից, Մարաշից և շրջակա գյուղերից:

Կարողացավ փրկել ու խնամել ավելի քան 100000 հայերի, որոնք տեղահանվել էին ներքին շրջաններից և կուտակվել էին վերը նշված քաղաքներում, ինչպես նաև Հյուսիսային Սիրիայի այլ քաղաքներում ու գյուղերում, նրանք ներկայացնում էին Թուրքիայում այդ ազգից փրկվածների մեծ մասը, ինչպես նաև տեղավորել 2400 որբերի, ժամանակավորապես մթերքով ապահովել 45000 մահմեդականների, որոնց ռուսական բանակը վտարել էր Հյուսիսային Թուրքիայից, օգնություն տրամադրել 3000 ուղղափառ հույների, որոնք արտաքսվել էին ավամերձ քաղաքներից դեպի ներքին շրջանները Հալեպի մուտակայքում:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/373.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide". Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower Euphrates, pp. 140-158.*

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Միրիա, Հալեպ, այժմ Վաշինգտոնում.  
27 մայիսի, 1918թ.*

Առարկան՝ Հայկական արհավիրքներ

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Լրացնելով իմ 1918թ. մարտի 4-ի, զեկուցագիրը, պատիվ ունեմ զեկուցելու հետևյալ միջադեպի մասին, որն այն ժամանակ բաց էր թողնվել հաշվետվությունից, և որն այդ կապակցությամբ կարող է հետաքրքրել:

1915թ. վերջին, կարծում եմ այդ տարվա դեկտեմբերին, մի հայ ինձ ներկայացրեց զբավոր հաղորդագրություն այն մասին, որ իր ազգից մոտ 5000 տղամարդիկ, կանայք ու երեխաներ Մուսա Ջեբելի վրա (Մոսես լեռ) Անտիոքից մի քանի սղոն դեպի հարավ և այդ քաղաքի և Միրիայի Լատակիայի միջև շրջապատվել էին մոտ 1500 թուրք զինվորների կողմից: Նամակը ներկայացնողն ասաց, որ նա կտրել էր թուրքական գիծը և ոտքով ուղևորվել Հալեպ՝ 100 մղոնանոց մի ճանապարհ: Խմբից շատերն էին սպանվել մինչև իր հեռանալը, իսկ մնացածը արագորեն ընկնում էին հուսահատության մեջ՝ սննդամթերք ու զինամթերք չունենալու պատճառով, և նա ինձ աղաչում էր շուսպ քայլեր ձեռնարկել՝ նրանց ազատելու համար: Գիտակցելով, որ իշխանություններին դիմելը անօգուտ կլինի և անկասկած կհանգեցնի կրկնակի ջանքերով ամբողջ խմբի բնաջնջմանը, ես որոշեցի, որ եթե հնարավոր լինի, գործի վրա հրավիրել անընդհատ Արևելյան Միջերկրականում շրջող ֆրանսիական մավատորմի ուշադրությունը: Այս իրագործելու համար որոշվեց ընտրել Հալեպի մի պատվավոր գործատիրոջ, որը ծագումով հայ էր, սակայն կրում էր կիսաարաբական ազգանուն, որպեսզի նա գնա Բեյրութ և փորձի մավատորմին հաղորդել շրջապատվածների աղերսանքը:

Այս մարդուն հաջողվեց ստանալ թուրքական իշխանությունների թույլտվությունը՝ գործով Բեյրութ գնալու համար, և մի երկու

շարք անց նախատորմը մոտեցավ ավիին Մոսուլ Ջերբեյի մոտ, կապ-վեց հայերի հետ և տարավ մոտ 4000 դժբախտների, որոնք, որքանով ես հետազայում տեղեկացա, տարվեցին Եգիպտոս:

Լուրեր էին պատվում Հալեպում, որ սպանվել էր մոտ 500 թուրք զինվոր և շատ ավելին վիրավորվել էին հայերի վրա հարձակվելիս, որը շարունակվել էր մոտավորապես հինգ շարքից ավելի: Գրողը անձամբ տեսել է վիրավորների շատ վագոններ, որոնց բերել էին Հալեպ՝ բռնակցելու:

Պարոն, պատիվ ունեմ լինելու,

Ձեր իտնարի ծառան՝

(ստորագրված) Ջ. Բ. Ջեքսոն

հյուպատոս, նախկինում Սիրիայի Հալեպում:

(Երկու օրինակից)

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/386.*

2. *"United States Official Documents on the Armenian Genocide".  
Compiled and introduced by Ara Sarafian. Volume 1, The Lower  
Euphrates, pp. 159-160.*

## II

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ  
ՇՐՋԱՆՆԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրապիզոն, Թուրքիա. 28 հունիսի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան դեսպան*

*Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ դեսպանատանը հաղորդելու այն հայտարարության մասին, որը տարածվել է տեղական իշխանությունների կողմից հասարակական վայրերում: Այնտեղ ասվում է, որ այսօրվանից հինգ օր հետո, այսինքն, հինգշաբթի հուլիսի 1-ին Տրապիզոնի և շրջակայքի ողջ հայ բնակչությունը, ներառյալ տղամարդիկ, կանայք և երեխաները, պետք է կառավարությանը հանձնեն այն գույքը, որը չեն կարող տանել իրենց հետ և ճանապարհ ջնկնեն դեպի երկրի ներքին շրջանները, հավանաբար, Էլջիզարե կամ Մոսուլ, որտեղ նրանք կմնան մինչև պատերազմի ավարտը: Պատերազմն ավարտվելուց հետո նրանք կվերադառնան և կստանան իրենց ունեցվածքը:

Անհնար է նկարագրել այն սարսափն ու հուսահատությունը, որ համակեց այդ մարդկանց՝ հայտարարության հրապարակումից հետո: Ես ականատես եմ եղել, թե ինչպես էին երեխայի նման լալիս ուժեղ, հպարտ, հարուստ տղամարդիկ, երբ ասում էին, որ տվել են իրենց տղաներին ու աղջիկներին պարսիկ և թուրք հարևաններին:

Ես ճանաչում եմ մի կնոջ, որը խելագարված վիճակում այժմ բժիշկ Քրոֆորդի տանն է: Պատմում են ևս երկու նման դեպքի մասին: Շատերն իրենց մոտ թույն են պահում, որպեսզի խմեն, եթե հրամանը չեղյալ չհայտարարվի:

Այս պահին ոչ մի փոխադրամիջոց չկա: Բոլոր ձիերը, սայլերն ու կառքերը բռնագրավված են ռազմական նպատակների համար և մարդիկ ստիպված են վեց և ավելի օր ոտքով ճանապարհ անցնել:

Կանանց, երեխաների ու ծերերի համար անհնարին է տարվա այս եղանակին ճանապարհ անցնել շոգի ու փոշու միջով: Նույնիսկ ուժեղ տղամարդն առանց անհրաժեշտ հանդերձանքի և ուտելիքի անկարող է դիմանալ այսպիսի ճամփորդությանը:

Ես ծածկագիր օգտագործելու իրավունք չունեմ, իսկ այս մասին բաց հեռագիրն ուղարկելը նպատակահարմար չէ, ուստի դիմեցի ավստրո-հունգարական իմ գործընկերոջը, որն իրավունք ունի ծածկագիր ուղարկելու և խնդրեցի նրան իր դիմումի հետ հաղորդել նաև

իմ համաձայնությունը, որպեսզի Կոստանդնուպոլսում ձեռք առնվեն միջոցներ այս հրամանը չեղյալ հայտարարելու համար, եթե հնարավոր է, կամ համեմայն դեպս, ձևափոխել այն, խնայելով ծերերին, կանանց ու երեխաներին և ետ պահել նրանց այդ ճամփորդությունից, որը անխուսափելի մահ է նրանց համար:

Ես այցելեցի կառավարչին և խնդրեցի որոշ բացառություններ անել: Նա ինձ համար կարդաց ներփակ հայտարարությունը, և այն ինձ հանձնելով, ասաց, որ ստիպված է կատարել հրամանը: Այնուամենայնիվ, նա ինձ հավաստիացրեց, որ հեռագրել է Կոստանդնուպոլիս, խնդրելով բացառություններ անել պաշտոն ունեցող հայերի համար, որտեղ, կարծում եմ, կընդգրկվեն երկու դավազներն ու ցրիչը, որ հայ են:

Կցում եմ «Մեշվերեթ»-ի օրինակը, թվագրված 27 հունիս, կիրակի, որը Տրապիզոնում հրատարակվող պաշտոնական օրգանն է: Այստեղ կա մի հոդված, որը վերաբերում է Էրզրանեսի թուրք իմամի ընտանիքի նկատմամբ հայերի և հույների կատարած անկարգություններին: Ճշմարիտ է այն թե ոչ, կարծում եմ, որ պետք չէր հրապարակել այն այսպիսի իրավիճակում: Ինձ հաղորդել եմ, որ երկրի այս մասում հույներ չկան, այս փաստը կասկածելի է դարձնում այդ պատմությունը:

Ժողովուրդն անհույս է, սակայն պատրաստվում է ճանապարհվելու:

Հուսով եմ, որ մինչև հուլիսի 1-ը կլինեն որոշ փոփոխություններ:

Քանի որ ժամանակ չկար թարգմանելու ներփակված թուրքերեն թերթը ուղարկում եմ առանց թարգմանության:

Պատիվ ունեն լինելու Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,

Ամերիկյան հյուպատոս

Ներփակվածը՝ ըստ ասվածի:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/85.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and Introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 1-2.*

### Փաստաթուղթ թիվ 3

Խնդրում ենք, որ մեր դպրոցի փոքրիկ երեխաների, նրանց ուսուցիչների ու դայակների, և, ընդհանրապես, կանանց ու երեխա-

ների նկատմամբ անել բացառություններ հինգշաբթի օրվա հուլիսի 1-ին Տրապիզոնի հայերի ընդհանուր տեղահանության կարգադրություններում:

*Կրոֆորդ*

Վերը նշված հեռագիրը, թվագրված հունիսի 28-ին, ուղարկվել է նույն օրը Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսության միջոցով, որպես ճեպագիր, և հասցեագրված Լ. Կոստանդնուպոլսի դեսպանին՝ Փիլիին, հանձնելու համար: Այդ գործի մասին մենք իմացանք հուլիսի 13-ի նամակից, որը հաստատում է վերևի հեռագիրը:

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers, Reel 7/634.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II. p. 5.*

#### Փաստաթուղթ թիվ 4

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս. 13 հուլիսի, 1915թ.*

*Հաշիմզառն,*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Լրացնելով 1915թ. հունիսի 26-ի իմ զեկուցագիրը հայերի վիճակի վերաբերյալ, պատիվ ունեմ ներվիակելու նույն թեմայով Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսից ստացած զեկուցագրի պատճենված օրինակները:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներվիակված են՝ օրինակների պատճենները

թվագրված 30 հունիսի, 1915թ.

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/93.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 6.*

Տրապիզոն, 30 հունիսի. 1915թ.

Կոստանդնուպոլիս

ԼՎՆԵՐԻԿԿԱՆ ՂԵՍԱԿԱՆ

Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Դեռ պահանջատանն ուղղված հունիսի 28-ի հաղորդագրությունից հետո մի ակնհաստեսից տեղեկություն ստացվեց Բայբուրթի և Էրզրումի շրջակայքից վերջերս տեղահանված հայերի սարսափելի տառապանքների մասին: Մի թուրք սալլապան (մահմեդական), որը հենց նոր է վերադարձել Էրզրումից, տեղի հայտնի մի հայ վաճառականի արցունքն աչքերին պատմել է թշվառ վիճակում գտնվող այն 150 հայ կանանց ու երեխաների մասին, որոնց նա հանդիպել է Էրզրումից սաս ժամվա հեռավորության վրա գտնվող մի դաշտում, Աշկալայի մոտ: Նրանցից շատերը համարյա մերկ էին, սոված, շատերի գրկին կային երեխաներ: Թուրքն ասել է. որ տվել է նրանց իր ունեցած ամբողջ գումարը, որպեսզի հաց առնեն, սակայն հասկանալով, որ անկարող է որևէ նշանակալից բան անել նրանց համար և ի վիճակի չլինելով տեսնել նրանց տառապանքները, հեռացել է:

Մի ոստիկան, որը վերջերս է վերադարձել այդ շրջանից, ասում է, որ տեղահանվածները թափառում են անտառներում ու լեռներում, նրանց մի մասը մերկ, պատվազրկված և թալանված: Այսպիսի հանգամանքներում Տրապիզոնի հայերը՝ իմանալով իրավիճակը, լիովին հավատասցած են, որ տեղահանվելու դեպքում իրենց ևս սպասվում են նման տառապանքներ: Հավանաբար նրանց կողարկեն Մոսուլ կամ Էլջիզարե, չնայած փորձ է արվել ստիպել կառավարությանը տեղավորել նրանց Գյումուշհանե, որն այս վիլայեթում է:

Վալին ինձ հաղորդեց, որ որոշվել է բացառություն անել Ծերերի, Այրիների, հղի կանանց ու թուրքական կառավարությունում աշխատող հայերի նկատմամբ, սակայն մյուս բոլորը պետք է արտաքսվեն:

Հունիսի 28-ի երեկոյան ես խորհուրդ տվեցի բժիշկ Զրոֆորովին պարոն Փիթին ուղարկել մի ճեպագիր իր դպրոցի փոքր երեխաների և ուսուցիչների վերաբերյալ և խնդրել նրան փորձել Կոստանդնուպոլսում բացառություն ստանալ նրանց համար, ընդգրկելով. եթե հնարավոր է, ընդհանրապես բոլոր կանանց ու երեխաներին: Խորհուրդ տվեցի նրան հեռագիրն ուղարկել ղեսպանատան միջոցով այն ակնկալիքով, որ հեռագիրը չառգրավվի, և քանի դեռ հաղորդումը չի

հասել դեսպանություն, տեղական իշխանությունների մոտ չստացվի այն տպավորությունը, որ հյուպատոսությունը փորձում է շատ ակտիվորեն միջամտել թուրքական կառավարության և նրա հպատակների ներքին խնդիրներին:

Վալին համաձայնել է տհաճություններ չպատճառել մեր հյուպատոսության հայ թարգմանին և երկու դավազներին:

Իմ գործընկերները՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հյուպատոսները, ամեն կերպ փորձում են այստեղի ներկայացուցչությունների և իրենց ազդեցիկ դեսպանատների միջոցով այս դաժան միջոցառումներում որոշ ձևափոխումներ ձեռք բերել, հատկապես, կանանց ու երեխաների օգտին:

Պատիվ ունե՛՛, պարոն, լինելու Ձեր խոնարհ ծառան,  
ստորագրված՝ Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/93.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries. vol. II, p. 7-8:*

### Փաստաթուղթ թիվ 6

#### ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս, 15 հուլիսի, 1915թ.*

Վաշինգտոն,  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Լրացնելով 1915թ. հուլիսի 13-ի իմ զեկուցագիրը հայերի վիճակի վերաբերյալ, պատիվ ունեմ ներկայելու նույն թեմայով Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսից ստացած զեկուցագրի պատճենահանված օրինակները:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներփակված են՝ օրինակների պատճենները

թվագրված 3 հուլիսի

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/94.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 9.*

Պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Տրապիզոն, 3 հուլիսի, 1915թ.

Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Պատիվ ունեմ հաղորդելու, որ տեղական իշխանությունները շտապ հավաքում են բոլոր հայերին, բացի կաթոլիկ, պաշտոնյա հայերից, ծերերից, այրիներից և հղի կանանցից և ուղարկում են դեպի Գյումուշհանե:

Պարոն և տիկին Քրոֆորդների դպրոց հաճախող երեխաները, մաև այն երեխաները, որոնց այստեղ են թողել տեղահանվածները, տեղավորվել են մի դպրոցում, որը կազմավորվել է մի կոմիտեի միջոցով, որի նախագահը վալին է, տեղապահը՝ հույն միտրոպոլիտը: Այս դպրոցում են տեղավորվում մինչև 15 տարեկան աղջիկ և մինչև 10 տարեկան տղա հայ երեխաները: Այդ տարիքից բարձր երեխաները գնալու են իրենց ծնողների հետ:

Քաղաքի տարբեր մասերում հայաթափման գործընթացը հավանաբար կավարտվի վաղը:

Պատիվ ունեմ լինելու, պարոն, Ձեր խոնարհ ծառան,  
Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

- Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 874.4016/94.
- 2. United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II. p. 10:

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոստանդնուպոլիս. 20 հուլիսի, 1915թ.

Վաշինգտոն,  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Լրացնելով 1915թ. հուլիսի 15-ի իմ զեկուցագիրը հայերի վիճակի վերաբերյալ, պատիվ ունեմ ներփակելու նույն թեմայով Տրապի-

զոնի ամերիկյան հյուպատոսից ստացած զեկուցագրի պատճենահանված օրինակները:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան,  
(ստորագրված) Մորգենթաու

Ներփակված են՝ օրինակների պատճենները  
թվագրված 7 հուլիսի, 1915թ.

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/103.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 11.*

## Փաստաթուղթ թիվ 9

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրասյիզոն, 7 հուլիսի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Անդրադառնալով հունիսի 28-ի, 30-ի և հուլիսի 3-ի հաղորդագրություններին, որոնք վերաբերվում են հայերի տեղափոխմանը Տրասպիզոնից Գյումուշհանե և հուլիսի 3-ի դեպարտամենտին ուղղված իմ հաղորդագրությանը, ոչի կրկնօրինակը ուղարկվել է դեսպանությանը, և վերաբերվում է դավազ չովհաննեսի ինքնասպանությանը, այժմ ուզում եմ հաղորդել, որ Տրասպիզոնի վիլայեթի հայ բնակչությունը հաշվվում է մոտավորապես 36000: Տրասպիզոնում և շրջակա գյուղերում հաշվվում է մոտավորապես 10000 հայ: Վերջին տվյալներով 5200-ն արդեն տեղահանվել են: Երեխաներն, ըստ ծնողների ցանկության, մնացել և տեղավորվել են քաղաքի տարբեր մասերում գտնվող մեծ տներում: Այս տներում, որոնք թուրքերն անվանում են «որբանոցներ», պահվում են մոտավորապես երեք հազար երեխաներ:

Ընդունվում են աղջիկներ մինչև 15 տարեկանը ներառյալ և տղաներ մինչև 10 տարեկան ներառյալ, այս տարիքից մեծերին ստիպում են գնալ ծնողների հետ: Պահվել են մի քանի հայ կանայք և երիտասարդ տիկիներ նորաձիմներին և փոքր երեխաների խնամելու համար: Հաստատությունները հսկվում են ոստիկանների կողմից և յուրաքանչյուր հաստատություն ունի մուղի կամ տնօրեն:

Բժիշկ և տիկին Քրոֆորդներն իրենց դայրոց են քնդունել տեղահանված ծնողների մուտավորապես 300 երեխաների, որոնց մի մասը շատ փոքր են, կան նաև նորածիններ:

Ոյուշ դեպքերում ծնողները թողնում էին փոքր կամ ոսկեղեն երեխաների ծախսերը հոգալու կամ ապահով պահպանության համար: Իհարկե, այս ամենը հակառակ է այն հայտարարության, որ տարածել է կառավարությունը:

Գեներալ նահանգապետը հաղորդել է բժիշկ Քրոֆորդին, որ նրանից պահանջելու են հանձնել երեխաներին, քանի որ կառավարությունը պատրաստ է խնամել նրանց, սակայն մի քանի օրով երեխաներին թողել է, մինչև որ կարգադրություններ կարվեն նրանց տեղահանման վերաբերյալ:

Տեղահանվածների վիճակի մասին շատ անհանգստացնող հաղորդումները հաճախակի են, և եթե դրանց կեսն էլ պարզվի, որ ճշմարիտ է, սարսափելի կլինի:

Պատիվ ունեն լինել պարոն, Չեր խոնարի ծառան,  
ստորագրված՝ Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/103.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 12-13:*

840.1

## Փաստաթուղթ թիվ 10

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս, 26 հուլիսի, 1915թ.*

*Հաշինգտոն,  
Պատվարժան  
Պետական քարտուղար*

Պարոն,

Անդրադառնալով իմ նախորդ զեկուցագրերին, որոնք վերաբերվում են Օսմանյան կայսրության չորսեր մասերի հայ բնակչության դեմ գործադրվող միջոցառումներին, պատիվ ունեն նեփակելու Տրապիզոնի ամերիկյան հյուպատոսի հունիսի 28-ի թվագրությամբ զեկուցագիրը, որտեղ նա ներկայացնում է այդ վայրում տեղահանման

միջոցառումների իրականացման սկիզբը: Զեկուցագրի հետ նա ներփակել է երկու նյութ, որոնց թարգմանությունը ևս ուղարկվում է:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան,  
(ատորագրված) Մորգենթաու

Ներփակված են՝ զեկուցագրի Տրասպիգոնից.

թվագրված 1915թ. հունիսի 28  
ներփակվածների հետ:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/105.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 14.*

## Փաստաթուղթ թիվ 11

Թարգմանություն

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր հայ համաերկրացիները, որոնք օսմանյան ռասայի ազգային տարրերից են, երկար տարիների օտարերկրյա սադրանքների հետևանքով որդեգրելով բազմաթիվ կեղծ գաղափարներ, և որպես արդյունք՝ խանգարելով հասարակական կարգը, հարուցել են արյունահեղություններ և փորձել են խաթարել Օսմանյան կայսրության, իրենց հարևանների խաղաղությունն ու անվտանգությունը, ինչպես նաև իրենց ապահովո թյունն ու շահերը, դեռ ավելին, քանի որ այժմ հայկական կազմակերպությունները համարձակվել են միանալ իրենց մշտական թշնամուն, իսկ ներկա պահին՝ պատերազմում մեր թշնամուն, մեր կառավարությունը ստիպված է դիմել արտակարգ միջոցառումների ու զոհաբերությունների, և՛ երկրում կարգն ու անվտանգությունը, և՛ հենց հայերի գոյատևումն ու հայ համայնքների բարեկեցությունն ապահովելու համար: Հետևաբար, որպես կիրառվող միջոցառում, մինչև պատերազմի ավարտը հայերը ստիպված են լինելու տեղափոխվել վիլայեթների ներքին շրջանները, և այս կարգադրությանը բառացիորեն ենթարկվելը խստագույնս հրամայված է բոլոր օսմաններին.

I. Բոլոր հայերը, բացառությամբ հիվանդների, ըստ գյուղերի և բնակավայրերի, ոստիկանների ուղեկցությամբ պետք է հեռանան տվյալ հայտարարության հրապարակման օրվանից հինգ օրվա ընթացքում:

2. Թեև հայերն, ըստ իրենց ցանկության. կարող են տանել շարժական գույք, նրանց արգելվում է վաճառել իրենց հողային գույքն ու ունեցած-չունեցածը, թողնել այլ մարդկանց մոտ այստեղ կամ այլուր: Քանի որ հայերի տեղափոխումը ժամանակավոր է, նրանց հողային գույքն ու ունեցվածքը, որը նրանք ի վիճակի չեն լինի տանել, կգտնվի կառավարության հսկողության տակ և կպահվի փակ, պահպանվող շենքերում: Ցանկացած մարդ, որ կփորձի, այս կարգին հակառակ, վաճառել կամ այլ կերպ տնօրինել իր շարժական կամ հողային գույքը, կկանգնի դատարանի առաջ: Նրանց թույլատրվում է միայն, ըստ իրենց ցանկության, կառավարությանը վաճառել այն իրերը, որոնք կարող են բավարարել բանակի կարիքները:

3. Այս ճամփորդության ընթացքում նրանց հարմարավետությունն ապահովելու համար պատրաստվել են իջևանատներ և համապատասխան շինություններ, և ամեն ինչ արվել է, որպեսզի հայերն իրենց ժամանակավոր բնակավայրերը հասնեն ապահով, առանց որևէ մեկի կողմից հարձակման կամ վիրավորանքի ենթարկվելու:

4. Հսկիչներն օգտագործելու են իրենց զենքերն այն անձանց դեմ, ովքեր կփորձեն հարձակվել հայերի վրա կամ վիրավորանք հասցնել նրանց կյանքին, պատվին կամ ունեցվածքին, իսկ այդպիսիները, եթե կենդանի բռնվեն, կկանգնեն դատարանի առաջ և մահապատժի կենթարկվեն: Այս միջոցառումը, լինելով սխալ ուղու վրա կանգնած հայերի գործունեության տխուր հետևանք, ոչ մի կերպ չի վերաբերվում մյուս ազգերին: Իսկ վերջիններս, ոչ մի պարագայում և ինչ էլ որ լինի չպետք է միջամտեն այս հարցում:

5. Քանի որ հայերը ստիպված են ենթարկվելու կառավարության այս որոշմանը, և եթե նրանցից ոմանք փորձեն զենք օգտագործել զինվորների կամ ոստիկանների դեմ, վերջիններս կօգտագործեն զենքը ուժի դիմողների դեմ և նրանք կբռնվեն կենդանի, թե մեռած: Նմանապես, նրանք, ովքեր, հակառակ կառավարության որոշմանը, կխուսափեն հեռանալուց և կթաքնվեն, եթե նրանց թաքցնեն կամ ուտելիք տան, և նա, ով կթաքցնի կամ կօգնի հայերին, կկանգնի դատարանի առաջ, որպեսզի մահվան դատապարտվի:

6. Քանի որ հայերին չի թույլատրվում հրազեն կամ կտրող գործիքներ կրել, նրանք իշխանություններին պետք է հանձնեն ցանկացած տեսակի զենքերը՝ ատրճանակները, դաշույնները, ռումբերը և այլն, որոնք նրանք պահում են իրենց բնակության վայրերում կամ այլուր: Կառավարությանը զեկուցվել է մնան զենքերի մասին, և եթե նրանց տերերը սխալ ճանապարհով գնան և չենթարկվեն, իսկ զեն-

քերը հայտնաբերվեն, նրանք կենթարկվեն խիստ պատասխանատվության և կպատժվեն:

7. Պահանջվում են զինվորական և ոստիկանական ուղեկիցներ, որոնց թույլատրվում է զենք օգտագործել և սպանել այն անձանց, ովքեր կվորձեն հարձակվել հայերի վրա կամ վնասել նրանց քաղաքներում, գյուղերում կամ ճանապարհին: Քաղանի կամ այլ նպատակներով:

8. Նրանք, ովքեր պարտք են Օսմանյան բանկին, կարող են բանկի պահեստներում տեղադրել այնքան իր, որ իրենց պարտքը լրանա: Միայն այն դեպքում, երբ կառավարությունը կունենա այդ իրերի կարիքը. զինվորական իշխանություններին կթույլատրվի գնել վերը նշված իրերը՝ դրանց գինը վճարելով: Այլ մարդկանց պարտք ունենալու դեպքում թույլատրվում է թողնել իրերն այս պայմանի համաձայն, սակայն կառավարությունը պետք է համոզվի պարտքի ծագման բնույթում, իսկ այդ նպատակի համար վաճառականի վավերացված մատյանն ամենալավ ապացույցն է:

9. Խոշոր և մանր կենդանիները, որոնք անհմար է տանել, կգնվեն բանակի համար:

10. Վիլայեթի, լևայի, կազայի և նահիեի պաշտոնյաները ճանապարհին պետք է հեարավոր օգնությունը ցույց տան հայերին:

*13/26 հունիսի 1331/1915*

Աղբյուր՝ *1. U. S. State Department Record Group 59, 867.4016/105.*

*2. United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 15-16:*

## Փաստաթուղթ թիվ 13

Թիվ 17

ԱՍԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրասպիզոն, Թուրքիա, 12 հուլիսի, 1915թ.*

Առարկան. Տրասպիզոնի և շրջակայքի հայ բնակչության տեղահանումը

*Վաշինգտոն*

*Պատվարժան պետական քարտուղար*

Պարոն,

Դեպարտամենտի տեղեկատվության համար պատիվ ունեն ներփակելու դեպքանությանն ուղղված հունիսի 28, հուլիսի 3-ի, 7-ի և 10-ի զեկուցագրերի պատճենված օրինակները, որոնք վերաբերվում

են Տրապիզոնի և շրջակայքի հայ բնակչության տեղափոխմանը երկրի ներքին շրջանները: Ներփակված է նաև տեղական կառավարության արած հայտարարության քարգնանությունը և հունիսի 27-ին տեղական թուրքական «Մեշվերեթ» թերթում տպագրված հոդվածը, որոնք երկուսն էլ նշված են դեսպանությանն ուղղված հունիսի 8-ի իմ զեկուցագրում (գործ 840.1), որը վերաբերվում է հայերի տեղահանությանը:

Պատիվ ունեմ լինել, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան,  
ստորագրված՝ Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս  
Ներփակվածը՝ ըստ ասվածի:

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/114.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 18:*

#### Փաստաթուղթ թիվ 14

#### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրապիզոն, Թուրքիա. 10 հուլիսի. 1915թ*

*Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան դեսպան*

*Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Անդրադառնալով դեսպանությանն ուղղված հուլիսի 3-ի իմ հաղորդագրությանը, պատիվ ունեմ այժմ հաղորդելու, որ կաթոլիկ հայերը, ծերերն ու այրիները վերջապես տեղահանվեցին մնացած հայ բնակչության հետ, միակ բացառությունն արվել է կառավարության աշխատակիցների, երեխաների, հղիների ու հիվանդների նկատմամբ: Վերջիններս տեղավորվել են հիվանդանոցներում, որպեսզի արտաքսվեն ապաքինվելուց հետո, երբ ի վիճակի կլինեն քայլելու:

Պարզվում է, որ որոշ արտաքսվածներ հասել են Գյումուշհանե, որտեղից բժիշկ Զրոֆորյը երեկ հեռագիր է ստացել մի հայից, որը հետաքրքրվում է այստեղ թողած իր երեխայի մասին: Թվում է, բազմաթիվ դիակներ գեռը տարել է Տրապիզոն, շատերն էլ կարելի է տեսնել անտառում, ճանապարհի ուղղությամբ: Արտաքսվածների

վիճակը, ինչպես հաղորդում են սայլապաններն ու այլոք, ովքեր ճանապարհին տեսել են արտաքսվածներին, սարսափելի է:

Պատիվ ունեն լինելու, պարոն, Չեր խոնարի ծառան,  
(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/114.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 19.*

## Փաստաթուղթ թիվ 15

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրասլիզոն, 12 հուլիսի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան դեսպան*

*Պատվարժան Հենրի Սնրզեմբաու*

Պարոն,

Պատիվ ունեն հաղորդելու, որ վերջին մի քանի օրվա ընթացքում լուրեր են պտտվում, որ բոլոր թշնամի երկրների քաղաքացիները ևս պետք է արտաքսվեն: Այդ լուրը հաստատում է մի թուրք պաշտոնատար անձ, որը գալտնի կերպով մի քրիստոնյայի հաղորդել է այսպիսի նախագծի քննարկման մասին:

Հայերի քնդիանուր տեղահանությանը միացել են ռուս, պարսիկ և նույնիսկ երկու բուլղարացի հպատակներ, որոնք էլ հնարավոր է, որ առաջացրել են մնացածներին արտաքսելու միտքը:

Թուրքերի տրամադրությունն այժմ այնպիսին է, որ օտարերկրացիների արտաքսումը կարող է վտանգավոր լինել նաև տեղահանվածների համար: Ներկա հանգամանքներում ճամփորդությունը պետք է անցնի ոտքով, առանց ծածկի, ուտելիքի և այլն:

Ես ոչինչ չունեն բարձրաստիճան թուրքերի դեմ, սակայն քանի որ տեղահանվածներին ուղեկցելու են ցածր խավի մարդիկ, սպա արտաքսվածներին երկրի ներքին շրջաններն ուղարկելու դեպքում հնարավոր չի լինի պաշտպանել սառաքցումներից ու վիրավորանքներից:—

Այսպիսի տեղահանությունն, իմ կարծիքով, բոլորովին անտեղի է, որովհետև այս շրջանի օտարերկրացիները խաղաղասեր և օրենքին ենթարկվող մարդիկ են:

Հուսով եմ, որ հանուն մարդասիրության, սա չի կիրառվի, սակայն, եթե այն անխոսափելի է, ապա պետք է արվի կարգին, և չպետք է թույլ տալ. որ այն վերածվի մասսայական կոտորածի:

Վստահ եմ, որ այս խնդրով դեսպանությունը հարմար կգտնի միջամտել Օսմանյան իշխանությունների գործերին: Իշխանությունն այստեղ կարծես Նեյլ բեյի ղեկավարած կոմիտեի ձեռքում է, իսկ նա հրամանները ստանում է Կոստանդնուպոլսից և ոչ թե վալիից:

Պատիվ ունեմ լինելու, պարոն, Ձեր խոնարհ ծառան,  
(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/114.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 20-21.*

### Փաստաթուղթ թիվ 16

Թիվ 403

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս. 18 օգոստոսի, 1915թ.*

*Վաշինգտոն.*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Անդրադառնալով Թուրքիայի հայերի նկատմամբ թուրքական կառավարության վերաբերմունքին վերաբերող նամակագրությանը. պատիվ ունեմ Ձեր տեղեկատվության համար սրանով Ձեզ ուղարկել Տրապիզոնի հյուպատոս Հեյզերից և Հալեպի հյուպատոս Ջեքսոնից ստացած գեկուցագրերի պատճենները, թվագրված, համապատասխանաբար, 28 հուլիսի և 3 օգոստոսի:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան,  
(ստորագրված) Մորգենթաու  
Ներվալկված են՝ ըստ ասվածի:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/126.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 22.*

Փաստաթուղթ թիվ 17

Թիվ 19

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրասպիզոն, Թուրքիա, 29 հուլիսի, 1915թ.*

Առարկան. Տրասպիզոնից հայերի տեղահանումը

*Վաշինգտոն*

*Պատվարժան պետական քարտուղար*

Պարոն,

Դեպարտամենտի տեղեկատվության համար, պատիվ ունեմ ներիսկել դեսպանությանն ուղղված հաղորդագրությունը՝ հայերի տեղահանման վեյաբերյալ:

Համաձայն Սամսունի հյուպատոսության գործակալից ստացված հաղորդագրության, մոտավորապես 5000 հայեր տեղահանվել են Սամսունից, և նրանցից շատերը սպանվի են ենթարկվել ճանապարհին: Մոտավորապես 150 ընտանիքներ հավատավորի են արվել:

Պատիվ ունեմ լինելու, պարոն. Ջեր խոնարի ծառան՝

(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,

Ամերիկյան հյուպատոս

Ներվակվածը՝ ըստ ասվածի:

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/128.*

2 *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II, p. 23.*

Փաստաթուղթ թիվ 18

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրասպիզոն, 28 հուլիսի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան դեսպան*

*Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Ցանկանում եմ գաղտնի գրել Ձեզ այն իրադարձությունների մասին, որ տեղի են ունեցել այստեղ վերջերս: Ես հասկանում եմ, որ մեր հյուպատոսության համար բացարձակ էական է պահպանել լավ հարաբերությունները վալիի և տեղական այլ պաշտոնյաների հետ, հակառակ դեպքում ծառայություն չի մատուցվի, եթե պետք լինի

պաշտպանել հյուպատոսությանը: Կապված մեր մեկուսի դիրքի և տեղի թուլքերի ընդհանուր սրամադրության հետ. որք շատ թշնամական է դրսից եկած ամեն տեսակի առաջարկներին և իրենց ներքին խնդիրներին միջամտելուն, նաև այն զգացումը, որ այժմ նրանք դիրքի տերն են, անհրաժեշտ է դարձնում չավազանց շրջահայաց և խելամիտ լինելը: Այնուամենայնիվ, ինձ թվում է, որ դուք պետք է լիովին տեղեկացված լինեք այն մասին, թե ինչ է տեղի ունենում այստեղ, շնայած, որ այն կարող է ուղղակիորեն մեզ չվերաբերվել լինելով օսմանյան կայսրության և նրա հպատակների խնդիրը:

Շարաթ օրը, հունիսի 26-ին, բոլոր հայերի տեղահանման մասին հայտարարությունը տարածվեց փողոցներում: Հուլիսի 1-ին, հինգշաբթի օրը, բոլոր փողոցները հսկում էին սվիններով զինված ոստիկանները, և հայերին իրենց տներից հանելու գործն սկսվեց: Բեռներն ու կապոցները մեջքներին՝ տղամարդկանց, կանանց ու երեխաների խմբերը հավաքեցին հյուպատոսության մոտ մի փոքրիկ խաչներուկում, և երբ հարյուրին մոտ մարդ հավաքվեց, սվիններով զինված ոստիկանները հյուպատոսության մոտով նրանց բռեցին շուգի ու փոշու միջով Գյումուշհանեի և Էրզրումի ճանապարհի ուղղությամբ: Նրանց պահեցին քաղաքից դուրս մինչև մոտավորապես 2000 հոգու հավաքվելը և հետո բռեցին Գյումուշհանեի ուղղությամբ: Ամենավշտալին կանանց և երեխաների խումբն էր: Այս մարդկանց մի մասը հարուստ և բարեկիրք խավերից էին: Մի մասը սովոր և բարեգոյության և հարմարավետության: Այստեղ կային բոլոր խավերի ներկայացուցիչներ՝ վանականներ, վաճառականներ, բանկիրներ, իրավաբաններ, մեխանիկներ, դերձակներ և այլն: Գեներալ նահանգապետն ինձ ասաց, որ նրանց թույլատրվում է կարգավորել կառքերի հարցը, սակայն, կարծես ոչ որ կարգադրություն չի արել: Ես գիտեմ մի հարուստ վաճառականի, որը 15 լիրա (66 դոլար) էր վճարել մի կառքի համար, որն իրեն ու կնոջը պետք է տաներ Ջեիզլիկ, և երբ նա հասավ այն կայանը, որտեղ նրանք հավաքվում էին Գեյերմենդերեի մոտ քաղաքից 10 լուպեի ճանապարհի վրա, ոստիկանները հրամայեցին նրան դուրս գալ կառքից, որը ետ ուղարկվեց քաղաք: Հենց սկզբից ամբողջ մահմեդական բնակչությունը գիտեր, որ հայերն իրենց ավարն են, և նրանց հետ վերաբերվում էին որպես հանցագործների: Նախ, հայտարարության օրվանից՝ հունիսի 25-ից, ոչ մի հայի չթույլատրվեց վաճառել որևէ իր, և պատժի սպառնալիքով բոլորին արգելեցին (տես՝ հայտարարության տեքստը) գնել նրանցից որևէ իր: Այդ դեպքում, նրանք ինչպե՞ս կարող էին գումար ձեռք բերել ճանվորդության համար: Վեցից ութ ամիս Տրապիզոնում

ոչինչ չէր աշխատել, և մարդիկ կերել էին իրենց խնայողությունները: Այդ դեպքում ինչո՞ւ նրանց արգելվեց վաճառել գորգեր կամ որևէ իր, որը հայերը ստիպված պիտի անեին, որպեսզի ձեռք բերեին ճամփորդության համար անհրաժեշտ գումարը: Շատ մարդիկ, ովքեր իրեր ունեին և կարող էին վաճառել դրանք, եթե նրանց թույլ տրվեր, ստիպված էին ճանապարհ ընկնել ուտրով, առանց գումարի, մեջքներին կրելով այն, ինչ կարող էին հավաքել իրենց տներից: Այսպիսիները, բնականաբար, շուտով այնքան էին թուլանում, որ ետ էին մնում, սլիմահարվում և գեան էին նետվում, իսկ նրանց մարմինները, կամ Տրապիչոնի մոտով գետը բշում տանում էր ծով, կամ կաշում էին գետի ծանծաղ մասերի քարերին, որտեղ 10-12 օր մնալով՝ նեխում էին՝ զզվանք առաջացնելով այն անցորդների մոտ, ովքեր պատահաբար ստիպված էին լինել այդ մասերում: Ես գրուցել եմ ականատեսների հետ, ովքեր պնդում են, որ տեղահանումից 15 օր հետո կարելի էր տեսնել բազմաթիվ մերկ դիակներ կպած գետի ջրասույզ ծառաբներին, իսկ հուտն այդտեղ անտանելի էր:

Հուլիսի 17-ին Գերմանիայի հյուպատոսի հետ ձիով շրջագայելիս մենք հանդիպեցինք երեք թուրքերի, որոնք ավազի մեջ գերեզման էին փորում մի մերկ դիակի համար, որը մենք տեսանք գետի մեջ մոտերքում: Դիակն այնպիսի տեսք ուներ, կարծես ջրում մնացել էր 10 և ավելի օր: Թուրքերն ասացին, որ գետի վերին մասերում հենց նոր թաղել էին ևս չորս դիակ: Մի ուրիշ թուրք էլ ասաց, որ մեր գալուց մի քանի րոպե առաջ մի դիակ էլ ջուրը տարել էր գետն ի վար, դեպի ծով:

Մինչև հուլիսի 6-ը (երեքշաբթի) Տրապիզոնի բոլոր հայկական տները՝ մոտ 1000, դատարկվել են բնակիչներից, որոնք արտաքսվել են: Չէին էլ հարցնում, թե ով էր մեղավոր, ով՝ անմեղ կառավարության դեմ շարժման մեջ: Հայ լինելը բավարար պատճառ էր նրան որպես հանցագործ վերաբերվելու և արտաքսելու համար: Սկզբում, բոլորը պետք է գնային բացի հիվանդներից, որոնց տարան քաղաքային հիվանդանոց մինչև բուժվելը: Հետո բացառություն արվեց ծերերի, հղիների, երեխաների, պաշտոնյա հայերի և կաթոլիկների նկատմամբ: Վերջապետ որոշվեց, որ պետք է գնան նաև ծեփերն ու կաթոլիկները, որոնք արտաքսվեցին վերջում գնացածների ետևից: Տարբեր ժամանակներում բազմաթիվ նավակներ լցվեցին մարդկանցով և տարվեցին Սամսունի ուղղությամբ: Բոլորը հավատացած են, որ այդ մարդիկ ջրասույզ են արվել: Տեղահանումը սկսելուց մի երկու օր առաջ մի մեծ նավակ՝ մարդկանցով լի, որոնք, ըստ երևույթին, հայկական համայնքի անդամներ էին, շարժվեց դեպի Սամսուն: Երկու օր հետո, ոմն Վարդան, որը ռուսահպատակ

էր և մեկն էր նրանցից, որ հեռացել էին նավակով, Տրապիզոն վերադարձավ ցամաքով՝ գլխից ծանր վիրավորված և այնքան խելացնոր, որ ոչ ոք նրան չէր հասկանում: Այն ամենը, որ նա կարողանում էր ասել, «բում-բում»ն էր: Իշխանությունները նրան ձեռքակալեցին և տարան քաղաքային հիվանդանոց, որտեղ էլ հաջորդ օրը նա մահացավ: Մի թուրք պատմեց, որ այդ նավակը Տրապիզոնից ոչ շատ հեռու հանդիպել էր ոստիկաններով լի մի ուրիշ նավակի: Վերջիններս սպանել են հայերին և ծովը նետել: Ոստիկանները կարծել են, թե սպանել են բոլորին, սակայն Վարդանը՝ հսկա և ուժեղ սողամարդ լինելով, միայն վիրավորվել էր և աննկատ վերադարձել ափ: Տղամարդկանցով լի բազմաթիվ այսպիսի նավակներ էին հեռանում Տրապիզոնից, որոնք, սովորաբար, մի քանի ժամ անց վերադառնում էին դատարկ:

Տոցը Տրապիզոնից երկու ժամվա հեռավորության վրա գտնվող մի գյուղ է, որը բնակեցված է Գրիգորյան ու կաթոլիկ հայերով և թուրքերով: Համաձայն մի վստահելի ականատեսի, Պողոս Մերիմյանին՝ մի հարուստ և ազդեցիկ հայի, և նրա երկու որդիներին նստեցրել են մեկը մյուսի ետևից և այնպես են կրակել, որ վամպուշտն անցել է նրանց երեքի միջով: 45 տղամարդկանց և կանանց տարան գյուղից քիչ հեռու գտնվող մի դաշտ: Սկզբում կանայք անարգվեցին ոստիկանական սպաների կողմից, հետո հանձնվեցին ոստիկաններին: Համաձայն այդ վկայի, մի երեխայի սպանել են՝ գլուխը ժայռին խփելով: Բոլոր տղամարդիկ սպանվել են, և այս 45 հոգուց ոչ մի մարդ չի փրկվել: Ասում են, որ Ալիկ Մսրը ֆրանսիական հյուպատոսության թարգմանը, և Տրապիզոնի Paquet S/S ընկերության գործակալն իր մոր և ազգականների հետ, ամառն էին անցկացնում Տոց գյուղում, և եղել են այս խմբում: Պարոն Մսրը երկու տարի առաջ էր ամուսնացել Փարիզում, և այժմ նրա կինն ու քույրը Ռուսաստանում են:

Երեխաներին վրկելու ծրագիրը, համաձայն որի նրանց պետք է տեղավորեին Տրապիզոնի դպրոցներում և որբանոցներում այն կոմիտեի հսկողությամբ, որի կազմակերպողն ու հովանավորը հույն արքեպիսկոպոսն էր, նախագահող՝ վալին, փոխնախագահը՝ արքեպիսկոպոսը, երեքական մահմեդական և քրիստոնյա անդամներով, փլուզվեց, և այժմ աղջիկներին հանձնել են բացառապես մահմեդական ընտանիքներին, որի հետևանքով նրանք ցրվել են: Որբանոցների արգելումն ու երեխաների ցրումը մեծ հիասթափություն էր մեր հյուպատոսության և հույն արքեպիսկոպոսի համար, որը շատ ջանք էր գործադրել այդ ծրագրի իրականացման և վալիին նեցուկ լինելու

համար, սակայն Նեյլ բեյը՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարը, որը դեմ էր այդ ծրագրին, շատ արագ կերպով կարողացավ խափանել այն: Պարզվում է, տղաներից շատերին ուղարկել են Պլատանա՝ հողատերերին բաժանելու համար: Բարետես ավագ տարիքի աղջիկները, որոնք որպես դայակներ պահվել էին որբանոցներում, ապրում են մեծ տներում՝ հրոսակախմբի անդամների զվարճությունների համար: Ես քաջատեղյակ եմ, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներից մեկը քաղաքի կենտրոնի տներից մեկում պահում է ամենագեղեցիկ աղջիկներից տասին՝ իր և ընկերների համար: Փոքր աղջիկներից մի քանիսը տարվել են հարգարժան մահմեդականների ընտանիքները: Ամերիկյան միսիսայի աշակերտների զգալի մասը մահմեդականների ընտանիքներում են միսիսայի հարեանությանը, նրանց այցելել է տիկին Քրոֆորդը, սակայն նրանց մեծ ձաքը, իհարկե, այնքան էլ բախտավոր չէ:

1000 հայկական տների կահ-կարասին մեկը մյուսի ետևից տանում է ոստիկանությունը: Կահույքը, անկողինը և արժեքավոր իրերը պահեստավորվում են քաղաքի մեծ շինություններում: Դասակարգման փորձ չի արվում, և պարզապես ծիծաղելի է այն գաղափարը, որ սեփականությունը պահպանվելու է «հակերով կառավարության հսկողության ներքո, որպեսզի ետ վերադարձվի տերերին՝ նրանց գալուց հետո»: Իրերն իրար վրա են լցվում առանց առանձնացնելու և համակարգելու որևէ փորձի: Թուրք կանանց ու երեխաների ամբողջ գիշատիչների նման հետևում է ոստիկաններին և խլում այն ամեն, ինչի վրա կարող է քաթը դնել: Երբ ոստիկանությունը տանում է առավել արժեքավոր իրերը, նրանք ներխուժում և տանում են մնացածը: Ես ամեն օր ակամատես եմ լինում այսպիսի ներկայացումների: Ենթադրում եմ, որ մի քանի շաբաթից, ամերը դատարկելուց հետո, նրանք կներխուժեն նաև խանութները և պահեստները: Այն հանձնաժողովը, որի ձեռքում է այս գործը, այժմ խոսում է հայերի պարտքերը մարելու նպատակով կահկարասու և սեփականության այս մեծ հավաքածուների վաճառքի մասին: Գերմանիայի հյուպատոսն ինձ ասաց, որ չի հավատում, թե հայերին կթուղասարվի վերադառնալ Տրապիզոն, նույնիսկ պատերազմի ավարտից հետո:

Հսկայական նախիրները, որ, անկասկած բանակի համար, հայերից էին հավաքվել գյուղերում, զինվորները քշելով տարան Տրապիզոնի միջով:

Ռուսական, պարսկական և բուլղարական անձնագրեր ունեցող հայերը՝ բոլորն էլ արտաքսվեցին, անկախ նրանց օգտին եղած երաշխավորագրերի: Արաբյանները, որ ունեին Բրիտանիայի հովանավորությունը, նույնպես արտաքսվեցին: Չոն Արաբյանը՝ տեղի

բրիտանական հյուպատոսության թարգմանը, արտաքսվեց այն ամենով, ինչ կարողացավ տանել ձեռքով:

Եթե զինվորները չէին կարողանում ուտելիք գտնել Էրզրումի ճանապարհին, իսկ ասում են, որ շատերն են սովից մահացել, ինչպես կարող էին 6000-10000 հայեր հուսալ որ սնունդ կհարեն իրենց համար այն դեպքում, երբ նրանց հսկում էին մահմեդականները որպես իրենց օրինական ավարը:

Ես հենց նոր խոսում էի մի երիտասարդի հետ. որն իր ծառայությունն է կատարում «Իշահատ թաբուրի»-ում (շինարարական գնդում), որն աշխատում է Գյումուշհանե տանող ճանապարհին: Նա ինձ ասաց, որ 15 օր առաջ բոլոր հայերը, թվով 180 հոգի, առանձնացվեցին մյուս աշխատողներից և քայլով ճամբարից հեռացվեցին ու գնդակահարվեցին: Նա նշեց, որ լսել էր հրացանների համազարկը և հետագայում այն մարդկանց թվում էր, որոնց ուղարկել էին դիակները թաղելու: Նա ասաց նաև, որ դիակները մերկ էին, քանի որ հագուստները հանել էին:

Վերջերս բազմաթիվ կանանց ու երեխաների դիակներ են ավի շպրտվել Տրապիզոնի իտալական վանքի պատերի տակ և հույն կանայք թաղել են դրանք ավազներում այնտեղ, որտեղ գտել են:

Հյուպատոսարանի պատուհանից տեսա մի դիակ, որն ավի շպրտվեց այն մասի մոտերքում, որտեղ լողանում են թուրք երեխաները: Դիակը մի պարանով կապվեց և տարվեց բաց ծով:

Մի թուրք ջեմուլմեն, որը Տրապիզոնում կառավարական պաշտոնյա է, բավական անկեղծորեն և շատ հուզված իր անհանգստությունն է արտահայտել վոլխիյուպատոսին Տրապիզոնի հայերի նկատմամբ ցուցաբերվող սարսափելի անմարդկային վերաբերմունքի մասին:

Այլ մանրամասներ էլ կարելի է ավելացնել հայերի հանդեպ կիրառվող զազանությունների վերաբերյալ, սակայն դժվար է հավաստել այն բոլոր պատմությունները, որ լսում ենք, և ես սահմանափակվում եմ նրանցով. որոնք հավատում են. որ ճշմարիտ են:

Պատիվ ունեն լինելու, պարոն, Չեր խոնարհ ծառան,

(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,

Ամերիկյան հյուպատոս

840.1

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59. 867.4016/128.

2. United States Official Documents on the Armenian Genocide.

Compiled and introduced by Ara Sarafian, *The Peripheries*, vol. II. p. 24-28.

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻՐՄԱՆԵՐԻ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

*Ամերիկյան հյուպատոս (ստորագրված) Օսկար Հեյզելից*

*Ամերիկյան հյուպատոսություն  
Տրապիզոն, Թուրքիա, 5 օգոստոսի, 1915թ.*

Տրապիզոնում զեներալ նահանգապետի կողմից կազմվել է մի հանձնաժողով՝ նահանգից արտաքսված հայ ազգաբնակչության ունեցվածքի բռնագրավման և վաճառքի նպատակով: Հայերի դեմ հայց ունեցողները հրավիրվում են ներկայացնելու այն հանձնաժողովին, որպեսզի ստուգվի, և եթե պարզվի, որ ամեն ինչ կարգին է, հայցը կգրանցվի: Տրապիզոնում կային բազմաթիվ հայ վաճառականներ և առևտրական գործակալներ, որոնց մի մասը խոշոր առևտրական գործարքներ ունեին Եվրոպայի և Անգլիայի հետ: Անհավատալի է, որ ամերիկյան ֆիրմաները դքևե կարևոր հայց ունենան: Եթե այնուամենայնիվ, լինի որևէ հայց, այն պետք է ցուցակագրված հողվածով պատշաճ կերպով երաշխավորված լինի նոտարի կողմից և հաստատված լինի Ամերիկայում Թուրքիայի հյուպատոսի կողմից: Հայցը կարելի է ուղարկել տեղի հյուպատոսությանը, որպեսզի այն ներկայացվի հանձնաժողովին:

- Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/142.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 30.*

(հատված Տրապիզոնից եկած նամակից)  
ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրապիզոն, 8 օգոստոսի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան Հենրի Սյոզենբաում*

Պարոն,  
Բժ. Բրոֆորդը գրել է ինձ հետևյալը.  
«Շատ կցանկանայի, որպեսզի պարոն Փիթը տեղյակ լինի հետևյալ փաստերին: Երբ մեր հարևանները (թուրքերը, հույները ու հայերը) քեցին իրենց տները՝ ձմեռը գյուղերում անցկացնելու հա-

մար (ռմբակոծություններից հետո), նրանք, ապահով պահպանության համար, միախոներական շենքում թողեցին գումար, տնային իրեր և քանկարժեք գարդեր:

Կառավարությունը զավթեց հայերի թողածները հունիսի վերջին հայերի տեղահանումից հետո:

Հրամանի հրապարակման օրվանից մինչև հայերի տեղահանման օրն ընկած ժամանակահատվածում բազմաթիվ հայեր եկան և խնդրեցին մեզ ընդունել իրենց երեխաներին: Մենք ընդունեցինք, հուսալով, որ մեզ կբույստորեն պահել, դաստիարակել և կրթել այդ երեխաներին: Մեզ թույլատրեցին մի քանի օր պահել նրանց, սակայն հուլիսի 1-ին եկան կառավարության պաշտոնյաները և երեխաներին մեզնից պահանջեցին:

Ծնողները թողել էին մեծ ու փոքր չափերի զգալի գումար՝ իրենց երեխաներին պահելու համար: Դժբախտաբար, քանի որ նրանք շատ էին շտապում, և հաճախ շատերը միաժամանակ էին գալիս, ես հասցնում էի միայն փոքրիկ պայուսակների կամ քաշկինակների վրա պիտակներ կապել՝ գրանցելով հանձնողների անունները:

Սակայն մինչև ես ժամանակ ունեցա այս գումարներից շատերը հաշվելու և ցուցակը կազմելու համար, ուստի կանությունը (և կառավարության կողմից նշանակված հանձնաժողովը) եկավ և բռնագրավեց այն:

Այնուամենայնիվ, կան այլ գումարներ, որոնք ինձ մոտ են թողնվել ձեռնան ու գարնանը, մի մասն էլ հունիսի վերջին օրերի ընթացքում: Քանի որ գումար թողնողները վախեցան ստացականներ վերցնել, թողեցին միայն ցուցումներ գումարների բաշխման վերաբերյալ: Այդ ժամանակ չպատկերացնելով որևէ դժվարություն, ես պայմանավորվեցի նրանց հետ, որ նրանք կարող են հեռագրել ինձ, որպեսզի ես գումարն ուղարկեմ միախոներների միջոցով այնտեղ, որտեղ կան միախոներներ, կամ Օսմանյան բանկի կամ Ռեջիի միջոցով:

Սակայն, մինչև նրանցից որևէ մեկը կգրեր կամ կհեռագրեր գումարի համար, ես զգացի, որ իմ կողմից գումարն ուղարկելու որևէ փորձ կարող էր հանգեցնել դրա բռնագրավմանը: Այդ իսկ պատճառով ես ստիպված էի ժխտական պատասխանել, երբ խոսքը վերաբերվում էր այստեղից որևէ բան ուղարկելուն: Սակայն ես հեռագրել եմ պարոն Փիթին՝ խնդրելով նրան որևէ բան ուղարկել Կարմիր Խաչի ֆոնդից: Ամենից լավը կլինի այն, որ այստեղ չիմանան, որ ես գումար ունեմ ձեռքիս տակ: Այդ բնույթիցների ինչպես մաս թուրքական ընտանիքներ վերցված իրենց երեխաների համար ավելի լավ

կլինի համարել (քանի որ շատ դեպքերում ճիշտ է), որ իրենց գումարներն ինձնից վերցրել են: Հետագայում ես ուզում եմ, որ եթե որևէ բան ուղարկվի երկրի ներքին շրջաններում գտնվող մարդկանց, լինի «Կարմիր Խաչի» անունից: Այդ ընթացքում պարոն Փիթը, որպես կանոն, կարող է «Կարմիր Խաչի» դրամական փոխանցումները պահանջել ինձնից, գերադասելի է առանց անուններ նշելու՝ միայն անդրադառնալով որոշակի օրերի իմ խնդրագրերին:

Սա տեղին է, ինչպես նաև հարմարավետ: Որոշ դեպքերում գումարը կուղարկվի այնտեղ, որտեղ իրականում մուտք արած գումար չկա: Ի հավելումն դրան, համարյա բոլոր դեպքերում, ինձ ասել են, որ եթե որոշ ժամանակ հետո գումարի որևէ հայցվոր չգտնվի, այն կծախսվի բարեգործական կամ այլ նպատակների համար, ինչպես մենք այդ պահին ավելի հարմար կգտնենք:

Վստահ եմ, որ դուք յի վիճակի կլինեք հաղորդելու այս վաաստերը պարոն Փիթին: (Մտորագրված է) Լ. Ս. Զրոֆորդ

Պատիվ ունեմ լինելու, պարոն, և այլև, և այլև  
(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

360/840.1

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers. Reel 7/667.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 31-32.*

## Փաստաթուղթ թիվ 23

Թարգմանություն հունարենից

ԴԵԿՐԵՏ ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ՇՐՋԱՆ ՏՐԱՊԻՁՈՆԻ ՍԱՍԻՆ

Թիվ 17

*Տրասլիզոն, 30 հուլիսի/12 օգոստոսի. 1916թ.*

Տրասլիզոնի շրջանն այժմ ռուսական կառավարության ենթակայության տակ է, և այս պահից այն ամբողջովին ենթարկվում է նրա օրենքներին:

Ռուսական օրենքները թույլ չեն տալիս հարձակումներ (վիրավորանքներ), հասկապես, կողոպուտներ ու արտաքսումներ բնակչության հանդեպ, ինչ ազգության էլ նրանք պատկանեն:

Հույները, հայերը և թուրքերը, դառնալով Ռուսաստանի հպատակներ, ռուսական հողում ունեն հավասար իրավունքներ:

Այդ իսկ պատճառով նախօրոք նշում են, որ թշնամությունները պետք է ընդմիջտ դադարեն և նա, ով չի ենթարկվի սրան և իմ հրամանին, կողոպտողներն ու արտաքսողներն անմիջապես ու խիստ կպատժվեն: Ես կաքսորեմ նրանց Սիբիր կամ կներկայացնեմ վիճվորական դատարանին, որը. հավանաբար, նրանց մահվան կդատապարտի:

Հրամայում են ձեզ բոլոր տարածայնություններն ու անհաշտությունները լուծել խաղաղությամբ: Այս շրջանում նշանակված է կառավարիչ, որը կհետաքննի նման դեպքերը, և որին կարող եք դիմել կարիքի դեպքում:

\* \* \*

Տրապիզոնում մահմեդական կրոնի համաձայն թույլատրում են ծառայություն մատուցել թուրքերի կառուցած մզկիթներում: Մզկիթներն ու դրանց ունեցվածքը կհսկվի ոստիկանության կողմից: Արգելում են մահմեդական կրոնի համաձայն ծառայություն մատուցել այն մզկիթներում, որոնք եղել են քրիստոնեական եկեղեցիներ. որը կհիմնավորվի հնագիտական հետազոտություններով: Այս մզկիթների պահպանության ընդհանուր հսկողությունը դրված է կրտսեր լեյտենանտ պարոն Մինջլովի վրա, որը գործող կառավարիչն է:

Հրապարակում են մզկիթների փոխված քրիստոնեական եկեղեցիների ցուցակը.

1. Սբ. Սոֆիա (սբ. Սոֆիայի եկեղեցի և վանք)
2. Ենի Ջումա (սբ. Եվգենիայի եկեղեցի և վանք)
3. Օրտա Հիսար (Ռսկեգլուխ կույսի եկեղեցի)
4. Սբ. Ֆիլիպ (սբ. Ֆիլիպի եկեղեցի)
5. Ջեյթիմլիկ Ջամի (եկեղեցի, անունն անհայտ)
6. Կարապետ Ջամի (Ջերտ Սլա կույս) Լեոնդոկաստրո ծովափին
7. Իսմայիլ Պապա (կարելի է տեսնել վիճագրությունը). ամրոցի Դ-երե թաղամասում:

*Գեներալ մայոր Շվարց*

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59. 867.00/790.

2. United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II. p. 36-37.

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Բաղդադ, Միջագետք, 11 ապրիլի, 1919թ.*

Առարկան. Տրապիզոնում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ներկայացուցիչ Նեյլ բեյի հանցագործությունները

*«Լաշինգտոն*

*Պատվարժան պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ ղեկարտամենտին հաղորդելու, որ 1915թ. Տրապիզոնում իմ տեղակայման ժամանակ հայ ազգաբնակչությունը ամբողջովին տեղահանվեց և մեծ մասամբ կոտորվեց Էլ-Ջեզիրե տանող ճանապարհին: Ոմն Նեյլ բեյ Լսքի Շեքիրից ուղարկվեց Տրապիզոն, որպես «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ներկայացուցիչ, հսկելու համար, որպեսզի հայերի տեղահանումն ու բնաջնջումն անվերապահորեն ի կատար ածվի: Տրապիզոնի գեներալ նահանգապետը Ջեմալ Ազմի բեյն էր, որը հույն արքեպիսկոպոսի հետ ձեռնարկել էր 15 տարեկանից փոքր աղջիկների և 10 տարեկանից փոքր տղաների խնամքն ու կրթությունը Տրապիզոնի տներում: Մոտավորապես 3000 երեխաներ տեղավորեցին դատարկ տներում, իսկ այդպիսիք շատ էին, և հայ ուսուցիչներ ու դայակներ պահվեցին: Տներից մեկում էին զանվում մաս Տրապիզոնում ամերիկյան միսիոներական դպրոցի երեք ուսուցիչներ:

Այս ծրագիրը ձեռնառու չէր Նեյլ բեյին, և տաս օրվա մեջ նա հայտարարեց, որ ցանկացած մահմեդական, ով կուզենա աղջիկներ կամ տղաներ վերցնել, կարող է դիմել այդ տներին, և շատ-շատ երեխաներ վերցվեցին: Նա ինքն չնտրեց տաս ամենագեղեցիկ աղջիկների և պահեց նրանց մի տան մեջ՝ իր հաճույքների և ընկերների զվարճությունների համար: Երեխաներից շատերը լցվեցին նավակները և տարվեցին բաց ծով ու նետվեցին ջուրը:

Ես ինքս եմ տեսել այն տեղը, որտեղ ափ էին նետվել 16 դիակներ, որոնց թաղեց մի հույն կին խալալական վանքի մոտ:

Մի քանի շաբաթ անց Նեյլ բեյը վերադարձավ Լսկի-Շեքիրի իր տունը՝ բեռնավորված ոսկով ու զարդեղենով, որը թալանի նրա բաժինն էր: Այս սարդու դաժանությունն ու մարդասիրական զգացմունքների բացակայությունը շատ ուշագրավ են, և եթե հայերի կոտորածների ոճրագործներից որևէ մեկը կանգնի զինվորական դա-

տարանի առաջ դատավարության և պատժի համար, ես անկեղծորեն հավատացած եմ. որ այս հրեշը չի խուսափի: Տրապիզոնի իտալական վանքի վանահայրն ու քահանաները, ինչպես նաև հույն արքեպիսկոպոսը, անկասկած, կարող են արժեքավոր վկայություններ տալ նրա հանցագործությունների վերաբերյալ:

Պատիվ ունեմ լինելու, պարոն, Չեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Օսկար Մ. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/411.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 38-39.*

### Փաստաթուղթ թիվ 25

10 հուլիսի, 1919թ.

Փարիզ

Խաղաղության կոնֆերանսին  
Միացյալ Նահանգների միսիս

Պարոններ,

Սրանով ներկայացված ուղարկվում է Բաղդադի ամերիկյան հյուպատոսի 1919թ. ապրիլի 11-ի թիվ 169 գեկուցագիրը, որը վերաբերվում է «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի Տրապիզոնի ներկայացուցիչ Նաել Բեյի հանցագործություններին:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Չեր խոնարի ծառան՝

(կնիքված) Ֆրանկ Լ. Պոլկ,

գործող պետական քարտուղար

Ներկայացված է՝ թիվ 169 գեկուցագիրը Բաղդադից,  
թվագրված 11 ապրիլի, 1919թ.

867.4016/411

NE

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/411.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries. vol. II, p. 40.*

Փաստաթուղթ թիվ 26

Թիվ 545

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոստանդնուպոլիս, 20 հոկտեմբերի, 1915թ.

Վաշինգտոն,

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ դեպարտամենտի տեղեկատվության համար ուղարկել Տրապիզոնի հյուպատոսի զեկուցագիրը, որ վերաբերում է օսմանյան պարտատոմսերի վարչությունում հայ աշխատակից, տեսուչ պարոն Բեյլիջյանի, նրա կնոջ, որդու և ծառայի ենթադրյալ սպանությանը: Դեպքն աստուհն այսօր հեռագիր ստացավ պարոն Հեյզերից, մի հայտարարությամբ, որով հաստատում է իր զեկուցագրում ներկայացված փաստերը:

Պատիվ ունեմ ինելու, պարոն,

Ձեր խոնարի ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու,

Ներվիակված՝ Մորգենթաուին

Հեյզերից, 25 սեպտեմբերի, 1915թ.:

703

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.4016/210.

2. United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries. vol. II. p. 41.

Փաստաթուղթ թիվ 27

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Տրապիզոն, 25 սեպտեմբերի, 1915թ.

Կոստանդնուպոլիս

Ամերիկյան դեսպան

Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Պատիվ ունեմ հայտնելու դեսպանության սեպտեմբերի 22-ի հեռագիր ցուցումները ստանալու մասին, որով հետաքրքրվում եք պարտատոմսերի տեսուչ պարոն Բեյլիջյանի և նրա ընտանիքի մասին, որոնք այստեղից օգոստոսի 13-ին մեկնեցին մոտորամակվով

Կոստանդնուպոլիս, և հուսով էին Կոստանդնուպոլիս հասնել մեկ շաբաթից:

Պարոն Բեյլիզյանը, որը հայերի տեղահանումն սկսելուց կարճ ժամանակ անց տեղափոխվել էր Էրզրումից Տրապիզոն, վեսիկա ստացավ՝ իր ընտանիքի հետ Տրապիզոնում մնալու և որպես տեսուչ իր աշխատանքը շարունակելու համար: Մակայն օգոստոսի 13-ին նա ձերբակալվեց, և նրան ասացին, որ տեղափոխվելու է երկրի ներքին շրջանները: Նա Վանից վեսիկա վերցրեց Կոստանդնուպոլիս գնալու համար կնոջ ու 12 տարեկան տղայի և հայ ծառայի հետ, որոնց բերել էր Էրզրումից: Նա նախօրոք 100 լիրա էր վճարել մոտորանավով Կոստանդնուպոլիս գնալու համար: Ձեկուցում են, որ երեք օրից մոտորանավակը վերադարձավ, բերելով երկու ժանդարմներին, որոնք զոռով գնացել էին Բեյլիզյանի հետ: Այդ ժանդարմներից մեկը պատմում էր շուկայում, որ նրանց բոլորին Տրապիզոնից ոչ հեռու սպանել ու նետել են ջուրը:

Պատիվ ունեմ լինելու, պարոն, Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Օսկար Մ. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

703

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/210.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II. p. 42.*

## Փաստաթուղթ թիվ 28

Պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրապիզոն. 25 սեպտեմբերի, 1915թ.*

Կոստանդնուպոլիս

Ամերիկյան դեսպան

Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Պատիվ ունեմ զեկուցելու, որ օգոստոսի 10-ին ստացա դեսպանության թիվ 44 հեռագիր ցուցումները, որտեղ ասվում էր.

«Ստեփիլթոնը խնդրում է, որ այցելեք նրան Էրզրումում: Ես թույլատրում եմ ձեզ այդպես վարվել, եթե կարող եք: Մեկնելիս հեռագրեք»: Ես անմիջապես ամեն ինչ կարգավորեցի և Տրապիզոնից դուրս եկա ձիով օգոստոսի 12-ին դավազ Ահմեդի, մի կատերջու, որը

տանում էր իմ ճամփորդական իրերը, գեներալ նահանգապետի նշանակված երկու ժանդարմների ուղեկցությամբ: Ես Էրզրում հասա օգոստոսի 17-ի կեսգիշերին, և ինձ թույլատրեցին քաղաքի դարպասփյց ներս մտնել՝ կայագորի հրամանատարի հետ բանակցելուց հետո:

Երկու ամերիկյան ընտանիքներին լավ տեսա: Պատվարժան Ռոբերտ Ս. Ստեփյոնը՝ ամերիկյան դպրոցների տնօրենը և միսիոներական գանձապահը, ապրում է Տղաների դպրոցի շենքի վերևի հարկում կնոջ և երկու դուստրերի հետ: Ներքևի մասը օգտագործվում է Կարմիր Մահիկ հիվանդանոցի կողմից թեթև վիրավորների կամ առողջացող զինվորների համար և օգնություն է ցույց տալիս միջինը 75 հիվանդի: Բժիշկ Զեյսը և նրա կինն ու երկու փոքր երեխաներն ապրում են հիվանդանոցի շենքի վերևի մասում, ներքևի մասն օգտագործվում է մոտավորապես 30 հիվանդի համար Կարմիր Մահիկի հիվանդանոցի կողմից: Աղջիկների դպրոցի շենքը, բացառությամբ երկու սենյակների, որոնք պատկանում են ուսուցիչներին և փակված են, նույնպես օգտագործվում է Կարմիր Մահիկ հիվանդանոցի կողմից թեթև վիրավորների համար և կարող է օգնել միջինը 200 հիվանդի: Այս երեք հիանալի շենքերը նույն փողոցի վրա են՝ 100 յարդ հեռավորությամբ: Նրանց վրա ծածանվում է Կարմիր Մահիկի դրոշը, ուրբաթ և տոն օրերին երևում է նաև թուրքական դրոշը Աղջիկների դպրոցի շենքի կտուրին, շնայած շենքն ամբողջովին, բացառությամբ վերը նշված երկու սենյակների, նախատեսված է Կարմիր Մահիկի աշխատանքների համար: Մյուս երկու շենքերի վրա, որոնք մասամբ զբաղեցված են ամերիկացիների կողմից որպես բնակարան, կիրակի և տոն օրերին ծածանվում է ամերիկյան դրոշը Կարմիր Մահիկի դրոշի հեռ միասին, և այժմ ամերիկյան դրոշի վերաբերյալ կայծեա իշխանությունները որևէ խնդիր չեն առաջացնում:

Պատվելի Ստեփյոնի և բժիշկ Զեյսի հետ ես այցելեցի գեներալ նահանգապետին, որը մեզ շատ լավ ընդունեց: Նա ինձ տեղեկացրեց, որ գեկուցազիր և ստացել զինվորական իշխանություններից այն մասին, որ ռուսները զբաղելով Վանը, քանդել են քաղաքի բոլոր շենքերը, ներառյալ ամերիկյան, այն նպատակով, որպեսզի թուրքական բանակը ձմռանը պատասպարվելու տեղ չունենա: Ռուսները հեռանալով ամերիկացիներին տարել են Ռուսաստան: Այս տեղեկությունը ես դեպի Ռուսաստանն եմ հեռագրել հետևյալ բովանդակությամբ. «Ձեկուցվում է, որ Վանից նահանջելիս՝ ռուսները քանդել են բոլոր ամերիկյան շենքերը, ամերիկացիներն այժմ Ռուսաստանում են»:

Նա ինձ տեղեկացրեց նաև, որ Բիթլիսի բոլոր ամերիկացիները գնացել են Դիարբեքիր:

Վլային ասաց, որ Էրզրումից հայերի տեղահանման հրամանները կատարելիս նա ջանք չի խնայել ճանապարհին հայերին պաշտպանելու համար և նրանց 15 օր է տվել իրենց իրերը տնօրինելու և մեկնելուն նախապատրաստվելու համար: Նրանց չի արգելվել վաճառել կամ բաժանել իրենց ունեցվածքը, և շատ ընտանիքներ գնացել են հինգ և ավելի եզմեր լծված սայլերով՝ բռնված ունեցվածքով և մթերքով: Այս հաստատում են միսիոներները:

150 հայեր թողել են տարբեր իրերի 900 հակեր պատվելի Ստեփլթոնի տանն ապահով պահպանության համար: Մոտավորապես 500 հակ էլ կա բժիշկ Քեյսի տանն ու ախոռում: Այդ հակերի արժեքը, ըստ պարոն Ստեփլթոնի, գնահատվում է 10000-15000 լիրա: Նա իր տանն ունի ամերիկյան մի չիրկիզվող պահարան, որը պատկանում է միսիային և անգլիական արտադրության երկու չիրկիզվող պահարան, որոնք թողել են վաճառականները: Դրանք նա լցրել է թղթադրամ և արծաթյա ռուբլիներով և զարդեղենով, որը թողել են հայերը ապահով պահպանության համար: Ստեփլթոնը ոչ մի ստացական չի տվել և չի ստանձնել որևէ պատասխանատվություն: Հայերի թողած ոսկին 5559 լիրա է, և այդ գումարից 5000 լիրա հեռագրով ուղարկվել է պարոն Փիթին՝ Էրզրումի օսմանյան կայսերական բանկի միջոցով: Սակայն, բանկը հրաժարվել է ռուբլիները փոխանցել, և այսպիսով, դրանք մնացել են չիրկիզվող պահարաններում այնպես, ինչպես ընդունվել են, այսինքն, թաշկինակների կամ փոքր կապոցների մեջ: Հետագայում այս բոլոր կապոցները բացվեցին, և կազմվեց ցուցակ, որտեղ գրանցվեց յուրաքանչյուր կապոցի պարունակությունը: Ռուբլի թղթադրամները և զարդերը հետո դրվեցին մետաղյա տուփերի մեջ, կնքվեցին միսիայի կնիքով և սրվեցին պահպանության օսմանյան կայսերական բանկում պարոն Ստեփլթոնի անունով:

Գումարը հետևյալն է.

թղթադրամ – 35929 ռուբլի

արծաթ – 4446 ռուբլի

ոսկի – 465 ռուբլի,

22 ֆունտ ստերլինգ, 17 նապալտն:

Ավանդներում ընդգրկված են նաև հետևյալ պարտատոմսերը.

23 օսմանյան կայսերական պարտատոմսեր – 400 ֆրանկի

12 եգիպտական կրեդիտ թղթեր – 250 ֆրանկի

18 Օսմանյան առևտրական ընկերության թղթեր – 5 ֆրանկի:

Այս կապոցներում շատ կային Նյու Յորքի Կյանքի ապահովագրության ընկերության ապահովագրական վկայականներ. որոնց

համար կկազմվի առանձին ցուցակ: Կային նաև տան ու հողի ակտեր, մուրհակներ և այլ արժեքավոր բոլոր, որոնք, անկասկած, այժմ կորցրել են իրենց արժեքը:

Էրզրումի Հայկական գրիգորյան տաճարը և Հայկական կաթոլիկ եկեղեցին լցված են տարբեր տեսակի իրերով, որոնք նախքան տեղահանումը հայերը հանձնել էին օսմանյան կախերական բանկին: Այս իրերը հանձնված էին բանկին, իսկ բանալիները բանկի տնօրինության տակ էին: Բանկի կառավարիչ պարոն Պիեռ Բալադուրն ինձ գաղտնի ասաց, որ գլխավոր մասնաճյուղի ցուցումների համաձայն նա հրաժարվել է բանալիները տալ տեղական ռատիկանական իշխանություններին, որոնք փորձում էին ձեռք բերել այդ իրերը, որոնց արժեքն անցնում է 100000 լիբալից:

Պարոն Բալադուրն օգոստոսի վերջին մեկնեց Էրզրումից Սմիրնա և հուսով է շուսով գեկուցագիր ներկայացնել Կոստանդնուպոլսի կենտրոնական գրասենյակին:

Պարոն Ստեփյոնը կլործի պահել հայերի բողոքները: Նա արդեն, օգոստոսյան տեսքով, հայերին փոխ է տվել մոտ 1000 լիբա սայլեր գներու և ուղևորությանը նախապատրաստվելու համար: Նա այս փաստն օգտագործելու է որպես հիմք այն դեպքում, եթե կառավարությունը ստիպի նրան, ասելով, որ հայց ունի հայերի դեմ:

Էրզրումի վալին տեղեկացրեց, որ Կոստանդնուպոլսից ցուցումներ է ստացել բողոքականներին և կաթոլիկներին թույլ տալու մնալ այնտեղ, որտեղ գտնվում են այս պահին: Պատվելի Ստեփյոնի արժանավոր ուսուցիչներից մեկին՝ Նդիշեին, որոշ ժամանակ առաջ տարել էին զինվորական ծառայության, և նա աշխատում էր Էրզրումի մոտերքում՝ ճանաչյալիներին: Պարոն Ստեփյոնին նա պետք էր որպես թարգմանիչ, թանի որ ինքը թուրքերեն շատ քիչ գիտեր: Վալին խոստացավ ինձ քաղաքում մնալու վեսիկա տալ պրն. Նդիշեին, եթե մուծվի բանակից ազատվելու հարկը: Ես հետամուտ եղա այս գործին և պարոն Նդիշեին տեսա Տրապիզոնի ճանապարհին Իլիջայում՝ Էրզրումից երեք ժամվա հեռավորության վրա, և նրան հանձնեցի վեսիկա, որով նա կարող էր վերադառնալ Էրզրում և մնալ այնտեղ:

Ես վալիին խնդրեցի վերադարձնել նաև մի ուրիշ բողոքական ուսուցչի, որը ենթադրաբար Նրզնկայում էր, սակայն վալին հրաժարվեց թույլատրել, ասելով, որ կարգը նրանց չի թողնում վերադառնալ, նրանք միայն կարող են մնալ այնտեղ, որտեղ գտնվում են: Այն դեպքում, երբ նրան արդեն ուղարկել են, նա չի կարող ետ կանչվել:

Պարոն Ստեփլթոնի տանն այժմ կա 20 հայ, որոնցից չորսը կանայք են, մնացածը աղջիկներ:

Դոկտոր Քեյսն իր տանը պահում էր վեց հայ, երբ մեկնեց Էրզրումից: Սրանցից չորսը գնացին պարոն Ստեփլթոնի մոտ. մեկին բժիշկ Քեյսն իր հետ տանում է Կոստանդնուպոլիս, մեկին էլ հուսով է թողնել Մարզվանի հիվանդանոցում՝ սովորելու: Վալին հաստուկ թույլտվություն է տվել այդ երկու աղջիկներին՝ բժիշկ Քեյսի հետ ճամփորդելու համար և նրան հանձնել է նաև մի նամակ. որը քարձր է գնահատում թուրքական սպաների համար հիվանդանոցում նրա կատարած գործերը:

Պարոն Ստեփլթոնի հարաբերությունները վալիի հետ լավ են, դեռ ավելին, վալին՝ Թեշին բեյը, որը մի քանի տարի առաջ Պերայի մուտասերիֆն էր, մեծ տպավորություն թողեց որպես շատ գիտակից մարդ, որն ուզում է ճիշտ վարվել և լավ հարաբերություններ պահպանել հայերի հետ: Ոստիկանապետը կուպիտ մարդ է և չափազանց դեմ է հայերին, այսպես նա բացեիքաց ասաց ինձ: Եթե վալին նրան հսկողության տակ չպահեր. Էրզրումի հայերի համար ամեն ինչ շատ ավելի վատ կլիներ: Ոստիկանապետն ինձ ասաց, որ մի քանի տարի առաջ նա եղել է Ադանայի մուտասերիֆը, այնտեղ նրան դուր էր եկել: Ես հասկացա, որ նա այնտեղ է եղել հայերի հետ տեղի ունեցած միջադեպի ժամանակ: Ես հարցրեցի, թե արդյո՞ք նա ճանաչում էր Ադանայի պատվելի Վ. Ն. Չեմբրսին: Նա պատասխանեց, որ ոչ, սակայն ես այն տպավորությունն ստացա, որ նա պատվելուն ճանաչում էր շատ ավելի լավ, քան կցանկանար: Ես հանդգլված եմ, որ պարոն Չեմբրսն է Բրիտանական դեսպանության միջոցով ապահովել նրա հեռացումն Ադանայից՝ նրա կատարած անմարդկային առարքների պատճառով:

Ես խորհուրդ տվեցի պարոն Ստեփլթոնին կապ պահել վալիի հետ. կարծում եմ, այնքան գիտակից կլինի, որքան նրան թույլ կտան իր իրավունքները:

Պատիվ ունեն լինելու, պարոն, Չեր խոնարի ծառան  
(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

360

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers. Reel 7/718.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries. vol. II. p. 43-46.*

Օրինակ Պետական դեպարտամենտի համար

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Տրասպիզոն. 14 հոկտեմբերի. 1915թ.*

*Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան դեսպան*

*Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Անդրադառնալով դեսպանության օգոստոսի 30-ի թիվ 51 հեռագրի ցուցումներին և հոկտեմբերի 1-ի իմ պատասխանին, որը վերաբերվում է բոլոր բողոքականներին ու կաթոլիկներին տեղահանությունից ազատելուն. պատիվ ունեմ հաղորդելու Ձեզ, որ Տրասպիզոնում կա մի կլին՝ ծագումով իտալացի, Կարոլինա Լափանդելա անունով, որի ամուսինը հայ էր (օսմանյան հպատակ): Ենթադրվում է, որ նրա ամուսինն այժմ մահացած է, քանի որ տեղահանվել էր, և այդ կլինն այժմ ուզում է վերականգնել իր իտալական քաղաքակացիությունը: Նրան պահում են որպես բանտարկյալ Կարմիր Մահիկի հիվանդանոցում տիկին Շաքարջյանի հետ, որը հոկտեմբերի 1-ի իմ հաղորդման մեջ նշված բողոքական կլինն է: Ես խնդրեցի վալիին ազատել այդ կնոջն այն կիմքով, որ նախ նա հայ չէ և երկրորդ, որ կաթոլիկ է: Նա ասաց, որ մի քանի բողոքականների ու կաթոլիկների մասին նա գրել է Բարձր Դռանը և կարծում է, որ ժամանակին նրանք ազատ կարձակվեն: Սակայն ես հակված եմ այն կարծիքին, որ սա հարցից գլուխն ազատելու մի ձև է, և նա կանանց ազատելու որևէ մտադրություն չունի: Վլեյին, նա մերժեց առանց Բարձր Դռանն ուղղված դիմումի և սուլթանի գրավոր հրամանագրի թույլտրվություն տալ իտալացի կնոջը վերականգնել իր իտալական քաղաքացիությունը: Սակայն ինձ ասացին, որ այսպիսի հարցերում դա անհրաժեշտ պայման չէ:

Մինչև վերը նշվածի մասին գրելն ինձ ասացին, որ տիկին Շաքարջյանին տեղափոխել են տեղի մաքսատան գլխավոր տնօրենի՝ Բեսիմ Էֆենդու, տուն: Վերջինս «ուրբանոցից» վերցրել էր այդ կնոջ երեխաներից մեկին այն ժամանակ, երբ երեխաներին ցրում էին մահմեդականների ընտանիքների միջև: Ինձ թվում է, նրան այնտեղ կլինամեն, և նա կլինի իր երեխայի հետ, սակայն նա ազատություն չի ստացել և, փաստորեն, բանտարկյալ է, ինչպես նաև բոլոր բողոքական ու կաթոլիկ կանայք ու երեխաները, որ մնացել են այս

քաղաքում: Դեսպանության թիվ 51 հեռագրի ցուցումների իմաստն, ըստ իս, այն է, որ տեղահանման հրամանը չի տարածվելու կաթոլիկների ու բողոքականների վրա, սակայն տեղական իշխանություններն իմ ասածները չեն ընդունում: Ես գիտեմ բողոքական չորս փոքրիկ աղջիկների, որ ապրում են ամերիկյան դպրոցի մոտ բնակվող մահմեդական ընտանիքներում: Նրանց անունները փոխել են և այժմ նրանց հետ վերաբերվում են որպես մահմեդականների: Նման վիճակում կան նաև շատ ուրիշները:

Պատիվ ունեմ լինելու, պարոն, Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Օսկար Ս. Հեյզեր,  
Ամերիկյան հյուպատոս

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/224.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 47-48.*

### Փաստաթուղթ թիվ 30

Թիվ 566

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոստանդնուպոլիս, 26 հոկտեմբերի, 1915թ.

Վաշինգտոն,

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ուղարկելու Սամսունի ամերիկյան հյուպատոսության գործակալի զեկուցագրի թարգմանությունը, թվագրված 1915թ. օգոստոսի 26, որը վերաբերվում է նրա ուղևորությանը Մարզվան, տեղի իրավիճակին և հատուկ անդրադառնում է այդ շրջանի հայերի տեղահանությանը:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու,  
Ներփակվածը, ըստ ասվածի:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.401 '220.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 49.*

ԱՄՆՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

*Սամաուն. Թուրքիա. 26 օգոստոսի. 1915թ.*

Չերոյ գերագանցություն,

Հաստատելով սույն ամսվա 12-ի զեկուցագիրը, պատիվ ունեն հաստատելու, որ ինչպես արդեն հեռագրել եմ, սույն ամսվա 14-ին կրկին գնացի Մարզվան, որտեղից վերադարձա 24-ին:

Ինչպես արդեն հեռագրվել է, սույն ամսվա 10-ին, այսինքն, իմ մեկնումից անմիջապես հետո, թուրքական կառավարությունը 31 եզմերով լծված սայլերով տարավ քոլեջի և հիվանդանոցի հայերի մի մասին:

Այս ջենտլմեններին ցուցում էր տրված թույլ չտալ թուրքերին կամայականություններ անել. և ինչպես դուք կիմանաք բժիշկ Ուայթի նամակից, մարտիկանց տարել են բռնությամբ: Բացի դրանից, Աղջիկների դպրոցից նրանք տարել են 63 հոգու:

Ինչպես ասվում է բժիշկ Ուայթի նամակում, քոլեջի իրավաբանն ասել է, որ այդ մարդկանց, հավանաբար, ազատ կարձակեն, եթե գայմազամին կամ ոստիկանապետին տրվի 2/300 լիրա: Սակայն, քանի որ ես չեի կարող քոլեջի փոխարեն հավանություն տալ այսպիսի գործերին, սույն ամսվա 13-ին հեռագիր ուղարկեցի ձեզ՝ զեկուցելով Մարզվանի իշխանությունների գործողությունների մասին:

Կարծես գայմազամը. ոստիկանապետն ու Բելեդի-Ռեյսը գումարի բաժանման հարցում չկարողացան համաձայնության գալ, այնպես որ գայմազամը, չհամարձակվեց ամերիկացիներից գումար վերցնել, իսկ այդ միջոցին աղջիկներին տեղափոխեցին:

Փորձ արվեց աղջիկներին հավատափոխել իսլամի, սակայն քանի որ նրանք հրաժարվեցին փոխել իրենց հավատը, ուղարկվեցին Ամասիա: Միս Գեյջը, Ուիլարդը և բժիշկ Ուայթը նրանց հետ գնացին Ամասիա: Այնտեղ նրանց երեքին թույլ չտվեցին քաղաք մտնել, և նրանք ստիպված կ'են բացօթյա ճամբարում մնալ:

Մուսուսներին արգելեց ամերիկացիներին Ամասիայից ավելի հեռու գնալ այն պատրվակով, որ Մարզվանում տրված վեսիկաներն արժեք չունեն: Նրանք վերադարձան Մարզվան: Ես նրանց խորհուրդ տվեցի վեսիկա վերցնել գայմազամից՝ Սվազ գնալու համար, ասելով, որ պետք է աշխատեն տեղի ամերիկյան միսիայի համար:

Սույն ամսվա 16-ին դրա փորձն արվեց, սակայն գայմագամը չհավատաց պատճառաբանությանը, ասելով, որ Սվազ գնալու մասին որոշում կարող է կայացնել միայն Ամասիայի մուտաստերիֆը: Սույն ամսվա 16-ին միսս Գեյջն ու միսս Ռիլարդը կրկին գնացին Ամասիա:

Սկզբում նրանց չհաջողվեց Ամասիայում տեսնել մուտաստերիֆին, այսպիսով, նրանք այցելեցին հարեն, ուր նա հետո եկավ: Աղջիկներին հաջողվեց խոստամ կորզել նրանից, որ նա կխնդրի Սվազի վալիին թույլատրություն տալ: Այսպիսով, ճամփորդությունը վերջապես թույլատրվեց:

Միսս Գեյջը և Ռիլարդը կհասնեն Սվազ 63 աղջիկների հետ միաժամանակ և կփորձեն վալիից աղջիկներին ուղեկցելու թույլտվություն ստանալ:

Աղջիկներին ուղեկցում է քոլեջի ծառաներից մեկը, որը հեռագրով տեղեկացնում է իրենց հասած յուրաքանչյուր վայրի մասին:

Կասկածում եմ, որ միսս Գեյջին և Ռիլարդին երբևէ կհաջողվի թույլտվություն ստանալ վալիից, քանի որ այդ բոլոր աղջիկները 12-18 տարեկան են և նրանք անշուշտ կբաժանվեն Սվազի, Մալաթիայի և այլ քաղաքների թուրք ընտանիքներին:

Քոլեջում և հիվանդանոցում մնացել են ընդամենը հիսուններկու հոգի: Ես նրանց անունների ցուցակը տվել եմ գայմագամին (կրկնօրինակը ներվակված է), խնդրելով նրանց տալ վեսիկաներ, որպեսզի նրանց չանհանգստացնեն: Գայմագամն այդ ցուցակն ուղարկեց Սվազի վալիին, և հեռանալուց առաջ ինձ սուսց, որ այդ մարդկանց ամեն դեպքում կթույլատրվի մնալ: Ես, սակայն, համոզված եմ, որ տեղի կունենա հակառակը, քանի որ սա եվյուսյական հաստատություն է. իսկ կյանքը շատ դժվար են դարձրել այս մարդկանց համար: Նրանց պետք է հեռացնեին դեռևս 18-ին կամ 19-ին, սակայն իմ ներկայությունը խանգարեց այդ գործին:

Երեկ ես հեռագրով խնդրել էի ձեզ թույլտվություն ձեռք բերել մնացած հայերի համար, որպեսզի նրանք մնան տեղում, որովհետև, հակառակ դեպքում բժիշկ Ուորդոնը ստիպված կլինի փակել հիվանդանոցը, քանի որ չի կարող աշխատել առանց դեղագործի և բուժքույրերի:

Իմ կարծիքով, կառավարության գործողությունների հետևանքով ոչ մի օտարերկրյա միսիս չի կարողանա գործել Թուրքիայում, որովհետև առանց քրիստոնյաների աշխատել հնարավոր չէ:

Ամերիկացիները համոզված են, որ եթե իրենց հետ աշխատող բոլոր հայերն արտաքսվեն, իրենք ևս ստիպված կլինեն մեկնել

Ամերիկա. և այդ դեպքում ո՞վ կարող է երաշխավորել իրենց ունեցվածքի համար: Ես նրանց սասացի, որ ինչպես ասված է Մարգվան ուղարկված իմ նամակի ներվաակված օրինակում, առնվազն երկու բնուսանիք պետք է մնա, որպեսզի հսկի միսիայի ունեցվածքը, քանի որ ավելի քան 75000 լիրայի ներդրում կա այդ հաստատություններում: Համենայն դեպս, ես խնդրեցի միսիոներներին գույքացուցակ ուղարկել ինձ և ձեզ համար:

Եթե այս մարդիկ իրոք մտադիր են մեկնել Ամերիկա, խնդրում եմ տեղեկացնել ինձ, թե ինչ անել քոլեջի և հիվանդանոցի հետ, և թե արդյո՞ք ես պետք է 4 կամ 5 պահակ նշանակեմ այնտեղ, կամ թե ինչ պետք է ձեռնարկեմ: Ենթադրում եմ, որ ամերիկացիները կլքեն այդ հաստատությունը, և ես կցանկանայի ամեն դեպքում ցուցումներ ստանալ խնդրի վերաբերյալ: Առանց քոլեջի հիվանդանոցը գործել չի կարող, քանի որ երկուսն էլ աշխատում են նույն նպատակով:

Անդրադառնալով սույն ամսվա 12-ի հեռագրին, ուզում եմ զեկուցել, որ Էմիլեր փաշան նույնը հեռագրե է Մարգվանի Էմին բեյին (սա խխտ գաղտնի է). խնդրելով նրան հետևել գործին և անմիջապես իրեն տեղեկություն հաղորդել: Էմին բեյը քոլեջից տեղեկություն ստացավ. և դեռ այնտեղ գտնվող երեք հայերից, ովքեր իրենց բաժինն ունեին 275 լիրայում. վերցրեց հետևյալ ստացականները.

Սյիիրան Գաղլյան – 15 լիրա

Պողոս Փիրանյան – 5 լիրա

Սիւսակ Իսպիրյան – 5 լիրա

Մյուս հայերը, ովքեր նույնպես գումար էին տվել, այսինքն, պրոֆեսոր Մանիազյանը, պրոֆեսոր Գահլյանը, Նիզարյանը, Հակոբյանը, Միրաբյանը, Քոչարյանը, Ներսը, Գյուրեկյանը, այլևս այնտեղ չէին, քանի որ արդեն ուղարկվել էին երկրի ներքին շրջանները:

Էմին բեյը վերցրեց ստացականներ այլ մարդկանցից և հեռագիր ուղարկեց Կոստանդնուպոլիս: Քանի որ 275 լիրան վճարել էին հայերը, ես հեռագրեցի ձեզ խնդրելու, որ սպասեք իմ այսօրվա նամակին. որովհետև իմ սույն ամսվա հունիսի 12-ի զեկուցագրում ես գրել էի, որ ամերիկացիները փոխ էին տվել այդ գումարը, սակայն սա սխալմունք էր: Բացի դրանից, խնդրում եմ չնշեք Էմին բեյի անունը, որն ինձ տվել է այս տեղեկությունները, սակայն եթե ուղարկվի հանձնաժողով, նա պատրաստ է, ինչպես միշտ, հաստատել այս փաստերը: Էմին բեյը հայտարարեց նաև, որ հանձնաժողովի նշանակման դեպքում մուֆթին և թաքահուս Բին Բաշին նույնպես պատրաստ են ասելու այն ամենն, ինչ գիտեն:

Մարզվանում դեռևս մնացել են մի քանի հայեր, որոնք թաքնվում են, նաև նրանք, ովքեր հարել են խլամին, սակայն սրանք էլ, անկասկած, կվտարվեն այն բանից հետո. երբ նրանցից կխլեն ամբողջ ունեցվածքը:

Երեկ ես այցելեցի գայմագամին, և նա ինձ շատ լավ ընդունեց: Ինչպես հաղորդել եմ սույն ամսվա 12-ին, գնացի նաև Աթաբեյ:

Վստահելի աղբյուրից ես գիտեմ, որ Մամսունից մինչև Ամասիա հայերի հետ ոչ մի անախորժություն չի պատահել: Մուտասերիֆը շատ բարի էր և խիստ ցուցումներ էր տվել ոստիկաններին, ահաբեկելով նրանց խիստ պատժել հայերի հետ վատ վերաբերվելու դեպքում: Նա նույնիսկ խնդրել էր ոստիկանական հրամանատարին՝ Լաթիֆ բեյին, ուղեկցել հայերին Գավակի մոտ գնալիս: Վերջինս շատ բարի էր հայերի հանդեպ, իսկ հայերն էլ շատ շնորհակալ են և նրանից, և՛ մուտասերիֆից:

Ամասիայիում կանանց առանձնացրեցին տղամարդկանցից, որոնց կապկպեցին հինգ հոգանոց խմբերով և տարան գիշերով, թե ուր ոչ ոք չգիտե:

Ամասիայի մոտ կա մի ջրհոր, որի մեջ պետք է որ լինի 50-60 դիակ. մոտերքում գտնվել են պատռված շորերի, ֆեսերի թերթերի կույտեր. թերթերի մի մասը հավաքվել է. դրանցից մի քանի կտոր կգտնեք ներփակված, որը կարող է լավ վկայություն լինել: Ամասիայից ոչ հեռու կա մոտ 400 հոգու մի ընդհանուր գերեզման:

Պետական փոխառությունների գրասենյակի մի տեսուչ, ոմն Արդիթի, գաղտնի ճամփորդել է երկրի ներքին շրջաններում և տվել է ինձ խնդրի վերաբերյալ հետևյալ մանրամասները.

1) Մամսունի, Ամասիայի, Մարզվանի բնակիչները բոլորն էլ եկել են Ամասիա: Հետո տղամարդկանց առանձնացրել են, կապկպել և նրանցից մի քանիսը սպանվել են Ամասիայի, Թոխատի և Թրջալի միջև: Բոլոր նրանք, ովքեր հասան Թոխատ, ուղարկվեցին Չիֆլիկ կամ Գիշգիշա և սպանվեցին: Կանանց ու երեխաներին եզներ լծված սայլերով տարան Շարգըշա, հետո ուղարկեցին Մալաթիա և, վերջապես, նրանց նետեցին Կրկզեշիդը կամ Եփրատը:

2) Թոխատ. նույնը ինչ վերը նշվածը. միայն այն տարբերությամբ, որ բոլոր գեղեցիկ կանանց ու երեխաներին տարան թուրքերի սուները:

3) Արբա, Նիքար, Մեսուդիե. տղամարդիկ կապվեցին գիշերվա ընթացքում, և հետո մի մասը նետվեց Կելկիտ գետը: Մյուսները սպանվեցին Թոխատի մոտ: Կանայք ու երեխաները Շարգըշայի,

Մալաթիայի ճանապարհով անցնելով, ունեցան նույն ճակատագիրը, ինչ առաջին խումբը:

4) Շարգըշլա, Գամրակ, Ազիզիե, Գորուն, Դարանդա. բոլորին ոտքով ուղարկեցին Մալաթիա, ունեցան նույն ճակատագիրը:

5) Սվազ, Դերիկ, Ղանդալ. եզներ լծված սալլերով մարդկանց տարան Ղանդալ, հետո բոլորը ոտքով՝ Մալաթիա, տղամարդիկ սպանվեցին ճանապարհին, նույն ճակատագիրը:

6) Ակն, Արաբկիր, Քեբան, Խարբերդ, Մալաթիա. նույն ճակատագիրը:

7) Գարահիսար, Մուշեիրի, Ջառա, Չավիկ. բոլորը սպանվեցին:

8) Երզնկա, Ղամիշ. մի մասը սպանվեց, մյուսները՝ նետվեցին Եփրատը:

Դերսիմի քրդական ավազակախմբերը գործի են անցել Մալաթիայում: Համաձայն տեսչի, բոլոր հայերը սպանվել են: Համոզված եմ, որ բոլոր տղամարդիկ սպանված են, սակայն կանանց ու երեխաներին բաժանել են ներքին շրջանների թուրքական ընտանիքների միջև: Ոչ մի հայ չի երևում:

Ես շատ էի ուզում գնալ Աթաբեյ և Ամասիա, որպեսզի ինքս տեսնեի, թե ինչ էր կատարվում, սակայն գայմագամն աչքը վրաս է պահում: Ես չգիտեմ, թե՞ կարելի է հավատալ այն ամենին, ինչ լսում եմք, և բավականին տարօրինակ է, որ երկրի ներքին շրջաններում աշխատող իմ ընկերներից ոչ մեկը չի զեկուցում ինձ այս մասին:

Մաղամ Հովհաննիսյանը ներկայանում է որպես ամերիկյան հպատակ: Նրա ամուսինն արդեն 20 տարի ապրում է Մասաչուսեթս նահանգի Հելերվիլ քաղաքի Լոքըստ փողոցի թիվ 20 տանը: Զանի որ այդ կինը փաստաթղթեր չունի, ես խնդրում եմ Ձեզ դիմել նախարարությանը, որպեսզի այստեղի մուտասերիֆին ցուցումներ տա վեսիկայի վերաբերյալ, և այդ կինը մեկնի Ամերիկա:

Խնդրում եմ տեղեկացնել ինձ, արդյոք Մարզվանում իմ ճամփորդության ծախսերը պետք է հոգա քոլեջը, թե՞ պետական դեպարտամենտը:

Ես, և այլն, և այլն.

ստորագրված Ու. Պիտեր:

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59, 867.4016/220.

2. United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 50-54.

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

*Սամսոն, Թուրքիա, 10 հուլիսի. 1915թ.*

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ձերոյ գերազանցություն,

Պատիվ ունեմ անդրադառնալու նախորդ ամսվա 27-ի իմ գեկու-  
ցագրին:

Մինչև այժմ մոտավորապես 150 ընտանիքներ դավանափոխվել  
են իսլամի, իսկ մյուսներն ուղարկվել են երկրի ներքին շրջանները:  
Սամսունում կար մոտ 5000 հայ: Նրանց տեղափոխեցին շատ վատ  
պայմաններում, այսինքն, կառքեր չկային, կանայք ու երեխաներն  
անջատվեցին ընտանիքների գլխավորից և նրանց տեղավորեցին  
սայլերի մեջ: Մի խոսքով, սարսափելի էր:

Մուտասերիֆն ասաց, որ նույնիսկ դավանափոխվածները չեն  
կարող մնալ այստեղ և պետք է գնան Տրապիզոն, Կերասուն, Մարզ-  
վան, Բաֆրա, Ֆաթգա և այլն: Թուրքերը ջանք չեն խնայում դա-  
վանափախման գործում:

Հեռացողների մեծ մասն այժմ ուզում են հետևել 150 դավանա-  
փոխված ընտանիքների օրինակին, սակայն այժմ, կարծես, արդեն  
շատ ուշ է, թուրքերը հրաժարվել են նրանց ետ բերել, չնայած որ  
հայերը հարում են իսլամին:

Ինձ ասել են, որ երկրի ներքին շրջաններում կազմել են հայ  
տղամարդկանց խմբեր, և որ նրանց բոլորին սպանել են գյուղացի-  
ները: Կանանց ու երեխաների նկատմամբ կկիրառվեն այնպիսի դա-  
ժան միջոցառումներ, որ նրանք կմեռնեն սովից, ծարավից և հիաս-  
թափությունից: Սա մի ահավոր կոտորած է, որը հիշեցնում է այն  
ժամանակները, երբ Կուուտանդուուպոլսի բոլոր շները հավաքվեցին և  
ուղարկվեցին ոչնչանալու մի կղզում:

Հայերի սեփական տները, ինչպես նաև խանութներն ու պա-  
հեստները կնքվել են կառավարության կողմից. բայց թուրքերն սկսել  
են այս տների մեծ մասը լցնել գաղթականներով, որոնք այստեղից  
կգողանան ամեն ինչ:

Սենք չգիտենք, թե ինչ կանի կառավարությունը պարտքերի և  
այլ հարցերի վերաբերյալ: Մուտասերիֆն ինձ խոստացել է, ու:  
կնշանակի մի հանձնաժողով, որը կորոշի եղած պարտքերը, սակայն  
ոչինչ չի հայտնաբերվիլ, քանի դեռ հանձնաժողովը չի կազմվել:

Այդ տներից է Հոչստրասեր ընկերությունը (Շվեյցարիա), որը Ամերիկայի հովանավորության տակ է, և բավականին գումար ունի ստանալու հայ վաճառականներից: Այդ պարտքերի ցուցակը ես տվել եմ մուտասերիֆին: Այնուամենայնիվ, լավ կլինի, եթե Ձերո՞ գերազանցությունն անհրաժեշտ քայլեր ձեռնարկի, որպեսզի նախարարությունը խիստ ցուցումներ տա տեղի մոխտասերիֆին՝ ամերիկացիների շահերը պաշտպանելու վերաբերյալ: Այս հարցի մասին ես հարցուփորձ եմ արել Գերմանիայի և Ավստրիայի հյուպատոսներին, սակայն ներկա պայմաններում բավարար ոչինչ չի կարելի ձեռք բերել, քանի դեռ ղեկավարությունը չի ճնշել տեղի իշխանություններին:

Ես հատկապես շնորհակալ կլինեմ Ձերո՞ գերազանցությանը, եթե միջամտեք Կարապետ Մսրյան և Պողոսյան ընտանիքների ազատման գործում: Վերջինս Միսակ Մսրյանի որդիների տան տնօրենն է: Մենք ուզում ենք, որ նրանք վերադառնան: Մսրյանը չափազանց ազնիվ մարդ է և երբեք ոչ մի խնդիր չի ունեցել ոստիկանության հետ, այնպես որ ես պատրաստ եմ երաշխավորել նրա համար: Զանի որ կառավարությունն արդեն ներել է երկու հայերի, մեծ հույս ունեմ, որ Ձերո՞ գերազանցությանը կհաջողվի ձեռք բերել նույն շնորհը նաև իմ նշած երկու հարգարժան ընտանիքների համար, հաջողության դեպքում, անհրաժեշտ է ցուցումներ տալ մուտասերիֆին հեռագրով:

Նախօրոք շնորհակալ եմ, հավատացեք և այլն:  
(ստորագրված) Ու. Պիտեր

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers. Reel 7/619.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 56-57.*

### Փաստաթուղթ թիվ 33

Թիվ 805

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոտտանդնուպոլիս. 4 հունվարի, 1916թ.

Վաշինգտոն,

Պատվարժան

Պատասկան քաղաքապետ

Պարոն,

Պատիվ ունեմ սրանով ուղարկելու Սամսունի ամերիկյան հյուպատոսական գործակալի 1915թ. դեկտեմբերի 4-ի գեկուցագիրը, որտեղ գեկուցում է այդ շրջանի հայերի վիճակի մասին:

Պատիվ ունեն լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու  
Ներվիակված՝ ըստ ասվածի:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/259.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide.*  
*Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 58.*

Փաստաթուղթ թիվ 35

Թիվ 355

Թարգմանություն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆ

*Սամսոն, Թուրքիա. 4 դեկտեմբերի. 1915թ.*

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ձերդ գերագանցություն,

Անդրադառնալով իմ նախորդ հաղորդումներին, պատիվ ունեն տեղեկացնելու Ձեզ, որ տեղի մուտասերիֆը՝ Նեջմի բեյը, տեղափոխվել է Անգորա, որպես վալիի տեղակալ և այժմ սպասվում է. որ Սինոպից նոր մուտասերիֆ կգա:

Նեջմի բեյը հեռացավ անցյալ շաբաթ, և այդ պահից ի վեր այստեղ ու այնտեղ թաքնված հայ կանայք սկսեցին երևալ:

Նախորդ մուտասերիֆն ինձ դեմ էր, քանի որ ես երկու անգամ գնացել էի Մարզվան, իսկ հայկական հարցի վերաբերյալ իմ ցուցաբերած հետաքրքրության պատճառով շատ ավելի էր զայրացած ինձ վրա, ու հեռանալիս չայցելեց ինձ, մի փաստ, որի նկատմամբ ես բացարձակ անտարբեր եմ:

Հեռանալուց առաջ մի քանի հայեր ինձ հանձնեցին գումար, զարդեղեն և այլն, և ես ժամանակ առ ժամանակ հեռագրեր եմ ստանում տեղահանվածներից կամ Համայի, Կանդալի և այլ վայրերի նրանց ընտանիքներից՝ փողի մասին:

Թուրքերը ոչինչ չգիտեն այդ ավանդների մասին, սակայն, հավանաբար, կկասկածեն հեռագրերից, և կկատաղեն:

Ես հեռու պիտի լինեմ Թուրքիայի ներքին խնդիրներին խառնվելուց, սակայն, ներկա պայմաններում, ուր թալանն ու սպանություններն են տիրում, մարդ պետք է փրկի այն, ինչ հնարավոր է:

Այն հեռագրերը, որտեղ ժամանակին ասվում էր, որ բողոքականներն ու կաթոլիկները կարող են մնալ, դիտավորյալ պահվեցին, քանի որ թուրքերի համար ցանկալի էր հայերին բնաջնջել միանգամից:

Ինչ վերաբերվում է տեղի տղամարդկանց, կարող են լինել միայն մի քանիսը, որոնք ընդունել են իսլամը:

Թուրքիան, ընդհանրապես, կազմակերպվածության ու տաղանդի հարցերում չի կարող լինել առաջին շարքերում, սակայն այս դեպքում, երբ հարցը վերաբերվում էր կոտորածին, քալանին և այլն, այն ցուցաբերեց լավ ծրագրված և շատ արագ գործողություն:

Միայն թուրքն է ի վիճակի կարճ ժամանակում հարյուր հազարավոր մարդկանց այն աշխարհին ուղարկել:

Խնդրում եմ, Ձերդ գերազանցություն, ընդունել իմ մեծ հարգանքի հավաստումը:

(ստորագրված) Ու. Պիտեր

Նորին գերազանցությանը

Սիացյալ Նահանգների դեսպան

Հ. Մորգենթաուին,

և այլն, և այլն,

Կոստանդնուպոլիս

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/259.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 62-63.*

## Փաստաթուղթ թիվ 36

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Թուրքիա, Կոստանդնուպոլիս, 10 նոյեմբերի, 1915թ.*

Առարկան. Ադրիանապոլսի ամերիկյան հյուպատոսական գործակալի գեկուցագիրն այդ նահանգի ոչ մուսուլման բնակչության վիճակի մասին

*Վաշինգտոն*

*Պատվարժան պետական ջարտուղար*

Պարոն,

Գեպարտամենտի տեղեկատվության համար, պատիվ ունեմ, ուղարկել Ադրիանապոլսի ամերիկյան հյուպատոսության գործակալ Չարլզ Է. Ալլենի թիվ 47 գեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է այդ վիլայեթի ոչ մուսուլման բնակչության վիճակին, տեղական իշ-

խանությունների ջանքերին իրեն մեկուսացնելու և տիրող իրավիճակի մասին տեղեկություններ ձեռք բերելուն խոչընդոտելուն: Այս հարողորգության օրինակն ըստ կարգի ուղարկվել է Կոստանդնուպոլիս՝ ամերիկյան դեսպանությանը:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(առանց ստորագրության)

Գլխավոր հյուպատոս:

Ներփակված է՝ թիվ 47 գեկուցագրի օրինակը,

23 հոկտեմբերի, 1915թ. թվագրությամբ:

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/227.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries. vol. II, p. 64.*

### Փաստաթուղթ թիվ 37

Թիվ 47

#### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

*Աղբյուրանապոյիս, Թուրքիա, 23 հոկտեմբերի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան գլխավոր հյուպատոս*

*Էսկվայր, Ջ. Բի Ռավնոյալ*

Պարոն,

Պատիվ ունեմ գեկուցելու, որ ժամանակավոր նոր օրենքը, որը նախատեսում է նշված ժամկետում ծառայության չներկայացած դասալիքների ընտանիքների արտաքսում, ուժի մեջ կմտնի և ամենայն խստությամբ կվերաբերվի այս վիլայեթի ոչ մուսուլման բնակիչներին, հատկապես հույներին:

Այս վիլայեթի հույն բնակչությունը ներկայումս վաթսուն հազար է, և հազիվ թե լինի մի ընտանիք, որի մեկ կամ մի քանի անդամները լքած չլինեն երկիրը՝ ծառայությունից խուսափելու համար: Դասալիքների մեծ մասը կամ Հունաստանում են, կամ Միացյալ Նահանգներում, չափազանց հեռու նշված ժամկետում վերադառնալու համար, եթե նույնիսկ հնարավոր լիներ, և եթե նույնիսկ նրանք ցանկություն ունենային գալ զինվորական ծառայության, որն ավելի անտանելի է, քան ստրկությունը, քանի որ այն նշանակում է աշխատանք ոչ մուսուլման զորակոչիկների համար, ովքեր ծագել են բնակչու-

թյան ամենագրագետ և ամենահարուստ տարրերից անսովոր ֆիզիկական աշխատանքին: Օրենքը տարածվում է նաև հրեաների ու հայերի վրա, ավելի քիչ չափով այն վերաբերվում է հրեաներին, քանի որ Օսմանյան կառավարությունը վերջիններիս ավելի լավ է վերաբերվում, քան հույներին ու հայերին, որովհետև նրանց թիվը վիսյեթում սահմանափակ է:

Սա վիլայեթի ոչ մուսուլման տարրերին հասած յոթախտություններից մեկն է, և եթե օրենքը գործի ճշտորեն, ապա ոչ մուսուլմանները կվտարվեն այս վիլայեթից: Բալկանյան պատերազմներից երկիրը բալանվել էր, իսկ գյուղատնտեսությունն ու առևտուրը, որ բացառապես ոչ մուսուլմանների ձեռքում էր, ժամանակավորապես ավիրվել և ճշտապես վնասվել էր: Ներկա պատերազմը, բերելով այն ինչ բերեց, այսինքն. երկրի շրջափակում, հետևաբար, և առևտրի մահ, բոլոր ունակ և ոչ ունակ տղամարդկանց գորակոչ, և ամեն ինչի բռնագրավում, անկախ նրանից այն կարելի էր օգտագործել բանակի կարիքների համար, թե ոչ, կրկին իր թափն առավ ոչ մուսուլման բնակիչներից: Եթե նույնիսկ այդ մարդիկ մնային իրենց տներում, նրանց չանհանգստացնել և չհարկեր կառավարությունը, ապա այդ դեպքում էլ նրանք իրենց օրվա հացը յոթվարությամբ կգտնեին և հինգ տարում չէին կարողանա հաղթահարել այն յոթվարությունները, որոնցով անցել էին: Հակառակ այս ամենին, այս օրենքը նախատեսում է այս տառապած մարդկանցից խլել նույնիսկ այն ինչ շունեն և նրանց ուղարկել թափառելու անձանոթ երկրում՝ առանց փողի, ուտելիքի. ծերունիներն ու տղաները՝ ծեծված, կանաչք ու աղջիկները՝ անարգված ժանդարմների կողմից: Դասալիքների նկատմամբ այսպիսի վերաբերմունքը սարսափելի է պատկերացնել, սակայն այս մարդիկ օսմանյան բանակից փախչելու մեջ կամ կառավարության դեմ ցանկացած այլ իանցանքում այնքան անմեղ են, որքան ես:

Որոշ ժամանակ առաջ պատիվ ունեի կարճ զեկուցագիր ուղարկել կոմիտաջիների կողմից կատարած կողոպուտների, այդ տարածքի հույն բնակչության Բուլղարիա գնալու մասին, և դրան վերջ տալու համար Բուլղարական կառավարությունը, ի պատիվ իրեն, այդ տարածքը գրավեց պայմանագրում նշվածից երեք օր առաջ: Ես ուզում եմ հայտնել, որ բնակչությունը կողոպուտի է ենթարկվել սահմանամերձ շրջաններում, իսկ նրանցից շատերին իրենց տներից վտարել են նրանց տեղը գրաված մուսուլմանները: Ես առիթ եմ ունեցել գրուցելու նրանցից շատերի հետ, որոնք անտուն, անսնունդ ու անփող Ադրիանապոլսի փողոցներում թափառելով, այցելեցին գործակալություն՝ փնտրելով որևէ օտարերկրյա հյուպատոսություն, որը

կազատեր իրենց այս ստորացուցիչ հետապնդումներից: Ամենուրեք նույն պատկերն է. տանից վտարում. ունեցվածքի ու անասունների բռնագրավվում, երբեմն՝ կանանց անարգում: Նրանց դեմքի հուսահատությունը, երբ նրանց ասում են, որ ոչինչ անել չեն կարող, արցունքներ է առաջացնում:

Հասկանում են, որ այս պարզամիտ գյուղացիների տառապանքներն ավելին են. քան ես, որպես կողմնակի դիտորդ, կարող եմ ըմբռնել, քանի որ կառավարության դաժանությունը վախ է առաջացնում Ադրիանապոլսի բնակչության բարձր խավի մոտ, և ես տեսել եմ, թե նրանք ռեստորաններում ինչպես էին փսփսում և օրորում գլուխները: Մեծ դժվարություններ ունեն տեղի վիճակին տեղյակ լինելու հարցում, քանի որ կառավարությունը ջանք չի խնայում ինձ լրիվ մեկուսացնելու և անօգտակար դարձնելու գործում: Դրան գումարած, գաղտնի ոստիկանությունն ուշադիր հետևում է ինձ և գործակալություն այցելողներին ու հարցաքննում է ինձ հետ գրուցողներին. և մարդիկ այնքան ահաբեկված են, որ իրականում մի քանի օր է ոչ մեկի չեն տեսել: Ես ջանքեր եմ թափում այստեղի իրադարձությունների մասին տեղյակ պահել գլխավոր հյուպատոսությանը, սակայն մեծ դժվարությամբ:

Պարոն, Ձեր խոնարհ ծառան եմ,  
(կնքված) Չարլզ Է. Ալլեն,  
հյուպատոսական գործակալ

840.1

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/227.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries. vol. II. p. 65-66.*

## Փաստաթուղթ թիվ 38

Թիվ 1158

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՄՊԼԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուսուպոլիս, 3 ապրիլի. 1916թ.*

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Դեպարտամենտի տեղեկատվության համար պատիվ ունեն ուղարկելու այս քաղաքի գլխավոր հյուպատոսությանն ուղղված Ադ-

րիանապոլսի ամերիկյան հյուպատոսության գործակալի երեք զեկուցագրերի օրինակները, որոնք վերաբերվում են շրջանի քաղաքական հրավիճակին:

Իր երկու զեկուցագրերում, թվագրված 5 և 18 մարտի, պարոն Ալլենը նկարագրում է Ադրիանապոլսի տեղական իշխանությունների վերաբերմունքը բնակչության ոչ մուսուլման տարրի՝ հույների, հայերի և հրեաների նկատմամբ, ինչպես նաև մուսուլման դարձած հայ ռասայի ներկայացուցիչների խնդրին: Վերջին զեկուցագրում նա ամոքադառնում է բռնությամբ Իսլամի դավանափոխության փորձերին ավստրիական դեսպանության միջամտությանը:

Վերջին զեկուցագրում, թվագրված 18 մարտի, 1916թ., քննարկվում են տեղի թուրքական և բուլղարական իշխանությունների հարաբերությունները, որոնք առաջ են եկել Կարազաչի վերջին ժողովի և թուրքական տարածքը Բուլղարիային միացնելու պատճառով:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Չեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Հոֆման Ֆիլիպ  
Ներվիակված է՝

թիվ 166 զեկուցագիրը թվագրված, 5 մարտի 1916թ.

թիվ 170 զեկուցագիրը՝ 18 մարտի, 1916թ.

թիվ 171 զեկուցագիրը՝ 18 մարտի, 1916թ.

(այս գրքերում ընդգրկված չէ):

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.00/786.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarajian, The Peripheries, vol. II. p. 68.*

## Փաստաթուղթ թիվ 39

Թիվ 166

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

*Ադրիանապոլիս, Թուրքիա, 23 հոկտեմբերի, 1916թ.*

*Կոստանդնուպոլիս*

*Գլխավոր Ամերիկյան հյուպատոս*

*Էսկվայր, Ջ. Բի Ռավնոլալ*

Պարոն,

Պատիվ ունեմ կրկին անդրադառնալ բնակչության ոչ մուսուլման հատվածի նկատմամբ տեղական իշխանությունների վերաբեր-

մունքին: Նրանց հետապնդումները, որին անդրադարձել են ժամանակ առ ժամանակ, լեկավարում են իշխանությունները Թրակիայի թուրքականացման, և մուսուլմաններին նրանց ավելի խելացի և հարուստ համերկրացիների հաշվին հարստացնելու ուղղությամբ, երբեք չեն դադարել, սակայն հայերի համընդհանուր տեղահանությունից հետո այն կատարվում է ավելի հանգիստ և ավելի քիչ բարբարոսությամբ, ասում են՝ Գերմանիայի հսկողությամբ:

Դասալիքների ընտանիքների արտաքսման վերաբերյալ օրենքի կիրառման միջոցառումների իրականացումը և, որը, ինչպես և սպասվում էր, այսպիսի դժվարություններ կհարուցի հույների համար, հետաձգվել է որոշ ժամանակով և այժմ պատճառ կա հավատալու, որ այդ օրենքը երբեք չի կիրառվի: Իշխանություններն, այնուամենայնիվ, օրենքով նախատեսված կետեր են փնտրում, հատկապես, հույներին այլ վայրեր տեղափոխելով կամ այլ կերպ նրանց ունեցվածքին տիրանալու համար: Ավելի ճիշտ, թուրքերը հույն գյուղացիներին պարզապես վտարում են իրենց տներից, և նրանց փոխարեն մուսուլմաններ են բնակեցնում, հույներին ուղարկում են Ադրիանապոլիս, որտեղից նրանց թույլատրում են մեկնել Հունաստան: Ինչ վերաբերվում է անհրաժեշտ վեսիկաների տրամադրմանը, ասում են, որ իշխանությունները ցուցաբերում են աչք զարնոդ առատաձեռնություն, այսինքն, նրանք հազվադեպ են պահանջում ավելին վճարելով կամ «բախշիչ» տալով, քան շահախնդիր անձը ի վիճակի է հավաքել: Ասում են, որ հետապնդումները սկսելու օրվանից Թրակիայի հույն բնակչության մի կեսը, կամ մոտավորապես քառասուն հազարը, որոնցից երկու հազարը Ադրիանապոլսից են, արդեն հեռացել է:

Ինչ վերաբերվում է հայերին, քչերը փրկվեցին ընդհանուր տեղահանումից, սակայն միայն վերջին մի քանի օրերի ընթացքում մնացած հայերին ստիպեցին հարել մուսուլմանական կրոնին, որից հրաժարումը պատժվում է արտաքսմամբ: Ասում են, որ այս միջոցառումը իրականացվում է որպես պատասխան հայերի կողմից ռուսներին օգնություն ցույց տալու համար, որը նյութապես օժանդակեց համաձայն զեկուցագրի, Կովկասում ռուսների կրած խաբուսիկ հաղթանակին: Ասում են, որ հայերին ստիպելու են ռուսմնասիրել իրենց ընդունած հավատքը խոջաների հսկողությամբ և պահանջելու են նաև ամուսնանալ թուրքերի հետ: Հայկական ցեղի բնաջնջումն սպառնալից էր այս մեթոդը հավանաբար մշակվել է Գերմանիայում. քանի որ թուրքերը կզերադասեին ավելի արագ ու ավելի արդյունավետ միջոց:

Հրեաները շարունակում են ապրել առանց նեղության, բայց նրանք շատ են անհանգստացած այն օրերնքով, որը պահանջում է, որ յուրաքանչյուր մարդ ցանի, մշակի և հավաքի որոշակի քանակությամբ հացահատիկ կամ վճարի ցանելու, մշակելու և բերք հավաքելու համար: Այս օրերնքը, որը հավանաբար կկիրառվի միայն ոչ մուսուլմանների նկատմամբ. սկզբում ենթադրվում էր կիրառել վերը նշվածի համաձայն, սակայն հետագայում շեշտվեցին հատկապես այն կետերը. որոնք վերաբերվում են ցանելու, մշակելու և բերքը հավաքելու փոխարեն մուծումներ կատարելուն բացառելով մյուսը: Արդեն ենթադրվում է, որ օրենքի կիրառումը կընթանա վճարումով. քանի որ բոլորը շատ լավ գիտեն, որ կառավարությունը չունի ոչ սերմեր. ո՛չ գյուղատնտեսական գործիքներ, ոչ էլ բավականին հող նախագծված ծրագիրն իրականացնելու համար, իսկ իշխանությունները նոր են ապացուցել, որ իրենք անկեղծ չեն՝ մերժելով բացառություններ կատարել գլխավորների ընտանիքների համար, որոնք ծայրահեղ աղքատության հասած կանայք ու երեխաներ են: Իշխանությունները հայտարարում են. որ աղքատների փոխարեն հարուստներից կպահանջվի մոծել հարկը, դա էլ ակնհայտ է դարձնում, որ օրենքի միակ նպատակը գումար հավաքելն է, և ոչ թե բնակչությանն ուտելիք մատակարարելը: Հարկի չափը մեկ անձից մեկ ֆունտ է, և եթե ենթադրենք, որ հարկը պիտի վճարեն լավ պայմաններում ապրող քիչ թվով հրեաները կամ հույները՝ հիսունից վաթսուն հազար մարդկանց փոխարեն, արդեն հասկանալի է, թե ինչ դժվարություններ կառաջացնի այս օրենքը: Իհարկե, ենթադրվում է, որ օրենքը կկիրառվի նաև հարուստ թուրքերի, ինչպես նաև նրանց դեմ, ովքեր չեն վայելում տիրող կուսակցության բարեհաճությունը, սակայն իշխանությունների տեսանկյունից օրենքի միակ արժեքն այն է, որ այն կապահովի օրինական պատրվակ ոչ մուսուլմանների հետագա արյունահեղությունների համար և, իհարկե, խելամիտ հանդգնածությամբ կարելի է պնդել, որ հավաքված գումարի միայն մի փոքր մասը կօգտագործվի մթերքի արտադրության համար:

Ես եմ, պարոն, Չեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Չալվզ Է. Ալեն,  
հյուպատոսական գործակալ

- Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.00/786.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide.*  
*Compiled and introduced by Ara Saralian, The Peripheries, vol. II. p. 69:*

Թիվ 170

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

*Այրիանապոլիս, Թորքիս, 18 մարտի, 1916թ.*

*Կոստանդնուպոլիս  
Գլխավոր Ամերիկյան հյուպատոս  
Էսկվայր, Ջ. Բի Ռավնոսայ*

Պարոն,

Վերջին հաղորդագրության մեջ նշել էի այն վաստր, որ այս քաղաքի հայերին բռնությամբ դավանափոխել են մահմեդականության: Ես նաև նշել էի, որ այդ մեթոդը, որն ապահովում է հայոց ցեղի բնաջնջումը, հավանաբար թուրքերին պարտադրել են գերմանացիները, որպեսզի խանգարեն կոտորածին կամ տեղահանությանը: Այն ժամանակ, երբ գրվեց վերը նշված զեկուցագիրը, մեծ մասը հակված էր այդ կարծիքին: Այժմ պատիվ ունեմ հաղորդելու, որ չնայած երկու-երեք օրվա տեղական իշխանությունների ողջ ուշադրությունն ուղղված էր այն ձևականություններին, որը վերաբերվում էր հայերի դավանափոխությանը, անցած մի քանի օրվա մեջ հայերին հրավիրեցին կոնակի մոտ և համաձայնություն տվեցին, որպեսզի հայերը ետ ստանան իրենց քրիստոնեական անունն ու կրոնը: Զանի որ հայերի վերջնական ճակատագիրն անորոշ է, նրանք հրաժարվեցին այդ արտոնությունից և պնդեցին մուսուլման մնալու հարցում:

Տեղական իշխանությունների վերաբերմունքի այս հանկարծակի փոփոխությունը կարելի է բացատրել երկու ձևով: Առաջին բացատրությունն այն է, որ Օսմանյան կառավարությունը մահմեդականության մեջ չի ուզում ընդունել այն անծանց, ում ընտանիքի անդամները արտասահմանում են: Ես շատ քիչ կարևորություն եմ տալիս այս բացատրությանը: Երկրորդ բացատրությունն այն է, որ իշխանությունները իրենց տակտիկական փոխել են՝ Ավստրիայի ճնշման արդյունքում: Ընդհանուր դավանափոխության ժամանակ մի հայ, ոմն Վարդգես Վարդերեսյան՝ գերմանական Օրիենտ բանկի գլխավոր հաշվապահը, հրաժարվեց դավանափոխ լինել, նույնիսկ հակառակ այն վաստի, որ նա առնվազն մեկ նամակ է ստացել մահվան սպառնալիքով: Ասում եմ, տեղական ավստրիական հյուպատոսը, որը խորապես կարեկցում է հետապնդվող քրիստոնյաներին, մեծ հետաքրքրություն էր ցուցաբերել Վարդերեսյանի գործի

նկատմամբ և նաև կտրուկ արտահայտություններ էր օգտագործել դեպքերում, որոնցում ուղղված իր գեկուցագրում՝ նկարագրելով կառավարության հայերին բռնությանը մահմեդականացնելու գործողությունները: Հավանաբար ավստրիական դեպարտամենտը հարցուփորձ է արել կենտրոնական իշխանություններին, և գործը հասել է տեղական վայիին, որը գեկուցել է, որ ավստրիական հյուպատոսը խեղաթյուրել է փաստերը, և որ հայերը կամավոր են հարում մահմեդականությունը, և ոչ ոք նրանց չի ստիպում այդպես վարվել: Ասում են, հյուպատոսը շատ էր զայրացել վայի կողմից իր դեմ փաստերի խեղաթյուրման մեղադրանք ներկայացնելու համար, սակայն ինձ չհաջողվեց պարզել, արդյոք որևէ միջադեպ է տեղի ունեցել նրանց միջև թե՞ ոչ: Այնուամենայնիվ, իշխանությունները հայերին տվեցին իրենց քրիստոնեական հավատքին ետ դառնալու արտոնությունը և հայերից շատերն օգտվեցին դրանից: Անհնարին է պնդել, թե իշխանություններն այս դիրքն են բռնել մտադրվելով, հայերին ստիպել մնալ մուսուլման անհատական ահաբեկումներով, կամ նոր տեղահանում են ծրագրում: Սակայն, քանի որ շատ հայեր պնդել են մուսուլման մնալու հարցում, շատ հնարավոր է, որ նրանք այդպես վարվել են՝ սարսափելով շատ ավելի վատ ճակատագրից, նաև շատ հնարավոր է, որ ի նպաստ հայերի Ավստրիայի միջամտությունը կազմվել է, որպեսզի Ավստրիան և Գերմանիան չվարկաբեկվեն քրիստոնյաների աչքում, և որ ավստրիական դեսպանությունը միջամտել է միայն, եթե իհարկե. միջամտել է, Օսմանյան կառավարության հետ այսպիսի միջամտության այդյունքների վերաբերյալ համաձայնության գալուց հետո: Հետևաբար, հայ ժողովրդի բնաջնջումն իրականացնելու դավադրության մեղսակցության մեջ ավստրիացիներն ու գերմանացիները մեղավոր կարող են լինել, կարող են և չլինել:

Ես եմ, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Չարլզ Է. Ալեն,

հյուպատոսական գործակալ:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.00/786.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 71-72..*

Թիվ 436  
Գ.աղտնի

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Մերսին. Թուրքիա. 18 մայիսի. 1915թ.

*Թուրքիա. Կոստանդնուսյոյիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ տեղեկացնել, որ Ադանայի մոտ յոթանասուն քիչ թե շատ հայտնի հայ ընտանիքներին կարգադրվել է պատրաստ լինել հեռանալու, և զեկուցել Ձեզ, որ շատ-շատերն այդ քաղաքից, ինչպես նաև Մերսինից և Տարսոնից, տուժելու են նույն ձևով: Քանի որ որոշ ժամանակ առաջ ամերիկյան միսիոներները ցնցվել էին տեսնելով համընդհանուր տեղահանության հետևանքով հայերի կրած տառապանքներն ու դժվարությունները. և հարցնում էին, թե արդյոք որևէ բան հնարավոր չէ անել դրանք թույլ չտալու համար: Ես նշեցի. որ սա շատ նուրբ խնդիր է, որ ես ինձ իրավասու չեմ համարում խառնվել այսպիսի հարցերին, քանի որ այն ոչ մի ձևով չի առընչվում ամերիկացիների շահերին: Տեղական պաշտոնյաների հետ զրուցելիս ես պատահմամբ ակնարկեցի այն դժվարությունները, որ առաջացրել են այդ խստագույն միջոցառումները, և հասկացա, որ պաշտոնյաները նույնպես կարեկցանքով են վերաբերվում այդ խնդրին: Ես ինձ երաշխավորված չեմ զգում անել ավելին, քան այս ոչ պաշտոնական զրույցները:

Ես նոր նամակ ստացա Ադանայի ամերիկյան միսիայի տնօրեն պատվելի դոկտոր Չեմբրսից, թվագրված 16 մայիսի, 1915թ., որի կրկնօրինակը ներկայացված է, և վերաբերվում է այս խնդրին: Նամակը բերել է այդ միսիայից միսս Է. Ուեբը, նրան ուղեկցում է դոկտոր -Քրիստին՝ Տարսոնի ամերիկյան միսիայի տնօրենը, երկուսն էլ միանում են դոկտոր Չեմբրսին՝ խնդրելով բողոքել, և եթե հնարավոր է, խափանել հետագա տեղահանությունները: Ես նրանց տեղեկացրեցի, որ քանի որ սա տեղական խնդիր չէր, ես կոդիմեմ դեսպանությանը վճռելու այդ հարցը այնպես, ինչպես հարմար կհամարի Ձերոզ գերազանցությունը:

Անդրադառնալով դոկտոր Չեմբրսի նամակի առաջին մասին, որը վերաբերվում է Ադանայի միսիայի աշակերտներին, պետք է ա-

սեմ, որ ես գեներալ նահանգապետից խոստում կորզեցի, որ նրանց կթույլատրվի մնալ տեղում, չնայած նրանց ընտանիքներն արտաքսվել են: Նորին գերագանցությունը համաձայնվեց նաև թույլատրել միսս Ուեբին զբաղվել Դորոտյոյի հայ բնակչությանը, եթե այդպիսիք դեռ կան, օգնություն ցույց տալու աշխատանքներին:

Տեղի նյարդային վիճակից ելնելով և հետևելով տեղի ամերիկացիների որոշ ժամանակ առաջ ներկայացված դիմումին, պատիվ ունեմ առաջարկելու, որպեսզի մոտ ապագայում տեղի նավահանգիստ հրավիրվի մի ամերիկյան ռազմանավ:

Յրանսիական մի հաժանավ էր ժամանել այս նավահանգիստը սույն ամսվա 16-ին, բայց այն պատերազմական գործողությունների մեջ չընդգրկվեց:

Մերսինի նահանգապետ Ջեկայ Բեյին, որը շատ լավ դեկավարում էր, հրամայել են տեղափոխվել Կեսարիա: Այս պահին նրա հեռանալը շատ ցավալի էր, սակայն նրան ժամանակավոր փոխարինող Տարսոնի գայմագամը մի մարդ է, որը վայելում է բնակչության և իր վերադասների վստահությունը:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան,

Ամերիկյան հյուպատոս:

Ներվիակվածը՝ պատվ. Չեմբրը՝ ամերիկյան հյուպատոսին,  
16 մայիսի, 1915թ.

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers, Reel 7/573.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Saralian, The Peripheries, vol. II, p. 75-76.*

### Փաստաթուղթ թիվ 43

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊՈԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոստանդնուպոլիս, 3 հունիսի, 1915թ.

Վաշինգտոն.

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Դեպարտամենտի տեղակատվության համար, պատիվ ունեմ ուղարկել Մերսինի ամերիկյան հյուպատոսից ստացված զեկու-

ցագրի օրինակը, քվագրված 1915թ. մայիսի 28-ը, որը վերաբերվում է Ադանայի նահանգի քաղաքական իրավիճակին:

Պատիվ ունեմ լինելու, սլարոն,  
Ձեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.00 786.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 77.*

## Փաստաթուղթ թիվ 44

Թիվ 438

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Մերսին. Թուրքիա. 28 մայիսի. 1915թ.*

Առարկան. Ադանայի նահանգի քաղաքական իրավիճակը

*Կոստանդնուպոլիս*

*Ընդերկյան դեսպան*

*Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ հայկական հարցը տեղում ակնհայտորեն քարենպաստ լուծում ունեցավ: Չնայած մի քանի հարյուր հայ ընտանիքների սկսել էին տեղահանել Ադանայից, նրանց ժամանակավոր պահեցին Տալաոնում ու մոտակայքում, և շատ դեպքերում նրանց բույլատրեցին վերադառնալ Ադանա: Հետևաբար, նյարդայնությունն Ադանայում որոշ չափով անցավ, քանի որ հետագա տեղահանությունները մույնպես անորոշ ժամանակով հետաձգվել են: Տարսոնից տեղահանություններ քիչ եղան հիմնականում պառլամենտի խոսնակ Մադիկ փաշայի միջամտությունների շնորհիվ: Մերսինում ամվանի մուսուլմանների հանձնաժողովը, որը որոշելու էր, թե որ ընտանիքները պետք է հեռանան, դիտավորյալ հետաձգեց իր գործողությունները: Պետք է նշել Նորին գերագանցություն Հեքքի բեյի՝ Ադանայի գեներալ նահանգապետի, մարդասիրական վերաբերմունքը, որը հնարավորին չափ հետաձգեց տեղահանությունը և հետևողականորեն դիմադրում էր դրան: Տեղահանությունների հետաձգումները շատ տարածայնություններ առաջացրեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցության Ադանայի ակումբում, որի անդամների մեծ մասը բարեհաճ էին սրամաղրված

այսպիսի միջոցառումների նկատմամբ և դեմ էին գեներալ Գահանգապետի վերաբերմունքին:

Քանի որ Հաճընի բնակիչներից շատերը նույնպես տեղահանվել են, առայժմ նրանց վերաբերյալ ոչինչ չի արվել: Տեղահանությունները շարունակվում են Դորսոյոյից, և այնտեղ քիչ հայ ընտանիքներ են մնացել: Անշուշտ այս մի քանիսն էլ ևս շատ են ցանկանում հեռանալ, և դրա պատճառը Մակեդոնիայից գաղթականների ներխուսքն է, որոնք գրավում են նախկին տերերի ազատած տները: Դորսոյոյցի մի ուրիշ հայի մի քանի օր առաջ Ադանայում կախել էին: Նա մեղադրվել էր մոտակայքում գործող մի բրիտանական հաժանավիճն օգնություն տրամադրելու մեջ: Ասում են, նրա դեմ հիմնավոր վկայություն է ներկայացվել:

Կարելի է հուսալ, որ տեղի հայ բնակչությանն այլևս չեն անհանգստացնի: Տեղահանության ընդհանուր վախը, դժվարություններն ու կորուստները, որ կրել են այն մարդիկ, որոնց տեղահանումը սկսվել էր, բավական էին, որպեսզի ետ պահեին հայերին կառավարության դեմ որևէ գործողությունից, եթե նույնիսկ այդպիսին ծրագրված էր: Իշխանությունները, կարծում են, համոզված են դրանում:

Մերսինի նախկին Գահանգապետն այժմ անցել է իր նոր պաշտոնին Կեսարիայում: Նրա նախկին վարքից ենթադրում են, որ նա հանդես կրերի ավելի բարեհաճ վերաբերմունք հայերի և նրանց տեղահանումների ևանդեպ, քան նրա նախորդը:

Հայտնում են, որ ոմն Բեսիմ բեյ, որը նախկինում Նովի Բազարում էր, նշանակվել է Մերսինի Գահանգապետ: Դեռ ոչինչ հայտնի չէ ոչ նրա բնավորության, ոչ էլ նրա ժամանման օրվա մասին:

Դատավորը գործում է որպես Գահանգապետ:

Իտալացիները բնականաբար վախենում են իրենց նկատմամբ կառավարության և բնակչության վերաբերմունքից, քանի որ օրեցօր սպասվում է հարաբերությունների խզում Թուրքիայի և Իտալիայի միջև:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու

Ձեր խոնարհ ծառան՝

Էդուարդ Ի. Նաթան,

Ամերիկյան հյուպատոս:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.00/761.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries. vol. II, p. 78-79.*

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

Մերսին, 7 հունիսի, 1915թ

Հատված

Հայկական հարցը մնում է դեռևս չլուծված: Ընտանիքներից շատերին, ովքեր արտաքսվել էին Ադանայից, այնուամենայնիվ, այժմ բույլատրել են վերադառնալ: Ամբողջ Ադանայի նահանգում հայտարարվել է հայերի ձեռքում եղած զենքի պաշտոնական բռնագրավում այն հիմնավորումով, որ «մենք տեսել ենք այնպիսի բաներ, որոնց չէինք կարող հավատալ»:

Ձեյթունցի վերջին ընտանիքներն անցյալ շաբաթ Տարսունով շատ ցավալի վիճակում անցան, և նրանց օգնություն ցույց տվեցին ամերիկյան միսիոներները: Ադանայի միսիայից միսս Ռեբբը գնացել է Դոքտյոլ և զեկուցում է այնտեղ մնացող ընտանիքների ծայրահեղ թշվառության մասին: Մոհաջիրներին անընդհատ ուղարկում են Ձեյթուն՝ տեղահանված հայերին փոխարինելու համար:

(Ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան,  
Հյուպատոս:

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers, Reel 7/587.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripherics. vol. II. p. 80.*

Թիվ 464

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Մերսին, Թուրքիա, 26 հուլիսի, 1915թ.

Կոստանդնուպոլիս, Թուրքիա  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Պատիվ ունեմ տեղակացնելու Ձեզ, որ Ադանա, Տարսուն և Մերսին քաղաքներում ակնհայտորեն մեծ մասշտաբի տեղահանման միջոցառումներ են անցկացվում հայերի դեմ: Ադանայում ավելի քան երկու հարյուր հիսուն ընտանիքների հրամայվել է պատրաստ լինել հեռանալու: Տարսունից մի քանի ընտանիքներ արդեն

տեղահանվել են, շատերին էլ հրամայվել է մեկնել կարճ ժամանակում, նրանց ամբողջ անշարժ գույքը պետք է հանձնվի տեղական իշխանություններին, և քանի որ այսպիսի գույքը հնարավոր չի տանել, այն ցուցակագրվում է և վերցվում կառավարության տնօրինության տակ: Մերսինում նշվել են մոտ երկու հարյուր ընտանիքներ՝ արտաքսվելու համար: Սրանց մեծ մասը ավելի աղքատ խավերից են, սակայն ինձ տեղեկացրել են, որ հրամանը վերաբերվում է Մերսինի ամբողջ հայ բնակչությանը, և այն աստիճանաբար կիրագործվի: Տեղահանման հատուկ հանձնաժողովի անդամներից մեկն այստեղ է, որպեսզի վերահսկի այդ գործը: Հանձնաժողովի նախագահը գնաց Հաճըն, որպեսզի ավարտի տեղահանումն այնտեղից: Մոտավորապես հարյուր հայեր, ովքեր արտաքսվում էին Կեսարիայից Սիրիա, անցյալ շաբաթ անցան այստեղով: Ասում են, որ ոչ մի չափահաս հայ տղամարդ այդ քաղաքում ազատության մեջ չի մնացել: Նրանց, ում չեն արտաքսել այնտեղից, համաձայն այստեղ հասած զեկուցագրերի, ձերբակալել են:

Տեղահանվածների թշվառությունն ու 'հյուծվածությունը չհաշված' այս միջոցառումների ազդեցությունը նահանգի վրա անհամար է: Լավագույն առևտրական և հիմնական արհեստավորների կորուստը անպայման կվնասի տեղի տնտեսական վիճակին: Այս հիմնավորումով կառավարությանը հատուկ խնդրագրեր են ներկայացրել տարբեր շահագրգիռ, նույնիսկ գերմանական առևտրական և ֆինանսական կազմակերպություններ, հատկապես, գյուղատնտեսական մեքենաների տարբեր ընկերություններ, որոնք գործարքներ կատարում են: Կառուցելու նաև Ջինգեր մանուֆակտուրային ընկերության և նավթային ընկերությունների շահերը: Չերդ գերազանցությանը, անկասկած, դոկտոր Զրիստին արդեն ներկայացրել է ամերիկյան միսիոներական հաստատություններին սպասվելիք հետևանքները: Հյուսիսատոսթյան հետ կապված մի երկու մարդ ևս կառուցելու, սակայն մեր միջամտությունը հավանաբար կօգնի նրանց:

Պատիվ ունեմ, պարոն, վիներու

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան

Ամերիկյան հյուսիսատոս:

800

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers, Reel 7/639.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II. p. 81-82.*

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս. 15 օգոստոսի. 1915թ.*

*Վաշինգտոն,  
Պատվարժան  
Պետական քարտուղար*

Պարոն.

Դեպարտամենտի տեղեկատվության համար, պատիվ ունեմ ներվիակելու 1915թ. օգոստոսի 7-ի զեկուցագրի օրինակները. ստացված Մերսինի ամերիկյան հյուպատոսից. որը վերաբերվում է հայերի տեղահանություններին:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան  
(ստորագրված) Մորգենթաու,  
Ներվիակված է օգոստոսի 7-ի օրինակները:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/124.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 83.*

Թիվ 467  
Պատոնեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Մերսին. Թուրքիա. 7 օգոստոսի. 1915թ.*

*Թուրքիա. Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ տեղեկագնելու Ձեզ, որ երկու օր առաջ ստացվեց հրաման Մերսինի ամբողջ հայ բնակչության՝ թվով 1800 հոգու, անպահաղ տեղահանման մասին: Տրեկ մոտավորապես երեք հարյուր մարդ ուղարկվեց Ադանա, իսկ այսօր շատ-շատերին հրամայվել է պատրաստ լինել հեռանալուն: Ակնկալելով իրենց տեղահանումը, հայերը չնչին գումարով վաճառում են իրենց ամբողջ անշարժ գույքը: Կարի մեքենաները վաճառվել են 1.5 մեջիդիով, երկաթյա մահ-

ճակայները՝ մի քանի պիաստրով և այլն: Կառավարությունը յուրաքանչյուր մարդու թույլատրում է վերցնել մի քիչ ուտելիք և տեղափոխել մի փոքր բեռ: Առայժմ տեղահանվողների ժամանման վայրը Ադանան է: Աննկարագրելի է այս մարդկանց սարսափը՝ չհաշված թշվառությունն ու հյուծվածությունը: Այժմ մեզ են հասնում պատմություններ ներքին շրջաններում հազարավոր հայերի կոտորածների մասին: Պարզվում է, որ սրանց մի մասը բավականին հիմնավորված են, սակայն ենթադրում են, որ դեսպանատունը լավատեղյակ է, թե ինչ է տեղի ունեցել Կեսարիայի, Սվազի, Դիարբեքիի շրջաններում, չհաշված Վանը, որտեղ, ինչպես զեկուցվում է, հայերն իրենք են դուրսընկած տերը:

Պարզվում է, որ այստեղի տեղահանման հրամանն արագացվել է հայ ղաչաղների խմբերի պատճառով, որոնք, ինչպես ասում են, հարձակումներ են գործել այս վիլայեթի և Մարաշի սահմանակից գյուղերի վրա: Վալին ականատես է եղել նշված իրավախախտումներին: Մի քանի օր առաջ վեց բրիտանական և ֆրանսիական ռազմանավերի զուգադիպող ժամանումը Ալեքսանդրետտա, ասում են, կապված է այս հարցի հետ:

Իշխանությունները փակված հայտարարեցին Հարունու գերմանական որբանոցը, և տեղի ամերիկացիները վախենում են, որ իրենց էլ կսպառվի նույնը, եթե տեղահանությունները շարունակվեն: Ներկայումս, սակայն, իշխանություններն ամերիկյան հաստատությունների և նրանց բնակիչների հանդեպ ցուցաբերում են հարգանք: Երկու ամերիկուիները դեռևս Հանրնում են և նորից են գրել, որ ներկայումս ավելի կզերտղասեն մնալ այնտեղ, քան կհամարձակվեն ճանապարհորդել, քանի որ ղաչաղները շատ ակտիվ են մոտակայքում:

Երեկ այս նավահանգիստ ժամանեց ֆրանսիական մի ռազմանավ, սակայն հեռացավ առանց որևէ գործողության:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան,

Ամերիկյան հյուպատոս:

800

Աղբյուր՝ 1. U. S. State Department Record Group 59. 867.4016/124.

2. United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, *The Peripheries*, vol. II, p. 84-85.

Թիվ 479

*Կոստանդնուպոլիս, 21 սեպտեմբերի, 1915թ.*

*Վաշինգտոն,  
Պատվարժան  
Պետական քարտուղար*

Պարոն,

Դեպարտամենտի տեղեկատվության համար պատիվ ունեմ ներկայեցնում եմ 1915թ, սեպտեմբերի 11-ի զեկուցագրի օրինակը, որը մեր դեսպանությունը ստացել է Մերսիսի ամերիկյան հյուպատոսից, և որը վերաբերվում է այս շրջանի հայերի տեղահանություններին:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու  
Ներկայակամ է ինչպես նշված է:

- Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/193.*  
 2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II. p. 86.*

Թիվ 484  
Պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Մերսիս. Թուրքիա, 11 սեպտեմբերի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ տեղեկացնել Ձեզ, որ 1915թ. օգոստոսի 30-ի, իմ թիվ 478 զեկուցագիրը գրելուց հետո (ուղարկված այսօր այլ փոստով գեներալ նահանգապետի հատուկ արտոնությամբ) հյուսիսից այստեղ եկան ևս հազարավոր հայեր և տեղափոխվելու են Հալեպի շրջան: Այդ ժամանակից ի վեր ավելի քան 6000-ը տեղահանվեցին Ադանա քաղաքից, ուշադրություն չդարձրեցին կաթոլիկների և բողոքականների ենթադրյալ բացառությանը: Սույն ամսվա 5-ին ես հեռագրել եմ Ձերդ գերագանցությանը վերջին փաստի մասին: Շատացած դաժանությունների պատճառը օտարերկրյա օֆիսի մուստեչա-

րի՝ Ալի Մյունիֆ Բեյի ժամանումն էր, որը որոշեց, որ ոչ մի բացառությամբ չպետք է արվի, և տեղահանությունները պետք է ավարտվեն հնարավորին չափ արագ: Նրան պաշտպանում է Ադանայի «Մյունիֆ և Առաջադիմություն» ակումբը՝ մի մոլեզին հակահայկական կազմակերպություն: Շատերը նրանցից, ովքեր կարծում էին, որ իրենք ազատված են, հարկադրաբար հեռացվեցին՝ առանց պատրաստվելու համար ժամանակ ունենալու և, հետևաբար, ավելի վատ քան նրանք, ովքեր հենց սկզբից մտել էին հեռացողների ցուցակի մեջ: Ճանապարհին տարբեր կայաններում մարդկանց չափից ավելի հավաքվելը պատճառ դարձավ տեղահանվողների սարսափելի տառապանքների ու դժվարությունների համար:

Իշխանություններն այլևս մտադիր չեն բացառություններ անել ուսուցիչների և ամերիկյան դպրոցի աշակերտների համար, և չնայած իմ միջամտություններին, Տարսոնի ս.Փոլ քոլեջը այս առումով տուժել է: Մյուս կողմից, իմ ջանքերը Ադանայի աղջիկների սեմինարիայի օգտին, ավելի բարեհաջող էին:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու

Ձեր խոնարհ ծառան՝

Էդուարդ Ի. Նաթան,

Ամերիկյան հյուպատոս:

800

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/193.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 87-88.*

Փաստաթուղթ թիվ 51

Թիվ 500

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս. 30 սեպտեմբերի, 1915թ.*

Վաշինգտոն,

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Դեպարտամենտի տեղեկատվության համար, պատիվ ունեմ ներվազելու 1915թ. սեպտեմբերի 28-ի թիվ 488 զեկուցագրի օրինակը, որը դեպքումն ստացել է Մերսինի ամերիկյան հյուպատոս-

սից, և որը վերաբերվում է Ադանայի նահանգի քաղաքական իրավիճակին:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան  
(ստորագրված) Մորգենթաու  
Ներվալված է ըստ հայտարարության:

Արքայո՛ր՝ *1. U. S. State Department Record Group 59, 867.00.173.*

*2. United States Official Documents on the Armenian Genocide.  
Compiled and introduced by Ara Saralian. The Peripheries. vol. II, p. 89.*

## Փաստաթուղթ թիվ 52

Թիվ 488

### ԱՄՆԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան Հենրի Մորգենթաու*

*Մերսին, Թուրքիա. 22 սեպտեմբերի. 1915թ.*

Պարոն,

Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ սույն ամսվա 19-ին սկսած շարաքվա ընթացքում այս նահանգը մեծ խժոժությունների վայր էր, մասնավորապես, Տարսոնում և Ադանայում վիճակը հասավ խուճապի: Այդ ամենի պատճառն իշխանությունների անբացատրելի վախն էր, որ թշնամին կարող է գործ իջեցնել մոտակայքում: Մերսինում բոլոր կառավարական աշխատողներին և շատ մուսուլմանների կարգադրվեց իրենց ընտանիքներին ուղարկել մոտակա լեռնային գյուղերը: Բանկերն ու վաճառականներն, ըստ հնարավորին, տեղափոխվեցին ներքին շրջանները: Շատ նավակներ այրվեցին, որպեսզի թշնամին դրանք չվարձակալի: Պաշտոնապես հայտնվում է, որ կառավարությունը մտադիր է այրել այս քաղաքը, ինչպես նաև Տարսոնն ու Ադանան: Հանգամանքների բերումով Մերսինում բնակչությունը համեմատաբար հանգիստ է, սակայն Տարսոնում և Ադանայում պտտվում են չափազանցված լուրեր, այնտեղ համարյա խուճապ է, և իշխանությունները, փոխանակ փարատելու բնակչության վախը, ամեն ինչ անում են ավելացնելու այն: Հագարավոր մուսուլմաններ ու նրանց ընտանիքներ հեռացել են Ադանայից երկրի ներ-

քին շրջանները: Քանի որ նույնիսկ օտարերկրյա հաստատությունները չեն փրկվի այրվելուց, կարգադրություններ արեցին տնօրեններին իրենց խնամքի տակ գտնվող անձանց հետ զնալ լեռները: Ես տեղեկացրեցի նրանց, որ կարող են զնալ միայն այն դեպքում, եթե իշխանությունները պահանջեն այդպես վարվել կամ վերահաս վտանգ լինի:

Ադանայի գերմանական և ավստրիական հյուպատոսների եռանդուն գործունեությունը, և գերմանական տարբեր ձեռնարկությունների դեկավարները, որոնք հուշեցին գեներալ նահանգապետին իր քաղաքականության հիմնարկումը, Կոստանդնուպոլսից նախորդների ուղարկած հեռագրերի արդյունքում նահանգապետի ստացած ցուցումները հանգեցրին խուճապ հատուցող միջոցառումների դադարեցմանը: Ես ինքս ոչինչ չէի կարող հաղորդել դեսպանությանը, քանի որ իմ հեռագրերը կբեռնվեին, և այսօր ստացա առաջին հնարավորությունը՝ խնդրի մասին կնքված գրություն ուղարկելու համար: Ես, սակայն, մտադիր էի խնդրել Ադանայի գերմանական հյուպատոսին անակընկալի դեպքում հոգ տանել ամերիկացիներին և ուզում եմ առաջարկել մեր դեսպանությանը, որպեսզի ապագայում հնարավոր անակընկալի դեպքում այդ հարցով դիմի գերմանական դեսպանությանը: Այսպես արվեց Բալկանյան պատերազմի ընթացքում:

Բնականաբար, վերը նշված վախի առաջին արդյունքներից մեկն Ադանայից հայերի տեղահանումն ավարտելու ընդհանուր շտապողականությունն էր: Այդ քաղաքից տեղահանված հայերի թիվն այժմ հասնում է մոտավորապես 25000-ի, չհաշված այն բազմաթիվ հազարավորները, որ հյուսիսից գալով՝ անցնում են այստեղով: Այս մարդկանց կրած թշվառությունները, տառապանքներն ու դժվարություններն աննկարագրելի են: Մահերն անհաշիվ են: Հարյուրավոր երեխաների լքումն են իրենց ծնողները՝ ի վիճակի չլինելով տեսնել նրանց տառապանքները կամ ուժ չունենալով նրանց խնամել: Շատերին պարզապես թողնում են ճամփեզրին, շատ են դեպքերը, երբ ծնողները երեխաներին դուրս էին նետում զնացքի պատուհաններից: Ոստիկանների և պաշտոնյաների դաժանություններն ավելի են վատացնում այս մարդկանց տխուր վիճակը: Ձեկուցում են, որ այս շրջանում պայմաններն ավելի տանելի են, քան Օսմանիեի և Հալեպի միջև, որտեղ մարդկանց գերլցվածությունը և հարմարությունների բացակայությունը սննդի և տեղափոխման խնդիրը դարձնում են անլուծելի:

Կաթոլիկ և բողոքական հայերին շարունակում են արտաքսել, նման միջոցառումներ անցկացվում են նաև այնպիսի քաղաքներում. ինչպիսին Հաճրնն է: Քանի որ իշխանություններն անտեսում են ամերիկյան ուսուցիչների նկատմամբ բացառություններ անելու իմ խնդրանքը, ես տեղեկացրել եմ այդ հաստատությունների տնօրեններին, որ բացառության համար դիմելն անօգուտ է: Նույնը վերաբերվում է ամերիկյան բիզնես ընկերությունների, ինչպես նաև Զինգեր ընկերության, աշխատողներին:

Ամերիկյան անձնագիր ունեցող հայերի տեղահանման վերաբերյալ որևէ որոշակի կարգադրություն չի եղել, սակայն ես վախենում եմ, որ այդ ուղղությամբ ջանքերը հաջողություն չեն ունենա:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան,

Ամերիկյան հյուպատոս:

800

Աղբյուր 1. *U. S. State Department Record Group 59. 867.00/783.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 90-91.*

## Փաստաթուղթ թիվ 53

Թիվ 516

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս. 1 Մուկտեմբերի. 1915թ.*

*Վաշինգտոն.*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Լրացնելով սեպտեմբերի 21-ի իմ թիվ 479 զեկուցագիրը, պատիվ ունեմ ուղարկելու Մերսինի ամերիկյան հյուպատոսության սեպտեմբերի 27-ի զեկուցագրի օրինակը հայերի տեղահանությունների վերաբերյալ:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներփակված է՝ ըստ ասվածի:

Փաստաթուղթ թիվ 54

Թիվ 491  
Գաղտնի

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սերսին, Թուրքիա. 27 սեպտեմբերի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս. Թուրքիա*  
*Ամերիկյան դեսպան*  
*Պատվարժան*  
*Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ դեսպանատանը ներկայացնել հետևյալ ընդհանուր մանրամասները լրացնելու համար իմ տարբեր գեկուցագրերը հայերի տեղահանության, նրանց տառապանքների ու շատերի մահվան պատճառների հանգամանքների վերաբերյալ:

1. Տեղափոխման հարմարությունների բացակայությունն այս թշվառությունների առաջացման ամենակարևոր պատճառն է: Շատերը ստիպված են ոտքով անցնել հսկայական տարածքներ հյուսիսում՝ Տարսուսի և Պոլանտիի միջև, և հարավում՝ Օսմանիեի և Ռաջուլի միջև (Հալեպի մոտ) երկաթուղու, սայլերի ու կառքերի բացակայության պատճառով: Ամենահասարակ սայլերը սովորաբար բարձրված են ճամփորդների իրերով, որոնց վրա էլ նրանք նստելու տեղ պիտի գտնեն: Միայն բավարար միջոցներ ունեցողները կարող են իրենց թույլ տալ կառք վարձել, որով երկուսից չորս օր ճանապարհ գնալն արժե 30-100 դոլար: Ի հավելումն իրենց «ճանապարհաձախսին»՝ ճամփորդները հաճախ սայլապանին կամ ուղեկցող ոստիկանին ստիպված է ավելի շատ փող «ցույց տալ», հակառակ դեպքում նրանք ստիպված են լինում իջնել և քայլել: Չնայած ընդհանրապես կառավարությունն է սայլեր տրամադրում, դրանք շատ քիչ են, իսկ երկաթուղով տեղափոխվելու համար շատ դեպքերում ստիպված են վճարել իրենք՝ մարդիկ: Բաղդադի երկաթուղու տեղական հատվածը շատ հարմար էր, չնայած օժանդակում էր տեղահանումների ընթացքին, սակայն, դժբախտաբար, նրա ծառայությունը վերջերս կազմա-

կերպվում էր զինվորական փոխադրումների համար. և հայերը, հետևաբար, ստիպված էին այլ փոխադրամիջոց գտնել կամ քայլել:

2. Չնայած նախկինում հայերի հանդեպ վայրագությունները հազվադեպ էին այս շրջանում, վերջերս ճանապարհներին տեղի են ունենում կողոպուտներ, բազմաթիվ են կանանց ու աղջիկների անարգումները, որոնք հաստատված են փաստերով: Բռնի դավանափոխումը, որի մասին զեկուցում էին միայն ներքին շրջաններից, այժմ տեղի են ունենում այստեղ: Այսպես, Աղանայի հայ որբ աղջիկներից շատերին, որոնց ծնողները սպանվել էին 1909թ. կոտորածի ժամանակ. և որոնց պահում էին կառավարության որբանոցում, կարգադրել են հեռանալ կամ դառնալ մուսուլման: Միայն մի փոքր մասը քաջություն ունեցավ հեռանալու՝ չունենալով ծածկ և պաշտպանություն: Ես խորհուրդ էի տվել ամերիկյան միսիոներներին իրենց հաստատություն չընդունել շատ կողմնակի անձանց, քանի որ այսպիսով կարող էին վտանգի ենթարկել տեղի բնակիչներին: Միսս Ուեբին, սակայն, հաջողվեց ստանալ իշխանությունների համաձայնությունը՝ այդ աղջիկերին մասնավոր տներում տեղավորելու համար, որը գտավ մեծ դժվարությամբ: Այդ կապակցությամբ գովելի է նաև աղջիկների օգտին Հարունի գերմանական միսիայի կատարած աշխատանքը, պետք է նշվի նաև Նորին գերազանցության՝ գեներալ նահանգապետի բարեսիրտ վերաբերմունքն աղջիկների դպրոցի հանդեպ, որը հուսով ենք, կշարունակվի:

3. Վերջերս ոչ մի փորձ չի արվել հայ աքսորյալների սննդի հարցը լուծելու ուղղությամբ: Սա ճիշտ է նաև և ճանապարհների երկարությամբ եղած կայանների, և ավելի մեծ քաղաքների վերաբերյալ: Այսպես, Օսմանիեում, որտեղ անցած մի քանի շաբաթներում միշտ էլ եղել է քառասունից վաթսուն հազար մարդ, սնունդը հազիվ բավարարում էր նրանց մեկ երրորդին. այնպես որ, կամ բոլորին սրվում էր փոքր քանակով կամ նրանք մնում էին առանց ուտելիքի: Սրա հետևանքով առաջ եկան հիվանդություններ, որոնք տարածվեցին. և բազմաթիվ մահացություններ, որոնց մասին զեկուցվում է: Սովի հետևանքով մայրերը լքում են իրենց երեխաներին, քանի որ չեն կարող տեսնել նրանց տառապանքները, կամ իրենք այնքան թույլ են, որ նրանց չեն կարող տանել իրենց հետ:

Բացի արտաքսվածներին պատճառած ընդհանուր բշվառությունից, տեղահանման միջոցառումների հետևանքներն ավելի ու ավելի են անդրադառնում նահանգի տնտեսական վիճակի վրա:

Խանութների ու շուկաների մեծ մասը փակ են, և մարդիկ դժվարությամբ են կարողանում գնել իրենց օրվա հասանելիքը: Հայ վաճառականների ապրանքի մեծ մասը կնքված խանութներում է: Հայ վաճառականների վարկատուները շատ դեպքերում իրենց չհատուցված պարտքերի դիմաց ապրանք են վերցնում: Քանի որ բիզնեսի մեծ մասն այս շրջանում հայերի ձեռքին էր, նրանց արտաքսման հետևանքներն արդեն չափազանց բացահայտ են Ադանայի նահանգի ապագայի համար:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան  
Ամերիկյան հյուպատոս:

- Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/200.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 93-94.*

#### Փաստաթուղթ թիվ 55

Թիվ 634

#### ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս, 6 նոյեմբերի, 1915թ.*

*Վաշինգտոն,  
Պատվարժան  
Պետական քարտուղար*

Պարոն,  
Պատիվ ունեմ ողարկելու Մերսինի ամերիկյան հյուպատոսի 1915թ. հոկտեմբերի 30-ի զեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է հայերի տեղահանությանը և նրա հետևանքներին:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարի ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու  
Ներփակված է՝ Մերսինից ստացված զեկուցագրի պատճենված օրինակը:

- Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/238.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 95:*

Թիվ 501  
Պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Մերսին. Թուրքիա. 30 հոկտեմբերի. 1915թ*

*Կոստանդնուպոլիս, Թուրքիա  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեն տեղեկացնելու ձերդ գերազանցությանը, որ տեղահանված հայերի հոսքը հյուսիսից անդադար է: Վերջում եկածները սարսափելի թշվառ վիճակում են, իսկ նրանց տառապանքները սննդի ու հագուստի պակասից՝ աննկարագրելի: Ոստիկաններն ու այլ պաշտոնատար անձինք նույնիսկ արգելում են նրանց օգնություն ցույց տալ, որն ակնհայտ է դարձնում, որ մեծամասնության վերջնական ճակատագիրը դանդաղ մահն է:

Ադանայի «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի երեք մոլեզին անդամներ վտարվեցին քաղաքից՝ հայերին հալածանքների ենթարկելու պատճառով: Ասում են, որ նրանք ծրագրել էին նույնիսկ հայերի տներն ու շինությունները հրկիզելու միջոցառումներ, վտանգի մեջ էր նաև ամերիկյան միսիայի շենքը: Միսիոներների խնդրանքով ես խնդրի վրա հրավիրեցի իշխանությունների ուշադրությունը:

Տեղահանվածների անշարժ գույքի և անձնական սեփականության վերաբերյալ մշակվում է նոր օրենք այնպես որ, վախենում են, հայերին քիչ սեփականություն մնա, եթե մնա: Նրանց տներում բնակեցվում են մուջեհիդներ և այլ պաշտոնատար անձանց ծիծաղելիորեն ցածր վարձով: Տեղահանված վաճառականների իրերը սեփականեցվում են այդ նպատակով կազմված հանձնաժողովի կողմից քաղմատեսակ չարաշահումներով: Հանձնաժողովի նախագահ Ալի Սեյդի Բեյը վերջերս հեռացվեց. դա սարսափելի է, որովհետև նա դիմադրում էր այն եղանակին, որով իրականացվում էին այդ միջոցառումները:

Ձեռնալ փաշայի հետ վերջերս Կոստանդնուպոլիս գնալիս բարոն Օփենհեյնը անցավ այստեղով: Գերմանական հարցի վերաբերյալ քաղմատեսակ գրականություն ցուցադրող և տարածող ընթերցասրահներ են բացվել Մերսինում և Ադանայում: Բարոնը նրանց գլխավոր հովանավորն է: Վերջերս Ադանայում մեծ հաջողությամբ

վերաբացվեց նաև գերմանական դպրոցը: Երջանիկ եմ գեկուցելու, որ ամերիկյան միախոններների և այս նահանգի նրանց գերմանացի գործընկերների միջև անձնական հարաբերությունները շատ սրտառույ են: Այն արհամարհական վերաբերմունքը, որ կար դրկտոր Չեմբրսի նկատմամբ, որպես անկեղծ Բրիտանիայի հպատակի, երբեք չդրսևորվեց, որպես հաստատություն, միսիայի դեմ:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան,

Ամերիկյան հյուպատոս:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/238.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 96-97.*

### Փաստաթուղթ թիվ 57

Թիվ 644

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս, 18 նոյեմբերի, 1915թ.*

Վաշինգտոն,

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ողարկելու Մերսինի ամերիկյան հյուպատոսի նոյեմբերի 4-ի գեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է հայերի տեղահանությանն ու նրա հետևանքներին:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներվիակված է՝ Մերսինից ստացված գեկուցագիրը երկու օրինակից:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/239.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 98:*

Պատճեն  
Թիվ 502  
Գաղտնի

## ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Մերսին. Թուրքիա. 4 նոյեմբերի. 1915թ.*

*Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ոնեն Ձեզ տեղեկացնելու, որ տեղահանված հայերի հոսքն Անատոլիայից Սիրիա անդադար շարունակվում է: Այս շարժման հետ կապված մտահոգող տարբեր ոլորտներ թվարկելիս, ես, հավանաբար, մոռացել եմ նշել անտանելի հակասանխարական վիճակը, որ տիրում է Տարսոնի և Օսմանեիի մոտ եղած ճամբարների և կայանների շրջակայքում: Սա որոշ չափով մարդաշատության, բայց մեծ մասամբ սովահարությունների ու հիվանդությունների գոհ դարձածների դիակների կիսաթաղ լինելու հետևանք է: Տեղահանվածների մահացության տոկոսն օրեցօր աճում է, իսկ երբ սկսեն անձրևները, վիճակն անտանելի կդառնա: Սննդի հարցը լիովին անտեսվում է, ապագայում ավելի կվատանա. քանի որ նույնիսկ մշտական բնակիչները ցորենի պակաս են զգում: Բերքն այս տարի արտադրվող նորմայի միայն կեսն էր, այն էլ մեծ քանակով ուղարկվել է Կոստանդնուպոլիս՝ բանակի համար:

Վերանայելով տեղահանված հայերի օգտին Օսմանյան կայսրությանն ուղղված Ձերդ գերագանցության դիմումը, որը դժբախտաբար դեռևս ուշադրության չի արժանացել, և Միացյալ Նահանգներում Բրիտանիայի նախկին դեսպան Լորդ Բրայսի առաջարկությունը, որ Միացյալ Նահանգները միջոցներ ձեռք առնեն հայերի տեղահանմանը խոչընդոտելու համար, հավանաբար կարելի է անդրադառնալ նաև անցյալի փաստերին, որոնք պարզաբանում են, որ Բրիտանիան և եվրոպական մյուս երկրները 1909թ. Արանայի կոտորածների ժամանակ և հետո անտարբեր էին մնացել: Կարելի է հիշեցնել, որ Ադանայում ապրիլի սկզբին առաջին կոտորածների հանդարտվելուց հետո օտարերկրյա մի շարք ռազմաճակատներ ժամանեցին Մերսին՝ միջամտելու համար: Մինչ նրանք գտնվում էին այս նավահանգստում՝ մի երկրորդ կոտորած բռնկեց ապրիլի 24-ին. շատ

ավելի կործանարար, քան առաջինը: Այն ժամանակ և հետո ռազմա-  
նավերի հրամանատարությունը չձեռնարկեց ոչ մի գործողություն,  
որը կարող էր առաջացնել եվրոպական կառավարությունների դժգո-  
հությունը: Այս պասսիվության պատասխանատվության հարցը եր-  
բեք չի քննարկվել, գրեթե չեն անդրադարձել նաև այն ժամանակվա  
Բրիտանիայի փոխխյուպատոսի ունեցած դերին (հանգուցյալ մայոր  
Դոթի Ուիլին. մի քաջարի զինվոր, բայց ավելի պակաս հաջողակ  
դիպլոմատ), որին բացելիքաց մեղադրեցին հայերը, քանի որ նա  
խորհուրդ էր ավել իրենց զենքերը հանձնել:

Դեռևս կարելի է հուսալ, որ Ձերդ գերազանցության միջամտու-  
թյունները վերջապես պտուղ կտան, և որ, մյուս կողմից, հայերը  
կհասկանան իրենց քաղաքական քննարկումների անօգտակարու-  
թյունը, իսկ թուրքերը՝ իրենց ներկա քաղաքականության անմտու-  
թյունը, բայց և այնպես, ես հարգանքով նկատում եմ, որ վերանայե-  
լով հայկական հարցի լուծման գործում տարբեր եվրոպական  
երկրների անտարբերությունը, հազիվ թե որևէ եվրոպական պետա-  
կան գործիչ մտադիր լինի այս հարցի մեղքը գցել Միացյալ  
Նահանգների կառավարության վրա:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան,

Ամերիկյան հյուպատոս:

800

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/239.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide.*  
*Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II. p. 99-100.*

## Փաստաթուղթ թիվ 59

Թիվ 642

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս, 18 նոյեմբերի, 1915թ.*

*Վաշինգտոն.*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ ուղարկելու Մերսինի ամերիկյան հյուպատոսի  
նոյեմբերի 6-ի զեկուցագիրը, երկու օրինակից, որը վերաբերվում է

հայերի տեղահանությանը և ֆոն Դեր Գոլց փաշայի Տարսոն ժամանելուն:

Պատիվ ունեն լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Մորգենթաու  
Ներփակված է՝ ըստ ասվածի:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/240.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II. p. 101:*

### Փաստաթուղթ թիվ 60

Թիվ 502

Պատճեն

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Մերսին. Թուրքիա. 6 նոյեմբերի. 1915թ.*

*Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Պատվարժան  
Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեն Ձեզ տեղեկացնելու, որ իշխանությունները հրաման են ստացել հայերի հետագա տեղահանումը դադարեցնելու մասին: Սա, սակայն, վերաբերվում է միայն Մերսին, Տարսոն և Ադանա քաղաքների բնակիչներին, որոնք մինչ այժմ խուսափել են տեղահանումից: Մյուս կողմից, հրամայվել է Տարսոնի մոտ գտնվող ճամբարից արտաքսել մի քանի հազարներին հյուսիսից եկողներին տեղ տալու համար: Ժամանել է նաև կայսերական հանձնաժողովի կարևոր անդամներից մեկը, որպեսզի քննի տեղահանված հայերի անձնական ունեցվածքը յուրացնելու ուղղությամբ տեղական պաշտոնյաների կատարած չարաշահումները:

Նորին գերագանցություն ֆոն Դեր Գոլց փաշան այսօր ժամանեց Տարսոն՝ Հալեպ գնալիս, որտեղ նա հիմնում է, համաձայն վստահելի զեկուցագրերի, իր գլխավոր վարչությունը:

Պատիվ ունեն լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Էդուարդ Ի. Նաթան,  
Ամերիկյան հյուպատոս:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/240.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 102.*

Փաստաթուղթ թիվ 62

Թիվ 432

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս, Իսեպտեմբերի, 1915թ.*

*Վաշինգտոն,*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ ներփակելու գլխավոր հյուպատոս Հորտոնի հուլիսի 30-ի զեկուցագրի օրինակը, որը վերաբերվում է Սմիթնայում յոթ հայերի դատավճռին: Ուրախ եմ հայտարարելու, որ Ռ-ազմական նախարարի մոտ իմ գործադրած ջանքերը պսակվեցին հաջողությամբ, և բանտարկյալներին ներում շնորհեց Նորին կայսերական մեծություն Սուլթանը:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Չեր խոնարի ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներփակված է՝ ըստ հայտարարության:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/150.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 106:*

Փաստաթուղթ թիվ 63

Խիստ գաղտնի

*30 հուլիսի, 1915թ.*

*Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան դեսպան*

*Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեմ սրանով հաստատել անցյալ գիշերվա իմ հեռագիրը, որտեղ ասվում է.

«Դեսպանություն Կոստանդնուպոլիս, քսանիննի մեկ քառասունչորս. Յոթ հալեբ դատապարտվել են կախաղանի այստեղ նախկին քաղաքական մեղադրանքով կետ Հայկական համայնքը որտեղ շատ են պատվարժան և օրինապահ օսմանները խնդրագիր է ներկայացրել Նորին կայսերական մեծությանը գթասրտության համար կետ Իմ գերմանացի և ավստրիացի գործընկերները որոնց հետ զրուցել եմ հեռագրել են իրենց դեսպանատներին հանուն մարդասիրության Ես խնդրում եմ Ձեզ դիմել դատավճռի գոնե մեղմացման կամ հետաձգման համար մինչև ինձնից լուր կստանանք կետ

Հորտոն»:

Այժմ ես գրում եմ Ձեզ այս տխուր գործի մասին, ինչպես նշված է հեռագրում, որ անելու եմ, հուսալով, որ, հավանաբար, կարվի բավարար չափով հետաձգում, այնքան որ թույլ կտա Ձեզ ստանալ իմ նամակը: Ես դիմում եմ այս քայլին՝ վալիի հետ բավական երկար հարցուվորձից, գերմանացի և ավստրիացի իմ գործընկերների հետ զրուցելուց հետո:

Ներիակում եմ կարծիք, թե ինչպիսին պետք է լինի պաշտպանությունը, եթե հնարավոր լինի այն ներկայացնել ռազմական դատարանին: Ես համոզված եմ, որ այս հայտարարությունը հիմնավորապես ճիշտ է և, որ և վալին, և՛ զինվորական հրամանատարը, այնքան հուզված են, այնքան նյարդայնացած, որ այդ մասին չեն կարողանում նույնիսկ խոսել առանց արցունքների, չեն հավատում, որ այս մարդիկ մեղավոր են այն աստիճան, որ արժանի են մահվան:

Այս գործի հետ կապված կան մի շարք մութ կետեր: Երբ այս մարդկանց, թվով յոթ հոգու, մահապատժի հրամանը ստացվեց այստեղ, տեղի իրազեկ մի պաշտոնյա հեռագրեց Կոստանդնուպոլիս այն մասին, որ օսմանյան օրենքի համաձայն, մեղադրյալներն իրավունք ունեն խնդրանքով դիմել կայսերական գթասրտության համար: Ստացվեց պատասխան «սա տեխնիկապես ճիշտ է, կախեք նրանց անմիջապես, իսկ խնդրագիրն ուղարկեք հետո»: Դատավարությունը հայտնաբերեց այն փաստը, որ այստեղ շատ զայրացած են հայերի դեմ՝ Կովկասի հայերի կողմից ռուսական տրամադրություն ունենալու համար, գործերի մի վիճակ, որի համար տեղի հայերն, իհարկե, ոչ մի ձևով պատասխանատու չեն:

Այս հուշագրից պարզվելու է, որ այն հանցանքը, որի համար դատապարտվում են այս մարդիկ, գործվել է 1909թ. երիտթուրքերի կոռսակցության մի քանի անդամների հետ, և արվել է ի պաշտպանություն սահմանադրության: Այս մարդկանց մահվան դատապարտելու իրական պատճառը, ինչպես Դուք հեշտությամբ կհասկանաք. քաղաքական է, և կապված կլինի բարդությունների հետ, և անկաս-

կամ հայկական ռասային վախեցնելու ցանկությունն է: Նրանց մահապատիժն այստեղ ահավոր սխալ կլինի, նույնիսկ թուրքական քաղաքականության տեսակետից, քանի որ տեղի ամենապատվարժան, ազդեցիկ և օրինապահ օսմանյան հպատակներից շատերը հայեր են, իսկ առաջարկվող մահապատիժն ամբողջ համայնքը լցրել է ահով ու զայրույթով: Ավելին, որքան ես կարողանում եմ հասկանալ, բոլոր պատվարժան թուրքերը դեմ են դրան:

Սա խաղաղ համայնք է. մինչև հիմա մենք չենք ունեցել կոտորածներ, լուրջ դավադրություններ կամ զանգվածային կախաղաններ, իսկ յոթ հայերի, որոնք ընդհանրապես անմեղ են համարվում, կախելու տեսարանը ցանկացած տեսակետից ոչ բարենպաստ կլինի Մմիրնայի համար: Ավելին, պարզվում է, որ դատավճռում կան հիմնավոր օրինախախտումներ, որոնք շարադրված են Ձեզ ուղարկվող հուշագրում, և որը կազմել է մի պատվարժան իրավաբան:

Ես այս ամենն ուղարկում եմ Ձեզ ոչ պաշտոնապես և հանուն մարդասիրության, որ հավանաբար, իրերի իրական վիճակը Ձեզ չեն ներկայացրել, քանի որ նույնիսկ գեներալ նահանգապետը համոզված չէ, որ այս մարդկանց օգտին ուղարկված խնդրագրերն ու հեռագրերը կարող են անցնել զրաքննությունը Կոստանդնուպոլսում, որտեղից էլ գալիս է նրանց մահապատժի կատարման ճնշումը:

Պետք է ավելացնեմ, որ այստեղ վախենում են, որ քաղաքական մեղադրանքով մի քանի հայերի մահապատիժն ավելի անգրագետ և մոլեռանդ թուրքերի մոտ կարող է ստեղծել այն տպավորությունը, որ հայերը դավադրություն են կազմակերպել կառավարության դեմ, որն էլ կարող է արագացնել կոտորածը:

Ես ներկայացնում եմ այս տեղեկությունն այսպիսի գաղտնիությամբ, պարզապես Ձեզ տեղյակ պահելու համար, եթե, ըստ Ձեր հարմարության, կուզեք միջոցներ ձեռք առնել:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ջորջ Հորտոն,

Ամերիկյան Գլխավոր հյուպատոս

Ներվիակված՝ ըստ ասվածի:

Գործ թիվ 800

GH/GR

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/130.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 107-109.*

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Առարկան. Նամակագրության փոխանակում Մմիրնայի Գլխավոր  
հյուպատոսության և Կոստանդնուպոլսի դեսպանության միջև

5 օգոստոսի, 1915թ.

*Հաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ ներվակելու 1915թ. 30 հուլիսի պարոն Մորգեն-  
թաուին ուղղված, նամակի կրկնօրինակը, որը պարունակում է  
հետաքրքրություն ներկայացնող քաղաքական տեղեկատվություն:  
Այստեղ խոսվում է, որ յոթ հայերի մահվան դատավճիռը փոխարին-  
վել է դեպի երկրի ներքին շրջաններն արտաքսմամբ, և հնարավոր է,  
որ նրանք ներում ստանան:

Հայկական համայնքի տարբեր ներկայացուցիչներ եկան հյու-  
պատոսություն՝ շնորհակալություն հայտնելու այն քայլերի համար,  
որ ես ձեռք առա այդ գործում, այստեղ էր նաև հայ արքեպիսկո-  
պոսը: Իր երախտագիտությունն արտահայտեց նաև Մմիրնայի վա-  
լին, քանի որ նա անձամբ դեմ էր այդ մահապատժի իրականացմանը:

Ես խորհուրդ տվեցի ինձ այցելած հայերին շնորհակալական  
նամակ ուղարկել դեսպանին՝ այս գործում նրա կտրուկ և արդյունա-  
վետ միջամտության համար, և նրանք խոստացան այդպես էլ անել:  
Ներվակում եմ նաև դեսպանին ուղղված նամակի պատճենը, որը վե-  
րաբերվում է բրիտանական ու ֆրանսիական ռազմանավերի կողմից  
Մմիրնայի շրջակայքի քաղաքների ոմբակոծությանը: Այս կապակ-  
ցությամբ պետք է ասեմ, որ Թուրքիայի դեմ պատերազմական գոր-  
ծողություններ սկսելուց անմիջապես հետո ես բրիտանական կառա-  
վարության ուշադրությունը հրավիրեցի նամակում նկարագրված  
գործերի վիճակին և բրիտանական ծովակալից ստացա պատաս-  
խան, որ նա համաձայն է ինձ հետ, և ավիամերձ շրջանների ոմբակո-  
ծությունը դադարեց առնվազն երկու ամսով: Այդ պահից ի վեր ես  
հասկացա, որ այդ ոմբակոծություններին ու ավիամերձ քաղաքների  
ավերածություններին հանգեցրել էին մոտակայքում գերմանական  
սուզանավերի ներկայությունը, և որ գլուղերում մաքսանենգությամբ  
կամ այլ կերպ օգնում էին միացյալ նավատորմի թշնամիներին: Տե-

դական թերթերը, գտնվելով զինվորական հսկողության տակ, անընդ-  
հատ հրապարակում են հայտարարություններ այն մասին, որ ա-  
ռանց որևէ պատճառի ռմբակոծվում են խաղաղ գյուղերը և որ կամ  
գյուղերին վնաս չի պատճառվում, կամ գոհվում են կանայք ու երե-  
խաներ: Բարեբախտաբար, բնակիչներն այս զեկույցներին չեն հա-  
վատում, քանի որ ոչ ոք այլևս տեղական թերթերին չի հավատում:

Պատիվ ունեն, պարոն, լինելու  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջորջ Հորտոն,  
Ամերիկյան հյուպատոս:

Ներփակված՝ ըստ ասվածի:

800

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/130.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide,*  
*Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 110-111.*

### Փաստաթուղթ թիվ 65

Պատճեն

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սմիրնա, Թուրքիա, 5 օգոստոսի. 1915թ.*

*Կոստանդնուպոլիս*

*Ամերիկյան դեսպան*

*Պատվարժան Հենրի Մորգենթաու*

Պարոն,

Պատիվ ունեն հայտնելու Ձեր թիվ 144 հեռագիրը ստանալու  
մասին և տեղյակ պահելու Ձեզ, որ կախաղանի դատապարտված  
հայերի դատավճռի մեղմացման մասին լուրը շուտով տեղ հասավ:

Հայերի համայնքը եկավ հյուպատոսություն շնորհակալություն  
հայտնելու ինձ այն քայլերի համար, որ ես ձեռք առա խնդրի վե-  
րաբերյալ, քայց ես նրանց աուացի, որ ես միայն ամերիկյան դեսպա-  
նի ուշադրությունը հրավիրել եմ գործի վրա, և որ նրանք պետք է  
շնորհակալություն հայտնեն նրան:

Նրանք բոլորն էլ չափազանց շնորհակալ էին և համոզված են,  
որ իրականում այդ մարդկանց գլուխը փրկեց ամերիկյան ազդեցու-  
թյունը: Վալին այսպես է ասել այն բոլոր հայերին, ովքեր այցելել են  
իրեն:

Ուզում եմ հայտնել Ձեզ իմ անկեղծ և սրտառուչ շնորհակալությունն այն անմիջական և արդյունավետ միջոցառումների համար, որ դուք ձեռք առաք այս հարցում, ինչպես նաև շնորհավորել Ձեզ Ձեր միջամտության դրական արդյունքի համար:

Պատիվ ունեմ, պարոն, լինելու  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջորջ Հորտոն.  
Ամերիկյան Գլխավոր հյուպատոս:

Գործ թիվ 800

GN/GR

Աղբյուր՝ 1. *Morgenthau Papers, Reel 7/651.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 112.*

Փաստաթուղթ թիվ 67

Թիվ 426

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոստանդնուպոլիս. 31 օգոստոսի, 1915թ.

Վաշինգտոն.

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ներփակելու Սմիրնայի ամերիկյան գլխավոր հյուպատոսից ստացված զեկուցագրի պատճենը, որով նա ուղարկում է այդ շրջանի հայոց արքեպիսկոպոսի նամակը, շնորհակալություն հայտնելով ինձ՝ այս քաղաքի մահվան դատապարտված հայերի ներումը ստանալու ուղղությամբ իմ ջանքերի համար:

Պատիվ ունեմ լինելու, պարոն.

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներփակված է՝ ըստ հայտարարության:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/149.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 116:*

Պատճեն

23 օգոստոսի, 1915թ.

Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպան  
Նորին գերագանցություն  
Պատվարժան Հենրի Մորգենթաու

Պարոն,

Իմ պարտքն են համարում Ձերո՞ գերագանցությանը հաղորդել այս քաղաքի ողջ հայ համայնքի և իմ խոր երախտագիտությունը՝ Սմիրնայի զինվորական դատարանի կողմից մահվան դատապարտված հայերի օգտին Ձեր ջանքերի համար, և Ձեզ հղել իմ ամենամեծ շնորհավորանքները Ձեր ջանքերի հաղթանակի համար: Այս մարդկանց ընտանիքները ևս ինձ երաշխավորել են Ձեզ և Սմիրնայի ամերիկյան գլխավոր հյուպատոսությանը հաղորդել, թե ինչքան երախտապարտ են այն ամենի համար, ոյ դուք արել եք ի պաշտպանություն իրենց սիրելի որդիների ու եղբայրների՝ դրանով փրկելով նրանց հավաստի ու ստորացուցիչ մահվանից:

Պարոն Հորտոնը, որին այս գործում իր ներդրումների համար նույնպես երախտապարտ ենք, ինձ հաղորդեց Ձերո՞ գերացանցության քայլերի մասին, որն այնքան երջանիկ կերպով հանգեցրեց սուլթանի կողմից դատապարտվածներին ներելուն:

Մենք երախտապարտ ենք Միացյալ Նահանգների կառավարությանը, որի բարեհաճ պաշտպանությունն աշխարհի ցանկացած մասում թույլերի ու արդարացի գործերի ուղղությամբ երբեք չի պակասում, և երջանիկ ենք սեսնել, որ դեսպանն ու հյուպատոսը, շարունակում են կառավարության ավանդույթները:

Կրկին շնորհակալ ենք և արտահայտում ենք մեր երախտագիտությունը:

Հավատացեք ինձ, Ձերո՞ Գ-երագանցություն,

Անկեղծորեն Ձերը,

ստորագրված, Հայոց արքեպիսկոպոս՝

Մատթեոս Զուջեյան:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/149.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 117.*

Առարկան. Հայկական հարց

Վաշինգտոն

Պատվարժան

Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ կից ներվիակել երկու հուշագիր այն միջոցառումների մասին, որ օսմանյան իշխանությունները կիրառում են Փոքր Ասիայի ներքին շրջանների հայերի դեմ: Դրանից մեկը, ինչպես կտեսնեք, Ուոլթեր Գեդեսի կողմից է, որը վերջերս վերադարձավ Հալեպից և մահացավ այս քաղաքում շաբաթ օրը: Մյուս հուշագիրը հավասարապես վստահելի մարդուց է. սակայն նրա անունը ես չեմ նշել այն պատճառով, որ նա դեռ ապրում է Թուրքիայում, և եթե նրա անունը փոստը ստուգելով կամ մի այլ ձևով հայտնի դառնա, նրա վիճակն այստեղ կդառնա խիստ վտանգավոր: Ես այլ հաղորդումներ ունեմ մաև ականատեսներից, որոնք այս երկրի տեղագիծերից չեն. ամենաբարձր դիրքն ունեմ կրոնական ու կրթական ոլորտներում, իսկ այդ հաղորդումներն ինձ բերում են այն համոզմունքի, որ այն ինչ այժմ տեղի է ունենում Հայկական Թուրքիայում, իր միտումնափոփոթյամբ, երկարատև սարսափով ու չափերով, գերազանցում է այն ամենը, ինչ մինչ այժմ տեղի է ունեցել համաշխարհային պատմության մեջ: Մի վկա տեսել էր, թե ինչպես էին հայ տղամարդկանցից շատերին սպանել, կացնահարել ինչպես նա բացատրեց ինձ. այն բանից հետո, երբ կապել էին նրանց ձեռքերը: Այդ սպանվածների ճակատագիրը համեմատաբար երջանիկ է: Ինչպես հայտնի կդառնա այս զեկուցագրից. ձերունիներին, կանանց ու երեխաներին բշտում են խմբերով, երբեմն մի քանի հազարներով, առանց ուտելիքի. ծածկի կամ ջրի, մինչև նրանք մահանան: Կարծես թե ոչ մի որոշված տեղ չկա, որտեղ նրանց բշտում են, և ոչ մի վերջնական տեղ հանգատի համար: Նրանց պարզապես պահում են շարժման մեջ: Ասեք ինձ, թե ինչի համար են այս բոլոր մարդիկ, որ արժանի են ամենամեծ վստահության, 800000-ից մինչև 1000000 մարդկային էակներ, անցնում դանդաղ ու սոսկայի տանջանքների միջով, իսկ շարժումը, փոխանակ թուլանալու, աճում է իր դաժանությամբ այնքան, որ նախքան այն վերջապես ավարտվի, մոտակայքում

կընդգրկի 2000000 մարդու, որոնց մեծ մասը անշուշտ կմեռնի, քանի որ շաբաթներ ու ամիսներ շարունակ նրանց քշում են՝ առանց սննդի կամ ծածկի ու դրանք ձեռք բերելու միջոցների:

Շատ հուզիչ է, որ համաձայն զեկուցագրերի, այս մարդիկ հույս ունեն, գուցե աղոտ, բայց հաստատուն, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները ինչ-որ ձևով օգնության կհասնեն:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջորջ Հորտոն,  
Ամերիկյան Գլխավոր հյուպատոս:  
Ներվիակվածը՝ ըստ ավաժի:

Գործ թիվ 800  
GH/GR

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/243.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 118:*

## Փաստաթուղթ թիվ 70

### ՀՈՒՇԱԳԻՐ

(ստորագրված) Ռոյտեր Մ. Գեղեսի կողմից

Ես այստեղից Հալեպ մեկնեցի 1915թ. սեպտեմբերի 16-ին: Սկզբում ես տեսա հայերին Աֆիոն Ղարախիսարում, որտեղ մի մեծ ճամբար կար, հավանաբար 10000 մարդ, որ եկել էին Սև ծովից: Նրանք ապրում են ամեն տեսակի կտորներից կարված վրաններում, իսկ նրանց վիճակը ողբալի էր:

Հաջորդ վայրը, ուր ես հայեր տեսա, Կոնիայում էր, նույնպես մեծ ճամբարում: Այնտեղ ես տեսա առաջին դաժանությունը, թե ինչպես մի կնոջ ու իր նորածնին բաժանեցին ամուսնուց, որին նստեցրին մեր գնացքը, իսկ կնոջն ուժով ետ պահեցին և չթողեցին գնացք նստել: Հաջորդ վայրը, որտեղ կար մեծ ճամբար, Օսմանիեի մոտ էր, ասում էին այստեղ կար 50000 մարդ. նրանց վիճակն ահավոր էր: Նրանք հավաքված էին գնացքի գծի երկու կողմերում, յուրաքանչյուր կողմից կես մղոնի վրա: Այստեղ կար երկու ջրհոր, որտեղից հայերը կարող էին ջուր վերցնել, ջրհորներից մեկը ճամբարից շատ հեռու էր, մյուսը՝ գնացքի կառամաստույցում: Լուսադեմին հայերը

խմբերով՝ կանայք, երեխաներ ու ծերունիներ, գալիս էին ջրհորի մոտ՝ ջուր վերցնելու: Նրանք կռվում էին միմյանց հետ ջրհորի մոտ տեղավորվելու համար, իսկ ժանդարմները մտրակահարում էին մի քանիսին: Ես տեսա, թե ինչպես էին ժանդարմներն իրենց ձեռքերում եղած մտրակներով ու փայտերով խփում կանանց ու երեխաներին: Հետո առիթ ունեցա Օսմանիե գնալու ճանապարհին անցնելու ճամբարի միջով և հնարավորություն ունեցա տեսնելու այդ մարդկանց վիճակը: Նրանք ապրում էին վերը նկարագրվածի նման վրաններում, իսկ նրանց վիճակը ողորմելի էր: Ճամբարի տեղը մի քանի անգամ օգտագործվել էր հայերի տարբեր քարավանների կողմից, և ոչ մի փորձ չէր արվել սանիտարական վիճակի բարելավման ուղղությամբ ոչ թուրքերի, ոչ էլ իրենց՝ հայերի կողմից, և հետևանքն այն էր, որ գետիմը ողբալի վիճակում էր: Օսմանիեում հայերը վաճառում էին իրենց իրերն՝ ուտելիք գնելու համար փող ձեռք բերելու նպատակով: Մի ծերունի աղաչում էր ինձ գնել իր արծաթյա քթախոտատուփը մեկ պիաստրով, որպեսզի կարողանա հաց գնել:

Օսմանիեից ես կառքով գնացի Ռաջե և անցա հազարավոր հայերի մոտով, ովքեր գնում էին Հալեպ: Նրանք գնում էին եզներ լծած սալերով, ձիերով, էշերով և ուրքով, նրանց մեծ մասը՝ երեխաներ, կանայք ու ծերունիներ: Ես խոսեցի այս մարդկանցից մի քանիսի հետ, որոնց մի մասը կրթություն էին ստացել ամերիկյան միսիոներական դպրոցներում: Նրանք ինձ ասացին, որ ճանապարհին են երկու ամիս շարունակ: Նրանք չունեին փող ու ուտելիք և ասում էին, որ գերադասում են մեռնել. քան հանդուրժել այն տառապանքները, որ կրում են: Ճանապարհին մարդիկ իրենց հետ տանում էին իրականում իրենց ողջ տնային իրերը, իսկ նրանք, ովքեր սալ կամ անասուն չունեին, կրում էին դրանք իրենց մեջքին: Անսովոր չէր տեսնել որևէ կնոջ՝ մատրասով փաթաթած մի մեծ կապոց մեջքին, իսկ կապոցի վրա՝ մի քանի ամսական երեխա: Մարդիկ մեծ մասամբ գլխաբաց էին, նրանց դեմքերը՝ ուռած արևից և չպաշտպանված լինելուց: Շատերն անկոշիկ էին, մի մասն էլ իրենց ոտքերը փաթաթել էին լաթերով, որը պատռել էին իրենց հագուստից: Էնթիլի մոտ մի ճամբարում կար մոտ 10000, իսկ Կադմայի մոտ մի մեծ ճամբարում՝ 150000 մարդ: Այս մասում՝ ճամբարին կից, կային թուրք զինվորներ, որոնք հայերից «բախշիչ» էին բռնագանձում՝ Հալեպ գնալու թույլտվություն տալու համար: Նրանք, ովքեր փող չունեին, ստիպված այս ճամբարում էին մնացել երկու ամիս շարունակ: Ես այստեղ խոսեցի մի քանի հայերի հետ, որոնք ինձ պատմեցին հսկիչ ոստիկանների վայրագ վերաբերմունքի ու թալանի մասին այնպես, ինչպես ես լսել էի ամ-

բողջ ճանապարհին: Նրանք ջրի համար ստիպված էին ամենաքիչը կես մղոն հեռանալ ճամբարից, իսկ ճամբարը կեղտոտ վիճակում էր: Կաղմալից Հալեպ գնալիս ես ականատես եղա իմ ճամփորդության ամենավատ տեսարաններին: Այստեղ մարդիկ սկսեցին շնչահեղձ լինել ուժգին շոգից և ջուր չլինելուց, և ես անցա մի քանիսի մոտից, ովքեր գետնատարած ընկած էին, իրականում մեռնում էին ծարավից: Մի կին, որին ես օգնեցի, ողբալի վիճակում էր, ծարավից ու հյուծվածությունից կորցրել էր գիտակցությունը, հետո տեսա երկու երխաասարդ աղջիկների, որոնք այնքան էին հյուծվել, որ ընկել էին ճանապարհին ու պառկել՝ ոռոած երեսներն արևին դարձրած: Բավականին երկար տարածության վրա ճանապարհը վերանորոգվում էր և ծածկված էր կոտրտված քարերով: Ծանապարհի մի կողմում արահետ կար, սակայն հայերից շատերն այնքան շճած էին հոգնածությունից ու արևահարությունից, որ այդ արահետը չէին տեսնում և քայլում էին, շատերը ոտաբոքիկ, այս կոտորտված քարերի վրայով, որի հետևանքով նրանց ոտքերն արյունվա էին: Այս բոլոր հայերի ժամանման վայրը Հալեպն է: Այստեղ նրանց պահում են եղած բոլոր դատարկ տներում, հյուրանոցներում, հայկական եկեղեցիներում, քակերում և բաց հողամասերում: Նրանց վիճակը Հալեպում աննկարագրելի է: Ես անձամբ այցելեցի այդ տեղերից մի քանիսը և տեսա, որ նրանք սոված են և հարյուրներով մեռնում են ամեն օր: Մի դատարկ տան մեջ ես տեսա կանանց, երեխաների ու սղամարդկանց, բոլորը մի սենյակում հատակին մեկմեկու այնքան մոտ պառկած, որ նրանց միջով հնարավոր չէր քայլել: Այստեղ նրանք, ովքեր փրկվել էին, ապրել էին ամիսներ շարունակ, հատակը կեղտոտ էր: Շատերը պառկած էին իրենց կեղտի մեջ:

Բրիտանական հյուպատոսությունը լի էր արտաքսվածներով, և այստեղից համարյա ամեն օր մեռածներ էին տանում: Ամբողջ քաղաքի դագաղագործներն աշխատում էին մինչև ուշ գիշեր՝ պատրաստելով կոպիտ արկղեր այն մեռածների համար, ում հարազատները կամ ընկերները կարող էին պատշաճ հուղարկավորություն կազմակերպել նրանց համար: Շատ մեռածների պարզապես գցում էին երկանիվ սալի մեջ, որոնք ամբողջ օրը պտտվում էին այն տեղերում, որտեղ հայեր կային: Այս սալերը սկզբում բաց էին, բայց հետո նրանց համար ծածկեր պատրաստեցին: Մի հայ բժիշկ, որին ճանաչում եմ, և որը բուժում է տառապող հայերից հարյուրավորներին, որոնք հիվանդացել են ճանապարհին արևահարությունից, սովից ու ծարավից, ինձ ասաց, որ ամեն օր Հալեպում հարյուրավոր հայեր են մահանում սովահարությունից և դաժան վերաբերմունքի ու արևա-

հարության պատճառով, որին նրանք ենթարկվել են իրենց բնօրրաններից այստեղ գալու ճանապարհին: Տառապող հայերից շատերը հրաժարվում են ողորմությունից, ասելով. որ այդ ձևով ստացած այդ փոքր գումարը միայն կերկարացնի իրենց տառապանքները, իսկ իրենք գերադասում են մեռնել: Նրանք, ովքեր կարող են վճարել, Հալեպից գնացրով ուղարկվում են Դամասկոս, իսկ նրանք, ովքեր փող չունեն, ներքին շրջանները տանող ճանապարհով ուղարկվում են Դեյր-Էլ-Չոր: Դամասկոսում ես տեսա, որ վիճակն իրականում նույնն է, ինչ Հալեպում, այստեղ ևս հարյուրավորներ են մեռնում ամեն օր: Դամասկոսից նրանց ուղարկում են ավելի հարավ՝ Հորան. որտեղ նրանց ճակատագիրն անհայտ է: Մի քանի թուրքեր, որոնց հետ ես գրուցեցի, ինձ ասացին, որ այս տեղահանման դրդապատճառը ռասայի բնաջնջումն է, և ես ոչ մի անգամ չտեսա, որ մուսուլմանները օգնություն տային հայերին, քանի որ վերջիններիս օգնելը համարվում է քրեական հանցանք:

Դամասկոսում և Սիրիայում ես մնացի մոտավորապես մեկ ամիս և հոկտեմբերի 26-ին մեկնեցի Սմիրնա: Ամբողջ ճանապարհին ես տեսնում էի այս դժբախտ տեղահանվածներից հազարավորների. որոնք դեռ շարունակում էին գալ Հալեպ: Այն, ինչին ես ականատես եղա այս ճամփորդության ժամանակ, ավելի ցավալի էին, քան այն, որ տեսել էի Հալեպ գնալիս: Կարծես թե վերջ չկար այն քարավանին, որ անցնում է լեռնաշղթայով՝ Պոզանտիի հարավային կողմից: Ամբողջ օրվա ընթացքում՝ արևածագից մինչև արևամուտ, տեսանելի ճանապարհը լի է տեղահանվածներով: Տարսոնից դուրս ես տեսա մի մեռած կնոջ, որն ընկած էր ճամփեզրին, քիչ առաջ անցնելով՝ տեսա ևս երկու մեռած կանանց, որոնցից մեկին երկու ժանդարն հեռացնում էին ճամփեզրից, որպեսզի թաղեն: Նրա ոտքերն ու թևերն այնքան հյուծված էին. որ նրա ոսկորները դուրս էին ցցվել. իսկ դեմքը ուռած ու մուգ կարմիր էր արևահատությունից: Քիչ այն կողմ ես տեսա երկու ժանդարմների, որոնք ճանապարհից հեռացնում էին մի մեռած երեխայի՝ իրենց քանդած գերազմանում թաղելու: Ջարավանին հետևող զինվորներից ու ժանդարմներից շատերն ունեն բահեր. և հենց որ հայերից որևէ մեկը մեռնում է, նրանք դիակը ճամփեզրից հեռացնում ու թաղում են:

Ճանապարհին եղած իջևանատների շրջակայքի բաց տարածություններն օգտագործվում են որպես ճամբարներ հայերի համար, իսկ գետնի վրա այս ու այնտեղ թափփված է աղբ ու մարդկային կեղտ, որի զարշահողությունն անտանելի է: Ես տեսա մարդկանց, ովքեր լավ պայմաններում էին ապրել և այժմ ստիպված էին պառկել

կեղտի մեջ: Նրանց հագուստը ցնցոտի էր, շատերն անկոշիկ էին: Առավոտները ցուրտ էին, իսկ շատերը մեռնում էին արևահարությու-  
նից: Քիչ երխտասարդ տղամարդիկ կան այս քարավաններում, մե-  
ծամասնությունը կանայք ու երեխաներ են, 50 տարեկանից բարձր  
ծերունիների ուղեկցությամբ: Բայրամօղլիում մի կնոջ հետ զրուցեցի,  
որը խելագարվել էր իր կրամ տառապանքներից: Նա ինձ ասաց, որ  
իր ամուսնուն ու հորը սպանել էին իր աչքի առաջ, իսկ իրեն ստիպել  
էին երեք օր շարունակ քայլել առանց հանգստանալու: Նրա հետ  
էին իր երկու փոքր երեխաները, և նրանք բոլորն անհաց էին եղել  
ամբողջ օրը: Ես նրան մի քիչ փող տվեցի, և նա ասաց, որ մինչև  
օրվա վերջը, հավանաբար, իրենից կխլեն այդ փողը:

Գյուղերով անցնելիս այս քարավաններին դիմավորում են թուր-  
քեր ու քրդեր, և չափազանց բարձր գներով նրանց ուտելիք են  
վաճառում: Ես տեսա յոթ տարեկան մի փոքր տղայի ավանակի վրա,  
ձեռքերում պահել էր իր նորածին եղբորը: Նրանք երկուսով էին մնա-  
ցել իրենց ընտանիքից: Այս մարդկանցից շատերն օրեր շարունակ  
գնում են առանց հացի և աննկարագրելիորեն հյուծվում են: Ես տես-  
նում էի մարդկանց, որ ընկնում էին սովահարությունից, իսկ ճանա-  
պարհի երկարությամբ ջուր կա որոշակի տեղերում: Շատերը մեռ-  
նում են ծարավից: Հայերից մի քանիսը, որ ի վիճակի են, վարձում են  
կառքեր: Վճարում են նախօրոք, և արժեքը չափազանց բարձր է:  
Շատ տեղերում, ինչպես, օրինակ, Պոզանտին է, որտեղ թուրք զին-  
վորների ճամբար կա, քավարար հաց չկա հայերի համար, և Պո-  
զանտիից ընդամենը երկու ժամվա ճանապարհ անցնելուց հետո ես  
տեսա մի կնոջ, որը հաց էր պահանջում: Նա ինձ ասաց, որ Պոզան-  
տիում եղել է երկու օր շարունակ և ուտելու ոչինչ չի կարողացել  
գտնել, բացի նրանից, որ իրեն տվել են ինձ նման ճամփորդները:  
Հայերին պատկանող բեռնակիր անասուններից շատերը սատկում  
են սովից: Անսովոր տեսարան չէ, երբ հայը սատկած անասունից  
կապոցը վերցնում և իր ուսին է դնում: Շատ հայեր ասել են ինձ, որ  
չնայած նրանց թույլատրում են գիշերը հանգստանալ, իրենք չեն  
կարողանում քնել սովի պատճառով սուր ցավերից ու ցրտից: Այս  
մարդիկ ամբողջ օրվա ընթացքում քայլում են՝ ոտքերը քարշ տալով,  
և ժամեր շարունակ իրար հետ չեն խոսում: Մի տեղ, որտեղ ես կանգ  
առա նախաճաշելու համար, փոքր երեխաների խումբը շրջապատեց  
ինձ՝ հաց պահանջելով: Այս փոքրիկ արարածներից շատերը  
ստիպված են ոտաբոքիկ քայլել ճանապարհով, և նրանցից շատերը  
փոքրիկ կապոցներ են կրում իրենց մեջքին: Նրանք բոլորը հյուծված  
են, հագած են ցնցոտիներ, մազերը՝ կեղտոտ: Կեղտը հավաքել է մի-

լիոնավոր ճանճերի, և ես տեսել եմ նորածինների, որոնց դեմքերն ու աչքերը ծածկված էին այս միջատներով. իսկ նրանց մայրերն այնքան հյուծված էին, որ չէին կարողանում քշել ճանճերին: Ճանապարհին մի շարք վայրերում բռնկել են հիվանդություններ. ինձ գեկուցել են Հալեպում հայերի մեջ եղած տիֆի դեպքերի մասին:

Շատ ընտանիքներ բաժանվել են. տղամարդկանց ուղարկել են մի ուղղությամբ. կանանց ու երեխաներին մի այլ: Ես տեսա մի կնոջ, որը լալիս էր ճանապարհի մեջտեղում պառկած երեխայի հետ, իսկ նրա գլխավերևում կանգնած ժանդարմը ստիպում էր, որ նա վեր կենա և քայլ: Շատ երեխաներ ծնվում են ճանապարհին, և նրանց մեծ մասը մեռնում է, որովհետև մայրերը չեն կարողանում կերակրել նրանց:

Այս մարդկանցից ոչ մեկը չգիտե, թե ուր է գնում կամ. թե ինչու է տեղահանվում: Նրանք օրեցօր գնում են այդ ճանապարհով՝ հուսալով, որ հնարավոր է հասնել մի տեղ, ուր իրենց թույլ կտան հանգստանալ, և տեսել եմ մի քանի ծերունիների, որոնք իրենց աշխատանքի գործիքները տանում էին մեջքներին դրած, հավանաբար, հուսալով, որ մի օր կարող են հաստատվել որևէ տեղում: Տավրոսի լեռներում ճանապարհը տեղ-տեղ չափազանց դժվար է, և շատ անգամ հսկայական բեռների տանող գոմեշները, ցուլերն ու կովերը չեն կարողանում վեր բարձրանալ և բեռները լքվում են. իսկ ոստիկանները դրանք գլորում են ներքևի կիրճը: Կենդանիներն ազատ են արձակվում: Ես տեսել եմ սայլեր՝ հսկայական բեռներով, որոնց վրա նստած էին հայերը, կոտրվել են, և ուղևորներին ցած գցել: Մի թուրք սայլապան, որը մախօրոք գումար էր հավաքել այն մարդկանցից, ում տանում էր մի սայլով, շատ զվարճալի էր համարում այն, որ այսպես ընկնելով՝ կանանցից մեկը կոտրել էր ոտքը:

Թվում է, թե հյուսիսից, Անգորայից և Սև ծովի այլ շրջաններից եկող հայերի հոսքը երբեք չի դադարի: Նրանց վիճակն ավելի է վատանում ամեն օր: Իմ տեսածը վերադառնալիս ավելի վատ էր, քան գնալիս. իսկ այժմ, երբ եղանակը սկսում է ցրտել, և տեղում են ձմեռային անձրևները, մահերն ավելի բազմաթիվ են: Ճանապարհները որոշ մասերում համարյա անանցանելի են:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016 243.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II. p. 120-124:*

## ՀՈՒՇԱԳԻՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդհանրապես խոսելով իրենց բնակավայրերից հայերի տեղահանման հարցի մասին, դեսպանությունը, հավանաբար, տեղյակ չէ, որ նրանց բոլորին արտաքսել են Հյուսիսային Հայաստանի ու Անատոլիայի Խարբեթո, Դիարբեքիր, Բիթլիս, Մոսուլ, Մարաշ, Ջեյթուն, Սվազ, Էրզրում և այլ քաղաքներից: Նրանց բոլորին ուղարկում են հարավ՝ մինչև Սիրիայի անապատի սահմանները: Նրանց դիմավորում են հարավում՝ արաբական Սեյդեթիմ գյուղի մոտ, որը Դեյր-Էլ-Ջորից կառքով մեկ օր կամ Հալեպից յոթ օր դեպի հարավ է: Իրականում Սիրիայի բոլոր քաղաքները՝ Հալեպը, Դամասկոսը և այլն, լի են այս արտաքսվածներով, որոնք ավելի ողորմելի վիճակում են քան կարելի է երևակայել, հասկանալի է, որ նրանցից ոմանք ճանապարհին եղել են չորս կամ վեց ամիս շարունակ, իրենց բնակավայրերից դուրս են եկել ու կորել անցել են երկիրը, որն իրականում ամայի է և միջոցներ չեն ունեցել պատշաճ սնունդ ձեռք բերելու: Հայերին թույլատրում են կուտակվել որևէ քաղաքում այնքան, մինչև նրանց թիվն այնքան է շատանում, որ անհրաժեշտ է դառնում նրանց տեղավորել մի այլ քաղաք ավելի հարավում, և բնակչությունը սկսում է բողոքել հայերի ներկայությունից: Նրանց կարելի է տեսնել Հալեպում՝ ամայի վայրերում, հին շենքերում, բակերում, ետնախորշերում, և նրանց վիճակը պարզապես աննկարագրելի է: Նրանք ընդհանրապես անսնունդ են և մեռնում են սովահարությունից: Եթե փորձեք զննել այն վայրերը, որտեղ ապրում են հայերը, կարող եք տեսնել մեռնողների ու մեռածների խառնիխուռն մի զանգված, բոլորը խառնված անպետք ու քրջոտ հագուստի, աղբի ու մարդկային կեղտի հետ, և անհնար է առանձնացնել որևէ մեկին և նկարագրել նրան, որպես մարդկային էակի: Բազմաթիվ բաց կառքեր շրջում էին փողոցներով՝ փնտրելով դիակներ, և սովորական է տեսնել այս կառքերից մեկին, որը բեռնված է 10 կամ 12 մարդկային դիակներով՝ բոլորն էլ սաքսավիելիորեն հյուծված: Որոշ ժամանակից ի վեր այս սայլերի վրա դրվել են ծածկեր, սայլերը ներկվել են սև, անընդհատ կարելի է դիակներ տեսնել, մեծ մասամբ կանանց ու երեխաների, որոնք քարշ տալով հանում են բակերից ու ետնախորշերից և նետում կառքերի մեջ այնպես, ինչպես կնետեին ածուխի պարկը: Անհնար է որոշել մեկ օրում մեռածների թիվը, սակայն հայկական գերեզմանատանը երկար փոսեր են փորել, և դիակները պարզապես բերվում են այն-

տեղ և առանց խտրակամության նետվում փոսք: Բազմաթիվ վանականներ ամբողջ օրը մնում են գերեզմանատանը և իրականացնում թաղման արարողություն, երբ կատարվում է. այսպես կոչված թաղում: Ժամանակ առ ժամանակ քաղաքը մաքրելու մասին հրաման է ստացվում, և ժանդարմներն ու քաղաքային պահակները շրջում են և հանում հայերին իրենց ապաստարաններից, հրմշտելով տանում են կալարան և անասունների մման խցկում բաց ապրանքատար վագոնները և ուղարկում Դամասկոս կամ այլ քաղաքներ Հեյազում: Երբեմն մի մեծ քարավան է հավաքվում և ուղարկվում Դեյր-Էլ-Չորի ուղղությամբ: Այս մարդկանց վտարման ժամանակ ցուցաբերվում է ոչ անհրաժեշտ վայրագություն, քանի որ նրանց մեծ մասը կենդանի կմախքներ են, կարելի է տեսնել, թե ինչպես են թուրքերը շների պես մտրակահարում հյուծված ու սովահար կանանց ու երեխաներին, որպեսզի նրանց ստիպեն շարժվել:

Գիշերը, Հալեպի թաղամասերում շրջելիս. կարող ես գետնի վրա տեսնել աննկարագրելի «մի բան», կլսես տնքոց և կիմանաս, որ նա մեկն է մարդկային այն ավերակներից, որը հաջորդ առավոտյան կնետվի սայլի մեջ և կտարվի գերեզմանատուն: Այս մարդկանցից շատերը հրաժարվում են ընդունել որևէ օգնություն, ինչ էլ որ լինի, և ասում են, որ գերադասում են մեռնել և վերջ դնել իրենց տառապանքներին, քան թե երկարաձգել դրանք, քանի որ ապագան թեթևացնելու ոչ մի հույս չի տալիս: Նրանց պատմած պատմություններն աննկարագրելի են: Փոքր Ասիայի հյուսիսասյին քաղաքներից հայերին արտաքսելիս 15-ից 60 տարեկան բոլոր տղամարդկանց գնդակահարել են կանանց ու երեխաների աչքի առաջ՝ ճանապարհվելու ժամանակ կամ որոշ տեղ անցնելուց հետո: Ոչնչացածների քանակի մասին կարելի է գաղափար կազմել, իմանալով, որ Խարբերդի շրջակա գյուղերից դուրս եկած 2500 մարդուց միայն 600-ն է հասել Դեյր-Էլ-Չոր: Հայերի պատմություններից կարելի է իմանալ, որ ճանապարհին կանանցից շատերն իրենց երեխաներին նետել են գետը, որովհետև նրանց կերակրելու ոչինչ չեն ունեցել, և, փաստորեն, յուրաքանչյուր ընտանիք ունի կորուստ. որովհետև տղամարդկանց սպանել են, երեխաները մահացել են, աղջիկներին տարել են ճանապարհին թափառող բուրդ և արաք ավազակները: 14 տարեկան մի տղա պատմեց, թե ինչպես էին գնդակահարել իր հորն ու մորը, երկու բույրերին առևանգել էին ճանապարհին, և ամբողջ ընտանիքից իր հետ մնացել էին միայն երկու փոքր բույրերը: Խարբերդի ամերիկյան քոլեջից մի աղջիկ, որ անգլերեն գիտեր, պատմեց, թե ինչպես էին Խարբերդում խոշտանգել մի քանի վանականների ու

պրոֆեսորների, որպեսզի ստիպեն նրանց հայտնել ենթադրյալ գեների ու գինամֆերքի տեղը: Մի աղջիկ, որը բուժքույր էր գինվորական հոսսպիտալում, երդվեց, որ խնամում էր իր պրոֆեսորներից մեկին այն բանից հետո, երբ թուրքերը պոկել էին նրա դեմքի մազերը, քաշել-հանել ձեռքի ու ոտքի մասների եղունգները: Ասում են, որ նույն ձևով թուրքերը խոշտանգել են մի հայ վանականի, որին վերջում ողջ-ողջ այրել են: Սրա ճշմարտացիությունը, սակայն թվում է, որ հնարավոր չէ քսաներորդ դարում: Անսովոր չէ հաճելի տեսք ունեցող կանանց ու աղջիկների անարգամբ քրդերի ու արաբների կողմից, որոնք հանդիպում են ճանապարհին, և որոնցից նրանք պաշտպանվել չեն կարողանում: Փաստորեն, հայերի բոլոր այս քարավանները կազմված են կանանցից ու երեխաներից, 15-ից 60 տարեկան տղամարդիկ հանդիպում են հազվադեպ: Այս մարդկանցից շատերը, համեմատաբար, սպառնալից էին, իրենց հետ բավականին գումար էին բերել և թաքցրել էին իրենց մոտ: Սա, իհարկե, հայտնի դարձավ ժանդարմներին ու ճանապարհներից քափառող ավազակներին, որոնք թալանեցին հայերին, վերցնելով ոչ միայն նրանց փողը, այլև զարդեղենը, հագուստը, անկուլինը և մնացած ամեն ինչ: Եփրատի վրա գտնվող Մեյեդիլիկ մինչև Կոնիա, փաստորեն, յուրաքանչյուր քաղաքից դուրս կարելի է տեսնել ճամբար, որտեղ կա 2000 մինչև 20000 գաղթական, և կարելի է պատկերացնել, որ երբ մարդկանց այսպիսի մեծ խումբը գցված է բնակչության վրա, որն արդեն դժվարությամբ է աշխատանք ու մթերք ճարում, վիճակը դառնում է անտանելի, և հայերը, բնականաբար, պետք է սովից մեռնեն, քանի որ լրացուցիչ մարդկանց համար սնունդ ճարելը դառնում է անհնարին:

Բոլոր գլխավոր ճանապարհներից կարելի է տեսնել գաղթականների անընդհատ հոսք, որ ծուլորեն քարչ է գալիս դեպի հարավ, վերջնական ժամանման վայրն՝ անհայտ, այն աղոտ հույսով, որ վերջապես կհասնեն մի տեղ, ուր կկարողանան ապրել համեմատաբար հարմար պայմաններում և ուտելիք կգտնեն: Մակայն, եթե նրանք իմանային, թե ինչ են գտնելու, և թե վերջում ինչ է լինելու իրենց հետ, նրանք անկասկած կգերադասեին պարզապես նստել ու սպասել մահվանը տեղում:

Հալեայում մի կին խելագարված գառանցում էր, որովհետև կորցրել էր երեխային և չէր կարողանում գտնել նրա տեղը:

Գաղթականներին օգնելու յուրաքանչյուր փորձ անմիջապես կանխվում է իշխանությունների կողմից, և լրտեսներն անընդհատ աչքի տակ են պահում ամերիկյան հյուպատոսությունը: Մի քանի

հայեր, ուրբեր այցելել էին հյուպատոսություն, բանտարկվեցին, իսկ մի կնոջ ժանդարմները դաժանորեն ծեծեցին, երբ տեսան, որ նա դուրս է գալիս հյուպատոսությունից:

Ուրֆայի, ինչպես և այս շրջանի մյուս բոլոր քաղաքների հայերին հրամայել էին քաղաքից հեռանալ մինչև սեպտեմբերի վերջը: Ուրֆայի հայերը, սակայն, հրաժարվեցին հեռանալ, և հետո հրաման ստացվեց նրանց վռնդել ուժով ու, եթե նրանք դիմադրեն, անհրաժեշտ միջոցառումներ ձեռք առնել: Հայերը դիրքավորվեցին իրենց թաղամասում, քարիկադներ կառուցեցին, փորեցին քաղաքի մի մասից մյուսը գնացող ստորգետնյա անցումներ և ընդհանրապես, ձեռք առան բոլոր միջոցառումները հնարավոր հարձակման դեպքում իրենց պաշտպանելու համար: 6000 զինվորից ու հրետանուց բաղկացած մի գումարտակ Ֆակրի փաշայի հրամանատարությամբ գործողություններ սկսեց հայերի դեմ, և հոկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում թաղամասը ոմբակոծվեց: Հայերը հրացաններով ու զինամթերքով ապահովված էին. նրանց հաջողվել էր ձեռք բերել նաև միտրալիեզներ: Նրանք բավարար սննդամթերք ունեին նաև պաշարման դեպքում դիմադրելու համար: Հոկտեմբերի կեսերին մենք լսեցինք, որ թուրքական կողմից սպանվել են յոթ սպա և 400 զինվոր: Հայերին ինչ-որ ձևով հաջողվել էր վերցնել Ուրֆայում ամերիկյան հյուպատոսության գործակալ պարոն Լեսլին և Ուրֆայում ներդրված պատերազմող կողմի յոթ ներկայացուցիչներին: Հայերն այս ութ մարդուն պահում էին որպես պատանդ: Պարոն Ջեքսոնը դեսպանությանը զեկուցել էր. որ պարոն Լեսլին պահվում է ստիպողաբար, դեսպանությունն անհրաժեշտ քայլեր ձեռնարկեց, և մոտավորապես հոկտեմբերի 20-ին պարոն Լեսլին հեռագրեց. զեկուցելով. որ դուրս է եկել հայկական թաղամասից և ապահով վիճակում է: Թե ինչ եղավ յոթ ներկայացուցիչների հետ. հայտնի չէ:

Ուրֆայում ներդրված ներկայացուցիչների վիճակը, բնականաբար, որոշ չափով վտանգավոր է, և Հալեպի ամերիկյան հյուպատոսության աշխատակիցների շրջանում բավականին անհանգստություն է առաջացրել: Նրանք ավելի համառորեն են պահանջում, որ այդ ներկայացուցիչները տարվեն մի այլ տեղ. որտեղ նրանք ավելի ապահով կլինեն:

Հալեպում ամերիկյան հյուպատոս պարոն Ջեքսոնը չի կարողացել զեկուցել վերը նշված փաստերի մասին, որովհետև իշխանությունները չեն թույլատրում դեսպանությանը կնիքված մամակներ ուղարկել, հավանաբար, որպեսզի հնարավոր չլինի զեկուցագրեր ուղարկել այս դեպքերի մասին:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/243.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 125-128:*

## Փաստաթուղթ թիվ 72

Թիվ 662

### ԱՄՆՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

*Կոստանդնուպոլիս, 27 նոյեմբերի. 1915թ.*

*Հաշինգտոն.*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեն ուղարկելու դեպքանությանն ուղղված նոյեմբերի 17-ի թվագրությամբ Սմիրնայի գլխավոր հյուպատոսի հուշագիրը, երեք օրինակից, որը վերաբերվում է Հալեպում հայերի վիճակին և պարունակում է Ուրֆայում վերջերս տեղի ունեցած որոշ իրադարձությունների համառոտ նկարագրությունը:

Սմիրնայում ամերիկյան գլխավոր հյուպատոսն իր զեկուցագրում այս հուշագրի փոխանցման վերաբերյալ հայտնում է.

«Պատիվ ունեն ուղարկելու մի հայտարարության պատճենը, արված լիովին վստահելի մի պարոնի կողմից, որն ինձ տեղեկացնում է, որ պարոն Ջեքսոնը՝ Հալեպի մեր հյուպատոսը, ցանկանում է, որպեսզի այս զեկուցագրի նյութը Ձեզ ուղարկվի այսպես, քանի որ նա չի կարող դեպքանությանը կնքված ծրարներ ուղարկել: Ես չեմ նշում այն մարդու անունը, որն ինձ տվել է այս տեղեկությունը, քանի որ այս պահին խելամիտ չեմ համարում այն գրելը:

Պատիվ ունեն լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Մորգենթաու

Ներփակված է՝ հայտարարության մեջ նշված զեկուցագիրը երեք օրինակից (այս զեկուցագիրը նույնն է ինչ այս գրքի թիվ 71 փաստաթուղթը, սակայն պարբերությունները նույն հերթականությամբ չեն: Այն այստեղ ներկայացված չէ):

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/245.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries, vol. II, p. 129:*

Թիվ 346

ԱՄԵՐԻԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սմիթնա, Թուրքիա, 15 հունվարի, 1916թ.*

Առարկան. Ձեկուցագիր Հայկական հարցի վերաբերյալ

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

1915թ. նոյեմբերի 8-ի իմ զեկուցագրից հետո պատիվ ունեն սրանով ուղարկելու լրացուցիչ մանրամասներ, որոնք ինձ է տրամադրել վերջելու հայերի հալածանքների վայրերից վերադարձած մի հեղինակավոր մարդ: Այժմ ես չեմ նշում այդ մարդու անունը, սակայն կկարողանամ հայտնել այն, եթե առիթ ընձեռնվի պատերազմի ավարտից հետո:

Խնդրում եմ չնշել իմ անունը կապված այս հուշագրերի հետ, որոնք ուղարկում եմ դեպարտամենտի հսկողության տակ, այն ակնկալիքով, որ ամերիկյան կառավարությունը կարողանա որևէ քայլ ձեռնարկել այս դժբախտ մարդկանց տառապանքները թեթևացնելու ուղղությամբ:

Դեպարտամենտն անշուշտ կհասկանա, որ եթե իմ անունը նշվի որևէ առիթով, իմ դրությունն այստեղ կդառնա շատ թե քիչ վտանգավոր և իմ օգտակարությունը կավարտվի:

Պատիվ ունեն լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Հորտոն

Ամերիկյան գլխավոր հյուպատոս:

Ներվիակվածը՝ ըստ ասվածի:

800

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/268.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II, p. 130.*

ՉԵԿՈՒՑԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սկսեմք այն իրադարձություններից, որ տեղի ունեցան Ուրֆայում 1915թ. օգոստոսի 19-ին, մոտավորապես 4.30-ին, մունետիկները դուրս հրավիրեցին բոլոր թուրքերին, ովքեր կարող էին գենք կրել, և մի քանի թոպեից հավաքվեցին հարյուրավոր անբաններ. մի մասը զինված հրացաններով, մյուսները մահակներով ու դաշույններով: Նրանք հարձակվեցին հայերի վրա տարբերություն չդնելով տարիքի ու սեռի միջև, ծեծեցին, սպանեցին ու կոտորեցին նրանց բոլորին՝ անզեն ու անպաշտպան մարդկանց: Քանի որ երեկո էր, և աշխատանքային օրվա վերջ, տղամարդիկ դուրս էին եկել գրասենյակներից՝ տուն գնալու համար և, բնականաբար, անզեն էին և անպաշտպան: Կոտորածը սևեց երկու օր, որից հետո մեկ ամսից ավելի կատարյալ հանգիստ էր: Այս կոտորածի համար թուրքերի արդարացումն այն էր, որ հայերի տներից մեկում ոստիկանները փնտրում էին գենք և երեք հայերի, ովքեր ջրհորում թաքնվելով, կրակ էին բացել ոստիկանների վրա և սպանել էին մի ոստիկանի և երկու ժանդարմի:

Սեպտեմբերի 29-ին, ճիշտ կեսօրին լավեցին կրակոցներ: Հայերը ոտքի էին ելել թուրքերի դեմ և սա սկիզբ եղավ նրանց միջև կանոնավոր պայքարի, որը տևեց 25-ից 30 օր: Այս ժամանակահատվածի ընթացքում թուրքերը հայկական քաղամասի տներից հանեցին բոլոր կանանց ու երեխաներին և 2-3 օր պահեցին մի իջևանատանը, իսկ հետո ուղարկեցին անհայտ ուղղությամբ: Այդ նույն ժամանակ կարելի էր տեսնել սովից ու հոգնածությունից հյուծված կանանց ու երեխաների 400-ից 500 հոգանոց քարավաններ, որոնք գալիս էին այլ քաղաքներից ու անցնում: Ճանապարհին յուրաքանչյուր քարավան թողնում էր երկու-երեք մեռած երեխա, իսկ թուրք երեխաները ոտքով հատվածում էին նրանց դիակներին՝ ճամփից հանելու համար: Այն մայրերը, որոնք մեկ-երկու երեխա ունեին իրենց հետ, անցորդներին խնդրում էին վերցնել իրենց երեխաներին, պահել ու խնամել: Մայրերն իրենց երեխաներին նվիրում էին նրանց վերցնել ցանկացողներին:

Օրը երկու-երեք անգամ կանանց տարբեր քարավաններ էին անցնում այդ ճանապարհով, այնպես որ այդտեղով օրեկան անցնում էր մոտավորապես 1500 մարդ, և սա շարունակվեց մոտավորապես երկու շաբաթ անընդհատ:

Պատերազմի ընթացքում այն բոլոր հայերին, ում թուրքերը կա-  
յողանում էին ձերբակալել, 50-ից 100 հոգու ռաքերից ու ձեռքերից  
միասին կապելով, ստիպում էին յարձրանալ բլուրը, որտեղից նրանց  
հրում էին կիրճը, իսկ հետո նրանց վերջը տալիս էին թյերի կամ  
սվինների հարվածներով: Այս մեթոդը կիրառվում էր կրակելու փո-  
խարեն՝ զինամթերք խնայելու նպատակով:

Հակամարտությունների ժամանակ հայերին հաջողվեց գրավել  
ամերիկյան միսիայի շենքը: Բարիկադելով պատուհանները հայերը  
կրակում էին թուրքերին ներսից պատուհանների անցքերից: Այստեղ  
ապաստանել էին նաև 8 կամ 10 ներկայացուցիչներ: Նրանց տները  
հայկական թաղամասում էին, և երբ նրանք տեսան, թե ինչ է  
կատարվում, ապաստանեցին այստեղ ապահովության համար:  
Նրանց, ամերիկյան միսիոներ պատվելի Լեալին, ինչպես նաև  
մնացած միսիոներներին հայերը պահում էին որպես պատանդներ:

Թուրքական կառավարությունը պատուա փակցրեց միսիայի  
ղիմացի բլրի վրա և պահանջեց պարոն Լեալին իր հետ գտնվող  
բրիտանացի ու ֆրանսիացի զերիների հետ դուրս գալ. սակայն  
նրանք նույն կերպ պատասխանեցին, որ իրենք հայերի գերիներն են  
և դուրս գալ չեն կարող: Այդ ժամանակ թուրք կառավարությունն  
ընտրեց իր գերիներից երկու բրիտանացու, երկու ֆրանսիացու և եր-  
կու ռուսի և փորձեց ստիպել նրանց ստորագրել մի հայտարարու-  
թյուն, որտեղ ասվում էր, որ միսիայում կառուցվել են բարիկադներ, և  
ներսից հայերը կրակում են թուրք զինվորների վրա, և որպեսզի վերջ  
տրվի սրան, իրենք ստիպված պետք է լինեն ռմբակոծել միսիայի  
շենքը: Այս մարդիկ, իհարկե, հրաժարվեցին ստորագրել հայտարա-  
րությունը ոչ թե որովհետև այն ճշմարիտ չէր, այլ որովհետև ուզում  
էին խանգարել ռմբակոծությունը, քանի դեռ պարոն Լեալին և մյուս-  
ները ներսում էին: Այնուամենայնիվ, թուրքերը ռմբակոծեցին միսիա-  
յի շենքը, իսկ հայերը փախան: Պատվելի Լեալին և նրա հետ գտնվող  
մյուս զերիները կարողացան փախչել և գնալ կառավարական տուն:  
Հարցաքննությունից հետո ներկայացուցիչներին թույլ տվեցին գնալ,  
սակայն պատվելի Լեալին մեղադրվեց հայերի հետ կապ ունենալու  
մեջ և դատապարտվեց բանտարկության: Գերմանացի մի միսիոներ  
երաշխավորեց պարոն Լեալիի համար և կարողացավ խանգարել  
բանտարկությանը. սակայն պարոն Լեալին ստիպված էր ամեն օր  
ներկայանալ զինվորական դատարանի հարցաքննության: Մի առա-  
վոտ կառավարական տուն գնալիս, նա տեսավ մի քանի կախաղան-  
ներ պատրաստված 60 հայերին կախելու համար: Քանի որ լարվա-  
ծությունից Լեալիի գիտակցությունը տեղի էր տվել, նա երևակայեց,

որ այդ կախաղաններն իր համար էին, և ինքնասպան եղավ՝ մի շիշ կարբոնաթթու կոլ տալով: Նրա գրպանում գտան մի թուղթ, որի վրա գրված էր. «Նա մեռնում եմ, բայց անմեղ եմ մեռնում»: Կառավարության կողմից նրա դեմ ներկայացված մեղադրանքները հիմնված էին այն փաստի վրա, որ նա շատ զարդեր ու այլ արժեքավոր իրեր էր վերցրել հայերից՝ ապահով պահպանության համար:

Արաք-Քունար կոչվող գյուղի մոտից երկաթուղու աշխատողներն ամեն օր զեկուցում են, որ այս գյուղից մոտ 50 մետր հեռավորության վրա կա 100-ից 150 դիակ, և փողոցային շներն ամեն օր մարդկային ձեռքեր, ոտքեր ու գլուխներ են բերում կայարանի մոտից: Այստեղ շատ ցավալի էր տեսնել մի երիտասարդ աղջկա, որը մի երկար, մաշված շավար ու բրդյա մաշիկներ հագած պառկել էր իջևանատան անկյունում և մեռնում էր սովից ու ցրտից: Երբ նրան հարցրեցին, թե ինչ գործ ունի այդտեղ, նա սկսեց լաց լինել, մի փոքր անց նա սկսեց խոսել ֆրանսերեն, անգլերեն ու գերմաներեն: Նա անկասկած ունևոր ընտանիքի աղջիկ էր և շատ լավ կրթություն էր ստացել, սովոր էր դաստիարակների ու զիտեր կրթության առավելությունը: Նրա հորն ու մորը սպանել էին, իսկ փոքր եղբայրը, որն ուղեկցել էր իրեն, այժմ հիվանդ պառկած էր Սուրաջի հիվանդանոցում: Այս քաղաքներով՝ Ուրֆա, Սուրաջ և այլն, անցնող բոլոր սիրունատես կանանց ու աղջիկներից պահանջում են ընդունել մուսուլմանություն, եթե նրանք ուզում են փրկել իրենց կյանքը: Շատերն այդպես էլ վարվում են: Իսլաիիեում մեռածների թիվն այնքան շատ էր, որ այստեղի երկաթուղու կառուցման համար մի պատասխանատու աշխատող իր ղեկավարությանը հեռագրեց, որ իր մոտ ուղարկեն զինվորների մի զումարտակ՝ մեռածներին թաղելու համար: Սրանից կարելի է հասկանալ, թե օրեկան ինչքան մարդ է մեռնում այս ստարածքում: Իսլաիիեից մինչև Օսմանիե 50-ից 60 կիլոմետր երկարությամբ ճանապարհն իրականում գերեզմանոց է: Ամբողջ ճանապարհի երկարությամբ կան երեք թմբեր, որոնցից յուրաքանչյուրում պետք է որ թաղված լինի մի քսան դիակ: Ճանապարհի ամենացավալի տեսարաններից մեկն այն էր, որ մի ծեր կին այդ թմբերից մեկին պառկած հրաժարվում էր հեռանալ և կաշել էր իրեն առաջարկող ուսելիքին՝ գերադասելով սպասել մահվանը:

Հալեպում կային հայեր, որ եկել էին Մերսինից, Ադանայից և այլն, փող ունեցողներից շատերին ճանապարհին թալանել էին: Նրանք, ովքեր փող չունեին, ոտքով գնացին Ուրֆա, Դեյր-Էլ-Չոր և այլն, և նրանցից շատերը ճանապարհին մեռան սովից ու ցրտից:

Չարդերն ու այլ արժեքավոր իրերը, որ հայերն ունեին իրենց մոտ, կամ թալանվեցին, կամ վաճառվեցին մի օկ (մոտ մեկ կիլոգրամ), հացի համար: Արար-Բունարի մոտ մարդիկ տեսել են կանանց, ովքեր խոտ ու այլ բույսեր էին ուտում սովի տառապանքները մեղմացնելու համար:

Ուրֆայում ու Հալեպում տիֆի համաճարակ էր բռնկվել և օրեկան Ուրֆայում մեռնում էր 20, իսկ Հալեպում 250 մարդ: Այս համաճարակը, թերևս, հիմնականում հետևանքն էր այն փաստի, որ հայերի մեջ տարբեր պատճառներով մահացած մարդկանց թիվը շատ մեծ էր, և որոշ ժամանակ այդ դիակներն անթաղ էին մնում:

Առաջին կոտորածների ժամանակ անհետացավ մի ֆրանսիացի, որին, հավանաբար, սպանել էին. մի անգլիացի, որը գտնվում էր մի տան մեջ, որտեղ փաստորեն կոտորած էր տեղի ունենում, կառուրից ընկնելուց և մեջքը կոտրելուց հետո, խելագարվեց:

Այբյուր 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/268.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II. p. 135.*

## Փաստաթուղթ թիվ 75

*Ուրմիա, Պարսկաստան. 23 հունվարի. 1915թ.*

*Թեհրան. Ամերիկյան մինիստր*

*Պատվարժան Ջ. Լ. Բոյլուն*

Հարգելի պարոն,

Մի քանի օր առաջ ստացա մայիսի 31-ի Ձեր նամակը: Նրանում Դուք խնդրում եք, որ ես Ձեզ ուղարկեմ «լրիվ հաշվետվություն դաժանությունների, կոտորածների և այլնի մասին. որ Դուք կարողանաք անձամբ հաստատել, որ այդպիսիք տեղի են ունեցել: Ինչպես նաև հաշվետվություն, որը հիմնված լինի «ասեկոսների, տեղեկությունների, հավատի վրա»»: Հեր Նյումանի Ձեզ ուղարկած նամակը մասամբ կպատասխանի ձեր խնդրանքին. եթե Հեր Նյումանը բարեհաջող հասնի Թեհրան: Սրանով ես կփորձեմ պատասխանել հասկանալիորեն և այնքան ամբողջական, որքան թույլ կտա ժամանակը:

Ռուսական զորքն Ուրմիայից հեռացավ հունվարի 2-ին և վերադարձավ մայիսի 24-ին: Թուրքական զորամասերը եկան հունվարի 4-ին և հեռացան մայիսի 20-ին: Այս ժամանակահատվածում քրիս-

տոնյա բնակչության կորուստը կազմեց՝ մոտ 1000-ը սպանվեցին, իսկ մոտ 4000-ը, մեռան հիվանդություններից: Այս թվերը, չնայած կտրացված են, բայց ենթադրություններ չեն, այլ կատարված են մանրամասն հայցումների ու գրառումների հիման վրա: Ես կազմել եմ մեռածների ցուցակը՝ լրացնելով այն ուշադիր հարցումների հիման վրա, գրառումներ կան նաև Ուրմիայի և մեր բոլեջի տարածքի 3600 գերեզմանների վրա, միևնույն հայտնի է, որ ուրիշներն էլ են եղել: Անցյալ տարվա հաշվումներով, հունվարի 1-ի դրությամբ, քրիստոնյա բնակչության թիվը քաղաքում և դաշտավայրի գյուղերում կազմում էր 5600 ընտանիք, և 800-ից 1000 ընտանիք էլ այստեղ էին եկել լեռներից, Տերգավառ, Մերգավառ, Նոկիա, Մարքիլու և Գավառ շրջաններից, մի մասը Պարսկաստանից, մի մասն էլ Թուրքիայից: Ընտանիքը հինգ հոգու հաշվարկով, մարդկանց թիվը 32000-ից 33000 էր: Երբ ուսները գնացին, մեծ թվով քրիստոնյաներ հեռացան, և այստեղ մնացածների թիվը հավանաբար դարձավ 25000, այնպես որ հինգ ամսից ավելի քիչ ժամանակում մարդկանց կորուստը կազմեց մոտավորապես ամբողջի 20%-ը: 6500 ընտանիքներից անշուշտ հազարից ոչ ավելին փախան առանց իրենց ամբողջ ունեցվածքից բալանված լինելու, իսկ շատերը թալանվել էին մասամբ: Արդյունքում, փրկված բնակչության մեծ մասը կորցրել է ամեն ինչ, բացի անշարժ գույքից: Հազար տուն էլ չկա դռներով ու պատուհաններով մնացած, իսկ նրանց կեսը կամ քիչ ավելին մնացել են առանց կտորների փայտյա մասերի:

Մեր միսիայի սեփականության կորուստը կազմում է 10000\$, կորուստը մասամբ եղել է հոկտեմբերին տեղի ունեցած հարձակման ժամանակ: Քրիստոնյա բնակչության ունեցվածքի կորուստը հաշվարկվում է տարբեր կերպ, ամենացածրը՝ 2500000\$, այլ հաշվարկով այն տասն անգամ ավելին է: Որպեսզի արվի անցյալ տարվա լրիվ հաշվարկը, պետք է ավելացնել մոտուլմանների ունեցվածքի մեծ կորուստները, և, գուցե, մի քանի հարյուր կյանքերի կորուստը: Փաստացի գրանցումով, հավանաբար, հարյուրից ավելի քրիստոնյա կանայք ու աղջիկներ, դարձան մոտուլման՝ շատ դեպքերում վախի ու բռնության հետևանքով: Հարյուրավոր կանայք ու աղջիկներ անարգվեցին:

Մոտավորապես անցյալ հոկտեմբերի 1-ին Թուրքիայի և Ռուսաստանի միջև պատերազմ սկսելուց առաջ, Ուրմիայի շրջանի վրա հարձակում եղավ, հավանաբար, քրդերի կողմից, և կռիվը տեղի ունեցավ քաղաքի անմիջական շրջակայքում: Այդ ժամանակ տեղի թուրք հյուպատոսը ժխտեց Թուրքիայի մասնակցությունն այդ հար-

ձակմանը, ոչ միան ռուսների ու պարսիկների. այլև ինձ հետ զրուցելիս: Բայց այն ժամանակ պարզ էր, այժմ էլ հարձակմանը մասնակցած թուրք զինվորներից և ուրիշներից միանգամայն պարզորոշ է դառնում, որ այդ գործողությունը դեկավարում էին թուրք սպաները, և որ այդ կռվին մասնակցել են ավելի շատ թուրք զինվորներ, քան քրդեր: Թուրքական ծառայության մեջ գտնվող թուրքերն ու պարսիկ ֆիդայիները բացահայտորեն հիշում էին «Չարքաշի» և «Մավանայի» մարտերի մասին և դժգոհում. որ իրենք մարտերը թողեցին թուրքական կանոնավոր զորքին: Այս մարտերի ժամանակ ավիրվեց ութ կամ տաս քրիստոնեական գյուղ: Դրա հետևանքով ռուսները քրդերին դուրս արեցին Մոմայի. Բարադուստ. Տերգավառ և Մերգավառ շրջաններից. Ուրմիայի և թուրքական սահմանի միջև եղած տարածքից, ինչպես նաև սունի մուսուլմաններից արտաքսեցին Ուրմիայի դաշտավայրի մի քանի գյուղերից կախելով ութ կամ տաս մարդու հարձակմանը մասնակցելու համար: Հետագա իրադարձությունները ստիպում են հավատալ, որ մեղադրանքը հիմնավորված է: Ռուսները նաև զինեցին մի 3000 քրիստոնյայի: Այս միջոցառումներն արդարացված էին, սակայն նրա հետևանքները չափազանց ցավալի էին. քանի որ վրիժառությունն ահավոր էր: Ի պատասխան քրդերի տեղահանմանը՝ թուրքերը Նոկիայից արտաքսեցին քրիստոնյա բնակչության մեծ մասին:

Կրկին վերադառնալով վերը նշված ժամանակահատվածին՝ պետք է ասել, որ տեղահանումն իրականացրեցին քրդերը, պարսիկ գյուղացիներն ու թուրքերը:

Կյանքի կորստի դեպքերի ամենամեծ թիվը հունվարի 2-ից սկսվող առաջին շաբաթվա ընթացքում էր. նույն ժամանակում էր նաև ունեցվածքի ամենամեծ կորուստը: Երբ ռուսները հեռացան, քրդերը պատրաստ էին ներխուժելու երեք ուղղությամբ, և մարտն արդեն սկսվել էր: Զրդերն անմիջապես ներխուժեցին. իսկ մուսուլման գյուղացիները միաժամանակ սկսեցին թալանել ու սպանել: Դժվար է հաստատ ասել, թե արդյոք քրդերի ու պարսիկ գյուղացիների կողմից իրականացվող այս զանգվածային թալանը նախօրոք էր պայմանավորված: Ես կասեի, որ այս շաբաթվա ընթացքում 750 սպանվածների մեծ մասին սպանել էին քրդերը. մինչդեռ սեփականության թալանի մեծ մասն արվել էր մուսուլման գյուղացիների կողմից, որոնք էլ մեղավոր են նաև կանանց նկատմամբ արված հանցանքներում: Ամեն դեպքում քրդերի գալը հիմք ու հնարավորություն էր մասսայական թալանի համար: Քուրդ ցեղերի մասնակցությունն այս արշավանքի միջոցառմանը թուրքական ծրագրի մասն էր, իսկ

նրանց ստիպելով՝ ռոբարկել էին պատասխանատու թուրք պաշտոնատար անձինք՝ զինվորական, քաղաքացիական և հյուպատոսական: Զբիստոնյաների համար շատ ավելի վտանգավոր եղավ Ջիհադի կոչը, որը բացահայտորեն անում էին թուրք պաշտոնատար անձինք: Այս հայտարարությունը ես անում եմ իմ ու մյուս միսիոններ-ների այն ժամանակ և հետո տեսածի ու լսածի հիման վրա: Գոկտոր Փեքարոյը Ջեոզթափա գյուղում քրդերի կոտորածներից փրկել է ավելի քան հազար մարդու, և քրդերն էլ հետո ինձ և ուրիշներին պատմում և բացելիքաց ասում էին, որ եթե չլիներ դոկտոր Փեքարդի միջամտությունը, իրենք բոլորին կսպանեին: Աննշան հսկողությամբ կամ առանց դրա բարբարոս ցեղերի օգտագործումը խաղաղասեր մարդկանց դեմ բոլորովին արդարացված չէ, իսկ այս հանցագործության համար թուրքերն անշուշտ մեղավոր են: Ի միջի ալլոց, պետք է ասել, որ չնայած հոկտեմբերին, ինչպես գիտենք, ռուսական զորքերն արդեն կռվում էին քրդերի ու թուրքերի դեմ, հետագայում, դեկտեմբերին կրկին մարտեր եղան ռուսների ու քրդերի միջև, հունվարի 1-ից ոչ մի ռուսական զինվոր չկռվեց Ուրմիայի շրջանում ու կյանքի և ունեցվածքի կորուստը ոչ մի ձևով կապված չէ պատերազմին բնորոշ գործողությունների հետ: Թուրք պաշտոնատար անձինք ինձ ասել և ասում են, որ քրիստոնյաների սպանվելու պատճառն այն է, որ ռուսները զինում են նրանց, և նրանք էլ դիմադրություն են ցույց տալիս քրդերին: Կարծում եմ, ամերիկացին կամաչեր, եթե չդիմադրեր նման հանգամանքներում: Ճշմարիտ է, որ քրիստոնյաներին զինել են, սակայն քրդերը հարձակվողներն էին, իսկ քրիստոնյաները սպանվել են այնտեղ, որտեղ, համաձայն իմ խորհյոյի, նրանք հանձնել են իրենց զենքերը (Կալա Իսմայիլ Աղայում), և որտեղ նրանք դիմադրություն ցույց չեն տվել (Աղայում): Թուրք հանակիրները, ովքեր լավատեղյակ են, ինձ ասացին, որ եթե հոկտեմբերին թուրքերն ու քրդերը գրավեին Ուրմիան, հաստատ կարելի էր սպասել, որ թալան ու սպանություններ կլինեին: Սա քրիստոնյաներին զենք տալուց և պատերազմը սկսելուց առաջ էր: Ավելին, Ռաշիդ բեյը՝ թուրքական փոքր զորքի հրամանատարը, բացի քաղաքից, ուր նա մտավ առաջինը, և Գյուլփաշան գյուղից, մեր կողմից ստիպելուց հետո, ոչ մի փորձ չարեց խանգարելու կամ թույլ չտալու սպանող ու թալանը, և թուրքերը երբեք ոչ մեկին չպատժեցին մեկ շաբաթվա վայրագությունների կամ քրիստոնյաների դեմ հետագա հանցագործությունների համար: Որոշ դեպքերում պարսկական իշխանությունները պատժեցին հանցագործներին: Թուրքերը ոչ մի հետաքննություն չանցկացրեցին, և սեփական փորձից հասկա-

ցա, որ թուրք պաշտոնատարները վիաստերն իմանալու ուղղությամբ շատ քիչ ցանկություն ունեին:

Առաջին շաբաթվա վերջին շրջանում և ամերիկյան միսիսաներում առաջացաւ, անօթևան քրիստոնյաների մի ստվար զանգված 20000 մարդուց ոչ պակաս: Մնացածը ցրվեցին ու թաքնվեցին մուսուլմանական գյուղերում: Թուրքերն անմիջապես ընդհանուր համաներում հայտարարեցին և խոստացան կյանքի ու գույքի ապահովում: Հրամանատարը նույնպես որոշակի քայլեր ձեռնարկեց քաղաքում կարգ ու կանոն ապահովելու ուղղությամբ և անձամբ գնդակահարեց բազմաթիվ թալանչիների: Սակայն բարձրաստիճան սպաների ռազմաճակատ մեկնելու հետ միասին վիճակն ավելի վատացավ, և մենք ապրեցինք մշտական անհանգիստ վիճակում: Սպանությունները հաճախակի էին, և մեր շենքերից դուրս քրիստոնյաների համար դժվար էր պաշտպանություն գտնել նույնիսկ քաղաքի մեջ, իսկ երկրում տեղաշարժվելն անհնարին էր: Քաղաքից մինչև մեր քուլեջի շենքը, երկու մղոնից էլ քիչ մի տարածք, մենք չէինք համարձակվում գնալ առանց պահակների, իսկ այն քրիստոնյաները, ովքեր փորձում էին գնալ, թալանվում էին: Երկու անգամ քրիստոնյաները գայթակղվեցին քուլեջի շենքից դուրս գալով, և կես մղոն էլ չանցած, սպանվեցին քրդերի կողմից: Քրիստոնյաների թաղամասի տներն ավիրվել են քրդերի ու թուրք կանոնավոր զինվորների կողմից՝ այն գրավելուց հետո: Երեք քրիստոնեական գյուղերը՝ Գյուլփաշան, Չարիգուշին և Ռահվան, խուսափեցին առաջին շաբաթվա թալանից: Դրանք հետո թալանվեցին, չնայած ոչ ամբողջությամբ, այն բանից հետո, երբ թուրքական իշխանությունները դրանք թողեցին այնտեղ մնացած թուրք զինվորների պաշտպանության ներքո: Փետրվարի վերջին օրերի ընթացքում թուրքերն իրականացրեցին երկու կոտորած: Մի սպայի հրամանատարությամբ թուրք զինվորները ներխուժեցին ֆրանսիական միսիսայի շենքը և հավաքեցին իրենց գտած բոլոր տղամարդկանց՝ 160 պատահական մարդու: Նրանց տարան թուրքական շտաբ և պահեցին որպես բանտարկյալներ: Մի քանի օրից պատահական ընտրությամբ հարյուրն ազատվեցին: Հետո ուրիշներն ազատ արձակվեցին, որից հետո. Ռաջլիբ բեկի՝ Թավրիզում Թուրքիայի գլխավոր հյուպատոսի և Ուրմիայի նախկին հյուպատոսի ժամանելուց մեկ-երկու օր անց բառասունուր մարդու դուրս հանեցին կեսգիշերին, ասացին, թե նրանց տեղափոխում են Թուրքիա, և միասին կապված՝ գնդակահարեցին մի վայրում քաղաքից երկու մղոն հեռավորությամբ: Մեռածներին ու վիրավորներին առաջին կրակոցներից չսպանվածներին նորից գնդակահարելուց հետո, թողեցին

իրար վրա թափված: Ես արթնացա կրակոցների ձայնից, իսկ հաջորդ օրը մենք տեսանք հագուստներն արյան մեջ կորած փրկվածներին, ովքեր սողալով դուրս էին եկել մեռածների տակից: Բացարձակ ճշմարտություն է, որ այս տղամարդկանց տարել էին թուրքական հյուպատոսությունից ու զինվորական շտաբից, և փաստորեն կասկած չկա, որ գործող մարդասպանները մասամբ պարսիկ ֆիդայիներն էին, որ ապրում էին թուրքերի գրաված տներում ու նրանց հրամանատարության ներքո, և մասամբ՝ թուրքական համազգեստով տղամարդիկ: Մենք բազմիցս համոզվել ենք, որ այս մարդկանց պետք է հարցաքննել, և եթե անմեղ են, պետք է ազատել: Նրանց մեջ էին նեստորական եպիսկոպոսը և տարիքավոր կաթոլիկ մի քահանա: Նույն գիշերը հինգ տղամարդ, որոնցից երեքը քրիստոնյա էին, առանց դատավարության կախաղան բարձրացվեցին: Երկու օր հետո, Գյուլիաշան գյուղում, որը դեռ թուրքերի հսկողության տակ էր, պարսիկ ֆիդայիների նույն ավազակախումբը, Բախշ Ալի սուլթանի հրամանատարությամբ, թուրք նիզամների և թուրքական համազգեստ հագած սունիների հետ նույն ձևով սպանեցին հիսուն տղամարդու և դիտավորյալ ու անխտիր բռնաբարեցին բոլոր կանանց ու աղջիկներին, ովքեր չէին փախել կամ չէին կարողացել քաքնվել: Այս ամենը մենք լսել ենք ներկաներից, ինչպես նաև կոտորածից փրկվածներից: Այդ իրադարձությունից կարճ ժամանակ անց պարոն Ալենը զննաց Գյուլիաշան և թաղեց մեռածներին, ինչպես նաև նախորդ կոտորածի զոհերին:

Օրերնքի խախտման մյուս ձևն՝ անմեղ կամ առանց որևէ լուրջ մեղադրանքի մարդկանց ձերբակալումն ու փրկագնի համար նրանց պահելն է: Այս կերպ հանդես գալով որպես միջնորդ՝ մենք վճարել ենք 12000 թուման անմիջապես թուրք զինվորական ու հյուպատոսական պաշտոնատարներին: Այսպիսի բանտարկյալներին ծեծում են, ահաբեկում, կապում, պահում մեմախցերում, մի քանիսին հանեցին դուրս և կախեցին կամ գնդակահարեցին: Նրանք, ում համար մենք վճարել ենք, բոլորը քրիստոնյաներ էին, սակայն նույն ձևով պահվում և փրկագին էին ուզում բազմաթիվ մուսուլմանների համար: Ամենա [...] դեպքը կապված էր Մար Էլիանի՝ ռուսական ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսի հետ, որին տարել էին մեր միախաչի շենքից, և որի համար թուրքերը պահանջեցին 15000, 10000, 8000 թուման, վերջապես ընդունեցին 5000-ը, հայտարարելով, որ նրան տարել են, մինչդեռ նրան պահում էին կապված, մեմախցում, և տարբեր ժամանակներում սպառնում էին, որ նրան կկախեն, եթե գումարը չվճարվի մինչև որոշակի ժամը: Հեր Նյումանը՝ գերմանացի

մի հպատակ, հավաստիացնում էր ինձ, որ այդ ակաբեկումները, հավանական է, իրականություն դառնան:

Հավանաբար, ավելի բարեհաճ արդարացում կարելի է համարել այդեն թուրքերի կողմից կնքված քրիստոնյաների խանութների բռնագրավմանը խանգարելու համար 6000 թուճանի պահանջը: Այդ խանութների տերերը Պարսկաստանի հպատակներ են և գտնվում են երկրում: Նույնիսկ մեր կողմից այդ գումարի վճարումից ու թուրքական հյուպատոսության կողմից կնքված համապատասխան փաստաթուղթ ստանալուց հետո մեզ ամեն պահ հետևում էին, և եղել են բազմաթիվ անազնվության դեպքեր փաստաթղթերով երաշխավորված սեփականության բռնագրավման ժամանակ: Մի խանութի վրա, որը բռնագրավվել էր ոչ բացահայտ կերպով, սակայն ընդգրկված էր այդ փաստաթղթերում և Ուլթամ Ուոչ ընկերության գործակալինն էր, գաղտնի կրակ բացեցին, և վկայությունները ցույց են տալիս, որ այդ արել են թուրքերի հետ կապված մարդիկ:

Մյուս բարբարոսությունը թուրքական բանակում հայ զինվորների գնդակահարումն էր: Համաձայն զեկուցագրերի այդպես արել են այս շրջանի այլ վայրերում, ինչպես նաև այստեղ: Մի գիշեր մի գաղթական եկավ մեր տարածքը: Նա մի զինվոր էր, փախած ութ այլ մարդկանց կտորածից, որին մյուսների հետ արագորեն ծածկել էին հողով, իսկ նա հետո անվնաս փախել էր: Մեր մարդիկ քաղաքի ոստիկանների հետ գնացին վերաթաղելու զոհվածներին: Երբ ապրիլի 16-ին Խալիլ բեյի հրամանատարությամբ եկավ թուրքական զորամասը, վիճակը սկսեց լավանալ, սակայն դրանից հետո տեղի ունեցավ մի ստոր կտորած: Մի վաթսուն քրիստոնյա հեռագրի լար էին անցնացնում Գավառից մի վայր, որը սահմանի վրայով վաթսուն մղոն հեռու է: Նրանց այստեղ պահում էին շատ քիչ ուտելիքով և մեկուսացված: Վերադարձին նրանց տարան մի սարահարթ, քաղաքից տասնհինգ կամ քսան մղոն հեռավորության վրա և սառնարտորեն գնդակահարեցին: Այստեղից էլ չորսը փախան՝ մեռած ձևանալով, և մեզ մոտ հասան վիրավոր և արյունվա: Այս բոլոր կտորածներից վատագույնը տեղի ունեցավ մարտին Սալմաստում, երբ սպանվեց մուտավորապես 750 քրիստոնյա տղամարդ և տղա Հավթոփվան գյուղում նրանցից շատերը խոշտանգված ու մասնատված: Սա արվեց այդ շրջանում թուրքական զորամասերի հրամանատար Ջևդադ փաշայի հրամանով: Այս դեպքի փաստերը հաստատում է Թավրիզի մեր միսիայից պատվրածան Ռ. Մ Լաբարին, որը Սալմաստ գնաց այդ դեպքից երկու շաբաթ անց: Այդ ժամանակ կտորածի արյունոտ հետքերը դեռ մնացել էին: Համաձայն շատ

մարդկանց կողմից հաստատված զեկուցագրերի և այն փաստի, որ Գավառից եկող գաղթականները մեծ մասամբ կանայք ու երեխաներ են, և նրանց հետ գրեթե տղամարդիկ չկան, պարզ է դառնում, որ Թուրքիային միացված շրջաններում ևս տեղի են ունեցել մեծածախ կոտորածներ:

Այս դեպքերի համար պատասխանատվությունը պարսիկների վրա դրվել չի կարող: Ինչպես արդեն նշվել է, պարսիկ գյուղացիները մեղավոր են թալանների համար, նրանք կկրեն պատասխանատվության իրենց չափը, սակայն ամեն ինչում առիթը ստեղծել են թուրքերը: Ավելին, երբ նրանք այստեղ տեր էին, ոչ մի արդյունավետ ու տևական փորձ չարեցին անկարգությունները զսպելու ուղղությամբ: Վատագույն դեպքում նրանք էին կոտորած ու թալան իրականացնողները: Պարսկական իշխանություններն ինչ-որ բան արեցին հանցագործությունները զսպելու և պատժելու ուղղությամբ, սակայն նրանք չունեին բավարար չափով ոստիկանական ու զինվորական ուժեր, իսկ թուրքերն անընդհատ ճնշում էին նրանց: Հավանաբար հարց կառաջանա, թե արդյոք նրանք չէին կարող անել ավելին, քան արեցին: Թուրքերն անշուշտ կարող էին անել ավելին, քան պարսիկները: Երկու օրվա խժոժություններից հետո թուրքերը գրավել էին երկիրը:

Վերը նշված փաստերն ամբողջ պատմության միայն դրվագներ են: Թուրքերը կյանքի ապահովություն չէին տալիս, և, հետևաբար, քրիստոնյաները ստիպված էին ապրել մարդաշատ թաղամասերում և ակրնկալել մթերքի օգնություն: Հետևաբար, նրանք դարձան համաճարակների զոհեր՝ սարսափելի մահացությամբ: Թուրքերը սարսափում էին՝ տեսնելով թշվառությունն ու հիվանդությունները, սակայն քրիստոնյաների տառապանքները թեթևացնելու և նրանց վիճակը բարելավելու ուղղությամբ շատ քիչ բացառություններ արվեցին, այն էլ, կամ պարսիկների, կամ մեր կողմից:

Հուսով եմ, որ ինձ չեք կասկածի այս հայտարարություններում որևէ անարդարության մեջ: Այն, ինչ անցել է մեր գլխով, և այն, ինչ տեսել ենք մեր աչքով, անհնարին է գրի առնել առանց բարկության, սակայն այդ զգացմունքը փաստերի, այլ ոչ թե մախապաշարումների հետևանք է:

Պատիվ ունեմ մնալու

Անկեղծորեն Ձերը՝ (ստորագրված) Ու. Ա. Շեյր:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/270.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 135-140.*

Թիվ 227

Թեհրան, Պարսկաստան, 28 սեպտեմբերի, 1916թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Անդրադառնալով օգոստոսի 18-ի (867.4016/293) ժ. 8-ի հեռագրին, որը վերաբերվում է Պարսկաստանի հայերի վտանգավոր վրճակին, պատիվ անեմ զեկուցելու, որ տեղեկության համաձայն, որն ինձ հասել է Թուրքիայի կողմից գրաված պարսկական շրջաններից, տերության այդ շրջանների քրիստոնյա բնակչությանը ներխուժողները չեն անհանգստացնում: Թուրքական դեսպանատան և գերմանական լիգայի պաշտոնյաները Թեհրանում հավաստիացնում են ինձ, որ իրանք կշարունակեն իրենց ջանքերը հայերին և նեստորականներին հասած ցանկացած վնասից պաշտպանելու ուղղությամբ: Պարսկական կառավարությունը մույնպես խոստանում է վերսկսել իր ցուցումները բոլոր շրջանների պարսկական իշխանություններին շարունակելու իրենց ջանքերն այդ ուղղությամբ:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջեֆերսոն Քեֆրի,  
Գործերի կցորդ:

703

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/300.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II, p. 141.*

Թիվ 402

Թեհրան, Պարսկաստան, 12 հունիսի. 1918թ.

Վաշինգտոն  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ կցելու արագ թելադրված հայտարարության օրինակը, որը իրադարձությունների համառոտ նկարագրությունն է և

որստեղ հատուկ անդրադարձ է կատարվում ասորիների և հայերի ցեղասպանություններին, որ տեղի են ունեցել պատերազմի սկզբից ի վեր Ուրմիայի շրջանում: Այս հայտարարությունն արվել է ամերիկյան քաղաքացի պատվարժան Է. Թ. Ալլենի կողմից, և շատ, բայց ոչ բոլոր կետերում, համապատասխանում է նույն թեմայով ստացված այլ տեղեկություններին:

Պատիվ ունեմ լինելու, պայտն,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ջոն Լ. Բոլդվել:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.4016/391.*  
2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II. p. 142.*

### Փաստաթուղթ թիվ 78

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲԻՅ Ի ՎԵՐ ԱՍՈՐԻՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՈՒՐՄԻԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նախքան պատերազմի սկիզբը ռուսական զորքերը գրավել էին Ադրբեջանի հյուսիսային մասը: Նախքան 1914թ. սեպտեմբերին Թուրքիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելը, թուրքական անկանոն զորքը և քրդերը հարձակվեցին Մերզավառ և Թերզավառ հարթավայրի պարսկական գյուղերի վրա՝ թալանելով ու կողոպտելով ժողովրդին և ավիրելով գյուղերը: Հետո այս գյուղացիները ռուսական զորքերի հետևից գաղթեցին Ուրմիայի հարթավայր: Գյուղերն ավիրելուց հետո նույն թուրքական ուժերը հարձակվեցին այս շրջաններում ռուսական հսկողության տակ գտնվողների տարածքի վրա, սպանեցին շատերին, իսկ մնացածին ետ տարան: Հոկտեմբերին խառը զորքերը հարձակվեցին Ուրմիա քաղաքի վրա, թալանեցին երկու քրիստոնեական գյուղեր և սպանեցին շատ խաղաղ բնակիչների: Անհերք քրիստոնեական գյուղը թալանվեց, հիմնականում հարևան գյուղերի պարսիկների կողմից, այն բանից հետո, երբ քրդերը բացեցին ճանապարհը: Մի միջադեպի ժամանակ, որը տեղում գիտեն որպես «Հրեաների բլրի ճակատամարտ», թուրքերն ու քրդերը պարսկացիներին և նահանջեցին Թերզավառ և Մերզավառ:

Թուրքիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելուց հետո թուրքական զորքերը առաջացան Սուջբուլաղից և Սուլյու-

զից: Նրանց միացան Պարսկաստանի քրդերը, որոնց, որքանով զիտեմ, ո՛չ խանգարեցին, ո՛չ էլ հորդորեցին պարսկական իշխանությունները: Ռուսները հետ նահանջեցին այս ավազակախմբերի դեմ՝ ջախջախելով նրանց և դանդաղ հետ մղելով: Մոտավորապես դեկտեմբերի 31-ին ռուսական իշխանությունները հրամայեցին Ուրմիայի իրենց ուժերին արագ նահանջել վախենալով Կովկասում թուրքերի առաջխաղացումից: Ժողովրդի հեռացումն իրականացվեց քառասունութ ժամից ավելի քիչ ժամանակում: Շատ ասորիներ գնացին ռուսների հետ և ցրտից մեռան ճանապարհին: Ասորիներից նրանք, ովքեր մնացել էին, փորձեցին ապաստան գտնել Ուրմիա քաղաքի ամերիկյան միսիայի տարածքում: Իրենց գյուղերում և քաղաքում նրանց վրա հարձակվեցին նրանց պարսկահպատակ հարևան մուսուլմանները, և մոտ ութ հարյուրը սպանվեցին, ներառյալ տղամարդիկ, կանայք և երեխաներ: Տներն ավիրվեցին, եկեղեցիներն այրվեցին: Որոշ քրդեր, գրեթե միշտ Պարսկաստանի քրդերը, որոնց հետո միացան Թուրքիայի սահմաններից եկած քրդերը, նույնպես հարձակվեցին քրիստոնյաների վրա:

Թուրքական կանոնավոր զորքերը շուտով հայանվեցին տեսադաշտում և քաղաքն ու հարթավայրերը գրավեցին ամբողջությամբ: Թուրքական տիրապետության ընթացքում, հունվարի մեկից մինչև մայիսի 24-ը, բոլոր քրիստոնեական գյուղերն ու մուսուլմանական գյուղերում ապրող բոլոր քրիստոնյաները լրիվ թայանվեցին, տղամարդիկ սպանվեցին, կանայք անարգվեցին, մոտ երկու հարյուր աղջիկների գերի տարան: Շատերին ստիպեցին դառնալ մուսուլման, հազարավորները մահացան հիվանդություններից:

Կողոպուտը մեծ մասամբ արեցին պարսիկ հարևանները, սպանություններն ու կոտորածները՝ պարսիկ հեղափոխականները, որոնց օգնեցին և հրահրեցին, իհարկե, թուրքերը:

Ռուսական զորքերը վերադարձան Ուրմիա 1915թ. մայիսի 24-ին: Նրանց հետևեցին ասորիները, որոնք հեռացել էին ռուսների հետ: Ելքը հաստատվեց ռուսական գերիշխանությունը, իսկ քրիստոնյաներն իրենց ապահով զգացին, բնականաբար, նրանք ցանկացան վերականգնել իրենց կորուստները: Պահանջեցին իրենց գողացված ապրանքը և փոխհատուցում՝ իրենց տների ավերածությունների և պատճառված կորուստի դիմաց: Մի մասը ուժով, մյուսները՝ աղաչանքով, մի այլ մասը՝ օրինական դատական պրոցեսով, կարողացան քիչ թե շատ վերականգնել այն: Որոշ դեպքերում բավականին իրեր վերադարձվեցին, մի այլ դեպքում՝ իրերի փոխարեն գումար ըստ դատարանի որոշման, իհարկե, բոլոր դեպքերում՝

ապրանքի իրական արժեքից քիչ: Քանի որ պարսիկները միշտ էլ իրենց քրիստոնյա հպատակներին համարել էին ոչխարներ, որոնց մորթել էին իրենց հաճույքի համար, իրենց համար ստորացուցիչ էին համարում ռուսական բանակի վախից ետ վերադարձնել գողացված կամ կողոպտված ապրանքը, և նրանք չափազանց բարկացած էին քրիստոնյաների վրա: Մայիս, հունիս և հուլիս ամիսների ընթացքում ասորիները որոշ վտրք իրեր հավաքեցին իրենց տնելուում և սկսեցին հնձել դաշտերը, որ ցամվել էին նախորդ աշնանը և սկսեցին իրենց որոշ չափով կրկին հաստատված զգալ: Օգոստոսին նոր հեռացում հրամայվեց ռուսական գորքի կողմից: Ամերիկացիներից շատերը հեռացան, ասորիները՝ նրանց հետ: Նրանց բացակայության ժամանակ տները նորից կողոպտվեցին, նախորդ երեք ամիսների ընթացքում նրանց ողջ կուտակածն, ինչպես նաև բերքահավաքից ստացվածը, տարան պարսիկ հարևանները: Մնաց կազակների մի վտրք ջուկ, և քրտերն ու թուրքերը երբեք Սեիր լեռից, որը մոտ հինգ մղոն հեռու է քաղաքից, ավելի մոտ չեկան: Այսպիսով, հեռացումը երբեք լրիվ չավարտվեց, և ասորիները վերադարձան մի շաբաթ կամ տաս օր հետո, սակայն շատերը մահացել էին շոգ ամռան առաջացրած հիվանդություններից:

Կրկին նրանք պահանջեցին իրենց բացակայության ժամանակ իրենց տներից գողացված իրերը, և կրկին պարսիկները դրանից բարկացան: Մոտավորապես այս ժամանակ էր, որ Մոլիմ-Էդ-Դաուլեհը դարձավ Ուրմիայի նահանգապետ: Քանի որ կառավարելու էր դժվար վայրում և բարկացած էր մուսուլմանների դեմ քրիստոնյաների բողոքներից, նա բողոք ներկայացրեց Թեհրան այն մասին, որ ամերիկացիները միջամտում են Պարսկաստանի գործերին: Այս «ամերիկյան» միջամտությունն օրինական էր, և համաձայն ասորական ավետարանչական եկեղեցու իրավունքների, պարսկական կառավարությունը վաղուց ճանաչել է այն, այնինքն, պարսկական կառավարությունը ճանաչել էր տեղական այդ իրավական հանձնաժողովը, որին ամեն տարի ընտրում է եկեղեցին, և որի անդամներից մեկը սովորաբար ամերիկացի մի միսիոներ է: Այս հանձնաժողովն իրավունք ունի որոշում կայացնել իր հետևորդների բողոք գործերի վերաբերյալ: Այն իրավունք ունի նաև մուսուլմանների և քրիստոնյաների միջև եղած դատական գործերի դեպքում իր հետևորդներին ներկայացնել Պարսկաստանի դատարաններում: Բժիշկ Շեդը, որն այժմ այս իրավական հանձնաժողովի ամերիկացի միսիոներ անդամն է, ավելին չի արել քան անցած տարիներին, մինչև պարսկական կառավարության կողմից այս հանձնաժողովի ճանաչումը,

այսինքն, նա իր քարտուղարին ցուցում է տվել ներկայացնել այս գործերը և ապահովել դրանց արդարացի բննումը պարսկական դատարանում:

1915թ. ամառվա ընթացքում թուրքական Քուրդիստանի ասորիները, որոնց մուսուլմաններն անվանում են «ջեղոմեր», խույս տվեցին կոտորածից՝ միանալով իրենց հայ ընկերներին, փախան դեպի հյուսիս՝ ռուսական բանակի մոտ, որն այն ժամանակ տեղակայված էր Վանում և Սալմասում: Նրանք գաղթեցին Պարսկաստանի Խոյ, Սալմաս և Ուրմիա շրջանները: Նրանց լավ ընդունեցին ռուսները, պարսիկները և ասորի հավատակիցները: Հետո նրանց մի մասը միացավ ռուսական զորքին, և նրանցից շատերը 1916թ. ռազմական գործողությունների ժամանակ օգնեցին ռուսներին:

1916թ. գարնանը ռուսական զորքերը առաջացան դեպի հարավ և Քուրդիստանի արևմուտքը: Ռուսական զորքերը բավականին հաջողություններ ունեցան թուրքական և քրդական միացյալ զորքերի դեմ: Նրանց միացել էին հայկական զորամասեր: Անկասկած շատ դաժանություններ իրականացվեցին քրդերի դեմ: Մարդիկ կոտորվեցին, իսկ նրանց տները ավիրվեցին, երբ նրանց փախչում էին ռուսներից: Շատերը մահացան լեռներում ձնամրրիկների ժամանակ, շատերն էլ ամռանը՝ չափազանց շոգից Մոսուլի հարթավայրում: Այսպիսով, քրդերը, մռռանալով քրիստոնյաների դեմ իրենց արարքները, հիշում էին միայն իրենց կրած վնասները և երդվում վրեժ լուծել: Ռուսները կարողացան պահել այս առաջընթացի գիծը մինչև 1917թ. ամառվա վերջին գործի պառակտումը:

Այս ժամանակաշրջանի ընթացքում քրիստոնյաներն ու մուսուլմանները համեմատաբար խաղաղ ապրում էին Ուրմիայի և Սալմասի հարթավայրերում, սակայն երբ առաջ եկավ ռուսական զորքի պառակտումն, անկարգություններն սկսեցին: Բանակի անկարգությունները հնարավոր դարձրեցին բազմաթիվ ճնշող գործողությունները մուսուլմանների դեմ: Ուրմիայի շուկաներն այրվեցին, և շատ խանութներ թալանվեցին: Մա առաջին կորուստն էր, որ վրա հասավ Ուրմիա քաղաքին, և այդ լավ են հիշում այն մարդիկ, որոնք մինչև հիմա հեռու են մնացել այդ անկարգություններից՝ ամերիկյան ազդեցության շնորհիվ:

Մոսավորասպես 1917թ. դեկտեմբերի 1-ին ռուսները որոշեցին ետ տանել իրենց ամբողջ զորքը Պարսկաստանի հյուսիս-արևմուտքից, և լուրջ հարց առաջ եկավ, թե ինչ են անելու ասորիները: Կարծես բավարար պատճառ չկար նրանց հեռացման համար, քանի որ տեսադաշտում ոչ մի թշնամի չէր երևում, սակայն մնալու դեպքում

չկար նաև կյանքի կամ ունեցվածքի ապահովության երաշխիք: Խորհրդրդակցելով ռուսական սպաների և Կովկասի կառավարության հետ, որին այն ժամանակ ճանաչում էին միացյալ ուժերը, նրանք որոշեցին մնալ, իսկ հյուսիսի հայերի կապակցությամբ՝ ջանքեր գործադրել պահելու պարսկական ճակատը թուրքերի դեմ: Սա ի նկատի ունենալով, նրանք զենք վերցրեցին ռուսներից և ձեռք բերեցին զինամթերք: Ռուս սպաները մնացին որպես հրահանգիչներ, իսկ մի ֆրանսիացի սպա եկավ Ուրմիա՝ որպես հատուկ հրահանգիչ: Այս զինուժը վիրավորեց պարսկական կառավարությանը և նա բողոքեց: Ատրիները պատասխանեցին, որ իրենք Պարսկաստանի դեմ բողոք չունեն, որ Պարսկաստանից ոչ մի անհանգստություն չէին սպասում, որ իրենք չեն անհանգստացնի Պարսկաստանին և միայն ցանկանում էին, որ իրենց թույլատրվի խաղաղ ապրել պարսկական հողի վրա, մինչև որ Քուրդիստանի իրենց սեփական տարածքը բավականին խաղաղ կլինի, որպեսզի իրենք վերադառնան իրենց տները: Նրանցից պահանջեցին զինաթափվել: Նրանք պատասխանեցին, որ քանի որ իրենք այդքան մոտ էին թուրքական սահմանին, սրտեղ անմիջական շփման մեջ էին իրենց վաղեմի թշնամիների՝ թուրքերի և քրդերի հետ, և ավելին, քանի որ լեռնային աստրիները միշտ էլ անկախ ցեղեր էին եղել և երբեք չէին զինաթափվել, իրենց համար անհնարին էր զինաթափվելը: Եվ նրանք համոզեցին պարսկական իշխանություններին, որ պարսիկ ժողովրդի դեմ որևէ գործողությամբ բողոքի առիթ չեն տա: Սա չբավարարեց պարսիկներին, և այն ժամանակ, երբ ռուսների ետ քաշվելը մոտ էր սովարտին, հունվարի կեսերին, պարսիկներն աստրիներին բռնի զինաթափելու փորձեր արեցին: Խոյ քաղաքում տեղի ունեցավ պայմանավորված հարձակում, մի քանի աստրիներ սպանվեցին, և բոլորը զինաթափվեցին: Մնացածը, որպես պատանդներ պահվեցին, որպեսզի և Սալմասում, և Ուրմիայում իրենց եղբայրներն իրենց լավ պահեն և զինաթափվեն: Հետո փորձ արվեց զինաթափելու Սալմասի աստրիներին: Այնտեղ հարձակվեցին մոտ տասներկու մարդու վրա և զինաթափեցին նրանց: Մար Ծիմունը՝ նեստորական եկեղեցու պատրիարքը, խնդրեց վերադարձնել զենքը: Բազմաթիվ բանակցություններից հետո չորս հրացան վերադարձվեց, սակայն վնասը մնաց: Ռուսների նահանջի ժամանակ Սալմասում և Ուրմիայում դեմոկրատ մուսուլմանները բոլոր մուսուլմաններին մշտապես քարոզում էին զինվել: Նրանց ասում էին, որ յուրաքանչյուր տղամարդ պետք է հրացան ունենա, որ նա պետք է վաճառի իր տնային իրերը և ձեռք բերի հրացան, իսկ հրահրողներից մեկը, որը

նախկինում ընկերաբար էր քրիստոնյաների հետ, իր ճառերից մեկում ասաց. «Եթե ոչ մի ուրիշ ձևով հրացան չեք կարողանում ձեռք բերել, վաճառեք ձեր կնոջը և առեք»: Փետրվարի սկզբին սկսեցին բախումներ Ուրմիայում: Միայնակ ասորիներին բռնում էին գյուղի ճանապարհին, սպանում կամ զինաթափում:

Երեքշաբթի օրը, փետրվարի 19-ին, քաղաքի մի քանի մասերում միաժամանակյա հարձակումներ տեղի ունեցան ասորիների վրա, մոտավորապես երեսուներ զինաթափվեցին. իսկ ութը կամ տասը սպանվեցին: Չորեքշաբթի օրը պարսկական գործողությունների ժամանակ քաղաքից դուրս սպանվեց երկու ռուս կոզակ և մոտավորապես վեց բուրդ: Այս ժամանակահատվածում ջանքեր արվեցին խաղաղ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Բժիշկ Շեդր և պարոն Նիկիտինը՝ ռուսական հյուպատոսը, ֆրանսիական միսիայից մոնսինյոր Մոնտագր, ասորի և հայ առաջնորդներն անընդհատ խորհրդակցում և բանակցում էին պարսկական իշխանությունների հետ՝ խաղաղ հարաբերությունների հաստատման համար: Նահանգապետ Իջիլալ-օլ-Մոլկը չէր խառնվում: Այս օրերին անընդհատ ասեկոսներ էին պտտվում այն մասին, որ պարսիկները պատրաստվում էին հարձակվել քրիստոնյաների վրա: Քրիստոնյաներին ուղարկում էին բազմաթիվ սպառնալիքներ այն ստոր ձեռքի մասին. որով նրանց սպանելու էին: Մոտեցող հարձակումն այնքան ակրնհայտ էր, որ ասորի առաջնորդները խորհուրդ էին տալիս անսպասելի հարձակում գործել մուսուլմանների վրա: Նրանք ստիպված համաձայնվեցին սպասել, քանի դեռ նրանց վրա չէին հարձակվել խոստանալով, ոչինչ չանել արագացնելու համար:

Ուրբաթ օրը, փետրվարի 22-ին վտթորիկն սկսեց: Մուսուլմանների գորքերը հարձակվեցին ասորական բանակի առաջնորդ Ադա «Ռետրոսի» հայանի իր անգլիական անվամբ որպես Փիթըր Էլլո, տան վրա, որտեղ բավականին զինամթերք էր պահեստավորված: Մոտավորապես նույն ժամանակ պարսիկները գորքով հարձակվեցին հրեաանու վրա, որը ռուսական սպաները Դերգալու գյուղից բերում էին Չարբաշ գյուղը, նրանց օգնում էին ծառայող ասորիները: Հարձակում եղավ քաղաքային դարպասի վրա: Նահանջի ժամանակ հրացաններ չօգտագործվեցին, և բերվեցին Չարբաշ մի ուրիշ ճանապարհով: Պայքարն անմիջապես դարձավ ընդհանուր, ընդգրկելով այն ամբողջ գիծը, որը բաժանում էր քաղաքի մուսուլմանական և քրիստոնեական թաղամասերը: Կրակոցներ ուղղվեցին ամերիկյան միսիայի տարածքի վրա, և մեր շենքերը կրում են հարձակման հետքերը: Հաջորդ օրն ուրիշ հրետանի բերվեց Ջեռգթափա

գյուղից: Հրետանու վրա հարձակվեցին Պարսկատանի կոզակները որոնց առաջնորդում էր իրենց գեներալը, երբ այն անց էին կացնում գետի միջոցով և մոտենում էին կոզակների շտաբին: Պահակախմբին օգնության հասած պարսկական կոզակները ոչնչացվեցին, գեներալը սպանվեց մարտում: Մոտավորապես քսան կոզակներ փախան և ապաստան գտան ամերիկյան միսիայում, որտեղ նրանք ապահով էին: Նրանց ռուս սպա գեներալ Ստոլդերն իր կնոջ և որդու հետ ապաստանեց ռուսական հյուպատոսությունում, և նրանք ապահով վիճակում էին: Մարտը շարունակվեց ուրբաթ գիշերը և մինչև շաբաթ երեկո, երբ Ուրմիա քաղաքը հանձնվեց, և օրվա ընթացքում խաղաղություն հաստատվեց ամբողջ քաղաքում: Երբ գեներալ Ստոլդերն և նրա ընտանիքը դուրս եկան իրենց ապաստարանից և որոշ չափով հեռացել էին քաղաքից, նա և որդին սպանվեցին, իսկ կինը մեռավ սրտի նուպայից: Փետրվարի 22-ի մարտի ժամանակ սպանվածների թիվը մուսուլմանական զեկուցագրերում չափազանցված են, սակայն որքանով մենք կարողացանք ճշտել, այն չի անցնում վեց հարյուրից: Մարտից հետո հաստատվեցին խաղաղ հարաբերություններ:

Շերիֆ Խանեի դեմոկրատները վաղուց արդեն վերցրել էին լճի նավակների հսկողությունը և կտրել էին ճանապարհը, այնպես որ Ուրմիան հունվարի կեսերից կտրված էր արտաքին աշխարհից: Դեմոկրատները գորքեր ուղարկեցին Կարադաղ՝ Սալմասի և Ուրմիայի միջև, որպեսզի Ուրմիայի ճանապարհը կտրվի հյուսիսից: Այս անցումի վրա բոլոր քրիստոնյա ճանապարհորդների վրա հարձակվում և սպանում էին նրանց, մի առիթով հիսուն մարդուց քառասունյոթը սպանվեց: Թավրիզից լճի հարավային կողմն ուղարկված պարսկական զորքերից անընդհատ ստացվում էին սպառնալիքներ, և մենք նամակներ ստացանք Սուլթուզի մուսուլմաններից, որոնք մեզ տեղեկացնում էին, որ իրենք Թավրիզից հրաման են ստացել հարձակվել քրիստոնյաների վրա: Սուլթ թույլ չուվեց:

Մար Շամունն արդեն վերադարձել էր Սալմասի իր տունը: Կիրակի օրը, մարտի 17-ին լուր եկավ, որ Մար Շամունը, իր եղբայր Դավիթը և նրա մարդկանցից շատերը դավադրաբար կոտորվել են Իսմայիլ Ադայի՝ Սալմասի Շոկոկ քրդի կողմից, որը հայտնի էր որպես Սիմկո: Նա, ընդհանրապես, վատ հեղինակություն ունեցող քուրդ էր, սակայն մեծ ազդեցություն ուներ: Երկուշաբթի օրը լուրերը հաստատվեցին, պատմությունը այսպիսին է՝ Մար Շամունին հրավիրել էին խորհրդակցության Թավրիզ քաղաքից ուղարկված պարսիկ պաշտոնյաների մոտ՝ ասորիների հետ խաղաղ հարաբերու-

թյուններ հաստատելու համար: Նա այս կոմիտեին հանդիպեց ‘Իլ-ման քաղաքում, մոտավորապես մարտի 16-ին, և երկար խորհրդակցություն վարեց նրանց հետ, որի արդյունքում, ինչպես նա հաղորդել է իր մարդկանց, հաստատվել էին լրիվ ներդաշնակցություն ասորիների և պարսիկների միջև: Խորհրդակցությունից հեռանալուց հետո նրան հրավիրեցին հանդիպման Սիմկոյի հետ: Նրա մարդիկ խորհուրդ տվեցին նրան չգնալ, սակայն նա, հավատալով հաստատված խաղաղ հարաբերություններին, գնաց՝ ճանաչելով Սիմկոյին հնուց, որն արդեն հաստատել էր իր բարեկամությունը քրիստոնյաների հետ: Մար Շամունը չէր վախենում: Մոտավորապես վաթսուհինգ կամ յոթանասուն մարդկանց հետ, և հեծյալ և հետիոտն, նա գնաց Կոնա Շասր քաղաքը: Այստեղ Սիմկոն սպասում էր նրան: Նրան սրտանց ընդունեցին, և որոշ ժամանակ Սիմկոն խորհրդակցեց նրա հետ: Մար Շամունի մարդկանց մոտ կասկածներ առաջացան, որովհետև զինված քրդերը հավաքվում էին կառուրներին, սակայն Մար Շամունն ուշադրություն չդարձրեց: Խորհրդակցությունն ավարտվեց խաղաղ, և նրանք համբուրվեցին ի նշան խաղաղ հարաբերությունների վերջնական հաստատման: Հետո Մար Շամունը հեռացավ: Նա աստիճաններով իջավ դեպի իր կառքը, որը շենքից մի փոքր հեռավորության վրա էր, իսկ Սիմկոն նրան ուղեկցեց մինչև դուռը: Երբ Շամունը մտավ կառք և նստում էր իր տեղում, նրա մարդիկ հեծնում էին ձիերը, Սիմկոն ազդանշան տվեց, և նրա զինված մարդիկ կառուրներից կրակ բացեցին կառքի ծածկի մեջ և ուղեկիցների խմբի վրա: Մար Շամունը և նրա մարդկանցից մոտավորապես քառասուհինգ հոգի սպանվեցին, մյուսները վախան՝ մի մասը վիրավորված: Այդ գիշեր Սիմկոն իր մարդկանց հետ վախալվ իր բերդը, իսկ Մար Շամունի մարդիկ վերադարձան, գտան նրա մարմինը և տարան: Դիվան քաղաքի պարսիկներն անմիջապես, որպես պատանդ, վերցրեցին այդ քաղաքի բոլոր քրիստոնյաներին, ներառյալ ամերիկացի միսիոներ բժիշկ Դոդին: Նրանց պատանդ պահեցին զինված պահակները՝ թույլ չտալով ազատ շարժվել տասնվեց օր շարունակ, քանի դեռ քաղաքը չէին ազատագրել ասորիները: Այդ ընթացքում, երբ Մար Շամունի սպանության լուրերը հասան քաղաք, նրա մարդկանց զսպել հնարավոր չէր: Հետևեց Ուրմիա քաղաքի քրդերի կոտորածը՝ ի պատասխան Մար Շամունի արյան, քանի որ արյան վրեժը հին և հաստատված օրենք է Զուրդիստանի լեռներում և ասորիների և քրդերի շրջանում: Ասորիների իշխանությունները հնարավորին չափ արագ դադարեցրին ապստամբությունը, և կրկին խաղաղություն հաստատվեց: Այս անգամ Ադա Պետրոսն իր ասորի-

ների հետ կազմակերպեց հարձակում Միմկոյի վրա: Իր փոքր զորքով անցնելով Բորոդոսնայի և Սոմայի շրջաններով և մի շարք փոքր մարտերում հաղթելով Միմկոյի պահակակետերին՝ նա հարձակվեց Միմկոյի վրա, որը հաստատվել էր Չարայի իր բերդում: Երեսունվեց ժամ տևած մարտից հետո Միմկոն պարտվեց, նրա մարդկանցից շատերը սպանվեցին: Նրա բերդն անցավ ասորիների ձեռքը, իսկ Միմկոն իր հինգ հարյուր մարդկանց հետ փախավ Խոյ: Հետո քրիստոնյաները եկան Մալմասի հարթավայրը և սպանեցին ասորիներին Դ-իլման քաղաքում, որը նրանց հանձնվեց առանց մարտի և, հետևաբար, նրա մարդկանցից ոչ մեկը չսպանվեց և կողոպուտ չեղավ: Բանակը հետո վերադարձավ տուն:

Ադա Պետրոսի և նրա բանակի բացակայության ժամանակ մարտեր տեղի ունեցան Ուրմիայի մի քանի գյուղերում: Նախորդ մարտի ժամանակ քաղաքից փախած զինված մարդիկ տեղավորվել էին պարսպապատված գյուղերում, որոնցից մեկը՝ Կարասանլուին, հատկապես ամուր: Այստեղ հավաքվել էր մի քանի հարյուր մարդ: Նրանք արագացրեցին մարտը՝ սպանելով երկու քրիստոնյայի, որոնք գնում էին իրենց անասունների համար հարդ գնելու: Զրիստոնյաները պահանջեցին հանձնել գյուղը և զենքը: Մուսուլմանները հրաժարվեցին, և մարտը սկսեց: Բերդն այնքան ամուր էր, որ հրացանային կրակոցով այն գրավել չէր կարելի, այդ պատճառով բերվեց երկու թնդանոթ: Մի քանի կրակոցներից հետո քրիստոնյաները գրավեցին այդ գյուղը, իսկ այն պաշտպանողները սպանվեցին: Ամենասահավոր պատմություններն էին մեզ հասել այն սահվոր դաժանությունների մասին, որ իրականացրել էին քրիստոնյաներն այդ գյուղի բնակիչների և պաշտպանների նկատմամբ: Ասում էին, որ հազար մարդ սպանվել է, կանանց ու երեխաներին կոտորել են, իսկ նրանց դիակները՝ խոշտանգել: Այս պատմությունները, որ պատմում էին մուսուլմանները, դարձան այնքան տարածված, որ որոշվեց կազմել մի հանձնաժողով, որը հետաքննություն էր անցկացնելու:

Ապրիլի 6-ին, Ամերիկայի կողմից պատերազմին միանալու առաջին տարեդարձին, ռուսական հյուպատոս Կաշինը, Ուրմիայի հոսպիտալից մի ֆրանսիայի ռազմական բժիշկ և ես ձիով դուրս եկանք գյուղից և բերդից: Այն չափազանց ամուր տեղ էր, հողաշեն բարձր պարիսպներով, որի չորս անկյուններում կային աշտարակներ դիտանցքներով՝ պաշտպանության նպատակով: Այն ուներ երկու մուտք, մի դարպաս՝ արևմուտքից և մյուսը՝ հարավից: Գյուղը գտնվում էր ճիշտ ներքևում, իսկ գյուղի վերջին շինությունը բերդի պարսպից, հավանաբար, քառասուն ոտնաչափ հեռու էր: Բերդում

կար երկու բակ՝ իրարից բաժանված ամուր պարսպով, ներսի մասում կային պաշպանական սենյակներ: Բերդի պարիսպները քանդել էին թնդանոթի կրակոցով, իսկ բերդը գրավել էին հարձակմամբ:

Մարտին մասնակցածների պատմածը հետևյալն է. «Մի քանի անգամ ասորիները պահանջեցին խաղաղությամբ հանձնել բերդը, բայց մերժում ստացան: Կարճատև պայքարից հետո գլուղատիրոջ զործակալն ասորիների հետ սպիտակ դրոշով մոտեցավ բերդին, ասելով, որ գլուղատերը ցանկանում է, որ այն հանձնվի: Սպիտակ դրոշի վրա կրակեցին, գործակալը վիրավորվեց, և մի տաս մարդ սպանվեց: Նախքան թնդանոթի գործի ղեկը, սպիտակ դրոշ բարձրացվեց բերդի ներսում, և ասորիներն առաջ շարժվեցին, որպեսզի ընդունեն բերդի հանձնումը: Կրկին նրանց վրա կրակեցին, և մի քանի մարդ սպանվեց: Հետո մարտը սկսեց, և պարսպի մի մասը և դարպասը ռմբակոծությամբ ավիրվեց»: Երբ արդեն անհնարին էր հետագա պաշտպանությունը, պաշտպանները փորձեցին քանդել պարիսպների տակ և փախչել խաղողի այգու միջով, որտեղով նահանջելն ապահով էր: Մոտավորապես տասնհինգ մարդ այս ճանապարհով փախավ, իսկ պաշտպաններն ակնհայտորեն կուտակվեցին ելքի մոտ, հուսալով, որ իրենց կհաջողվի փախչել: Այստեղ էր, որ տեղի ունեցավ ամենաձանր կոտորածը, քանի որ մարդիկ հավաքված էին այստեղ: Ուշադիր հաշվելով դիակները, մենք իմացանք, որ երկու հարյուրից ավելի սպանված չի եղել, որոնցից, հավանաբար, հիսունն էին կանաչ ու երեխաներ: Գլուղում կոտորած չի եղել, և մենք այնտեղ գտանք ընդամենը ութ դիակ: Բերդում սպանությունները բազմաթիվ էին: Փոքր տեղում փամփուշտները մեծ վնաս էին պատճառել հավաքված մարդկանց: Շատերը սպանվել էին փամփուշտներից, մյուսները՝ հրացանի կրակոցներից, մի քանիսն այրվել էին, տեսանք նաև ակնհայտ վերքեր չունեցող դիակներ, որոնք հավանաբար մահացել էին վախից: Ոչ մի խոշտանգված մարմին չկար: Շատերն էին այրվել, բայց կրակը սկիզբ էր առել ռմբակոծությունից, ձեռքի նռնակներից, թե եղածը ծածկելու համար, չենք կարող ասել: Վերը շարադրված պատմությունները ռմբակոծությունից այրվածի ակնհայտ նշաններ են ցույց տալիս: Վերջում կարծես եղել է հուսահատ պայքար գաղտնի ելքի մոտ, և բերդը մինչև վերջ չի հանձնվել:

Ապրիլի 16-ին զեկուցագիր եկավ այն մասին, որ երկու հազարանոց թուրքական զորքը թնդանոթով մոտենում է Սուջբուլաղի և

Ուշնույի կողմից՝ պարսիկների ուղեկցությամբ: Հետագա զեկուցագիրը կարծես բավական հիմք ունենի, և Աղա Պետրոսը կրկին իր գործով դուրս եկավ նրանց դիմավորելու: Նա անցավ լեռներով, հանդիպեց թուրքական զորքերին, հարձակվեց նրա վրա Ուշնույի մոտ և ջախջախեց նրանց: Սուլդուզի միջով վերադառնալիս՝ պարսիկների վրա չհարձակվեցին, և կողուպուտ չեղավ: Այդ ժամանակ 'Իլլման քաղաքն իր դարպասները բացել էր պարսիկների առջև, որոնք սպանել էին մի քանի ասորիների: Ի պատասխան՝ ասորիները հարձակվել էին նրանց վրա, ջախջախել, և 'Իլլման քաղաքն այս անգամ վնասներ կրել էր: Այս դեպքերը տեղի ունեցան նախքան Ուրմիայից ապրիլի 27-ին իմ հեռանալը: Այդ ժամանակից ի վեր զեկուցագրեր են ստացվել այն մասին, որ երկու այլ մարտ է տեղի ունեցել ասորիների և թուրքերի միջև, որոնց երկուսի ժամանակ էլ ասորիները հաջողություն են ունեցել: Երբ ես հեռանում էի Ուրմիայից, զեկուցագիր ստացվեց այն մասին, որ Խոյում, որտեղ կար չորս հազար ասորի, տեղի է ունեցել ասորիների կոտորած: Այս զեկուցագրերը հաստատվեցին Թավրիզում:

Ես պետք է նախօրոք ասած լինեի, որ Չարայում Սիմկոյի բերդի գրավման ժամանակ գտնվել են շատ մեղադրական փաստաթղթեր: Կային նամակներ պատվարժան պարսիկ պաշտոնյաներից, ինչպես նաև Ադրբեջանի նահանգապետից, և խաղաղության հանձնաժողովի անդամներից, որոնք ուղարկվել էին Թավրիզ քաղաքից Սիմկոյին և հրահրում էին պայքարել քրիստոնյաների դեմ: 'Դրանք բերվել էին Ուրմիա ու տրվել զինվորական իշխանություններին: Իմ մեկնելու ժամանակ այս նամակները դեռևս քրիստոնյաների տնօրինության տակ էին:

Եզրափակելով իմ զեկուցագիրը, ես կցանկանայի նշել որոշակի հետաքրքրություն ունեցող հետևյալ փաստերը:

1. Ռուս սպաները կազմակերպեցին ասորիներին, և նրանց ուղեկցում էր մի ֆրանսիացի սպա: Նրանց կազմակերպել էին ոչ թե Պարսկաստանի վրա հարձակվելու, այլև թուրքերից և քրդերից պաշտպանվելու համար:

2. Բոլոր մարտերում, որ տեղի ունեցան ասորիների և պարսիկների միջև (մինչև ապրիլի 27-ը) նախաձեռնությունը պարսիկների կողմն էր: Պարսիկ դեմոկրատները կտրել էին Սալմաս, Շերիֆ Կանեհ և լճի հարավային կողմը գնացող ճանապարհները:

3. Սուլդուզի Կարափափուղի առաջնորդները մեզ ասացին, որ Թավրիզից հրաման են ստացել գործելու ասորիների դեմ:

4. Հավաստի տվյալներով, Մուջբուլաղի քրդերը նույնպես համապատասխան ցուցումներ են ստացել:

5. Իսմայիլ Աղան (Սիմկոն, Շակոիկի քուրդը) բժիշկ Փեկարդին ցույց է տվել մի նամակ Ադրբեջանի նահանգապետից, որը ջանադիր փորձեր էր անում, որպեսզի միանա պարսիկներին ասորիների դեմ, և մի քանի պարսիկ պաշտոնյաների մեղքը բացահայտող Թավրիզից Խոյ ուղարկված նամակները, ներառյալ Խաղաղության հանձնաժողովի նամակը, գտնվել են Սիմկոյի տանը. երբ այն գրավել են ասորիները:

6. Մուսուլմանները մեծ չափով չափազանցրել են մուսուլմանների սպանությունների մասին զեկուցագիրը: Ընդհանրապես. մինչև ապրիլի 27-ը, ռուսական հյուպատոսը, Նիկիտինը, ֆրանսիացիներն ու ամերիկացիները, որոնք տեղում էին, սպանված մուսուլմանների քանակը հաշվեցին ոչ ավելին քան երկու հազար հինգ հարյուր:

7. Ամերիկացիների կողմից ջելոների (ասորիների) զինման մասին զեկուցագրերը սուտ են, ինչպես նաև այն զեկուցագիրը, որ մենք կերակրել ենք զորքերին:

8. Այն զեկուցագիրը, որ բժիշկ Պեկարդը գնացել է Խոյ ջելոներին կազմակերպելու և զինելու համար, նույնպես սուտ է: Բժիշկ Պեկարդը գնացել էր Խոյ հետաքննելու նպաստամատույց աշխատանքները, և եթե հնարավոր լինի, ապահովել ջելոներին Սալմաս տեղափոխությունը, որտեղ նպաստամատույց աշխատանքները կարելի է իրականացնել ավելի հեշտությամբ, և մարդիկ կգտնվեն ավելի ապահով վիճակում: Պարսիկ նահանգապետը թույլ չտվեց նրանց տեղափոխումը և այդ իմաստով, պատասխանատու է նրանց հետագա կոտորածի համար, չնայած մենք համոզված ենք, որ նա չփորձեց նույնիսկ պաշտպանել նրանց:

9. Մարտերի ժամանակ և դրանից հետո ամիսներ շարունակ գոնե հազար հինգ հարյուր մուսուլմաններ և քրդեր՝ ներառյալ ապստամբության առաջնորդներ Արշադ-ուլ-Մուկը և Արշադ-ալ-Հմայունը, ապաստան գտան ամերիկյան միսիայում և ապահով վիճակում էին:

(ստորագրված) Է. Թ. Ալլեն:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/391.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 143-152.*

Փաստաթուղթ քիվ 79

Թիվ 1279

ԱՍԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոստանդնուպոլիս, 11 մայիսի, 1916թ.

Վաշինգտոն,  
Պատվարժան  
Պետական քարտուղար

Պարոն,

Պատիվ ունեմ ուղարկելու ամերիկյան հյուպատոսի կողմից Ռուսաստանից Թիֆլիս ուղարկված 1916թ. ապրիլի 10-ի գեկուցագրի պատճենված օրինակը, որի հետ ներվակված է հայտարարություն ռազմական գործողությունների շրջանում հայերի վիճակի մասին:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Հոֆման Ֆիլիպ:

Ներվակված է՝ Թիֆլիսից ստացված գեկուցագրի օրինակը:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/285.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian, The Peripheries. vol. II, p. 153:*

Փաստաթուղթ քիվ 80

Կրկնօրինակ

ԱՍԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստան. Թիֆլիս, 10 ապրիլի, 1916թ.

Կոստանդնուպոլիս  
Ամերիկյան դեսպանություն  
Գործերի պատասխանատու  
Էսկիպյ. Հոֆման Ֆիլիպ

Պարոն,

Պատիվ ունեմ ներվակելու Էզրունից պարոն Ռոբերտ Սթեփյոնի նամակը, որում խնդրում է ինձ Ձեր դեսպանության ուշադրությունը հրավիրել ռազմական գործողությունների շրջանում հայերի վիճակին:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան՝

(ստորագրված) Ֆ. Վիլյուբի Սմիթ

Փաստաթուղթ թիվ 81

*Էրզրում, Ռուսաստան, 21 մարտի, 1916թ.*

*Թիֆլիս*

*Ամերիկյան հյուպատոս*

*պարոն Ֆ. Ռ. Սմիթ*

Հարգելի պարոն,

Հենց նոր ուղարկեցի Ձեզ նամակ ի պատասխան անցյալ ամսվա 29-ի նամակին: Այս նամակը խնդրագիր է տեղի հայերի կողմից: Թույլ տվեք որոշ մանրամասներ պատմել Ձեզ այստեղ անցյալ տարի տեղի ունեցած իրադարձությունների մասին և ներկայացնել խնդրանքի նախաբանը:

Երբ 1914թ. օգոստոսին այստեղ սկսվեց զորահավաքը, մեծ թվով հայեր ի պատասխան զինվորագրվեցին բանակին և մտան հիվանդանոցներ որպես բուժակներ և ծառայողներ: Անցյալ տարվա առաջին կեսին հայերին հանեցին հիվանդանոցներից և բանակից և ներգրավեցին ճանապարհային աշխատանքներում: Բժիշկներն ու դեղագործները դեռևս մնացին որպես այդպիսին, սակայն ուղարկվեցին թիկունք: Այս երկրում արհեստավորները մեծ մասամբ հայեր են, և շատերն այստեղ են մնացել այդպիսի աշխատանքների համար, քանի որ նրանց կարիքը կար, նույնիսկ այն բանից հետո երբ մյուսներին տեղահանեցին անցյալ հունիսին:

Քանի որ թուրքական զորքը նահանջում է, այս մարդկանց սառնասրտորեն կոտորում են: Ահա մի հաղորդում, որը տվել է մեր դպրոցի աղջիկներից մեկի եղբայրը: Նա աշխատում էր ճանապարհին, հետո նրան միացրեցին բանվորների խմբի հետ, որոնք այստեղ կառուցում էին ակումբի շենքը: Հունվարին նրանց ուղարկեցին Երզնկա և բանտարկեցին: Երբ այստեղից հրամանատարն ու նահանգապետը գնացին այնտեղ, ստացվեց առաջին հրամանը այս հիսուն հայերին դուրս տանելու և գնդակահարելու մասին: Չորսը, ընկնելով և պառկած մնալով մեռածների տակ մինչև երեկո, փախսան և մեծ դժվարություններով հասան այստեղ: Ասում են, որ մյուսների հետ նույն կերպ են վարվում :

Խնդրանքը կայանում է նրանում, թե արդյոք դուք հնարավորությամբ ունեք այս փաստերի վրա հրավիրել պարոն Մորգենթաուի ուշադրությունը, որպեսզի նա, հանուն մարդասիրության, կարողանա միջամտել և խանգարել թուրքական բանակի համար աշխատող տղամարդկանց ընդհանուր կոտորածին: Զիչ կանայք ու երեխաներ են փրկվում, բանի որ այս կողմերը հսկում են քղղերը: Սեզ հաջողվեց պահել մոտ քսան աղջիկների երկու կնոջ և մեր տղամարդուսուցչի հետ, որն իմ թարգմանն է:

Ռուսաստանի հայերը մեծ միջոցներ ու ժամանակ են ծախսում փրկարարական աշխատանքների համար, որի հետևանքով շատերն են եկել այստեղ: Նրանք շատ են հուզվում, երբ լսում են ռազմաճակատից մեզ հասած զեկուցագրերը: Սա անկեղծորեն հույս ունեն, որ կգործադրվի որոշակի ճնշում, որպեսզի վերջ տրվի այս դաժանություններին:

Անկեղծորեն Ձերը՝

(ստորագրված) Ռ-ոբթ. Ս. Ստեփյոն

360

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/285.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 155-156:*

## Փաստաթուղթ թիվ 82

### ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Ռուսաստան, Թիֆլիս, 26 մայիսի, 1916թ.*

Առարկան. Բժիշկ Մաքելըմի զեկուցագիրն ամերիկյան օգնության մասին

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեն բժիշկ Ղ-աթընին. 70 Fifth Avenue, New York, վոխանցելու համար ներփակել բժիշկ Մաքելըմի զեկուցագիրը Վանում հայերի և ասորիների օգնության կոմիտեյն աշխատանքների մասին:

Պատիվ ունեն լինելու, պարոն,  
Ձեր խոնարհ ծառան՝  
(ստորագրված) Ֆ. Վիլյուրի Սմիթ  
Ներկայացված է բժիշկ Մաքելըմի գեկուցագիրը:

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59. 867.48/340.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II. p. 157.*

Փաստաթուղթ թիվ 83  
(Ձեռագիր բնօրինակ)

ՉԵԿՈՒՅԱԳԻՐ ՎԱՆՈՒՄ ԱՊՐԻԼԻ 15-ԻՑ ՄԱՅԻՍԻ 15-Ը  
ԿԱՏԱՐՎԱԾ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարոն Գրեյսին և ես Վան ժամանեցինք ապրիլի 15-ին: Դոկտոր Ուիլսոնը մնաց Խոյում՝ Պարսկաստանում, եզներ, կովեր, սերմացու և այլ պաշարների գները և ուղարկելու համար:

Վանի ավելի լավ տներն այրվել են կամ բուրբերի կամ հայերի կողմից, իսկ չայրված համարյա բոլոր տների դռները, հատակը և պատուհանները տարվել են որպես վառելիք: Քաղաքը վերածվել է ավերակների: Վերակառուցման աշխատանքները հսկայական ծախսեր կպահանջեն:

Ռուսական և՛ քաղաքացիական, և՛ զինվորական իշխանությունները, չափազանց բարյացակամ էին մեր հանդեպ և տրամադրում էին բոլոր հնարավորություններն ամեն տեսակի աշխատանքներ կատարելու համար: Այլ բարեգործական ընկերություններ էին աշխատել մեզմից առաջ և կատարել էին արժեքավոր նախապատրաստական աշխատանքներ, ներառյալ որբանոցի, հիվանդանոցի, սննդամթերքի պահեստի հիմնադրումը:

Ամենահարուստ ալ խնդիրը եզների, գութանների ու սերմացուի ապահովումն էր, որպեսզի հաջորդ ձմեռվա համար կարելի լինել կուտակել սննդամթերքի բավարար պաշար:

Ներկայումս շատ հաց կա քաղաքում էլ, գյուղերում էլ: Անցյալ տարվա ցորենի բերքը, քաղված 1914թ. աշնանը, աննախադեպ շատ էր: Կռիվներն ու կոտորածները բռնկեցին 1915թ. ապրիլին և բերքը չհավաքվեց: Ամբողջ անցյալ ձմեռը դաշտում մնացած հացահատիկը կատարյալ կլինի հաց թխելու համար, սակայն որպես

սերմնացու պիտանի չի լինի: Այսպիսով, ենթադրվում է, որ մարդկանց համար ամառվա ընթացքում բավարար սննդամթերք կլինի:

Խորհրդակցելով այլ բարեգործական ընկերությունների հետ մեր աշխատանքների մասին՝ մենք ընտրեցինք Հայոց Չոր շրջանը: Սա մի գեղեցիկ և բերքառատ դաշտավայր է, որի միջով Խոշար գետը հոսում է դեպի Վանա լիճը: Այստեղ կա քառասուն գյուղ, այժմ ավիրված, սակայն շատ մարդիկ վերադարձել են, և ամեն օր գալիս են նորերը: Բանակի կարիքների պատճառով Վանի նահանգում արգելված է անասուն և սերմացու գնել: Այնուամենայնիվ մեզ հաջողվեց գոմեշներ գնելու թույլտվություն ստանալ. քանի որ որպես սննամթերք դրանք չեն օգտագործվում: Ի հավելումն Խոշից դուրսոր Ուիլսոնի ուղարկած եզների, կովերի ու գոմեշների՝ մեծ քանակով Պարսկաստանից բերված անասուն գնեցինք նախապահանքներից:

Քանի որ մենք ունեինք բավականին անասուններ, պարոն Գրեյսին իր թիկնապահի՝ ամերիկացի մի հայ կամավորի, հետ ուղևորվեց չեքեր բաժանելու այն գյուղացիներին, ովքեր եզներ էին ստանալու: Այդ չեքերն անմիջապես բերեցին ինձ, և ես, համաձայն գյուղում արված կարգադրության, բաժանեցի անասունները: Մենք նախատեսել էին յուրաքանչյուր երեք ընտանիքին տալ մի զույգ եզ և ուշադրություն էինք դարձնում, որպեսզի խմբում ընդգրկվեն միայն այն ընտանիքները, ովքեր կաշխատեին համաձայնեցված: Հուսով ենք, որ հետագայում կկարողանանք յուրաքանչյուր երկու ընտանիքին տալ մի զույգ եզ:

Անասունները մենք չենք նվիրում, այլ յուրաքանչյուր ստացողից վերցնում ենք գրություն, որով նա խոստանում է մեզ, կոմիտեին կամ մեր նշանակած մարդուն վճարել ստացած կենդանու արժեքը:

Վճարումը պետք է կատարվի երեք անգամից տարեկան մուծումով, սկսած 1917թ. նոյեմբերի 1-ից: Արժեքը նշելիս մենք նկատի ենք ունենում մեր վճարածի 25-ից 50 տոկոսը, քանի որ եզներն այժմ 3-ից 6 անգամ ավելի քանկ են, քան նորմալ պայմաններում:

Կովեր տալիս ենք հիմնականում որբերին, այրիներին և այն ընտանիքներին, որտեղ փոքր երեխաներ կան:

Նահանգապետն ու գլխավոր հրամանատարը բոլոր անասուն ստացողներին բարեսրտորեն տվեցին պաշտոնական մի փաստաթուղթ, որը հաստատում է անասունների պատկանելիությունը և արգելում դրանց օգտագործումն այլ նպատակներով:

Մենք եզմե՛ր ու գոմե՛շներ ստացող ընտանիքներին գութաններ, խոփեր ու մանգաղներ տվեցինք: Ջեկուցագրում նշված ժամանակահատվածում 400 եզ տվել ենք 600 ընտանիքի, 100 կով 200 այրիների, որբերի, հաշմանդամների ու մանուկների, 50 գոմե՛շ՝ 75 ընտանիքի: Մեր պահանջած գումարը միջին հաշվով 150 ռուբլի (10 J) է գոմե՛շի, 120 ռուբլի՝ եզի և 80 ռուբլի կովի համար:

Անհնարին եղավ Պարսկաստանից ձեռք բերել մեծ քանակով սերմնացու հացահատիկ: Սակայն մենք իմացանք, որ եթե մենք ֆերմերներին գումար տրամադրենք, նրանք շրջակա գյուղերից կկարողանան սերմնացու գնել իրենց համար: Այսպիսով, 10000 ռուբլի ծախսելով, գնել են երեքից չորս հազար բուշել ցորեն ու գարի, և մենք պատճառներ ունենք հավատալու, որ այն ցանվել է: Մենք նաև գրություններ ենք վերցրել ֆերմերներից, որով նրանք խոստանում են բերքահավաքին այնքան սերմնացու վերադարձնել, որքան ստացել են: Մենք մտադիր ենք այս հացահատիկը նորից օգտագործել կամ որպես սերմնացու, կամ սննդամթերք. ինչպես ավելի հարմար կլինի: Երբ նահանգապետն իմացավ սերմնացուն բաժանելու մեր մեթոդի մասին, շատ ուրախացավ և մեզ տրամադրեց 10000 ռուբլի, այնքան, որքան մենք արդեն ծախսել էինք, և մենք նրան տվեցինք ֆերմերներից ստացած գրությունները: Նա նշեց, որ ավելի շատ գումար կտա մեզ, այնքան, որքան պետք լինի նույն նպատակի համար: Մեր շրջանի բնակիչներին մենք ապահովեցինք նաև բավարար քանակով կարտոֆիլի, լոբու, ոսպի, եգիպտացորենի և տարբեր տեսակի բանջարեղենների սերմեր, և նրանք շատ շնորհակալ էին:

Ցորեն ու գարի ցանելու ժամանակն արդեն անցել է, բայց կա հացահատիկի տեսակ, որը կոչվում է կորեկ, որը մեծ մասամբ օգտագործվում է որպես հաց, և որը կարելի է ցանել մեկ ամիս հետո: Մենք փորձում ենք մեծ քանակով կորեկ ստանալ Պարսկաստանից: Դրանից բերքն ստացվում է 100-ը մեկի հարաբերությամբ, այսպիսով, եթե կարողանանք ստանալ մեր ցանածի նույնիսկ միջին չափը, հաջորդ ձմեռվա սնունդի հարցը կլուծվի: Վանը պտղատու ու խաղողի այգիների շրջան է: Սրանցից շատերը պատկանում էին թուրքերին, որոնք այժմ չեն կարող վերադառնալ, և հայերին, ովքեր հիմա դեռ չեն վերադարձել կամ մահացել են: Մենք սկսել ենք խնամել բոլոր այսպիսի պտղատու և խաղողի այգիները Ջիվիստանում և Արտամեղում՝ հատկապես պտղառատ երկու շրջաններում: Կառավարությանը մենք վճարում ենք նոմինալ վարձը 2-ից 5 ռուբլի յուրաքան-

չյուր այգուց և գնալու ենք էսի, ջրելու և այլն: Եթե տերը գա, մենք նրան կվերադարձնենք նրա սեփականությունը մեր ծախսած գումարի վճարի դիմաց, հակառակ դեպքում՝ մենք բերքը կհավաքենք և կտեղավորենք, իսկ ստացված գումարը նորից կներդրվի բարեգործական աշխատանքներում:

Մենք ամերիկյան միսիայի շենքում աշխատանք ենք տվել բազմաթիվ մարդկանց՝ ավերակները մաքրելու, այգիները փոշրելու ու տնկելու և այլ գործերի համար: Նահանգապետի համաձայնությամբ մենք 50 մարդու նշանակեցինք փողոցները կարգի բերելու և ջրային ուղիները մաքրելու համար: Գուցե, այժմ ավելի շատ մարդ է զբաղված այդ գործով, քանի որ դրա կարիքը շատ կա և բոլորի օգտի համար է:

Վանում ամեն տեսակի գործիքների պակաս է զգացվում, սակայն մեզ հաջողվեց գտնել բազմաթիվ վաճառականներ, դերձակներ, կարպետագործներ, հացթուխներ և այլն: Այս ուղղությամբ շատ ավելին կարելի է անել խելացիորեն, երբ բնակիչները վերադառնան:

Որպեսզի նպաստենք հացահատիկի, հագուստի և այլնի տեղավոխմանը Խոյից, մենք բերել ենք մի քանի եզնասայլեր, որոնցից չորսն այժմ օգտագործվում են: Մենք կարգավորել ենք նաև նույն նպատակով ավանակներ գնելու հարցը: Այլևս որպես փոխադրամիջոց չօգտագործվելու դեպքում դրանք կարող ենք տալ Վանի բնակիչներին: Հեռանկարն, ընդհանրապես, հուսալի է թվում: Ռուսական կառավարությունը մեժ գումարներ է ներդրել ամեն տեսակի վերականգնողական աշխատանքների համար: Տարբեր հայկական կազմակերպություններ խորապես շահագրգռված են, որպեսզի գաղթականները վերադառնան իրենց տները, իսկ մեր կոմիտեն, որը համեմատաբար սահմանափակ միջոցներ ունի, արել է, և համոզված են, պարոն Գրեյսիի արդյունավետ ղեկավարությամբ, կշարունակի արժեքավոր օգնություն արամադրել: Կարելի է վստահ լինել, որ բնակիչները կարող են արդյունավետ կերպով օգտագործել անվտանգությունն ու մյուս բարենպաստ պայմանները, որ ձեռք են բերվել ռուսական կառավարության կողմից:

*Թիֆլիս, 23 մայիսի 1916թ.*

*Ֆ. Ու. Մաքելլըմ*

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.4016/340.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries, vol. II, p. 158-161.*

ԱՄԵՐԻԿԱՆ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

*Ռուսաստան, Թիֆլիս, 14 հունիսի, 1916թ.*

Առարկան. Բժիշկ Վիլսոնի զեկուցագիրը հայերի օգնության մասին

*Վաշինգտոն*

*Պատվարժան*

*Պետական քարտուղար*

Պարոն,

Պատիվ ունեմ խնդրելու դեպարտամենտին, հայերի օգնության մասին բժիշկ Վիլսոնի ներկայացված զեկուցագիրն ուղարկել պատվարժան Զ. Բ. Բարթոնին, D. P. 14 Beacon Street, Boston, Mass:

Պատիվ ունեմ լինելու, պարոն,

Ձեր խոնարհ ծառան

(ստորագրված) Ֆ. Վիլսոնի Սմիթ,

Ամերիկյան հյուպատոս

Ներկայացվածը՝ բժիշկ Վիլսոնի զեկուցագիրը

Աղբյուր՝ *1. U. S. State Department Record Group 59, 867.48/341.*

*2. United States Official Documents on the Armenian Genocide. Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II. p. 162.*

ԿՈՎԿԱՍԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ

Ինչպիսի հիասքանչ աշխատանք է պատերազմի ավերածությունների վերացումն ու գաղթականներին իրենց տները վերադարձնելը: Այս էինք փորձում անել մենք՝ գնալով հաղթական ռուսական զորքի հետքերով: Այդ հնարավորությունը տվեց մեզ նրա հաստատուն առաջընթացը Տրապիզոնից Ջերիկո ամբողջ գծի ուղղությամբ: Այսպիսով, Վանի ու Ալաշկերտի շրջաններում արդեն հազարավոր ծլած արտեր կան, որ հազարավոր ընտանիքներին առատ սնունդ է խոստանում: Գարնանային գիշերահավասարից ի վեր քիչ թվով, սակայն հաստատուն կերպով, գաղթականներ՝ ուժեղ, ջանասեր սղամարդիկ, մեծ մասամբ ֆերմերներ, վերադառնում են: Նրանք

ապահովության համար խելացիորեն իրենց ընտանիքները թողել են Կովկասում, համարձակվելով ենթարկել հնարավոր նահանջի ռիսկին: Ռուսական կառավարությունը գաղթականներին թույլ է տվել անվճար օգտվել երկաթուղուց մինչև Ջուլֆա՝ Պարսկաստանի սահմանը: Այնտեղից նրանք անցնում են ուղքով Խոյ քաղաքի միջով՝ 150 մղոնանոց երկար ու հոգնեցնող մի ճանապարհ: Զաղաքների միությունն ու Կաբմիր Խաչը ճանապարհին հիմնել են բարեգործական տներ, որտեղ գաղթականները ստանում են անվճար ապաստան և ուտելիք, հիվանդների խնամքը իրականացնում են պաշտոնական և բարեգործական խմբերը: Սրանց մեծ մասը կիրգիզական վրաններ են՝ թեթև վախտե վանդակների վրա հենված ամուր կառույցներ: Ուրախություն է պատում մարդուն, երբ նա տեսնում է Կարմիր Խաչի դրոշը պարսկական հեռավոր լեռներում: Օրինված է ծառայությունը գոհաբերության դրոշի ներքո:

Այս հայրենադարձ քրիստոնյաներն ամեն ինչի կարիք ունեն: Ամեն ինչ սրբվել-տարվել է քալանի ու ավերածության հեղեղի ժամանակ: Շատ իրեր կայող էին մնալ մինչև տերերի վերադարձը: Տների առջև դաշտեր են: Մեր առաջին հոգսը գյուղատնտեսական իրերի, սերմնացույի և անասունների տրամադրումն է:

Ես մնացի Խոյում գնումներ կատարելու և գունարային կենտրոններին՝ Թիֆլիսին, Թավրիզին, մոտ լինելու համար, մինչդեռ դոկտոր Մաքելընը և պարոն Գրեյսին գնացին Վան՝ բաժանումներ անելու: Մեր գնումների մեջ մտնում էին եզներ, կովեր, գոմեշներ, սայլեր, գուրաններ, խոփեր, մանգաղներ, հսցահատիկ և տարբեր սերմեր: Այսպիսի առաջադրանքի կատարումը հեշտ չէ ներկայումս, քանի որ Պարսկաստանն ու Կովկասն աննախադեպ չափերով սննդամթերք մատակարարել ու մատակարարում են բանակին: Որպեսզի բանակի մատակարարմանը չխանգարենք, մենք սահմանափակվեցինք շուկաներով: Բարեբախտաբար նրանց ու հայկական կոմիտեի կողմից գաղթականների համար սահմանափակում չկար: Մյուս դժվարությունը տեղափոխումն էր, քանի որ անասունները տանում էին բանակի կարիքների համար: Նույնիսկ պարսիկներն էին դժգոհում մասսա անասունը բանակին տալու դեմ, և Թավրիզում մասսայական ցույց կազմակերպվեց՝ ի նշան բողոքի, քանի որ այն հանգեցնում էր ֆերմերային աշխատանքների դադարեցմանը և մսի շուկաների սակավությանը:

Որպես փոխհատուցում կրած դժվարությունների ու բազմաստե-սակ փորձությունների՝ գաղթականները հիանալի օգնություն ստացան: Անցյալ տարվա շինծված բերքն ապահով կերպով մնացել էր

դաշտերում: Գյուղերը մնացել էին առանց բնակիչների: Մի քանի հազարը նոր-նոր էին սկսել հավաքվել Վանում: Չինձված ցորենի դաշտերի վրայով կարկուտ կամ փոթորիկ չէր անցել: Այսպիսով, երբ ապրիլին գաղթականները վերադարձան, գործի գցեցին իրենց մանգաղները, որ մենք տվել էինք նրանց և առատ բերք հնձեցին: Այս և գյուղերի ամբարներում կուտակված ցորենը հաց տվեց շատերին մինչև բերքահավաքի ժամանակը գար: Պետք է նշեմ, որ Կովկասից բաժանելու համար մենք բերել էինք 30000 կտոր անկողին ու հացուստ:

Վերականգնման աշխատանքները զուրկ չէին ռիսկից: Այսպիսով, վերահաս վտանգ առաջացավ Ուրմիայում այն ժամանակ, երբ նեստորականները վերակառուցում էին իրենց տներն ու վերականգնում գոհասեղանները: Մի քանի ժամվա հեռավորության վրա մարտեր էին տեղի ունենում քրդերի ու ռուսների միջև, և ցանկացած օր Ուրմիան կրկին կարող էր դառնալ ռազմադաշտ: Նույնիսկ այսպես եղավ Սուջբուլաղում, որտեղ պատերազմական վիճակի արագ փոփոխությունը ոչինչ չըողեց ավերածությունից բացի: Այսպես կարող էր լինել նաև Վանում: Իսկապես, երբ թուրքական զորքերը ետ վերցրեցին Բիթլիսը, Վանի բնակիչները պատրաստվեցին ևս մի կռվի: Սակայն ռուսական բանակի առաջընթացի և հաջող գործողությունների շնորհիվ վտանգն ավելի ու ավելի հեռացավ: Ռիսկի դիմելու իմաստնությունն արդարացված էր, և բերքը ոչ միայն կմատակարարի սննդամթերք, այլ նաև կհեշտացնի բանակին մթերքով մատակարարելը:

Չմոռանամ նշել, թե ինչ արեցինք մենք Խոյում ամերիկյան Կարմիր Խաչի հիվանդանոցում: Այստեղ Փիսքսբուրգից դոկտոր Հեգլեթն ամերիկացի և ռուս բուժքույրերի օգնությամբ բուժում է Բիթլիսից բերված ռուս և հայ վիրավորներին, ինչպես նաև 100-ից ավել բուրք վիրավոր զինվորների: Այն ժամանակ, երբ բժիշկ Հեգլեթը բուժում էր գրեթե մահացու տիֆի ու թոքախտի համաճարակից, Դիարբեքլիից բժիշկ Ֆլոյդ Օ. Սմիթը, մի նոր անդամ, որին մենք սիրով քնդունել էինք մեր օգնության կոմիտեի կազմում, հիվանդանոցում օգնում էր հասկապես թուրք գերիներին, որոնց լեզուն ինքը գիտեր: Միաժամանակ նա օգնում է մեր կոմիտեին Խոյում, դրան նա ձեռնմուխ եղավ իր գալուց մի օր հետո:

Խոյում իմ աշխատանքն անսպասելիորեն ընդհատվեց: Մայիսի 7-ին ինձ կանչեց դիվիզիայի հրամանատարը և տեղեկացրեց, որ գլխավոր հրամանատար գեներալ Չերնոզուրովն ինձ հեռագրել է, որպեսզի 24 ժամվա մեջ Խոյից մեկնեմ Թավրիզ: Հետո ես իմացա,

որ Ուրմիայից դոկտոր Փեկարդը ձերբակալվել էր, Մուլդուզից Ուրմիա գնալիս: Մխալմունքը կամ սխալ տեղեկատվությունը, որ հանգեցրել էր այդ քայլին, հարթվեց, և Թիֆլիսից ավելի բարձր իշխանավորները մեզ հավաստիացրեցին, որ հեռանալու պահանջը ժամանակավոր է, և որ իմ կամ մեր աշխատողներից որևէ մեկի դեմ նրանք ոչինչ չունենին: Գեներալ Չեռնոզուբովը հեռագրել է, որ ես կարող եմ վերադառնալ Խոյ, երբ ցանկանամ: Քանի դեռ այստեղ էի, կարողացա նախրապաններին գործի դնել անասուններ գնելու հարցով:

Ինձ սիրով ընդունեց հայկական համայնքը, ինձ համար ճակերույթ կազմակերպեցին՝ իրենց երախտագիտությունն ու գնահատանքը մեր առատաձեռն ամերիկյան օգնականներին հայտնելու համար:

Մեր կոմիտեն գնահատում է պարոն Հիլի տաղանդաշատ և քրտնաջան աշխատանքը, հատկապես Թիֆլիսի առաքումների քաժնում: Նա մեծ ներդրում ունի ձմեռային արդյունավետ աշխատանքների մեջ և անձամբ կարող է պատմել մեր ջանքերի մասին:

Հյուպատոս Սմիթը պատրաստվում է լքել մեզ: Նա Կոմիտեի աշխատանքներում սիրտ ու հոգի է դրել և ժամանակ ու ջանք չի խնայել մեր գործը հեշտացնելու համար: Հուսով եմ, բոլորդ էլ Ամերիկայում կունենաք նրան տեսնելու հաճույքը և անձամբ նրանից կյսեք մեր աշխատանքների մասին, որին դուք առատաձեռնորեն նպաստել եք:

Հարգանքներով Ձեր՝

(ստորագրված)՝ Ս. Գ. Ուիլսոն

(Ձևնագիր) Թավրիզ. Պարսկաստան 6 հունիսի, 1916թ.

Աղբյուր՝ 1. *U. S. State Department Record Group 59, 867.48/341.*

2. *United States Official Documents on the Armenian Genocide, Compiled and introduced by Ara Sarafian. The Peripheries. vol. II, p. 163-165.*

### III

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԵՐԿՐԱՄԱՍԵՐԸ

Մեծարգո Հենրի Մորգենրաուին  
Լճերիկյան դեսպանին  
Կոստանդնուսոյիս

Պարոն,

Պատիվ ունեմ դեսպանատանը տեղեկացնել երբևէ, որևէ կառավարության նախաձեռնած ամենադաժան հոգացման՝ մարդկային պատմության մեծագույն ողբերգություններից մեկի մասին: Նքե դեսպանատանը այլ աղբյուրներից հայտնի չէ, իմ հունիսի 27-ի և 28-ի հեռագրերը, 29-ի կարճ հազորդագրությունը պետք է որ այդ խնդրի վրա բևեռելին ձեր ուշադրությունը: Մեր հյուպատոսարանի նախկին տեղեկագրերը դեսպանատանը ներկայացրել են այն ծայրահեղ լարված իրավիճակը, որ տիրում է այստեղ:

Իմ ապրիլի 19-ի, մայիսի 5-ի, հունիսի 2-ի ճեպագրերում (թղթապանակ թիվ 1840.1) խոսվում է ստեղծված պայմանների, ժողովրդի տագնապի մասին, որին նախապատրաստվում են կոտորել: Հաճախակի հղած իմ հաղորդագրություններում ես զեկուցել եմ վերջին ամիսներին ամերիկյան միսիոներների նկատմամբ ցուցաբերվող թշնամական վերաբերմունքի, ամերիկյան բոլոր դպրոցների գործունեության կտրուկ դադարեցման մասին (թղթապանակ թիվ 360): Իմ հունիսի 12-ի և 24-ի տեղեկագրում (թղթապանակ թիվ 300) նկարագրված էր իրական վտանգը, որն սպառնում է ամերիկյան միսիոներներին Թուրքիայի այս մասում: Հունիսի 24-ի ծածկագրված հեռագրայություն (թղթապանակ թիվ 300/840.1/703) ես լրացուցիչ մանրամասներ էի հաղորդել այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում այստեղ: Ինչպես նշել էի հիշատակված զեկուցագրերից մի քանիսում, որոշ հայկական շրջանակներում ապստամբական շարժում էր բացահայտվել, կանխելու համար ձեռք էին առնվել մի շարք խիստ միջոցներ: Կիրառվել էին համընդհանուր բնույթի պատիժներ, տարբերություն չէին դրել լիովին անմեղների և նրանց միջև, ում կասկածել էին շարժմանը մասնակցած լինելու համար: Գործնականում արական սեռի ամեն հայ, անկախ զբաղեցրած դիրքի կարևորությունից, արդեն ձերբակալվել է, բանտ նետվել: Նրանք ենթարկվել էին ամենադաժան կտուանքների, որոնց մեծ մասը չէր դիմացել, մահացել էր: Մի քանի հարյուր նշանավոր հայերի գիշերը ձերբակալել էին, ինչ որ տեղ տարել ու թվում է, լիովին հաստատված է, որ շատ-շատ

տերին, եթե ոչ բոլորին, սպանել են: Անցած շաբաթ, հավաստի տեղեկությունների վրա հիմնված լուրեր էին պտտվում, որ կոտորած է նախապատրաստվում: Կարծում են, գրեթե կասկած չի կարող լինել, որ այն վաղուց ծրագրված է:

Հայ ժողովրդին բնաջինջ անելու ուրիշ միջոց էլ է հղացված: Խոսքը ամբողջ ազգաբնակչությանը բռնագաղթեցնելու մասին է, այն էլ ոչ միայն մեր, այլև, որքան հասկանում են, բոլոր վեց նահանգներից, որոնք Հայաստանն են կազմում: Ասում են, որ մեր նահանգում ապրում է 60000, վեց նահանգներում մոտ 1000000 հայ: Նրանք բոլորն էլ ենթակա են բռնագաղթի: Մարդկության պատմության ընթացքում հավանաբար նման զանգվածային տեղահանության մտադրություն չի եղել:

Շաբաթ օրը, հունիսի 28-ին հրապարակայնորեն հայտարարեցին, որ հինգ օր անց բոլոր հայերն ու ասորիները պետք է հեռանան այստեղից: Մամուրեթ-ուլ-Ազիզ և Խարբեղոյ քաղաքները բաժանել են թաղամասերի, յուրքանչյուր տասն բնակիչներին հաղորդել, թե երբ պիտի ճամփա ընկնեն: Մամուրեթ-ուլ-Ազիզին երկու օր էր հատկացված՝ հունիսի 1-ից 3-ը, Խարբեղոյին երեք հունիսի 4-ը, 5-ը և 6-ը: Այս երկու քաղաքներում ենթադրաբար քառասուն հազար հոգի է ապրում. որոնցից առնվազն տասնհինգ կամ տասնութ հազարը հայեր են, որոնք ամենաբիչը երեք հազար ընտանիք են կազմում: Ավելի շատ հայեր կան հարևան գյուղերում, որոնց բնակիչները նույնպես մի քանի օրից պիտի թողնեն իրենց տները: Նման հրամանի բուն նշանակությունը դժվար թե կարողանա պատկերացնել նա, ով ծանոթ չէ այս մեկուսացած տարածաշրջանի առանձնահատուկ պայմաններին: Ջարդը, որքան էլ սարսափ հարուցի բառը, բռնագաղթի հարևանությամբ ավելի մարդկային կլինի: Կոտորածներից հետո ոմանք թերևս ողջ մնան, մինչդեռ նման երկրում համընդհանուր տեղահանություն նշանակում է յուրաքանչյուրի համար թեև դանդաղ, բայց թերևս անհամեմատ ահավոր մահ: Ես չեմ հավատում, որ հարյուր հազարից մեկն անգամ ողջ մնա: Այստեղից մեկնողների հավանական հանգրվանը հայտարարված է Ուրֆան, բայց ես շատ լավ գիտեմ, որ խոսքը քաղաքի մասին չէ, այլ հարավ-արևելք ընկած Միջագետքի հարթավայրի, որտեղ չի կարող ապրել ոչ մարդը, ոչ էլ անասունը: Բայց որն էր լինի հանգրվանը, տարագրվելն այդ ուղղությամբ տարվա այս եղանակին չափազանց դժվար է նույնիսկ նրա համար, ով հանգամանորեն նախապատրաստվել է նույնիսկ սայլ է գտել: Ճանապարհի մեծ մասն անցնում է տոթ, կիզիչ անապատով, ջուր, բուսականություն գրեթե չկա: Որոշ տեղերում սայլով

մի ամբողջ օր առաջանալուց հետո անգամ անհնար է ջուր գտնել: Հեռիտուն կանանց ու երեխաների քարավանից այդ նույն տարածությունն անցնելու համար անհամեմատ շատ ժամանակ կպահանջվի, նրանք այստեղից Ռուֆա հագիվ տասնհինգ-քսան օրում հասնեն: Ծանապարհին բնդամենը երկու քաղաք, երկու-երեք փոքրիկ գյուղ կա, այդ գյուղերից դժվար կլինի թեկուզ քսան-երեսուն մարդու համար ուտելիք գտնելը: Վրա կիսանեն օրեր, երբ մարդիկ ոչ ուտելիք կունենան, ոչ խմելիք: Նրանք չեն կարողանա այնքան սնունդ չափակել, որ բավականացնի մինչև մյուս բնակավայրը: Ամենավաղ պայմաններում անգամ նման ճամփորդությունը ահավոր տառապանք է (ես դա ստում եմ՝ ելնելով անձնական փորձառությունից, անցած ամռանը. Ամերիկա ուղևորվելու և Խարբերդ վերադառնալու ժամանակ այդ ճանապարհը երկու անգամ անցել եմ): Մինչդեռ բռնագաղթողների՝ այսինքն հայերի մեծ մասի համար դա սառույց մահ է:

Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ գործնականում հնարավոր չէ, ոչ սայլեր, ոչ էլ ձի հայթայթել: Մեր տարածաշրջանից արտաքին նախապատրաստվող հինգ-վեց հազար ընտանիքը հագիվ քսանհինգ սայլ գտնի: Ընհանուր առմամբ թերևս հարյուր եզնասայլ, բավական մեծ թվով փոքրիկ ավանակներ լինեն, ոմանք էլ ուզենան կովերին տանել, որպեսզի ուտելիք, մի երկու ծածկուց քարձեն: Ահա ամբողջ փոխադրամիջոցը, որ այս պահին գոյություն ունի մեր շրջանում: Նույնիսկ բավարար քանակությամբ որևէ տեսակի կենդանի չկա, որ հերիքի յուրաքանչյուր ընտանիքի՝ արդեն պարզ է, որ բոլորը գրեթե ստիպված պիտի լինեն ուրքով ճամփա ընկնել: Բարեկեցիկ ընտանիքներից շատ քչերը մեկ-երկու անասուն կունենան, որոնց վրա մայրերը, երեխաները կկախողանան հերթով նստել, քայց մեծ մասամբ կանայք՝ ամուսիններից զուրկ, նորածինները գրկներին, բազմաթիվ զավակներով, առանց փոխադրամիջոցի կմնան: Դժվար չէ պատկերացնել նման հայերի ճակատագիրը: Բռնագաղթը ջարդից թերևս ավելի քաղաքակիրթ, քայց անհամեմատ արդյունավետ ու արմատական միջոց է: Ակնհայտ է, որ շատ-շատերը ելուզակների ու մարդասպանների հարձակմանը կենթարկվեն, քանի որ ներկայումս ճանապարհները լեփ-լեցուն են ավարառու քրդերով:

Սի քանի օր առաջ ես վալիին հարցրի, թե ի՞նչ է նախաձեռնվում այդ մարդկանց պաշտպանության համար: Նա պատասխանեց, որ մեծ քանակությամբ զինվոր-ոստիկան նրանց կուղեկցի, որպեսզի չկրկնվի ավելի վաղ տեղահանվածների ճակատագիրը, որոնց ճանապարհին հանդիպել էին քրդերը, չափազանց դաժան վարվել:

Ոչ մի կասկած չի կարող լինել, որ քրդերը նման հաշվեհարդարի հատուկ հրահանգ էին ստացել: Շատ-շատերը ոչ առանց հիմքի մտածում են, որ նույն ճակատագիրը այժմ մեկնողներին է սպասում: Խիստ հավանական է, որ տղամարդկանց կսպանեն, ամենագեղեցիկ կանաց ստրկության կտանեն. մյուսներին երեխաների հետ անապատում կթողնեն, որպեսզի մահանան: Ամեն դեպքում տարակույս չի կարող լինել, որ գրեթե բոլորը, նախքան վերջնական հանգրվան հասնելը, որևէ կերպ կոչնչանան: Նրանց ողջ-առողջ տեղ հասնելը կասկածի է ենթարկում նաև այն հանգամանքը, որ Էրզրոմից, Նրզնկայից տարագրվածները, որոնց այստեղ սպասում էին, բացի մի քանի, մոտակա վայրերից բշվածներից, տեղ չեն հասել: Միաժամանակ լուրեր են պտտվում, որ նրանց բոլորին թալանել ու կոտորել են քրդերը: Շատերի անուններով այստեղ գումարներ են ուղարկել, բայց ոչ ոք չիներկայացել, որ ստանա:

Մյուս մտահոգող հանգամանքն այն է, որ նահանգապետը որևէ ամերիկացու թույլ չի տալիս ուղեկցել ճամփա րնկնող քարավաններին: Մինչդեռ բազմաթիվ միսիոներներ կուզեին հայերի հետ մեկնել, որպեսզի նեցուկ լինեն օգնության կարիք ունեցողներին: Կիրակի օրը, ամսի 27-ին ես այցելեցի վալիին, որ խոսեմ այս. մի շարք ուրիշ խնդիրների մասին: Նա կարականապես մերժեց հայերին ուղեկցելու առաջարկը, ասաց, որ այդպիսի թույլտվություն չունի, բայց ավելացրեց, որ նոր բնակավայրերը հասնելուց հետո, ամերիկացիները, եթե ուզում են, կարող են միանալ նրանց: Անշուշտ, սա պատասխանատվություն չենթադրող խոստում է. քանի որ պարզ է, գաղթականներից շատ քերք տեղ կհասնեն, եթե իհարկե, ընդհանրապես որևէ մեկը կհասնի: Կառավարությունը, նրանց ապահով վերջնական հանգրվան հասցնելու ցանկություն ունենալու դեպքում, ամերիկացիների ուղեկցելու առաջարկը չէր մերժի: Մյուս կողմից էլ, ո՞վ զիտե, քանի որ այժմ բոլոր ճանապարհներն անկասկած խիստ վտանգավոր են, թերևս վալին չի ուզում պատասխանատվություն ստանձնել, թույլ տալ, որ ամերիկացիները կյանքները փորձության ենթարկեն: Հնարավոր է նաև, որ վալիի հետագայում գնալ արքայականներին միանալու առաջարկը թափանցիկ ակնարկ է այն մասին, որ մոտ ապագայում միսիոներներին էլ են թելադրելու հեռանալ այստեղից:

Իմ հունիսի 27-ի, հունիսի 28-ի, ինչպես նաև միստր Ռիցի միստր Փիթին հղած ամսի 28-ի հեռագրերում մենք անդրադարձել էինք վերջնական հանգրվանում հայերին օգնության հասնելու անհրաժեշտությանը, ես առաջարկել էի մինչև իսկ Ամերիկայից օժան-

դակորթյուն ուղարկել: Մնում է որոշել, թե ի՞նչ չափով է կարելի աջակցել տարագիրներին ու ինչպես է հնարավոր իրագործել մեր աջակցությունը: Չափազանց մեծ է վտանգը, որ նրանց բոլորին կկտորեն, կամ էլ այնպես կանեն, որ ճանապարհին մահանան: Եթե մինչև անգամ նրանք ինչ որ տեղ հասնեն, հայտնի չէ՝ հնարավոր կլինի՞ հեռները կապ հաստատել: Իմ կարծիքով հատուկենտ վերապրողներին կրչեն Սիջագետքի հարթավայրի ամենահեռավոր անկյունները՝ Ռուֆայից, մյուս քաղաքաներից օրեր ու օրեր հեռու: Ռուֆայից նրանց օգնություն հասցնելու հնարավորություն լինելու դեպքում, մենք կարող էինք դա անել քաղաքում գտնվող Ամերիկյան առաքելության կամ Հայեպի հյուպատոսության միջոցով: Ամեն դեպքում անվայման պետք է նկատի ունենալ բռնագաղթողների ահավոր տառապանքներն ու վերապրողներին աջակցելու անհրաժեշտությունը: Հարուստ ու ազքատ հավասարապես կզրկվեն ամեն ինչից, եթե հնարավոր է նրանց օգնության ձեռք երկարել, անհրաժեշտ է այսօրվանից սկսել:

Անկարելի է լիովին նկարագրել տագնապը, որ առաջացրել է տարագրության հրամանը: Մարդկանց ընդամենը հինգ, թե վեց օր է տրված ամբողջ ունեցվածքը տնօրինելու, թողնել-հեռանալ համար: Վաճառականներն այդքան կարճ ժամանակում չեն կարողանա իրենց գործերը կարգավորել: Ընտանիքի հայրերի համար նույնպես դժվար կլինի եղած-չեղածը վաճառելը, կենցաղային խնդիրներ կարգավորելը: Ահա այդ ամենի պատճառով առաջացել է մի խուճապ, որն այլուր հազվադեպ, մեզ մոտ ընդհանրապես չի եղել: Բոլոր նրանք, ովքեր աքսոր են գնալու, աշխատում են հետները գոնե մի քիչ փող ունենալ, բուրքերն էլ, իհարկե, առիթից օգտվում, գրեթե ձրի, ինչ ուզում, գնում են: Խաբեությունն ու թալանը երբեք այս աստիճանի բացահայտ չէին եղել: Թուրքերը՝ տղամարդ թե կին, մտնում են հայերի տները, ցանկացած իր չնչին դրամով առնում: Ապրանքի գինը հազվադեպ է իսկական արժեքի հինգ կամ տասը տոկոսը կազմում: Մի ամբողջ տան կահ-կարասի, որը կարժենա հարյուր կամ երկու հարյուր փաունդ, վաճառվում է տասը-տասնհինգ փաունդով: Հինգ-տասը փաունդանոց գորգերը գնում են հիսուն կամ յոթանասունհինգ պիաստրով: Մարդիկ են պատահում, որոնք գոհ են լինում, երբ ընդհանրապես որևէ բան են ստանում իրենց ապրանքի կամ ունեցվածքի դիմաց: Փողոցները լցված են թալանը տեղափոխող ուղտերով, հարուստ թուրք տղամարդկանցով ու կանանցով, որոնք, ինչպես տունական օրերին, հագել են իրենց ամենագեղեցիկ զգեստներն ու նմանվում են ճանապարհին աչքովն ընկած գոհի վրա պտ-

սովող գիշանգրի: Գլ-ժվար է պատկերացնել ավելի ճանաչող տեսարան, քան այն, ինչ այժմ տեղի է ունենում մեզ մոտ: Նման կարճ ժամանակում մեկնելու նախապատրաստվելն այնքան ծանր է, որ մենք վեց հոգով՝ արտասահմանցի ընտանիքների գրեթե բոլոր տղամարդիկս, ոչ պաշտոնական այցով վալիի մոտ գնացինք. հարցրեցինք՝ հայերին տարագրության պատրաստվելու համար հնարավոր չէ՞ ավելի երկար ժամանակ տալ: Նա մեզ ընդունեց խիստ հարգալիր, բայց ասաց, որ դա անհնար է: Ամեն դեպքում մենք որոշակի իմացանք, որ աքտրվողներին կարող ենք տարբեր ձևերով օգնել: Նահանգապետը հայտնեց, որ ամենևին դեմ չի լինի, եթե նրանց համար որոշ ապրանք գնենք կամ իրենք մեզ վստահեն իրենց գումարները: Եվ շտ է գայնագամը այդ ամենին դեմ էր, բայց այնուամենայնիվ մենք ինչ որ բան կարողացանք անել: Միսիոներները նույնպես փորձեցին բռնագաղթողներին դեղորայքով, ճանապարհորդության համար անհրաժեշտ այլ օգտակար իրերով ապահովել, ամենաչքավորներին ու կարիքավորներին դրամ բաժանել:

Վերջին երեք օրվա ընթացքում անընդհատ մարդիկ էին գալիս հյուպատոսարան, Ամերիկյան առաքելություն, որ այս կամ այն կերպ օժանդակություն ստանան: Մի մասը նյութական օգնություն էր խնդրում, մյուսն ուզում էր վստահել որոշ իրեր: Հայերն բերում էին դրամ, փաստաթղթեր, զարդեղեն, կահույք, այլ ապրանքներ: Ես ընդունում էի միայն դրամ ու փաստաթղթեր, բայց միսիոներները շատ ուրիշ պարտականություններ էլ էին ստանձնում: Ոմանք պրամները թողնում էին, որ իսկույն Լեթ Ամերիկայի իրենց հարազատներին ուղարկենք, սակայն մեծ մասը խնդրում էր դա անել միայն այն դեպքում, եթե չորսից վեց ամսվա ընթացքում իրենցից ոչ մի լուր չստացվի: Ես երբեք ավելի ողբերգական, հոգեմաշ տեսարան չեմ տեսել: Բոլորն զգում էին, որ դեպի ստույգ մահն են գնում ու իհարկե հիմնավոր պատճառներ ունեին այդպես կարծելու: Նրանց վստահությունը ամերիկյան հյուպատոսարանի, միսիոներների նկատմամբ սրտաշարժ էր, մեծ մասը չէր ուզում նույնիսկ այն դրամը հաշվել, որ վստահում էր: Հայերը մեզ էին թողնում իրենց ամբողջ կյանքում խնայած գումարն ու միմիայն խնդրում, որ եթե մի քանի ամսվա ընթացքում իրենց մասին որևէ տեղեկություն չհասնի, հնարավորության դեպքում դրամները հարազատներին առաքել:

Հայերի անշարժ գույքը բռնագրավելու է կառավարությունը: Բացարձակ մեծամասնությունը չի էլ հասցնի տնօրինել ունեցվածքն ու շատ հավանական է, որ ամբողջ պարունակությամբ թողնի տուն, խանութ, ամեն ինչ: Նրանք, ովքեր հարստության տեր էին, բոլորը

կկորցնեն: Ոմանք, իհարկ, կկարողանան հետները մի քիչ փող վերցնել, բայց ամենքն էլ կվախենան թալանվելուց, շատ քիչ հայ կպատահի, որ կհանդգնի ճանապարհի համար մեծ գումարներ տանել: Չքավորների, դրամ չունեցողների վիճակն ավելի ծանր է, ոչ ոք չգիտի, թե ինչ է լինելու նրանց վերջը: Կառավարությունը ավանակներ առաջարկել է, բայց ամեն անասունի, ամեն օրվա համար խոշոր գումարներ է պահանջել: Նա, ով ճանապարհ ընկնի մեկ-երկու լիրայով, մի քանի օրից դրամը կվերջանա ու այլևս ոչ մի միջոց չի ունենա:

Առևտրի ու արդյունաբերության տեսակետից հայերի աքսորի հետևանքն այն կլինի, որ նահանգը հետ՝ միջնադար կվերադառնա: Պաշտոնական վիճակագրությամբ վաճառականության և առևտրական գործարքների իննսուն տոկոսը իրականացվում է այն դրամատների միջոցով. որոնք հայերին են պատկանում: Բոլոր գործառույթյունները կխափանվեն ու վերականգնելու ոչ մի հնարավորություն չի լինի: Բազմաթիվ բնագավառներում ոչ մասնագետ, ոչ էլ նույնիսկ բանվոր կգտնվի: Եթե որոշ արհեստավորների նկատմամբ բացառություն չարվի, դժվար է նույնիսկ պատկերացնել թե ինչպես պիտի ապրեն այն թուրքերը, որոնք այս կամ այն չափով վարժվել են քաղաքակրթությանը: Մինչև այժմ, սակայն, այդ մասին ոչ ոք չի մտածում: Այլևս ոչ դրամատուն կմնա, ոչ եկեղեցի, ոչ էլ քրիստոնեական դպրոց: Մյլ հարվածով երկիրը երկու-երեք հարյուր տարով հետ կգնա: Նույնը վերաբերում է Դիարբեքիլին, տարածաշրջանի մյուս բնակավայրերին: Ես ոչ մի կասկած չունեմ որ բոլոր ամերիկյան միսիոներները ստիպված կլինեն հեռանալ: Ամենևին չեմ զարմանա, եթե նրանք մեկնելու հրաման ստանան, բայց, անկախ այն բանից, կվտարվեն, թե ոչ, այստեղ այլևս անելիք չեն ունենա: Խարբեքի միսիոներների վաթսուն տարվա գործունեությունը մոտենում է իր վախճանին, ես չեմ էլ պատկերացնում, թե ինչպես են նրանք իրենց առաքելությունը շարունակելու:

Գործարար կյանքի ընդհատումից, միսիոներների հեռանալուց հետո հայտնի չէ, թե ինչով պիտի զբաղվի հյուպատոսարանն այստեղ, Դիարբեքիլում, տարածաշրջանի այլ բնակավայրերում: Շատ լուրջ վտանգ կա նաև, որ շուտով կկորցնեն տասը տարուց ավելի հյուպատոսարանում ծառայող իմ խիստ կարևոր երկու աշխատակիցներին, քանի որ հայեր են: Ես վալիից խնդրեցի թույլ տալ նրանց մնալու, բայց միակ բանը, որին հասա, աքսորի առաջին քարավանից հետ պահելն էր: Կոտակալն ասաց, որ երկու հայերը կարող են ևս մի քանի օր մնալ, այդ ընթացքում ինքը համապատաս-

խան հրահանգ ստանալու համար կղիմի Կոստանդնուպոլիս: Իմ հունիսի 27-ի հեռագրում ես դեսպանությանը խնդրել էի նրանց համար արտոնություն ձեռք բերել, բայց չեմ կարծում, որ այդ հեռագիրը տեղ է հասել: Իսկ իմ հունիսի 27-ի հեռագրով ես դիմել էի դեսպանատանը, որ տեղեկանամ, թե կարելի՞ է արդյոք բացառության հասնել այստեղ գանձիդ այն անձանց նկատմամբ, ովքեր ամերիկյան հպատակություն ունեն: Մի անգամ այդ մասին խոսեցի վալիի հետ, բայց նա խուսափողական պատասխան տվեց:

Հույս ունեմ ժամանակին դեսպանատնից համապատասխան հրահանգ ստանալ, որպեսզի իմանամ, թե ի՞նչ իրավասություններից կարող են օգտվել նման մարդկանց ու նրանց երեխաներին վրկելու համար: Կան այնպիսի քաղաքացիներ, ովքեր անկասկած մեր պաշտպանությունը վայելելու իրավունք ունեն: Խոսքը վերաբերվում է հատկապես նրանց, որոնց ամուսինները ամերիկահայատակ են, գտնվում են Ամերիկայում, իսկ իրենք կանաչք, հարագատներին տեսնելու համար կարճ ժամանակով են Խարբերդ եկել: Այդպիսիները քիչ չեն, ընդ որում գրեթե բոլորը վերադարձել են Միացյալ Նահանգներում ծնված երեխաներով, ես նրանց օգնելու համար պատրաստ եմ ամեն ինչ անել:

Այս տարածաշրջանի ազգաբնակչության կեսի տարիանումը սկսվում է վաղը, եթե բոլոր հայերը այդ աստիճանի ընկճված ու հուսահատված շլինեին, ես կարող էի ընդլզվման տեսարանների ականատես լինելու հույսն ունենալ: Ինչ էլ լինի, ոչ մի կերպ չեմ կարողանում հավատալ, որ իշխանությունները կհասնեն իրենց նպատակին՝ բոլորին կաքտրեն, շնայած առայժմ լարվածության թուլացման, բացառություններին ընդառաջելու ոչ մի նախանշան չեմ տեսնում:

Պատիվ ունեմ, պարոն, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

ԼԵՍԼԻ Ա. ԴԵՄԻՍ  
(ստորագրություն)  
Հյուպատոս

Աղբյուր՝ Լեյի Ա. Դեկար Խարբերդից՝ Հենրի Մորգենթաուին, ամերիկյան դեսպանին, Կոստանդնուպոլիս, 30-ր հունիսի, 1915թ., Կոստանդնուպոլիս գործերի կառավարչի հերթական թղթատարով 1916թ. փետրվարի 17-ին ուղարկված է պետքարտուղարին Ա.Ա., Պ.Դ., 59 և.Փ., տասնորդական թղթապանակ, թիվ 867. 4016/269.

*Մեծարգո Հենրի Մորգենթաուին  
Ամերիկյան դեսպանին  
Կոստանդնուպոլիս*

Պարոն,

Պատիվ ունեմ այս տարածաշրջանից հայերի արտաքսմանը վերաբերող իմ հունիսի 30-ի գեկուցագրին (թղթապանակ թիվ 840.1) հետևյալ լրացումները կատարել:

Մարդկային մի մեծ խումբ այստեղից ճամփա ընկավ հուլիսի 1-ին, հազարավորներ՝ 3-ին, շատ ուրիշներ հաջորդ օրերին: Որոշակի թիվը դժվար է ճշտել, բայց շատ-շատերն արդեն մեկնել են:

Ամեն դեպքում Խարբերդ քաղաքի բնակիչների աքսորը հետաձգվեց, բազմաթիվ կանանց ու երեխաների ժամանակավորապես թույլ տվեցին մնալ, մարդիկ սկսեցին հուսալ, որ վտանգն արդեն անցել է, իրենց հանգիստ կթողնեն: Բայց քիչ առաջ մոմենտիկը հաղորդեց, որ բոլոր հայերն անխտիր հուլիսի 13-ին պիտի մեկնեն: Եթե խոսքը միայն տունը-տեղը թողնել, մի այլ վայրում հաստատվելու մասին լինեք, սարսափն այսքան մեծ չէր լինի, բայց յուրքանչյուրը գիտե, որ դեպի մահ է գնում:

Այս կապակցությամբ եղած անգամ չնչին կասկածները վերջնականապես ի դերև ելան, երբ Էրզրումից ու Երզնկայից մի քանի հազար գաղթականների քարավան հայտնվեց: Նրանց առաջին խմբերը հասան իմ վերջին գեկուցագլորը պատրաստելուց մի երկու օր անց: Ես մի քանի անգամ այցելել եմ նրանց ճամբարները, շատերի հետ զրուցել: Ավելի սահմոկեցուցիչ տեսարան անհնար է պատկերացնել: Նրանք բոլորը, գրեթե առանց բացառության, ցնցոտիներով են, կեղտոտ, քաղցած ու հիվանդ: Գ-ա զարմանալի չէ, քանի որ երկու ամսից ավելի ճանապարհին են եղել, հագուստ չեն փոխել, լվացվելու հնարավորություն, գլխներին տանիք չեն ունեցել, շատ քիչ են ուտելիք գտել:

Այստեղ կառավարությունը չնչին քանակությամբ սնունդ բաժանեց: Մի անգամ, երբ ուտելիքը բաշխում էին, ես ներկա էի: Գաղթականները հարձակվում էին բերողների վրա, իսկ վերջիններս նրանց մահակներով քշում էին, երբեմն դիտմամբ շատ ուժեղ խփում, որ սպանեն: Դժվարությամբ կարելի է հավատալ, որ նրանք մարդկային էակներ են: Հենց գաղթակայանի մոտով անցնում ես, կանայք

մեկնում են իրենց զավակներին, խնդրում վերցնել: Իյոքք, թուրքերն արդեն այդ տղաներից ու աղջիկներից շատերին ընտրել են, որպես-  
զի ստրկացնեն կամ շատ ավելի վատ նպատակների ծառայեցնեն: Նրանք նույնիսկ բժիշկներ են բերել, որ քննեն ամենաուշագրավ աղ-  
ջիկներին ու առավել գեղեցիկներին տանեն: Տղամարդ շատ քիչ է մնացել. մեծ մասին ճանապարհին սպանել են: Բոլորը նույնն են պատմում՝ իրենց վրա հարձակվել, թալանել են քրդերը: Շատերը մի քանի անգամ են գրոհի ենթարկվել, մեծ մասը հատկապես տղա-  
մարդիկ, կոտորվել են:

Ինչ խոսք. կանանց ու երեխաներին էլ չեն խնայել: Քիչ չեն նաև այնպիսիները, ովքեր հիվանդություններից, հյուծախտից են մահացել՝ այստեղ հասնելուց ի վեր էլ ամեն օր մարդ է մեռնում: Արդեն բազմաթիվ քարավաններ են իրար հետևից եկել ու մեկ-երկու օր մնալուց հետո քչվել անհայտ ուղղությամբ: Իհարկե բնօրրաննե-  
րից հանվածների փոքր մասն է միայն հասել այստեղ, այնպես որ եթե այսուհետև էլ նույն ձևով շարունակեն հալածել ճանապարհնե-  
րին, հնարավոր է, որ համեմատաբար կարճ ժամանակում ոչ ոք կենդանի չմնա: Նրանց մեջ, ում հետ ինձ հաջողվեց գրուցել, երեք քույրեր կային: Երեքն էլ սովորել էին Կոստանդնուպոլսում, հիանալի անգլերեն գիտեին: Ասացին, որ իրենց ընտանիքը ամենահարուստն է եղել Էրզրումում, ճամփա են ընկել քսանհինգ հոգի, բայց տաս-  
նչորսն են մնացել: Մյուս տասնմեկին, որոնց թվում գրուցակիցներից-  
ցըս մեկի ամուսնուն ու գերդաստանի ծեր տատին քրդերը սպանել են նրանց աչքի առաջ: Ընտանիքի արական սեռի ամենամեծ վեր-  
ապրողը, այսպիսով, հազիվ ութ տարեկան էր: Էրզրումից ելնելիս նրանք փող, ձի, անձնական իրեր են ունեցել, բայց այդ ամենը, ինչպես նաև հազուստները, թալանել էին: Գաղթականների մի մասը մերկ, մյուսը միայն շապիկով էր մնացել: Երբ ինչ որ գյուղ էին հասել, ուղեկցող զինվոր-նստիկանները տեղի բնակչուհիներից նրանց համար ցնցոտիներ էին ձեռք բերել: Մյուս աղջիկը, ում հետ խոսեցի, Էրզրումի ավետարանչական պատվելիի դուստրն էր: Նրանց ամ-  
բողջ ընտանիքը կոտորվել էր, փրկվել էր միայն ինքը: Մրանք, սրանց պես մի քանիսը տարագրված վերնախավի եզակի վերապրողներն են: Նրանց տեղավորել են Խարբերդի ծայրամասում գտնվող մի լքված դպրոցում, ուր ոչ ոք իրավունք չունի այցելել:

Չրուցակիցներս ասացին, որ իրենք, փաստորեն բանտում են, չնայած կարող են օգտվել դպրոցի շենքից ոչ հեռու գտնվող աղբյու-  
րից: Հենց այդտեղ էլ ես կարողացա հանդիպել նրանց: Մյուս տարա-  
գիրները ընդարձակ դաշտում էին բաց երկնքի տակ, ոչնչով

պաշտպանված չէին կիզիչ արևից: Այսպիսի վիճակը որոշակիորեն պարզում է, թե ինչ է սպասում նրանց, ովքեր արդեն մեկնել են Խարբերդից կամ առաջիկայում մեկնելու են: Ինձ թվում է տարագլորներից դեռ ոչ մի լուր չի եկել, հավանաբար չի էլ գա: Անխափան գործող համակարգի համաձայն, քրդական ոճրախմբերը թաքնվում են ճանապարհին ու սպասում նրանց, որպեսզի բնաջնջեն հատկապես տղամարդկանց, ի միջի այլոց նաև կանանց, երեխաների մի մասին: Սա թվում է ամենայն մանրամասնությամբ նախապատրաստված, ամենաարդյունավետ սպանոն է, որը երբևէ տեղի է ունեցել այս երկրում: Տարագրվող քարավաններում շատ քիչ տղամարդ է մնացել, նրանցից ազատվելու ավելի վստահելի, արագ գործադրվող միջոցներ են կիրառվել:

Վերջին շաբաթների ընթացքում հազարավոր տղամարդկանց ձերբակալեցին: Նրանց նետում էին բանտերն ու հենց հարյուր հոգու հավաքում էին, գիշերը հանում էին դուրս: Առաջին քարավանը ճամփա ընկավ հունիսի 23-ի գիշերը: Բռնագաղթյունների թվում էին ամերիկյան բոլեջի մի քանի դասախոսներ, ուրիշ ազդեցիկ հայեր, Խարբերդի հայկական եկեղեցու եպիսկոպոսը: Շշուկներ են պտտվում, որ բոլորին սրախողող են արել, ու շատ քիչ հավանականությամբ կա, որ այդպես չլինի: Նույն ձևով տարան հայ զինվորներին: Նրանց նախ հավաքեցին, բանտարկեցին քաղաքի արվարձանում գտնվող մի շենքում: Ոչ մի տարբերություն չորեցին ծառայությունից ազատվելու համար սուրբ չմուծածների ու մուծածների միջև: Վերջիններս փողը վերցնում էին, մյուսների հետ ձերբակալում, ճամփա հանում: Ասում էին, թե տանելու են ճանապարհներին աշխատացնելու, բայց դա բացահայտ էր, որովհետև մինչև այժմ ոչ մեկին լուր չի եկել: Հուլիսի 7-ին, չորեքշաբթի օրը, վստահելի սղոյուններից վերջնականապես հայտնի դարձավ նաև մնացածի ճակատագիրը, քանի որ նույն փորձությանն են ենթարկվել: Խարդերդում, Մեզիրևում մեծ թվով տղամարդկանց ձերբակալել էին, քանո նետել: Երեքշաբթի, առավոտ վաղ հասել էին, ստիպել քայլել դեպի անմարդաբնակ լեռները: Բոլորը միասին եղել էին մոտ ութ հարյուր հոգի, որոնց տասնչորս հոգիանոց խմբերով կապկպել էին իրար: Կեսօրից հետո նրանք հասել էին մի փոքրիկ քրդական գյուղ, գիշերը փակված մնացել մզկիթում, հարևան շինություններում: Այս ամբողջ ժամանակ նրանց ոչ ուտելիք էին տվել, ոչ ջուր, բոլորի ամբողջ գումարը, հագուստների մեծ մասը խելել էին: Չորեքշաբթի հայ տղամարդկանց հասցրել էին քաղաքից մի քանի ժամ հեռու գտնվող հովիտն ու ստիպել նստել: Հետո զինվոր-ստախկանները կրակել էին անբան, մինչև համարյա

քոլորին կոտորել էին: Նրանց, ում փամփուշտը չէր սպանել, ոչնչացրել էին դանակի կամ սվինի հարվածներով: Ումանք, այնուամենայնիվ, կարողացել էին կտրել իրենց՝ ընկերներին կապող թուղերն ու փախչել. բայց շատերը հենց փախուստի ժամանակ էին հրացանագարկ եղել: Հազիվ մի քանի՝ քստ երևույթին երկու-երեք հոգու էր հաջողվել սպանոյից ճողուպրել: Չոհերի թվում են ամերիկյան քոլեջի գանձապահը, ուրիշ շատ հարգելի անձնավորություններ: Նրանցից ոչ մեկին, ոչ մի մեղադրանք չէր ներկայացվել: Այդ տղամարդկանց ձերբակալել ու ոչնչացրել էին ամբողջ հայ ազգը բնաջինջ անելու ընդհանուր ծրագրի իրագործման շրջանակներում:

Երեկ երեկոյան հարյուրավորների, որոնց թվում քաղաքացիական ու ռազմական իշխանությունների ձերբակալվածներին, տարան այլ ուղղությամբ, բայց նույն ճակատագրին արժանացրին: Ասում են նախճիրն իրագործվել է այստեղից ընդամենը երկու ժամ հեռու գտնվող մի վայրում: Երբևէ, հենց իրադրությունը փոքր ինչ խաղաղվի, անձամբ ձիով կզնամ, որպեսզի իմ աչքով տեսնեմ, հանողվեմ:

Մի քանի շաբաթ առաջ Իչմե ու Հապուսի գյուղերից, որոնք այստեղից չորսից հինգ ժամ են հեռու, երեք հարյուր տղամարդու հավաքել էին, տարել լեռները, մորթել: Դա ոչ մի կասկած չի հարուցում, այդ գյուղերից բազմաթիվ կանայք են եկել քաղաք, նույնը պատմել: Այլ բնակավայրերից էլ են պարբերաբար նման հաշվեհարդարի լուրեր հասնում: Թվում է գոյություն ունի բոլոր տղամարդկանցից ազատվելու խիստ որոշակի ծրագիր, չնայած տեղահանության հրամանը ստացվելուն պես, բազմաթիվ ընտանիքների մի քանի օր շարունակ տարագրելուց հետո, երբ, հայտարարեցին, որ այն կանայք ու երեխաները, ովքեր առանց տղամարդու են մնացել առայժմ կարող են ապրել իրենց բնակավայրերում, ակամա հույս ծագեց, որ վատթարը ետևում է մնացել: Ամերիկյան միսիոներները սկսեցին անմիջապես քայլեր ձեռնարկել, որպեսզի առանց գոյության միջոցների օգնեն մնացած կանանց ու երեխաներին: Մտածեցին, որ հնարավոր է նույնիսկ որբանոց բացել, պատասպարել որոշ քանակությամբ երեխաների, հատկապես նրանց, ովքեր ծնվել էին Ամերիկայում, ծնողներն էին Խարբելոյ բերել, կամ որևէ առնչություն էին ունեցել մեր առաքելության դպրոցների հետ: Չնայած միջոցների հավանական անբավարարությանը, հնարավոր կլինե՞ր պատասպարել նաև այն դեռահասներին, որոնք այստեղ էին հասել տարբեր վիճակներից, որոնց ծնողները մահացել էին արքայի ճանապարհին:

Երեկ ես այցելեցի վալիին՝ այս ամենի շուրջը պայմանավորվելու համար ու վճռական մերժում ստացա: Նա ասաց, որ եթե ուզում ենք, այդ երեխաներին կարող ենք օժանդակել, բայց որքանոցներ նրանց համար կառավարությունն է բացել, մենք իրավունք չունենք նման քայլեր ձեռնարկել: Նահանգապետին հրաժեշտ տալուց մի ժամ անց հայտնի դարձավ, որ Խարբերոյում մնացած բոլոր հայերը, որոնց թվում են կանայք, երեխաները հուլիսի 13-ին պիտի տարագրվեն:

Բացահայտ է, որ կառավարությունը որոշել է ամեն կերպ թույլ չտալ, որ այստեղ մնացած արտասահմանյան միսիոներները կրթական կամ կրոնական գործունեություն ծավալեն: Որոշ հայուհիների ամուսնացնում են մահմեդականների հետ, որոշ հայ երեխաների էլ մահմեդականացնում են, բայց ոչ ոքի թույլ չեն տալիս ուրիշ, օտար ազդեցությունների ենթարկվել: Երկիրը պետք է զուտ մահմեդական լինի, ոչ մի այլ հեռանկարի մասին չի կարող խոսք լինել: Մեր միսիոներներից ոմանք նույնիսկ ուզում են մնալ ու մահմեդականների հետ աշխատելու փորձ անել: Ես դա ոչ միայն վստանգավոր եմ համարում, այլևս չեմ կարծում, որ թույլ կտրվի այդ ուղղությամբ որևէ քայլ կատարել: Ամենևին չեմ զարմանա, ինչպես արդեն կասկած եմ հայտնել, եթե առաջիկայում ամերիկյան միսիոներները երկրից հեռանալու հրաման ստանան: Մինչև անգամ դա ուղղակի էլ տեղի չունենա, նրանց բոլոր նախաձեռնությունները այնպիսի հետևողականությամբ կմերժվեն, որ այստեղ մնալը բացարձակապես անհիմաստ կդառնա: Ավելին, տեղական իշխանություններն ամեն կերպ մեր միսիոներներին անհանգստություն կպատճառեն: Ես լիովին վստահ եմ, որ նրանց չեն թողնի վերաբացեն դպրոցները, հավանաբար հիվանդանոցն էլ վրակեն: Շատ հնարավոր է նաև, որ դպրոցների և հիվանդանոցի շենքերը կառավարությունը բռնագրավի: Ակնհայտ է, որ միսիոներներն այստեղ ոչ մի անելիք չեն ունենա, որևէ նոր նախաձեռնության թույլտվություն չեն ստանա:

Այս պայմաններում, կարծում եմ, միակ խելամիտ վստահելի միջոցը, իհարկե հենց որ հնարավոր լինի, նրանց մեկնումը կազմակերպելն է: Ես հասկանում եմ անշուշտ, որ միսիոներների համար չափազանց դժվար է իրենց գործունեությունից հրաժարվելը, բայց չպետք է մոռանալ, որ ներկա իրավիճակն էլ է չափազանց լուրջ, նման իրադրությունում նրանց այստեղ բացարձակապես ոչինչ չի մնում անելու: Իհարկե, բոլորի միասին մեկնելը թերևս լավագույն տարբերակը չէ, բայց ես գոնե մի քանիսին, հենց որ անվտանգությունն ապահովված լինի, խորհուրդ կտամ ճամփա ընկնել:

Միաժամանակ համառորեն պնդում են, որ դեսպանատունը միսսոր Փիթի և վարչության ուշադրությունը հրավիրի բոլոր միսիոներների այս երկրից մեկնելու անհրաժեշտության վրա:

Անշուշտ, ես չեմ կարծում, որ որևէ մեկը իսկույն նեթ պետք է հեռանա: Մինչդեռ միսիոներներից ոմանք համոզված են, որ իրենցից գոնե ոմանք անմիջապես պիտի ճամփա ընկնեն, որպեսզի այդ դժբախտների համար միջոցներ հայթայթեն: Սակայն, քանի որ բոլոր ճանապարհներին էլ քրդական ոճրախմբերը դարան մտած ուղևորների են սպասում, դա կնշանակի դեպի ստույգ մահը գնալ: Ահա թե ինչու, երբ ես նահանգապետին հարցրի, թե արդյո՞ք մեկ կամ երկու աներիկացի կարող են հենց հիմա Կոստանդնուպոլիս, իսկ այնտեղից Միացյալ Նահանգներ ուղևորվել, նա առանց թաքցնելու պատասխանեց, որ դա խելամիտ չէր լինի: Ըստ վալիի, ինքք քանի պահապան էլ հատկացնի, այժմ ճանապարհորդելու անվտանգությունը դժվար է ապահովել, այնպես որ խորհուրդ տվեց մի քանի շաբաթ սպասել: Դա հիմնավորում է մեր բնդիահանուր մտահոգությունը նրանց ճակատագրի նկատմամբ. ում ճամփա են հանել այստեղից: Միաժամանակ թերևս նաև այն, որ իշխանությունները չեն ցանկանում աներիկացիների կյանքը վտանգել: Բացի դրանից կուսակալը հարցրեց, որ ամերիկացիներին երկի թույլ շտան էլ մեկնել:

Ոմանց թվում է, թե մենք չափազանց շատ բան գիտենք այն ամենի մասին, ինչ այժմ տեղի են ունենում Թուրքիայի խորքերում, ուստի իշխանությունները ամերիկացիներին ողջ-առողջ դուրս չեն թողնի, որպեսզի իրենց վկայությունները չտարածվեն: Ես իհարկե այդպես չեմ կարծում, բայց գտնում եմ, որ մերոնցից յուրաքանչյուրի կյանքն այստեղ վտանգված է, և այդ վտանգը հետզհետե մեծանում է: Ուստի, եթե միսիոներները բարեհաջող մեկնեն, ես հոգեպես ինձ թեթևացած կզգամ: Ոչ միայն այն պատճառով, որ իրավիճակը չափազանց լարված է: Միսիոներները պարբերաբար այնպիսի քայլեր են ձեռնարկում, որոնք ավել կամ պակաս չափով անխոհեմ են, այնպես որ մի հոգու անհեռատեսությունից կարող է տուժել մեր ամբողջ համայնքը: Բնական է, նրանք համակրում են այն մարդկանց, որոնց միջավայրում աշխատել են, ձգտում են ստտարել, հովանավորել, բայց չափից ավելի բացահայտ արտահայտելով նման գգացումները, իրենք իրենց վտանգում, իրենք իրենց համար լրացուցիչ դժվարություններ են ստեղծում:

Ինչ վերաբերում է տարագրվածների համար օգնության հիմնադրամ ստեղծելու անհրաժեշտությանը, ինչի մասին հիշատակել էի իմ հունիսի 27-ի և 28-ի հեռագրերում, հունիսի 30-ի ձեպագրում,

հակված են կարծելու, որ մնան գումարներ գտնելու անհրաժեշտություն չի ծագի: Թվում է, շատ շտապ օգնության կարիք ունեցող չի մնա: Բոլոր նրանք, ովքեր տեղահանված են, ամենայն հավականությամբ նախճիրի կենթարկվեն, կամ առաջիկա մի քանի ամսում արտորի ճանապարհին կմահանան, իսկ ողջ մնացած կանանց ու երեխաներին անկասկած կմահմեղականացնեն:

Իմ ուշադրությունը գրավեց նաև այն հանգամանքը, որ Մամուրեթ-ուլ-Ազիզի փոստատունը հրաժարվեց ամերիկացիներին վճարել այն գումարը, որն իրենց անունով էր գրումից ու Երզնկայից ուղարկել էին այդ քաղաքներից հասած գաղթականների համար: Ամենայն հավանականությամբ կառավարությունը բռնագանձի դրամները: Չգիտեմ, մեր դեսպանատունը կկարողանա՞ միջնորդել: Գումարները տեղ են հասել ամերիկացիների հասցեով, բայց նախատեսված են հայ տարագիրների համար:

Դեսպանատան թիվ 19 և 20 հեռագրերը ստացված են: Ես հանդիպեցի վալիի հետ ամերիկահպատակ քաղաքացիների, նրանց զավակների, ինչպես նաև հյուպատոսարանի անձնակազմի վերաբերյալ պայմանավորվածություն կայացնելու համար: Ինչպես հեռագրել են այս առավոտ, նա ասաց, որ այդ կապակցությամբ ոչ մի հրահանգ չի ստացել: Քիչ առաջ տեղեկացրին, որ հյուպատոսարանի աշխատակազմը, ինչպես նաև երկու-երեք կին, որոնց անուսիմները Ամերիկայում են, առայժմ կարող են մնալ: Թվում է այդ հարցում մինչև հիմա հստակություն չկա: Ես շատ ուրախ կլինեի, եթե մնան կանայք, հենց որ ճանապարհներն անվտանգ դառնային, Նահանգներ մեկնեին:

Կարծում եմ կարելի է հասնել նաև այն քանին, որ գոնե այնքան ժամանակ, որքան որ հյուպատոսարանը գործելու է, աշխատակիցները մնան այստեղ: Այլապես անհնարին կլինի այնպիսի մեկին գտնել, որը կարողանա կատարել նրանց պարտականությունները:

Պատիվ ունեմ, պարոն, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

ԼԵՍԼԻ Ա. ԴԵՎԻՍ

(ստորագրություն)

Հյուպատոս

Աղբյուր՝ Լեսլի Ա. Դևիսը Խարբերդից Հենրի Մորգենթաուին, ամերիկյան դեսպանատուն, Կոստանդնուպոլիս, 11-ր հուլիսի, 1915թ. Մորգենթաուն օգոստոսի 10-ի թղթատարով ուղարկել է պետքարտուղսին Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., տասնորդական թղթապանակ, թիվ 867. 4016/122.

Մեծարգո Հենրի Մորգենթաուին  
Ամերիկյան դեսպանին  
Կոստանդնուպոլիս

Պարոն,

Պատիվ ունեմ իմ հունիսի 30-ի և հուլիսի 11-ի հաղորդագրերին (թղթապանակ թիվ 840.1). որոնք վերաբերում են այս տարածաշրջանից հայերի արտաքսմանը, ավելի ճիշտ համընդհանուր սպանողին, հետևյալ լրացումները կատարել:

Յանկացած կասկած. որ իմ նախորդ տեղեկատվություններում թերևս տեղ էր գտել կառավարության հայերին բռնագաղթեցնելու բուն նպատակների վերաբերյալ, վերացավ, այտահայտված հույսը, որ տարագրվողների մի մասը գոնե կփրկվի, չքացավ: Այլև գաղտնիք չէ՝ հատուկ ծրագրով նախատեսված է բնաջինջ անել հայերին, որպես ցեղ, ազգ, ուղղակի նման նպատակը այնպիսի սառնասրտությամբ ու բարբարոսությամբ, ավելին արդյունավետությամբ էր իրագործվում, որ սկզբում գլխի էլ չէինք բնկնում, թե ինչ է կատարվում: Այնհայտ է. որ տարվա այս եղանակին Խարբերողից թշվածներին չնչին մասը կհասնի Ուրֆա կամ որևէ այլ բնակավայր: Իրոք, անիմաստ է նման ճանապարհորդության դժվարություններին անդրադառնալը: Լիովին հաստատվել է, որ մինչև այժմ այստեղից բռնագաղթածները քաղաքից դուրս գալուց բնդամենը մեկ-երկու օր անց մորթվել են, որևէ այլ ձևով սպանվել, ընդ որում դա արել են ոչ միայն ճանապարհին նրանց սպասող քուրդ հրոսակախմբերը, այլ հիմնականում քստորականներին ուղեկցող զինվոր-նուստիկաններն ու չեթեները (կալանավորները), որոնց բանտերից ազատ են արձակել տարագրվող հայերին կոտորելու համար:

Բազմաթիվ անգամ ահազանգեր ստացա, որոնց հավաստիությունն իմ կարծիքով կասկած չի հարուցում, որ տեղահանված ոչ մի տղամարդ չի փրկվել: Միաժամանակ, կանխամտածված, սպանել են բազմաթիվ կանանց ու երեխաների: Առավել գեղեցիկ կանանց մի մասին փախցրել են, որպեսզի գարդարեն քուրդ բեկերի կամ հենց իրենց՝ զինվոր-նուստիկանների հարեմները: Որոշ պառավների ու ինչ-ինչ երեխաների էլ զինվոր-նուստիկանների ուղեկցությամբ թույլ են տվել շարունակել ճանապարհը՝ վատահ, որ շատ շուտով քաղցից, հիվանդությունից, ուժասպառությունից ցած են բնկնելու:

Ես չեմ կարծում, որ համաշխարհային պատմության մեջ երբևէ իրագործվել է ավելի համընդհանուր ու արժատական նախաճիր, քան այն, ինչ այժմ տեղի է ունենում մեր տարածաշրջանում և ոչ էլ հավատում եմ, որ մարդկային ուղեղն ի գորու է հղանալ ավելի ահավոր ու սադայելական ծրագիր: Այն հանգամանքը, որ պաշտոնական հրամանը միմիայն հայերին այս վիլայեթներից տեղափոխելու մասին է, արտաքին աշխարհի սոսկ որոշ ժամանակ կարող է թյուրիմացության մեջ գցել, իրականում, այն, ինչ իրագործվում է, ամենադաժան սպանդն է:

Տեղի ունեցածը այդպես կկոչվեր նույնիսկ այն դեպքում, եթե թողնեին, որ բոլորն էլ ճանապարհին մեռնեն: Բայց քանի որ մեծ մասն ուղղակի է նախաճիրի ենթարկվել, ոչ մի կասկած չի կարող լինել, որ կառավարության հրամանն է կատարվել: Նշանակում է՝ անհնար է տպավորություն ստեղծել, թե իբր պատահածը համագային եղեռն չէ:

Մինչև այժմ Մամուրեթ-ու-Ազիզից տեղահանվել է 12000-ից 15000 հայ: Մնացել է հազիվ 1000-ից 1500 հոգի, որոնք կամ թույլտվություն են ձեռք բերել կամ կաշառք տվել, կամ էլ թաքնվել են: Հարևան գյուղերից նույնպես հազարավոր հայեր են քշվել:

Անհավանական չէ, որ տարածաշրջանի ազգաբնակչության մեկ-երրորդն արդեն արտաքսվել է: Ներկա իրավիճակի ամենաակնբախ առանձնահատկությունը հայերի անօգնականությունն ու դիմադրության իսպառ բացակայությունն է: Բացի երկու-երեք անցնան բացառությունից, նրանց կողմից ոչ մի դիմադրություն չի եղել: Ինձ ասացին, որ գյուղերում սպանել են մի քանի ոստիկանի, որոնց ընդհանուր թիվը ամենայն հավանականությամբ վեցից չի անցնի: Մինչդեռ թվում էր նման հրամանը առանց այս կամ այն չափով բռնություն գործադրելու անհնար կլիներ իրականացնել: Կարելի էր կարծել նույնիսկ, որ ոմանք կնախընտրեն այստեղ մեռնել՝ իմանալով, թե ինչ է սպասում իրենց տարագրվելուց մի քանի ժամ անց, մանավանդ որ մեծ մասն իրար ասում էր այդ մասին: Սակայն, երբ ժամանակը եկավ, բոլորը առանց թեկուզ չնչին դիմադրության, տարագրվեցին: Ինչ խոսք, դա մասամբ պայմանավորված է հայկական ցեղի վեհերոտությամբ, բայց նաև ամենատարբեր միջոցների ճարպիկ գործադրումով, որով ծրագիրն իրագործվեց:

Անկասկած ամեն ինչ նախապատրաստվում էր ամիսներ առաջ: Նախ կալանավորեցին մի քանի հոգու, որոնց մեղադրեցին հեղափոխական դավադրություն հրահրելու համար, հետո որոշ քանակությամբ ռումբ գտան, ձերբակալությունները շարունակեցին:

Բանտարկյալներին այնպիսի ահավոր կտտանքների էին ենթարկել, մինչև կեղծ խոստովանություններ էին կորզել, նույնիսկ ստիպել էին գրաչարտել բոլորովին անմեղ մարդկանց:

Հրաման էր ստացվել ամեն տեսակի ամբողջ զենքը կառավարությանը հանձնել: Մարդկանց տանջել էին այնքան. մինչև ընդունել էին, որ քաբցյուս իրացան, ատրճանակ, այլ տեսակի իրագեն ունեն, երբ իրականում ոչինչ չէին ունեցել: Հայերը, գլուխներն ազատելու համար, անգամ առասպելական զներով թուրքերից զենք էին գնում, տալիս ոստիկանությանը: Այդ ժամանակ հուսադրող խոստումներ էլ էին հնչում, որ եթե բոլորը զենքերը հանձնեն, հետապրնդումները կվերանան: Մինչդեռ զինվոր-ոստիկանները շրջապատեցին գյուղերն ու քաղաքները. գրեթե բոլոր տղամարդկանց ձերբակալեցին: Հետո նրանց պարբերաբար ծեծում ու տանջում էին, չնայած, հիմնականում, ոչ մի մեղադրանք չէին կարողանում ներկայացնել: Այդպես ոստիկանությունը կարողացավ մեծ թվով իրացան ու մի քանի ռումբ հավաքել: Ըստ երևույթին ոչ ոք, երբեք էլ չի իմանա, թե այդ ռումբերից քանիսն էին իրենք՝ ոստիկանները թաքուն դրել, քանի-քանիսն էին բոլորովին անմեղ մարդիկ հայհայթել, որ հանձնեն կառավարությանը: Հաստատ է միայն, որ մեծ թվով հայեր, որոնց ձերբակալեցին զենք ունենալու համար, ոչ մի հեղափոխական դավադրության էլ չէին մասնակցել, չնայած շատ-շատերին առանց զենք ունենալու պատրվակի էլ էին խոշտանգումների ենթարկում: Միաժամանակ ձերբակալեցին բոլոր հեղինակավոր հայերին: Իշխանությունները համառորեն պնդում էին, որ նրանք, ովքեր բանտարկված են, եղել են հակակառավարական խռովություն նախապատրաստող խմբերում, նրանցից ոչ մեկը անհիմն կալանավորված չէ: Իհարկե ամեն ինչ գաղտնի էր կատարվում. կողմնակի անձը չէր կարող ճշտել նման հայտարարությունների հավաստիությունը առավել ևս կեղծիքը բացահայտել, իր վկայությունները ներկայացնել, չնայած հետագա իրադարձություններից դատելով, հավատալու համար պետք էր շատ վառ երևակայություն ունենալ: Այդպիսով հարյուրավոր հարգարժան անձանց բանտ նետեցին, հետո քաղաքից հանեցին և ոչ մի կասկած չի կարող լինել, որ մի քանի ժամ հեռավորության վրա բոլորին սպանեցին: Հավաքեցին և ճամապարհ կառուցելու պատրվակով տարան մահ հազարավոր հայ զինվորների: Որքան ես տեղյակ եմ, մինչև հիմա նրանց մասին ոչինչ հայտնի չէ, որոշակի է միայն, որ շատերին արդեն կոտորել են: Անտարակույս, մնացածն էլ են նույն ճակատագրին արժանացել:

Ի վերջո, երբ բոլոր տղամարդկանց գործնականում վերացրել էին, զենքերը ոստիկանությունը կամ ստացել կամ հայտնաբերել էր, հայտարարեցին, որ մնացած հայերը պիտի տարագրվեն: Բնական է, բռնագաղթի հրամանին քիչ թե շատ լուրջ դիմադրություն ցույց տալու մասին այլևս խոսք չէր կարող լինել: Այդ ամենը այնքան խորամանկ էր ծրագրված, որ ոստիկաններն ու զինվոր-ոստիկաններն իրագործման անցան առանց իրենց թեկուզ չնչին վտանգի ենթարկելու: Այսպիսով մի քանի հազար ծառայողներ կարողացան մեր տարածաշրջանից 15000-ից 20000 հայի արտաքսել: Անհնար է ասել, թե քանի հայ է սպանվել, բայց ենթադրվում է, որ ընդհանուր թիվը հասնում է մեկ միլիոնի:

Տեղի հայ կաթոլիկական եկեղեցու եպիսկոպոս թե արքեպիսկոպոս գերապայծառ Իսրայելյանի վախճանը վկայում է, թե ինչ ճակատագիր է սպասում բռնագաղթող հայերին: Նրա մեկնումը, ճանապարհների վտանգավորության պատճառով, մեկ-երկու շաբաթ հետաձգվեց: Ի վերջո, տասը օր առաջ վալին, որը՞քվում էր խիստ բարյացակամ էր վերաբերվում նրան, կյանքի սպառնալույթի արտոնագիր տվեց: Գերապայծառը ճամփա ընկավ նման արտոնագիր ունեցող քառասուն այլ անձանց հետ: Տարագրվածներից ոչ ոք, երբեք կասկածի ենթակա չէր եղել, բոլորը հավատում էին, որ իշխանությունները հսկված են նրանց անվտանգ տեղ հասցնել: Ուղևորների սպառնալույթյան համար նույնիսկ զինվոր-ոստիկանների հատուկ խումբ հասկացրին, արտաքուստ անվորձանք ճանապարհորդելու ամեն միջոց ձեռնարկեցին: Մինչև իսկ կառքեր տրամադրեցին: Քառասուն հոգին, ուրեմն հուլիսի 14-ի երեկոյան դուրս եկան քաղաքից: Հաջորդ օրը նրանք Քյազիմ խան էին հասել, որն այստեղից ութ-ինը ժամվա ճամփա է: Այնտեղ նրանց դիմավորել էին բազմաթիվ զինվոր-ոստիկաններ, ասել, որ չեն կարող նույն ճանապարհը շարունակել, ճիշտ կլինի, եթե ուրիշ կողմով գնան:

Կառքերը շրջվել էին, մոտ կես ժամ սլացել մատնանշված ուղղությամբ, որտեղ և նրանց շրջապատել էին: Չինվոր-ոստիկանները բոլորի թեերը կապել, ճանապարհից հանել էին դուրս: Ուղևորներից շատերի ձեռքին աղոթագիրք է լինում, նրանք ծնկի են գալիս, որ աղոթեն: Մակայն զինվոր-ոստիկանները հայիոյելով ոտքով հարվածում, ձեռքներից զցում են աղոթագրքերը, բացի երեք հոգուց, մնացածին տեղնուտեղը սպանում: Նահատակների թվում է Ֆրանսիայի քաղաքացի, մարմազել Մարգարիտ Գաման, ում մասին ես հիշատակել էի դեսպանատուն հղած իմ դեկտեմբերի 10-ի հեռագրում, դեկտեմբերի 31-ի ճեպագրում: Երեք վրկվածները դեռատի,

գեղեցիկ կանայք են լինում, նրանց ողջ են բողնում, որ մահմեդականների հետ ամուսնացնեն: Մեկը, սակայն կարողացել էր փախչել, նա է ինձ հաղորդել շարադրված տեղեկությունները: Նման մի ուրիշ վրկվածից էլ իմացել եմ այն 800 հոգու կոտորածի մանրամասները. որոնց հիշատակել էի իմ հուլիսի 11-ի զեկուցագրի 5-րդ էջում: Այժմ այդեն ասում են. որ այդ գոհերի ճշգրիտ թիվը 979-ի է հասնում:

Այս երկու իրողություններն էլ այնպիսի մանրամասնությամբ են բացահայտված, որ կասկածի տեղ չեն բողնում: 977-ը հոգու մասին բազմաթիվ վերապրողներ են պատմել, երկու դեպքի կապակցությամբ էլ կա իրենց՝ զինվոր-նստիկանների վկայությունը:

Այն օրը ինձ հաղորդեցին մի ուրիշ փաստ այստեղից տարագրվածների որոշ մասին ողջակիզել են Խարբերդի ու Դիարբեքի միջև գտնվող քարայրում: Մանրամասներն ինձ պատմեց մի զինվոր-նստիկան, որը եղել էր այնտեղ և ցույց էր տալիս, որ խիստ վրդովված է հայերի դեմ գործադրվող բարբարոսության համար:

Հայերին քաղաքից հեռացնելուց մի քանի ժամ անց զնդակահարելն ու կոտորելն իրոք բարբարոսություն է և շատ որոշակի վկայում է, որ կառավարության բուն նպատակը ոչ թե աքսորելը, այլ բնաջնջելն է: Չնայած անձամբ ես ընդհանուր առմամբ հակված եմ կարծելու, որ որքան նրանք շուտ մահանան. այնքան իրենց համար լավ կլինի: Դանդաղ բայց անխուսափելի վախճանը, որը վրա է հասնում շարաքների ու ամիսների տառապանքից հետո, ամենավատթարն է:

Երբ Էրզրումից ու Երզնկայից հասած քարավանները մեր մոտից ճամփա ընկան, մի քանի հարյուր հոգու. որոնք կամ շատ հիվանդ կամ շատ թույլ էին, թողեցին, որպեսզի շարունակեն իրենց տառապանքները, այստեղ մեռնեն: Ծամբարը, ուր գտնվում են նրանք, դժոխքի է նման: Ավելի անտանելի թշվառություն անհնար է պատկերացնել: Իհարկե առաջ էլ. երբ այնտեղ ողբալի վիճակում մի քանի հազար դժբախտ կար, տեսարանն ահավոր էր. բայց այժմ, քանի որ միայն անհուսալիներն են մնացել, ուղղակի աննկարագրելի է: Ամենուր մահացածներ ու մահացողներ են: Մի տեղ երկու-երեք երեխա լալիս են իրենց մեռած մոր դիակի վրա, քաշքշում հագուստը. չնայա նրա մազերը զգզված են, հայացքը սառած է: Ուրիշ փոքրիկներ մերկ կամ գրեթե մերկ են, ցնցոտիներով հողի վրա կծկված. արդեն մեռել են կամ հոգի են տալիս: Կան կանայք ու մանուկներ, որոնք այնքան հյուծված դեմքեր ունեն, որ կմախքի գանգի են նմանվում: Մի տղա, ում մարմինը շապիկի միայն մի ծվեն է ծածկում, իրոք կմախքից չի տարբերվում: Շատ երեխաներ էլ, ուռած փորե-

րով, պատկամ են արևի տակ: Տղամարդ քիչ է մնացել, հիմնականում կանայք, անչափահասներ են, բոլորն էլ թշվառության վերջին՝ ծայրաստիճանին հասած սպասում են, որ մտիը գա, ազատի իրենց: Ես ենթադրում եմ, որ գաղթականներին փոքր-ինչ սնունդ բերում են, բայց մեծ մասն այլևս ի վիճակի չէ ուտել: Օրեցօր դիակների թիվն ավելանում է և այսպես կշարունակվի այնքան, մինչև ոչ ոք կենդանի չի մնա: Դիակների կարելի է հանդիպել ամեն րուպե՝ այնքան երկար են արևի տակ բողմում, որ օդը նրանց ու ամենուր տարածված մարդկային աղտեղության հոտից ապականվում է: Ի վերջո զինվոր-ուսուխանները մեռելները խառնիխառն նետում են ճամբարի ճիշտ կենտրոնում փորված փոսը:

Դիակներ կան նաև ճանապարհներին, բոլոր կողմերում, ոչ միայն քաղաքից շատ հեռու, այլև շրջակայքում: Հարևան գյուղերից եկողները պատմում էին, որ հազիվ մի ժամ հեռու, կածանի երկայնքով տասը թե տասներկու դիակ է ընկյա՞ծ: Մի սղամարդ, որը կարողացել էր Սվլազից ողջ Խարբերդ հասնել, հավաստիացնում էր, որ ճանապարհին ավելի քան 500 դիակ է տեսել: Ամբողջ երկիրն այժմ մի ընդարձակ դիարան, ավելի ճիշտ սպանդանոց է դարձել:

Իհարկե նրանց ճակատագիրը, ում այդեն սպանել են, ովքեր արդեն մեռել են, ցավալի է, բայց բռնի տեղահանվածներինը, ցիրուցան եղածներինը ծանր է անհամեմատ: Որոշ կանանց հետ են բերել: Նրանց թվում է տասերեք տարեկան մի սիրունիկ աղջիկ, ում հայրը չափազանց հարգված անձնավորություն էր, քաղաքի ամենագեղեցիկ տներից մեկի սեփականատերը: Նրան սպանել էին հենց իր տան շենին: Դստերը բաժանել էին մորից, կրտսեր եղբայրներից, այնպես որ չգիտեն, թե ու՞ր են և ի՞նչ վիճակում: Այժմ այդ տարիքում նա ստիպված է ամուսնանալ մեր քաղաքի ամենաբռնի ենթասպանելից մեկի հետ, միասին ապրել հայրական տանը:

Ես արդեն այն ամենն, ինչ տեղի է ունենում այստեղ, գրավոր, ամենախիստ ձևակերպումներով նկարագրել եմ, որովհետև անհնար է լռել, այլ կերպ արտահայտվել: Եվ դա ամենևին էլ ոչ այն պատճառով, որ ուզում եմ հանդես գալ որպես հայ ցեղի պաշտպան: Դա այն ազգը չէ, որով կարելի լիներ հիանալ, որի հետ հնարավոր լիներ ապրել: Բայց ինչպիսի սխալներ էլ որ թույլ տված լինեն հայերը, որքան էլ համոզվիչ հնչեն որոշ մասի հեղափոխական դավադրության մասնակցելու փաստարկները, պատիժը նրանց նկատմամբ այնքան դաժան է, ողբերգությունն անհավոր, որ անհնար է այդ ամենը տեսնել. այդ ամենի միջավայրում լինել ու մինչև հոգու խորքը չազդվել: Նրբ հանդիպում ես յոթանասուն-ութուն տարեկան կույր, հիվանդ

ծերունիների ու պառավների, անպաշտպան, անմեղ կանանց ու երեխաների, որոնց բշուռ են կոտորելու, որևէ այլ կերպ մեռցնելու, և ավելի ուշ, իրոք, շուրջո՞ղ ամենուր դիակներ ես տեսնում, նրանք արդեն մեռած են լինում կամ մեռնում են, անհնար է դառնում նման պատժամիջոցներն արդարացնող թեկուզ չնչին պատրվակ գտնելը:

Ամեն դեպքում տեղական իշխանությունները կարծես թե այժմ փորձում են իրենց արածը չքմեղացնող միջոց փնտրել:

Հուլիսի 16-ին ինձ մոտ եկավ ոստիկանապետն ու խնդրեց դեսպանատուն գրել հարևան գյուղում մի բանի հայերի հրազենով երկու թե երեք զինվոր-ոստիկան սպանելու մասին: Ես նման ինչ որ բան, իհարկե, լսել էի. բայց մանրամասների տեղյակ չէի, անձամբ ոչ մի պատկերացում չունեի: Ոստիկանապետին պատասխանեցի, որ եթե ուզում է, սիրով մեր դեսպանատան ուշադրությունը կհրավիրեմ այդ դեպքի վրա, բայց դրա համար անհրաժեշտ է, որ ինքը գրի իսկ ես դեսպանատուն ուղարկեմ: Նա համաձայնվեց: Հունիսի 23-ին. նահանգապետին իմ պաշտոնական այցելությունը տալուց հետո, երեք հոգով որոշեցինք միանալ ու միջոցներ մտմտալ. թե հաևում մարդասիրության ի՞նչ կարելի է ձեռնարկել այդ արհավիրքին վերջ տալու համար: Խոսքը միստր Էհմանի (ավստրիացի միսիոներին) ու միստր Պիչիոտոյի (օսմանյան դրամատան տեղական մասնաճյուղի փոխտնօրենի) մասին է: Մենք որոշեցինք վալիին ոչ պաշտոնական այցելություն տալ և առանց ձևականությունների հարցնել. թե հնարավոր չէ՞ արդյոք խնայել տեղում մնացած հայերին:

Նա մեզ շատ ջերմ ընդունեց: Մենք բացատրեցինք մեր այցելության նպատակը, ցանկացանք իմանալ, թե կարո՞ղ է արդյոք Կոստանդնուպոլիս հեռագիր ուղարկել ու մինչև այժմ չտարագրված հայերին տեղում թողնելու հրաման ձեռք բերել: Միաժամանակ ավելացրինք, որ մենք էլ կուզեինք համատեղ հեռագիր հղել սմերիկյան, գերմանական ու ավստրիական դեսպանություններին, խնդրել, որ նրանք էլ ամեն միջրցի դիմեն, նման հրաման ձեռք բերելուն աջակցեն: Վալին անընդիստ ցավ էր հայտնում այն պայտադրված քայլերի համար, որոնց վերջերս ինքը ստիպված է եղել դիմել, ձևացրեց թե տպագրվողների տառապանքներն իրեն շատ են ճնշում: Թվաց նա անմիջապես հավանություն տվեց մեր ծրագրի իրագործմանը, ավելացրեց, որ եթե նման հրաման ստանա, իրեն շատ երջանիկ կզգա: Հետո պայման դրեց՝ հասկացրեց, որ լավ կլինի, եթե մեզմիջյուրաբանչյուրը նամակ գրի նահագապետարան, խնդրի շաքսորվածներին խնայել, որն իրեն՝ կենտրոնական իշխանություններին դիմելու հիմք կհանդիսանա: Վալին առանձնահատուկ շեշտեց ինքը

կուգեր, որ նամակները հնարավորին չափ հանգամանալի լինեին, որպեսզի պարզ դառնար, որ բոլոր ինչ-ինչ մեղք ունեցող հայերն արդեն տարահանված են տեղերում մնացածները անմեղ են: Ակնհայտ դարձավ, որ նորին մեծությունը ամեն կերպ ձգտում է մեզ գրել տալ, որ բոլոր արքայազմ հայերը մեղքեր են ունեցել: Նա հավաստիացրեց նույնիսկ, որ իր խնդրանքով ոստիկանապետը երեկոյան ինձ կայցելի, հանգամանորեն մանրամասները կբացատրի:

Մենք հավաքվեցինք հյուպատոսարանում և, ինչպես պայմանավորվել էինք, ոստիկանապետը եկավ: Նա ամենևին չէր ձգտում միտքը Էհմանի կամ միտքը Պիչիտոյի նամակներն ունենալ. բայց համառորեն պնդում էր, որ ես նահանգապետարան նամակ գրեմ, ուշադրություն հրավիրեմ հայերի՝ մի քանի ոստիկան սպանելու և այն հանգամանքի վրա, որ հեղափոխական խռովություն նախապատրաստելու համար մեղադրվող հայերը, նրանց ընտանիքները, ինչպես նաև բոլորը, ովքեր դավադրությանը այս կամ այն կերպ առնչություն ունեցել են, արդեն պատժվել են, իսկ Վարդերգում մնացածներն անմեղ կանայք, երեխաներ են: Հեռագրում պիտի հատուկ նշեի, որ հանցանք ունեցող հայերն ստացել են իրենց պատիժը, մնացել են միայն անմեղները, ուստի ցանկալի է, որ նրանց խղճան: Ես ոստիկանապետին պատասխանեցի, որ բացարձակապես անկարող եմ մեղավորների վերաբերյալ հայտարարություն անել, որ չի բացառվում նաև, որ անմեղները պատժված, մեղավորները անպատիժ մնացած լինեն, ու քանի որ հնարավորություն չունեմ նման ճշտումներ կատարել, նահանգապետարան գրելիք նամակիս մեջ ի վիճակի չեմ անդրադառնալ ոչ զինվոր-ոստիկանների դեմ գործադրված բռնությանը, ոչ էլ այս կամ այն անձնավորության անմեղությանը: Հատուկ շեշտեցի նաև, որ ի պաշտոնե իրավասու չեմ նման հարցով նահանգապետարան դիմել, կամ էլ հեռագիր ուղարկել, որ այդ ուղղությամբ ձեռնարկած իմ բոլոր քայլերը անպաշտոն բնույթ ունեն, դրոված են միմիայն մարդասիրությունից և ի վերջո ամենաշատը, որ կարող եմ անել, սովորական միջամտությունը պիտի լինի:

Նա իսկույն կեք ընդդիմացավ, ջանաց հասնել այն բանին, որ թեկուզ կարճ, որևէ հայտարարություն անեմ:

Ես երբեք նման համառ մարդու չէի հանդիպել: Նա մնաց մինչև գիշերվա մեկ անց կեսն ու ամեն կերպ փորձեց հասնել այն բանին, որ նահանգապետարան հայտարարություն ուղարկեմ: Ակնարկեց, որ հրաման է ստացվել հենց հաջորդ օրն հայերի հանդեպ ավելի դաժան միջոցների դիմել, բայց նա կարող է գործադրումը որոշ ժամանակով հետաձգել, եթե ես համապատասխան հայտարար-

րությամբ հանդես գամ: Պատասխանեցի, որ իհարկե, ուրախ կլինեի ասել այն, ինչ շնորհիվ, բայց նահանգապետարան հասցեագրված նամակում անհնարին է այնպիսի խնդիրների անդրադառնալ, որոնք իմ պաշտոնի հետ առնչություն չունեն կամ այնպիսի փաստեր հիշատակել, որոնց մասին ինձ ոչինչ հայտնի չէ: Ու քանի որ ոստիկանապետը միտք չուներ իր գաղափարից հրաժարվել, որոշեցինք գիշերը մտմտալ, առավոտյան վերսկսել գրույցը:

Հաջորդ առավոտյան ես տեղեկացրի ոստիկանապետին, որ քանի որ մեր դիմումը պիտի ներկայացվեր սահմանադրության տարելարձի կապակցությամբ, իսկ այդ օրն արդեն անցել է, ճիշտ կլինի գաղափարից հրաժարվելը: Բոլոր դեպքերում նա իմ պատասխանը վերջնական չհամարեց, հետկեսօրին արդեն ինքս մտքը գնացի: Բացատրեցի, որ ոչ մի դեպքում նահանգապետարան չեմ կարող գրել իր ցանկացած նամակը, բայց քանի որ խոստացել եմ, սիրով դեսպանատան ուշադրությունը կհրավիրեմ այն հարցերի վրա, որոնք ինքը գրավոր կներկայացնի: Նա պատասխանեց, որ ավելի կնախընտրեիր բանավոր, քան թե գրավոր արտահայտվել (շատ կգարմանայի, եթե երբևէ մտքերը գրավոր ձևակերպելու որոշում կայացներ). այնպես որ ամենայն հավանականությամբ շուտով կայցելի ինձ. կներկայացնի այն փաստերը, որ նշածս խնդրի կապակցությամբ կանցնեն մտքով: Ես անպատեհ չեմ համարում դեսպանատուն նման նամակ գրելը, այդ զեկուցագրում կշարադրեմ այն ամենը, ինչ ինձանից խնդրել են հաղորդել, և ոչ մի այնպիսի բանի պատասխանատվություն, ինչի անձնական համոզվածությունը չունեմ, չեմ ստանձնի: Ոստիկանապետն ըստ երևույթին կպնդի, որ ես իր փաստարկներն այնպես ներկայացնեմ, որ իբր անձամբ տեղյակ եմ: Դրան ես ոչ մի պայմանով. պարզ է, չեմ կարող համաձայնվել, չնայած վախենում եմ, որ նպատակին հասնելու համար չափից ավելի համառի:

Ելնելով իրավիճակից, հակված եմ կասկածելու, թե որքանով էր խելամիտ իմ այցելությունը վալիին: Նման քայլն իմ իրավասությունների մեջ չէի մտնում, այնպես որ կարող է հյուպատոսի տեղական իշխանությունների ներքին գործերին անհարկի միջամտելու միտում համարվել, չնայած դրությունն այն աստիճան ողբերգական էր. հենց սկզբից տեղի ամերիկացիներն ու հայերն իմ վրա այնպիսի ճնշում էին գործադրում տարագրվողներին ինչ որ ձևով օգնելու համար, որ անհնար էր անտարբեր մնալ. ընդառաջելու փորձ չանել: Սակայն քանի որ դեսպանատունը չպատասխանեց իմ թիվ 15 և թիվ 16՝ համապատասխանաբար հունիսի 27-ի և 28-ի հեռագրերին, դրոնցով խնդրել էի հնարավորն անել բռնագաղթի հրամանի հրա-

գործումը հետաձգելու համար, անդրադարձել էի տարագրվողներին աջակցելու հիմնադրամ ստեղծելու անհրաժեշտությանը, ենթադրում եմ, որ իմ առաջարկները հավանության չեն արժանացել:

Տեղյակ էլ չեմ, թե արդյո՞ք հեռագրերի բնօրինակները տեղ հասել են, բայց վավերացված պատճենները, որ ուղարկել եմ հունիսի 29-ին, պետք է, որ հասած լինեն:

Ես, անշուշտ, համոզված եմ, որ որևէ միջամտություն այստեղ կամ որևէ այլ բնակավայրում, ներկա պայմաններում և անհույս է և թե անիմաստ, բայց նման տառապանքը թեթևացնելու համար ինչ որ բան անելու անկարողությունը ծանր փորձություն է:

Այս կապակցությամբ շատ ուրախ կլինեի, եթե ստանայի այն հրահանգները կամ հանձնարարականները, որ դեսպանատունը կուզեր ինձ տալ, որոնցով կհստականար, թե ինչ քաղաքականություն պիտի որդեգրեմ: Ես հավանություն կտամ մաս այն բանին, եթե դեսպանատունը որոշի բացեփրաց քննադատել անցյալում իմ թույլ տված հավանական սխալները: Հաճախ չափազանց դժվար է որոշելը, թե ինչ պետք է անել այս կամ այն պարագայում, խորհուրդներ ստանալու կարիք ես շատ եմ զգում:

Ինչ վերաբերում է ամերիկյան քաղաքացիներին և հյուպատոսարանի աշխատակազմին առնչվող դեսպանատան թիվ 21՝ հունիսի 12-ի հեռագրին, կարծում եմ կասկած չի կարող լինել, որ տեղական իշխանությունները համապատասխան հրահանգներ արդեն ստացել են: Հնարավոր է, որ դրանք տեղ են հասել հուլիսի 10-ի իմ ու վալիի հանդիպումից հետո: Թվում է, թե հենց հաջորդ օրը կտրուկ փոփոխություն նկատվեց մեր քաղաքացիների նկատմամբ, նրանք, բոլորը, մնալու արտոնություն ստացան: Սակայն քանի որ շատ քչերը կանոնավոր փաստաթղթեր ունեն, մի մասն էլ, ճիշտ է, ունի, բայց որպես հպատակ չի կարող պաշտպանություն պահանջել, քանի որ Թուրքիա վերադառնալուց հետո ընդունել է, որ օսմանյան հպատակ է, թաքցրել է ամերիկյան քաղաքացի լինելը, հավանաբար համապատասխան քննությունը միայն կպարզի, որ ճշտող մասը, եթե ոչ բոլորը, փաստական իրավունքից զուրկ է: Եվ քանի որ, ես դա արդեն իմացել եմ, թուրքական կառավարությունը չի ընդունում իր քաղաքացիների հպատակությունից հրաժարվելը, հատկապես ներկա պայմաններում, ամենայն հավանականությամբ չափազանց դժվար կլինի համառ հետևողականությամբ նման բնույթի պահանջներ ներկայացնելը: Ամեն դեպքում ինձ հաջողվեցձի քանի հոգու փրկել, ուրախ եմ այդ քիչը գոնե անել կարողանալու համար: Անշուշտ, դա ամենևին հեշտ չէր, որվիտոս անզամ նրանցից շատերին, ում

իշխանությունները մնալու արտոնագրեր էին տվել, զինվոր-  
ուստիկանները արտաքսել էին, տները կնքել: Նրանք նույնիսկ նման  
փաստաթղթերը հաշվի չէին առել: Այդ ընտանիքներից շատերը  
հյուպատոսարան եկան, ժամանակավորապես ես նրանց ապաս-  
տան տվեցի: Հենց հնարավոր լինի, պիտի վորձեմ մոտակայքում  
բնակարան գտնել, որտեղ, մինչև անվտանգ երկրից մեկնելը, կկարո-  
ղանա ապրել:

Առայժմ ճանապարհորդելն անհնար է, որովհետև, չնայած  
կառավարության հավաստիացումներին, մահվան վտանգը գրեթե  
անխուսափելի է: Կաթոլիկ արքեպիսկոպոսի սպանությունը վկայում  
է, որ կյանքի ապահովության արտոնագրերը ոչ մի արժեք չունեն:  
Կառավարությունը, եթե նույնիսկ ցանկանա, հագիվ թե կարողանա  
ուղևորների անվտանգությունը ապահովել, քանի որ ճանապարհնե-  
րին վխտում են քույրի ու չեթենների հրոսախմբերը, որոնք իրենց  
իրավունք են վերապահում հարձակվել ցանկացած ուղևորի վրա և  
ամենևին հաշվի չեն առնում, թե ո՞ւմ են կոտորում, ու՞մ թալանել:  
Ինձ հայտնի դարձավ, որ ճանապարհորդելիս թուրքերն էլ են շատ  
սպանվել: Ակնհայտ է դառնում նման մարդկանց ամեն հսկողությու-  
նից դուրս մնալու, երկիրը ամայացնելու վտանգը: Այժմ նույնիսկ  
քաղաքում ոչ որ ապահով չէ և ամեն անգամ բնակավայրերից դուրս  
գալը մեծ հանդգնության հետ է կապված:

Ինչ վերաբերում է դեսպանատան թիվ 21՝ հուլիսի 12-ի հեռագրի  
այն հարցին, թե ինչու՞ եմ ֆրանսերեն հեռագրում, հարկ եմ համա-  
րում տեղեկացնել, որ մոտ մեկ ամիս առաջ փոստատան պետն ինձ  
հայտնեց, որ նորից հեռագրելիք անգլերեն չընդունելու հրահանգ է  
ստացել: Ավելի ուշ ես նրա ուշադրությունը հրավիրեցի այն հանգա-  
մանքի վրա, որ դեսասանատունն ինձ անգլերեն է հեռագրել, նույնիսկ  
Ժանոթացրի հիշատակածս հեռագրի այդ կապակցությամբ ինձ  
տրված հարցին: Պետն ինձ ասաց, որ ինքն իհարկե անգլերեն հեռա-  
գրեր կընդունել, բայց քանի որ փոստատանն այդ լեզվին տիրապե-  
տող չկա, գրաքննությունն ապահովելու համար ստիպված պիտի  
լինի դրսում ինչ որ մեկին գտնել, որը և կուշացնի առաքումը: Համե-  
նայն դեպս ես կվորձեմ հեռագրերը անգլերեն ուղարկել և ամենայն  
հավանականությամբ կկարողանամ այնքան հստակ բացատրել բու-  
վանդակությունը, որ առաքումը չուշանա:

Բոլոր դեպքերում, քանի որ դեսպանատան հետ փոստային  
հաղորդակցությունից զրկվելու վտանգը թվում է, թե արդեն անցել է,  
ես չեմ շարունակի հեռագրեր ուղարկել ինչպես առաջարկել էի իմ  
հունիսի 12-ի ճեպագրում (թղթապանակ թիվ 300), բացի այն դեպ-

քերից, երբ նման անհրաժեշտություն կառաջանա: Իսկ դա, չեմ կասկածում, բավական հաճախ կլինի:

Պատիվ ունեմ, պարոն, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

*Լ.ԵՍԼԻ Ա. ԴԵՎԻՍ  
(ստորագրություն)  
Հյուպատոս*

Աղբյուր՝ *Լեայի Ա. Դեխար Խարբերողից՝ Հենրի Մորգենբաուին, ամերիկյան դեսպանին. Կոստանդնուպոլիս, 24-ր հունիսի. 1915թ., Կոստանդնուպոլսում գործերի կառավարչի Հոֆման Ֆիլիպո 1916թ. փետրվարի 17-ի քրիստաբոլ ուղարկել է պետքարտուղարին Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., տասնորդական քրիստայանակ. թիվ 867.4016/269:*

*Պատճենը պետդեպարտամենտին  
Ամերիկյան հյուպատոսարան  
Մամուրեթ-ուլ-Ազիզ (Խարբերող)  
Թուրքիա, 6-ր սեպտեմբերի 1915թ.*

*Մեծարգո Հենրի Մորգենբաուին  
Ամերիկյան դեսպանին  
Կոստանդնուպոլիս*

Պարոն,

Պատիվ ունեմ ներվակ ուղարկել դեսպանատան՝ փոստային հաղորդակցությունների կնիքը կրող անդորրագիրը այն ճեպագրի, որը հյուպատոսարանը հուլիսի 4-ին Մամուրեթ-ուլ-Ազիզի փոստից պատվիրված, թիվ 912 գրանցման համարով առաքել է դեսպանատուն: Այդ օրը հուլիսի 4-ին ես ծրարով դեսպանատուն եմ ուղարկել իմ հուլիսի 30-ի ամսաթվով ճեպագիրը, որին փոստային անդորագիրը կրում է 912 համարը:

Այդ ճեպագիրն ինչ որ առեղծված ունի: Այն դրված էր գլխավոր հյուպատոսարան հասցեագրված ավելի փոքր ծրարում, որն իր հերթին դրված էր դեսպանատուն հղված ծրարում և պարունակում էր գլխավոր հյուպատոսարան ուղղված կից գրությունը, որով խնդրվում էր ճեպագիրը փոխանցել դեսպանատուն: Թե դեսպանատունը, և թե գլխավոր հյուպատոսարանն ինձ տեղեկացրին, որ այդպիսի նամակ չեն ստացել, մինչդեռ պարզ է, որ ճեպագիրը պարունակող ծրարն ստացել է այնպիսի մեկը, որը դեսպանատան կնիքից օգտվելու իրավասություն է ունեցել:

Ճեպագիրն այս տարածաշրջանի հայերի արտաքսման վերաբերյալ տասնհինգ էջանոց զեկուցագիր էր պարունակում և քանի որ անընդհատ լուրեր են պտտվել, որ դեսպանատուն հղած իմ նամակները ազգրավվում են, ես երբեք վստահ չեմ եղել, որ հաղորդագրություններս տեղ են հասնում: Այս դեպքում, սակայն, փաստերի հաջորդականությունն, իրոք, խիստ տարօրինակ է: Նախ և առաջ դեսպանատան թիվ 24՝ հուլիսի 27-ի հեռագիրը իմ վերջին ճեպագրի ամսաթվի վերաբերյալ, բնական է, ինձ ենթադրել տվեց, որ ինչ որ բան կորել է: Բոլոր դեպքերում այնքան էլ լավ չհասկացա հեռագրի պահանջը, քանի որ հուլիսի 24-ի ամսաթվով իմ վերջին ճեպագիրը չավազանց նոր էր, որպեսզի պարզաբանման կարիք զգացվեր, բացի դրանից ոչ մի կերպ ի վիճակի չէր գլխի ընկնել, թե ուրիշ ի՞նչ ամսաթիվ կարող էր դեսպանատունը նկատի ունենալ: Ուստի, որպես պատասխան դեսպանատան հարցմանը, նշեցի բոլոր այն վերջին առաքումների ամսաթվերը, որոնց տեղ հասնելու հաստատումները մինչ այդ չէի ստացել: Դեսպանատունը պատասխանեց, որ հունիսի 29-ից հետո ոչ մի նամակ տեղ չի հասել:

Եվ ես հիշեցի, որ հուլիսի 5-ին Մամուրեթ-ուլ-Ազիզի փոստատան ծառայողը հյուպատոսարան բերեց իմ՝ հունիսի 30-ի ճեպագիրը պարունակող ծրարը, որը, ինչպես քիչ առաջ նշեցի, հուլիսի 4-ին, պատվիրված հանձնել էի փոստին, ստացել թիվ 912 անդորրագիրը: Ծառայողն ինձ ասաց, որ իմ նամակը վալին դեռևս քննության չի ենթարկել՝ որպեսզի ինքը կարողանա ուղարկել, անպայման նախ նրան պիտի ներկայացվի: Սա նկատել տվի, որ չնայած ինքն ստուգել է իմ առաքած բոլոր կնքված ծրարները, ինձ թույլատրված է առանց նախօրոք վալիին ցույց տալու, կնքված նամակներ ուղարկել դեսպանատուն: Հետո ես անձամբ փոստ գնացի. հանդիպեցի պետին: Հարցրի, թե ինչու՞ էր անհրաժեշտ այդ նամակը վալիին ներկայացնել, երբ արտոնություն ունեի ծալքը կնքելով ուղղակի դեսպանատուն նամակ առաքել, որը և տարուց ավելի մի քանի օրը մնել անում էի: Պետը պատասխանեց, որ ծառայողը սխալվել է, նամակը սահմանված կարգին համապատասխանում է:

Դեսպանատան՝ հուլիսի 27-ի հեռագիրն ստանալուց մի քանի օր անց մի պաշտոնյա ինձ ասաց, որ ինքն իր աչքերով տեսել է դեսպանատուն հղած իմ նամակներից մեկը, որը բացված է եղել: Օգոստոսի 9-ին ես ուղարկեցի թիվ 26 հեռագիրը, որով կրկին հարցնում էի, թե արդո՞ք իմ հունիսի 30-ի ճեպագիրը տեղ հասել է: Երբ դեսպանատնից ստացա թիվ 28՝ օգոստոսի 17-ի հեռագիրը, որը տեղեկացնում էր, որ իմ առաքումը տեղ չի հասել, ուղարկեցի թիվ 28

օգոստոսի 14-ի հեռագիրը, որով հայտնում էի, որ ըստ ինձ հասած տեղեկությունների, տեղական իշխանությունները բացել ու կարդացել են դեսպանատուն հղած իմ վերջին ճեպագրերը: Ես հեռագրեցի նաև գլխավոր հյուպատոսարան՝ ճշտելու համար, թե արդո՞ք հունիսի 30-ի ճեպագիրը ստացվել է, բայց բացասական պատասխան ստացա: Ի պատասխան դեսպանատան թիվ 27-ը հեռագրի, որը պահանջում էր հայտնել վերջին ճեպագրերի համարներն ու ամսաթվերը, հղեցի թիվ 30՝ օգոստոսի 17-ի հեռագիրը, որով հայտնում էի առաքումների ամսաթվերն ու Սամուրեթ-ուլ-Ազիզի փոստի անդորրագրերի համարները: Ցուցակում առաջինը թիվ 912՝ հուլիսի 4-ի անդորրագիրն էր, որը վերաբերում էր իմ հունիսի 30-ի ճեպագիրը պարունակող ծրարին: Հետո, երբ դեսպանատունը թիվ 32 հեռագրով տեղեկացրեց, որ հնարավորություն չունի ճշտելու իմ առաքումների ցանկը, ուղարկեցի թիվ 34 հեռագիրը, որը ճշգրիտ պարզաբանում էր ամեն մի ճեպագրի ամսաթիվը, փոստին հանձնելու օրն ու համապատասխան անդորրագրի համարը:

Նույն օրը՝ օգոստոսի 23-ին ես գրություն ուղարկեցի վալիին՝ խնդրելով գտնել իմ նամակի հետքը: Հետո դեսպանատնից ծրարով ստացա ներփակ անդորրագիրն ու հեռագրի հաստատման պատճենը: Ես մինչև հիմա նահանգապետից պատասխան չեմ ստացել, դեսպանատունը տվյալ խնդրի մասին ինձ ոչինչ չի հաղորդել: Ելնելով այս ամենից՝ փոստատան ծառայողի՝ առանց վալիի քննության նամակն առաքելը հրաժարվելուց, տեղական պաշտոնյաներից մեկի այն հայտարարությունից, որ ինքը դեսպանատուն հղած իմ մի նամակը բաց վիճակում տեսել է (նա մինչև հիմա պնդում է նույնը), դեսպանատան՝ իմ վերջին առաքումների ամսաթվերը ճշտող հարցումից, ինչպես դեսպանատան, այնպես էլ գլխավոր հյուպատոսարանի հեռագրերից, բնական է դառնում ենթադրելը, որ այդ նամակը առգրավված է: Նույնիսկ այս ծրարում ներփակված դեսպանատան կնիքը կրող անդորրագիրն է հուշում, որ նամակի հետ ինչ որ բան է պատահել: Հնարավո՞ր է, որ տեղ չի հասել խաբեությանը ուրիշ մեկն է դեսպանատան կնիքով կնքել անդորրագիրը:

Գոհ կլինեմ, եթե դեսպանատունը համապատասխան պարզաբանումներ անի և ինձ տեղեկացնի: Եթե ճեպագիրը կորել է, ես կարող եմ պատճենը պատրաստել, ուղարկել դեսպանատուն:

Պատիվ ունեմ, պարոն, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

*ԼԵՍԼԻ Ա. ԳԵՎԻՍ  
(ստորագրություն)  
Հյուպատոս*

Աղբյուր՝ Լեւոն Ա. Գեկիսր Խարբերոյից՝ Հենրի Մորգենթաուին. Ամերիկյան դեսպանատուն. Կոստանդնուպոլիս. 6-ր սեպտեմբերի 1915թ.. Ա.Ա.. Պ.Դ., 59 Խ.Փ., տասնորդական թղթապսանակ, թիվ 8674016 210B:

*Պատճենը պետական դեսպարտամենտին  
Ամերիկյան հյուպատոսարան  
Մամորեթ-ույ-Ազիզ (Խարբերոյ)  
7-ր սեպտեմբերի 1915թ.*

*Մեծարգո Հենրի Մորգենթաուին  
Ամերիկյան դեսպանին  
Կոստանդնուպոլիս*

Պարոն,

Պատիվ ունեմ շարունակելու հայերի բռնազաղթին ու ջարդերին առնչվող իմ հունիսի 30-ի, հուլիսի 11-ի, հուլիսի 24-ի և օգոստոսի 23-ի (թղթապսանակ թիվ 840) տեղեկագրերը հետևյալ հաղորդագրությամբ.

Օգոստոսի 23-ի իմ համառոտ տեղեկագիրը կազմել էի ոստիկանապետի դրոմամբ, հենվել այն փաստերի վրա, որ ինքն ինձ սրամաղդրել է: Պատճառները, որոնք ինձ մղեցին նման քայլի, ես հանգամանորեն նկարագրել եմ իմ հուլիսի 24-ի տեղեկագրի 9-ից 13-րդ էջերում: Ոստիկանապետը թվարկված դեպքերի կապակցությամբ ինձ հուշագիր ներկայացրեց, որի վրա հիմնվելով էլ կազմեցի տեղեկագրությունը: Ուղարկելուց առաջ ես այն ցույց տվեցի վալիին, որը ձևացրեց, թե շատ զոհ մնաց, որ իմ հաղորդագրությունում անդրադառնում եմ այդ խնդրներին: Նկարագրաված շատ իրողություններ ինձ հայտնի են անձամբ, չեմ էլ կասկածում, որ բոլոր պնդումները իրական հիմք ունեն, մի հանգամանք, որը ոստիկանապետն էլ ինձ հավատացրեց: Ես այդպիսի խնդիրներ դեսպանատանը տեղեկացնելու մեջ վնասակար ոչինչ չեմ տեսնում և, ինչպես ինձ է թվում, վալին ու ոստիկանապետը չափազանց մեծ նշանակություն են տալիս իմ այդ նախաձեռնությանը: Իհարկե, ես ամենևին չեմ ուզում հայ ժողովրդի հովանավորի կեցվածք ընդունել կամ հայ հեղափոխականներին պաշտպանել: Հետևաբար, նկարագրելով այստեղ տիրող իրավիճակը, ձգտում եմ անկողմնակալ մնալ՝ ուրախ կլինեի, եթե հնարավորություն ունենայի այնպիսի իրողություններ նկարագրել, որոնք հիմնավորեին կառավարության ձեռնարկած քայլերը: Միաժամանակ, օգոստոսի 23-ի տեղեկագրում իմ հիշատակած փաս-

տերի մեծ մասը այնքան աննշան, անկարևոր է թվում մեր տարածաշրջանում տեղի ունեցող անսահման ողբերգության համեմատությամբ, որ դժվար է պատկերացնել, թե ինչպես է հնարավոր այդ ամենին արդարացում գտնել:

Բացի օգոստոսի 23-ի համառոտ հաղորդագրությունից, հուլիսի 24-ի զեկուցագրից հետո դեսպանատուն՝ հայկական հարցի մասին ոչինչ չեմ տեղեկացրել: Այդ ժամանակամիջոցում չգրելուս պատճառներից մեկը դեսպանատուն ուղարկած իմ նամակների բացարձակ անապահովությունն է. ինչպես արդեն երեկվա ճեպագրում նշել էի հունիսի 30-ի հաղորդագրության վերաբերյալ:

Մյուս պատճառն էլ այն է, որ վերջին վեց-յոթ շաբաթվա ընթացքում իրավիճակը համեմատաբար խաղաղ էր: Հուլիսի առաջին երկու-երեք շաբաթում հայ ազգաբնակչության մեծ մասին բռնագաղթեցնելուց հետո, հետագա տարիանումները, բնականաբար, նախկին ընդգրկումները չունեին, ավելի մեծ ընդհատումներով էին իրագործվում: Ինչպես արդեն հիշատակել եմ իմ հուլիսի 24-ի զեկուցագրում, մինչև հիմա երկու քաղաքներից՝ Խարբերդից ու Մամուրեթ-ու-Ազիզից 12000-ից 15000 հայ է բռնագաղթել, հազարավորներ ստիպված են եղել թողնել մերձակա գյուղերը: Մնացել է չնչին մասը՝ բոլորը գրեթե կանայք ու երեխաներ: Ելնելով վայիի հայտարարություններից, հույս կա, որ այդ փոքրաթիվ կանանց ու երեխաներին կխնայեն: Տղամարդկանց, գրեթե բոլորին, տարել են, համարյա կասկած չի կարող լինել, որ աննշան բացառությամբ, ամենքին սպանել են: Ինչ էլ լինի, բռնագաղթը դեռ չի ավարտվել և ամենևին հույս չկա, որ շուտով կավարտվի: Հուլիսի վերջին շաբաթվա, օգոստոսի առաջին կեսի ընթացքում ինչպես այստեղից, այնպես էլ գյուղերից բազմաթիվ կանանց, երեխաների հավաքեցին: Նրանց հսկիչների ուղեկցությամբ տարան և ըստ պատվող համառ լուրերի, բոլորին, ինչպես դրանից առաջ տղամարդկանց, կոտորել են: Դա ամենևին անհնար չէ, ես հակված եմ հավատալու, որ առնվազն նրանց մի մասին կանխամտածված սպանել են: Բոլորովին վերջերս մեծ թվով հայ երեխաների, որոնց պահում էին թուրքական որբանոցում, տեղահանեցին, դժվար է հավատալ, որ դրա համար, բացի սպանելուց, կամ թողնելուց, որ ճանապարհին մեռնեն, կարող է ուրիշ պատճառ լինել: Այսպիսով, հայերի բռնագաղթն ու կոտորածը, որը շարունակվեց ամբողջ ամառը, անհնար է կանխատեսել, թե երբ պիտի վերջանա:

Ես կարծում եմ, որ տարածաշրջանի հայերի առնվազն երեք քառորդն արդեն վերացված է: Մնացածների մեծ մասը թաքնվել է և

շարունակում է թաքնված մնալ: Ոմանք օգտվում են կաթոլիկներին ու բողոքականներին չաքտորելու հրամանից, չնայած ճնշող մեծամասնությանը, հրամանը ստացվելուց և առնվազն հրապարակվելուց առաջ արդեն արքայի վր էին: Նրանք, ովքեր բախտ ունեցան մինչև հրամանի տարածվելը թաքնված մնալ, այժմ բացեիքաց ապրում են: Սակայն, ընդամենը մի քանի օր առաջ բողոքականների մի մեծ խմբի տեղահանեցին, ասում են, որ առայժմ նրանք գտնվում են Մալաթիայի մոտերքում: Ես վալիին քսանչորս հոգու ցուցակ ներկայացրի, խնդրեցի, եթե հնարավոր է, բոլորին հետ բերել տալ, բայց դեռևս վստահ չեմ այդ ուղղությամբ որևէ քայլ կձեռնարկվի<sup>7</sup>: Բացի կաթոլիկներից ու բողոքականներից, թողել են մի քանի խիստ անհրաժեշտ արհեստավորների ու բանվորների, ինչպես օրինակ հացթուխների, կոշկակարների: Մնացածների մյուս՝ ոչ մեծ խումբը ամերիկյան քաղաքացիներն են կազմում: Խնայել են նաև ամերիկյան դպրոցների ու հիվանդանոցի աշխատակիցներին, ծառայողներին, չնայած իշխանությունները շարունակում են պնդել, որ նրանց առնչությամբ Կոստանդնուպոլսից ոչ մի հրաման չեն ստացել: Քանի որ առայժմ այս մարդկանց չեն անհանգստացնում, կարծում եմ հարկ չկա չափից ավելի հետևողական լինել հրամանի հարցում, չնայած նրանք իրենց անհամեմատ ապահով կզգային, եթե տեղական իշխանություններից հիմնական բնակավայրերում մնալու հավաստիացումներ ունենային: Շատ հավանական է թվում, որ անկախ պաշտոնական ուրացումներից, համապատասխան հրամաններ, ինչպես ամերիկյան քաղաքացիների դեպքում, ստացվել են, չնայած տեղական իշխանությունները երբեք բացեիքաց դա չեն խոստովանել:

Նշանակում է տեղում մնացած հայերի մեծ մասը թաքնվածներն են, չնայած նրանց թիվը դժվար է ասել: Ոմանք թաքնվում են Խարբերդում ու Մամուրեթ-ու-Ազիզում, ուրիշները գյուղերում, բոլորովին վերջերս էլ տարբեր վայրերում թաքնված տղամարդկանց մի մեծ խումբ անցավ Դերսիմ, ապաստան գտավ քրդերի մոտ: Նրանց թվաքանակը, բնականաբար սահմանափակ է, բայց ես իմացա, որ այդ ուղղությամբ զգալի շարժում է նկատվում, ինչ խոսք, կյանքի անվտանգությունն ապահովող որոշակի գումարով: Շատերը հիմնականում կանայք, մնացել են թուրքական ընտանիքներում, հատկապես գյուղերում, որոնց բնակչությունը խառն է: Չուտ հայկական գյուղերը ամբողջովին դատարկվել են, իսկ խառն գյուղերում հարյուրավոր կանայք են ապաստան գտել իրենց թուրք հարևանների տներում:

Կաշառակերությունը խիստ տարածված է և լայն կիրառում ունի իշխանությունների ինչպես վերին, այնպես էլ ստորին օղակներում: Այդ առումով ամենախոշոր հանցագործներից մեկը Խարբերդի գայմագամն է, որն ասում են մարդկանց պաշտպանելու համար տասնյակ հազարավոր փառուղ է գրպանել: Ահա նրա հովանավորության օրինակներից մեկը: Մի կին, ում ես անձամբ եմ ճանաչում, հիսուն լիրա է տվել, որպեսզի իրեն ու երեխաներին չաքսորեն: Գումարը վերցնելուց հետո գայմագամն ասել է, որ քանի դեռ բռնագաղթը շարունակվում է, նա լավ կանի, եթե Խարբերդում չմնա, տեղափոխվի Սամուրեթ-ու-Ազիզ, այնտեղ որոշ ժամանակ թաքնվի: Կինն, ուրեմն, եկավ, մի քանի օր ապաստանեց ամերիկյան հիվանդանոցում, բայց քանի որ ոստիկանությունը խուզարկումներ էր կատարում, վեց երեխաներով հյուպատոսարան տեղափոխվեց: Մինչ այդ ոստիկանապետից, որպես առանձնահատուկ շնորհ, խնդրել էի, որ տիկնոջն ու երեխաներին թույլ տա հյուպատոսարանում մնալ, և նա համաձայնվել էր: Այնպես որ ես նրանց որոշ ժամանակ հյուպատոսարանում պահեցի, մինչև հնարավոր եղավ այլ միջոց գտնել: Տիկինը չէր կարող Խարբերդ վերադառնալ, այնպես որ գայմագամին տված հիսուն լիրան ոչ մի նշանակություն չունեցավ: Իմ՝ աիկնոջն օգնելու ջանքերն ավելի արդյունավետ եղավ, քան գայմագամի արածը սուսցամ գումարի փոխարեն: Մինչդեռ գայմագամը շարունակում է կանոնավոր ու այնքան բացահայտ կաշառք վերցնել, որ շուտով բոլորն իմացան այդ մասին: Երկու-երեք շաբաթ առաջ նրան պաշտոնակն արեցին, ձերբակալեցին ու բանտ նետեցին, որտեղ և գտնվում է մինչև հիմա: Իմացա նաև, որ բանտարկվելու պահից նրա տունը հսկողության տակ է վերցված: Ես չգիտեմ նրան ձերբակալելու բուն պատճառը, թերևս եկամուտը չի կիսել պաշտոնակիցների հետ կամ որևէ այլ պատրվակ է եղել, բայց համենայն դեպս լավ է, որ աշխատանքից հեռացվել է: Բացի պաշտոնյաների կաշառակերությունից, բոլոր այն թուրքերը, որոնք իրենց ամերում հայեր են պատասխարել, դրա համար անընդհատ ահռելի գումարներ են պահանջում:

Շատ հաճախ, նրանք փախստականներին որոշ ժամանակ պահում են, բայց հենց գումարներն սպառվում է, ստիպում են գնալ, ուրիշ տեղ ապաստան որոնել:

Ինչ վերաբերում է հյուպատոսարան եկած կնոջը, ում մասին քիչ առաջ հիշատակեցի, նա ամերիկյան հիվանդանոցից տեղափոխվեց, նրա համար ինքս խնդրեցի բացառություն անել, չաքսորել, բայց պիտի ասեմ, որ թե ինքը, և թե իր նման մի քանի հոգի, խիստ

անխոհեմ ձևով, գիշերը հայտնվեցին: Ոստիկանությունն իմացել էր, որ ամերիկյան հիվանդանոցում բազմաթիվ հայեր են թաքնվում, որոնք հիվանդ չեն, մի հետկեսօրի խուզարկություն էր կատարել: Արդյունքն առանձնապես մեծ չեր եղել, քանի որ քիչ մտադ էր հայտնաբերվել: Վերցրել էին մոտ տասներկու տղամարդու, կանանց ու երեխաներին թողել էին: Նրանց մեջ էին եղել իմ հիշատակած կինն ու երեխաները, ինչպես նաև ամերիկյան քոլեջի դասախոսներից մեկը: Մինչ այդ ես նրանց համար, ընտանիքներով հանդերձ, թույլտվություն էի ստացել, նախօրոք էլ դոկտոր Ատկինսոնին հարցրել էի՝ անախորժություններ կունենա՞, եթե ոստիկանությանը հայտարարի, որ նրանք գտնվում են ամերիկյան հյուպատոսարանի հովանավորության ներքո: Նա այդպես էլ արել էր, և ոստիկանությունը հիշատակածս անձանց հանգիստ էր թողել: Բայց հենց նույն գիշերը, երբ մութն ընկել էր, իմ հովանավորյալներին, մի քանի ուրիշ հայերի հետ ուղարկել էին հյուպատոսարան: Այդպես, անսպասելի, անկողիններով, իրերով, ունեցած-չունեցածով մոտ քսան հոգի հայտնվեց: Ճանապարհին նրանց կանգնեցրել էր մի ոստիկան, հարցրել, թե ո՞ր են գնում, ու բոլորն էլ ասել էին՝ ամերիկյան հյուպատոսարան: Հայերն ստիպված էին եղել անցնել նաև մուսուլմանական ամբոխի կողքով, որը բացօդյա աղոթքի էր հավաքվել: Ես իսկույն նեթ հետ ուղարկեցի նրանց, ովքեր մնալու իրավունք չունեին, բայց այնուամենայնիվ, այդքան շատ հոգու խմբովին հայտնվելը ուշադրություն գրավեց և շուտով քաղաքով մեկ տարածվեց, որ ամերիկյան հյուպատոսարանում «հազար» հայ է թաքնվում: Դա տեղի ունեցավ այս ամառվա այն ամենալարված, վտանգավոր պահին, երբ շատ կարևոր էր կասկածից զերծ մնալը: Միջադեպը, բարեբախտաբար, հետևանքներ չունեցավ, բայց, ամեն դեպքում ամերիկյան հիվանդանոցի աշխատակիցների նմա ձևով հյուպատոսարան հայեր ուղարկելը անխոհեմ և անհեռատես քայլ էր:

Իրականում հյուպատոսարանում ես պատուպարում եմ երեսուն-քառասուն հոգու, որոնք բոլորն էլ մնալու թույլտվություն ունեն, այնպես որ հարկ եղած դեպքում կարող եմ համապատասխան պատճառաբանություններ ներկայացնել, ինչպես, օրինակ, ամերիկահպատակ քաղաքացիների կանանց ու երեխաների, այնպես էլ հյուպատոսարանի աշխատակիցների ընտանիքների դեպքում: Չերքակալություններն ու բռնազաղթը այնքան արագ, հասցնեպ տեղի ունեցան, որ նույնիսկ նրանց, ովքեր կարծում էին, թե պիտի մնան, իսկույն նեթ հավաքեցին ու արտրեցին, ոչ ոք չկարողացավ վրկվել: Հետևաբար ավելի խելամիտ թվաց, որ գոնե մասամբ, այն հայերը,

որոնց ես փորձում եմ պաշտպանել, հյուպատոսարանում ապաստանեն: Քանի որ հյուպատոսարանի այգին չափազանց ընդարձակ է, նրանց ամառն այստեղ պահելը դժվար չէ: Բացի դրանից , հենց վերջերս, ես մոտակայքում երկու-երեք տուն եմ գտել, որ տեղ կարող եմ որոշ մասին տեղավորել:

Հասկանալի է, չափազանց դժվար է եղել կողմնակի մարդկանց հիվանդանոց մտնելն արգելելը, առավել ևս վռնդելը, մասնավանդ երբ հայտնի է դարձել, որ նրանք դեպի սառույց մահը պիտի գնան: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայերի մեծ մասը այս կամ այն հիվանդության պատրվակով է հիվանդանոց դիմել, վերջիվերջո դուկտոր Ատկինսոնն այդ տեսակետից դժվարություններ չի ունեցել: Խարբերդի ամերիկյան միսիոներները պատասպարել են միայն հիսուն դաստիարակի ու որբերի, որոնց տեղ են տվել աղջիկների վարժարանում, ինչպես նաև մոտ տասներկու ծառայողներին: Ինչպես արդեն նշել եմ վերևում, իշխանությունները համառորեն ժխտում էին, որ բացառություններ անելու հրաման են ստացել, բայց նման հրահանգի առկայությունը հավանական է թվում հենց թեկուզ այն պատճառով, որ նշածս անձանց տարագրելու ոչ մի փորձ չի արվում:

Ընդհանուր առմամբ տեղի ամերիկացիները վերջին երկու ամսում համեմատաբար քիչ նեղություններ կրեցին, հովանավորություն ունեցան որոշ ծառայություններ մատուցել: Ամեն դեպքում ինձ հայտնի դարձավ, որ բարձրաստիճան պաշտոնյաների նախաձեռնությամբ գիշերային հարձակում է նախապատրաստվել Խարբերդի ամերիկացիների վրա՝ բռնագաղթած հայերի՝ նրանց վստահված դրամը զողանալու նպատակով: Բողոքին քաջ հայտնի էր, որ հայերը ամերիկացիներին խոշոր գումարներ էին պահ տվել, խիստ հավանական է, որ ոմանք ձգտեին տիրանալ: Առավել ևս անհնարին չէ, որ այդ ուղղությամբ ինչ-ինչ քայլեր կատարված լինեն, չնայած ես հաստատ չեմ կարող պնդել: Իմ լրատուն տեղեկացրեց, որ այդ գործում ներգրավված պաշտոնյան ի վերջո գտել է, որ խելամիտ չէ նման սադրանքի դիմել, մյուսներին էլ համոզել է կրաժարվել այդ գաղափարից:

Անկախ այդ բանից, այդպիսի դավ նյութվե՞լ է, թե՞ ոչ, միտար Կնապի մահը Դ-իրաբեքիրում (որի մասին ես դեսպանատանը ահազանգել էի իմ՝ օգոստոսի 19-ի հեռագրում և օգոստոսի 31-ի ճեպագրում) խիստ տարօրինակ պայմաններում տեղի ունեցավ: Ավելին, ոչ մի կասկած չի կարող լինել, որ դուկտոր Սմիթի կյանքը Տիգրանակերտում լուրջ վտանգի տակ է եղել և նույնիսկ նրա վտարումը

այդ քաղաքից ոչ մի լավ բան չի խոստանում: Բավականաչափ վաստարկներ կան մարդկանց գոնե մեծ մասին համոզելու համար, որ ամերիկացիների գոյությունն այստեղ ապահով չէ, այնպես որ, եթե նրանք ստիպված լինեն մնալ, չափազանց հավանական է, որ նոր գոհերն անխուսափելի լինեն:

Հենց վերջերս ինձ հանձնեցին միսոր Փիթի օգոստոսի 19-ի շրջաբերական նամակը, որը նա հասցեագրել էր Թուրքիայի ամերիկյան հաստատություններին: Ակնհայտ է, որ նրա տեսակետը ստեղծված իրավիճակի մասին իմիցից տարբերվում է: Ես իմ սեփական համոզմունքները պնդելու ոչ մի ցանկություն չունեմ, և ոչ էլ ուզում եմ հարկադրվել իր ծրագրերին, բայց այն ամենից հետո, ինչ տեղի ունեցավ այստեղ վերջին վեց ամիսների ընթացքում, չեմ պատկերացնում, թե ինչպե՞ս կարելի է հուսալ, որ աշնանը ամերիկյան դպրոցները կվերաբացվեն, ինչպե՞ս է հնարավոր ասել, որ անհրաժեշտ է հասնել այն բանին, որ արտրված մանկավարժներին հետ վերադարձնեն, առավել ևս այնպիսի տպավորություն ունենալ, որ բոլոր ամերիկացիների անվտանգությունը լիովին երաշխավորված է: Միսոր Ռիցը նրան հաճախակի նամակներով, ամենայն մանրամասնությամբ նկարագրել է տիրող վիճակը, ես ինքս էլ իմ հերթին այստեղի պայմանների մասին բազմաթիվ հանգամանալի ճեպագրեր եմ հղել դեսպանատուն, բայց քանի որ ըստ մեր տեղում կազմած պատկերացման՝ մեր հաղորդումներին քիչ ուշադրություն է դարձվում, ինչպես նաև ելնելով միսոր Փիթի վերոհիշյալ նամակի դրույթներից, որոշակի է թվում, որ մեր զեկուցագրերին կարևորություն է ընձայվում:

Ամերիկյան դպրոցների վիճակը շատ լավ էր ներկայացված միսոր Ռիցի՝ միսոր Փիթին գրած հուլիսի 19-ի նամակում, որի պատճենը ես ուղարկել էի դեսպանատուն: Նամակը ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ աշակերտների՝ աղջիկների երկուերրորդը ու տղաների վեց-յոթերորդը դեպի ստույգ մահն են ուղարկված, արտրված են կամ տեղավորված մահմեդականների ընտանիքներում, յոթ դասախոսներից չորսը ապանված են զանգվածային նախճիրի ճանապարհին, երկուսը թաքնված են և միայն մեկն է (երաժշտության դասախոսը) տեղում, մյուս՝ տասներկու տղամարդ ուսուցիչներից յոթին ամենայն հավանականությամբ խողխողել են ճանապարհին, երկուսը հիվանդ են, պառկած են հիվանդանոցում, մեկը թաքնված է և միայն երկուսն են քաղաքում: Ինչ վերաբերվում է մնացածին, մի ուսուցչուհու ուղարկել են թուրքական հարեմ, երեքի մասին ընդհանրապես տեղեկություն չկա, չորսին տարագրել են.

մնացել են տաաը: Ամերիկյան դպրոցներին պատկանող ութը շենքերից յոթը կառավարության ձեռքում է, միայն մեկն է ազատ, որի մի մասը սակայն զինվորական հիվանդանոցի են վերածել:

Այսպիսով, ուրեմն, աշակերտների երեք-քառորդը, մանկավարժների կեսը, որոնց թվում և բոլոր առաջատար դասախոսները, բոլոր շենքերը, բացի մեկից, այլևս գոյություն չունեն: Անտեսելով մնացած նկատառումները, դժվար է պատկերացնել, որ այս պայմաններում հնարավոր է ուսուցման գործընթացը շարունակել, ներկա իրավիճակում դպրոցները վերաբացելու նախաձեռնություն հանդես բերել: Միակ ոլորտը, որտեղ հնարավոր է ինչ որ բան անել, որքերին օգնելն է, քայց դա էլ արգելված է ամերիկյան միսիոներներին: Ինչ վերաբերվում է կանանց ու երեխաներին, այստեղ բացահայտ տարվող քաղաքականության նպատակը նրանց մահմեդականացնելն է: Ընդհանուր առմամբ, Կոտտանդնուպոլսում ինչպիսի երաշխիքներ էլ որ տրվեն ամերիկյան հյուպատոսությունների հետագա գործունեության վերաբերյալ, պարզորոշ է, որ այս տարածաշրջանում քրիստոնեական ուսուցում կամ թույլ չեն տա ձեռնարկել կամ էլ այնպիսի խոչընդոտներ կհարուցեն, որ անհնարին կլինի շարունակելը՝ գոնե մինչև քաղաքական պայմանների արձատական փոփոխությունը:

Ինչ վերաբերվում է միստր Փիթի նամակում արտահայտված՝ ամերիկյան դպրոցների աքսորված ուսուցիչների վերադարձի պահանջ ներկայացնելու մտքին, հասկանալի է, մինչև դեսպանատնից համապատասխան ցուցում չստանամ, այդ ուղղությամբ ոչինչ չեմ ձեռնարկի: Մեր արխիվներում նման խնդիրների վերաբերյալ վկայագրեր որոնելիս, 1903 թվականի մի հրահանգ գտա, որը Կոտտանդնուպոլսի դիվանագիտական առաքելությունը հյուպատոսարան էր հղել ամերիկյան քոլեջի մի դասախոսի կապակցությամբ, որին այն ժամանակ ձերբակալել էին, իսկ հիմա նորից են ձերբակալել ու սպանել: Հրահանգը թելադրում էր սահմանափակել մարդասիրական ջանքերը, պաշտոնապես չմիջամտել: Քանի որ ես հակառակ բնույթի ոչ մի հրահանգ չստացա, իսկ ամերիկյան դպրոցների մանկավարժները նախքան նրանց տեղում թողնելու հրամանի հրապարակվելը ձերբակալվեցին, կոտանքների ենթարկվեցին, արտովեցին ու կոտորվեցին, միակ բանը, որ կարող էի անել, դեսպանատանը տեղեկացնելն էր, որը և իսկույն արեցի: Ուսուցիչների վերադարձը պահանջելն անօգուտ է, ինչպես նաև տեղական իշխանություններից բացատրություն ակնկալելը, թե ինչ եղան նրանք: Ես չեմ կարծում, որ թեկուզ մի պաշտոնյա կկարողանա ապացուցել, որ

որևէ ուսուցիչ որևէ մեղք է ունեցել: Նրանք առաջիններից մեկն արտրվեցին իրենց զբաղեցրած դիրքի պատճառով:

Գալով Թուրքիայի բոլոր ամերիկացիների զանգվածային պաշտպանության երաշխիքներին, թվում է, թե փաստերը դա չեն հաստատում: Գոկտոր Սմիթի տարագրությունն ու կյանքին սպառնացող հավանական վտանգը, միտոր Կնասլի մահվան կասկածելի պայմանները, Խարբերդի ամերիկացիների դեմ նյութված դավի շշուկները, այն հանգամանքը, որ միտոր Բարնումի մահը, թերևս նաև ուրիշներինը, արագացավ ներկա իրավիճակի պատճառով, չնայած մանրամասները ես չկարողացա ճշտել, վկայում են, որ այժմ Թուրքիայի նահանգներում կյանքն ու առողջությունը ապահովված չեն: Ելնելով միսիոներների գործունեության ներկա սահմանափակումներից, որը, գրեթե կասկած չի կարող լինել, դեռ երկար կտևի, ինչպես նաև վտանգներից, որոնք ամենայն հավանականությամբ ցանկացած պահի կարող են ի հայտ գալ, ինձ ավելի խելամիտ է թվում այն, որ բոլոր նրանք, ովքեր կարող են, մեկնեն:

Խոսելով ընդհանուր երաշխիքների մասին, որոնցով այնքան շուտ է Կոստանդնուպոլիսը, ինչպես նաև նկատի ունենալով մեր վերջին վեց ամիսների այստեղի վտրճառությունը, իմ նախորդներից մեկի զրած ճեպագրի հետևյալ պայրերությունն այնքան հետաքրքիր եմ գտնում, որ արժանի եմ համարում մեջ բերելու.

«Ես իսկույն խնդիրը ներկայացրի նորին գերագանցության վալիին, որն ինձ հավատացրեց, որ այդ կապակցությամբ ոչ մի հրաման չի ստացել: Նա անմիջապես հեռագրեց Կոստանդնուպոլիս, պահանջելով, որ իրեն ուղարկեն այդ լիազորությունը. որի մասին հայտարարել էր Ձերդ գերագանցությունը:

Մեր գրույցի ընթացքում նա պնդեց, որ Կոստանդնուպոլիսի նախարարները ցավալի ու վնասակար սովորություն ունեն արտասահմանյան դեպանատներին հավատացնելու. որ այս կամ այն հրամանն արդեն ուղարկված է տեղական իշխանություններին. այն դեպքում, երբ համապատասխան հրահանգը ոչ ուղարկված է. ոչ էլ նման հայտարարություն անելուց հետո անմիջապես ուղարկելու ճիշդ է արվում:

Վալին հաճախակի էր առժում այդ վրդովեցուցիչ սովորությունից. ահա թե ինչու խորհուրդ ավեց բոլոր պարագաներում պնդել, որ ինձ տեղեկացնեն լիազորությանն ուղեկցող ճեպագրի ամսաթիվն ու համարը, ինչպես նաև հայտնեն՝ հեռագրով, թե՞ նամակով է ուղարկված»:

Լավ կլինեք, եթե հնարավոր դառնար այդ բնույթի ճեպագրերի ամսաթվերն ու համարները ձեռք բերելը, որոնք և բոլոր հնարավոր դեպքերում դեսպանատունը հայտնելի ինձ:

Այս տարածաշրջանում տիրող ընդհանուր վիճակը ահավոր է: Բացի անվտանգության բացակայությունից, թվում է, թե համաճարակն անխուսափելի է: Մեծ թվով դիակները, որոնք սփռված են ամենուր՝ նույնիսկ քաղաքի շրջակայքում, տարբեր ժամանակներում այստեղից անցած արտոբանկների քարավանների աղտեղությունը, մաքրության իսպառ բացակայությունը հանգեցնում են դրան: Այժմ պետական ծառայողները ձգտում են թաղել գլխավոր ճանապարհներին հաղիպող դիակները, բայց փոսերը, որ նրանք փորում են, երբեմն այնքան մակերասային են, որ մարմինների մի մասը հաճախ քայք է մնում:

Իմ նախորդ ճեպագրերում ես անդրադարձել էի քաղաքի մուտքի մոտ գտնվող ճամբարին, որտեղ որոշ ժամանակ հանգրվանեցին Էրզրումի ու Երզնկայի տարագիրները: Նրանցից հետո եկողների համար ավելի հարմար տեղ որոշվեց՝ խոսքը համարյա քաղաքի տարածքում գտնվող ընդարձակ գերազմանոցի մասին է, որը շրջափակված է բարձր պարիսպով: Այնտեղ քաղաքից անցնող քարավաններին բազմիցս պահեցին, նրանց, ովքեր ուժասպառ կամ ծանր հիվանդ էին, թողեցին, որ մեռնեն ու հենց տեղում էլ թաղեցին: Իմ հուլիսի 24-ի ճեպագրի 7-րդ և 8-րդ էջերում նկարագրված գերեզմանոցի տեսարանը կրկնվեց բազմիցս: Վերջում հասած արտոբանկները հանգրվանեցին հինգ մղոն հեռու գտնվող մի հայկական գյուղում, որտեղից և շարունակեցին իրենց ճանապարհը:

Այս քստրի նկատելի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վերջերս տարագիրների խմբերի հետ սղամարդիկ հայտնվեցին, այն դեպքում, երբ նախորդ քարավանների տղամարդկանց, այս վիլայեթը հասնելուն պես սպանում էին: Խարբերող շատ դիպուկ էր Թուրքիայի «Սպանդի նահանգ» կոչվում, քանի որ բոլոր կողմերից բռնագաղթածներին բերում են այնտեղ միայն այն բանի համար, որ կոտորեն: Հասկանալի է, ինքս անձամբ նախճիրներին ականատես չեմ եղել, սակայն ոչ մի կասկած չի կարող լինել նրանց ճակատագրի հանդեպ, որոնք անհետացել են այս վիլայեթում, դեռևս քաղաք հասնելուց առաջ, ինչպես գործնականում ոչ մի կասկած չի կարող լինել, որ այստեղից ճանապարհը շարունակող կանանց ու երեխաների մեծ մասը կոտորվելու է: Դա շատ հաճախ հաստատում ու պնդում են նախճիրներից փախած, քաղաք վերադարձած վերապրողները,

ինչպես նաև զինվոր-սուտիկանները, որոնք իրագործում են ջարդը: Վերջերս հասած քարավաններում կան Սվազի նահանգի Չարայի, ինչպես նաև Տրապիզոնի, Օրդույի, Կիրասունի բնակիչներ. չհաշված Էրզրումից եկած չափազանց մեծ քարավանը, որը մի քանի հազար մարդուց էր կազմված: Բոլոր նրանք, ում հետ ես գրուցել եմ, պնդել են, որ այլ վիլայեթներում իրենց հետ անհամեմատ լավ են վարվել: Ինձ հասնեցին նաև, որ այստեղից մեկնելուն պես տղամարդկանց բաժանում են կանանցից ու երեխաներից, որի նպատակը կարծում եմ խիստ հասկանալի է:

Պարզ է, այն երկիրը, որտեղ գրեթե հենց մեր աչքերի առաջ նման զանգվածային նախճիրներ են իրագործվում. չի կարելի վստահելի համարել: Տեղական պաշտոնյաներն ու զինվոր սուտիկանները, որոնք, թվում է, բարյացակամ են իմ նկատմամբ, անընդհատ խորհուրդ են տալիս զգուշանալ ոտքով կամ ձիով հեռուներում գրոսնելուց, հորդորում են անպայման որևէ մեկին վերցնել ինձ հետ: Բոլորը խոսում են քրդերի մասին, որոնք թափառում են ճանապարհներին ու խիստ վայրենաբարո են: Իհարկե ճշմարիտ է, որ չափազանց շատ քրդեր են տուն-տեղ թողել, թալանի ելել: Այդ ցեղի մի հետաքրքիր նարկայացուցիչ հյուպատոսարան՝ ինձ մոտ եկավ. ցույց տվեց այն, ինչը ինքը 100 դոլարանոց արժեթուղթ է համարում ու հարցրեց, թե փոխարենը ի՞նչ կարող են տալ իրեն: Պարզվեց, խոսքը գովազդային հայտարարության մասին է, որը նման էր ամերիկյան դրամի: Երբ հարցրի, թե որտեղի՞ց իրեն այդ թուղթը, սկզբում ասաց, որ Ամերիկայում են իրեն տվել որպես 100 դոլարանոց, բայց երբ շարունակեցի հարցուփորձը, խոստովանեց, որ իր մոլթած գյավուրի գրասպանից է հանել: Ահա այսպիսին են մարդիկ, որոնց այս օրերին կարելի է հանդիպել այստեղ:

Բոլոր դեպքերում ես լիովին չեմ հրաժարվել ձիով շրջագայելուց, բայց սովորոբար հետս միշտ ինչ որ մեկին վերցնում եմ: Վերջերս եղա եկու հայկական գյուղերում, որտեղից գրեթե բոլոր բնակիչներին տարահանել էին: Քաղաքից դեռ շատ չհեռացած երկու տղամարդու տեսա, որոնք ճանապարհից երկու հարյուր ոտնաչափ հեռու փոս էին փորում: Մոտեցա, որ իմանամ պատճառը: Պարզվեց գետնին տարածված, մեռած կնոջ համար գերեզմանափոս են փորում: Նրա կողքին երկու ուրիշ կին կային, որ մեռնում էին: Նրանցից բացի ես երկու կնոջ ու մի երեխայի էլ տեսա: Նրանք ասում էին, որ չեն ուզում ճանապարհը շարունակել, ուզում են, որ իրենց թողնեն հենց

այդտեղ մեռնել: Մենք մեզ հաց էինք վերցրել, որպեսզի սովյալներին բաժանենք, մի քիչ սովեցինք նրանց: Տղամարդիկ, որոնք փոս էին փորում, ինչ խոսք, պետական ծառայողներ էին: Նման տեսարանների, աճեճայն հավանականությամբ այժմ Թուրքիայի խորքերում, կարելի է հանդիպել ամենուր: Այստեղ մի կնոջ, այնտեղ երեխայի դիակ կա, երբեմն-երբեմն էլ անասունի լեշ է հանդիպում: Բացի մեռելներից ու մեռնողներից, զինվոր-նստիկաններից ու քրդերից, ճանապարհներին ոչ որ չկա: Տարածաշրջանը լիովին մեկուսացած է:

Երկու գյուղերը, որտեղ ես եղա, գրեթե ամբողջովին ամայի էին, մինչդեռ յուրքանչյուրը երկու-երեք հազար բնակիչ էր ունեցել: Իմ ձիապանը այդ գյուղերից մեկում էր ծնվել: Այժմ այնտեղ միայն երկու ընտանիք է մնացել: Չիապանս իր ընտանիքով գտնվում է հյուպատոսարանում, նա իմ ծառայողը լինելու համար է տեղահանությունից ազատվել: Գյուղի իր տունն զբաղեցրել էին զինվոր-նստիկանները: Քանի որ այդ գյուղում թուրքեր չեն ապրում, նստիկաններն ու իմ հիշատակած երկու հայ ընտանիքներ և ինձ հանդիպած միակ կենդանի էակներն էին: Հավանական է, որ մյուս գյուղերում կան թաքնված հայեր, որոնք իրենց տները կվերադառնան հենց որ պայմանները լավանան, չնայած նրանց թիվը հազիվ թե մեծ լինի: Այդ գյուղը Պոմպեյի նման մեռած է ու ամայի: Մեր այցելած մյուս գյուղն ավելի լավ վիճակում չէր: Այնտեղ մնացել էր հազիվ վեց ընտանիք: Մենք հանդիպեցինք երեք կույր, դողոջուն ծերունիների, որոնց ընտանիքների բոլոր անդամներին արտորել էին, իրենց թողել: Նրանցից մեկը ութսունհինգ տարեկան էր, ուներ երեսուն երեխա և թոռ, որոնցից երկուսը Ամերիկայում էին: Մնացած քսանութը բռնագաղթել ու երևի մահացել էր: Այս երեք ծերունիներն ու նրանց ընտանիքները բողոքական էին, քաջ ծանոթ ամերիկացի միսիոներներին: Հենց վերջերս էլ այժմ գյուղից բերել ու խնամում են նրանց: Այդ գյուղը նույնպես, ինչես մյուսները, արդեն ամայի է ու ավերակ: Այստեղ սակայն, հատկապես այն գյուղերում, որտեղ միաժամանակ թուրքեր և հայեր են ապրել, բազմաթիվ հայուհիներ են մնացել: Այդ կանայք ապաստան են գտել թուրքական օջախներում, որի շնորհիվ էլ բռնագաղթից փրկվել են: Վերջին մի քանի օրում նրանցից շատերը գալիս են հյուպատոսարան խնդրում են Ամերիկայի իրենց հարազատներին գրել, որ փող ուղարկեն ու գրեթե բոլորը ուզում են այնքան ստանալ, որ երբ ճանապարհորդելու հնարավորություն ստեղծվի, Ամերիկա գնան: Ես իհարկե, ջանում եմ օգնել նրանց,

բավարարել յուրքանչյուրի խնդրանքը, բայց դիմողներն այժմ չափազանց շատ են, ահագին ժամանակ են խլում: Ոմանք էլ նույն խնդրանքով դիմում են մխտոներներին: Այս ամենը ցույց է տալիս անելանելի վիճակը, որի հորձանոտում հայտնվել են նման մարդիկ, ինչպես նաև այն համոզվածությունը, որ իրենք այլևս այստեղ չեն կարողանալու ապրել: Վերջերս յուրեր եկան այն մի քանի անձանցից, ում հաջողվել էր հասնել Հայեայ: Հարկ է նշել, որ խոսքը միայն կանանց է վերաբերում: Ակնհայտ է, որ ոչ մի տղամարդ մինչև Հայեայ ողջ չի մնացել:

Այն հատուկենտ կանայք ու երեխաները, որոնք այստեղ են ապրում, ձմռանը դժվարությամբ ուտելիք ու հագուստի կգտնեն: Այդ խնդրով ամենայն հավանականությամբ մխտոներները կզբաղվեն ու ոչ մի կասկած չի կարող լինել, որ շատերին կօգնեն:

Պատիվ ունեմ, պարոն, մնալու Ձեր խոնարհ ծառան՝

*Լ.ԵՍԼԻ Ա. ԴԵՎԻՍ*  
(ստորագրություն)  
Հյուպատոս

Աղբյուր՝ *Լեսլի Ա. Դևիսը Խարբերդից՝ Հենրի Մորգենթաուին. Ամերիկյան դեսպանատուն, Կոստանդնուպոլիս, 7-րդ սեպտեմբերի 1915թ., Ա.Ա. Պ.Դ., 59 Խ.Փ., տասնորդական թղթապանակ, թիվ 867. 4016/210B:*

ԹԻՎ 173

*Ամերիկյան հյուպատոսարան  
Սամուրեթ-ուլ-Ազիզ (Խարբերդ)  
Թուրքիա, 30-րդ դեկտեմբերի 1915թ.*

*Մեծարգո Հենրի Մորգենթաուին  
Ամերիկյան դեսպանին  
Կոստանդնուպոլիս*

Պարոն,

Պատիվ ունեմ իմ հունիսի 30-ի, հուլիսի 24-ի, օգոստոսի 23-ի և սեպտեմբերի 7-ի (թղթապանակ թիվ 840.1) զեկուցագրերը մեր տարածաշրջանի հայերի բռնազաղթի ու կոտորածի մասին շարունակել, ավելացնել հետևյալը.

Վերջին չորս ամիսները անորոշ ու անհանգիստ էին յուրաքանչյուրի համար: Հուլիսի և օգոստոսի բռնազաղթից հետո այստեղ

մնացած փոքրաթիվ հայերը, որոնք չէին արտարվել բողոքական, կաթոլիկ, ամերիկահայատակ լինելու կամ այլ պատճառներով, ապահովության ոչ մի երաշխիք չունեին, ինչպես մինչև հիմա չկա վատահուքյան արժանի արևե հավաստիացում, որ հայկական հարցը փակված է: Մեկ կամ երկու անգամ քաղաքի մունետիկը վալիի հրամանով հավաստիացրեց, որ այլևս ոչ մի հայ չի արտարվելու, բոլորը առանց վախենալու կարող են թաքստոցներից դուրս գալ, բայց նման հայտարարությունների կեղծիքը բացահայտվեց մի քանի շաբաթ անց, քանի որ այդ ամենին հաջորդեց նրանց զանգվածային ձերբակալությունն ու արքորը, ովքեր միամիտ էին գտնվել, հավատ ընծայել նման լուրերին:

Խորամանկությունն այնքան արդյունավետ եղավ, որ ամենայն հավանականությամբ նորից կկիրարկվի, չնայած որքան հաճախ էլ կրկնվի. ես ամենևին չեմ կասկածում՝ ճիշտ նույն ձևով ուրիշներ էլ ի հայտ կգան, և այս ամենը կշարունակվի այնքան մինչև ոչ մի հայ չմնա: Կարծում եմ այստեղ մնացած փոքր քանակությամբ հայերը նոր ձերբակալություններից ու արքորից վախենալու նույնքան պատճառ ունեն, որքան վերջին վեց ամիսների ցանկացած պահին: Ոչ որ չգիտե, թե առաջիկայում է՞րբ, ի՞նչ է տեղի ունենալու: Հայտնի չէ՝ այն մի քանիսը, ովքեր մինչև այժմ խույս են տվել տեղահանությունից, վերջիվերջո փրկվելու՞ են, ինչպես հայտնի չէ, թե նրանք, ովքեր գործադրել են երբևէ՝ որևէ ցեղի կամ ազգի նկատմամբ ծրագրված ամենադաժան ոճիրը, մինչև այս երկրի վերջին հայի քննաջնջումը շարունակելու՞ են իրենց հանցագործությունը:

Նախագուշացումները և մտավախությունները, որոնք ես այդ կապակցությամբ արտահայտել էի իմ նախորդ զեկուցագրերում, մեծ մասամբ լիովին իրականացան: Ես քանի որ հաղորդագրություններից երկուսը (հունիսի 30-ի թիվ 62-ը և հուլիսի 24-ի թիվ 71-ը) ակնհայտորեն կորել են կամ իշխանություններն են առգրավել, ես դրանց պատճենները կցել եմ իմ երեկվա՝ թիվ 172 փոստային համարանիշը կրող ճեպագրին: Ինքներդ էլ կնկատեք, որ այդ զեկուցագրերը թուրք պաշտոնյաների ընթերցման համար նախատեսված չէին, բայց ես ենթադրում եմ որ դա, համենայն դեպս տեղի ունեցել է: Իմ հուլիսի 11-ի, օգոստոսի 23-ի և սեպտեմբերի 7-ի հաղորդագրությունների ստացման հաստատումը տեղ հասել է:

Վերջին հաղորդագրությունում, 4-րդ էջում (էջ 169) ես խոսում էի այն մասին, որ բողոքականների մի մեծ խմբի, նրանց տարագրումից ազատելու հրամանի ստացումից մի քանի օր առաջ բռնագաղթեցրին: Ասում էին, որ հրամանը տեղ հասնելու պահին նրանք

գտնվում էին Մալաթիայի մոտ, և ես ամեն ինչ արեցի, որ ձգտեմ ետ  
բերել, բայց ապարդյուն: Մի քանիսը, սակայն, առանց իշխանու-  
թյունների թույլտվության, կարողացել էին հետ դառնալ: ‘Դա նրանց  
հաջողվել էր ի հաշիվ գումարների՝ հաճախ նրանք քրդերին 50-ից  
100 թուրքական լիրա էին տվել, որոնք և գիշերով տեղ էին հասցրել:  
Խոսքը հասկանալի է հիմնականում կանանց է վերաբերում, քանի  
որ բոլոր սղամարդկանց ավելի վաղ ամառվա ընթացքում էին աք-  
սորել: Ոստիկանությունը, սակայն, սկսեց հետապնդել նրանց ովքեր  
նման ձեռքով հետ էին դարձել և մեծ մասին ձերբակալեց: Բողոքա-  
կաններին նորից բռնագաղթեցրին, կարծում եմ նրանց հետագա ճա-  
կատագիրը դժվար չէ պատկերացնել:

Շարունակվող ողբերգության ամենաուշագրավ և ահավոր  
առանձնահատկություններից մեկն այն է, որ կառավարությունը  
բացեիքաց աճուրդ է կազմակերպում, մեծ քանակով վաճառում  
բռնագաղթի ընթացքում սպանված հայերի հագուստները: Այս տե-  
սակ հագուստների բազմաթիվ հսկեր են բերվել, որոնց վաճառքը  
քանի օր է արդեն շարունակվում է շուկայում: Ինձ հայտնեցին, որ  
նույնը տեղի է ունեցել վիլայեթի այլ քաղաքներում: Այդպիսի մի  
աճուրդի այստեղ ինքս էլ ներկա եղա: Ավելի ահավոր ու գարշելի  
տեսարան անհնար է պատկերացնել:

Սակայն բայբարոսության անհամեմատ սուկալի դրսևորումը,  
որի մասին ինձ պատմեց կոստրածից փրկված մեկը, այն է, որ  
զինվոր-ոստիկանները գաղթականներին 50-100 հոգիանոց խմբերով  
վաճառել են քրդերին, որպեսզի վերջիններս կոստրեն ու տիրանան  
վրաների ունեցվածքին: Չնայած, քանի որ մինչև այդ զինվոր-ոստի-  
կանները տարագիրներին հիմնավորապես խուզարկել ու թալանել  
էին, քրդերին՝ զոհերին սպանելուց հետո, բացի հին հագուստներից,  
չատ քիչ բան էր մնացել: Ահա թե ինչպես է իրագործվում հայերի  
«վերաբնակեցումը»: Մի այլ իրողություն, որը պետք է հիշատակել  
ներկա վիճակում, շրջակա գյուղերի քրիստոնեական եկեղեցիների  
մասնակի ավերումն է: Հասկանալի է, տարածաշրջանի բոլոր  
եկեղեցիները թուրքերի ձեռքում են:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը, վալին հայտարարություն  
տարածեց, որ հայերն այլևս չպետք է աքսորվեն: Դրանից հետո, մի  
քանի շաբաթ շարունակ, իրավիճակը խաղաղ էր թվում, այնպես որ  
բազմաթիվ հայեր, որոնք մինչև այդ շարունակում էին թաքնված մնալ,  
համարձակվեցին ասպարեզ ելնել: Ոմանք մահմեդականություն  
ընդունեցին, կարծելով, թե այդպես ավելի ապահով կլինեն: Հան-  
կարծ, նոյեմբերի 4-ին, հինգշաբթի օրը, հետկեսօրին, հենց տոնա-

վաճառի ժամանակ, երբ ժողովուրդը լցվել էր փողոցներն ու շուկայի հրապարակը, ոստիկանությունը սկսեց որսալ պատահած հայերին ու ասորիներին: Շատերին հենց փողոցում ձերբակալեցին, խուզարկեցին այն տները, որտեղ, ըստ լուրերի, հայեր էին թաքնվում, բոլորին դուրս հանեցին, որոնց թվում և իմ դավազներից մեկի ամբողջ ընտանիքը: Ոստիկանությունը շրջապատեց նաև ամերիկյան հիվանդանոցը, ներխուժեց ու կալանավորեց ներսում գտնվողների մեծ մասին: Մի ոստիկան ժամապահի մման կանգնել էր մեր հյուպատոսարանի առջև, որպեսզի ոչ ոքի թույլ չտա ներս մտնել, ապաստան խնդրել: Ձերբակալվածների թվում էին որոշ ամերիկյան քաղաքացիներ, որոնց ես հովանավորում էի, ինչպես նաև մի մեծ խումբ այլ անձինք, ում համար տեղում մնալու արտոնություն էի ձեռք բերել: Երկու-երեք ժամվա ընթացքում ոստիկանությունը բանտ լցրեց քաղաքում գտնվող մոտ 500 հոգու: Ես ամբողջ հետկեսօրը, երեկոն. ինչպես նաև հաջորդ օրը որոնում էի նրանց, ում փորձել էի պաշտպանել, որպեսզի ճշտեմ, ովքեր են դրսում, ովքեր` բանտում: Այնուհետև այցելեցի զորահրամանատարին, որն այդ պահին փոխարինում էր վալիին, ինչպես նաև ոստիկանապետին, որպեսզի ազատ արձակել տամ նրանց, ովքեր ձերբակալվել էին: Երբեք չեմ մոռանա տեսարանը, որին ներկա եղա նույն երեկոյան, երբ երկրորդ անգամ այցելեցի ոստիկանապետին ու ներկայացրի այն մարդկանց ցուցակը, ում փորձում էի ազատել: Ձերբակալվածները խռնվել էին նրա առանձնատանակի դռան մոտ, յուրաքանչյուրն զգում էր մահվան վտանգը, մահվանն սպասում էր, բայց այնուամենայնիվ հույսը չէր կորցնում, որ մեկնումեկը կհայտնվի, իրեն կազատի: Նրանց մեկ առ մեկ կանչում էին ներս, որտեղ ոստիկանապետի և զինվոր-ոստիկանների կրամանատարի հետ նստած էի նաև ես: Բոլորը, ում համար միջնորդեցի, ազատվեցին, բացի մեկից: Այդ երիտասարդը դասավանդել էր թուրքական դպրոցում, եղել իմ քարտուղարի մտերիմը: Ամառվա ընթացքում ես նրա մնալու թույլտվություն ձեռք բերել էի, մի քանի ամիս պահել հյուպատոսարանում: Սակայն նա որոշեց մահմեդականություն ընդունել, հակառակ մեր` մեծամասնության կարծիքի ու կրոնավորի լինելուց մի քանի շաբաթ առաջ դուրս ելավ հյուպատոսարանից: Ավելի ուշ փորձեց վերստանալ ուսուցչի իր պաշտոնն ու աշխատավարձի կուտակված պարտքը: Նրան և երկու ուրիշ երիտասարդների, որոնք նույնպես մահմեդականություն էին ընդունել, ձգտել ստանալ այն գումարը, որը կառավարությունն իրենց պարտք էր եղել, մեկ, թե երկու օր անց հանել էին բանտից, քաղաքից ոչ հեռու սպանել: Ես վստահելի

աղբյուրներից իմացա, որ այս երիտասարդներին չէին ազատել միայն այն պատճառով, որ նրանք ուզել էին իշխանություններից ստանալ իրենց փողերը: Մարդկային կյանքն այստեղ մեծ այժմեք չի ներկայացնում, կառավարական պաշտոնյաները պետական գումարների խնայման շատ արդյունավետ միջոց են գտել:

Մեր քաղաքում, նոյեմբերի 4-ին ձերբակալված բոլոր ասորիները, ինչպես նաև հայերի մեծ մասը ի վերջո այս կամ այն կերպ արձակեցին: Հաջորդ օրը հայերի գանգվածային ձերբակալություններ տեղի ունեցան Խարբերդում, բայց շատերը փրկվեցին: Նույնը չի կարելի ասել, սակայն. գյուղերի մասին: Ինչպես արդեն տեղեկացրել եմ (տե՛ս թիվ 840.1 թղթապանակի սեպտեմբերի 7-ի ճեպագրի 17-րդ էջը, ինչպես նաև թիվ 310 թղթապանակի հոկտեմբերի 9-ի ճեպագրի 2-րդ էջը) գյուղերից մեծ մասի ամբողջ հայ ազգաբնակչությունը արդեն տեղահանվել ու կոտորվել է: Սի շարք այլ գյուղերում, սակայն, զգալի քանակությամբ կանայք ու երեխաներ մնացել էին: Որոշ մասին նոյեմբերի 5-ին՝ ուրբաթ և նոյեմբերի 6-ին շաբաթ օրը ձերբակալեցին. բերեցին այստեղ: Ես տեսա, թե ինչպես էին մի քանի ոստիկաններ հարյուրավոր գյուղացիներից կազմված քարավանը անասունի պես քաղաք քշում: Տեղահանվածները բավական հեռվից էին գալիս, արդեն ուժասպառ էին եղել: Կանայք գրկել էին երեխաներին, մի կին շալակն էր առել, ծերունիները, հաշմանդամները, կույրերը ճածվում էին անզգայացած ու բթացած և եթե հետ էին մնում, զինվոր-ոստիկանները կոպտորեն հրում էին: Ես տեսա, թե ինչպես էին նրանք խառնվել ոստիկանապետի պաշտոնատեղի առաջ, որտեղ և մեկնելու հրաման ստացան, շարունակեցին քայլերը: Հավանական է, որ այս օրերին հազարավոր հայեր թշվեցին արքայի ճանապարհներով, և ես մի քանի վերապրողներից, որոնց հաջողվել էր հետ դառնալ, իմացա, թե ինչ ճակատագիր է բաժին ընկել նրանց: Պարզվեց՝ քաղաքից դուրս գալուց հետո փոքր խմբերի են բաժանել, տարբեր ուղղություններով տարել: Այդ խմբերին, հավանաբար նա և շատ ուրիշների, զինվոր-ոստիկանները հասցրել են ամառի կիրճերը, սփններով սպանել: Այնուհետև նրանց դիակները ծածկել են մացառներով, փորձել այրել: Ասում են. մի քանի գաղթական հասել են մինչև Դ-խարբեքի, բայց որքան ինձ հայտնի դարձավ. ոչ մեկից ոչ մի լուր չի ստացվել. այնպես որ կասկած գրեթե չի կարող լինել՝ բոլորին վերջիվերջո կոտորել են: Հարկ է նշել, որ թե այժմ, և թե սրանից առաջ բռնազաղթած գյուղացիների չնչին մասը, թերևս ոչ ոք ողջ չի մնացել մինչև, այսպես կոչված, վերջնական հանգրվանը: Այն հատուկեմտ հայերը, որոնք

ինչ որ տեղ այնուամենայնիվ հասել են, հիմնականում քաղաքա-  
բնակներն են, ովքեր որոշ միջոցներ ունեցել են իրենց կյանքը  
փրկելու համար ու հավանաբար կարողացել են կաշառել ուղեկցող  
զինվոր-նստիկաններին: Մինչդեռ բոլոր գյուղացիները, ակնհայտ է,  
որ կոտորվել են: Ինչ վերաբերվում է բազմաթիվ մեծ գյուղերից  
աքսորվածներին, ոչ մեկից մինչև հիմա լուր չի եկել:

«Մպանդի նահանգ» արտահայտությունը, ինչպես կոչել էի այս  
ենթատարածքը նույն դեպքերի առնչությամբ գրած իմ վերջին՝  
սեպտեմբերի 7-ի հաղորդագրությունում, ելնելով այն ամենից, ինչ  
այդ ժամանակվանից ի վեր իմացա ու տեսա, լիովին արդարացավ:  
Պարզվեց, որ քարավանի բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխա-  
ներին, ում հիշատակել են այդ զեկուցագրի 15-րդ էջում, այստեղից  
ոտքով հինգ ժամվա հեռավորության վրա կոտորել են: Իրոք գրեթե  
հաստատ է, որ բացի չնչին բացառությունից, հուլիսի առաջին օրերի  
աքսորվածներին՝ բոլոր նրանց, ում տարել են քաղաքից, վիլայեթի  
սահմաններից չհանած, ջարդել են: Բավական դժվար է ըմբռնել այդ  
ծրագրի իմաստը, որն ստիպում է Տրապիզոնի, Օրդուի, Կիրասունի,  
Չարայի, Էրզրումի, Երզնկայի գաղթականներին հասցնել մինչև  
այստեղ, այստեղ կոտորել: Սեպտեմբերի երկրորդ շաբաթվա ըն-  
թացքում այն հարյուրավոր հայերը, որոնք Մուշ էին գնացել՝ իրենց  
եզասայլերով կառավարության համար հացահատիկ բերելու, վերա-  
դարձան: Այնուհետև բոլորին բանտ տարան, մի քանի օր անց հա-  
նեցին ու սպանեցին: Վերջին երկու ամիսների ընթացքում երկու-  
երեք հարյուր հոգիանոց խմբերով Էրզրումից այստեղ բերեցին մեծ  
թվով հայերի: Նրանք ճանապարհին կրած զրկանքների, անբարե-  
նպաստ եղանակի պատճառով թշվառ վիճակի էին հասել: Նման  
տառապանքների ենթարկվելուց, այդքան երկար քայլեցնելուց հետո  
հայտնի դարձավ, որ մեր քաղաքից հեռանալուց ընդամենը մի քանի  
ժամ անց գրեթե բոլորին կոտորել են: Մի քանի հոգի, որոնք կա-  
րողացել էին փախչել պատմեցին, որ այստեղից դուրս գալուց քիչ  
անց զինվոր-նստիկանները գաղթականներին կապկպել են: Դրա  
նպատակը հասկանալի է դարձել՝ շատերը դիմադրել են: Նրանց  
դիակները այժմ էլ է հնարավոր տեսնել ճանապարհի երկարու-  
թյամբ: Մնացածին ավելի հեռու են տարել, խողխողել լեռներում:  
Ամենատխուր տեսարաններից մեկը, որին կարելի է ականատես  
լինել այս քաղաքում, ժամանակ առ ժամանակ հայտնվող զինվորա-  
կան միավորումներն են, քանի որ պարզ է՝ նրանց անասունների պես  
կոտորել են:

Մեր տարածաշրջանի ներկա իրավիճակի ամենացայտուն առանձնահատկություններից մեկն էլ Վանի, Սուշի, Բիթլիսի գավառներից հասնող մահմեդական գաղթականների ահռելի թվաքանակն է: Այն բազմաթիվ հայկական գյուղերում, որոնք ամառվա ընթացքում ամբողջովին դատարկվել են, այժմ փախստական մահմեդականներ են վերաբնակվում: Շաաերը կարծում են, որ հայերին բնաջնջելու շարժառիթներից մեկն էլ մահմեդականների համար ապրելու տեղ ստեղծելն է: Ինչ էլ լինի, նրանք այնքան շատ էին, որ կարողացան զբաղեցնել ազատված տարածքները: Եվ քանի որ բոլորն էլ չափազանց աղքատ են թվում, դժվար չէ պատկերացնել, թե ազգաբնակչության կազմի փոփոխությունն ինչ ազդեցություն կունենա տարածաշրջանի արդյունաբերության վրա:

Այս վիլայեթում ապրող 100000 հայից մի տարվա ընթացքում ամենայն հավանականությամբ մնացել է 4000-ից ոչ ավելին: Վերջերս նույնիսկ ասում էին, որ հայերի հազիվ հինգ տոկոսն է ողջ: Սակայն, այժմ, մինչև անգամ այդ թիվն է կասկածելի թվում: Ամենայն հավանականությամբ Մամուրեթ-ու-Ազիզ և Խարբերդ քաղաքներում հիմա համեմատաբար ավելի շատ հայ կա, քան այլ բնակավայրերում, որվհետև ոմանք գալիս են գյուղերից, որտեղ ոչ մի հայ չի մնացել, ուստի իրենք էլ չեն կարողանում այնտեղ ապրել. տեղափոխվում, այստեղ են ապաստան որոնում:

Հաշվված է, որ վիլայեթի հայ ազգաբնակչության մեկ երրորդը հազիվ է կենդանի մնացել, որն այժմ բնակվում է երկու քաղաքներում և մոտակա գյուղերում, ընդ որում հիմնական մասը կազմում են վերևում հիշատակված, վերջերս տեղափոխված մարդիկ: Գերմանական որբանոցի երեխաները, որոնց թիվը չորս-հինգ հարյուրի է հասնում, վերապող ազգաբնակչության կարևոր մասն են:

Ամենայն հավանականությամբ շատ հայեր շարունակում են թաքնված մնալ Դերսիմի քյոլերի մոտ, բայց նրանց թիվը ճշտելն անհնար է: Կարող է հինգ հարյուրից հազարի հասնել: Վիլայեթի այլ մասերում շատ քիչ հայ կա, բազմաթիվ քաղաքներում ու գյուղերում ոչ մեկը չի մնացել, եթե նկատի չունենանք այն կանանց, ովքեր մահմեդականություն են ընդունել և ապրում են թուրքերի հետ:

Իմ երեկվա թիվ 170 կարճ ճեպագրում ես անդրադարձել էի այն ճնշմանը, որ գործադրում են հայ կանանց, այդ թվում և ամերիկյան

հպատակություն ընդունածների կանանց վրա, որպեսզի նրանց մահնեղականացնեն: Դեսպանատան նոյեմբերի 30-ի հրահանգի համաձայն ես, իհարկե, ամեն ինչ անում եմ, որպեսզի նման քայլից հետ կանգնեցնեմ: Վերջին շաբաթների ընթացքում բազմաթիվ կանայք են ինձ դիմել այդ հարցով: Նրանք ասում են, որ երբ հրաժարվում են կրոնավոխ լինելուց, իրենց տեղահանությամբ են սպառնում, որը ըստ էության մահ է նշանակում: Ամենևին անհավանական չէ, որ կանաց բռնագաղթը որոշ դեպքերում հենց այդ մերժման հետևանքն է: Հասկանալի, ես ամեն ինչ կանեմ, որպեսզի այն կանանց, ովքեր ամերիկյան պաշտպանության իրավունք ունեն, փրկեմ թե մեկ, թե մյուս փորձությունից:

Ներկա ահավոր իրավիճակում հուսախաբություններից մեկը, որն անխուսափելի է դառնում, ինչպես ամենպախտոյ հետևություններից մեկը, որ կարելի է անել՝ ելնելով հայկական միջավայրում ամերիկյան հաստատությունների գործունեությունից, այդ ցեղի՝ բարոյական ու կրոնական սկզբունքներից զուրկ լինելը, ինչպես նաև ընդհանուր ցածր մակարդակն է: Անցնող տարում, այն ամենի ընթացքում ինչ տեղի ունեցավ, ես հերոսականության, ինքնազոհողության ոչ մի քայլի մասին չեմ լսել, եթե անգամ վեհանձնության դեպքեր պատահել են, շատ քիչ են եղել: Ընդհակառակը՝ մայրերն իրենց սեփական կյանքը փրկելու համար աղջիկներին տվել են ամենաբոլի և ամենավայրենաբարո թուրքերին, շատերի համար կրոնը փոխելը առանձնակի նշանակություն չունեցող երևույթ է դարձել:

Ստախոսությունը, նենգամտությունը, անհագ սերը փողի նկատմամբ գրեթե բոլորի սովորական արատներն են, նույնիսկ այն դեպքում, երբ մահվան ստվերը մոտենում է: Ամերիկյան հոգևոր ճեմարանի ուսանողներին ձերբակալու ժամանակ, համարյա բոլորը, մահից ազատվելու համար այս կամ այն ձևով ստել էին: Բացարձակ անկեղծությունը գրեթե խորթ է այս ցեղից յուրաքանչյուրին:

Նրանք ամեն գնով, նույնիսկ իրենց կյանքը վտանգելու գնով դրամի են ձգտում, ինչպես իմ այս ճեպագրում արդեն հիշատակված երիտասարդի դեպքում, որին ես փրկեցի մահից, բազմաթիվ ամիսներ հյուպատոսարանում պահելով օգնել ջանացի: Թե՛ նրանք, ովքեր կարիք չունեն, թե՛ նրանք, ում համար դա պահանջ է դարձել, ամեն խորամանկության ու հնարանքի դիմում են, որպեսզի դրամ

ձեռք բերեն, հաճախ գրկելով այնպիսիներին, որոնք անհամեմատ չքավոր են: Ամեն առումով էլ սա մի ցեղ է, որով չի կարելի հիանալ. բայց որին խղճալ պետք է:

Այժմ նրանց ոչ թե արժանիքները, կարիքները պետք է հաշվի առնել: Այն հազար կամ երկու հազար հայերը, ովքեր ապրում են շրջակայքում, մեծ մասամբ ամեն ինչից զրկված են. կախված են բարեսիրությունից: Ոմանք Ամերիկայից են դրամի սպասում. չնայած անհամեմատ շատ են այնպիսիները, ովքեր ոչ այնտեղից, ոչ էլ ուրիշ բնակավայրերից օգնություն չեն կարող ակնկալել:

Գործնականում բոլորը, ովքեր մնացել են այստեղ, կանայք ու երեխաներ են. նրանցից շատ քչերը հաց գնելու միջոց ունեն կամ գնելու համար կարողանում են դրամ վաստակել: Հիմնական օգնությունն ապահովում են գերմանական ու ամերիկյան միսիոներները, բայց առայժմ ներդրված միջոցները բոլոր կարիքները հոգալու համար բավարար չեն:

Ուրախ կլինեի, եթե ամեն կերպ աջակցեի բարեսիրական այս գործունեությանը, ինչպես արել են դեսպանատան այդ նպատակով ուղարկված միջոցները բաշխելու ժամանակ, այնպես որ եթե դեսպանատունը առաջիկայում էլ կարողանա դրամ տրամադրել, կշարունակեմ նույն կերպ:

Այժմ կարևորն այդ մարդկանց կենդանի պահելն է, հետո օգնելը, որ հենց հնարավոր լինի, թողնեն երկիրը: Ամեն դեպքում իմանալու ոչ մի հնարավորություն չկա, թե ինչ է ձեռնարկվելու այստեղ մնացած փոքրաթիվ վերաբրողների նկատմամբ. իսկ դժվարությունը, որ ներկա պայմաններում վտանգի պահին կարող է առաջանալ նրանց տարածաշրջանի մարդասպաններից ազատելու համար. անհամեմատ մեծ է, քան ի վիճակի է պատկերացնել ավելի քաղաքակիրթ վայրերի բնակիչը:

Ինչպես արդեն բացատրել եմ՝ միակ արդյունավետ միջոցը, որ էս գտել եմ, մարդկանց հյուպատոսարանում պահելն է. սակայն հասկանալի է այդ կերպ փրկվածների թիվը սահմանափակ է:

Պատիվ ունեմ, պարոն, մնալու Ձեր խոնարհ ծառան

*ԼԵՍԼԻ Ա. ԴԵՎԻՍ*  
*(ստորագրություն)*  
*Հյուպատոս*

Ծածկագրված է.

Ես նպատակ ունեմ հայերի բռնագաղթի ու կոտորածի վերաբերյալ այս զեկուցագրերը լրացրել իմ երկու ուղևորությունների հաշվետվությամբ, որ մինչև այժմ կատարել եմ այստեղից մոտ հինգ ժամ հեռու գտնվող լճի շրջակայքում, որտեղ տեսել եմ առնվազն 10000 հայերի դիակներ, որոնց մեծ մասը վերջերս էր սպանված, ինչպես նաև պատկերագրողել լուսանկարներով, որոնք նկարահանել եմ, երբ տարագիրները դեռևս ողջ՝ ճամբարներում են եղել: Նման հաշվետվություն այժմ ուղարկելը խելամիտ չեմ համարում:

Աղբյուր - *Լեայի Ա. Դևիսը Խարբերողից Հենրի Մորգենթաուին. Ամերիկյան դեսպանին, Կոստանդնուպոլիս, 30-ր դեկտեմբերի, 1915թ. Կոստանդնուպոլսում գործերի կառավարիչ Հոֆման Ֆիլիպի՝ ներփակված ծրարով 1916 թվականի փետրվարի 17-ին ուղարկված է պետքարտուղարին, Ա.Ա., Պ.Դ., 59 Խ.Փ., տասնորդական քորսպանակ, թիվ 867. 4016/269:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրի կողմից .....	3
I Եփրատի հովիտը .....	7
II Սահմանամերձ շրջանները .....	155
III Կենտրոնական երկրամասերը .....	283

[Հոօօր.]

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ  
ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Չափը՝ 60x84 1/16: Թույր օֆսեր:  
Տպագրություն՝ օֆսեր:  
21 տպ. մամ.: Պատվեր 24  
Տպարանակ՝ 500 օրինակ:



A  $\overline{\text{II}}$   
89174

ԳՍՄ Հիմնարկի Գիրք. Գրադ.

A standard 1D barcode with vertical black bars of varying widths on a white background.

220089174